ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Ս. ՍՎԱԶՅԱՆ

# ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(հնագույն շրջանից-VIII դարը ներառյալ)

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Ս. ՍՎԱԶՅԱՆ

# ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(հնագույն շրջանից-VIII դարը ներառյալ)

92246

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
Երևան - 2006

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հ. Ս. Սվազյան Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից
մ. թ. 8-րդ դարը ներառյալ)

Մենագրությունը նյութական, գրավոր աղբյուրների (հունա-հռոմեական, հայկական, վրացական, բյուզանդական, ասորական ու արաբական) և առկա գիտական գրականության հիման վրա գրված պատմա-քննական հետազոտություն է և հայ պատմագրության մեջ առաջին անգամ ուսումնասիրում է Աղվանից աշխարհի պատմությունը նախնադարյան-համայնական, ստրկատիրական ու վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջաններում:

Աշխատության մեջ քաղաքական պատմությանը զուգահեռ, հետազոտվում են նաև երկրի անվանումների, նրանց գործածության ոլորտների, աշխարհագրական ու քաղաքական սահմանների, բնակչության զբաղմունքի, կենդացի ու հավատալիքների, ցեղային միությունների, Աղվանից պետության կազմավորման, նրա կորստի ու մարզպանության ստեղծման, վերջինիս տրոհման և Ռիտիք-Արցախյան աշխարհի վրա «Աղուանք» աշխարհագրական անվան տարածման, հաստատման ու շատ այլ հարցեր:

Վեր են հանվել և խիստ քննադատության են ենթարկվել նշված հարցերում ադրբեջանցի հեղինակների կեղծարարությունները, ցույց տրվել հետազոտությունների հակագիտական ու հակահայկական բնույթը:

Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար:

ԵՐԵՎԱՆ - 2006

# ԱՌԱՋԱԲԱՆ

Մենագրությունը նվիրված է Աղվանից աշխարհի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրությանը հնագույն ժամանակներից մ.թ. VIII դարը ներառյալ:

Պատմականորեն Աղվանից երկիրը Անդրկովկասում գրավում էր մի աշխարհագրական տարածություն, որի սահմանները նրա պետականության շրջանում (մ.թ.ա. I-մ.թ.V դարի կեսեր) հյուսիսում կազմում էին Կովկասյան Գլխավոր լեռնաշղթան, արևելքում՝ Կասպից ծովը, արևմուտքում՝ Ալազան, իսկ հարավում՝ Կուր գետերը: Սա էր հայ մատենագիրների «բուն աշխարհն Աղուանից» երկիրը, որ հունա-հռոմեական աղբյուրներում կոչվում էր «Ալբանիա», վրացականում՝ «Ռանի (նաև Հերեթի)», իսկ ասորական ու արաբական աղբյուրներում՝ «Առան»:

Տարածված լինելով Մեծ Հայքի հարևանությամբ՝ Աղվանից երկիրը շատ վաղ ժամանակներից է փոխհարաբերությունների մեջ մտել նրա հետ: Սակայն նրանց փոխհարաբերությունները ու պատմական ճակատագրերի նմանությունը հաճախ ճիշտ չի ըմբռնվել, նույնիսկ ենթարկվել է գիտակցական խեղաթյուրումների և լուրջ հակապատմական սխալներ առաջացրել երկու երկրների պատմական աշխարհագրության, քաղաքական ու մշակութային պատմության մի շարք հարցերի շուրջ: Եվ հիմնականում այդ երկրների պատմության մեջ տարբեր ժամանակաշրջաններում ու քաղաքական հանգամանքներում առաջացած առանձին, ոչ միանման պետական-քաղաքական կազմավորումները և դրանց հետևանքով «Աղվանք» աշխարհագրական անվան բովանդակության փոփոխությունը չտարբերելու կամ կանխամտածված կերպով անտեսելու պատճառով: Բանն այն է, որ մ.թ. V դարի կեսերին Սասանյան Իրանը, ելնելով Անդրկովկասը նվաճելու իր քաղաքականությունից, Մեծ Հայքում թագավորության անկումից հետո, այն վերացնում է նաև Աղվանքում և երկրում հաստատում մարզպանական կառավարում: Մարզպանությունների ստեղծումը ուղեկցվում էր տարածքային փոփոխություններով, ուստի բուն Աղվանքի տարածքին Սասանյանները միացրին նաև Մեծ Հայքից անջատած սահմանակից Ուտիք ու Արցախ նահանգների տարածքները և ստեղծեցին Աղվանից մարզպանությունը, որը բաղկացած էր բուն Աղվանքից և Կուրից հարավ գտնվող հայոց Ուտիք ու Արցախ նահանգներից: Նոր վարչաքաղաքական միավորի սահմաններն էին՝ հյուսիսում Կովկասյան Գլխավոր լեռնաշղթան, արևելքում՝ Կասպից ծովը, արևմուտքում՝ Ալազան գետը, իսկ հարավում, կցված նահանգների շնորհիվ, Արաքս գետը: Այսուհետ «Աղուանք» անվանումը տարածվում է այս ամբողջ տարածքի վրա, որն Ուտիքի ու Արցախի համար ունենում է սոսկ աշխարհագրական իմաստ, քանի որ, վարչականորեն մտնելով Աղվանից մազպանության մեջ և ստանալով նոր անվանում, հայոց այս նահանգները բոլորովին չեն կորցնում ո՛չ իրենց ինքնուրույնությունը և ո՛չ էլ հայկականությունը:

Երկար չի պահպանվում Աղվանից մարզպանության քաղաքական-վարչական

կառուցվածքը: VI դարի վերջերին, նույն պարսից արքաների վարած քաղաքականության հետևանքով, այն տրոհվում է տեղական իշխանական տների ներկայացուցիչների կողմից կառավարվող առանձին քաղաքական միավորների, որոնցից յուրաքանչյուրը սկսում է հանդես գալ իր իշխանական տան, աշխարհագրական վայրի կամ ցեղի անունով: Այսպես, Աղվանից մարզպանության հյուսիսային շրջաններում առաջանում, ամրապնդվում և առանձին-առանձին քաղաքական միավորներ են կազմում Շաքիի (Շաքի կենտրոնով), Շիրվանի (Շամախի կենտրոնով) ու Դերբենդի (Դերբենդ կենտրոնով) պետական կազմավորումները, իսկ հարավային մասում, Կուրի աջափնյակում կամ Արցախ-Ուտիքում, Առանշահիկների իշխանությունը: Ստանալով նոր անուններ՝ այս քաղաքական կազմավորումները դադարում են կրել իրենց համար մինչ այդ ընդհանուր «Աղվանք» անունը: «Աղվանք» անվանումը դադարում է Աղվանից ողջ մարզպանության տարածքը արտահայտելուց, սակայն չի անհետանում, այլ ավելի հաճախ օգտագործվելով Կուրից հարավ ընկած տարածության համար, սկսում է ցույց տալ Կուր և Արաքս գետերի միջև ընկած Արցախի և Ուտիքի տարածքը:

IX դարում բուն Աղվանքի տարածքում կազմակերպվում են Շաքիի ու Շիրվանշահերի իշխանությունները, որոնք պատմության մեջ հայտնի են դառնում «Շաքի» և «Շիրվան» անուններով: Դրանք իրենց հերթին XI դարի երկրորդ կեսին նվաճվում են սելջուկ-թուրքերի կողմից և ենթարկվում լեզվական ու էթնիկական փոփոխությունների: Իսկ Առանշահիկների իշխանությունը, որտեղ VI դարի վերջերից մինչև IX դարի առաջին քառորդը տիրապետող դիրքի էին հասել Միհրանյանները, Բագրատունիների գլխավորությամբ հայոց պետականության վերականգնումից հետո, հանդես է գալիս իբրև այն ժամանակվա հայ կազմավորումներից մեկը ու ընդգրկվում նրանց գերագույն իշխանության ներքո գտնվող ֆեոդալական իշխանությունների համակարգում, բայց որպես աշխարհագրական միավոր, շարունակում կրել իր համար սովորական դարձած «Աղուանք» անվանումը:

Միանգամայն պարզ երևում է, որ պատմականորեն առաջացած և նշված անվանումներով աշխարհագրորեն արտահայտված առանձին վարչական ու քաղաքական այդ միավորումները միմյանցից տարբերվում էին ինչպես իրենց տարածքավարչական բաժանումներով, այնպես էլ սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմությամբ: Եվ առանցքային այս տարբերությունները ու հայոց նահանգներին տրված «Աղուանք» անվան աշխարհագրական բովանդակությունը հաշվի չառնելու պատճառով է, որ Աղվանքի պատմության շուրջ դեռ գրվում են աշխատություններ, որոնցում Աղվանքի պատմությունը շարադրվում է պատմական ճշմարտությանը հակառակ և արհեստականորեն ընդարձակված սահմաններում:

Այսպիսի մոտեցման հետևանքով շատ հարցեր ճիշտ չեն մեկնաբանվել, մի երկրում տեղի ունեցած իրադարձությունները տեղափոխվել են մյուս երկիր, մեկի պատմական ճակատագիրը միախառնվել է մյուսի հետ, խախտվել է ժամանակագրությունը, արվել սխալ, հակագիտական ու շինծու եզրակացություններ: Այս ամենը հանգեցրել է նրան, որ ադրբեջանական ժողովրդի լայն զանգվածները, այդ թվում և նրա մտավորականության զգալի մասը ունի

միակողմանի, աղավաղված պատկերացում Աղվանից երկրի անցյալի, անդրկովկասյան երկրների շարքում նրա տեղի ու դերի, ընդգրկած տարածքի, էթնիկական ու մշակույթի ժառանգականության հարցերում, որոնք շատ հաճախ դառնում են նաև քաղաքական շահարկումների նյութ, ստեղծում հակահայկական տրամադրություն:

Այսպիսի պայմաններում հայ պատմագրության առջև իր ամբողջ կարևորությամբ ծառացավ հայ ժողովրդի պատմության հիմնապատարի վրա Աղվանքի ընդհանուր և ամբողջական պատմությունն ունենալու անհրաժեշտությունը, որն առանց այդ պայմանի կտառապեր թերասածությամբ ու աննշտությամբ, իսկ վերոհիշյալ սխալներից խուսափելու համար անհրաժեշտ էր հաշվի առնել վարչական ու քաղաքական առումով միմյանցից տարբեր երեք մեծ ժամանակահատված՝ Աղվանքի թագավորության (մ.թ.ա. I- – մ.թ.V դարի կեսեր) և սրան նախորդող ժամանակաշրջան, Աղվանից մարզպանության (Vդարի երկրորդ կես - VI դարի վերջ) և առանձին ֆեոդալական տների գերիշխանության ժամանակաշրջան, որ սկսվում է VI դարի վերջից:

Ներկա աշխատության հիմքում ընկած է այս սկզբունքը:

Աշխատության առաջին և երկրորդ բաժիններում ուսումնասիրվում է Աղվանքի պատմությունն աշխարհագրական այն սահմաններում, որոնց համապատասխանում են հունա-հռոմեական աղբյուրների ու «Աշխարհացոյցի» տեղեկությունները, այսինքն՝ Կուրից հյուսիս, մինչև Կովկասյան լեռները ու Ալազան գետից մինչև Կասպից ծովն ընկած սահմաններում՝ ժամանակագրական առումով հնագույն ժամանակներից մինչև V դարի կեսերը: Ընդսմին նշված սահմաններում ու ժամանակաշրջանում ամփոփված երկրամասն ու նրա բնակիչներին աշխատության մեջ անվանապես կոչելիս դիմել ենք հայերեն «բուն Աղվանք» և «աղվանացիներ» (Աղվանից երկրի բնակիչներ) ձևերով, որպես հունա-հռոմեական աղբյուրների «Ալբանիա» և «ալբան-ալբանացիներ» անվանումներին համարժեք հասկացություններ, երբեմն էլ՝ անտիկ հեղինակների հետևությամբ՝ իրենց գործածած անվանումներով:

Մենագրության երկրորդ բաժնի վերջին մասը նվիրված է Աղվանքում մարզպանության հաստատման, տարբեր ժամանակներում առանձին երկրամասերի ու ազգագավառների միացման շնորհիվ նրա տարածքի ընդարձակման, այնտեղ ծավալվող քաղաքական հարաբերությունների ու դրանց հետևանքով մարզպանության տրոհման ու «Աղվանք» նոր աշխարհագրական հասկացության առաջացման խնդիրներին, ընդ որում ուշադրություն է դարձվել և հատկապես շեշտվել տեղի ունեցող յուրաքանչյուր պատմական իրադարձության ստույգ վայրը մարզպանության շրջանակներում:

VI դարի վերջերին ու VII դարի սկզբներին ուսումնասիրվող երկրամասում հայտնվում են նոր նվաճողներ, որոնք ավերածություն, սով ու քայքայում բերող իրենց արշավանքներով լարված ու անհանգիստ վիճակ էին ստեղծում ինչպես Բյուզանդիայի, այնպես էլ Սասանյան Իրանի ու սրանց ենթակա երկրների համար: Այս հանգամանքը հարկադրում է վերջիններիս փոխել իրենց քաղաքականությունը հպատակ երկրներում և Կովկասյան լեռնաշղթայի թույլ ու խոցելի տեղերում պաշտպանական ամուր ու հուսալի շերտ ստեղծել: Այդ նպատակին ուղղված նրանց

ջանքերը հիմնովին փոխում են երկրամասի քաղաքական դեմքը և մարզպանության տարբեր կեսերում՝ Կուր գետի աջափնյակում և ձախափնյակում ձևավորվում են պատմական ճակատագրերով ու աշխարհագրական անվանումներով տարբեր քաղաքական միավորումներ: Նման քաղաքականության հետևանքով մարզպանության ձախափնյա մասը մասնատվում է առանձին մանր վարչական միավորումների, որոնց մեջ ժամանակ առ ժամանակ գլուխ են բարձրացնում նոր իշխանական տներ, իսկ ողջ աջափնյակում կազմավորվում է միասնական մի իշխանություն, որի գլուխ են կանգնում Առանշահիկները, իսկ VI դարի վերջերից՝ Միհրանյան իշխանական հարստությունը, որի ծագման իշխանության հասնելու քաղաքական ու տնտեսական գործունեության պատմությանն էլ, հենց նվիրված է աշխատության վերջին մասը:

Միհրանյան իշխանների գործունեության ոլորտը գլխավորապես Կուր և Արաքս գետերի միջև ընկած գետամիջյան տարածքն էր, Հայոց արևելից կողմանց տարածքը: Այն աշխատությունում նշվել է «Հայոց արևելից կողմանք», «Առան», բայց ավելի հաճախ «Աղուանք» անվանումներով, այսինքն՝ նրանցով, որ պատմականորեն առաջացած հանգամանքների բերումով ստացել էր հիշյալ երկրամասը Աղվանից մարզպանության տրոհումից հետո[1]:

Մենագրությունը նյութական, գրավոր սկզբնաղբյուրների (հունա-հռոմեկան, հայկական, վրացական, բյուզանդական, ասորական, արաբական) ու առկա գրականության (հատկապես նոր ու նորագույն) հիման վրա գրված պատմաքննական հետազոտություն է և հայ պատմագրության մեջ առաջին անգամ ամփոփ ձևով ուսումնասիրության է առնում Աղվանից երկրի պատմությունը նախնադարյան-համայնական, ստրկատիրական ու վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում:

Աշխատության մեջ արծարծվել են նաև «Աղուանք» աշխարհագրական անվան ու նրա օտարալեզու համարժեքները՝ իրենց ընդգրկումներով ու գործածության ոլորտներով, այդ անվանումների ստուգաբանությունները, յուրաքանչյուր նոր պատմական ժամանակաշրջանում առաջացած քաղաքական սահմանները ու էթնիկական բնույթի մի շարք հարցեր: Դա պայմանավորված է ինչպես Աղվանքի պատմությունն ավելի ճիշտ ըմբռնելու կարևորությամբ, այնպես էլ այն հարցերում պարզություն մտցնելու անհրաժեշտությամբ, որոնք հաճախ ներկայացվում են կանխակալորեն, աղավաղված ու միակողմանի և այդ վիճակում տեղ գտնում ընդհանրացնող բնույթի աշխատություններում[2]:

Աշխատության մեջ Աղվանքի պատմությունը տրվում է անդրկովկասյան իր հարևանների՝ Մեծ Հայքի ու Վիրքի պատմության հետ սերտ կապի մեջ: Օտարերկրյա զավթիչների նվաճողական քաղաքականությունը բախվում էր բախտակից այս երկրների ազատագրական պայքարին, և դրա շնորհիվ Կովկասը կատարում էր համաշխարհային պատմական դեր. այստեղ վերջ էին գտնում պարսկական ու հռոմեական նվաճումները[3]:

---

[1] Ուսումնասիրողները այդ տարածքը հաճախ կոչում են նաև «Հայոց Աղուանք»:
[2] Всемирная история, т. II, М., 1956, с. 146; Советская историческая энциклопедия, т. I, М., 1961, с. 353, "Албания (кавказская), II в., до н. э. – X в. н. э", քարտեզը՝ նույն տեղում:
[3] Т. Моммзен, История Рима, русский пер. под общей редакцией Н. А. Машкина, т. III, М., 1941, с. 109.

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ամեն մի երկրի պատմության ուսումնասիրության համար առաջնակարգ նշանակություն ունեն սեփական, տեղական բնույթի պատմողական աղբյուրները, ժողովրդական բանահյուսության նմուշները, վավերագրական ու այլ կարգի փաստաթղթեր, ավանդություններ և այլն: Չնայած հայ մատենագիտության մեջ հայտնի այն տեղեկություններին[1], թե V դարում Մեսրոպ Մաշտոցը նշանագրեր է հորինել նաև աղվանացիների համար և դրանցով թարգմանություններ են կատարվել Աստվածաշնչից ու այլ սուրբ գրքերից, գուցե և ստեղծվել է այլ գրականություն, բայց աղվանագիտությունը մինչև օրս իր տրամադրության տակ չունի աղվանական գրավոր և ոչ մի հուշարձան, գրական ժանրի և ոչ մի նմուշ[2]:

Ուստի Աղվանքի պատմությունն ուսումնասիրվում է օտար՝ հայկական, հունա-հռոմեական, վրացական, արաբական, բյուզանդական ու ասորական աղբյուրների օգնությամբ:

## Ա. Աղվանքը հայկական աղբյուրներում

Սկզբնավորվելով V դ. հայկական աղբյուրները կարևոր ու արժանահավատ տեղեկություններ են հաղորդում Աղվանից աշխարհի բոլոր ժամանակների քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի, աշխարհագրական դիրքի, վարչական բաժանումների, ռազմական ուժի, երկրի բնակիչների կենցաղի ու սովորույթների մասին:

Մ. Խորենացին իր նշանավոր «Հայոց պատմության» մեջ տեղեկություններ է հաղորդում հռոմեացիների դեմ պայքարում հայոց թագավորներ Տիգրան Մեծի ու Արտավազդի և աղվանացիների համագործակցության, IV դարի 30-ական թթ. հայ-աղվանական հարաբերությունների, Աղվանքում հյուսիսային ցեղերի չորսամյա տիրապետության ու աղվանից գրի ստեղծման պատմության մասին: Մեր ողջ բազմադարյան պատմական գրականության մեջ առաջին անգամ նա է փորձ անում ստուգաբանել «Աղուանք» տերմինը՝ որպես ավանդական Սիսակի «աղու» և, կամ որ նույնն է, «համեղ», «քաղցր» բնավորությունից առաջացած անվանում[3]:

Աղվանքի աշխարհագրական սահմանները, վարչական կառուցվածքը, գավառները, գետերն ու առանձին տեղավայրեր, երկրի՝ քաղաքական իրադարձություններով պայմանավորված, վարչատնտեսական ու տարածքային փոփոխություններն են արտացոլված VII դարի նշանավոր «Աշխարհացոյցի» մեջ, որը մեզ է հասել Մովսես Խորենացու անունով[4]: «Աշխարհացոյցը» Մեծ Հայքի, Կողքիսի, Վիրքի, Ալբանիա-Աղվանքի ու Ասիական Սարմաթիայի մեջ մտնող մի

[1] Տե՛ս ստորև:

[2] Ճիշտ է, Մինգեչաուրում հայտնաբերվել է չորս աղվանական արձանագրություն, որոնց վերծանությամբ զբաղվել է Ա. Գ. Աբրահամյանը ( А. Г. Абрамян, Дешифровка надписей Кавказских агван, Ереван, 1964, բայց դրանք խնդրին օգնել չեն կարող)

[3] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1981:

[4] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ, յաւելուածովք նախնեաց, Վենետիկ, 1881:

ամբողջ շարք երկրների, Եվրոպայի, Լիբիայի (Աֆրիկայի), Միջերկրայքի, Սասանյան Պարսկաստանի ու այլ երկրների պատմության ու աշխարհագրության ուսումնասիրության համար մի անգնահատելի աղբյուր է, համաշխարհային նշանակության եզակի հուշարձան[5]: Այն մեզ է հասել երկու խմբագրություններով՝ համառոտ[6] և ընդարձակ[7] ու գրական հուշարձանի իր արժանիքներով մշտապես գրավել ուսումնասիրողների ուշադրությունը[8]: Սկզբնաղբյուրային կարևորությունն էլ հաշվի առնելով, հայ աշխարհագետի այս աշխատությունը թարգմանվել է մի շարք լեզուներով, ունեցել մի քանի հրատարակություն և, վերջապես, փորձ է արվել նաև վերականգնելու նրա սկզբնական բնագիրը[9]:

VII դարի հայ աշխարհագետը իր քարտեզները կազմելիս և դրան կից ուղեցույց-բացատրությունները գրելիս հիմք է ընդունել II դարի նշանավոր աշխարհագետ և քարտեզագիր Կլավդիոս Պտղոմեոսի տվյալները, բայց Հայաստանի և հարևան երկրների՝ Ալբանիա-Աղվանքի ու Վիրքի նկարագրության համար բոլորովին նոր նյութերով է առաջնորդվել[10] և հանգամանորեն պատկերել «բուն Աղուանքն» իր սահմաններով, վարչական կառուցվածքով, քաղաքներով ու գետերով և հետագայում տեղի ունեցած վարչական ու տարածքային փոփոխություններով: «Աշխարհացույցը» նաև այն միակ աղբյուրն է, որ պահպանել է ուսումնասիրվող երկրի բոլոր անվանումները՝ «Աղուանք», «Ալբանիա», «Ռան»:

Պարսկաստանում դինաստիական փոփոխությունների ու դրա հետ կապված հայոց Խոսրով Մեծ (Տրդատ Բ) թագավորի՝ Սասանյան Արտաշիրի (Շապուհ Ա-ի) դեմ մղած կռիվներում աղվանացիների ու կովկասյան այլ ցեղերի մասնակցության մասին է պատմում Ագաթանգեղոսը[11], իսկ մ. թ. IV դարի 60-ական թթ. տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների ու վարչաքաղաքական փոփոխությունների մասին խոսելիս՝ Փավստոս Բուզանդը[12] հաստատում է հնագույն շրջանից եկող պատմական այն իրողությունը, որ Մեծ Հայքի ու բուն Աղվանքի միջև սահման էր Կուր գետը:

Փ. Բուզանդի «Հայոց պատմությունը» արժեքավոր տեղեկություններ է պարունակում նշված դարաշրջանում հայ-աղվանական փոխհարաբերությունների մասին՝ լույս սփռելով նաև Աղվանքի սոցիալ տնտեսական կարգի վրա, ու այն բնութագրելով որպես ֆեոդալականացող հասարակարգ:

Կարևոր սկզբնաղբյուրներից է նաև մեսրոպատառ առաջին պատմագիտական աշխատությունը՝ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը[13]: Աշխատության մեջ հատկապես ընդգծվում է այն փաստը, որ Մեսրոպ Մաշտոցը, բացի հայոց ու վրաց

---

[5]Ավելի մանրամասն տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963:
[6]Աշխարհացոյց Ե դարու, ՍՊբ, 1872:
[7]A. Soukry, Géographie de Moise de Corène d'après Ptolémée. Texte arménien, traduit en francais par le P. Arsène Soukry, Venise, 1881.
[8]Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի»:
[9]Ս. Տ. Երեմյան, «Աշխարհացոյցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ, ՊԲՀ, 1972, թիվ 4, էջ 209-230: 1973, թիվ 1, էջ 238-252, թիվ 2, էջ 261-274:
[10] Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 13:
[11] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Երևան, 1983:
[12] Փավստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987:
[13] Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմ. առաջաբանով և ծանոթ. ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941:

գրերից, ստեղծում է նաև աղվանից գիրը և օգնում այդ գրով թարգմանություններ կատարել սուրբ գրքերից: Նրանում ի հայտ են գալիս և՛ ժամանակաշրջանի քաղաքական բնութագիրը, և՛ աղվանից թագավոր Եսվաղենի ու եպիսկոպոս Երեմիայի պայծառ կերպարները, որպես լուսավորության, գրի ու դպրության ջատագովներ:

V դ. Անդրկովկասում Սասանյան Պարսկաստանի վարած բռնի քաղաքականության և դրա հետևանքով Մեծ Հայքի գլխավորությամբ անդրկովկասյան ժողովուրդների հուժկու ապստամբության մասին է Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» աշխատությունը[14]: Այն պարսիկների դեմ ուղղված հայոց պատերազմի պատմությունը լինելուց զատ, նաև Աղվանքում ապստամբության ծագման, ապստամբած աղվանացիներին հայերի ցույց տված օգնության, Վարդան Մամիկոնյանի ընդհանուր հրամանատարությամբ պարսից թվական գերազանցություն ունեցող զորագնդերի դեմ հայ-աղվանական բանակների ճակատամարտելու և պարսիկներին ջախջախելու պատմությունն է: Եղիշեի գիրքը կարևոր տվյալներ է պարունակում նաև Աղվանքում տեղի ունեցած 457-461 թթ. ապստամբության, դրա ճնշման, ապստամբների հետ Պերոզի կատարած հաշվեհարդարի, աղվանից թագավորության վերացման ու այնտեղ մարզպանական կառավարում հաստատելու մասին:

Նույն դարի երկրորդ կեսի պատմությանն է անդրադառնում նաև «ոսկեդարի» մի ուրիշ պատմիչ՝ Ղազար Փարպեցին[15]: «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ սկսելով Վարդանանց պատերազմից, Փարպեցին գրում է հայերին, վրացիներին ու աղվանացիներին ձուլելու պարսիկների վարած չթուլացող քաղաքականության, այդ հողի վրա դարի երկրորդ կեսին նրանց բարձրացրած ապստամբությունների ու 484 թ. Նվարսակում դաշնագրի կնքման մասին:

Ղ. Փարպեցու աշխատության մեջ նկարագրված պատմական բոլոր իրադարձություններում Աղվանքը Մեծ Հայքից ու Վիրքից առանձին չի հիշատակվում: Այս երկրները ամենուր հիշվում են միասին՝ դրանով արտացոլելով ոչ միայն Պարսկաստանի վարած քաղաքանությունն ընդհանրապես այս երկրներում, այլև այն ընդհանուրն ու միասնականը, պատմական այն ամուր թելերը, որոնցով միմյանց հետ կապված էին Մեծ Հայքը, Աղվանքն ու Վիրքը:

VI դարի վերջի ու VII դարի պատմության ուսումնասիրությանն է նվիրված Սեբեոս եպիսկոպոսի «Պատմությունը»[16], որը առատ նյութ է տալիս բյուզանդական Հերակլ կայսեր պարսկական արշավանքների, պարսիկների դեմ պատերազմելու և կովկասյան ցեղերի հետ դաշնակցելու ժամանակ Աղվանքում և նրանց հարակից շրջաններում ծավալվող մի շարք պատմական իրադարձությունների ուսումնասիրության համար: Ականատես ու ժամանակակից պատմիչը, որն իր պատմության դեպքերը հասցնում է մինչև 661 թ., առաջինն է հայ մատենագրության մեջ, որ հաղորդում է դեպի Աղվանք ու սրան հարակից երկրներ արաբների կատարած արշավանքի մասին:

Հայկական աղբյուրների մեջ Աղվանքի պատմության ուսումնասիրության

---

14 Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1989:

15 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Երևան, 1982:

16 Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979:

համար կարևորագույն, մի շարք հարցերում էլ միակ ու անփոխարինելի աղբյուր է «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատությունը: Այն բաղկացած է երեք գրքից, որոնցից առաջին երկուսը գրել է VII դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին, իսկ երրորդը՝ Մովսես Դասխուրանցին (X դար): Աշխատությունը դեռ XIX դարի կեսերից՝ ճանաչում ստանալու առաջին իսկ օրերից մինչև մեր ժամանակները, իր վրա է բևեռել եվրոպացի, ռուս, հայ, վրացի ու ադրբեջանցի ուսումնասիրողների ուշադրությունը, որը չթուլացող հետաքրքրությամբ շարունակվում է մինչև այսօր: Այդ ժամանակաշրջանից գիրքը ունեցել է մի քանի հրատարակություններ և հատվածաբար ու ամբողջական թարգմանություններ[17]: Նրա մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, ուր քննության են ենթարկվել հեղինակի (կամ հեղինակների) անձնավորության, աշխատության լեզվի, պատմության նյութի ու ընդգրկած տարածքի և նմանօրինակ շատ այլ հարցեր: Այսուհանդերձ այս աշխատության պատմագիտական ու բանասիրական բնույթի բազմաթիվ հարցերի վերաբերյալ ուսումնասիրողները չունեն ընդհանուր կարծիք: Մասնագիտական գրականության մեջ հաճախ են հանդիպում այս կամ այն հարցերի սխալ կամ կանխակալ մեկնաբանություններ: Այսպես,օրինակ՝ Մ. Կաղանկատվացու անձնավորության մասին պատմագիտության մեջ տեղ են գտել այնպիսի ոչ ճիշտ ենթադրություններ ու կարծքներ, ինչպիսիք՝ նրան «աղվանական պատմիչ»[18] կամ «աղվանական տարեգիր»[19] համարելն է կամ էլ ուղղակի հայտարարելը, թե «մեր կարծիքով ճիշտ չէ մի շարք գիտնականների «խորը համոզմունքը», թե Մ. Կաղանկատվացին հայ պատմիչ էր»[20]: Նրա երկի կապակցությամբ հայտնված մի այլ կարծիքի համաձայն, «Աղվանից աշխարհի պատմությունը» նախապես գրված է եղել գարգարերեն լեզվով, ապա թարգմանվել է հայերեն[21], իսկ բնագիրը ոչնչացվել[22]: Զարգացնելով այս կեղծ տեսությունը՝ «Աղուանից աշխարհի պատմությունը» սկսել են դիտվել որպես աղվանական գրականության նմուշ, նրանում «հայտնաբերվել» աղվաներեն

---

[17] Մանրամասն տես Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ ԽԳ-ԽԷ:
1984 թ. ՀՀ ԳԱ հրատարակչությունը լույս ընծայեց նույն աշխատության գիտաքննական բնագրի նոր՝ ռուսերեն թարգմանությունը (Мовсэс Каланкатуаци, История страны Алуанк, пер. с древнеармянского, предисл. и коммент. Ш. В. Смбатяна, Ереван, 1984: Գրքի գրախոսականը տես Г. С. Свазян, Мовсэс Каланкатуаци, История страны Алуанк, Լրաբեր հաս. գիտ., 1986, թիվ 1, էջ 84-88): Վրաստանի ԳԱ «Մեցնիերեբա» հրատարակչությունը 1985 թ. հրատարակել է աշխատության վրացերեն թարգմանությունը: Мовсэс Каланкатуаци, История страны Алуанк, пер. с древнеармянского, пред., прим и указатели Л. С. Давлианидзе-Татишвили, Тбилиси, 1985, (на груз. яз.):
Տեղեկություններ կան նաև նրա թուրքերեն թարգմանության մասին (տես М. Зулалян, Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Ереван, 1970, с. 52).
[18] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 4, 182, 188 и сл.
[19] З. И. Ямпольский, К изучению Летописи Кавказской Албании, Известия АН АзССР, 1957, N 9, с. 151.
[20] З. М. Буниятов, Азербайджан в VII-IX вв., Баку, 1965, с. 97.«Աղվանական պատմիչ» տերմինը այժմ հաստատուն տեղ է գտել ադրբեջանցի բոլոր հեղինակների պատմագիտական ու բանասիրական բնույթի աշխատություններում:
[21] З. И. Ямпольский, К изучению..., с. 154.
[22] З. М. Буниятов. Азербайджан в VII-IX вв..., с. 97.

կամ ուտիերեն բառեր, թյուրքիզմ[23] և աշխատության հեղինակի անունը գրվել թուրքական ձևով՝ «Մուսա Կալանկայտուկլու»[24]: Սակայն Մ. Կաղանկատվացու աշխատության աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա իր աշխատությունը գրելիս օգտվել է լոկ հայկական սկզբնաղբյուրներից (Ագաթանգեղոս, Բուզանդ, Խորենացի, Եղիշե, Պետրոս Սյունեցի, առանձին պաշտոնական ուղերձներ, հայ աշխարհիկ ու հոգևորական մարդկանց նամակագրություններ և այլն), բառ առ բառ արտագրել ամբողջական հատվածներ[25], որից բխում է միայն մեկ ճշմարտացի եզրակացություն. բացառապես հայ պատմիչը կկարողանար այդքան լայն ու ազատորեն օգտագործել հայրենի գրականությունը: Մ. Կաղանկատվացու հայկական ծագումն է վկայում նաև նրա աշխատության շարադրանքի ոճի վերլուծությունը: Մյուս հայ պատմիչների նման, Կաղանկատվացին ևս ունի ժամանակագրական կայուն համակարգ, ըստ որի տեղի ունեցող պատմական իրադարձությունները որոշվում են Սասանյան թագավորների կամ բյուզանդական կայսրերի գահակալման, անկման կամ մահվան տարեթվերով, որոնք հաճախ ուղեկցվում են հայոց թվականությամբ և ամիսների հայկական անվանումների հիշատակությամբ: Ուրեմն՝ երկու կարծիք լինել չի կարող. Կաղանկատվացին հայ պատմիչ է և իր «Պատմությունը» գրել է հայ պատմագրության մեջ ընդունված կանոններով և միայն ու միայն իր ժամանակի հայ գրական լեզվով՝ գրաբարով[26]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Մ. Կաղանկատվացու աշխատությունը Հայոց արևելից կողմանց՝ Ուտիքի ու Արցախի պատմությունն է: Պատրաստվելով գրել իր աշխատությունը պատմիչը նախ և առաջ ներկայացնում է իր նկարագրելիք երկրի սահմանները. «ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն

[23] В. Гукасян, О некоторых вопросах истории албанской письменности и литературы, Известия АН Аз ССР (серия лит., языка и искусства), 1968, N 2, с. 85-101; Его же, Удинские слова в "Истории албан", там же, 1968, N 1, с. 53-61; Его же, Тюркизмы в "Истории албан", Сб. "Структура и история тюркских языков", М. 1970.

[24] Նման յուրացման փորձեր կան նաև աշխատության անբաժանելի մասը կազմող «Ողբք ի մահն Ջուանշիրի մեծի իշխանի» ստեղծագործության հանդեպ: Առաջ քաշելով այն անհեթեթ թեզը, թե «Ողբքը...» ևս գրված է եղել գարգարերեն լեզվով և հետո թարգմանվել հայերեն, ադրբեջանցի հեղինակները համառությամբ սույն ստեղծագործությունը ևս համարում են աղվանական գրականության նմուշ, հեղինակի անունը դարձյալ թուրքական լեզվով գրում «Դեվդեկ» և ի լրումն այս ամենի նրան կոչում «ադրբեջանցի շեհիր» (տե՛ս "Улдуз", Баку, 1971, с. 6, 34-36): Սակայն «Ողբքի» ձեռագրերի ուսումնասիրությունը, որոնցում յուրաքանչյուր քառյակ սկսվում է հայերեն տառերի (ձեռագրերում դրանք գրված են կարմիր թանաքով, իսկ հրատարակված տեքստերում՝ գլխագրերով) հերթականությամբ, կազմում է հայկական այբուբենի աքրոստիքոս (տե՛ս Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), ձեռ. թիվ 2646, 4197: «Նոյեան Աղաւնի» Կոստանդնուպոլիս, 1852, թիվ 36-37, 58: Պատմութիւն Աղուանից արարեալ Մովսիսի Կաղանկայտուացւոյ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կ. Վ. Շահնազարեան, Փարիզ, 1860, հ. Ա, էջ 354-359; Զ. Մսերեանց, Տեղեկութիւն ի վերայ Ջուանշիր իշխանի և Դաւթակ Ճարտասանի, «Ճռաքաղ», Մոսկվա, 1860, էջ 79-83, որն ընդհանրապես թարգմանելի չէ, ցույց է տալիս վերոհիշյալ կարծիքի սնանկությունն ու կանխակալ կարծիքը:

[25] Հ. Ս. Սվազյան, Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները, ՊԲՀ, 1972, թիվ 3, էջ 195-206:

[26] Մանրամասն տե՛ս Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966; Ас. Мнацаканян, П. Севак, По поводу книги З. Буниятова "Азербайджан в VII-IX вв", ՊԲՀ, 1967, թիվ 1; Հ. Ս. Սվազյան, Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» աղբյուրները; Նույնի՝ «Աղվանից աշխարհ» հասկացությունը ըստ Մովսես →

Հնարակերտ»[27]: Իսկ նշված տարածքում՝ Երասխ գետից մինչև Կուր գետի աջ ափին գտնվող Հնարակերտ ամրոցը, ընկած են հայոց Ուտիք և Արցախ նահանգները: Այս տարածքն էր, որ «զարևմուտս եւ զհիւսիսի մերոյ աշխարհիս»[28] կողմերը կարգավորելիս, հայոց թագավոր Վաղարշակը տալիս է Սիսակի սերունդներից Առան նախնուն ի կառավարում, որ նշանակում է, թե Առանը կարող էր ժառանգել միմիայն հայկական տարածք: Բացի դրանից, Խորենացու վկայությամբ, Առանի տարածքը հյուսիսից եզրափակվում էր Կուր գետով[29], այսինքն՝ Կուր գետից այն կողմ չէր անցնում: Մինչդեռ հունա-հռոմեական աղբյուրներից հայտնի է, որ Ալբանիան ընկած էր ճիշտ նրա ձախ ափին՝ գետից հյուսիս: Խորենացու հետևությամբ Կաղանկատվացին ևս վկայում է, որ Կուր և Արաքս գետերի միջև ընկած այդ տարածքը բնակեցնում էին ուտեացվոց, ծավդեացվոց, գարդմանացվոց և գարգարացվոց ցեղերով, որոնք սերում էին վերհիշյալ Առանից[30], այն դեպքում, երբ բուն Աղվանքում ապրում էին 26, չնչին բացառությամբ, անհայտ ցեղեր:

«Պատմության» հենց սկզբում ցույց տալով իր նկարագրելիք երկրի սահմանները, ինչպես և սպասվում էր, Կաղանկատվացին գրքի շարադրանքի համար հիմք է ընդունում իր նշած շրջանակներում տեղի ունեցած պատմական իրադարձությունները, հաճախ օգտագործելով «մերոցս արևելեայցս», «արևելեայցս» արտահայտությունները[31], որը հիմք է տալիս եզրակացնելու, որ նա իրեն և իր հայրենակիցներին համարում է Հայոց արևելից կողմանց բնակիչներ: Բայց որոշ ուսումնասիրողներ գտնելով, որ Կաղանկատվացին օգտագործում է այդ արտահայտությունները, սակայն չի նշում, որ խոսքը Հայոց երկրի արևելից կողմերի մասին է, առաջ են քաշում մի դրույթ, ըստ որի իբր նշված հասկացությունները նրա գրքում իմաստավորում են քրիստոնեական աշխարհում Աղվանքի՝ Երուսաղեմից արևելք գտնվելու հանգամանքը[32]: Սակայն մտացածին է նաև այս դրույթը: Կաղանկատվացուն, որպես հայ պատմիչի, հարկ չկար անընդհատ ընդգծելու այն պարագան, որ ինքը գրում է Հայոց արևելից կողմանց պատմությունը: Մյուս կողմից էլ, ցանկության դեպքում, Նրա մոտ կարելի է գտնել նաև պահանջվող արտահայտությունը: Այսպես, պատմագիրը գրելով Հայաստանում առաջին քրիստոնյա քարոզիչ Թադեոս առաքյալի գործունեության մասին, հայտնում է, որ նա հասցրեց լուսավորել Հայոց երկրի արևելից կողմանց մի մասը միայն, մնացած մասը բաժին է հասնում Գրիգոր Լուսավորչին: «Արդ ոմն մի յաշակերտացն տեառն՝ Թադէոս անուն... հասել սմա մասն ինչ ի Հայաստանս աշխարհին, լուսավորէր զկողմանս ինչ Արևելից աշխարհին, մինչև եկն հռչակելին պատերազմողն և երիցս երանելին Գրիգորիոս»[33]: Ասվածից ակնհայտ է, որ

→ Կաղանկատվացու, ԲՀԱ, 1973, թիվ 1: Աղբբեջանցի հեղինակների փորձերը՝ ապացուցել, թէ «Աղվանից աշխարհի պատմությունը» նախապես գրված է եղել ոչ հայերեն, անհամոզիչ են գտե նաև այլ հեղինակներ (տե՛ս А. П. Новосельцев, В. Т. Пашуто, Л. В. Черепнин, Пути развития феодализма, М. 1972, с. 43, пр. 76).

[27] Կաղանկտվացի, Ա, գլ. Դ:

[28] Խորենացի, Բ, գլ. Ջ.:

[29] Նույն տեղում, Բ, գլ. Ը:

[30] Նույն տեղում, Կաղանկատվացի, Ա, գլ. Դ:

[31] Կաղանկատվացի, Ա, գլ. Ջ և հաջ.:

[32] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 77.

[33] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԴ:

Կաղանկատվացու համար արևելից կողմերը Հայոց երկրի համապատասխան մասն են. Ի դեպ, քրիստոնեական աշխարհում, Երուսաղեմի համեմատությամբ, Արևելքում է գտնվում և Մեծ Հայքը: Սակայն և ոչ մի հայ պատմիչ չի օգտագործել «Արևելից կողմանք» արտահայտությունն այդ իմաստով: Բացառություն չէր կարող լինել և Կաղանկատվացին: Եվ, վերջապես, բոլորովին էլ պատահական չէ, որ «Պատմության» որոշ ձեռագրեր ունեն «Երկրորդ պատմութիւն Արևելիցս Աղուանից նահանգիս» վերնագիրը[34]: Աշխատության մեջ բազմիցս շեշտվում է, որ Կուր գետի ձախակողմյան ափերում ապրում են օտար ցեղեր, որոնք, անցնելով «յայսկոյս Կուրական գետոյն», ավերածություններ էին սփռում իր հայրենի երկրում[35]:

«Աղվանից աշխարհի պատմության մեջ հիշատակվում են մեծ թվով նահանգներ, գավառներ, քաղաքներ, գյուղեր, ավաններ՝ վայրեր, ուր տեղի են ունենում նկարագրվող պատմական անցքերը: Գրքում զետեղված այդպիսի աշխարհագրական վայրերի տեղադրությունը, որոնք չեն անցնում Կուրից այն կողմ[36], կասկած չի թողնում, որ Մ. Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմությունը» Հայոց Արևելից կողմանց՝ Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածքի, իսկ ավելի ստույգ՝ Ուտիքի ու Արցախի պատմությունն է հայոց պատմության ընդհանուր հիմնապատարի վրա:

Աշխատությունը հայոց Ուտիք ու Արցախ նահանգների պատմության վերաբերյալ այնպիսի արժեքավոր նյութեր է պարունակում, որոնք լրացնում են մեր մյուս հայ պատմիչների՝ Մ. Խորենացու, Ղ. Փարպեցու, Փ. Բուզանդի, Եղիշեի և այլոց հաղորդումները:

Գրքում ցայտուն կերպով դրսևորվել է այն միտքը, որ «Արցախամուր» աշխարհն Ուտիքի հետ միասին Աղվանից մարզպանության կազմում էլ վարել է ինքնուրույն քաղաքական կյանք սեփական իշխանների՝ Առանշահիկների գլխավորությամբ: Եվ Աղվանից մարզպանության կազմի մեջ մտնող այս նահանգների պատմության կապակցությամբ էլ Մ. Կաղանկատվացին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև բուն Աղվանքի պատմական իրադարձությունների մասին: Նրա տեղեկությունների շնորհիվ հաստատվում ու ստուգվում են հայկական մյուս աղբյուրների նման հաղորդումները, իսկ շեղումները առավել ցայտուն են դարձնում այն սոցիալ-տնտեսական ու քաղաքական փոփոխությունները, որոնք հասարակական կյանքի զարգացման օրինաչափության հետևանքով անխուսափելի էին:

Աշխատությունը հայկական Առանշահիկ իշխանական տան ու նրան հաջորդելու եկած Միհրանյան հարստության ծագման, քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի շինարարական ու մշակութային գործունեության վերաբերյալ տեղեկություններ հաղորդող միակ ու անփոխարինելի աղբյուրն է և ամբողջացնում է նաև Անդրկովկասում արաբների վարած քաղաքականության մասին մյուս հայ պատմիչների հաղորդումները:

---

[34] Մատենադարան, ձեռ. թիվ 1531, թ. 273բ, այունակ Ա, թիվ 2646, թ. 66բ, թիվ 1725, թ. 78ա:
[35] Կաղանկատվացի, Ա, գլ. 29, Բ, գլ. ԻԳ, ԻՁ և հաջ.:
[36] Մանրամասն տե՛ս Հ. Ս. Սվազյան, «Աղվանից աշխարհի» հասկացությունը ըստ Մովսես Կաղանկատվացու, էջ 231-233:

Կաղանկատվացու երկը հայ պատմագրության լավագույն աշխատությունների թվին է դասվում ոչ միայն Արցախի, Ուտիքի ու բուն Աղվանքի, այլև Վիրքի, Հյուսիսային Կովկասի ժողովուրդների ու ցեղերի (հատկապես խազարների, սրանց կենցաղի ու, մանավանդ, մարդաբանական տիպի), Սասանյան Պարսկաստանի, Բյուզանդիայի ու Արաբական խալիֆությեան մասին իր տեղեկություններով:

Այսպիսով, «Աղվանից աշխարհի պատմության»՝ որպես սկզբնաղբյուրի նշանակությունը դուրս է գալիս նեղ, տեղական սահմաններից, դառնում նշված երկրների, ժողովուրդների ու ցեղերի պատմության տարբեր հարցերի և պատմական կապերի ուսումնասիրության համար անգնահատելի աղբյուր, բարձրանում «տիեզերական» պատմության մակարդակի:

VII-VIII դարերի, ավելի ստույգ՝ 620-ական թթ. մինչև 780-ական թթ. պատմությունն է շարադրել Ղևոնդ պատմիչը[37]: Նրա պատմությունն ընդգրկում է մինչարաբական տիրապետության առաջին հարյուրամյակից քիչ ավելի ուշ շրջանը և այդ ժամանակաշրջանի լավագույն սկզբնաղբյուրներից է: Ի տարբերություն մյուս հայ պատմիչների, Ղևոնդը մեծ ուշադրություն է դարձրել հատկապես երկրի ներքին կյանքին: Մեծ Հայքում, Աղվանքում ու Վիրքում արաբների վարած հարկային քաղաքականության նրա նկարագրությունը ցնցող տպավորություն է թողնում: Դրան զուգահեռ, Ղևոնդը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև արաբների դեմ երեք երկրների բարձրացրած ապստամբության, խազարների հարձակման, արաբա-խազարական հարաբերությունների և դրանցում նշված երկրների մասնակցության, վերջիններիս վրա նոր կառավարիչներ կարգելու մասին և այլ մանրամասներ:

Աղվանից եկեղեցու, նրա՝ հայոց եկեղեցու հետ ունեցած հարաբերությունների, կրոնադավանաբանական վեճերի կամ այն ժամանակվա գաղափարական պայքարի մասին են գրում Հովհ. Դրասխանակերտցին (IX-X դդ.)[38], Ուխտանես եպիսկոպոսը (Xդ. երկրորդ կես)[39], Ստ. Օրբելյանը (XIII դ.)[40]:

Աղվանքի պատմության վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում նաև Ասողիկը (X-XI դդ.)[41], Կ. Գանձակեցին (XIII դ.)[42], Մխիթար Այրիվանեցին (XIII դ.)[43] և ուրիշներ[44]:

---

37 Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1877:

38 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

39 Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871:

40 Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910:

41 Ստեփանոս Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:

42 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

43 Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867:

44 Տե՛ս գրականության ցանկը:

## Բ. Աղվանքը հունա-հռոմեական և այլ օտարալեզու աղբյուրներում

*Հունա-հռոմեական աղբյուրներ* - Պատմության ասպարեզում աղվանացիների երևան գալու մասին առաջին հիշատակությունը վերաբերում է մ. թ. ա. IV դարի վերջերին, երբ նրանք, արդեն ցեղային մեծ միություններ կազմած, մասնակցում էին այնպիսի խոշոր իրադարձությունների, ինչպիսին Գավգամելայի ճակատամարտն էր մ. թ. ա. 331 թ: Դա գրում է մ.թ. II դարի պատմիչ Փլավիոս Արրիանոսը իր «Ալեքսանդրի արշավանքը» աշխատության մեջ: Գրելով Աքեմենյան Պարսկաստանի թագավոր Դարեհ Գ-ի դեմ Ալեքսանդր Մակեդոնացու մղած կռիվների մասին՝ հաղորդում է, որ այս վերջին Աքեմենյանի կողմում, գրավելով կարևոր ռազմաստրատեգիական դիրքեր[45] ընդդեմ մակեդոնացիների, կռվում էին նաև աղվանացիները: Արրիանոսի հաղորդումը, լույս սփռելով նրանց հասարակական զարգացման աստիճանի վրա, ցույց է տալիս նաև այդ ցեղային միությունների կախյալ քաղաքական կացությունը Աքեմենյաններից:

Պետական կազմավորման հասած Աղվանքի մասին արդեն գրում է Ստրաբոնը (մ.թ.ա. 69-մ.թ. 20 թթ.)՝ այդ բնագավառում անտիկ հեղինակներից առաջինը ինչպես ժամանակագրական կարգով, այնպես էլ տեղեկությունների մանրամասնությամբ ու ծավալով: Ստրաբոնի «Աշխարհագրություն»[46] աշխատությունը, որը պարունակում է մեզ հետաքրքրող տեղեկությունները, հիմնականում հեղինակի սեփական դիտարկումների արդյունքն է: Դրանց զուգընթաց, անդրկովկասյան երկրները նկարագրելիս, նա օգտվել է ինչպես նախորդների (Էրատոսթենես, Պոսիդոնիոս, Պատրոկլես և այլք), այնպես էլ ժամանակակիցների (Թեոփանես Միտիլենացի, Դելիոս, Մետրոդորոս Սկեփսացի, Հիփսիկրատես և ուրիշներ) աշխատություններից[47]՝ մեծ տեղ տալով, սակայն, ժամանակակիցների ու ականատեսների վկայություններին: Մասնավորապես Աղվանքի նկարագրության համար Ստրաբոնը օգտվել է նրանցից, ովքեր «արշավանքի են եղել այդ կողմերում, պատմելով նրանց (աղվանացիների - Հ. Ս.) այսպես ասած «կիկլոպյան» ապրելակերպի մասին»[48]: Այստեղ աշխարհագրագետը նկատի ունի Պոմպեոսի Կովկասյան արշավանքի մասնակիցներին և, առաջին հերթին, Թեոփանես Միտիլենացուն՝ Պոմպեոսի ընկերոջն ու զինակցին, որն ուղեկցել էր զորավարին Կովկասյան արշավանքի ժամանակ և եղել «ալբանացիների երկրում»[49]: Այլ խոսքով, ականատեսի ու ռազմական գործչի գրառումներն են ընկած Աղվանքի քաղաքական պատմության, սոցիալ-տնտեսական կյանքի ու աշխարհագրության մասին Ստրաբոնի հաղորդումների հիմքում[50]:

---

[45] Арриан, Поход Александра, перевод с древнегреческого М. Е. Сергеенко, М.-Л., 1962, III, 8, 4; II, 4.

[46] Страбон, География, пер., статья и комментарии Г. А. Стратановского, Л., 1964.

[47] Աղվանքի պատմության ստրաբոնյան աղբյուրների մասին մանրամասն տե՛ս Հ. Ս. Սվազյան, Ստրաբոնի աղբյուրները Աղվանքի մասին, ՊԲՀ 1978, թիվ 1, էջ 95-104:

[48] Страбон, XI, IV, 3.

[49] Նույն տեղում, XI, V, I.

[50] Հ. Ս. Սվազյան, Ստրաբոնի աղբյուրները..., էջ 95-104:

Տասնյոթ գրքից բաղկացած և գրեթե ամբողջությամբ մեզ հասած իր ծավալուն երկի 11-րդ գիրքը (հիմնականում նշված գրքի ամբողջ 4-րդ գլուխը) Ստրաբոնը լիովին նվիրել է Մեծ Հայքի, Վիրքի ու Ալբանիա-Աղվանքի սահմանների, աշխարհագրական պայմանների, էթնիկական կազմի, սովորույթների, կենցաղի, լեզվի, բանակի, զինատեսակների, հավատալիքների ու ծիսակատարությունների նկարագրություններին: Նրա հաղորդումները մեծ հնարավորություն են ընձեռում խոսելու Աղվանքի հին շրջանի պետական կառուցվածքի ու հասարակարգի, տաճարային տնտեսության ու հիերոդուլների մասին:

Ստրաբոնի հաղորդումների համաձայն, մ. թ. ա. I- –մ. թ. I դդ. աղվանացիները գտնվում էին սոցիալ-տնտեսական զարգացման ցածր մակարդակի վրա և «ավելի հակված էին անասնապահությանը և քոչվորական կյանքին»[51], «հողից ինչպես հարկն է չէին օգտվում», վարում էին «կիկլոպյան» կյանք, «հողը փորում փայտյա արորով»[52], «նրանց մոտ սովորաբար գործածական չէր փողը, և, 100-ից ավելի հաշվել չիմանալով, զբաղվում էին միայն ապրանքափոխանակությամբ...: Ճշգրիտ չափ ու կշիռ նրանց անհայտ էր: Պատերազմի հարցերին վերաբերվում էին անհոգաբար»[53] և այլն: Ելնելով Ստրաբոնի այս հաղորդումներից, ուսումնասիրողների մի մասը իրավացիորեն եզրակացրել է, որ Աղվանքը սոցիալ-տնտեսական զարգացմամբ ետ էր մնում իր հարևաններից՝ Մեծ Հայքից ու Վիրքից: Սակայն այսպիսի եզրակացությունը որոշ ուսումնասիրողների ճիշտ չի թվացել, ուստի Աղվանքի ու նրա հարևանների միջև եղած «անհամապատասխանությունը» վերացնելու համար առաջ են քաշել մի թեզ, որի համաձայն Աղվանքի սոցիալ-տնտեսական պարզունակ կյանքի մասին ստրաբոնյան հաղորդումների հիմքում իբր ընկած են սելևկյան զորավար և Բակտրիայում տերության արևելյան մասի կառավարիչ Պատրոկլեսի մ.թ.ա. 283-282 թթ. կատարած ճանապարհորդության նյութերը, որոնք, արտացոլելով մ.թ.ա. III դարի սոցիալ-տնտեսական կյանքի պատկերը, բնութագրական չեն կարող լինել Աղվանքի համար Ստրաբոնի ապրած ժամանակաշրջանում[54]: Բայց աղվանացիների ու նրանց հարևան ժողովուրդների մասին հույն հեղինակի հաղորդումների մանրակրկիտ ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ, բացի իր մատնանշած մի քանի աննշան նյութերից, որոնք վերցվել են Էրատոսթենեսի միջոցով, Ստրաբոնը ուրիշ, հարցի քննության հետ առնչվող և ոչ մի տեղեկություն չի քաղել Պատրոկլեսի կասկածելի ճանապարհորդության[55] տվյալներից: «Աշխարհագրության» համապատասխան գլխի աղբյուրների հատուկ քննությունը անառարկելիորեն ցույց է տալիս, որ Ստրաբոնի տեղեկությունները բնութագրում են գրեթե ողջ երկիրն ու նրա բնակիչներին հին ու նոր դարերի սահմանագլխին[56]: Նկատենք, որ այս հեղինակը առաջինն է անտիկ աշխարհում,

---

[51] Страбон, XI, IV, I.

[52] Նույն տեղում, XI, IV, 3

[53] Նույն տեղում, XI, IV, 4:

[54] К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, IV в. до н. э. – VII в. н. э., М. Л., 1959, с. 9 и сл.; К. Алиев, К вопросу об источниках Страбона в описании древней Кавказской Албании, ДАН АзССР, 1960, т. XVI, с. 421; Его же, Кавказская Албания (I в. до н. э.- I в. н. э.), Баку, 1974, с. 6-8.

[55] Տես ստորև:

[56] Հ. Ս. Սվազյան, Ստրաբոնի աղբյուրները..., էջ 95-104:

որ գործածում է «Ալբանիա - Albania» և «ալբանացիներ- albanoi» անվանումները:

Ստրաբոնի տեղեկություններին դիմելիս, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նա երբեմն ճիշտ չի օգտվել իր ձեռքի տակ եղած աղբյուրներից, հաճախ կրճատել կամ դուրս է թողել որոշ հաղորդումներ և հակասությունների տեղիք տվել: Պետք է ասել նաև, որ Ստրաբոնից հետո եկող հեղինակները, չնչին բացառությամբ, Աղվանքի ու նրան հարևան ժողովուրդների պատմության շատ հարցերին անդրադառնալիս արդեն կրկնում են մեծ աշխարհագետին:

Աղվանքի մ.թ.ա. I դարի քաղաքական պատմության վերաբերյալ արժեքավոր նյութեր է պարունակում Պլուտարքոսի «Համեմատական կենսագրություններ»[57] («Զուգակշիռք»[58]) աշխատությունը: Այստեղ հույն հեղինակը, տալով Հունաստանի ու Հռոմի աչքի ընկնող պետական, քաղաքական ու ռազմական գործիչների համեմատական կենսագրությունները, իր հերոսներին մեծարելու համար բառեր չխնայելով, հաճախ էլ մեղանչելով պատմական ճշմարտության դեմ, հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Աղվանքի ու Հռոմի հարաբերությունների մասին: Այդ տեղեկություններից հայտնի է դառնում, որ աղվանացիները պատմության մեջ առաջին անգամ հռոմեացիների հետ բախվում են նախ Տիգրան Մեծի բանակի կազմում՝ նրանց դեմ կռվելիս և ապա միայն Պոմպեոսի արշավանքների հետ կապված՝ մտնում անմիջական հարաբերությունների մեջ:

Պլուտարքոսի գրչի տակ իրենց կենդանի նկարագիրն են ստանում Պոմպեոսի արշավանքները դեպի Հայաստան ու Անդրկովկաս, նրա ճակատամարտերը աղվանացիների դեմ, վերջիններիս պարտությունն ու Աղվանքում Հռոմի գերիշխանության հաստատումը: Նա պատմում է աղվանական զորքերի քանակի ու սպառազինության մասին, անվանապես հիշում նրանց ռազմական առաջնորդին (Կոսիս) և նկարագրում վերջինիս մենամարտը Պոմպեոսի հետ: Նա մեծ ոգևորությամբ է թվարկում Հռոմում Պոմպեոսի՝ շքահանդեսի հանած հսկայական ավարն ու բազմաթիվ մեծատոհմիկ գերիներին, դրանց մեջ, որպես պատանդներ, հիշատակելով աղվանական ու իբերական իշխաններին:

Պլուտարքոսը նկարագրել է նաև Անտոնիոսի ու նրա զորավարների կատարած արշավանքները դեպի Արևելք ու Աղվանքը այն ներկայացնելով որպես մի երկիր, որ դեռ պետք է նվաճվեր: Սա մի լուրջ փաստ է և խոսում է, Պոմպեոսի հեռանալուց հետո, աղվանացիների ինքնուրույն ու ինքնիշխան դառնալու օգտին:

Պլուտարքոսը անդրադառնում է նաև Աղվանքի աշխարհագրական սահմանների ու բնակլիմայական բնույթի մի շարք հարցերի: Նրա շնորհիվ ակնբախ է դառնում, որ աղվանացիները մեր թվականությունից առաջ արդեն ունեին պետություն՝ թագավորի գլխավորությամբ:

Ստրաբոնի ու Պլուտարքոսի ժամանակակիցներն են Տիտոս Լիվիոսը, Վելլեյուս Պատերկուլուսն ու Հուլիանոս Ֆրոնտինոսը, որոնք դարձյալ Պոմպեոսի արշավանքների կապակցությամբ հիշատակում են Աղվանքն ու աղվանացիներին: Ի տարբերություն այն հեղինակների, որոնք գրում են թե աղվանացիները գրկաբաց

---

[57] Плутарх, Сравнительные жизнеописания, т. I-III, М., 1961-1964:

[58] Պլուտարքեայ Քերովնացւոյ Զուգակշիռք, թարգմանեալ ի բնագրէն Հ. Եդիայ վարդապետի Թումաճան, հ. Ա-Ձ, Վենետիկ, 1832-1834:

Ա 9224

են ընդունել Պոմպեոսին, Տիտոս Լիվիոսը[59] նշում է, որ աղվանացիներն ու իբերները դիմադրել են և թույլ չեն տվել հռոմեացի զորավարին անցնելու իրենց երկրների վրայով, ուստի և Պոնտոս փախչող Միհրդատին հետապնդելիս՝ Պոմպեոսը հարկադրված է եղել պայքարով ճանապարհ բացել իր համար:

Գայոս Վելլեյուս Պատերկուլոսն[60] իր երկու գրքից բաղկացած «Հռոմեական պատմություն» աշխատության մեջ հավաստում է, որ Պոմպեոսը հաղթական բանակով ներխուժել է Մարաստան, Աղվանք ու Իբերիա, իսկ Հուլիանոս Ֆրոնտինոսը[61] «Ռազմական հնարամտություններ» գրքում պատմում է այն ռազմավարության մասին, որի կիրառումը աղվանացիների դեմ, հաղթանակ է բերել Պոմպեոսին:

Պոմպեոսի արշավանքների հետ կապված՝ աղվանացիների մասին լուրջ ու ծանրակշիռ հաղորդումներ ունի մ.թ. II դարի մեկ ուրիշ հույն հեղինակ Ապպիանոսը[62]: Վերջինս իր ծավալուն «Հռոմեական պատմություն» աշխատության 12-րդ գիրքը («Միհրդատյան պատերազմները») նվիրել է Միհրդատի դեմ Պոմպեոսի վարած պատերազմների նկարագրությանը, այդ առնչությամբ նյութեր հաղորդելով աղվանացների վերբերյալ: Ապպիանոսը օգտվել է Տիտոս Լիվիոսից ու այլ հեղինակներից: Կրկնելով Պլուտարքոսի հայտնի տեղեկությունն այն մասին, որ աղվանացիներն սկզբում իբր թույլ են տվել Պոմպեոսին անցնելու իրենց երկրով, ապա հարձակվել նրա վրա, նա հետաքրքիր մանրամասնություններ է ավելացնում աղվանացիների ռազմավարության մասին: Նրա պատմածից պարզվում է, որ Պոմպեոսի հետ ունեցած կռվում աղվանացիներն ունեցել են իրենց դաշնակիցները: Լրացնելով Պլուտարքոսին՝ Ապպիանոսը հայտնում է նաև, որ Պոմպեոսի՝ երկու օր տևած հաղթական զորահանդեսում ցուցադրում էին իբերական երեք ու աղվանական երկու զորահրամանատարների, իսկ տարվող տախտակների վրա, ի թիվս Պոմպեոսի գերեվարած թագավորների, նշված է եղել և Աղվանքի թագավոր Օրոյսեսը:

Ապպիանոսը, իր նախորդների նման, Հռոմի նվաճողական քաղաքականության ջատագովն էր և մյուս ժողովուրդների՝ Հռոմին հպատակվելը համարում էր ճակատագրի պատվիրանը[63]:

Աղվանքի մ.թ. I դար պատմության ուշագրավ իրադարձություններն են նկարագրում Հովսեպոս Փլավիոսն ու Պուբլիոս Կորնելիոս Տակիտոսը: Հովսեպոս Փլավիոսն իր «Հրեական հնախոսություն»[64] աշխատությունում գրում է Տիբերիոս կայսեր (14-37 թթ.) վարած հակապարթևական քաղաքականության մեջ իբերների ու աղվանացիների ներքաշվելու մասին, իսկ հռոմեական ականավոր պատմաբան Պուբլիոս Կորնելիոս Տակիտոսը «Պատմություն» (գրված 110 թ.) և «Տարեգրություններ» (117թ.) աշխատություններում[65] հաղորդում է 14-69 թթ.

---

[59] Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, собрал и издал с русским переводом В. В. Латышев, т. II, СПб, 1904, с. 50-51.

[60] Նույն տեղում, էջ 111:

[61] Նույն տեղում, էջ 229:

[62] Նույն տեղում, հ. 1, էջ 526-539:

[63] Н. А. Машкин, История Древнего Рима, М., 1947, с. 21.

[64] Հովսեպոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, /Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ս. Մ. Կրկյաշարյանի/, Երևան, 1976:

[65] Корнелий Тацит, Сочинения в двух томах, Л. 1969.

պատմական իրադարձություններին և դրանցում աղվանացիների մասնակցության մասին:

Տակիտոսի հաղորդումները, չնչին բացառությամբ, միանգամայն արժանահավատ են: Մանավանդ իր «Տարեգրություններում» նա հանդես է գալիս «իբրև մեծ պատմագիր, գեղարվեստական շարադրության մեծ վարպետ, իբրև բարեխիղճ ճշմարտախոս, որը պատմական իրականության մութ կողմերը չի թաքցնում»[66]:

Դիոն Կասսիոսը[67], որ ապրել ու ստեղծագործել է մ.թ. II դարի երկրորդ կեսին և III դարի սկզբներին, գրել է «Հռոմեական պատմություն» մեծածավալ աշխատությունը, որտեղ նկարագրվող դեպքերը, սկսելով Հռոմի պատմության հնագույն ժամանակներից, հասցրել է մինչև մ.թ. 229 թ.: Բայց, դժբախտաբար, այդ 80 գրքից բաղկացած աշխատության ընդամենը 24 գրքերն (XXXVI-LX) ու առանձին հատվածներ են հասել մեզ: Պահպանված այդ մասերն էլ, դարձյալ Պոմպեոսի արշավանքների հետ կապված, առատ տեղեկություններ են պարունակում Աղվանքի պատմության վերաբերյալ:

Դիոն Կասսիոսը, նախորդների համեմատությամբ, բավական ծավալուն, բազմակողմանի ու մանրամասն է ներկայացնում Պոմպեոսի ժամանակաշրջանն ու նրա արշավանքների պատմությունը:Նա մանրամասնությամբ գրում է Պոմպեոսի Կովկասյան արշավանքների, Կուր գետի ափին նրա ձմեռելու, աղվանացիների հարձակման ու տակտիկայի, բանակների դասավորման, կիրառած ռազմական խորամանկության, աղվանական թագավորի պարտության և նրա ու կովկասյան մի շարք ցեղերի հետ հաշտության պայմանագրեր կնքելու և այլ շատ ու շատ նման դեպքերի մասին: Դիոն Կասսիոսն է այն առաջին հեղինակը, որ պահպանել և մեզ է հասցրել աղվանական երկու թագավորների անունները՝ Օրոյսես և Զոբերոս: Նա է նկարագրում Անտոնիոսի զորավար Կանիդիոս Կրասսոսի արշավանքը նախ դեպի Իբերիա, ապա Աղվանք, վերջիններիս պարտությունը և «հռոմեական ժողովրդի դաշնակից ու բարեկամ» դառնալը: Նրա հաղորդումներից է, որ հայտնի է դառնում Փարասմանի դրդմամբ դեպի Աղվանք ու այլ երկրներ ալանների կատարած արշավանքների ու պատճառած վնասների մասին:

***

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի Աղվանքի պատմության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն Ստրաբոնից հետո եկող մյուս աշխարհագետների աշխատությունները, որոնք մեծ չափով լրացնում և ամբողջական են դարձնում Աղվանքի ինչպես արտաքին քաղաքական, այնպես էլ ներքին կյանքի, աշխարհագրական դիրքի, սահմանների, քաղաքների ու գետերի մասին հայտնի հաղորդումները:

Մ.թ. I դարի հռոմեացի հեղինակ Պլինիոս Ավագը սերունդներին է թողել իր «Բնական պատմություն» ("Natural History") հանրագիտական բնույթի

---

[66] Տակիտոս, քաղեց և թարգմանեց Պ. Սոտնիկյան, Երևան, 1941, էջ 6:
[67] Դիոն Կասսիոս Կոկկեյանոս, Հռոմեական պատմություն (հատվածներ), Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթ. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976:

աշխատությունը[68]:

Պլինիոսը ցույց է տալիս Աղվանքի աշխարհագրական սահմանները, հայտնում երկրի գլխավոր քաղաքի կամ մայրաքաղաքի անունը՝ Կապաղակ (Cabalaca), հիշատակում կովկասյան մի շարք ցեղերի և փորձում պարզություն մտցնել «Կասպյան» ու «Կովկասյան» դռներ հասկացությունների մեջ: Նա թվարկում է նաև Կովկասյան լեռներից սկիզբ առնող ու Աղվանքով անցնող և Կուր գետը թափվող Կաս, Ալբան ու Կամբեճան գետերը, խոսում Արաքսի մասին և, ի տարբերություն անտիկ շատ հեղինակների, որոնց կարծիքով Արաքսը իր առանձին հունով է հոսում Կասպից ծով, հայտնում, որ այն նախ լցվում է Կուրը և ապա նրա հետ միասին հոսում դեպի Կասպից ծով: Ի դեպ, Կասպից ծովի հենց այդ մասն էլ նրա արևմտյան ափին ապրող աղվանացիների անունով նա կոչում է «ալբանական»:

Պլինիոսի մեծարժեք աշխատության մեջ տեղ են գտել նաև որոշակի սխալներ ու հակասություններ: Օրինակ, նա գտնում է, որ Աղվանքը ևս նվաճված է եղել Ալեքսանդր Մակեդոնացու կողմից, մինչդեռ հայտնի է, որ ոչ միայն Աղվանքը, այլև ողջ Անդրկովկասը չի ենթարկվել նրան: Պլինիոսը մեծ հավատ է ընծայել առասպելներին ու հրաշապատում երևույթներին, որի հետևանքով էլ աղվանացիների ծագումը կապում է առասպելական Յասոնի հետ և հայտնում, թե Աղվանքում մարդիկ ծնվում են գորշակապտավուն աչքերով, մանկությունից սպիտակահեր են, լավ են տեսնում գիշերը և այլն:

Կլավդիոս Պտղոմեոսը (83-168 թթ.) Ստրաբոնից հետո առաջին հեղինակն է, որ տվել է Աղվանքի աշխարհագրական դիրքի ամենամանրամասն նկարագրությունը և մատնանշել նրա աշխարհագրական սահմանները: Կլավդիոս Պտղոմեոսն իր «Աշխարհագրական ուղեցույց» հայտնի աշխատության մեջ, ինչպես Ստրաբոնը, մի ամբողջ գլուխ (5-րդ գրքի 11-րդ գլուխը) է հատկացրել Աղվանքի նկարագրությանը[69]: Այստեղ և նրան կից քարտեզում (Ասիայի երրորդ քարտեզում), որն ընդգրկում է Կոլխիդան, Իբերիան, Ալբանիան ու Մեծ Հայքը[70], հեղինակը ցույց է տալիս, որ Աղվանքը տարածված էր Կասպից ծովի արևմտյան ափի երկայնությամբ՝ Կուր գետի Կասպից ծով թափվելու կետից մինչև Սոանա գետը՝ հյուսիսում: Նա խոսում է «ալբանական դռների» ("albanus pulae") մասին՝ տալով նրանց աշխարհագրական լայնությունն ու երկայնությունը, հիշատակում աղվանական 29 քաղաքների ու գյուղերի, գետերի ու լեռնային անցուղիների մասին:

Աղվանից պատմության ամենատարբեր հարցերի, նրա բնակիչների ծագման,

---

[68] Известия древних писателей..., т. II, с. 167; Pliny, Natural History, in ten volumes, London, 1950-1962.

[69] Известия древних писателей..., т. I, с. 242-243: Աղվանքին նվիրված գլուխը նոր թարգմանությամբ հրապարակվել և ուսումնասիրության է ենթարկվել Ս.Ն. Մուրավյովի կողմից: Տե՛ս Птолемеева карта Кавказской Албании и уровень Каспия, ВДИ, 1983, N 1, с. 117-147; Կարծիք է հայտնվել նաև, որ Պտղոմեոսի քարտեզը արտացոլում է ոչ թե իր ժամանակի՝ մ.թ. II, այլ VII-VIII դդ. Աղվանքի աշխարհագրական պատկերը: Տե՛ս С. А. Ковалевский, "Карта Птолемея" в свете исторической географии Прикаспия, ИВГО, 1953, т. 85, вып. I, с. 31-48. Ընդ որում այս սխալ եզրակացության հանգելու ընթացքում այդ կարծիքի հեղինակը թույլ է տալիս պատմագիտական կոպիտ սխալներ Աղվանք-Մեծ Հայք փոխհարաբերությունների ու տարածքային մի շարք հարցերի ըմբռնման իմաստով (տե՛ս նույն տեղում):

[70] Известия древних писателей..., т. I, с. 247.

էթնո-ցեղային կազմության ու առանձին հատկանիշների մասին արժեքավոր տեղեկություններ են տալիս նաև Դիոնիսիոսը, նրա աշխատության մեկնիչ Եվստաթիանոսը, Պոմպեոս Տրոգոսը, որի աշխատության պատառիկները մեզ են հասել մ.թ. III դարի հեղինակ Հունիանոս Հուստինոսի շնորհիվ, Պոմպոնիոս Մելան, Եվսեբիոսը, Ֆլորուսը, Հուլիոս Սոլինը՝ առաջինը «Ալբանիա» անվան ստուգաբանության փորձ անողներից, Վիկտոր Ավրելիանոսը, Ռուփոս Ֆեստոսը և ուրիշներ:

Մերձկասպյան երկրների կենդանական աշխարհի նկարագրությունն է տալիս մ.թ. II դարի վերջում ու III դ. սկզբում ապրած Կլավդիոս Էլիանոսը իր հատվածաբար մեզ հասած «Կենդանիների մասին» աշխատությունում: Հեղինակը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև արհեստագործական մի շարք զբաղմունքների՝ ձկան յուղից քսուկ, իսկ փորոտիքից սոսինձ ստանալու, ուղտի բրդից հագուստ պատրաստելու և չորացած ու աղ դրած ձկան վաճառքի մասին, որ կասպերը ուղտերով տանում էին մինչև Էկբատան և այլուր: Նա առաջին հեղինակներից մեկն է, որ քրմերի և հարուստ ու անվանի մարդկանց հիշատակումով հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու Աղվանքի հասարակության շերտավորվածության և տարբեր սոցիալական խավերի առկայության մասին[71]:

Մ.թ. IV դարում կազմվում է հռոմեական կայսրերի պատմությունը՝ գրված տարբեր հեղինակների կողմից: Այդ աշխատությունը, որ կրում է «Օգոստոսների պատմության հեղինակները» ("Scriptores Historiae Augustae") ընդհանուր խորագիրը, ժամանակագրական առումով ընդգրկում է 117-284 թթ. և պարունակում Հռոմի կայսրերի (սկսած Հադրիանոսից վերջացրած Նումերիանոսով) կենսագրական պատմությունները: Վեց հեղինակի աշխատություններից կազմված այս ժողովածուի մեջ Աղվանքն ու աղվանցիները հիշատակվում են միայն երեքում՝ Հադրիանոսի (Էլիոս Սպարտանիոս) երկու Վալերիանոսների (Հուլիոս Կապիտոլիոս) և Ավրելիանոսի (Փլավիոս Վոպիսկուս) կենսագրություններում[72]: Նշված գործերում Աղվանքը ներկայացվում է որպես կենսագրի հերոսից կախյալ ու ենթակա մի երկիր:

IV դարի հեղինակ, ազգությամբ հույն ու հունական կրթություն ստացած, բայց լատիներեն գրող Ամմիանոս Մարքելլինոսի «Պատմություն»[73] աշխատության նյութը Առաջավոր Ասիայում գերիշխանության հասնելու համար երկու խոշոր բռնատիրությունների՝ Սասանյան Պարսկաստանի ու Հռոմեական կայսրության միջև մղվող պատերազմների պատմությունն է: Այն գրված է ականատես հեղինակի կողմից: Հեղինակը կամ նրանում նկարագրված դեպքերի անմիջական մասնակիցն է, կամ ուղղակի լսել ու գրի է առել մի ուրիշ ականատես մասնակցի պատմությունները: Դրանցից պարզվում է, որ այդ պատերազմներում ակամայից ներքաշվել էին հայերը, աղվանցիներն ու իբերները: Լատին պատմիչը իր հիմնական նյութի շարադրանքին միահյուս, ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև նրանց մասին. օրինակ այն, որ Աղվանքը մասնավորապես Սասանյան Պարսկաստանին հպատակ երկիր էր և այդ կռիվներում նրա

[71] Известия древних писателей..., т. I, с. 605-608.
[72] Scriptores Historiae Augustae, vol. 1, 1960, p. 67; vol. III, 1965, p. 7, 277.
[73] Аммиан Марцеллин, История, пер. с латинского Ю. Кулаковский и А. Сонни, вып. I, Киев, 1906; вып. II, Киев, 1907; вып. III, Киев, 1908.

դաշնակիցը: Պարսից արքունիքը Աղվանքի մասին ուներ մեծ համարում, և նրան էր վստահվել շրջապատված Ամիդ քաղաքի պարիսպների հյուսիսային մասի պաշարումը և այլն:

*Վրացական աղբյուրներ* - Աղվանքի պատմության ուսումնասիրության համար կարևոր են նաև վրաց աղբյուրները: Վերջիններս նպաստում են Աղվանքի պատմության այս կամ այն հարցի լուսաբանությանը, որոշ իրադարձություններ դարձնում պարզ ու որոշակի, բացահայտում դրանց պատճառական կապը: Այդ տեսակետից առանձնանում են Արսեն Սափարացու (IX դ.), Լեոնտի Մրովելու (Ռույսեցու), Սմբատ Բագրատունու, Անանուն պատմիչի, Ջուանշիրի (բոլորն էլ XI դ.) և ուրիշների պատմական աշխատությունները[74]: Նրանցից Լեոնտի Մրովելին բերում է անդրկովկասյան ժողովուրդների, այդ թվում և ռան-աղվանացիների ծագումնաբանական առասպելը, նրանց բոլորին սերելով մի ընդհանուր հորից՝ Թորգոմից[75]:

Մյուս վրացի պատմիչը՝ Սմբատ Բագրատունին, պատմում է բյուզանդական կայսր Հերակլի ռազմական արշավանքների մասին դեպի Պարսկաստան և այդ կապակցությամբ խսում Հայոց արևելից կողմանց իշխաններից Միհրանյան Վարազ-Գրիգորին (վրաց պատմիչը նրան կոչում է Գագելի) քաղկեդոնական դավանանքին դարձնելու և արևելից կողմերի առաջին իշխան նշանակելու մասին[76]:

*Արաբական աղբյուրներ* - Աղվանքի ու ընդհանրապես կովկասյան ժողովուրդների ու ցեղերի, Կովկասում Պարսկաստանի և Արաբական խալիֆայութեան վարած քաղաքականության, խազարների արշավանքների ու պաշտպանական ամրությունների շինարարության մասին հետաքրքիր ու մանրամասն տեղեկություններ են հաղորդում արաբ պատմիչները, աշխարհագետներն ու ճանապարհորդները: Նրանք մանրամասն գրում են առևտրական կապերի ու արտահանվող ապրանքների, առևտրական ճանապարհների, իջևանատների ու քաղաքների, դրանց միջև ընկած հեռավորության և, վերջապես, Հայաստանից, Աղվանքից ու Վրաստանից գանձվող հարկերի չափերի մասին: Ուշագրավը արաբական աղբյուրներում այն է, որ նրանց աշխատություններում, որպես աշխարհագրական տեղանուն, հանդես է գալիս «Առան» անվանումը, ընդ որում՝ ոչ միանշանակ: Այն նրանց մոտ օգտագործվել է ինչպես լայն, այնպես էլ նեղ իմաստներով: Լայն իմաստով նրանք «Առան» տեղանունը օգտավգործել են Աղվանից նախկին մարզպանության ողջ տարածքը՝ Կովկասյան լեռներից մինչև Արաքս գետը, իսկ նեղ իմաստով՝ Կուր և Արաքս գետերի միջև ընկած գետամիջյան տարածքը ցույց տալու համար: Ուստի արաբական աղբյուրներից օգտվելիս անհրաժեշտ է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ստուգապես պարզել, թե «Առան» ասելով ինչ տարածք նկատի ունի արաբ

---

[74] Картлис Цховреба, т. I, Тбилиси, 1955.(На груз. яз.)
Е. С. Такайшвили, Источники грузинских летописей. Три хроники, СМОМПК, вып. 28, Тифлис, 1900; Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի ու հարևան երկրների մասին, հ. Ա (Ե-ԺԲ դդ.), Երևան, 1934; հ. Բ (ԺԳ--ԺԸ դդ.), Երևան, 1936; Համառոտ պատմութիւն վրաց, ընծայեալ Ջուանշիրի պատմիչի, Վենետիկ, 1884:
[75] Картлис Цховреба, т. I, էջ 3:
[76] Նույն տեղում, էջ 375:

հեղինակը: Բացի դրանից, նրանք են այն առաջին հեղինակները, որոնք բուն Աղվանքի նախկին անվանման փոխարեն նույն տարածքը ցույց տալու համար գործածել են «Շիրվան» անվանումը, դրանով ընդգծելով այն վարչաքաղաքական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել անդրկովկասյան այս երկրում:

Արաբ հեղինակները՝ Բալաձորին (IX դ.), Ալ Իսթահրին, Իբն ալՖակիհը, Իբն Խորդադբեհը, Ալ Մուկադդասին, Իբն Հաուկալը (բոլորն էլ X դ.), Յակուտ Ալ Համավին, Իբն ալԱսիրը (երկուսն էլ XIII դ.) և ուրիշներ մեզ ներկայանում են Ն.Ա. Կարաուլովի, Պ.Կ. Ժուզեի, Բ. Խալաթյանցի, Հ.Թ. Նալբանդյանի ու Ա. Տեր-Ղևոնդյանի ռուսերեն ու հայերեն թարգմանություններով[77]:

*Բյուզանդական և ասորական աղբյուրներ* - VII դարից սկսած՝ Աղվանքի պատմության աղբյուրների թիվն ավելանում է բյուզանդացի ու ասորի հեղինակների աշխատություններով: Դրանց նշանակությունը մեծ է ոչ միայն որպես սկզբնաղբյուրներ Աղվանքի մասին, այլև որպես տեղեկատուներ այն միջազգային իրադրության մասին, որի ոլորտում հյուսվում էր նրա պատմությունը: Այս տեսանկյունից ուշադրության են արժանի բյուզանդական պատմիչներից Պրոկոպիոս Կեսարացու[78], Թեոփիլակտոս Սիմոկատայի[79], Պյոտր Պատրիկիոսի կամ Մագիստրոսի ու Թեոփանես Բյուզանդացու աշխատությունները[80]:

Բյուզանդական պատմիչներից Աղվանքն ու աղվանացիներին հիշատակում է Մենանդրոսը[81], կապված VI դարի 70-ական թթ. պարսկա-բյուզանդական պատերազմների հետ և պատմում բյուզանդական բանակների Աղվանք ներխուժելու, այն նվաճելու և պատանդներ վերցնելու մասին:

Ասորական աղբյուրները հիմնականում անդրադառնում են V-VI դարերի պարսկա-բյուզանդական հարաբերություններին: Ասորի պատմիչներ Մշիխա Զեխայի, Յոշվա Ստիլիտի, Հովհան Եփեսացու[82] և մյուսների աշխատանքները խորը պատկերացում են տալիս քրիստոնյաների նկատմամբ պարսիկների վարած քաղաքականության, Պերոզի պատերազմների, նրա սպանվելուց հետո Վաղարշի գահ բարձրանալու, երկրի ներքին ու արտաքին քաղաքականության և ուրիշ այլ իրադարձությունների մասին: Բնականաբար վեր են հանվում այն սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրդապատճառները, որոնք էլ հարկադրում են արյաց արքաներին հպատակ երկրներին, այդ թվում և Մեծ Հայքին, Աղվանքին ու Վիրքին, տալ ինքնուրույնություն և վերականգնել տեղական ազնվականության

[77] Н. А. Караулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане (СМОМПК), вып. 29, Тифлис, 1901, вып. 31, Тифлис, 1902, вып. 32, Тифлис, 1903, вып. 38, Тифлис, 1908; Баладзори, Книга завоевания стран, пер. П. К. Жузе, Баку, 1927; Արաբացի մատենագրերը Հայաստանի մասին, հավաքեց և թարգմանեց Բագրատ Խալաթյանցը, Վիեննա, 1919: Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965: Իբն ալ-Ասիր, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981:

[78] Պրոկոպիոս Կեսարացի, Պատերազմների մասին, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967:

[79] Фиофилакт Симокатта, История, пер. С. П. Кондратьева, М., 1957.

[80] Византийские историки, пер. С. Дестуниса, СПб, 1860, с. 281-309, 491-495.

[81] Менандр, История, Византийские историки, с. 313-470.

[82] Н. Б. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, М.-Л., 1941. Ասորական աղբյուրներ, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976:

ժառանգական իրավունքները:

Ասորի պատմիչներից Զաքարիա Միտիլենացին՝ Հռետոր մականունով, իր «Ժամանակագրություն»[83] աշխատության մեջ հիշատակում է Աղվանքը «Առան» ձևով և 12-րդ գրքի 7-րդ գլխում հիշում է այն՝ Սասանյան Պարսկաստանին ենթակա թագավորով, ուրույն լեզվով և հավատացյալ ու մկրտված ժողովրդով:

[83] Զաքարիա Միտիլենացի (Հռետոր), Ժամանակագրություն, (Ասորական աղբյուրներ), էջ 259-371:

## գ. Աղվանքը վիմական արձանագրություններում ու հնագիտական նյութերում

Ուսումնասիրվող երկրամասում վիմական արձանագրությունների գոյության փաստն իսկ ինքնին գալիս է լուսաբանելու բուն Աղվանքի պատմության համար որոշակի կարևորություն ներկայացնող մի շարք հարցեր:

1948 թ. հունիսին Բաքու քաղաքից ոչ հեռու գտնվող Բեյուք-դաշ կոչվող լեռան ստորոտին՝ Քաբիրիստանում, հայտնաբերվել է առայժմ միակ լատինական արձանագրությունը, որի ուսումնասիրությամբ զբաղվել են մի շարք հետազոտողներ[84]: Պրպտումներից պարզվել է, որ այն թողել է հռոմեական XII Ֆուլմինատի (Fulminatio- – Կայծակնասլաց[85]) լեգեոնի ցենտուրիոն Լուկիոս Յուլիոս Մաքսիմուսը, Դոմետիանոս կայսեր օրոք (81-96 թթ.): Հիշատակվող լեգիոնն ուներ իր մշտական կայանը Ասորիքում և անհրաժեշտության դեպքում մասնակցում էր Փոքր Ասիայում, Ասորիքում ու Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին: Ուստի այն փաստը, որ լեգեոնը կամ, որ ավելի ճիշտ է, նրա ջոկատներից մեկը գտնվել է Աղվանքում, խոսում է հռոմեական ազդեցության մասին և հնարավորություն է տալիս պարզելու Աղվանքի 80-90-ական թթ.պատմության այլ դրվագներ:

«Ալբանիա» երկրի և նրա ժողովրդի հիշատակումով արձանագրություններ են հայտնաբերվել նաև նրա տարածքից դուրս: Դրանցից է 1555 թ. Անկյուրայի՝ Գալատիայի երբեմնի գլխավոր քաղաքի տաճարի պատերի վրա հայտնաբերված արձանագրությունը[86], որ թողել է հռոմեական կայսր Օկտավիանոսը (Օգոստոսը): 35 գլխից և երեք մասից բաղկացած այդ ընդարձակ լատիներեն (հունարեն թարգմանությամբ) արձանագրությունը գրվել է կայսեր կյանքի վերջին տարիներին և նրա քաղաքական գործունեության մասին մի հաշվետվություն է, յուրօրինակ կտակ: Կայսեր արտաքին ու ներքին քաղաքականությանը վերաբերող մասում (25-35 գլուխներում) հիշատակվում են աղվանցիները, որոնք իբերների, մարերի և կովկասյան ու մերձսևծովյան մի քանի այլ ցեղերի հետ մեկտեղ փորձել են դիվանագիտական հարաբերությունների մեջ մտնել Հռոմի հետ[87]: Այս արձանագրության մեջ իր արտացոլումն է գտել հռոմա-աղվանական հարաբերությունների դրսևորումների այն նոր՝ դիվանագիտական ձևը, որ, ի տարբերություն իր նախորդների, կիրառում էր Օգոստոսը՝ Հայաստանի թիկունքը

---

[84] И. М. Джафарзаде, Древнелатинская надпись у подошвы горы Беюк-даш, ДАН, АзССР, т. IV (1948), N 7, с. 304-311; П. Х. Тумбиль, Римская надпись I века н. э., обнаруженная в пределах Азербайджана (Кабристан), նույն տեղում, էջ 312-313; Լ. Խաչիկյան, Դիտողություն Մ. Խորենացու Հայոց պատմության երկրորդ գրքի ԾԴ գլխի մասին (Ադրբեջանում գտնված հին-լատինական արձանագրության առնչությամբ), ՀՀ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), 1948, թիվ 11, էջ 91-97; Е. А. Пахомов, Римская надпись I века н. э. и легион XII Фульмината, Известия АН АзССР, 1949, N 1, с. 79-88; Л. А. Ельницкий, Северочерноморские заметки, Римляне у Каспийских ворот, ВДИ, 1950, N 1, с. 193-194; З. Ямпольский, К Римской надписи в Азербайджане, Известия АН АзССР (серия общ. науки), 1949, N I, с. 89; Его же, Вновь открытая латинская надпись у горы Беюк-даш, (Азербайджанская ССР), ВДИ, N 1, 1950, с. 177-182; К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 342-345.

[85] И. Х. Дворецкий, Латинско-русский словарь, М., 1976, с. 445.

[86] Деяния божественного Августа, ВДИ, 1949, N 1, с. 214.

[87] Նույն տեղում, էջ 214-215:

թուլացնելու նպատակով:

Պերսեպոլսից ոչ հեռու՝ Նախշ-Է-Ռուստամ կիրճում գտնվող Քաաբայի-Զարդուշտ անվամբ հին աքեմենյան մի շինության վրա 1936-1939 թթ. գտնվել է մի արձանագրություն, որ մ.թ. III դարում թողել է Սասանյան Շապուհ Ա-ն (242-272 թթ.): Արձանագրությունը փորագրված է երեք լեզվով՝ պահլավերեն, հունարեն ու միջին պարսկերեն և պատմական շատ կարևոր փաստաթուղթ է Շապուհ Ա-ի՝ Հռոմ ու անդրկովկասյան երկրներ կատարած արշավանքների ու տարած հաղթանակների մասին: Այս առիթով հիշատակվում է նաև Աղվանքը և նշվում, որ վերջինս էլ Ատրպատականի, Մեծ Հայքի ու Վիրքի նման եղել է Սասանյան Պարսկաստանի ենթակայության տակ[88]

***

Պատմականորեն Աղվանքը գրավել է այժմյան Ադրբեջանի այն տարածքը, որին գրեթե համապատասխանում է «Յալոյլութափայան» անունով հայտնի մշակույթի տարածման շրջանները: Այս հնագիտական մշակույթն իր անվան համար պարտական է Ադրբեջանի Հանրապետության Կուտկաշենի շրջանի Յալոյլութափա կոչվող վայրին, որտեղ առաջին անգամ հնագետները բացել են այդ մշակույթին բնորոշ խիստ կծկված մարդկային ոսկորներով գետնափոր թաղումներ: «Նրա սահմանները անցնում են արևմուտքում Ալազանի հովտով՝ Կախեթի սահմաններում, իսկ արևելքում ընդհուպ մոտենում են Ջեյրանբեչմազ գետին, այսինքն՝ գրեթե մինչև Ապշերոնի թերակղզուն: Տվյալ մշակույթի հյուսիսային սահմանները Գլխավոր Կովկասյան լեռնաշղթայի հարավարևելյան լանջերն են, իսկ հարավայինը՝ Կուր գետը»[89]: Այնպես որ Աղվանքի սոցիալ-տնտեսական կյանքի այդ շրջանի պատմությունը հիմնականում ուսումնասիրվում է Յալոյլութափայան մշակույթի նյութերով, որոնք ուսումնասիրողին հնարավորություն են տալիս բավականաչափ ճշգրտությամբ որոշելու այն հասարակարգը, որում ապրում էին աղվանացիները, ցույց տալու նրանց զբաղմունքը, սովորույթներն ու կենցաղը, առաջին պատկերացումներն ու հավատալիքները: Յալոյլութափայան մշակույթի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզելու նաև այն կրողների տեղաբնիկ լինելու հարցը, նրանց տեղաբաշխումը և խտությունը տվյալ մշակույթի ընդգրկման սահմաններում, կապը հարևան ցեղերի հետ և այլ մանրամասներ՝ սկսած մ.թ.ա. առաջին հազարամյակի կեսերից[90]:

Յալոյլութափայում շարունակվող հնագիտական պեղումները բացահայտում են Աղվանքի պատմության նորանոր փաստեր:

Աղվանքի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրությանը մեծ չափով

---

[88] Recherches sur les Res Gestae divi Saporis par Ernest Honigmann et Andre Marica, Brusell, 1953, էջ 10-20, Syria, t. XXXV, Paris, 1958, էջ 304-307; К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 135; С. Т. Еремян, Страна "Махелония" надписи Кааба-и-Зардушт, ВДИ, 1967, N 4, с. 47; Р. Фрай, Наследие Ирана, М., 1972, с. 295.

[89] О. Ш. Исмизаде, Ялойлутепинская культура, Баку, 1956, с. 3.

[90] Е. А. Лалаян, Раскопки сс. Нидж и Варташен Нухинского уезда, Известия Кавказского отделения Московского археологического общества, Тифлис, 1919, вып. V; О. Ш. Исмизаде, Ялойлутепинская культура, с. 72.

նպաստում են նաև Ապշերոնի թերակղզում և, հատկապես, Բաքվի մերձակայքում կատարվող պեղումները[91], որտեղ պեղված հնադարյան դամբարանները վկայում են երկրի այդ տարածքի հնագույն ժամանակներից բնակեցված լինելու մասին: Կովկասյան այս տարածքը հնուց ի վեր բնակեցված լինելու, կենդանական աշխարհի, բնակիչների՝ որսորդությամբ, հողագործությամբ ու անասնապահությամբ զբաղվելու, տնային տնտեսության մեջ կենդանիներին օգտագործելու, կրոնի ու հավատալիքների և այլ սովորույթների մասին խոսում են նաև Աղվանքի տարածքում հայտնաբերված ժայռապատկերները (մարդկանց ու կենդանիների նկարներ, տարբեր նշաններ, տեսարաններ և այլն), զանազան արձանիկները, խեցեբեկորների վրայի նախշերը և հնագիտական այլ նյութեր[92]:

Պեղումների միջոցով հայտնաբերված թաղման նոր ծիսակատարությունների ակնհայտ նշաններով դամբարանները, վկայելով եկվոր ցեղերի Աղվանք ներթափանցման մասին, միաժամանակ ցույց են տալիս նաև նրա բնակչության էթնիկական կազմի խայտաբղետությունը[93]:

Կարևոր ու անգնահատելի աղբյուրներ են նաև Մինգեչաուրի պեղումներից հայտնաբերված նյութական մշակույթի գտածոները: Մինգեչաուրը, ընկած լինելով Մեծ Հայքի ու Աղվանքի շփման շրջանում, իր հնագիտական հազվագյուտ նյութերով հավասարաչափ նպաստում է ոչ միայն նշված երկրների, այլև հյուսիսային Կովկասի մի շարք ցեղերի պատմության շատ հարցերի լուսաբանմանը:

Մինգեչաուրի պեղումները անընդմեջ շարունակվում են 1946 թվականից[94]: Այստեղ ավելի լավ, քան որևէ մի ուրիշ հուշարձանում, պարզորոշ հետազոտվել են մշակույթի զարգացման տարբեր էտապները՝ նեոլիթի ժամանակներից մինչև ուշ միջնադար[95]: Մինգեչաուրում էր գտնվում Կուրի ամենահարմար գետանցը, որտեղից անցնում էին քարավանային ու հետիոտն ճանապարհները դեպի Կապաղակ, Շամախի, Դերբենդ, Պարտավ և ուրիշ վայրեր[96]: Այստեղ են հայտնաբերված նաև այն մի քանի հնագիտական առարկաները, որոնք, ըստ ուսումնասիրողների, կրում են աղվանական գրի նմուշներ[97]:

---

[91] И. М. Джафарзаде, Археологические разведки на Апшероне, Известия АН АзССР, 1948, N 6, с. 81-94; Гардашхан Асланов, Археологические исследования на Апшероне Археологические и этнографические изыскания в Азербайджане (1975), Баку, 1978, с. 58-62.

[92] И. М. Джафарзаде, Наскальные изображения Кобыстана (Азербайджанской ССР), Археологические и этнографические изыскания в Азербайджане, 1965, с. 15-28; Д. Н. Рустамов, Ф. М. Мурадова, Археологические исследования в Гобустане в 1978 г., Археологические и этнографические изыскания в Азербайджане (1978), Баку, 1982, с. 5-8; А. С. Сумбатзаде, Об истоках истории Азербайджана, Известия АН АзССР, 1979, N 1, с. 62-80.

[93] Играр Алиев, Гардашхан Асланов, Племена сармато-массагето-аланского круга в Азербайджане, Древний Восток, N 2, Ереван, 1976, с. 218-237; Играр Алиев, О скифах и скифском царстве в Азербайджане, Переднеазиатский сборник, III, М., 1979, с. 9-14.

[94] С. М. Казиев, Археологические памятники Мингечаура как исторический источник для изучения истории Азербайджана, Известия АН АзССР, 1950, N 7, с. 167-180.

[95] Г. М. Асланов, Ваидов Р. М., Ионе Г. И., Древний Мингечаур (эпоха энеолита и бронзы), Баку, 1959.

[96] С. М. Казиев, Археологические памятники Мингечаура..., с. 168.

[97] Р. М. Ваидов, Археологическая характеристика эпиграфических памятников Мингечаура, Известия АН АзССР, 1958, N 4, с. 107-120 (на азер. яз.); А. Г. Абрамян, →

Աղվանքի պատմության մի քանի հարցեր ուսումնասիրվում են նաև այսօր Ադրբեջանի կազմում գտնվող մի շարք այլ շրջանների[98], ինչպես և նրա հարևանությամբ գտնվող Հայաստանի, Վրաստանի ու Դաղստանի համապատասխան ժամանակաշրջանների պեղումների նյութերով[99]:

Հնագիտական նյութերը, ցույց տալով հանդերձ Աղվանքում սոցիալ-տնտեսական կյանքի պատկերը, լուսաբանում են նաև Հռոմի ու սրա պրովինցիաների, հունական սևծովյան գաղութ-պետությունների, Սարմաթական աշխարհի իր հարևանների, Մեծ Հայքի ու Վիրքի հետ Աղվանքի ունեցած տնտեսական, քաղաքական ու մշակութային կապերը:

---

→ Дешифровка надписей Кавказских агван, Ереван, 1964. Պետք է ասել, որ այժմյան Ադրբեջանի տարածքում հայտնաբերված շատ հայերեն արձանագրություններ ադրբեջանցի ուսումնասիրողների կողմից ներկայացվում են որպես աղվաներեն (տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Աղվաներեն համարվող մի քանի արձանագրությունների վերծանությունը, Երևանի համալսարան, 1956); Г. С. Свазян, Об одной "албанской" надписи, Լրաբեր հաս. գիտ., 1987, թիվ 2, էջ 42-45:

[98] Археологические и этнографические исследования Азербайджана (за 1975, 1976, 1979 гг.), Баку, 1978, 1979, 1982.

[99] С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976; Г. Ниорадзе, Раскопки в Алазанской долине, Тбилиси, 1940 (на груз. яз.); Каталог археологических материалов, т. II, Тбилиси, 1955; К. Ф. Смирнов, Археологические исследования в Дагестане, в 1948-1950 гг., КСИИМК, вып. 45, 1952; В. Г. Котович, Древности Дагестана, ИВГО, т. 85, вып. 2, 1953, с. 209-212.

## Դ. Հին և միջնադարյան Աղվանքը պատմական գրականության մեջ

Աղվանքի նկատմամբ հետաքրքրությունն առաջացել է 19-րդ դարի 30-ական թթ., երբ արդեն իրականություն էր դարձել Անդրկովկասի միացումը Ռուսաստանին, իսկ Արևմտյան Եվրոպայում երևացել էին «Աղվանից աշխարհի պատմության» մասին առաջին տեղեկությունները: Անդրկովկասյան երկրները ցարական Ռուսաստանին հետաքրքրում էին թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական տեսակետից: Այդ երկրներին ավելի լավ ծանոթանալու և նրանց պաշարները լիարժեք օգտագործելու համար, տնտեսական, վարչական ու վիճակագրական հաշվետվությունների հետ մեկտեղ, լույս են տեսնում նաև ուսումնասիրություններ նշված երկրների պատմական անցյալի վերաբերյալ:

Արդեն 1835 թ. հրապարակվում է մի հոդված[100], որտեղ հեղինակը դեպի Անդրկովկաս (X դ.) ռուսների արշավանքների մասին արաբ պատմիչների հաղորդումների շուրջ արված դիտարկումների առիթով առաջին անգամ հիշատակում է Աղվանքը: Սրան հաջորդում է Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Կրուզեի (նորանվաճ երկրների նկատմամբ ժամանակի վերնախավի տրամադրությունը բացահայտող) հոդվածը[101], ուր ոչ միայն Աղվանքը ռուս հասարակայնությանն է ներկայացվում որպես բազմալեզու ժողովուրդներով բնակեցված, հարուստ ընդերքով բերրի երկիր, այլև շոշափվում են նրա պատմական անցյալի մի քանի հարցեր:

Գրեթե միաժամանակ, 1838 թ. ֆրանսիացի հայագետ Եվգ. Բորեն, Էջմիածնում Հովհ. Ճահկաթունցյանի միջնորդով ծանոթանալով Մ. Կաղանկատվացու անունով մեզ հասած «Աղվանից աշխարհի պատմության» ձեռագրերից մեկին և վերադառնալով Փարիզ, տալիս է այս աշխատության մասին առաջին տեղեկությունները և նրանից ինչ-ինչ մասեր թարգմանելով՝ գիտական շրջանառության մեջ դնում[102]:

Սկսած այդ ժամանակաշրջանից՝ Աղվանքի պատմությունը իր տարբեր ոլորտներով գրավում է գիտնականների ուշադրությունը և դառնում մշտական ուսումնասիրության առարկա:

Նախախորհրդային շրջանում Աղվանքի պատմության ու աշխարհագրության մի շարք հարցեր ուսումնասիրվել են ռուս պատմաբաններ Ա. Յանովսկու[103] և Ի. Շոպենի[104] կողմից: Նրանք իրենց աշխատություններում անդրադարձել են «Ալբանիա» անվան բացատրություններին, Աղվանքի պատմական աշխարհագրությանը՝ ընդհանուր սահմաններին ու տեղանուններին, նրա

---

[100] В. Григорьев, О древних походах руссов на Восток, ЖМНП, 1835, ч. 2, с. 229-287.

[101] Ф. Крузе, О важности южнокавказских областей России в отношении антикварном и о Птолемее главном писателе в рассуждении Географии сей страны, ЖМНП, 1835, ч. 5, с. 423-439.

[102] Moise Kaghankatoatsi. Aghovans des origines traduite du manuscript arménien, par E. Boré avec des annotations de Viven de Saint-Martin, Univers catholique Journal de l'institut sc. hist., t. XXII, Paris, N 136, Novembre.

[103] А. Яновский, О древней Кавказской Албании, ЖМНП, 1846, ч. 52, с. 97-136, 161-203.

[104] И. Шопен, Новые заметки на древние истории Кавказа и его обитателей, СПб, 1866.

բաղկացուցիչ մասերից, առանձին ցեղերից և այլ հարցերի:

Տեղ-տեղ Ա. Յանովսկու հետ բանավիճելով՝ Աղվանքի պատմության ու աշխարհագրության գրքեր նույն հարցերն է շոշափում նաև ակադեմիկոս Բ. Ա. Դորնը[105]:

1926 թ. Բաքվում լույս է տեսնում «Գյուլիստան - Իրամ» վերնագրով մի աշխատություն, որը, գրված լինելով պարսկերեն, հետագայում ռուսերեն է թարգմանվել հեղինակի՝ Աբաս Կուլի աղա Բաքիխանովի (1794-1846 թթ.) կողմից[106]: Աշխատությունը նշանավոր է և ուշադրության արժանի ամենից առաջ նրանով, որ այստեղ առաջին անգամ փորձ է արվում տալու Շիրվանի ու Դաղստանի պատմությունը հնագույն շրջանից մինչև 1813 թ., այսինքն՝ Շիրվանի միացումը Ռուսաստանին: Ողջ Շիրվանն ու Դաղստանը ընդունելով որպես հին Աղվանք՝ աշխատության հեղինակը, սակայն, հստակ պատկերացում ունի Աղվանքի հարավային սահմանի մասին. այն համարելով Կուրը: Նա փորձում է ստուգաբանել «Ալբանիա» տերմինը, բխեցնելով «սպիտակ» բառից՝ «ազատ», «աննվաճ» նշանակությամբ և անտիկ հեղինակների տեղեկությունների հիման վրա տալիս երկրամասի պատմության պոզիտիվ շարադրանքը:

Դարի սկզբին Մակար եպիսկոպոս Բարխուտարյանցի հեղինակությամբ մեկը մյուսի ետևից լույս են տեսնում Աղվանքի և Արցախ նահանգի պատմությանը նվիրված աշխատությունները[107]: Դրանցում հեղինակը առաջին անգամ փորձում է տալ Աղվանքի ու նրան սահմանակից երկրների պատմությունը տևական մի ժամանակամիջոցում՝ հայոց Վաղարշակ թագավորի օրերից մինչև աղվանից կաթողիկոսության վերջը՝ ԺԹ դարի կեսերը: Մակար եպիսկոպոսը իր եռերգության մեջ նշում է ուսումնասիրության ենթակա երկրների աշխարհագրական սահմանները, խոսում նրանց բնակլիմայական պայմանների, օգտակար հանածոների, կենդանական ու բուսական աշխարհի մասին, նկարագրում նրանց բնակիչների սովորույթները ու կենցաղը: Նրա աշխատություններում մեծ տեղ է հատկացված եկեղեցու պատմությանը, աղվանից և հայոց եկեղեցիների փոխհարաբերություններին, դավանաբանական վիճաբանություններին, Քաղկեդոնի ժողովի որոշումների հանդեպ նրանց բռնած դիրքին,հերթականությամբ թվարկում է աղվանից կաթողիկոսներին:

Մակար Բարխուտարյանցի աշխատությունները տեղ-տեղ ստանում են աղբյուրագիտական արժեք, բայց և նրանցում արծարծված շատ մտքեր էլ ավելի խորացման կարիք ունեն:

Խորհրդային շրջանի ռուսական պատմագրության մեջ Աղվանքի աշխարհագրական սահմանների և դրա հետ կապված քաղաքական պատմության որոշ հարցերին են անդրադարձել Ա. Ե. Կրիմսկին, Վ. Վ. Բարտոլդը, Ս. Վ. Յուշկովը և ուրիշներ: Ա. Ե. Կրիմսկին հիմնականում զբաղվելով Աղվանքի մայրաքաղաքի՝ Կապաղակի ու Շաքիի տեղադրման հարցերով, հայտնում է իր համակարծությունը

[105] Б. Дорн, Каспий, О походах древних руссов в Табаристан (Приложение к Запискам Академии Наук), т. 26, СПб, 1875.

[106] Абас-Кули-ага Бакиханов, Гюлистан-Ирам, Баку, 1926.

[107] Մակար Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893; Նոյնի՝ Արցախ, Բագու, 1905; Նոյնի՝ Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, հ. Բ, Թիֆլիս, 1907:

Ա. Յանովսկու և Բ. Դորնի հետ: Խոսելով Աղվանքի սահմանների մասին և իրեն իրեն հակասելով՝ մերթ գրում է, թե իբր հունա-հռոմեական աղբյուրները Աղվանքի մաս են համարել նաև Կուրի աջափնյա տարածությունները, մերթ էլ, թե դրանք հայոց պետության մասերն են[108]:

1924 թ. Ադրբեջանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում Վ. Վ. Բարտոլդը դասախոսությունների մի ամբողջ շարք է կարդացել մերձկասպյան մարզերի, այդ թվում և Աղվանքի ընդհանուր պատմության մասին, սկսած մ.թ.ա. 331 թ.՝ պատմության մեջ առաջին անգամ աղվանացիների հիշատակումից, վերջացրած մ.թ. VIII դարով[109]:

Աղվանքի սահմանների, հատկապես հյուսիսայինի, որոշման հարցով զբաղվել է Ս.Վ. Յուշկովը[110]: Մեկ առ մեկ քննության առնելով Աղվանքի սահմանների հարցում մինչ իր ուսումնասիրությունը առկա հինգ տեսակետները (հայտնված արևմտա-եվրոպական, ռուս գիտնականների և այլոց կողմից), հենվելով բացառապես հունա-հռոմեական աղբյուրների տեղեկությունների վրա, բայց և երբեմն սխալ մեկնաբանելով դրանք, ռուս պատմաբանը եզրակացնում է. Աղվանքը ընդգրկել է Ադրբեջանի ու ողջ Դաղստանի տարածքը, որի հետ ոչ մի կերպ չի կարելի համաձայնվել: Դրա փոխարեն նա ճիշտ մոտեցում ունի Աղվանքի հարավային սահմանի հարցում և իրավացիորեն գտնում, որ այն անցնում էր Կուր գետով[111]: Նա ճիշտ դիրքորոշում ունի նաև Մ. Կաղանկատվացու նկարագրած Աղվանից աշխարհի վերաբերյալ և անվերապահորեն ընդունում է, որ վերջինս տալիս է ոչ թե հունա-հռոմեական աղբյուրներում հանդես եկող աշխարհի, այլ Հայոց արևելից կողմանց պատմությունը, քանի որ նրա նկարագրած Աղվանքը «գտնվել է ոչ թե հին Ալբանիայի, այլ Հայաստանի տարածքում»[112]:

1959 թ. լույս է տեսնում «Կովկասյան Ալբանիայի պատմության ու մշակույթի ուրվագծեր, (մ.թ.ա IV դար - մ.թ. VII դար)» ռուսերեն աշխատությունը՝ այնպիսի մի հմուտ մասնագետի ու գիտակի հեղինակությամբ, ինչպիսին Կ. Վ. Տրևերն է[113]: Աշխատությունը Աղվանքի պատմության բոլոր հարցերն ընդգրկող ամփոփ մի հետազոտություն է՝ տարալեզու աղբյուրների ու գրականության լայն օգտագործումով: Այստեղ առաջին անգամ, որպես պատմական աղբյուրներ, տեղ են գտել նաև նյութական մշակույթի մնացորդները, հնագիտական հուշարձանների պեղումների արդյունքները, իրեղեն ապացույցներ, վիմագրական ու ազգագրական նյութեր: Հեղինակը նշված բոլոր կարգի աղբյուրների ու եղած գրականության խոր ու բազմակողմանի վերլուծության հիման վրա վեր է հանել աղվանացիների պատմությունը՝ ապարեզում նրանց առաջին անգամ երևալուց մինչև արաբների կողմից նվաճվելը:

---

[108] А. Е. Крымский, Страницы из истории северного или Кавказского Азербайджана (Классической Албании), Сб. в честь С. Ф. Ольденбурга, Л., 1934, с. 289-304, Его же, Страницы из истории северного или Кавказского Азербайджана (Классическая Албания), Шеки, Сб. "Памяти Н. Я. Марра", Л., 1938, с. 369-384.

[109] В. В. Бартольд, Сочинения (в IX томах), т. II, ч. I, М., 1963, с. 651-774.

[110] С. В. Юшков, К вопросу о границах древней Албании, Исторические записки, АН СССР, т. I, 1937, с. 129-148.

[111] Նույն տեղում, էջ 132, 133:

[112] Նույն տեղում, էջ 137:

[113] К. В. Тревер, Очерки по истории ... Албании, М.-Л., 1959.

Ուսումնասիրվող երկրի 1000-ամյա պատմությունն անելիս՝ Կ. Վ. Տրեվերը կանգ է առնում աղվանացիների ցեղային կազմավորումների, պետության ձևավորման, Առաջավոր Ասիայի քաղաքական իրադրություններում վերջինիս կացության, քաղաքական անկախության համար անդրկովկասյան մյուս ժողովուրդների հետ մեկտեղ հռոմեացիների, պարսիկների ու բյուզանդացիների դեմ մղած նրանց համատեղ պայքարի ու պատմության շատ այլ հարցերի վրա, բացահայտում Աղվանքի պատմության շատ էջեր: Հեղինակը անդրադառնում է նաև սոցիալ-տնտեսական հարաբերությունների, երկրի քաղաքական կառուցվածքի, քաղաքների, մշակութային կյանքի, պաշտամունքի, գրի, արվեստի, հուշարձանների, շինարարական կառույցների և այլ բնույթի հարցերի[114]: Կ. Վ. Տրեվերի գիրքը աղվանագիտության ասպարեզում ձեռք բերված նվաճումների ամփոփ մենագրություն լինելով, զերծ չէ նաև թերություններից: Խոսքը վերաբերում է (ամենից առաջ) «Ալբանիա» - «Աղուանք» աշխարհագրական հասկացությունների շփոթին: Այս՝ միմյանցից բոլորովին տարբեր աշխարհագրական ու քաղաքական կազմավորումների անորոշ սահմանազատումը, աղվանացիների զբաղեցրած բուն տարածքի մասին թյուր պատկերացումը[115], շղթայական ձևով բերել է Արտաշես Ա հայոց թագավորի (մ.թ.ա. 189-160 թթ.) կողմից իբր աղվանական մարզեր Ուտիքի ու Արցախի բռնագրավման, սրանց հետագայում հայանալու, կրկին Աղվանքի հետ վերամիավորվելու մասին ոչ ճիշտ ենթադրություններ[116]: Ըստ Կ. Վ. Տրեվերի, իբր Արտաշեսի կողմից հիշյալ մարզերը նվաճելուց հետո միայն անտիկ հեղինակները Հայոց և Աղվանից միջև սահման են ցույց տալիս Կուր գետը[117]: Առանձնապես անընդունելի են «Առան» անվան որպես «Ալբանիա» երկրի նախնական անվան, ալբանացաիների ինքնանվանման, Առանի՝ ալբանական ցեղերի նախահայրը և Կուրի ձախափնյակում ապրող ցեղերի՝ նրանից սերված լինելու մասին ենթադրությունները[118]:

Գրքում տեղ են գտել նաև ուրիշ կարգի թերություններ, սխալներ ու անճշտություններ, որոնց կանդրադառնանք շարադրանքի ընթացքում:

Աղվանքի աշխարհագրական սահմանների հարցին է վերաբերվում Ա. Պ. Նովոսելցևի հոդվածներից մեկը, որտեղ հեղինակն անտիկ սկզբնաղբյուրների մանրակրկիտ վերլուծությամբ ցույց է տալիս բուն Աղվանքի իսկական սահմանները և ընդգծում այդ հարցում մի քանի ուսումնասիրողների միտումնավորությունն ու կողմնակալ մոտեցումը[119]: Ընդհանրապես ճիշտ կողմնորոշվելով Մեծ Հայքի ու Աղվանքի սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերություններում, նա չի կասկածում, որ «Աղվանից աշխարհի պատմությունը» մեզ է հասել իր իսկական

---

[114] Աշխատության արժանիքների ու գնահատականի մասին մանրամասն տե՛ս В. В. Струве, В. А. Белявский, Н. Ю. Ломоури, К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, IV в. до н. э. – VII в. н. э., М., 1959, ВДИ, 1960, N 3, с. 179-191.

[115] К. В. Тревер, Очерки по истории ... Албании, с. 44.

[116] Նույն տեղում, էջ 58, ծանոթ. 8:

[117] Նույն տեղում, էջ 58:

[118] Նույն տեղում, էջ 136:

[119] А. П. Новосельцев, К вопросу о политической границе Армении и Кавказской Албании в античный период, Кавказ и Византия, вып. I, Ереван, 1979, с. 10-18.

լեզվով՝ հին հայերենով[120]:

Անդրկովկասյան երկրներում ֆեոդալիզմի ծագման հարցերին է նվիրված Ա. Պ. Նովոսելցևի վերջին աշխատություններից մեկը[121]: Այն պատմահամեմատական հետազոտություն է՝ Մեծ Հայքում, Աղվանքում և Վիրքում ֆեոդալական հասարակարգի մասին: Բազմալեզու սկզբնաղբյուրների լայն օգտագործմամբ նա ցույց է տալիս այն սոցիալական ու տնտեսական գործոնները, որոնք հիմք են ծառայել ֆեոդալական հարաբերությունների առաջացման համար և պայմանավորել հասարակական կյանքում դրանց տիրապետող դիրքը: Որպես ֆեոդալական հարաբերությունների ձևավորման գլխավոր նախապայման Ա. Պ. Նովոսելցևը համարում է գյուղական համայնքի էվոլյուցիան: Ուսումնասիրության մեջ հեղինակը ընդգծում է, որ Մեծ Հայքում, Աղվանքում և Վիրքում ֆեոդալական հասարակարգը մինչև տիրապետության հասնելը անցել է մի երկարատև և անհամաչափ գործընթաց: Այն ավելի շուտ ու ինտենսիվ է ընթացել Մեծ Հայքում, քիչ ավելի դանդաղ՝ Քարթլիում և բոլորովին դանդաղ՝ Աղվանքում: Վերջին հանգամանքն էլ նպաստել է Աղվանքում ֆեոդալական հարաբերությունների ձևավորմանը և հաստատմանը IV-VII դարերում[122]:

«Աղվանից աշխարհի պատմության» ու նրա հեղինակի ապրած ժամանակի հարցերի քննությանն է նվիրված Հ. Մանանդյանի՝ 1897 թ. Լեյպցիգում լույս տեսած ուսումնասիրությունը[123]: Այստեղ բանասեր-պատմաբանը, բացի բանասիրական բնույթի հարցերից, քննության է ենթարկում նաև հայ-աղվանից եկեղեցիների փոխհարաբերությունների հարցերը և տալիս «Պատմության» առանձին գլուխների գերմաներեն թարգմանությունը: Հետագայում էլ նա զանազան առիթներով անդրադառնում է Աղվանքի պատմության տարբեր հարցերին, Պոմպեոսի ու Անտոնիոսի Կովկասյան, այդ թվում և Աղվանք կատարած արշավանքներին, ցույց տալիս այդ արշավանքների երթուղիները, կատարում աշխարհագրական ճշգրտումներ[124]:

Կովկասագիտական իր աշխատություններով հայտնի է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը: Դեռևս 1939 թ. երկու գրքով լույս տեսած «ԽՍՀՄ-ի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև ռուսական պետության կազմավորումը» (մակետ), ԽՍՀՄ ժողովուրդների պատմությունն ընդհանրացնող աշխատությունում, Ս. Տ. Երեմյանը առաջին անգամ տվել է Աղվանքի պատմությունը հնագույն շրջանից մինչև X դարը՝ համապատասխան

---

[120] А. П. Новосельцев, В. Т. Пашуто, Л. В. Черепнин, Пути развития феодализма, с. 42-43, пр. 76.

[121] А. П. Новосельцев, Генезис феодализма в странах Закавказья, М., 1980.

[122] Նույն տեղում, էջ 199:

[123] Beitrage zur albanischen Geschichte Inaugural Dissertation zur Erlangung der philosophischen Doctorwürde, Leipzig, 1897.

[124] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, հ. Բ, Երևան, 1978: Նույնի՝ Տիգրան Բ և Հռոմը (նոր լուսաբանությամբ ըստ սկզբնաղբյուրների), Երկեր, հ. Ա, նույնի՝ Круговой путь Помпея в Закавказье, Երկեր, հ. Ե, Երևան, 1984, էջ 219-237, նույնի՝ Цель и направление подготовлявшегося Нероном кавказского похода, Երկեր, հ. Ե, էջ 324-338, նույնի՝ О местонахождении Caspia a и Ca a ae, Երկեր, հ. Ե, էջ 357-374:

քարտեզներով[125]: Հետագայում Աղվանքի պատմությանը վերաբերող այդ բաժինները կազմեցին «ԽՍՀՄ պատմության ուրվագծեր» բազմահատորյակի երկրորդ և երրորդ հատորների համապատասխան գլուխները[126]: Ս. Տ. Երեմյանի գրած այս աշխատություններով դրվում է Աղվանքի պատմության գիտական ուսումնասիրության հիմքը:

1952 թ. Ս. Տ. Երեմյանը լույս է ընծայում իր «Ատլասը», ուր առաջին անգամ գծագրվում ու հստակորեն ցույց են տրվում Աղվանքի սահմանները[127]:

Աղվանքի քաղաքական սահմանները, քաղաքական իրադրության հետ կապված այդ սահմանների փոփոխությունները Կուր գետի աջ ու ձախ կողմերում պարզորոշ պատկերված են Ս. Տ. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի» աշխատությունում և նրան կից քարտեզում[128]: Այստեղ արտացոլված է Աղվանքի վարչաքաղաքական բաժանումը ըստ VII դարի հայոց «Աշխարհացույցի» և կոնկրետացված հատկապես «բուն աշխարհն Աղուանից» հասկացությունը[129]:

Աղվանքի քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքի ու պատմության առանձին հարցերին նվիրված մոտ երկու տասնյակի հասնող իր աշխատություններում[130] Ս. Տ. Երեմյանը բազմակողմանի քննությամբ հասել է արժեքավոր եզրահանգումների, ցույց տվել օբյեկտիվորեն ստեղծված պատմական երևույթների օրինաչափությունները, մտցրել բազմաթիվ աշխարհագրական ճշգրտումներ, կատարել տեղավայրերի պարզաբանումներ:

Ս. Տ. Երեմյանը տվել է Աղվանքի սոցիալ-տնտեսական կյանքի պատկերը: Գտնելով, որ Աղվանքը իր հասարակական զարգացմամբ ետ էր մնում հարևաններից՝ Մեծ Հայքից ու Վիրքից, նա նկատում է, որ միայն մեր թվականության սահմանագլխին են այստեղ տեղի ունեցել նախնադարյան-համայնական հասարակարգի քայքայման գործընթացները, գույքային անհավասարության խորացումն ու անցումը դասակարգային հասարակության: Նրա կարծիքով, այս շրջանում երկրի քաղաքական ու տնտեսական կենտրոնը դառնում է Ավթարանի հովիտը, ուր և գտնվում էր պետության մայրաքաղաք Կապաղակը[131]: Խոսելով Աղվանքի քաղաքական կացության մասին, Ս. Տ. Երեմյանը միանգամայն իրավացիորեն գտնում է, որ այն, մինչև Սասանյան Իրանի կողմից վերջնականապես նվաճվելը, ոչ մեկին չի ենթարկվել:

---

[125] История СССР с древнейших времен до образования древнерусского государства, книга I (части I-II) с. 325-331, 369-375, книга II (части III-IV), с. 159-168, 369-381, М.-Л., 1939 (макет)

[126] Очерки истории СССР III-IX вв. М., 1958; с. 303-330, 530-536; Очерки истории СССР период феодализма IX-XV вв. (в двуг частях), М., 1953, с. 641-662: Աղվանքի պատմությունը մ.թ.ա. վերջին դարերից մինչև մ.թ. երկրորդ դարը, Ս. Տ. Երեմյանի նյութերով գրել է Ա. Ի. Բոլտունովան: (տե՛ս Очерки истории СССР первобытно-общинный строй и древнейшие государства на территории СССР, М., 1956, с. 420-485).

[127] Атлас к книге "История армянского народа", ч. I, Ереван, 1952.

[128] Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963:

[129] Նույն տեղում, էջ 34:

[130] Ս. Տ. Երեմյան (կենսամատենագիտություն), Երևան, 1984, էջ 46-82:

[131] С. Т. Еремян, Основные проблемы периодизации истории народов Закавказья, Труды объединенной научной сессии АН СССР и АН Закавказских республик по общественным наукам, Баку, 1957, с. 95-106.

1966 թ. Աս. Մնացականյանի հեղինակությամբ լույս է տեսնում «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը» արժեքավոր մենագրությունը[132]: Սա մի ուսումնասիրություն է Աղվանից աշխարհի դպրության մասին, սակայն հեղինակը անդրադարձել է նաև «պատմաաշխարհագրական և էթնիկական բնույթի մի քանի էական հարցերի պարզաբանմանը»[133], այդ նպատակին ծառայեցնելով մենագրության մոտ մեկ երրորդը կազմող ներածական բաժինը: Աշխատությունը որոշակի պարզություն է մտցնում «բուն Աղվանք», «Հայոց Աղվանք», «Հայոց արևելից կողմանք» հասկացություններում, ցույց տալով այն պատմական պայմանները, որոնց ազդեցության տակ էլ կարող էին առաջացած լինել այդ կապակցությունները: Հեղինակը ընդգծել է նաև այն փաստը, որ հայ պատմիչները «Արևելք» տարբերակչի տակ հասկացել են պատմական Հայաստանի հյուսիսարևելյան երկրամասը «այլապես Աղվանից աշխարհի առումով դրանք ոչ թե արևելից, այլ հարավային (ընդգծ. - Աս. Մնացականյանի), կողմեր են»[134]:

Աս. Մնացականյանի այս աշխատությունը Աղվանից աշխարհի պատմության վերաբերյալ պատմագիտության մեջ տեղ գտած սխալների առաջին լուրջ գիտական քննադատությունն է:

Հայոց արևելից կողմանց ու հարակից հարցերի պատմությանն է նվիրված Բ. Ուլուբաբյանի «Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության» աշխատությունը[135], որը ընդգրկում է V-VII դարերն ընկած ժամանակահատվածը: Այստեղ հեղինակը աղբյուրների ուսումնասիրությունների քննական վերլուծությամբ մեկ անգամ ևս հաստատում է նախորդ ուսումնասիրողների կողմից պարզված մութ ու առեղծվածային մի շարք հարցեր, առաջ քաշում նորերը: Գրքում կարևորվում է Աղվանքի պատմական աշխարհագրության հարցերին նվիրված բաժինը, ուր հեղինակը բացառապես անտիկ հեղինակների վկայությունների հիման վրա նախ հաստատում է այն եղելությունը, որ հնագույն շրջանից մինչև մ.թ. V դարի առաջին տասնամյակները Մեծ Հայքի ու Աղվանքի միջև սահմանն է եղել Կուրը, որ Կամբեճանը մ.թ. առաջին դարերում կազմել է Հայաստանի մի մասը, որոշում է Ուտիքի սահմանները և անցնում «Ալբանիա», «Աղուանք», «Առան» անվանումների քննությանը, ցույց տալիս դրանց իմաստային փոփոխությունները պատմության տարբեր դարաշրջաններում և տալիս ստուգաբանությունները:

«Ալբանիա» և «ալբանացիներ» տերմինների իմաստաբանական վերլուծությանն է նվիրված Ա. Հակոբյանի աշխատությունը[136]: Ցույց տալով յուրաքանչյուր կոնկրետ ժամանակաշրջանում այդ տերմինների իմաստաբանական բովանդակությունը, հեղինակը ուշագրավ եզրակացությունների է հանգում Աղվանքի պատմական աշխարհագրության ու էթնիկական բնույթի հարցերի շուրջը, հաստատելով այն իրողությունը, որ «ալբանացի» տերմինը ոչ թե էթնիկական, այլ «Ալբանիա» երկրի բնակչին տրվող անվանում է: Նա

[132] Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966: Նույնը տե՛ս նաև ռուսերեն՝ О литературе Кавказской Албании, Ереван, 1969.

[133] Նույն տեղում, էջ 6:

[134] Նույն տեղում, էջ 86:

[135] Բ. Ուլուբաբյան, Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության, Երևան, 1981:

[136] А. А. Акопян, "Албания-Алуанк" в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987.

աղբյուրագիտական վերլուծության է ենթարկում նաև «Աղվանից աշխարհի պատմություն» երկը, փորձում լուծել նրա ձեռագրերի, խորագրի, աղբյուրների, հեղինակի, ստեղծման ժամանակաշրջանի հարցերը:

Աղվանքի պատմությունը գրավել է նաև ադրբեջանցի պատմաբանների ուշադրությունը: Երկրում խորհրդային կարգերի հաստատումից հետո, նրանք ձեռնամուխ են լինում Ադրբեջանի պատմությունն ստեղծելու գործին և, այսպիսով, Աղվանքի պատմության ուսումնասիրությունը դառնում է նրանց մշտական հետազոտության առարկան:

Ադրբեջանի հյուսիսային մասի պատմության հին շրջանի քաղաքական, տնտեսկան ու նյութական մշակույթի մասին առաջին շարադրանքը պատկանում է ռուս հետազոտող Վ. Ն. Լևիատովին[137]: Ժամանակագրական առումով Վ. Ն. Լևիատովի աշխատությունն ընդգրկում է մ.թ.ա. V դարից մինչև մ.թ. III դարն ընկած ժամանակաշրջանը և ցույց է տալիս Աղվանքի քաղաքական դրությունը Առաջավոր Ասիայում Աքեմենյան Պարսկաստանի և նրան հաջորդող օտար այլ նվաճողների՝ հռոմեացիների ու պարթևների գերիշխանության ժամանակներում: Բայց նա ավելի հանգամանորեն խոսում է աղվանացիների՝ աքեմենյաններից ունեցած ենթակայության ու աղվանա-պարթևական, քան աղվանա-հռոմեական հարաբերությունների մասին, որոնք կազմում էին Աղվանքի պատմության կարևոր ու ամենաբուռն շրջանը:

Սոցիալ-տնտեսական հարաբերությունների հարցում Վ. Ն. Լևիատովը մի դեպքում «բավարար հիմքով» գտնում է, որ հողագործությամբ, անասնապահությամբ ու արհեստագործությամբ զբաղվող աղվանացիները մ.թ.ա. I դարում ապրում էին դեռևս չքայքայված տոհմացեղային հարաբերություններով, որտեղ սոցիալական շերտավորումը շատ թույլ էր զգացվում[138], իսկ մյուս դեպքում պնդում, որ հենց դասակարգերի ձևավորման աստիճանում էին գտնվում աղվանացիները, երբ նրանց երկիրը ներխուժեցին հռոմեացիները մ.թ.ա. I դարում[139]: Սահմանների հարցում Վ. Լևիատովը միանում է այն ուսումնասիրողներին, որոնց կարծիքով Աղվանքն ընդգրկել է ողջ Դաղստանը՝ հյուսիսային սահման ունենալով Թերեք գետը:

Աղվանքի պատմության ամենատարբեր բնույթի հարցեր են շոշափվել Զ. Յամպոլսկու հոդվածներում ու «Հին Ալբանիան մ.թ.ա. III — I դդ.»[140] մենագրության մեջ: Առաջինը, որ ակնառու է Աղվանքի կոնկրետ հարցերի ուսումնասիրություններին նվիրված այս հրապարակումներում, նրանց միտումնավորությունն ու կանխակալությունն է: Ջգտելով պատմական Աղվանքի սահմանները համաձայնեցնել Ադրբեջանի տարածքի հետ, նա արհեստականորեն ընդարձակում է դրանք, հասցնում մինչև Արաքս ու սրանից էլ հարավ ընկած շրջանները: Ըստ որում, այդպիսի սահմանագիծ նա ցույց է տալիս Աղվանքի պատմության բոլոր ժամանակաշրջանների համար: Նա Արաքսը սահման է

---

[137] В. Н. Левиатов, Азербайджан с V в. до н. л. по III в. н. л., Известия, АН АЗССР, 1950, N 1, с. 65-92.

[138] Նույն տեղում, էջ 79:

[139] Նույն տեղում, էջ 80:

[140] З.. И. Ямпольский, Древняя Албания, III-I вв. до н. э., Баку, 1961.

համարում նաև Աղվանքի ու Ատրպատականի միջև[141], որն, ի դեպ, նրա կարծիքով, չի խանգարել այս երկու երկրների էթնիկական ընդհանրությանը, քանի որ «Ադրբեջանի տարբեր մարզերի բնակիչները նույնանուն էին»[142] և խոսել են «նմանատիպ» կամ, նույնիսկ, նույն լեզվով»[143]: Ըստ Զ. Յամպոլսկու, նրանք Ադրբեջանի այսօրվա ազգաբնակչության նախնիներն են[144]:

Սոցիալ-տնտեսական հարաբերությունների և, առաջին հերթին, տաճարային տնտեսությունների, դրանց ծագման, բնույթի ու անմիջական արտադրողների սոցիալական կացության քննարկմանը նվիրված մենագրությունում[145] Զ. Յամպոլսկին գտնում է, որ քրմերի գլխավորությամբ տաճարային տնտեսությունների արմատները պետք է փնտրել դեռևս նախնադարյան համայնական հասարակարգում ծագած սեփականատիրական ձևերի մեջ: Նրա կարծիքով, դրանք տաճարի սրբազան սեփականությունը լինելով, անօտարելի էին: Տաճարային այս տնտեսություններում աշխատող ճյութական բարիքների արտադրողները հիերոդուլներն էին, որոնք, ըստ էության, տաճարային ստրուկներ էին և որպես այդպիսին, ենթակա էին զոհաբերման, որին էլ հաճախ դիմում էին քրմերը:

Բացի Աղվանքի քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմության հարցերից, Զ. Յամպոլսկին զբաղվել է նաև Աղվանքի գրի ու գրականության, «Աղվանից աշխարհի պատմության» հեղինակի կամ հեղինակների, աշխատության լեզվի ու հարակից այլ հարցերով[146]: Նրան է պատկանում Մովսես Կաղանկատվացուն «աղվան» կամ «ուտի» անվանելու առաջին փորձերից մեկը, «Աղվանից աշխարհի պատմությանը» աղվանական գրականության նմուշ և, ուրեմն, որպես այդպիսին, նախապես գարգարերեն գրված լինելու ու ապա գրաբար թարգմանվելու անհիմն հայտարարությունը, նրանում քաղաքական նկատառումներով հայ եկեղեցական գործիչ-թարգմանիչների կողմից փոփոխություններ, կրճատումներ ու հավելումներ անելու անողջամիտ գաղափարը[147] և նման կարգի շատ այլ սխալներ, որոնք որոշակի նպատակի ծառայող գիտակցական խեղաթյուրումներ են: Առանց հիմնավոր փաստերի նա «ուտիներ» և «Ուտիք» անվանումները համարում է «ալբանացիների» ու «Ալ Բանիայի» ինքնանվանումները՝ գրելով. «ալբանացի» և «Ալբանիա» անվանումները շատ լավ հայտնի են անտիկ ու հին հայկական հեղինակներից և պետք է համարվեն «ուտիների» ու «Ուտիքի» այլ անվանումը»: «Ուտիներ» եղել է Ալբանիայի բուն բնակչության ինքնանվանումը...»: «Ուտիներ» և «Ուտիք» (անվանումները - Հ. Ս.) համապատասխանաբար նույնանում են

---

[141] З. И. Ямпольский, К вопросу об одноименности древнейшего населения Атропатены и Албании, Труды Инст. ист. и фил., Баку, 1954, т. IV, с. 101.

[142] Նույն տեղում, էջ 105: Նրա, Материалы о происхождении азербайджанского народа, Известия АН Аз СССР, 1956, N 1, с. 93-101.

[143] З. И. Ямпольский, Древние авторы о языке населения Азербайджана, Известия АН Аз СССР, 1955, N 8, с. 61.

[144] З. И. Ямпольский, Об этногенетической непрерывности на почве Азербайджана, Сб., Вопросы истории Кавказской Албании, Баку, 1962, с. 32-43.

[145] З.. И. Ямпольский, Древняя Албания, III-I вв. до н. э., Баку, 1961.

[146] З. И. Ямпольский, К изучению Летописи Кавказской Албании, Известия АН АзССР, 1957, N 9, с. 149-161.

[147] Նույն տեղում, էջ 149, 154 և հաջորդ:

«ալբանացիների» ու «Ալբանիայի» հետ»[148]: Բայց անհիմն են նման պնդումները: Նրա վկայակոչած հին հայ պատմիչների աշխատություններում նշված տերմինները հաճախ են հանդիպում կողք կողքի և այն էլ որպես առանձին, տարբեր երկրների անվանումներ՝ հավաստելով , որ «Ալբանիա-ալբանացիներն» ու «Ուտիք-ուտեացիները» բոլորովին տարբեր հասկացություններ են:

Առանց որևէ հիմքի Ադրբեջանի պատմության հնամենիությունն է ուզում ապացուցել Զ. Բունիյաթովը: Զբաղվելով Աղվանքի պատմության անխտիր բոլոր հարցերով, հետևողականորեն անցկացնելով խիստ ընդգծված հակահայկական միտումնավորություն, նա իր աշխատություններով ոչ միայն ազգային թշնամանք է սերմանում երկու ժողովուրդների միջև, այլև մեղանչում է գիտության առջև:

1965 թ. Զ. Բունիյաթովը հրատարակում է մի ուսումնասիրություն[149], որում չնայած խոստանում է «տալ հետագայում Ադրբեջանի տարածքը կազմող մարզերի ընդհանուր պատմության ուրվագիծը»[150], բայց այդ մարզերը նա չի հետազոտում իրենց պատմական ժամանակի մեջ, այլ դիտում է որպես հենց սկզբից Ադրբեջանի բաղկացուցիչ մարզեր: Հակառակ դեպքում նա իր կողմից նշած Շիրվան, Շաքի, Կաբալա շրջանները կուսումնասիրեր որպես հունա-հռոմեական աղբյուրներից հայտնի Ալբանիայի մարզեր, Արցախը, Ուտիքն ու Գարդմանը՝ հայոց երկրի նահանգներ և ընդհանրապես կլռեր Սյունիքի մասին, որը երբեք չի մտել Աղվանքի կազմի մեջ: Բայց, չնայած դրան, նա ոչ միայն Սյունիքը դիտում է որպես Աղվանքի մարզերից մեկը, այլև հայտնում է այնպիսի արտառոց միտք, թե Սյունիքը սկսած 577 թ. գտնվել է Առանի (հիմա Աղվանքի, իսկ եթե Աղվանքի, ապա ուրեմն և, ըստ Զ. Բունիյաթովի և առհասարակ բոլոր ադրբեջանցի ուսումնասիրողների, անպայման Ադրբեջանի- Հ. Ս.) կազմում և միայն 1921 թ. միացել է Հայաստանին[151]: Սակայն սա պատմական իրականության ամենակոպիտ աղավաղում է, քանի որ Սյունիքը, բացառությամբ VI դարի մի փոքր ժամանակահատվածի, երբեք Հայաստանի կազմից դուրս չի գտնվել: Նշված ժամանակահատվածում էլ կտրվելով մայր Հայաստանից, Սյունիքը ոչ մի օտար քաղաքական ազդեցության տակ չի գտնվել: Սյունյաց այդ ժամանակվա իշխան Վահանը սույն հարկահավաքման գործը Դվինից փոխադրել է Ատրպատական: Այդ մասին Սեբեոսը գրում է. «Ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց, և խնդրեաց ի Խոսրովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դուինայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի»[152]: Ինչպես տեսնում ենք, Սեբեոսի այս հաղորդման մեջ խոսքը պարզապես Սյունաց աշխարհից գանձվող հարկի մասին է, որն ուղղակիորեն մտնելու էր Ատրպատական, ընդ որում առանց վերջինիս կողմից քաղաքական որևէ ազդեցության ենթարկման: Այսպիսով, Վահանի գործողություններում ավելի շուտ արտահայտվել է ֆեոդալական հասարակարգին հատուկ երկպառակություն, որ որոշ ժամանակ անց վերացվում է: Ուստի, ճիշտ չէ

[148] Նույն տեղում, էջ 154:

[149] З. М. Буниятов, Азербайджан в VII-IX вв., Баку, 1965.

[150] Նույն տեղում, էջ 4:

[151] З. М. Буниятов, Размышления по поводу книги А. Н. Тер-Гевондяна "Армения и арабский халифат", Известия АН АзССР, 1977, N 4, с. 116.

[152] Սեբեոս, գլ. Ը (էջ 67-68):

Սյունիքի այս անջատման մեջ տեսնել քաղաքական-վարչական կարգավիճակի փոփոխություն:

Զ. Բունիաթովը իր աշխատության աղբյուրների տեսության մեջ հիշատակում է ինը հայ հեղինակների՝ նրանց աշխատությունները, սակայն դիտելով որպես հայալեզու գործեր[153]: Նա նշում է առաջին հերթին Մ. Կաղանկատվացուն, Դավթակ Քերթողին, Մխիթար Գոշին և Կ. Գանձակեցուն, հայտարարելով թե նրանց ստեղծած գրականությունը հայկական է համարվել միայն նրա համար, որ Ադրբեջանում երկար ժամանակ չեն եղել քրիստոնեական շրջանի հետազոտողներ: «Միայն,- գրում է նա,- Ադրբեջանում Առանի (Ալբանիայի) քրիստոնեական շրջանի պատմության հետազոտողներ չունենալն է, որ հնարավորություն է տվել այդ գրականությունը հայկական համարելու, չնայած դրա համար, բացի լեզվից, ոչ մի հիմք չկա»[154]: Ի դեպ, Զ. Բունիաթովի այս հայտարարությունը խիստ ներդաշնակում է թուրք պատմաբան Ֆ. Կրզըօղլու նույնպես անհիմն այն հայտարարությանը, թե «այն բանի հետևանքով, որ մենք չենք ունեցել մեր սեփական մասնագետները պատմության բնագավառում, այդ գրքերը (հրատարակված Պետերբուրգում՝ հայ և ռուս արևելագետ պատմաբանների կողմից - Հ. Ս.) մեզ վախ էին ներշնչում և հարկադրում նահանջել»[155]: Ընդհանրապես Զ. Բունիաթովին խիստ հարազատ է թուրքական պատմագրությունը, որից նա ազատորեն օգտվում է: Պատահական չէ, որ նա, գրախոսելով Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր Հակկի Դուրսուն Յըլդըզի աշխատությունը, ոգեվորված բացականչում է, թե այն «ևս մի արժեքավոր ներդրում է մեր պատմագիտության մեջ»[156]:

Զ. Բունիաթովին հատուկ է լռությամբ անցնել իրեն անցանկալի փաստերի վրայով, բերել ենթատեքստից կտրված ու աղճատված մեջբերումներ, պատճառահետևանքային կապերից նախապատվությունը տալ վերջինիս և որպես պարտադիր պայման այն ընթերցողին ներկայացնել անպայման բացասական լույսի տակ և այլն: Զ. Ցամպոլսկուց հետո նրան է պատկանում նաև այն «հայտնագործությունը», թե հայերը, աղվանական գրականությունը նախապես թարգմանելով հայերեն, բնագրերը ոչնչացրել են [157]: Միտումնավոր շրջանցելով Սահլ Սմբատյանի, Եսայի Աբու Մուսեի, Համամ Արևելցու և այլոց հայ լինելու փաստերը, նա նրանց համարում է աղվաններ [158]: Նրա աշխատություններում քիչ չեն նաև այլ կարգի խեղաթյուրումներ, որոնց կանդրադառնանք շարադրանքի ընթացքում, կոնկրետ հարցերի քննարկման ժամանակ: Նշենք, որ նրա սխալ ու հակագիտական մտքերը լուրջ հակահարված ստացան հայ պատմաբանասիրական մտքի կողմից [159]: Ցույց տրվեց պատմության նկատմամբ նրա ունեցած հայացքների

[153] З. М. Буниятов, Азербайджан в VII-IX вв., с. 6-11 и сл.

[154] Նույն տեղում, էջ 99:

[155] Տե՛ս М. К. Зулалян, Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Ереван, 1970, с. 6.

[156] З. Буниятов, Новое исследование по истории Азербайджанского государства Саджидов (889-929 гг.), Известия АН АзССР, 1980, N 3, с. 132.

[157] Նույն տեղում, էջ 97:

[158] Նույն տեղում, էջ 185 և հաջ.:

[159] Ա. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 17, 83 և հաջ.; А. Мнацаканян, П. Севак, По поводу книги З. Буниятова, с. 177-190; К. А. Мелик-

→

արատավորությունը, բացահայտվեց այդ «հետազոտությանը հատուկ հայ ժողովրդի, նրա կուլտուրայի ունեցած որևէ դրական դերը ժխտող միտումնավորությունը»[160]:

Զ. Յամպոլսկու խմբագրությամբ է լույս տեսել նաև Աղվանքի աշխարհագրական սահմանների, էթնիկական կազմի, տնտեսության, առևտրական կապերի, տաճարային տնտեսությունների ու աղվանցիների հավատալիքների մասին մի աշխատություն, որի հեղինակը՝ Ք. Ալիևը, իր առջև խնդիր է դրել քննարկել նշված հարցերը մ.թ.ա. I - մ.թ. I դարերի ժամանակահատվածում [161]:

Ք. Ալիևի ուսումնասիրությունը գրվել է պատրաստի եզրակացությունների հիման վրա: Այդ պատճառով էլ նա աղբյուրներից ընտրում է այն, ինչ հարմարվում է իր տեսակետներին, անում ոչ ճիշտ մեկնաբանություններ, «ուղղում» անտիկ հեղինակների թարգմանությունների «սխալներն» ու «անճշտությունները» և եզրակացություններ հորինում արդեն «ուղղված» տեքստերի հիման վրա, դրանք ներկայացնելով իբրև անտիկ պատմիչների ու աշխարհագետների թողած հաղորդումներից բխող մտահանգումներ: Սակայն քննարկվող հարցերին նման մոտեցումը, դրանց բռնազբոսիկ ու կամայական բացատրությունները, չափազանցություններն ու աղբյուրների տեղեկությունների անհարկի հարմարեցումն իր կանխակալ կարծիքներին ոչ մի կապ չունի գիտության հետ:

Աղվանքի պատմության մեջ սոցիալ-տնտեսական ու քաղաքական մեծ փոփոխությունների հանգեցնող այնպիսի կարևորագույն շրջադարձի անտեսումը, ինչպիսին է թագավորության վերացումն ու մարզպանության կազմավորումը, Թ. Մամեդովին բերել է այնպիսի սխալ հետևությունների, թե Աղվանքը հնագույն ժամանակներից մինչև VIII դարը ներառյալ ինքնուրույն, մինչև Արաքսը հասնող անփոփոխ քաղաքական սահմաններով պետական մի միավորում էր և մշտապես կառավարվում էր թագավորների կողմից, իսկ Միհրանյան հայտնի իշխանական տունը թագավորական հարստություններից մեկն էր Աղվանքում: Նրա կարծիքով, այդ ամբողջ տարածքը բնակեցված էր միայն աղվանական ցեղերով [162]:

Իրենց աշխատություններում Աղվանքի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի, քաղաքների ու առևտրական կապերի պատմության առանձին հարցերին են անդրադարձել նաև Ի. Ալիևը, Ի. Բաբաևը, Գ. Ասլանովը, Ֆ. Օսմանովը, Զ. Խալիլովը և ուրիշներ [163]:

---

→

Оганджанян, Историко-литературная концепция З. Буниятова, ԲՀԱ, 1968, N 2, с. 169-190; Его же, Еще раз о национальной принадлежности Мхитара Гоша, автора " Судебника", ԲՀԱ, 1969, N I, с. 183-198; А. Ганаланян, Л. Хачикян, А. Тер-Гевондян, Об очередных " размышлениях " З. М. Буниятова, Լրաբեր հաս. գիտ., 1978, թիվ 5, էջ 95-104:

[160] К. А. Мелик-Оганджанян, Историко-литературная концепция З. Буниятова, с. 169.

[161] К. Алиев, Кавказская Албания (I в. до н. э.- I в. н. э.), Баку, 1974.

[162] Т. М. Мамедов, Албания и Атропатена по древнеармянским источникам (IV-VII вв.), Баку, 1977; Его же, Кавказская Албания в IV-VII вв. (Автореферат докторской дисертации), Баку, 1985.

[163] И. Алиев, К интерпретации параграфов 1, 3, 4 и 5 IV главы XI книги " Географии" Страбона, ВДИ, 1975, N 3, с. 150-165; И. Алиев, Ф. Османов, Бассейн рек геокчай-Гирдманчай-Ахсучай в античное время, СА, 1975, N I,с. 188-202; Играр Алиев, Гардашхан Асланов, Племена сармато-массагето-аланского круга в Азербайджане, Древний Восток, N 2, Ереван, 1976, с. 218-237; Играр Алиев, О скифах и скифском царстве в

→

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի Աղվանքի պատմությունը ընդհանրացված է նաև «Ադրբեջանի պատմություն» եռահատոր աշխատության առաջին հատորում[164]:

Վերջին ժամանակներս աղվանագիտության բնագավառում կատարած իր ուսումնասիրություններով աչքի է ընկնում Ֆ. Մամեդովան: Նրա շոշափած խնդիրները լայն են ու բազմաբնույթ [165]. Աղվանքի հասարակական ու քաղաքական կյանքի պատմությունը հին և վաղ միջնադարյան շրջաններում, պատմական աշխարհագրությունը, էթնիկական կազմը, գաղափարախոսությունն ու մշակույթը, «Աղվանից աշխարհի պատմության» լեզվի ու հեղինակի կամ հեղինակների և ընդհանրապես Աղվանից գրականության հարցերը և այլն: Այդ աշխատություններում Ֆ. Մամեդովան իրեն է վերագրում հայ գիտնականների կողմից վաղուց պարզաբանված բազմաթիվ հարցերի առաջին հայտնագործողի դերը, զարգացնում և խտացված գույներով ներկայացնում ադրբեջանցի այլ ուսումնասիրողների կողմից առաջ քաշած սուտ ու սխալ կարծիքները: Դրանք առանձնապես ցայտուն են դրսևորվել Ֆ. Մամեդովայի վերջին՝ «Աղվանքի քաղաքական պատմությունն ու պատմական աշխարհագրությունը (մ. թ. ա. III - մ.թ. VIII դդ.)» աշխատությունում: Հեղինակը այն ներկայացնում է որպես «պատմական [166] Ադրբեջանի», որ, նրա կարծիքով, ընդգրկել է Հայոց Սյունյաց, Ուտիք, Արցախ և Փայտակարան նահանգները ու այն հնում բնակեցրած և ադրբեջանական ժողովրդի կազմավորումից հարյուրամյակներ առաջ էթնիկապես անհայտացած աղվանացիների՝ իբրև ադրբեջանցիների նախահայրերի, քաղաքական պատմության ու պատմական աշխարհագրության ուսումնասիրություն:

Հակապատմական այս կոնցեպցիան անցկացնելու համար նա հորինում է մի շարք կեղծ ու պատիր դրույթներ, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

I. Աղվանքը իր պետականության կազմավորումից սկսած (իբր մ.թ.ա.III դարից մինչև VIII դարի կեսերը) իրենից ներկայացրել է մի ամբողջական, կենտրոնացված

---

Азербайджане, Переднеазиатский сборник, III, М. 1979, с. 4-14; Дж. Халилов, И, Бабаев, О городах древней Кавказской Албании, СА, 1974, N 4, с. 98-109; И. А. Бабаев, К вопросу о возникновения государства Албании (Кавказской), Известия АН АзССР, 1976, N 4, с. 40-51: Дж. А. Халилов. Материальная культура Кавказской Албании, Баку, 1985.

[164] История Азербайджана, в трех томах, т. I, Баку, 1958.

[165] Ф. Мамедова, "История албан" Моисея Каланкатуйского как источник по общественному строю раннесредневековой Албании, Баку,1977: Սույն գրքի գրախոսականում (Р. А. Гусейнов, Новая публикация по албановедению, Известия АН АзССР, 1978, N 2, с. 119-123) հեղինակ Ռ. Հուսեյնովը այս ուսումնասիրությամբ արդեն հաստատված փաստ է համարում Կաղանկատվացու «տեղական», «աղվանական» պատմիչ լինելու հանգամանքը և խանդավառված համոզմունք հայտնում, թե ժամանակի հարց է աշխատության աղվաներեն բնագրի հայտնագործման գործը: Նրա այդ գրախոսականում ցցուն կերպով երևում է հայ գիտնականների դերը նսեմացնելու, պատմական փաստերի կեղծումով կանխակալ կարծիքների հաստատման, շինծու եզրակացություններին արհեստականորեն քաղաքացիություն տալու միտում: Его же, Политическая история и историческая география Кавказской Албании (IIIв. до н. э. - VIII в. н. э.), Баку, 1986: Գրքի շուրջը գրվել են մի շարք գրախոսականներ, որոնց մասին տե՛ս ստորև:

[166] Այս տերմինը առաջին անգամ է օգտագործվում Ադրբեջանի համար: Այն հորինվել է «պատմական Հայաստան» հասկացությանը համազոր պատկերացում ստեղծելու նպատակով:

քաղաքական-պետական միավորում և ամբողջ այդ ժամանակաշրջանում անփոփոխ ամփոփված է եղել մի սահմանագծում, որ հյուսիսում անցել է Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայով, արևելքում՝ Կասպից ծովով, արևմուտքում՝ Ալազան, իսկ հարավում՝ Արաքս գետերով:

2. Ազգությամբ իբր աղվանացիներ են հայ պատմիչներ Մովսես Կաղանկատվացին, Կիրակոս Գանձակեցին, Վանական վարդապետը, բանաստեղծ Դավթակ Քերթողը, գրավոր օրենսդրության հիմնադիրներ՝ «Դատաստանագրքերի» հեղինակներ Դավիթ Ալավկա որդին ու Մխիթար Գոշը, իսկ նրանց ստեղծագործությունները՝ Աղվենի ու Պարտավի ժողովների կանոնների հետ մեկտեղ՝ աղվանական գրականության նմուշներ, որոնք իբրև թե, Ֆ. Մամեդովայի հորինած արտահայտությամբ, «հայկական ավանդույթի» ուժով իրենցն են համարել հայերը:

3. Տիգրան Մեծից հետո հայկական պետություն գոյություն այլևս չուներ, հետևաբար և էական չէ անդրկովկասյան ժողովուրդների շարքում հայ ժողովրդի, նրա պատմության ու մշակույթի դերը:

Այսպիսի եզրակացությունների, սակայն, հեղինակը հանգել է ոչ թե աղբյուրների հաղորդումների գիտական ու անաչառ վերլուծության միջոցով, այլ կանխակալ մոտեցմամբ կեղծելով փաստերը, դրանք հարմարեցնելով իր նպատակներին, ժխտելով պատմականորեն հավաստի հաղորդումները, շրջանցելով առավել նշանակալիները, հավելումներ անելով: Նախապես իրեն ապահովագրելով անտիկ ու հայ հեղինակների հաղորդումների հակասական ու որպես այդպիսին պատմականորեն անհիշտ լինելու մասին հայտարարություններով՝ Ֆ. Մամեդովան հակասությունների արդյունք է հայտարարում աղբյուրների իրեն ոչ ձեռնտու բոլոր տվյալները և իր տեսակետները կառուցում սեփական վերաձևումների հիման վրա:

Չափազանց տարված լինելով Աղվանքի ու աղվանացիների մասին անտիկ ու հայ հեղինակների հաղորդումների իսկությունը ժխտելու անկասելի մոլուցքով, Ֆ. Մամեդովան բոլորովին չի մտահոգվում գիտական լրջության պակասի համար: Նա հանգիստ խղճով մի կողմից կարող է հայտարարել, թե Նախիջևանը հայկական մարզ չի կարող լինել, քանի որ Բուզանդը այդ մասին ակնարկ անգամ չունի, իսկ մյուս կողմից էլ այլ աղբյուրների, մասնավորապես, «Աշխարհացույցի» ուղղակի տեղեկությունները Նախիջևանի՝ որպես Հայաստանի մարզերից ու քաղաքներից մեկի մասին, որակել որպես Հայաստանի իրական պատմությանը կատարելապես անհամապատասխան [167]: Կորյունի հաղորդումներն էլ Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական գործունեության մասին ողջ Հայաստանում, այդ թվում և Գողթնում, ըստ նրա, չի նշանակում, թե վերջինս հայկական մարզ էր [168] և այլ նման օրինակներ, որոնք վկայում են հեղինակի անլրջության մասին:

Առաջնորդվելով այս մեթոդով ու իր տնտեսական ու քաղաքական զարգացմամբ հարևան երկրներից հետ մնալու « վիրավորական» կարծիքը Աղվանքի նկատմամբ ժխտելու բուռն ցանկությամբ, Ֆ. Մամեդովան նրա համար ուղղակի հորինում է իրեն ցանկալի, երևակայական մի պատմություն, որտեղ այն համարվում է Մեծ Հայքին ու Վիրքին համազոր, երբեմն էլ նույնիսկ առաջնակարգ

[167] Ф. Мамедова, Политическая история ... Албании, с. 109, 112.

[168] Նույն տեղում, էջ 113:

երկիր: Ֆ. Մամեդովայի ելակետային սխալներից է՝ մինչև VIII դարը գրեթե անփոփոխ սահմաններով Աղվանքի կենտրոնացված պետություն տեսնելը: Չընդունելով, որ V դարի կեսերին հաստատված մարզպանական ռեժիմի, ապա և բուն Աղվանքի նախկին տարածքում առաջացած մի շարք քաղաքական, ինքնուրույն կազմավորումների առաջացման հետևանքով Աղվանից պետությունը անդառնալիորեն վերացվեց[169], նա ի դեմս Միհրանյան իշխանների տեսնում է այն իշխանական հարստությունը, որն Աղվանքում իբրև թե դարձավ թագավորական իշխանության ավանդույթների անշեղ շարունակողը: Ֆ. Մամեդովայի կեղծիքների համակարգում առանձնահատուկ տեղ են գրավում աղվանական գրին ու գրականությանը վերաբերող բաժինները: Նրա համար ընդունելի չէ աղվանական այբուբենի հիմնադիր անվանել Մեսրոպ Մաշտոցին: Ցանկանալով աղվանական այբուբեն ունենալ Մաշտոցից էլ առաջ և անտեսելով Կորյունի ու Խորենացու հայտնի տեղեկությունները աղվանացիների համար «նշանագրեր հորինելու»[170] կամ «ստեղծելու»[171] մասին, նրան հատկացնում է միայն ու միայն եղած այբուբենի վերականգնողի ու վերափոխողի դեր[172]:

Ֆ. Մամեդովայի «հայրենասիրական» զգացմունքներն էլ ավելի են հորդաբուխ դառնում, երբ խոսք է գնում Աղվանից գրականության մասին: Նա իր պարտքն է համարում աղվանացիների համար գրականություն հայթայթել և բնավ չշփոթվելով, որ այդպիսիք մեզ հայտնի չեն, դրանք ուղղակի վերցնում է հայ մատենագրության շարքից և սառնասրտորեն հայտարարում աղվանական գրականության նմուշներ, իսկ դրանց հեղինակներին՝ աղվանական տարեգիրներ: Հայ պատմագրությունից այս միտումի զոհեր են դարձել շատ պատմիչներ եւ մշակույթի ու հասարակական-քաղաքական գործիչներ, որոնց մի մասին անվանապես թվարկեցինք վերևում: Նրանց հայտարարելով աղվանական գրականության, մշակույթի և հասարակական-քաղաքական գործիչներ, Ֆ. Մամեդովան առաջնորդվում է լոկ այն սկզբունքով, որ նրանք ծնվել և իրենց հասարակական-քաղաքական ու գրական գործունեությունը ծավալել են այն աշխարհագրական վայրերում, որոնք պատմական իրականությանը հակառակ, անարդարացիորեն գտնվել են Ադրբեջանի կազմի մեջ: Նրա փույթն էլ չէ, որ այդ վայրերը անհամեմատ ուշ են դարձել այսօրվա Ադրբեջանի մասեր, իսկ այդ ստեղծագործությունները գրված են հին հայերենով՝ գրաբարով: Ավագ կեղծարարի՝ Զ. Բունիյաթովի օրինակով նման հարցերի լուծման գործում ստեղծագործության լեզվին նշանակություն չտալով, նա պատրաստվել է նաև դրան և ընթերցողին է հրամցնում արդեն պատրաստի, բայց և կատարելապես անհեթեթ մի բացատրություն: «Պատմական ճակատագրի առանձնահատկության ուժով,-գրում է նա,-Աղվանից տեղական ծագման գրավոր հուշարձանները մեզ են ներկայացվել հին հայերեն լեզվով»[173], իրեն նեղություն չպատճառելով վեր հանել այդ «առանձնահատկությունները», քանի որ իրեն էլ է հայտնի, որ հնարովի պատճառաբանությունները չեն կարող հիմնավորվել:

---

169 Տե՛ս ստորև:

170 Կորյուն, գլ. ԺԶ:

171 Խորենացի, Գ, գլ. ԾԴ:

172 Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 6.

173 Նույն տեղում, էջ 5:

Նման ձևով յուրացվել և որպես Ավաղքի հասարակական-քաղաքական մտքի արդյունք են հրամցվում նաև Աղվենի ու Պարտավի ժողովների կանոնները:

Գրքում կարմիր թելի նման անցնում է մեծ Հայքի ստորադասման միտումը Աղվանքին, միտում, որ մինչև օրս չի նկատվել հայրենական ու արտասահմանյան ոչ մի պատմաբանի աշխատությունում: Նսեմացնելով Հայաստանի դերն ու նշանակությունը և նրան հակադրելով Աղվանքին, Ֆ. Մամեդովան պատմական սխալներով է ներկայացնում նաև Աղվանքի պատմությունը: Նրա կարծիքով, Աղվանքին գրեթե չեն առնչվել Հռոմի և Պարսկաստանի միջև ընթացող կռիվները[174], որ այն, ի տարբերություն Հայաստանի, որը փաստորեն դարձել էր Հռոմի պրովինցիաներից մեկը, պահպանել էր իր ինքնուրույնությունն ու, նույնիսկ, ավելի արտոնյալ վիճակում էր գտնվում[175]: Նա թաքցնում է Աղվանքի պատմության այնպիսի փաստեր, ինչպիսիք հռոմեական զորքերի մշտական գոյություն էր Աղվանքում, Աղվանքի թագավորական գահին հռոմեական դրածոների կարգումը և ուրիշ երևույթներ, որոնք նա դատապարտելի է համարում Հայաստանի համար: Բերված փաստերը կոծկվել են, որովհետև չեն հարմարվում Ֆ. Մամեդովայի այն կարծիքներին, ըստ որոնց Աղվանքը Հայաստանի ու Իբերիայի նման չէր նվաճվել հռոմայեցիների կողմից[176], որ այն իբր «առանց թագավորական իշխանության մնացել է ընդամենը 463-487 թթ.»[177] և այլն: Նա Աղվանքի համար պատկերում է այսպես կոչված «մաքուր», առանց ներգործությունների պատմություն,ուստի հայտարարում է. «Հայաստանի ու Աղվանքի իրավիճակի ուսումնասիրությունը համոզում է նրանում», որ «Մեծ Հայքը ինչպես քաղաքական, այնպես էլ աշխարհագրական հասկացությամբ ոչ մի ձևով կապված չէ Աղվանքի ճակատագրի հետ»[178]: Հարցին այսպես մոտենալով՝ նա մեղադրում է Կ. Վ. Տրևերին, թե վերջինս Աղվանքի պատմությանը նվիրված իր աշխատությունում «շատ է անհարկի ուշադրություն դարձնում Հայաստանի պատմությանը»[179]: Բայց սա պատմության ուսումնասիրության ըմբռնում չէ: Դա երկու հարևան երկրների պատմության իսկական խեղաթյուրում է, քանի որ Մեծ Հայքի ու Աղվանքի պատմությունը ընդհանուր շատ կողմեր ունեն, և վերջինիս պատմությունը առանց առաջինի չի կարող լիարժեք համարվել:

Աշխատությունում Ֆ. Մամեդովան անդրադառնում է նաև աղվանից եկեղեցու պատմության հարցերին և ամեն գնով փորձում այն ներկայացնել որպես առաքելական, հայոց եկեղեցուց անկախ ու նրանից առաջնային հոգևոր հիմնարկություն: Այդ նպատակով նա մինչև իսկ կրոնական ավանդություններն է դարձնում պատմական հարցերի լուծման հիմք, երբ այսօր դրանց չեն դիմում անգամ եկեղեցական գործիչները:

Գրքին կցված են քարտեզներ, որոնցում, ինչպես և պետք էր սպասել, Աղվանքը պատկերված է արհեստականորեն ընդարձակված մի հսկայական տարածության վրա, հարավ-արևմուտքում հազիվ չընդգրկելով ողջ Սևանա լիճը: Ավելին,

---

[174] Նույն տեղում, էջ 57:

[175] Նույն տեղում, էջ 59:

[176] Նույն տեղում, էջ 122-123 և հաջ:

[177] Նույն տեղում, էջ 57:

[178] Նույն տեղում, էջ 56:

[179] Նույն տեղում, էջ 63:

նրանցում ցույց են տրված նույնիսկ ազդեցության ոլորտներ, որ իբր ունեցել է Աղվանքը հյուսիսում մ.թ.ա. III-Iդդ. (քարտեզներ թիվ 1-2) և հարավում՝ մ.թ. I-II դդ. (քարտեզ թիվ 3): Ընդսմին, քարտեզներում շատ աշխարհագրական վայրեր ներկայացված են ոչ թե իրենց պատմական, այլ անհամեմատ ավելի ուշ, երբեմն էլ պատմության շատ կարճ ժամանակահատվածում գործածված թյուրքական անվանումներով: Այսպես, Սևանա լիճը, որ հնում կոչվում էր Գեղամա լիճ կամ Գեղարքունյաց ծով, քարտեզներում անվանված է Գյոկչա, Լոփնաս գետը՝ Աղստաֆաչայ, Տուս գետը՝ Թոուզչայ, Գետառուն՝ Աղրիչայ, Սեբոջ գետը՝ Կարասու, Որոտանը՝ Բարգյուշատ և այլն:

Ֆ. Մամեդովան իրեն է համարում «խոստակ», «ավագ», «կրտսեր», «սպարապետ», «ռամիկ», «շինական», «աղախին» և այլ նմանօրինակ շատ սոցիալական տերմինների ստուգաբանությունների առաջին հեղինակը: Նա փաստորեն կողոպտում է հայ նշանավոր պատմաբաններ Հ. Մանանդյանին, Ն. Ադոնցին, Ս. Երեմյանին, Ս. Հակոբյանին, Թ. Ավդալբեգյանին և ուրիշների, որոնք վաղուց են քննության նյութ դարձրել նշված տերմինները և տվել նրանց համապատասխան ու հանգամանալից մեկնաբանությունները[180]: Այսպիսով, ինքը լինելով գիտական անբարեխղճության օրինակ, դեռ վիրավորվածի կեցվածք ընդունելով մեղադրում է ուրիշ ուսումնասիրողների, դրանք իբր իրենից արտագրելու համար:

Աշխատությունը լի է հակապատմական ու հակագիտական ուրիշ շատ այլ դրույթներով, մասնավորապես Աղվանքում մ.թ. I դարում Արշակունյաց հարստություն լինելու, Նախիջևանն ու, ընդհանրապես, Սյունիքը աղվանական մարզեր և աղվանական ցեղերի բնակության հիմնական վայրերից մեկը հանդիսանալու, դրանք իրենց հայ բնակիչներից զրկելու, ուտիներին, գարդմանացիներին, ծավդեացիներին աղվանական ցեղեր կարծելու, այունյաց և արցախյան առանձին լեզուներ գոյություն ունենալու և ուրիշ շատ այլ նման սխալ թեզերով: Դրանց մի մասը քննության կառնվի շարադրանքի ընթացքում, մի ստվար մասն էլ իր արժանի գնահատականն է ստացել հայ պատմագրության մեջ[181]:

Ըստ գրքի վերջաբանի, աշխատությունը Աղվանքի պատմության հարցերի

[180] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երկեր, հ. Դ, Երևան, 1981, էջ 187-436: Նույնի՝ Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում, Նույն տեղում, էջ 11-12, Թ. Ավդալբեգյան, Հաս, սակ, բաժ, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 362-413, Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. Ա, Երևան, 1957, հ. Բ, Երևան, 1969, Նույնի՝ Ծառա-աղախին-ստրուկները և նրանց սոցիալական դրությունը միջնադարյան Հայաստանում, ՊԲՀ, 1962, թիվ 1, էջ 124-138, Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971; Еремян С. Т. Основные черты общественного строя Армении в эллистическую эпоху, ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1948, N 11, էջ 33-73, Նույնի՝ О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, N 1, с. 12-26; Նույնի՝ Опыт периодизации истории Армении феодальной эпохи, ВИ, 1951, N7, էջ 52-73, Նույնի՝ Экономика и социальный строй Албании III-VIIвв. Очерки истории СССР III-IXвв., с. 303-310.

[181] Б. Арутюнян, Когда отсутствует научная добросовестность, Լրաբեր հաս. գիտ., 1987, N 7, էջ 33-56, А. А. Акопян, П. М. Мурадян, К. Н. Юзбашян, К изучению истории Кавказской Албании, ՊԲՀ, 1987, N3, էջ 166-189, Г. С. Свазян, Пример использования исторической науки в экспансивных целях, ԲԵՀ, N 2, էջ 46-56, А. В. Мушегян, Псевдоалбанская литература и ее апологеты, Լրաբեր հաս. գիտ., 1989, թիվ 3, էջ 16-33:

բազմակողմանի քննության փորձ է[182], բայց այն կարելի է հանգիստ խղճով սրբագրել «Աղվանքի պատմության հարցերի բազմակողմանի աղավաղումների փորձ»: Ըստ էության, ինչպես ասել ենք, աշխատությունում խտացված գույներով ի մի են բերվել մինչ Ֆ. Մամեդովան, այլ ուսումնասիրողների կողմից առաջ քաշված և որոշակի նպատակի ուղղված դրույթները: Իսկ այն նպատակամղված է նախկին Աղվանքի սահմանները Ադրբեջանի սահմաններին համապատասխանեցնելուն, աղվանացիներին այսօրվա ադրբեջանցիների նախնիներ հայտարարելուն և պատմական գիտության միջոցով ներկայումս Ադրբեջանի կազմում փաստացիորեն գտնվող նախկին հայկական մարզերի վարչական կացությանն հիմք տալուն և ողջ Սյունիքն իր պատմական սահմաններով Ադրբեջանի կազմում ներգրավելու համար հող նախապատրաստելուն: Դրանով էլ հենց աշխատությունը ուշադրություն է գրավել: Գրքի լույս ընծայման առթիվ, թերթերում և պարբերականներում տպագրվել են դրական գրախոսականներ[183], որոնք էլ վկայում են ադրբեջանական մտավորականության շրջաններում տիրող անառողջ տրամադրությունների մասին: Վերջիններիս արտահայտության բարձրակետն է Ի. Ալիևի գրախոսականներբողը[184], որտեղ նա, անթաքույց բավականությամբ ընդգծելով հայ պատմաբանների շուրջը Ֆ. Մամեդովայի ստեղծած անբարյացկամության մթնոլորտը և իր հերթին նրանց՝ սկսած Խորենացուց ու Բուզանդից և վերջացրած ժամանակակից պատմաբաններով (Ս. Երեմյան, Աս. Մնացականյան, Բ. Ուլուբաբյան, Ծ. Սմբատյան, Հ. Սվազյան) «պատմության կեղծարարներ» հայտարարելով, հրճվանքով բացականչում է, թե «Նրանք բոլորն էլ Ֆ. Մամեդովայից ստացել են իրենց վաստակի համեմատ» և, որ վերջինս իբր քարը-քարի վրա չի թողել այն միթխարի կեղծ կոնցեպցիայից, որ ստեղծել են հայ պատմաբանները և «գոհունակության մեծ զգացումներով»[185] իր համերաշխությունն է հայտնում գրքի հեղինակի հետ նրա հիմնական տեսակետներում, այսպիսով դառնալով այս հազվագյուտ ազգային եսամոլության ու սնապարծության արտահայտություն հորինվածքի հեղինակակիցը:

Ֆ. Մամեդովայի աշխատությունը իր առջև դրված խնդիրներով ու էությամբ հակագիտական է, պատմության ուսումնասիրության մեթոդաբանությանն անհարիր, ամբողջովին տոգորված է հայ և ադրբեջանցի ժողովուրդների միջև թշնամություն հրահրելու միտումով, ծառայում է մի խումբ կեղծ մտավորականների թշնամական դիտավորություններին, ուստի հանուն անաղարտ գիտության չպետք է տեղ գտնի գիտական աշխարհում:

Ուշագրավ, Անդրկովկասի պատմության ու պատմական աշխարհագրության ուսումնասիրության համար մեծարժեք աշխատություն է XVIII դարի աշխարհագետ ու պատմիչ Վախուշտի Բագրատիոնի «Վրաստանի աշխարհագրություն» երկը[186]:

[182] Ф. Мамедова, Политическая история ... Албании, с. 240

[183] ."Вышка", (Орган ЦК КП Азербайджана), 13 мая, 1986, N 111, : "Баку" (Орган ЦК КП Азербайджана и Бакинского горсовета), 15 Июля, 1986, N 163; "Молодежь Азербайджана" (Орган ЦК ЛКСМ Азербайджана), 20 сентября, 1986; Азербайчан муэллим", 6 августа, 1986; "Литературный Азербайджан", 1986, N 10.

[184] И. Алиев, Серьезный вклад в албанистику", Известия АН Аз ССР, 1986, N 4, с. 111-114.

[185] Նույն տեղում, էջ 113:

[186] Царевич Вахушти, География Грузии, Введение, перевод и пр. М. Г. Джанашвили, →

Բազմաթիվ այլ հարցերի հետ մեկտեղ, վրաց տարեգիրը հետաքրքիր քննություններ է կատարում նաև Աղվանքի պատմության ու պատմական աշխարհագրության հարցերի շուրջը: Նա փորձում է ստուգաբանել «Աղվանք-Ռանի» անվանումը, բայց հիմք ընդունելով ռուսերեն տառադարձությունը, բնականաբար հանգում է «Ռանի» բառի ոչ ճիշտ բացատրությանը, այն մեկնաբանելով որպես "ՐՈՎՐ", "ՐՈՎՐՑՖ" բառից առաջացած անվանում[187]: Վրաց հին պատմիչներից հետո Վախուշտի Բագրատիոնին ևս միանգամայն պարզորոշ տարբերում է Հերեթի և Ռանի երկրները, ընդ որում ոչ թե որպես միևնույն երկրի տարբեր մասեր, այլ առանձին երկրներ, նկարագրելով դրանք և ցույց տալով յուրաքանչյուրի սահմանները[188]: Աշխարհագետի այսպիսի մոտեցումը բացում է Անդրկովկասի պատմական աշխարհագրության կարևոր էջերից մեկը:

Աղվանքը ընկած լինելով Վրաց աշխարհի արևելքում՝ նրա անմիջական հարևանությանը, հետաքրքրություն է առաջացրել նաև ժամանակակից վրաց գիտնականների մոտ, որոնք Աղվանքի պատմության հետազոտությունը կատարել են ինչպես Վրաստանի ընդհանուր պատմության ուսումնասիրության հետ մեկտեղ[189], այնպես էլ առանձին հատուկ ուսումնասիրություններում[190]: Դրանցում շոշափվում են և՛ աշխարհագրական, և՛ քաղաքական, և՛ սոցիալ-տնտեսական ու էթնիկական բնույթի հարցեր, որոնց շուրջը անկախ ընդհանուր առմամբ վրացի ուսումնասիրողների բերած նպաստից, եղած զգալի անճշտությունները, ինչպես օրինակ, Հնարակերտի տեղադրման[191], Կամբեճանի՝ անդրկովկասյան երեք երկրների միջև բաժանված լինելու, Կուրի աջ ու ձախ կողմերում աղվանացիներ ու դրանով էլ նրանց մեկ աղվանական միասնական պետության մեջ տեսնելու[192] և ուրիշ խնդիրներում, խանգարում են ճիշտ պատկերացում ունենալ դրանց մասին և ակամա մղում սխալ մեկնաբանությունների:

Աղվանքի պատմության շատ հարցեր բարձրացվել են նաև եվրոպացի ուսումնասիրողների կողմից: Նրանց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Վիեննայի Մխիթարյանների միաբանության անդամ Ն. Ակինյանը: Նրա «Մովսես Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր պատմութիւն Աղուանից»[193] աշխատությունը հայ պատմիչի ու նրա «Պատմության» մանրակրկիտ, խորը գիտական վերլուծությունն է:

Ն. Ակինյանը քննության է ենթարկում «Պատմության» գրեթե ամեն մի գլուխը,

ЗКОИРГО, XXVII, вып. 5, Тифлис, 1904.

[187] Նույն տեղում, էջ 136:

[188] Նույն տեղում, էջ 31 . հաջ.:

[189] Г. А Меликишвили, К истории древней Грузии, Тбилиси, 1959.

[190] Д. Л. Мусхелишвили, Из исторической географии восточной Грузии, Тбилиси, 1982; Т. Папуашвили, Вопросы истории Эрети, Тбилиси, 1970 (на груз. яз.).

[191] Д. Л. Мусхелишвили, Из исторической географии ... Грузии, էջ 7: Նույնի՝ К вопросу о локализации Хунана (Хунаракерта), Археологические памятники феодальной Грузии, II, Тбилиси, 1975, с. 275-277.

[192] Г. А Меликишвили, К истории древней Грузии, էջ 123; Д. Л. Мусхелишвили, Из исторической географии ... Грузии, էջ 19; Т. Папуашвили, Вопросы истории Эрети, էջ, 11,

[193] Վիեննա, 1970:

փնտրում այդ գլխի աղբյուրները, վերլուծում, փորձում գտնել շարադրանքում եղած իրականն ու անիրականը: Նա անպայմանորեն կանգ է առնում Մ. Կաղանկատվացու մոտ հիշատակված յուրաքանչյուր պատմական անհատի, տրվող նյութի պատմականության վրա և որպես միակ հավաստի, պատմականորեն ճշմարիտ մաս համարում «Պատմության» Ա գրքի վերջին և Բ գրքի ԺԷ-ԽԳ գլուխներում նկարագրվող պատմական երևույթներն ու իրադարձությունները: Վերջիններիս համար ենթադրելով մի հեղինակ, նա մնացած շատ պատմական անձնավորություններ ու տեղի ունեցող անցքեր համարում է գրքի խմբագրի «խելապատակեն » հանած և ոչ ճշմարիտ:

Աղվանքի պատմական աշխարհագրության, քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմության ու էթնիկական կազմության խնդիրներն են իրենց աշխատություններում շոշափել այնպիսի նշանավոր գիտնականներ, ինչպիսիք են Վ. Թոմաշեկը, Յ. Մարկվարտը, Հ. Հյուբշմանը, Թ. Մոմզենը, Վ. Տուրը, Կ. Թումանովը[194]:

Աղվանքի պատմության տարբեր հարցերի անդրադարձել են նաև Բրիտանական, Խորհրդային պատմական, Հայկական Խորհրդային հանրագիտարանների առաջին հատորներում, « Դաղստանի պատմության » մեջ ու « Հայ ժողովրդի պատմության » ակադեմիական հրատարակության 1-2-րդ հատորներում:

[194] Tomaschek, Albania, Albanoc, PWK, Stuttgart, 1893, I, 1, էջ 1303-1306; J. Marquort, Eransahr nach der Geographie des Ps. Moses Xorena'ci, Berlin, 1901, H. Hübschmann, Die altarmenischen Ortsnamen Indogermanische Forschungen, bd. 16, 1904, Նույնի՝ հայերեն թարգմանությունը տես Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմ. Հ. Բ. Պիլէզիկճեան, Վիեննա, 1907), Т. Моммзен, История Рима, т. I-V, Մ., 1854-1856; Վ. Տուր, Ներոն կայսեր արևելյան քաղաքականությունը, թարգմ. Հ. Մեսրոպ Հապոզյան, Վիեննա, 1930, C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, Georgetown, 196302

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԱՂՎԱՆԻՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Ա. «Ալբանիա», «Աղվանք», «Առան» տեղանունները

« Ալբանիա » և « ալբանացիներ » տերմինները, որպես նշված երկրի ու այն բնակեցնող ցեղերի անվանումներ, առաջին անգամ պատմության մեջ մեզ են հասել Պոմպեոսի Կովկասյան արշավանքներից հետո՝ հանրահայտ Ստրաբոնի միջոցով: Բայց նա գործածելով «Ալբանիա» և «ալբանացիներ» անվանումները, չի բացատրում ո՛չ դրանց ծագումը, ո՛չ էլ նշանակությունը: Այդ անում են ավելի ուշ շրջանի անտիկ հեղինակները, որոնց պարզաբանումները, սակայն, կրում են առասպելների պատմական մեկնաբանությունների բնույթ և հիմնված են երկրի բնակիչների արտաքին հատկանիշների նկարագրական բացատրությունների վրա: Այսպիսի բացատրությունների հիմքում ընկած է «Ալբանիա» տեղանվան մեկնությունը լատինական «albus - սպիտակ» բառից, որ տրվել է նրա բնակչությանը իբր վերջինիս սպիտակահեր լինելու պատճառով և դա էլ պայմանավորել է երկրամասի «Ալբանիա» անվան ծագումը:

Մ. թ. I դարի պատմիչ Պլինիոս Ավագը, վկայակոչելով Իսիգոն Նիկեյացուն, գրում է, որ սա «պատմում է, թե Ալբանիայում ծնվում են գորշակապտավուն աչքերով մարդիկ, մանկությունից սպիտակահեր, գիշերները ավելի լավ տեսնող, քան ցերեկը»[1]: Հեռավոր Ալբանիայի մարդկանց այս հատկանիշների մասին է գրում նաև II դարի պատմիչ Ավլիոս Հելիոսը[2], իսկ IV դարի պատմիչ Հուլիոս Սոլինը նույն պատմությունն ուղեկցում է մեկնաբանություններով՝ գրելով. «(ալբանացիները-Հ. Ս.) բնականից ունենում են սպիտակ մազեր, մոխրագույն մազերը նրանք համարում են առանձնահատուկ նախանշան: Այսպիսով, մազերի գույնն է այս ժողովրդին տվել անվանում: Ալբանացիների բիբերը գորշ են, դրա համար էլ նրանք գիշերը ավելի լավ են տեսնում, քան ցերեկը»[3]:

Անտիկ հեղինակների կողմից «Ալբանիա» և «ալբանացիներ» զուգակցությանը տրված այս բացատրությունները միանգամայն ընդունելի են համարվել ուսումնասիրվող երկրի ու նրա բնակիչների պատմությանն անդրադարձած հետագա հեղինակների ու հետազոտողների կողմից: Ավելին, Ա. Բաքիխանովը, Ա. Յանովսկին և ուրիշներ ոչ միայն բառիս հիմքում տեսնում են լատիներեն նույն «albus - սպիտակ»[4] բառի արմատը՝ «albi» և «Albania» տեղանունը մեկնաբանում որպես «Սպիտակ երկիր», այլև երկրի անվանադիր են համարում հռոմեացիներին[5]: Բայց ահա Կ. Վ. Տահնազարյանը, Սեն-Մարտենը, Ի. Շոպենը, Ն. Մառը, Կ.Վ.

[1] Известия древних писателей..., т. II, СПб, 1904, с. 187.

[2] Նույն տեղում, էջ 264:

[3] К. Ган, Известия древних греческих и римских писателей о Кавказе, СМОМПК, вып. 4, Тифлис, 1884, с. 179.

[4] И. Х. Дворецкий, Латино-русский словарь, с. 54.

[5] Абас Кули-ага Бакиханов, Гюлистан-Ирам, с. 9; А. Яновский, О древней Кавказской Албании, с. 189.

Տրեվերը, «Բրիտանական հանրագիտարանի», «Դաղստանի պատմության ուրվագծերի» հեղինակները և այլք քննարկվող անվան արմատում նույն ձևով տեսնելով «alp», «alb» բառը, սակայն այն մեկնաբանելով կելտական «լեռ», «բարձր» իմաստով ու, համադրելով լեռնային մակերևույթ ունեցող և հնում նույնպես «Ալբանիա» կոչվող Շոտլանդիայի, Իտալիայի «Ալբանական» անվամբ հայտնի լեռների, Բալկանների արևմտյան մասում գտնվող նույնանուն «Ալբանիա» երկրի հետ, «Ալբանիա» տեղանունը բացատրել են որպես «լեռների երկիր»[6]:

Բ. Ուլուբաբյանը նույն կերպ մոտենալով հարցին և ցանկանալով ցույց տալ, որ, իրոք, կելտերը կարող էին լինել ուսումնասիրվող երկրի անվանադիրները, գտնում է, որ նրանք ինչ- որ ժամանակներում կատարած արշավանքների ընթացքում, հասել են Կովկաս և իրենց այդ բառը թողել մեզ հետաքրքրող երկրանվան արմատում: Ի հաստատումն այս կարծիքի, նա վկայակոչում է Կաղանկատվացուն և Եղիշեին:

Առաջինին՝ Հաբեթից սերված ժողովուրդների մասին հաղորդման համար («Եւ որդիք Յաբեթի՝ Գամեր, ի նմանէ Գամիրք, Մագոգ և ի նմանէ Կեղտք և Գաղատացիք»[7]) , որից իբր բխում է, թե կելտերը կովկասաբնակներ են, ուստի կարող էին իրենց լեզվական ազդեցությունը թողնել այնտեղ, և երկրորդին՝ հնդկական ցեղերից մեկին տրվող «խայլանդուրք» անվան հիշատակման համար, որ նրա կարծիքով, կելտական (՞ - Հ. Ս.) «highlander - լեռնաբնակ» նշանակությամբ բառն է և ընկած է երկրի «Ալբանիա» անվան հիմքում[8]: Սակայն սխալվում է Բ. Ուլուբաբյանը: Ո՛չ Կաղանկատվացու հաղորդումն է հավաստում, թե կելտերը կովկասաբնակներ են, ո՛չ էլ կարծեցյալ կելտական «highlander» բառն ու հոնական «խայլանդուրք» ցեղի անունն է նույնական, ուստի և ոչ այն հիմքերը, որոնց հետ կապվեր բառիս ծագումը: Եվ ընդհանրապես ճիշտ չէ կելտական «alp» , «alb» բառի և «albania» անվան սոսկ արտաքին նմանությամբ «Ալբանիա» անվան մեջ կելտական բառարմատ տեսնելը:

«Ալբանիա» անվան մի ուրիշ, բոլորովին այլ մեկնաբանություն է առաջարկում Յու. Բ. Յուսիֆովը: Ենթադրելով, որ նշված տեղանվան սկզբում պատմականորեն եղել է շնչեղ (հագագային) «Հ» հնչյունը, որի հետևանքով այն նախապես «hal» էթնիկական անվան և «ba» ու «n» վերջածանցների միացման հետևանքով հնչել է «halban» ձևով, նա ի վերջո անվան ծագումը կապում է «halb»-ի ցեղանվան հետ և մեզ հետաքրքրող տեղանունը մեկնաբանում որպես «hal»-երի երկիր[9]: Բայց սա ևս ձգձգված, հարմարեցված և ոչնչով չհիմնավորված միտք է և հարցի քննության

[6] Պատմութիւն Աղուանից... ի լոյս ընծայեաց... Կ. Վ. Շահնազարեան, էջ 42-43: История агван Мойсея Каганкатваци, писателя X века, пер. К. Патканян, СПб, 1861, с. 284; И. Шопен, Новые заметки ..., с. 374; The Encyclopedia Britannica, vol. I, New York, 1910, . 482, Ն. Մառ (վերջինիս կարծիքը բերում է Կ. Վ. Տրեվերը (տե՛ս նրա Очерки по истории ... Албании, с. 5) բայց առանց աշխատությունն ու տեղը ցույց տալու և հայտնում իր համակարծությունը նրա հետ (տե՛ս նույն տեղում): Նույնի՝ К вопросу о культуре Кавказской Албании, М.-Л., 1960, с. 1; Очерк истории Дагестана, т. 1, Махачкала, 1957, с. 23.

[7] Կաղանկատվացի, Ա, գլ. Բ:

[8] Բ. Ուլուբաբյան, «Ալբանիա», «Աղվանք» և «Առան» տեղանունները, ՊԲՀ, 1974, թիվ 3, էջ 115-126: Նրա՝ Դրվագներ ..., էջ 42-45:

[9] Ю. Б. Юсифов, О наименованиях "Албания" и "Аран", Известия АН АзССР, 1961, N 10, с. 28, Հմմտ. Н. Я. Марр, По поводу русского слова "сало" в древнеармянском описании хазарской трапезы VII в., Избранные работы, т. 5, М.-Л., 1935, с. 70, пр. 3.

մեջ պարզություն չի մտցնում:

Պատմագիտությանը հայտնի է, որ դեռևս հին հույներից սկսած, տեղական աշխարհագրական ու էթնիկական անվանումներին տրվել է դրսեկ ուժերի լեզուներին համապատասխան հնչողություն: Այդ պատճառով էլ, ինչպես իրավացիորեն նշում է Ն. Մառը, անտիկ հեղինակների միջոցով մեզ հասած ոչ հունա-հռոմեական, մանավանդ, կովկասյան,տեղանունները կրում են տեղական անվանումների տառադարձումը կամ թարգմանությունը[10]: Կ. Վ. Տրեվերն էլ մասնավորապես քննարկվող հարցի կապակցությամբ առարկելով այն ուսումնասիրողներին, ովքեր «Ալբանիա» անվան ստեղծողներ համարում են հռոմեացիներին, գրում է. «...հռոմեացիները տեղական անվանը կարող էին տալ միայն լատինական հնչողություն»[11]: Բացառված չէ, որ ներկա դեպքում էլ մենք գործ ունենք նման մի երևույթի հետ և հունա-հռոմեական «Albania» անվանումը լինի տեղական ծագմամբ անվան տառադարձումը: Կարծում ենք, այդպիսին հայերեն «Աղուանք» տեղանունն է, որի հետևությամբ ու հիմքի վրա էլ առաջացել է այն դ-լ, ու/վ/-բ սովորական հնչյունափոխությամբ, դառնալով նրա լատիներեն ճիշտ տառադարձումը:

Առաջանալով հայերեն «Աղուանք» անվանումից, հունա-հռոմեական «Albania» տեղանունը այդպես էլ արձանագրվելով գրավոր աղբյուրներում հասել է մեզ իր գործածության ոլորտով արտահայտելով այն աշխարհագրական տարածքը, որն ընկած էր Կուրից հյուսիս, մինչև Կովկասյան Գլխավոր լեռնաշղթան և Ալազան գետից մինչև Կասպից ծով:

«Albania» տերմինը, որպես նշված տարածքի աշխարհագրական անվանում, գործածական է մնում մինչև մ. թ. V դարը, որից հետո վերանում է: Այս երևույթը, բացի հռոմեական տիրապետության վախճանը Աղվանքում ցույց տալուց, ընդգծում է նաև այն վարչաքաղաքական փոփոխությունները, որոնք անիրական են դարձնում նախկին «Albania»-ji աշխարհագրական ընդգրկումները:

Հայերեն «Աղուանք» տեղանվան ստուգաբանությամբ առաջինն զբաղվել է Մովսես Խորենացին: Անվան հիմքում դնելով զուտ հայկական «աղու», «աղու» այսինքն՝ «դուրեկան», «քաղցր», «անոյշ», «համեղ» բառը, նա գտնում է, որ երկրամասն իր անվանումը՝ «Աղուանք», ստացել է այդ տարածքը ժառանգած Հայկ Նահապետի սերունդներից՝ Սիսակի մեղմ ու հաճելի, «աղու» բնավորության պատճառով: «զԳունդն որ ի Սիսակայ,-գրում է պատմահայրը,- որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն, որ ասի Հնարակերտ և յաշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք, զի աղու ձայնէին զնա»[12]: Նույնը կրկնում է և Մ. Կաղանկատվացին, բայց օգտվելով Խորենացու վկայակոչած հաղորդումից, սխալմամբ Առանին է վերագրում Սիսակի բնավորության գծերը և, հետևաբար, նրա հետ կապում «Աղուանք» տեղանվան ծագումը, առիթ տալով նրա իբր «Առան» երկրի անվանադիրն ու աղվանացիների նախահայրը լինելու մասին կանխակալ

[10] Н. Я. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (арабская версия), СПб, 1905, с. 165.
[11] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 4.
[12] Խորենացի, Բ, գլ. Ը:

եզրակացությունների: «Առան անուն,- գրում է նա,- որ ժառանգեաց զդաշտս և զլերինս Աղուանից՝ ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ: Եվ աշխարհն յաղագս քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք, զի աղու ձայնէին զնա վասն քաղցրութեան բարուցն»[13]:

Այնուհետև բառի ստուգաբանությամբ զբաղվել են ուսումնասիրողները, որոնց մեկնաբանությունները արմատապես տարբերվում են պատմիչների բացատրություններից: Ավելի շատ տարածված է այն կարծիքը, ըստ որի հայերեն «Աղուանք» անվանումը հունա-հռոմեական «Ալբանիա» անվան տարադարձումն է հայերենի օրենքներին համապատասխան, նրա հայացված ձևը[14]: Սակայն ճիշտ չէ նման բացատրությունը: Հայերեն «Աղուանք» անվանումը ծագել է հայկական միջավայրում, ինչպես սովորաբար առաջանում են աշխարհագրական անվանումները՝ կապված որևէ պատմական դեպքի, անձի, ժողովրդի կամ բնության առանձնահատկությունների հետ: Ուստի, կարծում ենք, որ ուսումնասիրվող երկիրը ևս իր անունը պետք է ստացած լիներ նման ճանապարհով՝ պայմանավորված տեղի աշխարհագրական առանձնահատկությամբ: Այս վերջին մտքին է մղում Խորենացու վերոհիշյալ հաղորդումը, ուր նա իրավացիորեն տեղանվան առաջացումը կապում է հայերեն «աղու», «ալու» բառի հետ, որպես Սիսակի «քաղցր», «հաճելի», «դուրեկան» բնավորության հետևանք: Մի կողմ թողնելով Խորենացու՝ աշխարհագրական անվանումների բացատրությունը որևէ ավանդական նախնու (այս դեպքում Սիսակի անվան) հետ կապելու սովորությունը, գտնում ենք, որ տեղանվան հիմքը կազմող «աղու» կամ «ալու» բառերը իրենց նշանակությամբ բնութագրում են երկիրն իր, իսկապես, բարենպաստ, մեղմ ու դուրեկան բնակլիմայական պայմաններով, որոնց մասին այդքան շատ են գրում անտիկ, հին հայկական ու արաբական աղբյուրները[15]: Հիմքում ունենալով «աղու» բառը, երկրանվան մյուս բաղադրիչը կլինի «անք» մասնիկը, որը, կարծում ենք, հայերենում հայտնի «եանք» («ե»-ի անկմամբ) հոգնակիակերտ վերջածանցն է և «աղու» բառի հետ կազմել է «Աղու+/ե/անք-Աղուանք» տեղանունը: «Եանք» («անք») վերջածանցի միջոցով բառերի կազմումը հազվադեպ երևույթ չէ հայերենում: Օրինակներ կարող են ծառայել «Սիսակ-եան-ք (Սիսականցիներ)», «Կադմ-եան-ք (Կադմեացիներ)», «Հայկազ-եան-ք (Հայկազեաններ-հայեր)», «Առան-եան-ք (Առանեաններ)», «լեռնոտն-եանք», «սարոստան-եան-ք կամ սարոտն-եան-ք (լեռների, սարերի փեշերին բնակվող մարդիկ)» և այլն: Ինչպես տեսնում ենք բերված օրինակներից, սույն վերջածանցը, ավելանալով բառի հիմքին, ցույց է տալիս մարդկանց պատկանելիությունը որևէ խմբի, տոհմի, բնակության վայրի կամ երկրի: Ուստի կարելի է եզրակացնել, որ «աղու-ե-անք» անունը նշանակում է «աղու երկրի մարդիկ», «հաճելի, դուրեկան բնություն ունեցող երկրի

---

[13] Կաղանկատվացի, Ա, գլ. Դ:

[14] К. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии, ЖМНП, 1875, ч. 179, с. 338; Ю. Б. Юсифов, О наименованиях "Албания" и "Аран", с. 26, 29. Բ. Ուլուբաբյան, Դրվագներ..., էջ 39: Ռուս հետազոտողներից Ի. Շոպենը հայերեն «Աղուանք» տեղանունը տառադարձելով ռուսերեն Агован -ի, ըստ այդմ էլ մեկնաբանում է բառս որպես «կրակի երկիր» (տե՛ս նրա Новые заметки, с. 370), որը հեռու է ճշմարտանման լինելուց, քանզի ստուգաբանության հիմքում ընկած է քննարկվող տեղանվան ռուսերեն տառադարձումը:

[15] Страбон, XI, IV, 2-3; Կաղանկատվացի, Ա, գլ.Ե,СМОМПК, вып. 29, с.17; вып. 38, с. 8, 92, 98:

բնակիչներ»: Ծագելով որպես մարդկանց որևէ խմբի բնակության վայրը ցույց տվող անվանում, այն, սակայն, աստիճանաբար ձեռք է բերում տեղանվան նշանակություն և իրենով սկսում է արտահայտել որոշակի աշխարհագրական տարածք, այն է՝ Աղվանից երկիրը: Ինչպես պարզվում է սույն մեկնաբանությունից, «Աղուանք» տեղանունը չունի էթնիկական ծագում:

Այստեղից էլ հետևում է, որ ոչ էթնիկական ծագում ունեցող հայերեն տեղանունից առաջացած հունա-հռոմեական «Ալբանիա» տեղանունը ևս չէր կարող էթնիկական ծագում ունենալ:

Այսպիսով, հայերեն «Աղուանք» տեղանունը ծագել է հայկական միջավայրում՝ կապված երկրի բնության առանձնահատկության հետ, հայերի միջոցով փոխանցվել հռոմեացիներին, իսկ նրանք էլ, անվանը տալով լատինական հնչողություն, այն շրջանառության մեջ են դրել «Ալբանիա» ձևով:

Հայերեն «Աղուանքը» միայն կոնկրետ պատմական իրադարձությունների առնչությամբ է արտահայտում այն աշխարհագրական քաղաքական միավորը, որը համապատասխանում էր հունա-հռոմեական «Ալբանիայի» տարածքին, իսկ ընդհանուր առմամբ և հիմնականում, գործածվել է ցույց տալու համար Հայոց արևելից կողմանց նահանգների տարածքը, որը հայ պատմիչների երկերում նշվում է «ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ»[16]:

«Առան» (Առ-ռան, Ալ-ռան, Ռանի) անվանումը վրացական, ասորական և արաբական աղբյուրներում հանդիպում է այն ժամանակ, երբ արդեն «Ալբանիա» և «Աղուանք» տեղանունները գործածության մեջ էին: Այս պայմաններում թվում էր, թե քննարկվող տեղանունը առաջացած պետք է լիներ հիշյալ անվանումների ազդեցությամբ և ունենար նույն նշանակությունը, ինչ որ նրանք: Սակայն ուսումնասիրություններից պարզվում է, որ այն ունի բոլորովին ուրիշ ծագում, հետևաբար և ուրիշ ստուգաբանություն:

Անվան ստուգաբանությամբ առաջինն զբաղվել է Ն. Մառը, այդ նպատակով դիմելով այժմյան դաղստանյան լեզուներին: Ըստ նրա, դաղստանյան ցեղերից մեկի՝ լաքերի լեզվում պահպանվել է «առ» բառը «դաշտավայր» նշանակությամբ, իսկ խնալուղների լեզվում խնդրո առարկա բառը նշանակում է «ջերմ», «տաք» և գործածվել է որպես «հարթավայր», «ձմեռային արոտավայր» հասկացությամբ[17]: «Առան» անվանը դաղստանյան ցեղերի լեզուներով նույն «ջերմ», «տաք» նաև «հարթավայր» նշանակությունն է վերագրում և Յ. Յուսիֆովը իր արդեն մեր կողմից վկայակոչված աշխատությունում[18]: Չնայած այս հարցում Յ.Յուսիֆովի դեմ եղած առարկումներին, «տաք» հասկացության հետ է կապում «Առան» անվանումը նաև Բ. Ուլուբաբյանը[19]:

Պարսից թագավոր Շապուհ Ա-ի (241-272 թթ.) եռալեզվյան հայտնի արձանագրությունը Քաաբե-ի - Զարդուշտ անվամբ շինության վրա, թվարկում է Սասանյաններին հպատակված Կովկասյան երկրները, որոնց շարքում հունարեն տեքստի «Ալբանիայի» փոխարեն պարթևական տարբերակում նշված է մի երկիր՝

---

[16] Խորենացի, Բ, գլ. Ը, Կաղանկատվացի, Ա, գլ. Դ:

[17] Ս. Տ. Երեմյան, Ն. Մառը և VII դարի հայոց «Աշխարհացոյցը», Մառը և հայագիտության հարցերը, Երևան, 1968, էջ 88-89:

[18] Ю. Б. Юсифов, О наименованиях "Албания" и "Аран", с. 25.

[19] Բ. Ուլուբաբյան, Դրվագներ..., էջ 52:

"I'-r'n" գրությամբ, որի մեջ ուսումնասիրողները հակված են տեսնելու «Առան» անունը[20]: Եթե դա իրոք այդպես է, ապա, կարծում ենք, գործ ունենք պահլավերեն մի բառի հետ, որը, հավանաբար, կունենա այլ ստուգաբանություն, քան տրվել է նրան մինչ այդ: Համենայն դեպս, հավանական է, որ թե՛ առաջին և թե՛ վերջին դեպքերում այն սկզբնական շրջանում ունենալով իմաստային նշանակություն, հետագայում վերածվել է աշխարհագրական անվան: Անվանումը պատմականորեն ծագել է Հայոց արևելից կողմերում և աշխարհագրական անվան վերածվելով՝ արտահայտել է հատկապես այդ կողմերը: Դրա ապացույցը հենց միայն Հայոց Ուտիք և Արցախ նահանգներում հանդիպող այն գավառների անուններն են, որոնց բաղադրիչներից մեկը «Առան» արմատն է: Ուտիքում դրանք են Առան-ռոտն ու Ուտի Առան-ձնակը, Արցախում՝ Մեծ Առան-քը[21]: Որ «Առան» անվանումը կարող էր ծագած լինել Հայոց արևելից կողմերում և արտահայտել հենց այդ կողմերը, ապացուցում է Առան նախնու մասին առասպելը, որի համաձայն նա կուսակալ է նշանակվում հենց այդ տարածքի վրա[22]:

Սույն քննության հիման վրա հավանական է կարծել, որ վրացական «Ռանի», ասորական ու արաբական «Առան», «Առ-ռան» կամ «Ալ-ռան» անվանումների հիմքը լինի տեղական «Առանը»:

## Բ. Աղվանքի քաղաքական սահմանները մ. թ. ա. I-մ. թ. V դարի կեսերին[23]

Աղվանից երկրի սահմանները միանգամայն պարզ ու որոշակի մատնանշել են հին աշխարհի երեք խոշորագույն աշխարհագետները՝ Ստրաբոնը, Պլինիոս Ավագը և Կլավդիոս Պտղոմեոսը, որոնց հաղորդումները լրացվում են ու հավաստվում ուրիշ անտիկ և հայ պատմիչների ու աշխարհագետների տեղեկություններով:

Ստրաբոնի հաղորդման համաձայն «ալբանացիները ... ապրում են իբերների ու Կասպից ծովի միջև, արևելքում նրանց երկիրը հասնում է ծովին, իսկ արևմուտքում՝ սահմանակցում իբերների հետ: Ինչ վերաբերվում է մյուս կողմերին, ապա հյուսիսայինը շրջապատված է Կովկասյան լեռներով (որովհետև այդ լեռները բարձրանում են հարթության վրա և կոչվում, հատկապես նրանց այն մասը, որ ծովին մոտ է, Կերաունյան լեռներ), իսկ վերջին կողմը կազմում է նրա հետ սահմանակցող Հայաստանը»[24]: Հայաստանը, ըստ Ստրաբոնի, սահմանակից էր Աղվանքի հետ մինչև այնտեղ, որտեղ «Կասպից ծով են թափվում Կուր և Արաքս գետերը»[25], այսինքն՝ նշված գետերի միասին Կասպից ծով թափման կետը:

Պլինիոս Ավագի հաղորդման համաձայն «Կուրից սկսած (դեպի հյուսիս-Հ. Ս.[26]) ողջ հարթությունը բնակեցնում է ալբանացիների ցեղը, ապա իբերների (ցեղը-Հ.Ս.),

[20] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 136.
[21] Աշխարհացոյց, էջ 33 (ընդգծ. Հ. Ս.):
[22] Խորենացի, Բ, գլ. Ը, Մանրամասն տե՛ս ստորև:
[23] Տե՛ս նաև Հ. Ս. Սվազյան, Աղվանքը սկզբնաղբյուրներում և պատմական գրականության մեջ, ԲՀԱ, 1989, թիվ 2:
[24] Страбон, XI, IV; 1:
[25] Նույն տեղում , XI, 1, 5.
[26] Հմմտ. С. Н. Муравьев, Заметки по исторической географии Закавказья. Плиний о населении Кавказа. ВДИ. 1988, N 1, с. 157.

որն առաջիններից բաժանվում է Կովկասյան լեռներից Կուր հոսող Օկազան (Ալազան-Հ. Ս.) գետով»[27]:

Աղվանքի համար նույնպիսի սահմաններ է մատնանշում նաև Կլավդիոս Պտղոմեոսը՝ գրելով. «Ալբանիան հյուսիսից սահմանակցվում է Սարմաթիայի նկարագրված մասի, արևմուտքից՝ Իբերիայի..., հարավից՝ Մեծ Հայքի Իբերիայի սահմաններից մինչև Հիրկանյան ծովը՝ դեպի Կուրի գետաբերանը ձգվող մասի հետ»[28]: Բացի Աղվանքի սահմանների մասին այս ընդհանուր հաղորդումներից, Նրանք ընթացս անդրադարձել են երկրամասի առանձին կողմերին ևս և, դարձյալ մատնանշելով նույն սահմանագծերը, հստակեցրել Աղվանքի ընդգրկած աշխարհագրական տարածքը: Տարբեր առիթներով Աղվանքի նույն սահմանները են նշում նաև Պլուտարքոսն ու Ապպիանոսը, Դիոն Կասսիոսն ու Ասինիոս Կվադրատոսը, Ստեփանոս Բուզանդացին և ուրիշներ:

Հունա-հռոմեական հեղինակներից հետո Աղվանքի սահմանների մասին խոսում են հայ պատմիչները: Նրանցից առաջինը Փավստոս Բուզանդն է, որ, պատմելով IV դարի պատմական անցքերի մասին, որպես Աղվանքի հարավային սահման ցույց է տալիս Կուր գետը[29]: Բայց Աղվանքի սահմանների մասին ավելի պարզ պատկերացում է տալիս VII դարի հայոց «Աշխարհացույցը», որն Աղվանքը ներկայացնում է մի երկիր՝ ընկած «ցելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչև ցհայոց սահմանն առ Կուր գետով»[30] կամ «Ջրուն աշխարհն Աղուանից, որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ և Կովկաս լերինն»[31]:

Աղվանքի աշխարհագրական սահմանների հարցի շուրջը ուսումնասիրողները մինչև օրս ընդհանուր եզրակացության չեն հանգել: Ընդ որում տարամիտումներ են դիտվում ոչ միայն սահմանային ընդգրկումների, այլև դրանց առաջացման ժամանակաշրջանի հարցերում: Առանձնապես սուր բախումներ է առաջացրել Աղվանքի հարավային սահմանի հարցը: Ստրաբոնից սկսած, այսինքն՝ մ.թ.ա. I դարից, աղբյուրները մինչև V դարն անընդմեջ, Աղվանքի հարավային սահման են համարում Կուր գետը: Կուրի, որպես Մեծ Հայքի ու Աղվանքի միջև սահմանի մասին նշում կա Ստրաբոնի ու Պլինիոսի արդեն իսկ վկայակոչած հաղորդումներում: Բացի դրանից, Ստրաբոնը այդպիսի միտք է արտահայտում նաև իր այլ տեղեկություններում: Օրինակ, խոսելով հայոց Ուտիք նահանգի Շակաշեն գավառի մասին, նա հայտնում է, որ այն սահմանակից է Աղվանքին, և նրանց միջև սահմանը Կուր գետն է: «(Արաքսի-Հ. Ս.) հարթությունից այն կողմ, - գրում է նա, - տարածված է նույնպես Ալբանիայի ու Կուր գետի հետ սահմանակցող Շակաշենը»[32]: Հայկական այս մարզի [33] ու Աղվանքի միջև Կուրը սահման ընդունելով, Ստրաբոնը փաստորեն գետը ճանաչում է սահման նաև Մեծ Հայքի և Աղվանքի միջև: Պլինիոս Ավագն էլ իր հերթին թվարկելով Կասպից ծովի արևմտյան ափը հյուսիսից հարավ բնակեցնող

---

27 Известия древних писателей..., т. II, с. 181.

28 Там же, т. I, с. 242.

29 Բուզանդ, Դպր. Գ, գլ. Է,դպր. Ե, գլ ԺԳ:

30 Աշխարհացոյց, էջ 28-29:

31 Նույն տեղում, էջ 29:

32 Страбон, XI, XIV, 4.

33 Որ հիշյալ մարզը հայկական էր և կազմում էր Հայաստանի մի մասը, մեկից ավելի անգամներ վկայում է նույն Ստրաբոնը (տե՛ս Страбон, II, I, 14; XI, VII, 2; XI, VIII, 4).

ցեղերին և գրելով, թե ալբանացիները «տեղաբաշխված լինելով Կովկասյան լեռներում, հասնում են, ինչպես ասվել է, մինչև Հայաստանի ու Իբերիայի սահմանը հանդիսացող Կուր գետը»[34], հաստատում է վերոհիշյալ իր այն միտքը, թե Աղվանքի հարավային սահմանը Կուր գետն է: Այդ մասին հաղորդում է նաև Կլավդիոս Պտղոմեոսը՝ գրելով. «Կուրը, հոսելով Իբերիայի ու Ալբանիայի երկարությամբ, նրանց բաժանում է Հայաստանից»[35], որ «Մեծ Հայքը հյուսիսից սահմանակցում է Կոլխիդայի մի մասի, Իբերիայի ու Ալբանիայի հետ վերոհիշյալ գծով, որ անցնում է Կուր գետով»[36] և , վերջապես, խոսում է «Եփրատ, Կուր և Արաքս գետերով շրջափակված»[37] հայկական մարզերի մասին:

Հայաստանի ու Աղվանքի միջև Կուրի, որպես սահմանային գետի մասին այս տեղեկությունները հիմնավորվում են նաև վերը թվարկած անտիկ հեղինակների տվյալներով, որոնցից մասնավորապես Պլուտարքոսի հաղորդումների համաձայն աղվանացիները 66-65 թթ. ձմռանը Պոմպեոսի վրա հարձակվելիս անցել են Կուր գետը [38]: Երկու անգամ նույն ձևով է վարվել, այսինքն՝ Կուր գետն է անցել և Պոմպեոսը՝ նրանց վրա հարձակվելու համար[39]: Ի դեպ, հենց Կուր գետն են ցցապատնեշներով փակել ալբանացիները՝ ցանկանալով խոչընդոտել հռոմեացիների մուտքը Աղվանք [40]: Դիոն Կասսիոսը հիշում է Կուրից հյուսիս ապրող ալբանացիներին [41], որ նշանակում է, թե գետը աղվանացիների հարավային սահմանն էր: Նույն միտքն է բխում նաև նրա մի ուրիշ հաղորդումից, ըստ որի Պոմպեոսը աղվանացիներին ջախջախում է Կուրի գետանցի մոտ և այլն[42]:

Այս կապակցությամբ Դիոն Կասսիոսը անում է մի հաղորդում ևս, որից հետևում է, որ աղվանացիների բուն երկիրը գտնվում էր Կուրի այն կողմում: Այսպես. պատմելով, որ իրենց հարձակմամբ աղվանացիները շարժել էին Պոմպեոսի զայրույթը, պատմիչը գրում է, որ հռոմեացի զորավարը թեև «բուռն կերպով ցանկանում էր ներխուժել <u>նրանց երկիրը</u> վրեժ լուծելու համար, բայց ձմեռվա պատճառով ուրախությամբ հետաձգեց պատերազմը»[43] և մնաց ձմեռելու «Անահիտական» կոչվող երկրում: Իսկ քանի որ, նույն պատմիչի վկայությամբ վերջինս, Հայաստանում էր[44], ապա աղվանացիների երկիրը գտնվելու էր նրա սահմաններից դուրս, այսինքն՝ Կուրից այն կողմ: Վերջապես, Ստ. Բյուզանդացին էլ վկայակոչելով Ասինիոս Կվադրատոսին, Կուրի աջ ափը դիտում է որպես Հայաստանի զգալի մասը կազմող օվարեններին և ուտիների բնակության վայր[45]: Հիշենք, որ Փավստոս Բուզանդի վկայությամբ ևս Կուրը Հայաստանի հյուսիսային սահմանն էր ամբողջ IV դարում և դրանից էլ առաջ:

Պատմելով IV դարի 30-ական թթ. Մասքթաց թագավոր հորջորջվող Սանեսանի

[34] Известия древних писателей ..., т.II, с. 184.
[35] Նույն տեղում, հ. I, էջ 242:
[36] Նույն տեղում, էջ 243:
[37] Նույն տեղում, էջ 244:
[38] Плутарх, Помпей , XXXIV.
[39] Նույն տեղում, XXXV.
[40] Նույն տեղում:
[41] Դիոն Կասսիոս, XXXVI, 54, 51:
[42] Նույն տեղում, XXXVI, 54, 5:
[43] Նույն տեղում (ընդգծ. Հ. Ս.):
[44] Նույն տեղում, XXXVI, 48, 1:
[45] Известия древних писателей ..., т. I, с. 270-271.

գլխավորությամբ հյուսիսային վաչկատուն ցեղերի Հայաստան արշավելու մասին, պատմիչը հայտնում է որ նրանք, անցնելով Կուր գետը, անմիջապես հայտնվում են Հայաստանում: «Եկն անց ընտ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր,- գրում է Բուզանդը Սանեսանի մասին,-և եկն տարածեցաւ ելից զերկիրն հայոց աշխարհին»[46]: Մի ուրիշ դեպքում՝ արդեն նույն դարի 60-70-ական թթ. հայ-պարսկական կռիվների հետժամանակվա շրջանի կապակցությամբ նա գրում է, որ հայոց զորքերի սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը պատերազմում է այդ կռիվներում որպես Սասանյան Պարսկաստանի դաշնակից հանդես եկող Աղվանքի դեմ, ետ գրավում վերջինիս Հայաստանից նվաճած մի քանի գավառներ «եւ զԿուր գետ, որպէս և յառաջն լեալ էր ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին»[47]:

«Աշխարհացույցը» էլ, ինչպես տեսանք վերևում, սահմանների մասին իր հաղորդմամբ հաստատում է, որ, իրոք, Մեծ Հայքի ու Աղվանքի միջև սահմանն անցել է Կուր գետով[48]:

Այսպիսով, մ.թ.ա. I - մ.թ. V դարերի անտիկ և հայ պատմիչների ու աշխարհագետների հաղորդումները աներկբայորեն բերում են այն համոզման, որ այդ ամբողջ ժամանակաշրջանում Աղվանքի հարավային սահմանը եղել է Կուր գետը: Դա ընդունում են շատ ուսումնասիրողներ՝ Ա. Յանովսկին, Ս. Յուշկովը, Ս.Տ. Երեմյանը, Աս. Մնացականյանը, Բ. Ուլուբաբյանը, Ա. Նովոսելցևը, Թոմաշեկը, Ա. Հակոբյանը և ուրիշներ [49]: Կ.Վ. Տրեվերը գտնում է, որ Կուրը Հայոց և Աղվանից միջև սահմանային գետ էր մ.թ.ա. II դարից[50], Ք. Ալիևը՝ մ.թ. II դարից[51]: Ըստ վերջինիս, մինչ այդ Աղվանքի հարավային սահմանն անցնում էր Արաքս գետով[52]: Բոլոր ժամանակների համար Արաքսը Աղվանքի հարավային սահման է համարում Ֆ. Մամեդովան: Ավելին, աղբյուրների հաղորդումները առանց որևէ հիմքի, «հետադարձորեն» տարածելով մ.թ.ա. III դարի վրա, նա գտնում է, որ Աղվանքը ոչ միայն դեռևս նշված դարից (երբ այն իր պետականությունը նույնիսկ չուներ- Հ.Ս.) պարփակված էր Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայի, Իորի ու Ալազան գետերի վերին հոսանքների, Դերբենդի ու Արաքս գետի միջև ընկած տարածքում, այլև, որ ավելի զավեշտական է, քան հակագիտական, իր ազդեցության ոլորտները ուներ հյուսիսում, մինչև Սուլակ գետը և ավելի հեռու[53]:

Մեծ Հայքի ու Աղվանքի միջև մ.թ.ա. II դարում Կուրը սահման համարելով, Կ.Վ. Տրեվերը այն կապում է Մեծ Հայքի «զավթողական» քաղաքականության հետ: Նրա կարծիքով դեռևս մ.թ.ա. II դարի սկզբներին Արտաշես Ա հայոց

[46] Բուզանդ, Գ, գլ. է:
[47] Նույն տեղում, Ե, գլ. ԺԳ (ընդգծ. Հ. Ս.):
[48] Տես՝ վերը, էջ 87, ծանոթ. 30-31:
[49] А. Яновский , О древней Кавказской Албании, с. 97; С.В. Юшков, К вопросу о границах древней Албании, с. 132, 133; С. Т. Еремян, Атлас к книге История армянского народа ; Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 21-42; Б. Улубабян, О границах древнего Агванка, ԲԵՀ, 1979, N I, с. 113-114; А. П. Новосельцев, К вопросу о политической границе Армении и Кавказской Албании, с. 10-18; Tomaschek, Albania, Albanai; с. 1303; А.А. Акопян, Албания-Алуанк..., с. 21-27.
[50] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 58.
[51] К. Алиев, Кавказская Албания..., с. 122.
[52] Նույն տեղում, էջ 90, 122 և հաջ.
[53] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 144 и карта N I.

թագավորը (189-160թթ.) իբր Աղվանքից խլել է նրա կազմի մեջ մտնող Շակաշեն գավառը, Ուտիք, Արցախ ու Փայտակարան նահանգները և Կուրը դարձրել սահման Մեծ Հայքի ու Աղվանքի միջև և անտիկ հեղինակների հաղորդումները՝ Կուրի որպես երկու երկրների միջև սահմանի, որպես թե վերաբերվում են այդ ժամանակներին[54]: Նրա կարծիքով, այդ «բռնագրավված» մարզերը մինչև մ.թ. IV դարը մնացել են Հայոց կազմում և միայն դրանից հետո միավորվել Աղվանքի հետ[55]: Իր ասածները ապացուցելու համար Կ.Վ. Տրեվերը վկայակոչում է Ստրաբոնի հայտնի հաղորդումը շրջակա երկրներից Արտաշեսի կատարած նվաճումների մասին[56]: Բայց առնվազն հակագիտական է նրա կողմից վկայակոչել մի հաղորդում, ուր նման եզրակացության համար ոչ մի հիմք չկա: Ստրաբոնը հականե հանվանե թվարկելով «նվաճման» ենթարկված երկրամասերը և այն երկրները, որոնցից կատարվել են «դրանք», չի տալիս ո՛չ Աղվանքի և ո՛չ էլ Կ.Վ. Տրեվերի նշած նահանգների անունները[57]: Այնպես որ Ստրաբոնի տեղեկությունը այն հիմքը չէ, որի վրա հենվում է նա:

Ի դեպ, իր եզրակացությամբ Կ.Վ. Տրեվերը թույլ է տալիս նաև պատմական մեկ ուրիշ սխալ: Նրա նշած ժամանակաշրջանում՝ մ.թ.ա. II դարում, Աղվանքը դեռ ձևավորված պետական-քաղաքական կազմավորում չէր և, բնականաբար, Արտաշեսը չէր կարող անորոշ աշխարհագրական տարածքից որոշակի երկրամասեր խլել: Այս հանգամանքի անտեսումը հակապատմական է և սխալ, ուստի առանց դժվարության ժխտվում է մատենագիտական տվյալներով ու, առաջին հերթին, Երվանդ-Արտաշեսյան զրույցով, որ վերապատմում է Խորենացին: «Լուր հասանէ առ Երուանդ յՈւտէացւոց գաւառին,- գրում է պատմահայրը,- եթէ գումարեաց արքայն Պարսից զօրս բազումս ի ձեռն Սմբատայ, զի ի վերայ քո խաղացեալ ածցէ զմանուկն Արտաշէս ի թագաւորութիւն իւր»[58]: Արդեն իսկ այն հանգամանքը, որ, ըստ զրույցի, հայկական տարբեր հարստությունների ներկայացուցիչներ իրենց դինաստիական վեճը լուծում էին Ուտիքում, վկայում է, որ այն, առավել ևս նրանից հարավ ընկած Արցախը Հայոց երկրի մարզերից էր, որ վեճի առարկա գավառները Արտաշեսից էլ առաջ կազմում էին Երվանդյան Հայաստանի անբաժանելի մասերը[59]:

Աղբյուրների հաղորդումների կեղծումներով, հավելումներով կամ կամային մեկնաբանություններով են պարուրված՝ Կուրը միայն մ.թ. II դարում Հայոց և Աղվանից միջև սահման լինելու մասին Ք. Ալիևի «հայտնագործությունը»: Օրինակ, Ստրաբոնի այն հաղորդումը, թե «Արաքսը հոսում է մինչև Ալբանիայի սահմանները»[60], որից պարզորոշ երևում է, որ Արաքսը չէ Աղվանքի սահմանը, այլ իր հոսանքով սոսկ հասնում է մինչև նրա սահմանները, նա վերափոխելով գրում է. «Արաքսը հոսում-մտնում է Ալբանիայի սահմանները[61], ցանկանալով այնպիսի տպավորություն ստեղծել, թե Ստրաբոնը Արաքսը համարում է Աղվանքի

[54] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 58.
[55] Նույն տեղում, ծանոթ. 8:
[56] Նույն տեղում, էջ 58:
[57] Страбон, XI, XIV, 15.
[58] Խորենացի, Բ, գլ. ԽԴ:
[59] Տե՛ս նաև ստորև:
[60] Страбон, XI, XIV, 4.
[61] К. Алиев, Кавказская Албания..., с. 114

տարածքով հոսող գետ: Այնուամենայնիվ, աղբյուրների հաղորդումների ճնշման տակ նա հարկադրված ընդունում է, որ Կուրը սահման էր Մեծ Հայքի և Աղվանքի միջև, բայց խուսանավելով արժանահավատ հաղորդումներից, հայտարարում է, թե Կուրը Աղվանքի սահմանն էր միայն մ.թ. II դարում[62]: Նրա կարծիքով, այլ ժամանակներում Կուրը սահման ճանաչելու համար «մեղավոր» են անտիկ հեղինակների հաղորդումների ոչ ճիշտ թարգմանությունները և գյուտ արածի խանդավառությամբ ձեռնամուխ է լինում դրանցում «սխալներ» ի հայտ բերելու և «ուղղելու» գործին: Առաջինը հարվածի տակ է ընկնում Վ.Վ. Լատիշևի թարգմանությունը: Ք. Ալիևի կարծիքով, նրա թարգմանությամբ Պլինիոսի վկայությունը՝ «Կուրից սկսած ողջ հարթությունը բնակեցրել են ալբանական ցեղերը», կտրված է ենթատեքստից և պատրանք է ստեղծում, թե իբր աղվանացիները բնակվել են Կուրից սկսած, մինչդեռ, ինչպես գտնում է նա, պատմիչի հաղորդումը իր ենթատեքստով ցույց է տալիս, որ «ալբանական ու իբերական ցեղերը բնակվում էին ընդհուպ մինչև Կուրի ողջ հարթությունը»[63], որն ասել է, թե աղվանացիները բնակվել են Կուր գետի աջ ու ձախ կողմերում: Այսպիսի «ուղղումներով» ապահովագրվելով, նա արդեն հայտարարում է. «Ստրաբոնի, Պլինիոսի ու Պտղոմեոսի տվյալները վկայում են, որ Կովկասյան Ալբանիայի տարածքը բաժանվում էր երկու մասի, Կուրից հյուսիս ընկած մարզերի ու Կուրից հարավ գտնվող և <u>մինչև այդ</u>[64] Ալբանիայի կազմի մեջ մտնող մարզերի»[65]: Բայց նշված աշխատության ալիևյան թարգմանությունները խիստ կամայական են, իսկ եզրակացությունները՝ կանխակալ, քանի որ դրանք հակասում են հեղինակի հաղորդումների ոգուն, մի էական հատկանիշ, որ պահպանվել է թե՛ Վ.Վ. Լատիշևի, թե՛ բնագրի հետ ուղեկցվող անգլերեն և թե՛ այլ թարգմանություններում[66]: Այնպես որ, սխալներ փնտրելով այնտեղ, որտեղ այդպիսիք չկան, ինքը՝ Ք. Ալիևն է ընկնում թյուրիմացությունների մեջ:

Աղբյուրների հաղորդումներին նման ձևով է մոտենում նաև Ֆ. Մամեդովան: Մի կողմ թողնելով անտիկ (Պտղոմեոս, Պոմպոնիոս Մելա, Պլինիոս) ու հայ հեղինակների (Խորենացի) բազմաթիվ հաղորդումներն այն մասին, որ Արաքսը

---

[62] Նույն տեղում, էջ 122:

[63] Նույն տեղում, էջ 88:

[64] Ընդգծված արտահայտությամբ Ք. Ալիևը խառնաշփոթություն է մտցնում և հակասության մեջ ընկնում ինքն իր հետ: Եթե նա կարծում է, թե Կուրը սահման է դարձել միայն մ. թ. II դարում և եթե նշված արտահայտությամբ նա հասկանում է, թե Կուրից հարավ ընկած մարզերը մինչև այդ դարն էին գտնվում Աղվանքի կազմում, ապա նա չպետք է շահարկեր Ստրաբոնի ու Պլինիոսի անունները, որպես այդ միտքը հաստատող հեղինակների, քանի որ մ. թ. ա. I- մ. թ. I դարերում ապրած ու ստեղծագործած այդ հեղինակները չէին կարող կանխագուշակելով իրենցից մեկ-երկու դար հետո առաջացած իրադրության համար վկայություններ թողնել: Իսկ եթե նա, այնուամենայնիվ նկատի ունի նրանց ապրած ժամանակները, ապա հիմք ընդունելով նրանցից վաղագույնի՝ մ. թ. ա. I- մ. թ. I դարերում ապրած Ստրաբոնի տեղեկությունները կամա թե ակամա ընդունելու էր այն փաստը, որ Կուրը մ. թ. ա. I դարում արդեն սահման էր Հայոց և Աղվանից միջև: Ընդունելով նման փաստի անառարկելիությունը, հարկ է հիշեցնել նրան նաև այն, որ մ. թ. ա. I դարից շուտ և ոչ մի մարզ չէր կարող լինել դեռևս չկազմավորված Աղվանից պետության կազմում:

[65] К. Алиев, Кавказская Албания..., с. 121. Նման թյուր կարծիքի է նաև վրացի պատմաբան Թ. Պապուաշվիլին՝ գրելով, թե Կուր գետով Աղվանքը բաժանվում էր երկու մասի՝ ձախափնյա և աջափնյա Աղվանքի: Т. Папуашвили, Вопросы истории Эрети, 5(на груз. яз.).

[66] Известия древних писателей..., т. II, с. 181; Pliny, Natural History (§All the plain from the Kur onward is occupied by the race of the Albania¦), VI, 11.

Հայաստանի գետերից է[67] և այդ պատճառով չէր կարող լինել Աղվանքի հարավային սահման, նա Կուրը սահման ցույց տվող անտիկ ու հայ հեղինակների հաղորդումները նախօրոք հռչակում է հակասական ու պատմականորեն անճիշտ: Հակասական է նա համարում, օրինակ, Ստրաբոնի այն հաղորդումները, որոնցում Շակաշենն ու Արաքսենեն հիշատակվում են որպես հայկական մարզեր, Բուզանդի տեղեկությունները, որ Կուրն էր Աղվանքի ու Մեծ Հայքի միջև եղած սահմանը՝ չափազանցված, իսկ նրա և Շիրակացու տվյալները Արցախի, Ուտիքի, Շակաշենի, Գարդմանաձորի ու Փայտակարանի մասին, որպես հայկական մարզերի՝ անհիմն[68]:

Ֆ. Մամեդովային սխալ են թվում Կուրի՝ որպես Աղվանքի հարավային սահմանի մասին նաև Ստրաբոնի, Պլուտարքոսի, Պլինիոս Ավագի, Ապպիանոսի ու Դիոն Կասսիոսի հաղորդումները: Նրա կարծիքով, Կուրը Հայաստանի և Աղվանքի միջև սահման է դիտվել նրա համար, որ նշված հեղինակների հաղորդումներին ուսումնասիրողները մոտեցել են անքննաբար, առանց նրանցում արժանահավատության վերհանման փորձի, այդ հարցերում «հայկական ավանդույթի»[69] առաջացման ու, մանավանդ, Կաղանկատվացու տեղեկությունների լրիվ անտեսման հետևանքով [70]: Նա ուղղակի պահանջում է չհավատալ անտիկ հեղինակներին, քանի որ, ըստ նրա «նրանց ինֆորմացիան կրում էր պատահական և հակասական բնույթ և միանգամայն ճիշտ լինել չէր կարող»[71] : Նա իր այս քմահաճ պահանջը պատճառաբանում է նրանով, որ այդ հեղինակների հաղորդումների հիմքում ընկած են Անդրկովկասի աշխարհագրությունը վատ իմացող Էրատոսթենեսի, Պատրոկլեսի ու Պոմպեոսի Կովկասյան արշավանքների մասնակիցների տեղեկությունները, մանավանդ վերջիններիս, «որոնց նպատակը պոնտական թագավորին հետապնդելն էր և ոչ թե Աղվանքի ուսումնասիրումը»[72] : Բայց մտացածին է Ֆ. Մամեդովայի մեղադրանքը ինչպես ուսումնասիրողների, այնպես էլ նշված հեղինակների հասցեին: Աղվանքի նկարագրության հիմքում ընկած են ոչ թե Էրատոսթենեսի, Պատրոկլեսի ու Պոմպեոսի արշավանքների պատահական ուղեկիցների տվյալները, այլ իրազեկ մարդկանց, հիմնականում արշավանքների մասնակից ու ականատես, ռազմական, քաղաքական ու պետական գործիչ Թեոփանես Միթիլենացու ռազմական օրագրերն ու հաշվետվությունները[73], որոնք պետական-պաշտոնական զեկուցագրեր էին, վավերագրական փաստաթղթեր: Որպես այդպիսիք դրանք անհրաժեշտ չափով հավաստի տեղեկություններ էին պարունակում ոչ միայն Աղվանքի սահմանների, այլև նրա սոցիալ- տնտեսական ու քաղաքական կյանքի մասին, քանի որ հռոմեական նվաճողներին նվաճվելիք երկրները ամենից առաջ հետաքրքրում էին հենց այդ տեսակետից:

---

[67] Страбон, XI, I, 5; IV, 2; XIV, 4, 6, 7; Известия древних писателей, ..., т. I, с. 244, т. II, с. 125, 181; Խորենացի, Բ, գլ. ԼԹ, ԽԹ:

[68] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 45-46, 53, 119, 124, 145-146.

[69] Ֆ. Մամեդովան «հայկական ավանդույթ» է անվանում Կուրը Աղվանքի հարավային սահման լինելու մասին գաղափարը, որն իբրև թե պատմական իրականության հակառակ պատմագրության մեջ մտցրել են հայ պատմաբանները:

[70] Ф. Мамедова, Политическая история ... Албании, с. 119.

[71] Նույն տեղում, էջ 120, 146:

[72] Նույն տեղում, էջ 120:

[73] Հ. Ս. Սվազյան, Ստրաբոնի աղբյուրները Աղվանքի մասին, էջ 95-104:

Տարված լինելով Ստրաբոնի (և մյուսների) հաղորդումներում հակասություններ գտնելու ցանկությամբ, Ֆ. Մամեդովան Ստրաբոնի բացասական վերաբերմունքը իր աղբյուրների ու, մասնավորապես, Պոսիդոնիոսի նկատմամբ[74], ներկայացնում է որպես նրա հաղորդումների հակասականությունն ընդգծող փաստ[75]: Բայց սա գիտական մոտեցում չէ: Ստրաբոնի այսպիսի վերաբերմունքը իր աղբյուրների հանդեպ բարեխիղճ ուսումնասիրողին հանգեցնելու էր միայն մեկ, գիտականորեն ճիշտ եզրակացության. Ստրաբոնն աղբյուրների հաղորդումներին մոտեցել է մանրախույզ ընտրությամբ ու քննադատորեն: Այսպես վարվելով ու անվստահություն հայտնելով դրանց մի մասի նկատմամբ, աշխարհագետը, սակայն, լայնորեն օգտվել է Թեոփանես Միթիլենացու տեղեկություններից[76], որոնք ոչ մի կերպ «պատահական ինֆորմացիա» չի կարելի համարել: Անտարակույս, նրա (և մյուսների) հաղորդումների հիմքում ընկած են վստահելի ու արժանահավատ աղբյուրների տվյալներ, որոնց համաձայն Աղվանքի հարավային սահմանն անցնում էր Կուր գետով:

Մերժելով անտիկ ու հայ հեղինակների հաղորդումների իսկությունը՝ Կուրի՝ Հայոց և Աղվանից միջև հարավային սահման լինելու մասին, Ֆ. Մամեդովան վկայակոչում է Մովսես Կաղանկատվացու ու Մովսես Խորենացու, որոնք լավ ծանոթ լինելով Անդրկովկասին, հարավում Աղվանքի սահման են մատնանշում Արաքս գետը: Դրա համար նա մատնանշում է նրանց այն տեղեկությունները, որոնցում խոսվում է հայոց Վաղարշակ թագավորի կողմից Առան նախնուն հյուսիսարևելյան մարզերում կուսակալ նշանակելու և նրան «ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ»[77] տարածք հատկացնելու մասին: Ոչ մի լուրջ հետազոտողի մոտ տարակուսանք չի առաջացրել և հիմա էլ չի առաջացնում, որ Խորենացու այս և նրան հետևող Կաղանկատվացու նմանատիպ հաղորդումը[78] վերաբերվում է Հայոց աշխարհում տեղի ունեցող վերափոխումներին ու նրա հյուսիսարևելքում հայկական մի նոր կուսակալություն հիմնելուն: Այն հանգամանքը, որ հայոց թագավորն էր նախարարություններ հիմնողը և այն էլ ըստ «զեզերբ հայկական խօսիցս»[79] կասկածի տեղ չի թողնում, որ Առանը կարող էր ժառանգած լինել ոչ հայկական տարածք: Բայց Ֆ. Մամեդովան (ինչպես և այլոք) ոչ միայն բերված հաղորդումներում տեսնում են Աղվանքի՝ Արաքսով անցնող հարավային սահմանի մասին վկայություն, այլև Առանին հայտարարում են աղվանացիների նախահայր[80]: Սակայն այս «նախահոր» իշխանությունը տարածվում էր բոլորովին էլ ոչ այն տարածքի վրա, որի արհեստական ընդարձակումը իր առաքելությունն է համարում Ֆ. Մամեդովան: Հարավում անցնելով Արաքս գետով, հյուսիս-արևմուտքում Հնարակերտ ամրոցով՝ Առանի տարածքը հյուսիսում, ինչպես վկայում է Խորենացին, եզերվում էր Կուր գետի ընթացքով. «մեծ և անուանի և բազմաբիւր

---

[74] Страбон, XI, I, 6.
[75] Ф. Мамедова, Политическая история ... Албании, с. 119.
[76] Հ. Ս. Սվազյան, Ստրաբոնի աղբյուրները Աղվանքի մասին, էջ 95-104:
[77] Խորենացի, Բ, գլ. Ը:
[78] Կաղանկատվացի, Ա, գլ. Դ:
[79] Խորենացի, Բ, գլ. Ը:
[80] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 46, 144 և հաջ. : Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 101, 104 և հաջ.:

զարնելից հիւսիսոյ կողմանն կարգէ (Վաղարշակ-Հ. Ս.) կողմնակալութիւն զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զ Առան առ մեծ գետովն, որ հատանէ զ դաշտն մեծ, որ անուանի Կուր»[81]: Ուրեմն, Առանի տիրույթները հյուսիսում վերջանում էին Կուր գետի ընթացքով, և դրանից այն կողմ նա իշխանություն չուներ: Այնտեղ տարածված էր նրա համար բոլորովին ուրիշ մի երկիր՝ բուն Աղվանքը:

Այսպիսով, բուն Աղվանքի տարածքը չէր, որ հարավում հասել էր մինչև Արաքս գետը, այլ Առանի տիրույթի, որ առաջինից սահմանազատվելով Կուր գետով, հիմք չի թողնում նրանց նույնացման համար: Առանի այդ տիրույթը, որ հայ պատմիչները «Աղուանք» են կոչում, ընդգրկում էր մի տարածք, որ հյուսիսից սահմանափակվում էր Կուր գետով, հարավ-արևելքից՝ Արաքս գետով, հարավ-արևմուտքից՝ Արցախյան, Սևանի ու Միափորի լեռներով, իսկ հյուսիս-արևմուտքից՝ Հնարակերտ ամրոցով, կազմելով մի եռանկյունի, որը ներառում էր հայոց եզերական Ուտիք և Արցախ նահանգները: Որ իսկապես Առանի տիրույթը հենց այդ հատվածն էր, ցույց է տալիս և այն, որ նույն պատմիչները նրանից սերված են համարում լոկ այնտեղ ապրող ցեղերին՝ ուտիացիներին, գարդմանացիներին, ծավդեացիներին ու գարգարացիներին: Ինչպես տեսնում ենք, հայ պատմիչների «Աղվանքը» իր աշխարհագրական սահմաններով բոլորովին չի համապատասխանում հունա-հռոմեական աղբյուրների ճանաչած Ալբանիային: Մ. Խորենացու և Մ. Կաղանկատվացու հաղորդումները Առան նախնու տիրույթների սահմանների մասին ոչ թե հիմք են բուն Աղվանքի հարավային սահմանը Արաքս հասցնելու համար, այլ միանգամայն անառարկելի ապացույցներ, որ նրա հարավային սահմանը միայն ու միայն Կուր գետն էր: Նույն դատողություններով էլ Առանը չէր կարող լինել Կուրից հյուսիս բնակվող աղվանական ցեղերի նախահայրը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ պատմական մի որոշ ժամանակահատվածում բուն Աղվանքի քաղաքական սահմանները հասել են մինչև Արաքս: Դա տեղի է ունեցել հետևյալ հանգամանքներում: Ինչպես պատմում է Բուզանդը, IV դարի 30-60-ական թթ. հայ-պարսկական կռիվների հետևանքով Հայաստանում առաջացած ծանր կացությունից օգտվելով, Աղվանքը, որը այդ կռիվներում Սասանյան Պարսկաստանի դաշնակիցն էր, հարձակվում է Հայաստանի վրա և նվաճում Ուտիքի Ուտի-Առանձնակ, Շակաշեն ու Գարդման գավառները: Համաձայն Բուզանդի նույն տեղեկության, Աղվանքը գրավել է նաև Կողթը, որն Արցախի գավառներից էր: Գրելով այս մասին և անվանապես թվարկելով Աղվանքի նվաճած գավառները, Բուզանդը դրանց թվում նշում է «և այլ (գաւառք-Հ.Ս.), որ շուրջն էին զնովաւ»[82], հիմք տալով ենթադրելու, որ Աղվանքը նվաճել էր նաև Հայոց հյուսիսարևելյան կողմանց ուրիշ գավառներ ևս: Այսպես, IV դարի 60-ական թթ. պատմության մեջ առաջին անգամ Աղվանից երկրի քաղաքական սահմանները հարավում անցնում են Կուր գետը: Սակայն այդպիսի տեղաշարժը այդ հատվածում երկար չի պահպանվում, և արդեն նույն դարի 70-ական թթ., պատերազմի ավարտից հետո, Մուշեղ Մամիկոնյանը կարողանում է ետ գրավել խլված գավառները, վերականգնել նախկին վիճակը և Կուրը, ինչպես

[81] Խորենացի, Բ, գլ. Ը (ընդգծ. Հ. Ս.):
[82] Բուզանդ, Ե, գլ. ԺԳ:

և Ճախկինում, դարձնել պետական-քաղաքական սահման այս երկու երկրների միջև: «Առնէր պատերազմ (Մուշեղը-Հ.Ս.) ընդ երկիրն Աղուանից, հարկանէր զնոսա ի հարուածս անհնարինս: Եւ թափեր ի նոցանէ բազում գաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն, զՈւտի, զՇակաշեն, և զձորն Գարդմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք: Եւ զԿուր գետ՝ որպէս յառաջն լեալ էր ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին»[83]: Այսպիսով, որքան էլ որոշ ուսումնասիրողներ խեղաթյուրեն պատմական փաստերը, աղավաղելով ու իրենց հարմարեցնելով փորձեն ցանկալին իրականության տեղ ներկայացնել, այնուամենայնիվ, աղբյուրների հաղորդումների ամենապարզ քննությունն իսկ բերում է այն հիմնավոր համոզման, որ Կուրն էր Աղվանքի հարավային սահմանը և, որ սահմանի իր այդ դերը, բացառությամբ նշված ժամանակահատվածի, գետը պահպանել էր Աղվանքի պետականության գոյության ամբողջ ընթացքում՝ մ. թ. ա. I դարից մինչև մ. թ. V դարի կեսերը:

Պակաս վեճերի տեղիք չի տվել Աղվանքի հյուսիսային սահմանի հարցը: Վերջինիս վերաբերող առաջին հաղորդումը դարձյալ պատկանում է Ստրաբոնին: Ըստ նրա Կովկաս լեռը «հարավից բաժանում էր Ալբանիան ու Իբերիան, իսկ հյուսիսից՝ սարմաթական հարթությունները»[84]: Այնուհետև Աղվանքի սահմանների ընդհանուր ցուցման մեջ նա մասնավորապես գրում է. «Ինչ վերաբերում է մնացած կողմերին, ապա հյուսիսայինը շրջափակված է Կովկասյան լեռներով (որովհետև այդ լեռները բարձրանում են հարթության վրա և կոչվում են, հատկապես նրանց այն մասը, որ ծովի մոտ է, Կերաունյան լեռներ)»[85]: Միաժամանակ աշխարհագետը շեշտում է, որ «Կովկասի ամենաբարձր մասերը նրա ամենահարավային մասերն են՝ Ալբանիայի ու Իբերիայի մոտ»[86]: Ստրաբոնի այս հաղորդումները լրացվում են նույն հարցի մասին այլ անտիկ ու հայ հեղինակների հաղորդումներով: Պլինիոս Ավագը գրում է. «Ալբանիայի ծովամերձ տարածքից վերև, այսինքն՝ հյուսիս, տարածվում են Սարմաթիայի հողերը»[87]: Պտղոմեոսն էլ, նկարագրելով Սարմաթիան, հայտնում է, որ վերջինիս հարավային սահմանը վերջանում էր Կոլխիդայի, Իբերիայի ու Ալբանիայի սահմանային գծի մոտ[88], իսկ արդեն Աղվանքի նկարագրության մեջ հաստատում իր ասածը՝ պնդելով, որ «Ալբանիան հյուսիսից սահմանակցվում է Սարմաթիայի նկարագրված մասի հետ»[89]:

Հայ պատմիչներից Աղվանքի և Սարմաթիայի հարևանության հարցին անդրադարձել է Ղազար Փարպեցին, նրանց միջև դնելով Կովկասյան լեռնանցքներից մեկը՝ «պահակ որմոյն, որ է ընդ մէջ իշխանութեանն Աղուանից և Հոնաց»[90]: Հիշենք, որ ըստ «Աշխարհացոյցի» էլ Աղվանքը գտնվում էր «յելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով»[91]: Հայ աշխարհագետը նշում է նաև Սարմաթիայի սահմանները՝ գրելով, որ այն տարածվել է «առ Կաւկաս լերինն՝

[83] Նույն տեղում:
[84] Страбон, XI, II, I.
[85] Նույն տեղում, XI, V, I.
[86] Նույն տեղում, XI, V, 6.
[87] Известия древних писателей..., т. II, с. 184.
[88] Նույն տեղում, հ. 1, էջ 237:
[89] Նույն տեղում, էջ 242:
[90] Փարպեցի, գլ. ԼԵ:
[91] Աշխարհացոյց, էջ 28:

առ Վրօք և Աղուանից, մինչև ցԿասբից ծովն, ի մուտս Սուանաս գետոյ»[92]:

Աղբյուրների այս հաղորդումներից ուսումնասիրողները եկել են ընդհանուր, բոլորի կողմից ընդունելի մի եզրակացության. Աղվանքը հյուսիսում սահմանակցվել է Սարմաթիայի հետ: Բայց թե ինչ սահմանագծով, կարծիքները տարամիտվում են: Հարցը քննելիս, ուսումնասիրողները, սովորաբար, որպես ելակետ ընդունում են Կովկասյան լեռնաշղթայի համակարգում գտնվող Կերաունյան լեռները, որոնց մասին, բացի Ստրաբոնից, խոսում են նաև Պոմպոնիոս Մելան և Պտղոմեոսը[93], ու Սոանա գետը, որտեղ, ըստ Պտղոմեոսի, վերջանում էր Աղվանքի սահմանը հյուսիսարևելքում[94], փորձում գտնել դրանց այժմյան համապատասխանությունները և ըստ այդմ էլ որոշում Աղվանքը Սարմաթիայից բաժանող սահմանագիծը: Այսպես, օրինակ, Սոանա գետը նույնացվելով այժմյան Թերեքի հետ, ուսումնասիրողներից ոմանք (Ս. Վ. Յուշկով, Վ. Ն. Լևիատով, «Ադրբեջանի պատմության» հեղինակներ և այլք) Աղվանքի սահմաններում են ընդգրկում ամբողջ Դաղստանը[95]: Ք. Ալիևը, Պտղոմեոսի հիշատակած Կերաունյան լեռները նույնացնելով Սամուրի լեռնաշղթայի, իսկ Սոանա գետը՝ Սամուր գետի հետ[96], Աղվանքի հյուսիսային սահմանը տանում մինչև Դերբենդ, ներառելով Դաղստանի զգալի մասը: Նա գրում է. «Համաձայն անտիկ հեղինակների, Կովկասյան Ալբանիայի հյուսիսային սահմանները հասել են մինչև Մեծ Կովկաս, Սամուրի լեռնաշղթայի հյուսիսային նախալեռները՝ արևմուտքում և Իորի ու Ալազան գետերի վերին հոսանքներից մինչև Սոանա գետի գետաբերանը կամ այժմյան Դերբենդը արևելքում»[97]:

Աղվանքի հյուսիսային սահմանի մասին, գրեթե բառացի, նույն կարծիքն է հայտնում նաև Ֆ. Մամեդովան[98], ավելացնելով. «Ժամանակ առ ժամանակ (Աղվանքի - Հ. Ս.) հյուսիսային սահմանը կարող էր հասած լինել մինչև Սուլակ գետ և ավելի հեռու»[99]:

Աղվանքի հյուսիսային սահմանը մինչև Դերբենդ ու Սուլակ գետ են հասցնում ժամանակակից ուրիշ ադրբեջանցի պատմաբաններ ևս[100]:

Հայ պատմաբաններից Աղվանքի հյուսիսային սահմանները մինչև Դերբենդ են հասցնում Մ. Բարխուդարյանը, Բ. Ուլուբաբյանը, Ա. Հակոբյանը[101]: Վերջինս հարցի լուծման համար առանցքային համարելով Տակիտոսի հաղորդումը, թե «ալբանական կոչված լեռների ու ծովի միջև, ամռանը ծովի ջրերը լցվելու պատճառով, անանցանելի լեռնանցք է առաջանում»[102], և դա ընդունելով որպես Դերբենդի լեռնանցքի մասին արված հաղորդում, փորձում է որոշակի

---

[92] Նույն տեղում, էջ 25:

[93] ВДИ, 1949, И1, с. 274. Известия древних писателей..., т. 1, с. 238.

[94] Известия древних писателей..., т. 1, с. 242.

[95] С. В. Юшков, К вопросу о границах древней Албании, с. 138, 148; В. Н. Левиатов, Азербайджан с V в. до н. л. по III в. н. л., с. 78; История Азербайджана, т. 1, с. 51.

[96] К. Алиев, Кавказская Албания..., с. 97, 100.

[97] Նույն տեղում, էջ 107-108:

[98] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 114, 144.

[99] Նույն տեղում, էջ 144:

[100] Р. Б. Геюшев, Христианство в Кавказской Албании, Баку, 1984, с. 3, Дж. А. Халилов, Материальная культура... Албании, с. 11.

[101] Մ. Բարխուդարյան, Աղվանից երկիր և դրացիք..., էջ 105, Б. Улубабян, О границах древнего Агванка, с. 114-118, 121; А. А. Акопян, Албания-Алуанк..., с. 35.

[102] Тацит, Анналы, VI, 33.

ճշգրտությամբ ցույց տալ այն սահմանագիծը, որն անցնում էր Աղվանքի ու Սարմաթիայի միջև: Ըստ նրա, այդ գիծը, սկսվելով Դերբենդի լեռնանցքից, որտեղ, իբր, խաչվում են Աղվանքի հյուսիսային ու արևելյան սահմանային ծայրակետերը, անցնում էր Զալգանյան լեռնաշղթայով, Ռուբաս և Ուլլուչայ գետերի ջրբաժան գծով մինչև Զուփուդաղ, ապա Ալախունդաղ և Դյուլթիդաղ գագաթներով հասնում մինչև Գուտոնի լեռնագագաթը՝ Գլխավոր Կովկասում ու շարունակվում վերջինիս գագաթներով մինչև վերջ[103]:

Սոանա գետը նույնացնելով այժմյան Սումգայիթի հետ, Աղվանքի հյուսիսային սահմանը մինչև այդ գետն է հասցնում Ա. Յանովսկին[104]: Նման նույնությունը հնարավոր է համարում նաև Ս. Մուրավյովը[105]:

Ստրաբոնի վերոբերյալ հաղորդումների համադրումից ոչ միայն պարզվում է, որ Աղվանքի հյուսիսային հարևանը Սարմաթիան է, այլև նրանց միջև սահման էր Կովկասյան լեռնաշղթայի այն ճյուղը, որը եղել է լեռնային զանգվածի ամենաբարձր և ամենահարավային մասը, գտնվել է ծովի մոտ և Ստրաբոնի կողմից անվանվել Կերաունյան: Կասպից ծովին հարող լեռները Կերաունյան է կոչում նաև Պոմպոնիոս Մելան[106]: Պտղոմեոսի հետևյալ հաղորդումից էլ է բխում այն միտքը, որ Աղվանքի համար հյուսիսային սահման կարող էր լինել Կովկասի՝ ծովին հարող հարավային ճյուղը. «Սարմաթիան կտրում են նաև այլ լեռներ, որոնք կոչվում են Հիպեյական ու Կերաունյան և Կորակ լեռը, որով ավարտվում են Կոլխիդայից ու Իբերիայից եկող և Կովկասյան կոչվող լեռները, ինչպես նաև նրանց այն ճյուղը, որը գնում է Հիրկանյան ծով և նույնպես կոչվում է Կովկաս»[107]: Դժվար չէ նկատել որ թվարկված լեռնաբազուկներից վերջինը՝ Կովկասը, ընդհանուր լեռնաշղթայի հարավային և Սարմաթիան կտրող-անցնող ծայրագույն այն ճյուղն է, որը միմյանցից բաժանում էր Սարմաթիան և Աղվանքը: Աղվանքի հյուսիսային սահմանի Կովկասյան լեռնաշղթայի հարավային ճյուղով անցնելը հավաստում է նաև Կովկասյան լեռնաշղթայի բազմաճյուղայնության ու նրա շուրջը ապրող ժողովուրդներին քաջատեղյակ «Աշխարհացույցի» հեղինակը, որ թերևս ավելի է պարզություն մտցնում խնդրո առարկա հարցում, քան նրա հույն նախորդները: «Կաւկաս բաժանի յերկուս բազուկս»,- գրում է նա և ավելացնում, որ նրանցից «մինն գնայ դէպ ուղիղ կոյս, յորում Ծրուան և Խսրուան ազգ՝ մինչև ցԽորսվէմ: Եւ միւս բազուկն արձակէ նախ վտակ մի զԱրմ գետ, որ (գնայ) դէպ ուղիղ ի հիւսիսի՝ յԱթլ գետ: Եւ ապա նոյն բազուկն գնայ զելիւք հիւսիսոյ, յորում բնակեալ էին Թաւասպարք, Հեճմատակք, Իժմախք, Փասխք, Փուսխք, Փիւբանակք, Բազկան»[108]: Եվ հյուսիս և՛ ուղիղ (որ առաջինի համեմատությամբ կլինի հարավային) գնացող այս լեռնաբազուկները և՛ նրանց շուրջն ապրող նշված ժողովուրդները «Աշխարհացույցում» հանդես են գալիս Սարմաթիայի նկարագրության բաժնում[109],

103 А. А. Акопян, Албания-Алуанк..., с. 35.
104 А. Яновский, О древней Кавказской Албании, с. 97.
105 С. Н. Муравьев, Птолемеева карта Кавказской Албании и уровень Каспия, ВДИ, 1983, N 1, с. 131.
106 ВДИ, 1949, N1, с. 274.
107 Известия древних писателей..., т. 1, с. 238.
108 Աշխարհացոյց, էջ 27:
109 Նույն տեղում, էջ 25-27:

այն Սարմաթիայի, որ, ինչպես հաղորդում են հունահռոմեական ու հայկական աղբյուրները, Աղվանքի հյուսիսային հարևանն էր և նրանից բաժանվում էր Կովկասյան լեռներով կամ, որ ավելի ճիշտ կլինի ասել, նրա լեռնաբազուկներից մեկով: Ուրեմն, ըստ «Աշխարհացոյցի» ևս Աղվանքի հյուսիսային սահմանը անցնում էր Կովկասի հարավային կամ «ուղիղ» գնացող լեռնաճյուղով, որի շուրջն ապրում էին Սարմաթիայի ամենահարավային բնակիչները՝ Ծիրվանի ու Խսրվանի ժողովուրդները:

Այսպիսով, ինչպես երևում է բերված վկայություններից, Աղվանքի հյուսիսային սահմանը կազմել է ոչ թե Կովկասյան լեռնաշղթայի ողջ զանգվածը, այլ նրա հարավային ճյուղը, որին Ստրաբոնն ու Պոմպոնիոս Մելան անվանում են Կերաունյան, իսկ Պտղոմեոսը՝ պարզապես Կովկաս: Հայ հեղինակի համար այդ ճյուղը Կովկասի «ուղիղ» գնացող բազուկն էր: Ամենայն հավանականությամբ այս լեռներն է հռոմեական պատմիչ Տակիտոսը կոչում «ալբանական»[110]: Ուրեմն, ճիշտ չեն Ք. Ալիևն ու նրան հետևողները, որոնք Ստրաբոնի ու Պտղոմեոսի հիշատակած Կերաունյան լեռները հայտարարում են նույնական և Աղվանքի հյուսիսային սահմանը որոշում ըստ Պտղոմեոսի Կերաունյան լեռների[111], որոնք իրոք ընկած են զգալիորեն դեպի հյուսիս: Իր աշխարհագրական դիրքով ու դերով Ստրաբոնի Կերաունյան լեռների հետ կարող էին նույնական լինել միայն Պտղոմեոսի «Կովկաս» կոչվող լեռները:

Աղվանքի հյուսիսային սահմանը, սակայն, չէր ընդհատվում հիշյալ ճյուղի վերջանալով: Պտղոմեոսի հաղորդումից պարզվում է, որ Աղվանքի արևելյան սահմանակետն էր Կասպից ծով թափվող Սոանա գետի գետաբերանը[112]: Դա հաստատում է նաև «Աշխարհացոյցի» հեղինակը՝ գետը կոչելով Սուանաս: Խոսելով Աղվանքի հարևան Սարմաթիայի հարավային սահմանի մասին, նա գրում է, որ այն ձգվում էր մինչև «զԿասբից ծովն, ի մուտս Սուանաս գետոյ»[113]: Դատելով նրանից, որ հույն հեղինակը ցույց է տալիս միմյանց հարևան երկրներից մեկի՝ Աղվանքի հյուսիսային, իսկ հայ հեղինակը՝ մյուս հարևանի՝ Սարմաթիայի հարավային սահմանակետը, կարելի է հաստատապես ասել, որ նրանք նկատի ունեն միևնույն սահմանային գետը, որից էլ բխում է այն միտքը, որ Սոանան և Սուանասը միևնույն գետի տարբեր հնչողություններն են: Նույն հաղորդումներից կարելի է եզրակացնել, որ Աղվանքի հյուսիսային սահմանը, Կովկասյան լեռնաշղթայի հարավային ճյուղի ընդհատվելուց հետո, շարունակվել է այդ ճյուղի մոտերքից սկիզբ առնող Սոանա գետի ընթացքով և ավարտվել նրա գետաբերանի մոտ, Կասպից ծովի արևմտյան ափին: Կասպից ծով թափվող այժմյան գետերից միայն Սումգայիթ գետն է, որ սկիզբ է առնում Կովկասյան լեռների հարավային ճյուղերից: Ուստի, ելնելով երկու գետերի միևնույն աշխարհագրական դիրքից, գտնում ենք, որ, իրոք, անտիկ հեղինակների հիշատակած Սոանա գետը այժմյան

---

110 Тацит, Анналы, VI, 33.

111 К. Алиев, Кавказская Албания..., с. 97.

112 Известия древних писателей..., т. 1, с. 242.

113 Աշխարհացոյց, էջ 25: Այս հաղորդմանը փակագծերում հաջորդում է «Սուանաս գետ չլսի ուրեք» արտահայտությունը: Ամենայն հավանականությամբ այն ավելացվել է հետագա գրիչների կողմից որպես բացատրություն, թե այն այլուր չի հիշատակվում, որն, իրոք, այդպես է:

Սումգայիթ գետն է[114], որն էլ կազմել է Աղվանքի հյուսիսային սահմանի շարունակությունը՝ Կերաունյան ճյուղից հետո[115]:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ նաև պատմագիտության մեջ տարածում գտած այնպիսի մի թյուր կարծիքի՝ ինչպիսին Մասքթաց և Աղվանից երկրների նույնացումն է կամ առաջինի ընդգրկումը վերջինիս կազմում: Այսպիսի սխալ մոտեցման հետևանքով է առաջացել այն կարծիքը, թե Աղվանքի հյուսիսային սահմանակետը Դերբենդն է, իսկ Մասքթաց երկրի կենտրոն Չողը՝ Աղվանքի մայրաքաղաքը: Որպես նման կարծիքի ժխտման միանգամայն համոզիչ փաստարկ, բավական է վկայակոչել «Աշխարհացոյցի» հաղորդումը, որտեղ Մասքթաց երկիրը տեղադրված է Ասիական Սարմաթիայի տարածքում, որպես նրա քառասունվեց ազգագավառներից մեկը, իսկ Սարմաթիան էլ, հայտնի է, Աղվանքից բոլորովին տարբեր մի երկրամաս էր: Շիրակացին գրում է. «Աշխարհ Ասիոյ՝ Սարմատացւոց հասարակն է... Եւ են ի Սարմատիոյ համարեալ... Խենաք, ապա Շիղպք, ապա Ճիղպք, ապա Փւիք: ... Ցրուան եւ Խսրուան ազգ՝ մինչև ցԽորսվէմ... Փասխք, Փուխք... Բաղանք, ուստի առնու *պարիսպն երկայն, որ կոչի Ապզուտկավատ...: Որոյ ըստ հիւսիսոյ՝ Մասքութան ազգն բնակեալ են,* ի Վարդանեան դաշտին, մինչև ցԿասբից ծովն, յոր բազուկն Կաւկասայ հոսի, յորմէ ածեալ է զպարիսպն Դարբանդայ»[116]: Մի ուրիշ տեղում էլ է «Աշխարհացոյցն» ընդգծում, որ Աղվանքն ու Մասքութքը միմյանցից տարբեր երկրներ են: Այնտեղ գրված է. «Երրորդ ծով՝ Վրկանին է, որ կոչի Կասբից... և սահմանէ յարևմտից Հայաւք և յարևմտից հիւսիսոյ՝ Աղուանիւք առ Կեսիոս գետով և Մասքթաւք»[117]: Ինչպես պարզորոշ երևում է այս հաղորդումից, Կասպից ծովի արևմտյան ափը հարող երկրներից Աղվանքը տարածված էր Մեծ Հայքից դեպի հյուսիս, մինչև Կեսիոսի (Սոռնա՞ - Հ. Ս.) գետաքերանը և, որ առանձնապես կարևոր է մեզ համար, մինչև Մասքթաց երկրամասը: Այլ խոսքով, Մասքթաց երկրից սկսած, Կասպից ծովին սահմանակից երկիրը այլևս Աղվանք չէր և ոչ մի կապ չուներ նրա հետ: Ավելին, ըստ «Աշխահացոյցի» հաղորդման, Մասքթաց երկիրը նույնիսկ ուներ իր ուրույն սահմանները, որոնցից հարավայինն անցնում էր Ապզուտկավատ կոչվող պարսպով, իսկ հյուսիսայինը՝ սխալմամբ Աղվանքի հյուսիսային սահման ճանաչված Դերբենդի պարսպով: Ուստի ճիշտ չէ նաև Չողը Աղվանքի մայրաքաղաք դիտելը, մանավանդ, երբ այսպիսի տրամաբանական եզրակացությունը իր հաստատումն է գտնում մատենագիտական ու հնագիտական տվյալներով, որոնց համաձայն ուսումնասիրվող ժամանակաշրջանում Աղվանքի մայրաքաղաք

---

[114] Պտղոմեոսի քարտեզները ուսումնասիրողներից Ս. Կովալևսկու կարծիքով Սումգայիթը պիտի լինի պտղոմեոսյան քարտեզում նշված «Ալբանուսը» (տե՛ս С. А. Ковалевский, "Карта Птолемея"..., с. 34.

[115] Գալով այսպիսի մտահանգման, կարելի է եզրակացնել, որ Ղ. Փարպեցու հիշատակած «պահակ որմոյնը» ոչ թե Դերբենդի լեռնանցքն է, ինչպես կարծել են որոշ ուսումնասիրողներ, այլ նրանից զգալիորեն հարավ և, ըստ «Աշխարհացոյցի», դարձյալ Սարմաթիայի տարածքում ընկած Խորսվեմ լեռնանցքը: Ըստ այդմ էլ Տակիտոսի «ալբեանական» կոչված լեռների ու ծովի միջև գտնվող լեռնանցքի մասին հիշատակությունը վերաբերում է սրան և ոչ թե Դերբենդի լեռնանցքին:

[116] Աշխարհացոյց, էջ 25-27 (ընդգծ. Հ. Ս.):

[117] Ս. Տ. Երեմյան, «Աշխարհացոյցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ, ՊՓՀ, 1972, թիվ 4, էջ 218:

Կապաղակն էր[118]:

Այսպիսով, անկասկած է, որ Աղվանքի հյուսիսային սահմանն անցնում էր վերը նշված գծով, և այդ ժամանակաշրջանի համար մի ուրիշ որևէ այլ սահմանագիծ ընդունելը հանգեցնում է ոչ միայն Աղվանքի, այլև Սարմաթիայի ընդգրկումների պատմականորեն սխալ պատկերացման:

Մեզ հայտնի հունա-հռոմեական բոլոր աղբյուրները Աղվանքի արևելյան սահմանը հասցնում են մինչև Կասպից ծով և այլ սահմանագիծ ընդունելու շարժառիթ չենք տեսնում: Հնարավոր է միայն, որ Աղվանքի արևելյան սահմանը ձևավորվել է ավելի ուշ՝ Պոմպեոսի արշավանքներից հետո և դրանցով պայմանավորված: Այդպես ենթադրելու համար կարծում ենք, հիմք է տալիս Դիոն Կասսիոսի մի հաղորդումը, որի համաձայն Պոմպեոսը, Աղվանքը նվաճելով, Կասպից ծովի արևմտյան մերձափնյա մի շարք ցեղերի հետ դաշինք է կնքում առանձին-առանձին: «Պոմպեոսը,- գրում է Դիոն Կասսիոսը,- այս գործերը կատարելուց և ամբողջ երկիրը ասպատակելուց հետո ալբաններին խաղաղություն պարգևեց, ինչպես նաև մի շարք այլ ցեղերի հետ, որոնք բնակվում են այն տարածքի վրա, որն ընկած է Կովկասից մինչև Կասպից ծով... դաշինք կնքեց, երբ սրանք իր մոտ այդ նպատակով դեսպաններ ուղարկեցին»[119]: Վերջին հանգամանքը ցույց է տալիս, որ նշված ցեղերի մոտ դեռևս չէր ավարտվել պետականության անցման գործընթացը, ուստի և Աղվանքի պետական-քաղաքական սահմանն էլ արևելքում դեռ չէր ձևավորվել: Եվ միայն Պոմպեոսին ենթարկվելուց ու Աղվանքը բնակեցնող մյուս ցեղերի հետ միևնույն քաղաքական պայմաններում հայտնվելուց հետո է, որ պետականության անցման գործընթացը արագանում է, և նրանք մեկտեղվելով միևնույն պետական-քաղաքական կազմավորման մեջ, վերջնականապես ձեվավորում են Աղվանից պետությունը եւ նրա արևելյան սահմանը հասցնում մինչև Կասպից ծով: Եվ անտիկ հեղինակների հաղորդումները՝ մինչև Կասպից ծով հասնող Աղվանքի արևելյան սահմանի մասին, վերաբերում են միայն այս ժամանակներից հետո ընկած շրջանին:

Թե՛ Ստրաբոնը, և թե՛ Պլինիոս Ավագը Աղվանքի արևմտյան սահման համարում են Ալազան գետը: «Ճանապարհն Ալբանիայից (դեպի Իբերիա - Հ. Ս.) նախ անցնում է ժայռերի մեջ առաջացած քարե արահետով, ապա Կովկասից հոսող Ալազան գետի գոյացրած հովտի միջով»[120]: «Կուրից սկսած (դեպի հյուսիս - Հ. Ս.),- արդեն գրում է Պլինիոս Ավագը,- բնակեցնում է ալբանացիների ցեղը, ապա իբերների (ցեղը - Հ. Ս.) որն առաջիններից բաժանվում է Կովկասյան լեռներից Կուր հոսող Օկազան (Ալազան - Հ. Ս.) գետով»[121]: Այս հաղորդումները հավաստում են, որ Աղվանքի արևմտյան սահմանը եղել է Ալազան գետը: Նույն հաղորդումներից բխում է նաև այն, որ նրա արևմտյան հարևանը եղել է Իբերիան, առավել ևս, որ դա հաստատում են նաև հին աշխարհի երկու խոշորագույն աշխարհագետները՝ նույն Ստրաբոնն ու Պտղոմեոսը: Ըստ առաջինի,

[118] Известия древних писателей..., т. II, с. 181. О. Ш. Исмизаде, Кабала-столица древней Кавказской Албании, Сб. Вопросы истории Кавказской Албании , с. 54-74; А. Е. Крымский, Страницы из истории ... Азербайджана, с. 289-305.

[119] Դիոն Կասսիոս, XXXVII, 5, I.

[120] Страбон, XI, III, 5.

[121] Известия древних писателей..., т. II, с. 181.

ալբանացիները «ապրում են իբերների ու Կասպից ծովի միջև»[122], իսկ ըստ երկրորդի՝ «Ալբանիան սահմանակցում էր ... արևմուտքից Իբերիայի հետ»[123]: Աղբյուրների հաղորդումների նման համերաշխությունը բավական էր, որպեսզի ընդունվեր, որ Աղվանքն ու Իբերիան միյանց հետ սահմանակցել են Ալազան գետի ամբողջ երկարությամբ և դրանով վերջնականապես լուծված համարվեր Աղվանքի արևմտյան սահմանի հարցը, եթե չլիներ բավական վեճեր առաջացրած Ալազանի արևմտյան ափին ընկած Կամբեճան գավառի քաղաքական գոյավիճակի խնդիրը :

Աս. Մնացականյանն ու Բ. Ուլուբաբյանը գտնում են, որ ուսումնասիրվող շրջանում Կամբեճանը մտել է Հայաստանի կազմի մեջ[124]: Ֆ. Մամեդովան այն ուղղակի հայտարարում է «ալբանական մարզ» և այդ տեսանկյունով էլ ուսումնասիրում[125] Կամբեճանը Աղվանից թագավորության կազմում է տեսնում նաև Ա. Հակոբյանը[126]: Մյուսներն էլ՝ Գ. Ա. Մելիքիշվիլին, Դ. Լ. Մուսխելիշվիլին և ուրիշներ, կարծում են, որ մարզը հավասարաչափ բաժանված է եղել հայերի, վրացիների ու աղվանացիների միջև[127]: Բայց աղբյուրների և հատկապես ուսումնասիրվող ժամանակաշրջանի հիմնական ու արժանահավատ հեղինակ Ստրաբոնի հաղորդումների համաձայն Կամբեճանը մ.թ.ա. I - մ.թ. I դդ. ընկած է եղել Աղվանքի ու Իբերիայի միջև և լինելով նրանց սահմանակից երկրամաս՝ չի մտել ոչ մեկի կազմի մեջ: Ըստ այդ հաղորդմունների մեկի՝ «անցումը Իբերիայից Ալբանիա ձգվում է անջուր և քարքարոտ Կամբեճան մարզով դեպի Ալազան գետը»[128]: Մարզի մասին Ստրաբոնը խոսում է նև երկու անգամ և երկու դեպքում էլ, Հայաստանի նկարագրությունն անելիս, նրանցից մեկում նույնիսկ շեշտելով, որ այն Իբերիայի սահմանակից մարզերից մեկն է: «Փավենեն նև Հայաստանի գավառներից է,- գրում է նա,- և Կոմիսենեն և Օրքիստենեն...: Խորզենեն և Կամբյուսենեն ամենից հյուսիսայիններն են և առավել ձյունառատ, որոնք սահմանակցում են Կովկասյան լեռներին և Իբերիային ու Կոլխիսին»[129]: Նրա մյուս՝ նույնպես Հայաստանի նկարագրությանը վերաբերող հաղորդմամբ՝ «Հայաստանը իրենից ներկայացնում է մասամբ հարթավայր, մասամբ էլ լեռնային երկիր, ինչպես Կամբիսենը, ուր հայերը սահմանակցում են միաժամանակ իբերների ու ալբանացիների հետ»[130]: Ելնելով բերված հաղորդումներից, անհիմն չի լինի պնդել, որ Ստրաբոնի ժամանակներում Կամբեճանը մտել է Մեծ Հայքի կազմի մեջ և իր աշխարհագրական դիրքով սահմանակցել է մի կողմից Իբերիային, մյուս կողմից էլ Աղվանքին: Որ Կամբեճանը այդ ժամանակներում աղվանական մարզ չէր, ապացուցվում է նաև այլ հեղինակների և, մասնավորապես, Պլուտարքոսի ու Դիոն Կասսիոսի տեղեկություններով: Նրանց հաղորդման համաձայն, Պոմպեոսը

---

122 Страбон, XI,IV, I.
123 Известия древних писателей..., т. I, с. 242.
124 Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 48-55, Բ. Ուլուբաբյան, Դրվագներ..., էջ 31:
125 Ф. Мамедова, Политическая история ... Албании, с. 93-94.
126 А. А. Акопян, Албания-Алуанк..., с. 28-30.
127 Г. А. Меликишвили, К истории древней Грузии, с. 123, и сл.; Д. Л. Мусхелишвили, Из исторической географии... Грузии, с. 19.
128 Страбон, XI,IV, 5.
129 Նույն տեղում, XI, XIV, 4.
130 Նույն տեղում, XI, IV, I.

Աղվանք արշավելիս նախ անցել է Կամբեճանով և ապա միայն Ալազան (Աբանդ, Աբաս - Հ. Ս.) գետի մյուս ափին հանդիպել աղվանական կազմ ու պատրաստ բանակին[131]: Եթե Կամբեճանը աղվանական մարզ լիներ, ապա հազիվ թե Պոմպեոսը կարողանար առանց դիմադրության հասնել Ալազանի մյուս ափը: Այն հայկական էր և որպես նվաճված Հայաստանի մարզերից մեկը Պոմպեոսի համար դարձել էր դեպի Աղվանք տանող անցուղի:

Այսպիսով, ճիշտ չեն այն ուսումնասիրողները, որոնք մ.թ.ա. I - մ.թ. I դդ. Կամբեճանը դիտում են որպես աղվանական մարզ և դրա համար կամ Ստրաբոնի հաղորդումներում առկա աշխարհագրական վայրերի մի ամբողջ շարք անհարկի նմանեցումներ ու փոփոխություններ են կատարում, որպեսզի հնարավոր համարվի նրանց նույնացումը Խորձենե-Կղարջքի շրջանում մի այլ Կամբեճանի գոյություն ենթադրելու, որին իբրև թե վերաբերվում է Ստրաբոնի հաղորդումը[132] կամ աղբյուրների տեղեկությունների կամայական մեկնաբանություններով ու հարմարեցումներով, դարձյալ առաջ քաշելով Արտաշեսի նվաճումների մասին առասպելը, անպտուղ բանավեճի մեջ մտնում[133]: Ճիշտ չեն նաև այն ուսումնասիրողները, որոնց կարծիքով Կամբեճանը բաժանված էր երեք երկրների միջև:Ուսումնասիրվող ժամանակաշրջանում վիճելի մարզը ամբողջությամբ մտնում էր Մեծ Հայքի կազմի մեջ և Իբերիա-Վիրքից բաժանվելով հարավ-արևմուտքում Հնարակերտ ամրոցով, ու Խրամ և Կուր գետերի միախառնման կետով, իսկ հյուսիս-արևմուտքում՝ Վելիս-Ցիխե ամրոցով[134], արևելքում՝ Աղվանքից բաժանվում էր Ալազան գետի հոսանքի ողջ երկարությամբ:

Դա Ստրաբոնի ժամանակներում: Նրանից հետո, դատելով մ.թ. II և ավելի ուշ դարերում ապրած անտիկ հեղինակների հաղորդումներից, որոնց համաձայն Աղվանքը սահմանակցում էր Իբերիային և Կամբեճանի՝ որպես Աղվանքի մարզերից մեկի հայ հեղինակների ու, հատկապես, «Աշխարհացույցի» տեղեկություններից կարելի է ենթադրել, որ մ.թ. II դարում փոխվել էր Կամբեճանի քաղաքական կարգավիճակը: Այն դուրս էր եկել Մեծ Հայքի կազմից և մտել Աղվանքի մեջ, որի հետևանքով էլ վերջինիս արևմտյան անմիջական հարևան էր դարձել Իբերիան: Մ.թ. II դարում նման աշխարհագրական փոփոխությունների հնարավորություն կարելի է կռահել՝ ոչ միայն ելնելով նշված դարի և հետագայի գրավոր աղբյուրների համապատասխան հաղորդումներից, այլև այդ ժամանակներում տեղի ունեցած պատմական իրադարձություններից, որոնք, ինչպես պատմում է հռոմեացի պատմիչ Թեմիստոսը, հարկադրել են հռոմեացի զորավարներին անցնելու Կասպյան դռները, և, Հայաստանից դուրս քշելով ալաններին, սահմաններ են կարգել իբերների ու ալբանացիների համար[135]: Ամենայն հավանականությամբ, սահմանների այս կարգավորման ժամանակ էլ Կամբեճանն անցել էր Աղվանքին, որպես անմիջական սահմանագիծ այս երկու երկրների միջև:

Այսպիսով, Աղվանքի արևմտյան սահմանը մինչև մ.թ. II դարը անցել է Ալազան

[131] Плутарх, Помпей, XXXV, Դիոն Կասսիոս, XXXVII, III, 6.
[132] А. А. Акопян, Албания-Алуанк..., с. 29-30.
[133] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 137-143.
[134] Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի» կից քարտեզը:
[135] Известия древних писателей..., т. I, с. 697.

գետով, իսկ դրանից հետո՝ մի սահմանագծով, որը, հյուսիսում սկսվելով Ալազան գետի միջին հոսանքի շրջակայքից՝ Վելիս-Ցիխե ամրոցի մոտերքից և կտրելով-անցնելով Իորի գետի միջին հոսանքը հարավում, հասնում էր մինչև Հնարկերտ ամրոցը:

Ամփոփելով Աղվանքի քաղաքական սահմանների մասին մեր քննությունը՝ գտնում ենք, որ հունա-հռոմեական աղբյուրների «Ալբանիա-Աղվանք» երկիրը պարփակված էր հյուսիսում Կովկասյան լեռնաշղթայի հարավային ճյուղը կազմող Կերաունյան լեռների ու սրանց շարունակությունը կազմող Սոանա (Սումգայիթ) գետի, արևելքից՝ Կասպից ծովի, հարավից՝ Կուրի, իսկ արևմուտքից՝ նախ Ալազան գետի, ապա արդեն վերոհիշյալ գծի միջև:

Ընդգրկված լինելով պատմականորեն առաջացած նշված աշխարհագրական սահմաններում, Աղվանից աշխարհը չէր կարող ներգրաված լինել Ադրբեջանի ողջ տարածքը: Հյուսիսում այդ տարածքից դուրս էին մնում Սումգայիթ գետից մինչև Սամուր գետն ընկած մերձկասպյան մարզերը, իսկ հարավում՝ Կուրի աջափնյակն ամբողջությամբ:

Դարերից եկող հաստատուն այս իրողությունը, սակայն, այսօր խեղաթյուրվում է պատմության կեղծարարների կողմից, և Կուրի աջափնյակը կամ այն կազմող Ուտիք և Արցախ մարզերը ներկայացվում են որպես Աղվանից աշխարհի մարզեր, իսկ նրանց հայ բնակչությունը՝ աղվանացիներ: Եվ չնայած վերը կատարված քննությունը տարակույս չի թողնում, որ Կուրից կամ Աղվանք-Ալբանիայի սահմանից հարավ ընկած Ուտիք և Արցախ նահանգները կունենային միայն ու միայն հայկական պատկանելություն, այնուամենայնիվ ավելորդ չենք համարում դա ապացուցել նաև այդ նահանգներից յուրաքանչյուրի մասին ուղղակի հաղորդումներով[136]:

**ՈՒՏԻՔ**: Ըստ «Աշխարհացույցի» Մեծ Հայքի 12-րդ նահանգն էր, ուներ յոթ գավառ և գտնվում էր Արաքս գետից արևմուտք, Արցախի և Կուր գետի միջև[137]: Նրա գավառներն էին Առան-Ռոտ, Տրի, Ռոտ-Պարսյան, Աղուե, Տուս-Քուստակ, Գարդման, Շակաշեն և Ուտի-Առանձնակ, որոնց ընդհանուր տարածքը, Ադրբեջանի այսօրվա վարչական բաժանումներով, մոտավորապես համապատասխանում է Ղազախի, Թ'ռուզի, Շամխորի, Խանլարի, Կասում-Իսմայիլովի, Միր-Բաշիրի, Բարդայի, Եվլախի շրջաններին ամբողջովին, Աղդամին և Շահումյանի շրջանների որոշ մասերին և ԼՂՀ-ի Մարտակերտի շրջանի մի մասին:

Ուտիքին վերաբերվող հնագույն տեղեկությունները հասնում են մինչև հայկական պետության սեպագրական շրջանի պատմության ժամանակները, երբ ուտիական ցեղերը մտնում էին Տայքից մինչև Այրարատ ու Սյունիքից մինչև Սևանա լճի ավազան ու ավելի հեռու տարածված մեծ ցեղային միության մեջ և արձանագրություններում նրանց հետ համատեղ հանդես գալիս «Եթիունե» անվամբ[138]:

---

[136] Այդ մասին տե՛ս նաև Г. С. Свазян, Арцах в исторических первоисточниках, Լրաբեր հաս. գիտ., 1989, թիվ 11:
[137] Աշխարհացույց, էջ 33:
[138] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981, հ.1, էջ 42

Մ.թ.ա. VI դարի սկզբներից հայկական թագավորության գլուխ է անցնում Երվանդունիների տոհմը, որն իր իշխանության տակ պահում էր մի ընդարձակ տարածություն, որի սահմանը հյուսիս-արևելքում հասնում էր մինչև Կուր[139] և, բնականաբար, ընդգրկում Ուտիք նահանգը: Որ վերջինս Երվանդյան Հայաստանի մարզերից մեկն էր, հաստատում է Խորենացու արդեն վկայակոչված հաղորդումը Երվանդ-Արտաշիսյան կռվի մասին, որը տեղի էր ունենում Ուտիքում, որտեղ և գտնվում էր Երվանդը[140]:

Երվանդի նկատմամբ Արտաշես Ա-ի տարած հաղթանակով Երվանդյան Հայաստանի ողջ տարածքը, նշանակում է և Ուտիքը (Արցախի հետ միասին) անցնում է հաղթողի ձեռքը և, որպես միևնույն պետության անբաժանելի մաս, ժառանգաբար փոխանցվում նրա սերունդներին: Դա ապացուցվում է ինչպես հնագիտական նյութերով, այնպես էլ գրավոր աղբյուրների հաղորդումներով: Հնագիտական պեղումներն այժմյան Աղդամի շրջանի Սոփուլու գյուղի սահմաններում բացել են մի բնակավայր, որը տեղական բնակիչների կողմից կոչվում է «Թգրանակերտ» կամ «Թառնակերտ» անուններով և, անկասկած, «Տիգրանակերտ» անվան տեղական, բարբառային ձևերն են[141]: Նույն կողմերում «Տիգրանակերտ», «Միւս Տիգրանակերտ» և «Տկռակերտ» անվանումներով բնակավայրեր են հիշատակում նաև հայ պատմիչներ Սեբեոսն ու Կաղանկատվացին[142]: Այս անվանումները հիշեցնում են Մեծն Տիգրանի անունը և ստուգապես վկայում, որ քննության ենթակա նահանգը Արտաշեսից հետո հայկական պետության հետ մեկտեղ ժառանգաբար անցել է թոռանը և կազմել Արտաշեսյան հարստության այդ նշանավոր ներկայացուցչի պետական կազմավորման բաղկացուցիչ մարզը, որտեղ էլ նա իր անվամբ բնակավայրեր է կառուցել: Որ Ուտիքը Տիգրան Մեծի ժամանակներում կազմում էր Մեծ Հայքի մարզերից մեկը, նշում է նաև Ստրաբոնը Ուտիքի գավառներից Շակաշենի, որպես Կուր գետով Աղվանքի հետ սահմանակցվող գավառի մասին արդեն մեզ ծանոթ հաղորդումով[143], որից բխում է միայն մեկ, ճշմարիտ եզրակացություն. Շակաշենը, ուրեմն և Ուտիքը, գտնվում էր Մեծ Հայքի կազմում և միայն Կուր գետով սահմանակցվում Աղվանքին, որպես նրան հարևան երկրամաս: Ստրաբոնը հատկապես շեշտում է նաև այն փաստը, որ Շակաշենը ոչ միայն Հայաստանում էր, այլև նրա ամենաբարեբեր հողն էր, որը դեռևս մ.թ.ա. VII դարում նվաճել էին սկյութները և կոչել «Շակաշեն»[144]:

Ուտիքի ու ուտեացիների, որպես Հայաստանի մարզերից մեկի ու բնակիչների մասին հաղորդում են նաև մ.թ. II դարի պատմիչ Ասինիոս Կվադրատոսը և նրան հիշելով՝ Ստեփանոս Բուզանդացին (IV դար): «Կուր գետի շրջակայքում ապրում են Հայաստանի նշանակալից մասը կազմող օվարենիները (գուգարները - Հ. Ս.) և

---

[139] Գ. Տիրացյան, Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.ք.ա. VI դար), ՊԲՀ, 1980, թիվ 4, էջ 84-95:

[140] Խորենացի, Բ, գլ. ԽԴ:

[141] Ս. Գ. Բարխուդարյան, Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում, ՊԲՀ, 1971, թիվ 1, էջ 66: Դիվան հայ վիմագրության, պր. V: Կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 135:

[142] Սեբեոս, գլ. ԼԸ: Կաղանկատվացի, Գ, գլ. Ը:

[143] Страбон, XI, XIV, 4.

[144] Նույն տեղում, XI, VIII, 4:

//
օտիները (ուտեացիները - Հ. Ս.),- գրում է Կվադրատոսը, ուտեացիների մասին հատուկ վավերացնելով, որ «օտիները (ապրում են - Հ. Ս.) Հայաստանում»[145]: «Օտինեն Հայաստանի մարզերից է»,- հաստատում է Ստ. Բուզանդացին[146]: Ահա այսպես պարզ ու որոշակի անտիկ հեղինակները հավաստում են այն փաստը, որ Ուտիքը (հետևաբար և Արցախը) ոչ միայն Հայաստանի մարզերից մեկն էր, այլև նրա լավագույն և նշանակալից հողերից:

Հաջորդ դարերում՝ Արշակունիների թագավորության շրջանում ևս Ուտիքը գտնվում էր Հայաստանի կազմում: Դա երևում է նրանից, որ Գրիգոր Լուսավորիչը, երկրում եկեղեցիներ հիմնելիս, նման մի կրոնական հաստատություն է կառուցում նաև Ուտիքի Գարդման գավառում[147], որը չէր լինի, եթե Ուտիքը ունենար այլ քաղաքական կարգավիճակ:

Աղբյուրների վկայությամբ, Ուտիքը հայոց կազմում էր նաև V դարում: Պատմելով Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական գործունեության մասին Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերում, Կորյունը հայտնում է, որ հայոց ուսուցչապետն ամենազործնական օգնություն ստանում էր Գարդմանի իշխան Խուրսից[148]: Խորենացին էլ պատմում է նույն Գարդմանի մի ուրիշ իշխանի՝ Խոսրով Գարդմանացու մասին, թե ինչպես վերջինս պալատական մի խնջույքի ժամանակ, հայոց այն օրերի թագավոր պարսիկ Շապուհի (415-419 թթ.) ներկայությամբ, սիրահետում էր արքունական քնարահար գեղեցկուհուն և ի պատասխան զայրացած Շապուհի՝ նրան ձերբակալելու հրամանին, հպարտորեն, ձեռքը սրին, դուրս գալիս պալատից և ոչ ոք չի համարձակվում խանգարել նրան[149]:

Հայ մատենագրության մեջ ուղղակի հաղորդումներ կան, որոնցում Ուտիքը հիշատակվում է Աղվանք-Ալբանիայի հետ կողք կողքի, որպես տարբեր երկրներ: Դա Մովսես Կաղանկատվացու հաղորդումն է Հայոց արևելից կողմերում ու Անդրկուրյան երկրներում՝ Աղվանքում, Լփինքում, Կասպքում և այլուր Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական գործունեության մասին: Ըստ նրա, (Մեսրոպ Մաշտոցը - Հ. Ս.) «ձգէր զքարոզութիւն աւետարանին յաշխարհն Ուտիացւոց և յԱղուանս, և Լփինս, և ի Կասպ և մինչև ի դուռն Չորայ»[150]:

**ԱՐՑԱԽ**: Ուտիքի քաղաքական կարգավիճակի հարցի պարզաբանմանն ուղղված սույն աղբյուրագիտական հետազոտությունը, ըստ էության, լուծում է նաև Արցախի պատկանելության հարցը, քանի որ հայկական Ուտիք նահանգից հարավ-արևմուտք գտնվող Արցախը այլ քաղաքական կարգավիճակ չէր կարող ունենալ: Բայց և այնպես դիմենք դա հաստատող ուղղակի հաղորդումներին, որոնցով լի է հայ մատենագրությունը:

Հայոց հին նահանգներից էր Արցախը: Ընկած էր Սյունիքից արևելք՝ նրա անմիջական հարևանությամբ և տարածվում էր մինչև Ուտիք[151]: Հարավային սահմանն անցնում էր Արաքս գետով, իսկ հյուսիսայինը, անցնելով Լոփնաս

---

[145] Известия древних писателей..., т. I, с. 271.
[146] Նույն տեղում, էջ 270:
[147] Ուխտանես, Պատմութիւն, էջ 100:
[148] Կորյուն, գլ. ԺԸ:
[149] Խորենացի, Գ, գլ. ԾԵ:
[150] Կաղանկատվացի, Ա, գլ. ԻԷ, (ընդգծ.՝ Հ.Ս.):
[151] Աշխարհացույց, էջ 33:

(Աղստև) գետից այն կողմ, ձգվում էր վերջինիս Ոսկեպար (Զողաս) վտակի ձախ ափով: Այս շրջանակներում պարփակված Արցախը, նույն «Աշխարհացոյցի» վկայությամբ, Մեծ Հայքի տասներորդ նահանգն էր, ուներ տասներկու գավառ՝ Մյուս Հաբանդ, Վայկունիք, Բերդաձոր. Մեծ Իրանք, Մեծ Կուանք, Հարճլանք, Մուխանք, Պիանք, Պարսականք, Քուստի-Փառնես, Կողթ և իր ընդգրկած տարածքով համապատասխանում էր Ադրբեջանի Կեդաբեկի ու Դաշքեսանի շրջաններին, ԼՂՀ-ի այժմյան ողջ տարածքին, այժմ ազատագրված Քարվաճառի, Ջեբրայիլի շրջաններին, Աղդամի ու Ծահումյանի՝ Ուտիքից դուրս մնացած մասերին, Ֆիզուլիի ու Կուբաթլիի մի մասին: Վերջինիս մնացած մասը, ինչպես նաև Լաչինի շրջանը մտնում էին Սյունյաց նահանգի մեջ: Մասնավորապես Լաչինը Սյունյաց աշխարհի Աղահեճք՝ (Քաշաթաղ, Խոժոռաբերդ) գավառն էր:

Հայոց այս նահանգը աչքի էր ընկնում իր բուսական ու կենդանական աշխարհով, օգտակար հանածոներով, խիտ անտառներով, փարթամ արոտավայրերով ու անմատչելի լեռներով: Արտահանում էր մեծ քանակությամբ ռազմական ձի:

Արցախն իր երկարատև գոյության ընթացքում պատմության մեջ հանդես է եկել տարբեր աշխարհագրական անուններով՝ Ուրտեխինի, Օրքիստենե, Արցախ, Փոքր Սյունիք, կամ կազմելով մի այլ վարչական միավորի բաղկացուցիչ մաս, ստացել նրա անվանումը, ինչպես Ծավդեից աշխարհ, Խաչեն, Ղարաբաղ և այլն ու այդ անուններով հյուսել իր պատմությունը:

Արցախի մասին հնագույն տեղեկությունները ևս հասնում են մինչև Հայաստանի սեպագիր շրջանի պատմության ժամանակները, մասնավորապես մինչև մ.թ.ա. VIII դարը: Այն առաջին անգամ հիշատակվում է Սևանի ավազանում Սարդուրի Բ-ի (764-735 թթ.) թողած արձանագրությունում[152], «Ուրտեխինի - kur Urtehini» ձևով[153]: Այնուհետև Արցախը (Ուտիքի նման) նախ Երվանդունիների, ապա և Արտաշեսյանների իշխանության տակ գտնվող հայկական թագավորության կազմի մեջ էր: Դրա հիմնավորումը Ուտիքի առիթով վկայակոչած Խորենացու հաղորդած զրույցն է Երվանդ-Արտաշեսյան կռիվների մասին և հայ մատենագրության մեջ «Տիգրանակերտ» անվանումներով բնակավայրերի հիշատակումներն ու Աղդամի կամ Արցախի պատմական Պիանք գավառի երբեմնի մի մասի շրջանում հայտնաբերված հնագույն քաղաքի ավերակները: Բացի դրանից, անտիկ հեղինակներն էլ իրենց հաղորդումներով վկայում են, որ Արցախը Արտաշեսյանների օրոք կազմել է նրանց տիրապետության բաղկացուցիչ մասը: Ստրաբոնը, որն Արցախը հիշատակում է «Օրքիստենե» անվամբ[154], առանց այլևայլության գրում է. «Փավենեն ևս Հայաստանի գավառներից է և Կոմիսենեն և Օրքիստենեն, որ տալիս է մեծաքանակ հեծելազոր»[155]:

Ըստ հայկական աղբյուրների, Արցախը հաջորդ դարերում կամ Արշակունի թագավորների օրոք ևս Հայոց նահանգներից մեկն էր: Դրա վառ ապացույցն այն է, որ Արցախի Հաբանդ գավառի Ամարաս գյուղում Գրիգոր Լուսավորիչը եկեղեցի

[152] Г. А. Меликишвили, Урартские клинописные надписи, М., 1960, с. 310, N 161.
[153] Г. А. Капанцян, Chetto-Armeniaca, Ереван, 1931, с. 104; Նույնը լեզվական քննությամբ հաստատում է նաև ուրարտագետ Հովի.Կարագյոզյանը (տե՛ս նրա Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, Լրաբեր հաս. գիտ. 1978, թիվ 10, էջ 56-57):
[154] С. Т. Еремян, Атлас к книге "История армянского народа".
[155] Страбон, XI, XIV, 4.

է հիմնադրում[156]: Դա երևում է նաև սպանությունից հետո Մանուկ Գրիգորիսի դին Մասքթաց աշխարհից (ուր գնացել էր նա քրիստոնեություն տարածելու) Հայաստան տեղափոխելու վերաբերյալ Բուզանդի հաղորդումից, ուր շեշտվում է Արցախի Հաբանդ գավառի, հետևաբար և ողջ Արցախ նահանգի Հայաստանում գտնվելու փաստը: Նա գրում է. «Եվ ապա (սպանությունից հետո - Հ. Ս.) բարձին զնա (Գրիգորիսի դին - Հ. Ս.) որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, և բերին ի գաւառս իւրեանց, ի կողմանս Աղուանից ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գեօղն՝ որ անուանեալ կոչի Ամարաս»[157]:

Եկեղեցու հիմնարկումը Արցախում և առանձնապես Մանուկ Գրիգորիսի հոշոտված մարմնի ամփոփումը այնտեղ Արցախը վերածում են ողջ Հայաստանի, իսկ մասնավորապես, նրա արևելից կողմերի կրոնական կարևոր կենտրոնատեղերից մեկի և բարձրացնում նրա քաղաքական կշիռը հայոց մյուս նախարարությունների շարքում:

Հայաստանում Արշակունի հարստության տիրապետության շրջանում Արցախը ընդարձակ և հզոր մի իշխանություն էր, որի կենտրոնը դարձել էր Ծոդքը («Ծաւդէք», «Սոդք») և այդ կենտրոնի անունով էլ կոչվում էր «Ծավդեացվոց իշխանություն»: Ըստ Խորենացու, այդ իշխանությունը ծագել էր մեզ հայտնի Առան նախնուց: «Ի սորայ զաւակաց ասեն,- ծանուցում է պատմահայրը,- սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնս»[158]: Այլ խոսքով, պատմահայրը Ծավդեացվոց կամ Արցախի, ինչպես և Ուտիքի իշխանություններին վերագրում է հայկական ծագում:

Արցախը հայ իրականության մեջ հայտնի է եղել նաև «Փոքր Սիւնիք» կամ «Սիւնեաց Երկրորդն» անուններով: Ամենայն հավանականությամբ այս անվանումները նահանգն ստացել է նրա համար, որ Սյունյաց աշխարհի հետ մեկտեղ կազմել է մի ընդհանուր վարչական միավոր, բայց և այնպես այնքան ինքնուրույն է եղել, որ անհրաժեշտություն է առաջացել նրանից տարբերել: Հայ մատենագրության մեջ Արցախը «Փոքր Սիւնիք» անվամբ հանդես է գալիս հատկապես Խորենացու հաղորդումներում: Անելով Վատնյան դաշտում Մանուկ Գրիգորիսի սպանության հայտնի պատմությունը, նա գրում է, որ պատանի կաթողիկոսի դին նրա սարկավագները բերին «ի փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի»[159]:

Մատենագրական տվյալները վկայում են, որ V դարի կեսերին էլ Արցախը գտնվում էր Հայաստանի կազմում: Այսպես, ըստ Վարդանանց պատերազմի պատմիչ Եղիշեի, Վասակ Սյունեցին 455-451 թթ. ազատագրական պատերազմի նախօրեին պառակտչական գործունեություն էր ծավալել հայոց աշխարհի մի շարք նահանգներում, այդ թվում և Արցախում: «Սոյնպէս առնէր (Վասակը - Հ. Ս.),- գրում է Եղիշեն,- և ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն, և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանս, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց»[160]: Ուշագրավը Եղիշեի հաղորդման մեջ ոչ միայն այն է, որ դրանով հաստատվում է Արցախի՝

[156] Բուզանդ, Գ, գլ. Ձ:
[157] Նույն տեղում:
[158] Խորենացի, Բ, գլ. Լ:
[159] Նույն տեղում, Գ, գլ. Գ:
[160] Եղիշե, էջ 190 (ընդգծումը՝ Հ. Ս.):

Հայաստանի կազմում լինելու փաստը նաև V դարում, այլև որ Արցախն ու Աղվանք-Ալբանիան հիշատակվում են առանձին-առանձին որպես տարբեր երկրներ: Սա, ինչպես և Ուտիքի համար վերոհիշյալ նույնանման հաղորդումներում Ուտիքի ու Արցախի առանձին հիշատակումները Աղվանքից, այն բանի պերճախոս վկայություններն են, որ Ուտիքն ու Արցախը մի կողմից, Աղվանք-Ալբանիան էլ մյուս կողմից, միմյանցից կատարելապես տարբեր, առանձին երկրներ են:

Որ խնդրո առարկա մարզերը Հայոց երկրի անբաժանելի մասերն էին, հաստատվում է նաև նրանց քաղաքական պատմությամբ, որն ընթանում էր Հայաստանի ընդհանուր պատմության հետ համընթաց և նրան միահյուս:

Լինելով հայաշխարհի նշանավոր նահանգներից, Ուտիքն ու Արցախը ակտիվորեն մասնակցում էին նրա ներքին ու արտաքին հարաբերություններին: Ագաթանգեղոսի վկայությամբ, երբ Գրիգոր Լուսավորչին ուղարկում էին Կեսարիա՝ հայոց կաթողիկոս ձեռնադրելու համար, և Տրդատ Գ հայոց թագավորը նրան ուղեկցող է նշանակում Թորգոմա տան ընտիր կուսակալներին, կողմնակալներին, տասնհազարավորներին ու հազարավորներին, դրանց թվում էին նաև հիշյալ իշխանությունների տոհմապետերը: «Յայնժամ թագաւորն (Տրդատ -Հ. Ս.),- գրում է Հայոց դարձի պատմության հեղինակը,- վաղվաղակի փութով և երկիւղիւ և մեծաւ խնդութեամբ հոգացեալ, գումարեաց զգլխաւորս նախարարացն և զկուսակալն աշխարհացն. առաջին՝ իշխանն Անգեղ տան,... մետասաներորդ՝ իշխանն Սիւնեաց աշխարհին, երկոտասաներորդ՝ իշխանն Ծաւդէից աշխարհին. երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացւոց աշխարհին»[161]: Որոշ ժամանակ անց նույն դերում տեսնում ենք Ուտիքի Գարդման գավառի իշխանին, որն այս անգամ դարձյալ կաթողիկոս ձեռնադրելու կապակցությամբ Կեսարիա էր ուղեկցում մի ուրիշ հոգևորականի՝ Ցահակին[162]:Մի շարք այլ իշխանությունների հետ մեկտեղ, Ուտիքի ու Արցախի իշխանություններին էր վստահված Հայոց աշխարհի հյուսիսային դռան պահպանության գործը, որը Կովկասյան լեռնանցքներից ելնող վտանգի՝ հյուսիսային քոչվոր ցեղերի անընդհատ ասպատակությունների հետևանքով, ուժերի մշտական լարում և աչալրջություն էր պահանջում:Նրանց այդ պարտականությունը վավերացված էր «հայոց ազատաց և տանուտերանց» ռազմական ուժը ցույց տվող փաստաթղթում՝ «Զորանամակում», ուր նշված էր նաև զորքերի այն քանակությունը, որ պարտավոր էին դուրս բերել նրանք, երբ հայրենիքը վտանգի մեջ էր: Ըստ այդ ցուցակի, նրանցից յուրաքանչյուրը կռվի ժամանակ հանում էր՝ հազարական զինվոր[163]: Ավելացնենք, որ Ուտիքն ու Արցախը հայ նախարարների համակարգում և հայոց արքունիքում ունեցած իրենց պատվաստիճանով ու տեղով, ինչպես ցույց է տրված այդ հարաբերությունները կարգավորող փաստաթղթում՝ «Գահնամակում», համապատասխանաբար գրավում էին 23-րդ և 28-րդ տեղերը 70 նախարարական տների միջև[164]:

Այսպիսով, մատենագրական բոլոր տվյալները (ուղղակի թե անուղղակի) վկայում են, որ Ուտիք և Արցախ աշխարհները հնագույն շրջանից մինչև V դարի

[161] Ագաթանգեղոս, էջ 446:
[162] Բուզանդ, Գ, գլ. ԺԷ:
[163] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, с. 249-251.
[164] Նույն տեղում, с. 249-250; Այս փաստաթղթում Արցախը հանդես է գալիս «Սիւնեաց երկրորդ» անունով (տե՛ս նույն տեղում):

կեսերը կազմել են Մեծ Հայքի հիմնական նահանգները և ոչ մի կապ չունեին բուն Աղվանքի կամ Ալբանիայի հետ:

V դարի կեսերին փոխվում է Ուտիքի ու Արցախի վարչաքաղաքական կացությունը, որի մասին խոսք կլինի ստորև:

* * *

Հայաստան աշխարհի հյուսիսարևելյան հատվածը մայր երկրի նման բնակեցված է եղել դեռևս խոր հնադարից: Դրա վկայությունը ոչ միայն ԼՂՀ-ի Հադրութի շրջանում (պատմական Արցախի Մյուս Հաբանդ գավառում) Դրախտիկ և Ազոխ գյուղերի միջև ընկած քարանձավից հայտնաբերված պալեոլիթյան մարդու գոյությունն ապացուցող հետքերն են (աշխատանքի գործիքներ, արտադրական թափոններ, կենդանիների ու թռչունների ոսկորների մնացորդներ և այլն), այլև, որ ավելի կարևոր է, նեանդարթելյան մարդու լավ պահպանված ամբողջական ծնոտը[165]: Սկսած այդ ժամանակաշրջանից՝ Ուտիքի և Արցախի բնիկներն անընդհատ մարդկության զարգացման բոլոր փուլերը, վերջիվերջո ստանում են մարդաբանության մեջ «արմենոիդ» անունով հայտնի մարդկային տիպը, անվիճելի դարձնելով այն միտքը, որ նշված շրջանները հայերով բնակեցված են եղել վաղնջական ժամանակներից: Մինչդեռ անդրադառնալով հիշյալ հարցին՝ ադրբեջանցի ուսումնասիրողները որպես երկրամասի բնակիչներ նշում են գարգարներին, ուտիներին, հոներին, խազարներին, բասիլներին և ծավդեացիներին, նախօրոք նրանց բոլորին հայտարարելով աղվանական ցեղեր[166], բայց ոչ մի դեպքում երկրամասի բնիկ տերերին՝ հայերին: Նրանց կարծիքով, այդպես վարվելով հայկական նահանգները կդառնան աղվանական, բնակիչները՝ աղվանացիներ, իսկ իրենք՝ վերջիններիս հետնորդներ և այդ ճանապարհով կդասվեն հին քաղաքակիրթ ժողովուրդների շարքը: Այնինչ հունա-հռոմեական և հայ պատմիչների ու աշխարհագետների հաղորդումները լայն հնարավորություն են ընձեռում ճշտորեն որոշելու Ուտիքի ու Արցախի էթնիկական կազմը: Դրանց քննությունը բերում է հետևյալ եզրակացության. հնուց ի վեր այս նահանգները բնակեցված են եղել հիմնականում հայերով: Հայ տարրը դրանցում մշտապես մեծամասնություն է կազմել և դրանով դյուրացրել հայ ժողովրդի էթնիկական ընդհանրության հասնելու գործընթացը, որն արդեն մ.թ.ա. II դարում կատարված փաստ էր: Դա վկայում է Ստրաբոնը գրելով, որ հայոց թագավոր Արտաշես Ա-ի ժամանակներում՝ 189-160 թթ. Հայաստանում, «բոլորը միալեզու են»[167]: Որ նշված ժամանակաշրջանում տեղի բնակիչները խոսում էին հայերենով և, որ Ստրաբոնի հաղորդումը լիովին վերաբերում է նաև նրանց, ցույց է տալիս հայոց Վաղարշակ թագավորի պետական-շինարարական գործունեության մասին պատմող Մ. Խորենացին, ըստ որի հայոց թագավորը Հայաստանի հյուսիս արևելյան կողմերում նախարարություն էր հիմնում «զեզերբ հայկական խօսիցս», այսինքն՝ ըստ հայերեն խոսակցության վերջի սահմանների և այստեղ ստեղծում է Առանի գլխավորած նախարարությունը: Ուրեմն, անտարակույս է, որ քննարկվող նահանգները

---

[165] М. Гусейнов, Древний палеолит Азербайджана, Баку, 1985, с. 22-32.

[166] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 101, 104.

[167] Страбон, XI, XIV, 5.

բնակեցված են եղել հայերեն խոսող բնիկներով, որ ըստ այդմ էլ Վաղարշակ հայոց թագավորը այնտեղ նախարարություն է հիմնում: Ուտիքի ու Արցախի բնակչության հայ և հայ լուսավորչական դավանանքի հետևորդ լինելը հաստատում է IX-X դդ. պատմիչ Հովհ. Դրասխանակերտցին, գրելով, որ հալածվելով արաբների կողմից՝ փախչում է այդ կողմերը «զի և նոքա ի ժողովրդենէն մերմէ և խաշն արոտի մերոյ էին»[168]:

Ուտիք և Արցախ նահանգները ոչ միայն ունեցել են հայ բնակչություն, այլև, ինչպես ցույց են տվել միջնադարյան հայ քերականները, նրանք խոսել են հայերենի այն բարբառով, որը կոչվել է «արցախյան» (այժմյան ղարաբաղյան բարբառը): Այդ քերականներից Ստեփանոս Սյունեցին (VII-VIII դդ.), խորհուրդ տալով հայերենում հմտանալու համար լավ ուսումնասիրել նրա բարբառները, գրում է. «Եվ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զքովանդակ զբառսն զեզերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽութայինն և զՉորրորդ-Հայեցին և զՍպերացին և զՍիւնին և զԱրցախայինն»[169]: Ավելի ուշ մի ուրիշ հայ քերական՝ Եսայի Նչեցին (XIV դար)՝ Գլաձորի համալսարանի րաբունապետը, հատուկ մատնանշում է, որ Ստ. Սյունեցու թվարկած բարբառները հայոց լեզվինն են. «ոչ զատարազգի, ասէ, այլ զիւրոյ լեզուին զխաւսս»[170]:

Ելնելով երկրամասին տրվող «Առան» անունից, հայոց լեզվի այդ բարբառը «առաներեն» են կոչում արաբ հեղինակները[171]: Ըստ լեզվաբանական քննությունների, Արցախ-Ղարաբաղյան բարբառը ունեցել է աշխարհագրական լայն ընդգրկում և նրանով խոսել են ոչ միայն ողջ Հայոց Արևելից կողմանց, այլև նրա սահմաններից դուրս գտնվող բնակչությունը[172]:

Այսպիսով, կասկած չի կարող լինել, որ Արցախի ու Ուտիքի բնակչությունը բնիկ հայեր էին և կարծիքը, թե նրանք հայացել են միայն X դարից հետո[173], կեղծարարության շղթայի այն օղակներից մեկն է, որով ընդպանրապես պարուրված է ուսումնասիրվող շրջանի պատմությունը: Հիմնազուրկ այդ կարծիքի միտումնավորությունը ցույց տալու համար բացի վերը բերված վկայություններից, բավական է հիշեցնել նաև Կորյունի, Խորենացու և, մանավանդ, Կաղանկատվացու հաղորդումները Հայոց Արևելից կողմերում դպրոցներ հիմնելու, հայ գիրը տարածելու և ընդհանրապես կուլտուր-լուսավորչական աշխատանքներ տանելու Մեսրոպ Մաշտոցի գործունեության մասին[174], որն իրական կլիներ միայն հայերեն խոսող բնակչության առկայության դեպքում[175]:

Տարածաշրջանում բնակվում էին նաև այլ էթնիկական տարրեր, որոնք, սակայն,

---

168 Դրասխանակերտցի, էջ 217:

169 Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Пг., 1915, с. 187.

170 Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրութեամբ Լ. Խաչերյանի, Երևան, 1966, էջ 65:

171 СМОМПК, вып. 29, с. 29; вып. 38, с. 12.

172 Արցախի կամ Ղարաբաղի բարբառի և նրան առնչեր մի շարք հարցերի մասին մանրամասն տե՛ս Բ. Ուլուբաբյան, Դրվագներ..., էջ 54-107:

173 Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 105.

174 Կորյուն, գլ. ԺԸ, Խորենացի, Գ, գլ. ԾԴ, Կաղանկատվացի, Ա, գլ. ԻԷ:

175 Հայոց Արևելից կողմանց հայ բնակչության և նրա գրի ու դպրության մանրամասն ուսումնասիրությունը տե՛ս Ա. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը:

կազմում էին նահանգի բնակչության ընդգծված փոքրամասնությունը:

Լինելով Հայոց աշխարհի անբաժանելի մասը, այստեղ ևս 301 թ. ինչպես և բովանդակ Հայաստանում, քրիստոնեությունը դառնում է պետական պաշտոնական կրոն:

Այսպիսով, անտիկ ու հայ պատմիչների ու աշխարհագետների հաղորդումները անառարկելիորեն ցույց են տալիս, որ Ուտիքն ու Արցախը հայոց հինավուրց նահանգներից էին, ունեին հայ բնակչություն, որ 301 թ. քրիստոնեություն ընդունեց, ակտիվորեն մասնակցում էին Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքականությանը, եւ հանդիսանում էին նրա հոգևոր ու մշակութային կարևոր օջախներից մեկը: Որպես այդպիսիք նրանք չէին կարող գտնվել այն քաղաքական սահմաններում, որոնք անտիկ ու հայկական սկզբնաղբյուրների տեղեկությունների համաձայն ունեցել է Աղվանից թագավորությունը[176]:

***

Ձևավորվելով մ.թ.ա. I դարում, Աղվանքի վերը նշված քաղաքական սահմանները, հիմնականում պահպանվելով, բացառյալ մեզ հայտնի մի փոքր ժամանակահատվածի, հասնում են մինչև մ.թ. V դարի կեսերը, երբ տեղի են ունենում Աղվանքի ու ամբողջ Անդրկովկասի պատմական բախտի համար վճռորոշ արմատական փոփոխություններ. վերացվում են ինքնուրույն թագավորությունները, և կազմվում մարզպանություններ, որոնք սոցիալ-տնտեսական ու քաղաքական փոփոխությունների հետ մեկտեղ բերում են նաև տարածքային փոփոխություններ:

Աղվանից աշխարհը բաժանված էր առանձին վարչական միավորների՝ նահանգների, որոնք, ըստ «Աշխարհացոյցի», տասնմեկն էին. Եխնի, Շաքէ, Գետառու, Կամբեճան, Խողմաղ, Գեղավու, Համբասի, Ոստան-ի-Մարզպան, Քաղաղաշտ և Դաշտ-ի-Բազկան կամ Հեջերի[177]: Սրանք էլ իրենց հերթին բաժանվում էին գավառների: Մայրաքաղաքն էր Կապաղակը (հունա-հռոմեական աղբյուրների «Կաբալակը»[178]), որը, ինչպես ցույց են տվել պեղումները, գտնվում էր Ադրբեջանի Կուտկաշենի շրջանում՝ Չուխուր-Կաբալա գյուղի մոտ գտնվող ավերակների տեղում[179]: Այն երկրի մայրաքաղաքի իր դերը պահպանում է մինչև մ.թ. V դարի կեսերը, մինչև Աղվանից մարզպանության կազմավորումը, տեղը զիջելով մարզպանության համար ընտրված նոր կենտրոնին՝ Պարտավին:

---

[176] Այդ սահմաններից դուրս էր գտնվում նաև Նախիջևանի ԻՀ-ն, որն ընդհանրապես ոչ մի առնչություն չուներ Աղվանքի հետ, բայց և որը, ենթարկվելով կեղծիքների նույն փորձերին, համարվում է Աղվանքի կամ Ադրբեջանի մարզերից մեկը (տե՛ս Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 108-115).

[177] Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 105:

[178] Известия древних писателей..., т. II, с. 181.

[179] О. Ш. Исмизаде, Кабала-столица... Албании, с. 54; С. М. Казиев, Из истории Кабалинского магала (Сб. Вопросы истории... Албании, с. 75); Ф. В. Гадиров, Работы на городище Кабала, Археологические открытия 1980 г., М., 1981, с. 415-416.

## Գ. Աղվանքի էթնո- ցեղային կազմը: Աղվանական ցեղերի զբաղմունքը, հավատալիքները

Ստրաբոնի հայտնի տեղեկության համաձայն, Աղվանքի տարածքում բնակվում էին քսանվեց տարալեզու, սեփական առաջնորդներով ղեկավարվող, առանձին ցեղեր[180]: Բայց հույն աշխարհագետը նրանց բոլորին անվանելով «ալբանացիներ - albanoi», տալիս է այդ ցեղերի ներքին կյանքի, կենցաղի, սովորույթների, հավատալիքների ու զբաղմունքների նկարագիրը, որը կրում է ընդհանուր բնույթ և վերաբերում է նրանց բոլորին անխտիր:

Անկախ ցեղային-էթնիկական պատկանելությունից, բուն Աղվանքի բնակչությանը «ալբանացիներ» են անվանում նաև Պլինիոս Ավագն[181] ու Պլուտարքոսը[182]: Այս հարցում բացառություն չեն կազմում նաև մյուս անտիկ հեղինակները:Նույն հեղինակները ցույց են տալիս նաեւ այդ «ալբանացի» ցեղերի տարածվածության սահմանները: Ստրաբոնը նրանց տեղադրում է «իբերների ու Կասպից ծովի միջև» և ավելացնում, որի երկրի հյուսիսային կողմը «շրջապատված է Կովկասյան լեռներով..., իսկ վերջին կողմը կազմում է Հայաստանը»[183]: Իբերներից արևելք, մինչև Կասպից ծով ընկած տարածքում է ցույց տալիս ալբանացիների բնակության վայրը Պլուտարքոսը[184]: Կասպից ծովի, Կովկասյան լեռների, Կուր և Ալազան գետերի միջև ընկած սահմաններում է տեղադրում ալբանացիներին նաև Պլինիոսը[185]: Ըստ Դիոն Կասսիոսի, ալբանացիները ապրում էին Կուրից հյուսիս[186]: Այսպիսով, անտիկ հեղինակների միմյանց հաստատող հաղորդումներով, «ալբանացի» ցեղերը ընդգրկված էին նույն՝ բուն Աղվանքի տարածքում: Ուստի, կարելի է եզրակացնել, որ անտիկ հեղինակները «ալբանացի» կոչել են երկրի բոլոր ցեղերին ընդհանրապես, որպես տվյալ երկրի բնակիչների: Այս հանգամանքը մեկ անգամ ևս հավաստում է այն միտքը, որ «ալբանացի-ալբանացիներ» տերմինը էթնիկական անվանում չէ, այլ մի հավաքական տերմին, որը տրվել է «Ալբանիա» երկրի բոլոր ցեղերին հավասարապես[187]:

Այն, որ անտիկ հեղինակները երկրի ողջ բնակչությանն են կոչում «ալբանացիներ» և, որպես նրանց բնակության տեղի ցույց են տալիս բուն Աղվանքի տարածքը, թույլ է տալիս հիմնավորապես պնդելու, որ ալբանական ցեղերը իրենց պատմությունը հյուսել են միայն ու միայն նշված տարածքի շրջանակներում:

---

180 Страбон, XI, IV, 6. Ըստ Զ. Յամպոլսկու Ստրաբոնի հիշատակած 26 ցեղերը ոչ թե խոսել են տարբեր լեզուներով, այլ նույն լեզվի 26 բարբառներով (З. Ямпольский, Древние авторы о языке населения Азербайджана, с. 65; Его же, Две заметки к трактовке Страбонова текста об азербайджанской Албании, Известия АзФАНа,1942, N 7, с. 74).

181 Pliny, Natural History, VI, 1, 15.

182 Плутарх, Помпей, XXXIV.

183 Страбон, XI, IV, I.

184 Плутарх, Помпей, XXXIV.

185 Pliny, Natural History, VI, 11, 15.

186 Դիոն Կասսիոս, XXXVI, 54,1:

187 Սրանից էլ ելնելով ու «ալբանացիներ, աղվանացիներ» անվանումը օգտագործելով ոչ որպես էթնիկական անվանում, գտնում ենք, սակայն, որ այն գործածության ժամանակ կարող էր աստիճանաբար վերածվել էթնիկական ցուցչի:

Աղվանից երկրի բոլոր ցեղերին «ալբանացիներ» կոչելով, անտիկ շրջանի պատմագրությունը նրանց ծագումը կապում է այսպես կոչված «իտալական» վարկածի հետ: Հորինվում են ծագումնաբանական առասպելներ, որոնց համաձայն իբր նրանք Անդրկովկասում հաստատվել են՝ գաղթելով Իտալիայի Ալբա կոչված լատինական մարզից, նրանց համար որպես նախահայրեր ցույց տալով մերթ Հերակլեսին, մերթ Յասոնին: Ըստ նրանց, հենց իրենց իտալական ծագումը հիշելով է, որ աղվանացիները Միհրդատյան պատերազմի ժամանակ եղբայրաբար ողջունել են Պոմպեոսի բանակին[188]:

Աղվանական ցեղերի կամ գոնե նրանցից մեկի ծագման մասին հունա-հռոմեական ավանդությունները, սակայն, պատմական հիմք չունեն: Ընդհանրապես այդպիսի ծագումնաբանական առասպելներ նրանք հորինել են գրեթե բոլոր ժողովուրդների համար[189], որ գիտական բացատրության անհնարինության պայմաններում միակ հավանական բացատրություններն էին թվում:

Աղվանական ցեղերի ու կովկասյան մյուս ժողովուրդների ծագման մասին գոյություն ունի մի գեղեցիկ վրացական ավանդություն, որը նրանց բոլորին սերելով մի ընդհանուր հորից՝ Թորգոմից, աղվանացիների նախահայր է մատնանշում նրա ութ որդիներից Հերոսին[190]: Սա կարող է որոշ հիմք համարվել աղվանացիների կովկասյան, տեղական ծագման եզրակացության համար:

Հետևելով ժողովուրդների ծագման աստվածաշնչային առասպելին, Մ. Կաղանկատվացին աղվանացիներին սերված է համարում Հաբեթի որդիներից՝ կիտիացիներից. «Իսկ, որ ի կողմանս հիւսիսոյ են ազգակից են կիտիացւոցն, ուստի Աղուանք»[191], որով, սակայն, աղվանական ցեղերի ծագման հարցը դարձյալ չի լուծվում:

XIX դարի վերջերին ու XX-ի սկզբներին լայն տարածում է ստանում ժողովուրդների միգրացիոն տեսությունը, որի համաձայն իբր նրանք իրենց ներկա հայրենիքներում հաստատվել են հեռավոր նախահայրենիքներից ինչ-որ ժամանակներում հեռանալուց հետո: Այդ տեսությունը տարածվում է գրեթե բոլոր ժողովուրդների, այդ թվում և աղվանացիների վրա: Մտքեր են հայտնվում աղվանացիների տեղաշարժերի մասին: Եվրոպական գիտնական Վ. Տուրը, օրինակ, աղվանացիներին բերում է «Կովկասեն կամ հյուսիսային դաշտավայրերէ»[192], մոտավորապես մ.թ.ա. 285 թ.[193]: Աղվանական ցեղերի

---

[188] Известия древних писателей..., т. I, с. 668; т. II, с. 64; Тацит, Анналы, VI, 34; Epitoma Historarium Phillipicarum Pompey Tragi, XLII, 3, 4, Pliny, Natural History, VI, 15; Lucius Junius Moderatus, On Agriculture, vol I, London, 1948, էջ 47:

[189] Օրինակ, այսպես կոչված «թեսալական վարկածը, ըստ որի հայ ժողովրդի ծագումը կապվում է Յասոնի զինակիցներից թեսալացի Արմենոսի հետ (Страбон, XI, IV, 8).

[190] Картлис Цховреба, т. I, (на груз. яз.), էջ 3-7: Հերոսը, ըստ աղբյուրի, Հերեթի ու հերացիների անվանադիր նախնին է, որի անունով էլ երբեմն նրանք ամբողջ Աղվանքն էին կոչում «Հերեթ» կամ «Հերեթի»:

[191] Կաղանկատվացի, Ա, գլ. Բ: Այս գլխի աղբյուրի՝ «Անանուն ժամանակագրության» մեջ չկա «ուստի Աղուանք» արտահայտությունը (տե՛ս Անանուն ժամանակագրութիւն, խմբագիր յօրինեալ յԷ դարու, Վենետիկ, 1904, էջ 5): Այն Կաղանկատվացու հավելումն է:

[192] Վ. Տուր, Ներոն կայսեր արևելյան քաղաքականությունը, թարգմն. Հ. Մեսրոպ Հապոզյան, Վիեննա, 1930, էջ 98:

[193] Նույն տեղում, էջ 100:

տեղաշարժ, բայց հարավից հյուսիս ուղղությամբ, նշում է և Ի. Ալիևը: Ուրմիա լճի հյուսիսարևելյան կողմերում՝ Հյուսիսային Մարաստանում կամ Ատրպատականում մ.թ.ա. 3-րդ հազարամյակում բնակվող կութի անունով ցեղերի մեջ տեսնելով նույն ուտիներին (kuti – uti- առաջնային k-ի կորուստով)[194], որոնք ավելի ուշ շրջանում արդեն հայտնվել էին Կուր գետի շրջակայքում: Նրանց հայտարարելով այն աղվանական ցեղը, որը, իբր, առաջատար դեր է կատարել աղվանական ժողովրդի (՞ - Հ. Ս.) կազմավորման գործում, նա գրում է. «Ալբանական ցեղերի տեղաշարժ (համենայն դեպս նրանց մի մասի) հարավից հյուսիս միանգամայն հավանական է»[195]: Իր միտքը Ի. Ալիևը փորձում է հաստատել Մ. Կաղանկատվացու վերոբերյալ այն վկայությամբ, թե իբր աղվանացիները սերվել են կետարացիներից (ketari, kedari)[196]: Բնավ չժխտելով հնում էթնիկական տեղաշարժերի հնարավորությունը և այս կամ այն ժողովրդի կազմավորման ընթացքին եկվոր ցեղերի մասնակցությունը, կարծում ենք, սակայն, որ Աղվանից երկրի բնակչության էթնիկական միջուկը կազմել են նրա տարածքը դեռևս նեոլիթի ժամանակներից[197] բնակեցրած տեղաբնիկ ցեղերը:

Աղվանական ցեղերի միավորման ընթացքը շատ լավ ուսումնասիրվում է Յալոյլութափայան մշակույթի նյութերով: Վերջիններս հավաստում են, որ թեև նկատվում է առանձին էթնիկական խմբերի պատկանող տեղաբնիկ ցեղերի միաձուլում, սակայն այդ գործընթացը մինչև վերջ չի հասնում: Պեղումների ժամանակ բացվել են զանազան էթնիկական խմբերի համագոյակցությունը մատնանշող գետնափոր, կարասային, դագաղային, կատակոմբային և այլ տիպի թաղումներ, որոնք իրենց հատուկ, միայնակ թաղումներով, դամբարանային

[194] И. Алиев, История Мидии, Баку, 1960, էջ 65: Կութիների ու ուտիների նույնությունն է նշում նաև Զ. Յամպոլսկին (տե՛ս նրա О значении слова "ван" в имени Нахичевань (к анализу имени Нахичевань), Известия Ан Аз ССР, 1961, N1, с. 16.

[195] И. Алиев, История Мидии, с. 66.

[196] Նույն տեղում: Կաղանկատվացու հիշատակած «կետարացիները» ուղղելի են «կիտիացիների», ինչպես է այս գլխի աղբյուրում՝ «Անանուն ժամանակագրության» մեջ (էջ 5): Սրանք արդեն Կիպրոս կղզու քաղաքներից Կիտիոնի բնակիչներն էին և, բնականաբար, ոչ մի կապ չէին կարող ունենալ Ատրպատականի հետ: Բայց որպեսզի ստեղծվի որևէ կապ, Ի. Ալիևը դիմում է «կետարացիներ ¬ ketari, kedari» ձևին, որից դուրս է գցում, ըստ նրա, ծագում և պատկանելություն ցույց տվող /a/ չ վերջածանցը, առանձնացնում է et, ked արմատը, որն էլ իր հերթին, սկզբի k-ի կորուստով, վերածվում է e , ed -ի, որի ձևը հանդիպում է etiune էթնիկական անվան մեջ (И. Алиев, История Мидии) և դրանով նմանության կամ ազգակցական կապեր է տեսնում Ատրպատականի բնակչության մի մասի և ուտիների միջև, որ, նրա կարծիքով, նշանակում է և աղվանացիների միջև, քանի որ, իբրև թե հայկական աղբյուրները աղվանացիներին կոչել են ուտիացիներ, իսկ նրանց երկիրն էլ «Ուտիք» (տե՛ս նրա История Мидии, էջ 67): Կուրից հյուսիս գտնվող և արհեստականորեն «Ադրբեջան» տեղանունը ստացած տարածքի բնակչության և Ատրպատականի բնակչության նույնությունն են ձգտում ցույց տալ նաև այլ հեղինակներ (տե՛ս З. Ямпольский, К вопросу об одноименности древнейшего населения Атропатены и Албании, с. 100-108).

[197] С. М. Казиев, Из истории Кабалинского магала (на азерб. яз.) (Сб. Вопросы истории.. Албании, с. 104-105); И. М. Джафарзаде, Наскальные изображения Кобыстана (Азербайджанская ССР), В кн. Археологические исследования в Азербайджане, Баку, 1965, с. 23; Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века, М., 1975, с. 61 и рис. 1, на с. 56; Д. Н. Рустамов, Ф. М. Мурадова, "Кяниза – стоянка каменного века, Археологические и этнографические изыскания в Азербайджане (1975 г.), Баку, 1978, с. 5-10; Их же, Археологические исследования в Гобустане в 1978г., Там же, Баку, 1982, с. 5-8.

չափերով, ձևերով (քառանկյուն, ձվաձև կամ կլոր) ու դամբարանանյութով ասվածի պերճախոս վկայություններն են: Տարբեր կրոնական պատկերացումներ ու դրա հետ մեկտեղ և տարբեր էթնիկական միավորների գոյություն են արտահայտում նաև թաղման ձևերը. կծկված ու կիսակծկված, կողքի կամ մեջքի վրա, միայնակ ու զույգային, կմախքի՝ հյուսիս-հարավ, հյուսիս-արևմուտք, հարավ-արևելք ուղղվածությամբ և այլն[198]: Ամեն մի էթնիկական խումբ ունեցել է իր բնակության վայրը, տարածվածության սահմաններն ու այդ սահմաններում գտնվող դամբարանադաշտը: Յուրաքանչյուր այդպիսի դամբարանադաշտի պեղումները ընդհանուր բնույթի դամբարանային նյութերից բացի ի հայտ են բերել նաև ուրիշ տեխնիկայով ու եղանակով պատրաստված նյութեր, որոնց միևնույն այդ էթնիկական խմբերի պատկանելը կասկած չի հարուցում: Սա ուշագրավ երևույթ է և ցույց է տալիս ազգակից մեծ էթնիկական խմբավորումների մեջ ավելի փոքր էթնիկական խմբերի գոյությունը և դրանով իսկ աղվանական ցեղերի մեջ տեղի ունեցող էթնիկական առանձին խմբավորումների միավորման ընթացքը: Կասկած չի կարող լինել, որ հնագույն շրջանի այս դամբարաններն ու դրանցում հայտնաբերված հնագիտական նյութը պատկանել են երկրի բնիկներին և տվյալ նյութական մշակույթի կրողներն էլ հենց կազմել են այն միջուկը, որի շուրջը համախմբվում էին մնացած ցեղերը: Վերջիններիս մեջ քիչ թիվ չեն կազմել նաև եկվորները, որոնց գոյությունը տեղաբնիկների հետ կողք կողքի ապացուցվում է նույնպիսի դամբարանների պեղումներով: Մեզ հետաքրքրող տարածքում կատարված հնագիտական պեղումների ժամանակ բացվել են նաև ձիերի կմախքներով ուղեկցվող թաղումներ՝ իրենց դամբարանային նյութի յուրահատկությամբ (բրոնզե բռնակներով ակինակներ, սկյութական նետասլաքներ, գիշատիչ կենդանիների պատկերներով զարդարված ապարանջաններ, կլոր, բրոնզյա հայելիներ և այլն), որոնք, ըստ ուսումնասիրողների օտարամուտ ցեղերի, մասնավորապես սկյութերի թողած մշակույթի հետքեր են[199]: Երկրի արևմտյան մասում դիտվում էր արևելավրացական ցեղերի՝ քարթերի ու կախերի ներթափանցման երևույթ[200]:

Այսպիսով, աղվանական ցեղերի մեջ տարբերվում են հիմնականում երկու էթնիկական բաղադրիչներ՝ տեղական, որոնք, ըստ ուսումնասիրողների, պատկանում են իբերո-կովկասյան լեզվաընտանիքին[201] և դրսեկ, որոնք իրենց

[198] О. Ш. Исмизаде, Ялойлутепинская культура; К. Алиев, Кавказская Албания, с. 145 и сл. Ուշադրության է արժանի այն փաստը, որ Կուրից հարավ դիտվել են հիմնականում կարասային թաղումներ, որոնք էլ կազմել են Ադրբեջանի հնագիտական մշակույթի առանձին աշխարհագրական շրջան (տե՛ս И. М. Джафарзаде, Развитие археологических работ в Азербайджане, с. 133): Սրանց հատկանշական են մանավանդ զույգային թաղումները (տե՛ս О. А. Даниелян, Парное погребение в кувшине из Мингечаура, ДАН, АзССР, 1959, т. XV, N 3, с. 263-268; Т. И. Голубкина, Археологические исследования и раскопки кувшинных погребений в Азербайджане в 1953 г., Известия АН АзССР, 1951, N 1 ,с. 17-38).

[199] Б. Б. Пиотровский, Археология Закавказья с древнейших времен до I тысячелетия до н. э., Л., 1949, с. 120; И. М. Джафарзаде, Археологические разведки на Апшероне, Известия АН АзССР, 1948, N 6, с. 87; М. Н. Погребова, Закавказье и его связи с Передней Азией в скифское время, М. 1984, с. 27-31 и сл., карта N 1 на с. 35.

[200] С. Т. Еремян, Экономика и социальный строй Албании III-VII вв., с. 304; Д. Л. Мусхелишвили, Из исторической географии... Грузии.

[201] А. И. Болтунова, Племена обитавшие на территории Азербайджана в I тысячелетии →

հերթին բնորոշվել են որպես իրանալեզու-սկյութական լեզվաընտանիքին պատկանող ցեղեր[202]: Եվ հենց այս ցեղերն էլ սկսում են աղվանական ժողովրդի կազմավորման գործընթացը, որ, սակայն, երկրի՝ տարբեր աշխարհագրական ու տնտեսական շրջանների բաժանվածության , մինչև վերջ էլ անհաղթահարելի մնացած բազմացեղայնության ու սոցիալ-քաղաքական մի շարք հանգամանքների պատճառով, ավարտին չի հասնում: Վերջին հանգամանքը Աղվանից աշխարհի պատմության առանձնահատկություններից մեկն է, որով և տարբերվում է էթնիկական մի ընդհանրության հասած հարևաններ Մեծ Հայքի ու Վիրքի պատմությունից: Հետևաբար, ճիշտ չէ և նույնիսկ ավելորդ, աղվանական չկազմավորված ժողովրդի մեջ փնտրել տնտեսական ու ռազմական տեսակետից հզոր այն ցեղերին, որոնք, համախմբելով մնացած բոլորին, իբր գլխավորել են ժողովրդի կազմավորումը և այդպիսիք համարել կամ աղվանացիներին, կամ կութի-ուտիներին[203]:

Նման կարգի պարագաների անտեսումը ու, մանավանդ, մտածված ձևով շրջանցումը, անխուսափելիորեն հանգեցնում է պատմական կոպիտ սխալների և անպտուղ բանավեճերի առիթ դառնում:

Ցեղային խայտաբղետությունը, առանձին ցեղերի միմյանց հետ փոխհարաբերությունների մեջ մտնելու դժվարությունները[204] ու մեկ, միասնական լեզվով ու մշակույթի ընդհանուր տարրերով հանրույթի չհասնելը եղան այն նախապայմանները, որոնք պայմանավորեցին աղվանացիների աստիճանական ձուլումն ու անհետացումը պատմության թատերաբեմից: Նրանց էթնիկական ձուլումն սկսվում է արաբական նվաճումներով՝ VII-VIII դարերում, ավելի արագանում երկրամասը թուրք-սելջուկների կողմից նվաճվելուց հետո՝ XI դարի երկրորդ կեսին: «Անդրկովկասի և Փոքր Ասիայի լեզվական թյուրքացման մեջ թյուրքերը կարևոր դեր են սկսում խաղալ միայն XI-XII դդ.՝ Առաջավոր Ասիայում Սելջուկյան տերության կազմավորումից հետո, այստեղ օղուզական ցեղերի լայն ներթափանցմամբ»[205]: Եվ այդ գործընթացն այնքան արագ է ընթանում, որ այսօրվա ադրբեջանական ժողովրդի ձևավորմանը՝ XV-XVII դդ. մասնակցում էին ոչ թե վաղուց ձուլման ենթարկված աղվանացիները, այլ հիշյալ օղուզական ցեղերը: Ուստի անիմաստ է կարծել, թե աղվանացիները ժամանակակից ադրբեջանական ժողովրդի նախնիներն են: Այսպիսի մտայնության ամլությունն էլ ավելի ցայտուն է դառնում, երբ նկատի է առնվում այն իրական փաստը, որ աղվանացիները պատկանում էին իբերո-կովկասյան լեզվախմբին, իսկ ժամանակակից ադրբեջանական ժողովուրդը՝ թուրքական լեզուների օղուզական խմբին[206]:

←
до н.э., с. 224; А. П. Новосельцев и др., Пути развития феодализма, с. 39.Աղվանքում կատարված պեղումները բացահայտել են նաև կատակոմբային թաղումներ, որոնք պատկանում են ավելի ուշ շրջանում (մ.թ. I դար) Աղվանք ներթափանցած ալանական ցեղերին (տես И. Алиев, Г. Асланов, Племена сармато-аланского круга..., с. 230-231).

[202] И. Алиев, История Мидии, с. 67.

[203] И. Алиев, О первых племенных союзах на территории Азербайджана, Баку, 1959, с. 4; Его же, История Мидии, с. 67; К. Алиев, Кавказская Албания, с. 143.

[204] Страбон, XI, IV, 6.

[205] Р. А. Гусейнов, Тюркские этнические группы XI-XII вв. в Закавказье, Тюркологический сборник, 1972, М., 1973, с. 375-376.

[206] Ժամանակակից Ադրբեջանի տարածքում XI-XIII դարերում թյուրքական տարրերի արագ →

***

Գրավոր ու անգիր աղբյուրները, նյութական ու հոգևոր մշակույթի հուշարձանները Աղվանքը պատկերում են որպես խիտ բնակեցված մի երկիր, որի բնակիչները բարձրահասակ են, գեղեցիկ ու վայելչակազմ[207]: Հայտնաբերված գերեզմանադաշտերի ընդգրկած հսկայական չափերը, դամբարանների խտությունը՝ միմյանցից 40-50 սմ հեռավորությամբ[208], ասվածի իսկական վկայությունն են, որ հաստատվում է նաև նրանց զենքի կոչած ռազմիկների թվաքանակով: Ըստ Ստրաբոնի ու Պլուտարքոսի, աղվանացիները պատերազմների ժամանակ կարող էին դուրս բերել 60 հազար հետևակ ու 22 հազար հեծելազոր[209]:

Հունա-հռոմեական հեղինակների բազմաթիվ վկայությունների համաձայն, աղվանացիները ռազմատենչ ցեղեր էին[210], և կռվում էին հեծյալ ու հետևակ, թեթևազեն ու ծանրազեն, ինչպես հայերը[211]: Նրանք զինվել են աղեղներով, տեգերով, կրել զրահներ ու երկարավուն, մեծ վահաններ, պաշտպանվել գազանի մորթուց պատրաստված սաղավարտներով[212]: Պեղումների ժամանակ հայտնաբերված սպառազենքի՝ մարտական եղանների, սրերի, դաշույնների, նետասլաքների, նիզակների, սաղավարտների, օղազրահների ու վահանների մնացորդները[213], հաստատելով սկզբնաղբյուրների տեղեկությունները, վկայում են աղվանացիների՝ ժամանակի ռազմական առաջնակարգ տեխնիկայով զինված լինելու մասին:

Աղվանացիները հիմնականում զբաղվել են հողագործությամբ ու անասնապահությամբ: Այս մասին, բացի գրավոր աղբյուրների հաղորդումներից[214], ունենք նաև պեղումներից հայտնաբերված նյութական ապացույցներ՝ երկրագործական գործիքներ՝ մանգաղներ ու աղորիքներ, եղաններ ու կտրիչներ, դանակներ, հացահատիկի մնացորդներ, ընտանի կենդանիների՝ եզների ու այծերի, խոզերի ու վարազների, շան, ձիերի ու ջորիների, ինչպես նաև ընտանի թռչունների ոսկորների մնացորդներ[215]: Պեղումների շնորհիվ բացված՝ հացահատիկ պահելու

←
ներթափանցման, երկրի թյուրքացման և այդ գործընթացում օղուզական ցեղերի ունեցած դերի մասին տե՛ս В. В. Бартольд, Краткий обзор истории Азербайджана, Сочинение, т. II, ч. I, с. 778; Его же, Двенадцать лекций по истории турецких народов Средней Азии, т. V, М., 1968, с. 96; А. А. Ализаде, К некоторым вопросам , относящимся к истории владычества сельджуков на Среднем Востоке и в Закавказье. Сб. Вопросы истории народов Кавказа, Тбилиси, 1966, с. 268; А. П. Новосельцев и др., Пути развития феодализма, с. 56-57.

207 Страбон, XI, IV, 4

208 О. Ш. Исмизаде, Ялойлутепинская культура, с. 25.

209 Страбон, XI, IV, 5; Плутарх, Помпей, XXXV, (վերջինս աղվանական հեծյալզորի թիվը ցույց է տալիս 12 հազար (տե՛ս նույն տեղում):

210 Страбон, XI, IV, 1; Присциан, Землеописание, ВДИ, 1949, N 4, с. 302.

211 Страбон, XI, IV, 4.

212 Նույն տեղում, XI, IV, 5.

213 А. А. Алиев, Сравнительный анализ археологических находок с письменными источниками об оружии албанов (IVв. до н. э. – III в. н. э.), Известия АН АзССР, 1981, N 1, с. 66-70, таблица I-II (на азерб. яз.). Дж. А. Халилов, Материальная культура, с. 136-139.

214 Страбон, XI, IV, 1-3.

215 О. Ш. Исмизаде, Ялойлутепинская культура, с. 26.

համար նախատեսված տնտեսական հորերն ու կարասները, գարու և ցորենի ածխացած մնացորդները[216], հայտնաբերված պաշտամունքային նշանակություն ունեցող եզան արձանիկները ընդգծում են, որ տնտեսության մեջ հողագործությունը եղել է առաջատար ճյուղ:Հողն ունեցել է մեծ բերքատվություն, որն էլ պայմանավորել է նրա մշակման ցածր տեխնիկան: Երկար ժամանակ տիրապետող է եղել բրիչային հողագործությունը և, միայն մ.թ.ա. 1-ին հազարամյակի վերջերին գործածության մեջ է մտնում փայտե արորը: Երկաթե խոփը գործածական չէր նույնիսկ Ստրաբոնի ժամանակներում: Ի տարբերություն Հայաստանի, ուր գոյություն ուներ հողի մշակման երկդաշտյան համակարգ[217], Ալբանիա-Աղվանքում հողը հարոս չէր թողնվում: Հողի բերքատվությունը վերացրել էր դրա անհրաժեշտությունը: Ապագա Աղվանքի հողագործ ցեղերը բերքը հավաքել են նախ օբսիդիանե կամ կայծքարե ներդիրներ ունեցող, ապա և մետաղյա մանգաղներով: Ստացված հացահատիկը թեփից առանձնացրել են քարե սանդերում՝ մանրելով, փշրելով և մշակման ենթարկելով քարե հատուկ աղորիքներով: Հավանաբար օգտագործվել է նաև կամը, որն ընդհանրապես Անդրկովկասի ժողովուրդների տնտեսության մեջ գործածական է եղել դեռևս խոր հնադարից[218]: Մոտավորապես հին ու նոր դարերի սահմանագլխին ի հայտ է գալիս ձեռքի աղացը՝ երկանքը ու կիրառվում ցորենն աղալու և ալյուր ստանալու համար[219]:

Աղվանից աշխարհում հողի ոռոգումը կատարվել է հիմնականում բնական ճանապարհով: Սակայն Ստրաբոնի այն արտահայտությունը, թե Ալբանիայում հողը ոռոգվում է նաև «այլ ջրերով»[220], Կ. Տրևերին բերել է այն ճիշտ եզրակացության, որ այստեղ գոյություն է ունեցել նաև արհեստական ոռոգման համակարգ[221]: Արհեստական պարզունակ ոռոգման հետքեր են ի հայտ բերել նաև հնագիտական պեղումները[222]:

Աղվանական ցեղերի գլխավոր զբաղմունքներից մեկը եղել է անասնապահությունը, որի գոյության ու զարգացման համար ևս կային բարենպաստ պայմաններ՝ ընդարձակ արոտվայրեր, փարթամ մարգագետիններ և այլն: «Նրանց (ալբանացիների - Հ. Ս.) երկրում,- գրում է Ստրաբոնը,- հավասարապես լավ են բազմանում նաև անասունները՝ ինչպես ընտանի, այնպես էլ վայրի»[223]: Տնտեսության այս ճյուղը աղվանական ցեղերի մոտ կրել է քոչվորական կամ կիսաքոչվորական (յայլաղային) բնույթ: Նրանք պահել են խոշոր ու մանր եղջերավոր անասուններ՝ կովեր, եզներ, ոչխար, այծ, խոզ: Գերակշռել են մանր եղջերավոր անասունները[224]: Խոշոր եղջերավոր անասուններն հիմնականում քաշող ուժ էին: Նրանք նպաստել են նաև կաթնային տնտեսության առաջացմանը:

216 И. Алиев, Ф. Османов, Бассейн рек ..., с. 197. Дж. А. Халилов, Материальная культура..., с. 164-165.

217 С. Т. Еремян, Рабовладельческое общество древней Армении (Автореф. док. дис., М., 1953).

218 Հայ ժողովրդի պատմություն (բուհական դասագիրք), հ. I, Երևան, 1963, էջ 48:

219 Дж. А. Халилов, Материальная культура..., с. 133.

220 Страбон, XI, IV, 3.

221 К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 71.

222 Նույն տեղում, էջ 70:

223 Страбон, XI, IV, 3.

224 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, с. 75; И. Алиев, Ф. Османов, Бассейн рек ..., с. 197.

Եզների հետ մեկտեղ տնտեսության մեջ լայնորեն օգտագործվել են ձիերն ու ուղտերը որպես փոխադրամիջոց: Վերջիններիս կարևորությունն է՛լ ավելի է մեծանում քոչվորական անասնապահության առաջացման ու զարգացման ժամանակ:

Աղվանքում խաղողի արտադրության մասին խոսում է դեռևս Ստրաբոնը՝ տալով նաև նրա մշակման ձևերը տեղի բնակլիմայական պայմանների համեմատ: «Խաղողի որթերը,- գրում է նա,- այնտեղ (Ալբանիայում - Հ. Ս.) երբեք չեն թաղում, այլ միայն հինգ տարին մեկ անգամ կտրում են»[225]: Խաղողագործությունը նպաստել է գինեգործությանը, որի հետքերը՝ գինու կարասներ, կավանոթներ ու խաղողի ճզմիչներ հայտնաբերվել են երկրի տարբեր շրջաններում[226]: Գինու արտադրության մասին վկայում են նաև գրավոր աղբյուրները. «Գտանի ի նոսա հաց և գինի շատ»,- գրում է Մ. Կաղանկատվացին[227]:

Աղվանական ցեղերը մշակել են նաև բանջարաբոստանային ու տեխնիկական կուլտուրաներ, որոնց վկայությունները՝ բազմաթիվ ձիթհանքերի ավերակներ, հայտնաբերվել են Աղվանքի տարածքում[228]: Տեխնիկական կուլտուրաների մշակմանը նպաստել են այն «անբաւ ձիթենիք»[229], որոնք առատորեն աճում էին Աղվանից աշխարհում: Հումքի՝ ձիթենիների և մշակման միջոցների՝ ձիթհանքերի առկայությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ մարդիկ ստացել են ձիթապտղի յուղ, որը լայն գործածություն է ունեցել տնտեսության մեջ: Տեխնիկական կուլտուրաներից նրանք աճեցրել են նաև վուշ[230], բամբակ և զբաղվել մետաքսագործությամբ[231]:

Երկրագործական ու անասնապահական մթերքների, խաղողի, տեխնիկական կուլտուրաների մշակումը, որը, աշխատատար լինելով հանդերձ, պահանջում էր մեծ հմտություն և փորձ, խոսում է ոչ միայն տնտեսության այդ երկու գլխավոր ճյուղերի բարձր զարգացման, դրանց յուրաքանչյուրի բազմաճյուղայնության, այլև երկրամասի բնակչության մտավոր ու ֆիզիկական կարողությունների մասին: Նրանք հմտորեն էին օգտվում բնական հարստություններից ու բարենպաստ պայմաններից:

Ուսումնասիրվող երկրամասում մարդիկ զբաղվում էին նաև որսորդությամբ և ձկնորսությամբ: Վայրի կենդանիների, թռչունների, ձկների առատությունը լայն հնարավորություններ էին ստեղծում այդ զբաղմունքների համար: Պեղումների ժամանակ հայտնաբերված դրանց ոսկորները պերճախոս վկայություններն են տնտեսության մեջ որսորդության ու ձկնորսության բոլորովին էլ ոչ պատահական բնույթի մասին: Որսորդության ժամանակ համարյա միշտ օգտագործել են շունը և բազեն: Կալաքենդի պեղումներից հայտնաբերված բրոնզե գոտու վրա

[225] Страбон, XI, IV, 3.

[226] Дж. А. Халилов, И. А. Бабаев, О городах древней Албании, СА, 1974, N 4, с. 105; Дж. А. Халилов, Материальная культура..., с. 133-134.

[227] Կաղանկատվացի, Ա, գլ. Ե:

[228] С. М. Казиев, Археологические раскопки в Варташенском и Куткашенском районах в 1945 г. (Сб. экспедиции АН АзССР, Баку, 1947, с. 143-147); О. Ш. Исмизаде, Итоги археологического исследования, с. 81.

[229] Կաղանկատվացի, Ա, գլ. Ե:

[230] С. М. Казиев, Археологические памятники Мингечаура..., с. 172.

[231] Կաղանկատվացի, Ա, գլ. Ե:

պատկերված է որսորդական տեսարան որսի շներով[232]: Շների ու բազեների ուղեկցությամբ որսի տեսարաններ կան նաև Քոբիստանի ժայռապատկերներում[233], իսկ Ստրաբոնը գրում է. «Ինչպես իրենք՝ ալբանացիները, այնպես էլ նրանց շները արտակարգ հակում ունեն որսորդության նկատմամբ»[234]: Աղվանից երկրում շների և տնտեսության մեջ նրանց օգտագործման մասին խոսում են նաև Պլինիոս Ավագն ու Հուլիանոս Սոլինը[235]:

Աղվանից աշխարհում ձկնորսությամբ զբաղվել են հիմնականում այն ցեղերը, որոնք ապրել են Կասպից ծովի ափին ու գետերի մոտ: Նրանց համար ձկնորսությունը եղել է ապրուստի հիմնական միջոց: Կլավդիոս Էլիանոսի նկարագրությունից երևում է, որ նրանք որսացել են «սրաքիթ» մեծ ձկներ՝ թառափ, օգտագործելով թարմ, աղ դրած կամ ծխեցրած ու չորացրած վիճակում[236]:

Ձուկը մերձկասպյան ժողովուրդների մոտ ոչ միայն սննդամթերք էր, այլև կենցաղային իրերի պատրաստման համար հումքի անսպառ աղբյուր: Այն ներքին ու արտաքին շուկայում նաև փոխանակման ու վաճառքի ապրանք էր: Չորացրած ու աղ դրած ձկան արտահանումը կատարվում էր ուղտերի միջոցով, որոնց քարավանները հասնում էին նույնիսկ մինչև Էկբատան[237]:

Ձկան մշակման գործում հասնելով մեծ հմտության, նրանք ձկան յուղից պատրաստում էին զանազան քսուքներ, իսկ մաքուր յուղից՝ անուշահոտ օծանելիքներ, որոնցով օծում էին իրենց մարմինները, հանելով փորոտիքը՝ եփում խիստ թափանցիկ, մեծ ամրությամբ օժտված բարձրորակ սոսինձ: Այն լայնորեն օգտագործվել է կիրառական արվեստի նշանակություն ունեցող այնպիսի նուրբ ճյուղի մեջ, ինչպիսին փղոսկրյա իրերի արտադրությունն էր[238]:

Ընդհանրապես ուսումնասիրվող երկրամասի բնակիչներն իրենց ժամանակի համեմատ ունեին զարգացած արհեստագործություն: Տեղական հումքի բնական պաշարները, որակյալ կավի, պղնձի հանքերի, ուղտի բրդի ու այծի մազի, վուշի ու բամբակի առատությունը մեծ հնարավորություն են տվել նրանց զբաղվելու արհեստագործության այնպիսի ճյուղերով, ինչպիսիք էին կավագործությունը, մետաղագործությունը, մանածագործությունը, կաշեգործությունը, ոսկերչությունը՝ սրանից բխող, օժանդակ շատ այլ մասնագիտություններով: Հնագիտական նյութերը պարզորոշ խոսում են նրանց արհեստագործական հմտությունների ու կարողությունների մասին: Գեղեցիկ, լավ թրծված ու փայլեցված նախշազարդ կավե անոթները, բրոնզե և երկաթե գործիքները, զենքերն ու զարդերը, վուշե և բրդյա հագուստների մնացորդները վկայում են բարձր զարգացման հասած արհեստագործության տարբեր ճյուղերի մասին: Նույն ձևով հայտնի է դառնում, որ ապակեգործությունը ևս անծանոթ չէր Կուրի ձախափնյակում[239]:

[232] Б. Б. Пиотровский, Археология Закавказья, с. 79.
[233] И. М. Джафарзаде, Наскальные изображения, с. 19.
[234] Страбон, XI, IV, 5.
[235] Pliny, Natural History, 8; ВДИ, 1949, N 3, с. 243.
[236] Известия древних писателей..., т. 1, с. 606.
[237] Նույն տեղում:
[238] Նույն տեղում, էջ 606-607:
[239] И. А. Бабаев, О трех стеклянных многогранных печатях, найденных в Мингечауре, Археологические исследования в Азербайджане, Баку, 1965, с. 128-133; А. Б. Нуриев, Стеклянные изделия и их производство в Кавказской Албании, Баку, 1981 (на азерб. яз.); Дж. А. Халилов, Материальная культура..., с. 177 и сл.

Աղվանից աշխարհը բնակեցնող ցեղերը զբաղվել են նաև առևտրով: Ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ նրանց մոտ առևտուրը սկզբնական շրջանում արտահայտվել է բնամթերային ապրանքափոխանակության ձևով, որը նրանց կենցաղում գոյատևել է բավականին երկար ժամանակ: Նույնիսկ Ստրաբոնը դեռևս իր ժամանակներում հիշատակում է առևտրի այս ձևը, որպես նման հարաբերություններում գործող հիմնական միջոց[240]: Հավանաբար նույնպիսի ապրանքափոխանակության փաստի մասին է խոսում և Դիոն Կասսիոսը, գրելով. «Պոմպեոսի մարտիկները Աղվանքում բացի ջրից մնացած ամեն ինչ ... ստանում էին տեղաբնիկներից կամավոր կերպով»[241]: Փոխանակության նյութ են եղել գյուղատնտեսական մթերքների ավելցուկը, աշխատանքի գործիքները, կենցաղային զանազան իրեր, զարդեր և արհեստագործական այլ ապրանքներ: Ստրաբոնի ժամանակներում նրանց դեռևս անծանոթ էր դրամի, ճշգրիտ չափի ու կշռի գործածությունը: Նրանք հարյուրից ավելի հաշվել չգիտեին և ապրում էին պարզ նահապետական կենցաղով, պետական գործերի նկատմամբ անտարբեր[242]:

Նրանք պաշտել են Արևին, Լուսինին, Զևսին: Հատկապես Լուսինին, որին նվիրված մի սրբավայր է հիշատակում Ստրաբոնը Իբերիայի սահմանների մոտ[243]: Աստեղային այս երկրպագության հետքերը արտահայտվել են նաև խեցեղենի վրա: Պաշտամունքային առարկաներ էին բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչները[244]: Պաշտամունքային նշանակություն են ունեցել նաև հայտնաբերված կանացի կավե արձանիկները[245]: Աղվանացիներն իրենց աստվածների պատվին կառուցել են տաճարներ և զոհեր մատուցել: Զոհաբերվել են նաև մարդիկ, որի նկարագրությանն ենք հանդիպում Ստրաբոնի մոտ[246] և Քոբիստանի ժայռապատկերներում[247]: Ավելի ուշ ժամանակների համար մարդկային զոհաբերության նկարագրություն ունի և Մ. Կաղանկատվացին[248]: Տաճարներին կից ստեղծվում էին տաճարային ընդարձակ և խիտ բնակեցված տնտեսություններ, որոնց գլուխ իբրև «սրբազան մարզերի»՝ կանգնած էին քրմերը՝ թագավորից հետո ամենահարգված մարդիկ աղվանացիների մոտ[249]:

Բացի ընդհանուր այս աստվածություններից ու պաշտամունքային առարկաներից, աղվանական 26 ցեղերից յուրաքանչյուրն ունեցել է նաև իր՝

---

[240] Страбон, XI, IV, 4.
[241] Դիոն Կասսիոս, XXXVII, 3, 6:
[242] Страбон, XI, IV, 4.
[243] Նույն տեղում, XI, IV, 7. Այս լուսատուին նվիրված սրբավայրը, ըստ Յու. Ռ. Ջաֆարովի, գտնվել է իբրև թե Ղազախի շրջանում (տե՛ս Ю. Р. Джафаров, О локализации храмовой области Кавказской Албании, ВДИ, 1985, N 2, с. 106-107), բայց սա չի կարող ճիշտ լինել այն պարզ պատճառով, որ Աղվանքի սահմանները ուսումնասիրվող ժամանակաշրջանում սահմանափակվել են Կուր գետի ընթացքով և, պարզ է, որ նրա գլխավոր աստվածություններից մեկին նվիրված տաճարը չէր կարող գտնվել երկրի սահմաններից դուրս:
[244] О. Ш. Исмизаде, О зооморфной керамике из Каратепе, ДАН, АзССР, 1959, т. 15, N 1, с. 93-97 (на азерб. яз.)
[245] Дж. А. Халилов, Каменные статуи из Хынысли, ДАН АзССР, т. 16, N II, 1966, с. 1128 (на азерб. яз). Նույնի՝ Материальная культура..., с. 124, табл. XXIII.
[246] Страбон, XI, IV, 7.
[247] И. М. Джафарзаде, Наскальные изображения, с. 19-20.
[248] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԸ:
[249] Страбон, XI, IV, 7.

սեփական, տեղական աստվածությունն ու պաշտամունքային առարկան: Այստեղ տարբեր ցեղային պաշտամունքների գոյության փաստեր են թաղման տարբեր ձևերը՝ գետնափոր, կարասային, կատակոմբային, կավարկղային և այլն: Առանձին ցեղերի մոտ թաղումները ուղեկցվել են դամբարանում խարույկներ վառելով և առաջացած մոխրի վրա հանգուցյալին դնելով, որ, ըստ նրանց, կատարում էր սրբագործման դեր[250]: Ի դեպ, հարկ է նշել, որ խարույկներով ուղեկցվել են միայն հարուստ ու անվանի մարդկանց թաղումները[251]:

Աղվանացիները խորին հարգանքով էին վերաբերվում իրենց նախնիներին: Մեռածների մասին խոսելը համարվում էր սրբապղծություն: Նախնիների հանդեպ տածած նման երկյուղածությունը զուգակցվում էր ինչպես սեփական ծնողների, այնպես էլ ընդհանրապես ծերության նկատմամբ հոգատարությամբ ու հարգանքով[252]: Մեռածների հետ դրվում էր նրանց ամբողջ ունեցվածքը, որի պատճառով էլ աղվանացիները, փաստորեն զրկված լինելով հայրական ժառանգությունից, մշտապես ապրում էին աղքատության մեջ[253]:

Աղվանացիների սոցիալ-տնտեսական կյանքի, կենցաղի, սովորույթների ու հավատալիքների մասին այս համառոտ նկարագիրը հավասարաչափ չի կարող բնութագրել հույն աշխարհագետի հիշատակած և Աղվանքը բնակեցրած բոլոր 26 ցեղերին, որովհետև նրանք գտնվում էին սոցիալ-տնտեսական զարգացման ոչ հավասար մակարդակի վրա: Բայց և այնպես, նրանց պարզունակ կյանքի, նահապետական կացութաձևի, կենցաղի շատ հարցերի հանդեպ ունեցած անտարբերությունն ու անհոգությունը պատկերում են գրեթե ողջ Աղվանքն ու նրա բնակիչներին հին ու նոր դարաշրջանների սահմանագլխին[254]:

Աղվանից աշխարհում հասարակական կյանքի զարգացումն ընթանում էր բնակլիմայական բարենպաստ պայմաններում: Հասարակության գոյության անհրաժեշտ պայմաններից մեկը՝ աշխարհագրական միջավայրը՝ ընդարձակ դաշտավայրերով, բերքառատ հովիտներով, ալպիական փարթամ մարգագետիններով, բազմազան բուսական ու կենդանական աշխարհով, հարուստ օգտակար հանածոներով, Աղվանքում ևս իր որոշակի կնիքն էր դնում հասարակության զարգացման վրա: Այստեղ ևս մարդիկ, անցնելով հասարակության զարգացման բոլոր փուլերը, սկզբնական շրջանում նախնադարյան հոտեր (մարդկային հասարակության ամենապարզ ձևը), ապա տոհմեր ու ցեղային միություններ կազմած, մ.թ.ա. I դարի սկզբներին հասնում են իրենց որոշակի պետական-քաղաքական սահմաններն ունեցող պետականությանը:

---

[250] Дж. А. Халилов, Материальная культура..., с. 60, 74-75.
[251] Նույն տում:
[252] Страбон, XI, IV, 8.
[253] Նույն տեղում:
[254] Հ. Ս. Սվազյան, Ստրաբոնի աղբյուրները..., էջ 95-104:

# ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԸ ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ-ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԵՎ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԵՐԻ ԾՐՋԱՆՈՒՄ

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ՑԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՂՎԱՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

### Ա. Կասպերի ցեղային միությունները Աքեմենյան տերության կազմում (մ.թ.ա. VI-մ.թ.ա. IV դար)

Պատմահայր Հերոդոտոսի հաղորդումներից մեկի համաձայն, պարսկական տերության սահմանները հյուսիսում հասել էին մինչև Կովկասյան գլխավոր լեռնաշղթա[1]: Այսպիսի աներկբա վկայությունը թույլ է տալիս պնդելու, որ ուսումնասիրվող երկրամասը ժամանակին գտնվել է պարսկական տիրապետության ներքո և, որպես նրան հպատակ երկիր, ենթարկվել քաղաքական ու վարչական այն բոլոր փոփոխություններին, որոնք թելադրվում էին հին աշխարհի նվաճողների կողմից: Աղբյուրները Անդրկովկասի այս հատվածում պարսկական տիրապետության տարածման ժամանակի մասին ոչինչ չեն հաղորդում: Բայց ելնելով հերոդոտյան տեղեկությունից, ենթադրվում է, որ երկրամասը Պարսկաստանի կողմից նվաճվել է ավելի վաղ, քան Հերոդոտոսի ապրած ժամանակներն էին, քան մ.թ.ա. V դարը: Ըստ որոշ ուսումնասիրողների, դա կարող էր տեղի ունեցած լինել Դարեհ Ա-ի ժամանակներում և նրա կողմից[2]: Սակայն, ինչպես ցույց է տալիս Դարեհի քաղաքական գործունեության պատմական քննությունը, իշխանության գլուխ անցնելուց և երկրի ներքին մի շարք խնդիրներ լուծելուց հետո, նոր նվաճումների ելած արքայից արքայի արշավուղիներից և ոչ մեկը ուղղված չի եղել դեպի մերձկասպյան մարզեր[3]: Հետևաբար, սրանք մինչև Դարեհը արդեն կազմում էին Աքեմենյան տերության ենթակա մարզերից մեկը: Նույն պատճառով նրանք չէին կարող նվաճված լինել նաև Դարեհ Ա-ի անմիջական նախորդի՝ Կամբյուսեսի կողմից: Վերջինս նույնպես մեզ հետաքրքրող ուղղությամբ արշավանքների դուրս չի եկել և իր կարճատև թագավորության ընթացքում (529-522 թթ.) ամբողջ ուշադրությունը բևեռել է միայն Եգիպտոսի ու աֆրիկյան երկրների նվաճման վրա: Անկասկած է, որ Կասպից ծովի արևմտյան ափի հպատակեցումը տեղի է ունեցել Կամբյուսեսից էլ առաջ, ուրեմն՝ Կյուրոս Մեծի օրոք ու նրա կողմից:

Մ.թ.ա. 550 թ. Պարսուա-Պարսքի թագավոր Կյուրոսը (558-529 թթ.) հաղթելով Մարաստանի թագավոր Աստիագեսին (հայկական աղբյուրների Աժդահակին), դնում է մի նոր տերության՝ Աքեմենյան Պարսկաստանի հիմքը[4] և կարճ ժամանակում, լայն նվաճողական քաղաքականության շնորհիվ, գրավում Հայաստանը, Կապադովկիան, Լյուդիան և Բաբելոնը: Նվաճված երկրներից

[1] Геродот, История в девяти книгах, Пер. и пр. Г. А. Стратановского, Л., 1972, III, 97.

[2] PWK, 1910, $X_2$, с. 2272; К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 51.

[3] М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М., 1961, с. 89-93; И. М. Дьяконов, История Мидии, М.-Л., 1956, с. 343-346.

[4] М. М. Дандамаев, Иран при первых ахеменидах (IV в. до н. э.),М., 1963, с. 105.

Հայաստանը գրավում է շուրջ մ.թ.ա. 546 թ.[5], ուստի հավանական է կարծել, որ լյուդիական արշավանքին նախապատրաստվելիս, թիկունքը ապահովելու նպատակով, Հայաստանը գրաված Կյուրոսը, որ դեռևս Մարական պետությանը ծառայելու տարիներին լավ էր զգացել մերձկասպյան մարզերի ռազմավարական նշանակությունը Կովկասյան լեռնանցքներին տիրելու գործում, շարժվում է դեպի Կասպից ծով և գրավում նրա արևմտյան ափի մարզերը: Այս ենթադրությունը թերևս իր որոշ հաստատումն է ստանում այն ավանդությամբ, որի համաձայն Կուր գետը, որ կոչվելիս է եղել «Կոր»[6], իբր Կյուրոսի կողմից, իր անունով, վերանվանվել է «Կուրի»՝ այն սրընթացության ու ուժգնության համար, որով, համաձայն աղբյուրների, օժտված է եղել և ինքը՝ Կյուրոս Մեծը[7]: Կարծում ենք, որ նման ավանդության հիմքում ընկած է դեպի հյուսիս կատարած արշավանքներից մեկի ժամանակ Կուր գետը Կյուրոսի կողմից կտրել-անցնելու փաստը: Այս գրավումով Աքեմենյան տերության սահմանները ընդլայնվում են՝ հասնելով մինչև Կովկասյան Գլխավոր լեռնաշղթա:

Այսպիսով, Կասպից ծովի արևմտյան ափի մարզերը, այդ թվում և ապագա Աղվանքի տարածքը, մ.թ.ա. VI դարում նվաճվում է Կյուրոս Ա-ի կողմից և այդ ժամանակաշրջանից սկսած կիսում Աքեմենյաններին ենթակա երկրների ճակատագիրը:

Նվաճվելով Կյուրոսի կողմից, երկրամասի ցեղերը, Պարսկաստանին հպատակ մյուս ժողովուրդների նման, հարկեր են վճարել և զորք տրամադրել Աքեմենյաններին: Սկզբնական շրջանում՝ Կյուրոսի և նրա որդու՝ Կամբյուսեսի օրոք այդ հարկերը կրում էին կամավոր նվիրատվությունների բնույթ և որոշակի չափ չունեին[8]:

522 թ. մ.թ.ա. պարսկական գահը անցնում է Աքեմենյան հարստության նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Դարեհ Ա Վշտասպյանի ձեռքը: Ճնշելով իր գահակալության օրերին ծագած ներքին ու արտաքին խռովությունները, Դարեհ Ա-ն, պետության կենտրոնացման ու ամրապնդման նպատակով, ողջ երկիրը բաժանում է նոր, առանձին վարչական միավորների՝ սատրապությունների և մտցնում հարկային կայուն համակարգ, յուրաքանչյուր սատրապության համար սահմանելով որոշակի ու հաստատուն հարկ[9]:

Այդ փոփոխությունների հիման վրա, մերձկասպյան ցեղերը կազմում են մեկ առանձին վարչական միավոր՝ 11-րդ սատրապությունը, որը, նոր հարկային կանոնի համաձայն, վճարելու էր 200 տաղանդ[10]: Ըստ Հերոդոտոսի, 11-րդ սատրապության մեջ մտնում էին կասպերի[11], պավսիկների[12], պանտիմաթների ու դարեյթների

[5] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 447:
[6] Страбон, XI,III, 2.
[7] Аммиан Марцеллин, История, XXIII, 6, 40.
[8] Հերոդոտոս, III, 39.
[9] Նույն տեղում:
[10] Նույն տեղում, III, 92:
[11] «Կասպեր» անունը հիշատակվում է նաև 15-րդ սատրապությունում՝ սակերի հետ մեկտեղ, սակայն նրանց բնակության վայրը համարվում է Միջին Ասիան: (Տե՛ս И. М. Дьяконов, История Мидии, с. 360)
[12] Արդյո՞ք Ստ. Բյուզանդացու մոտ հիշատակվող ցեղերից «Կովկասի տակ ապրող պավսարկները» (Известия древних писателей... , т. 1, с. 264). Նույն այս պավսիկները չեն:

ցեղերը[13]: Ինչպես երևում է Հերոդոտոսի այս հաղորդումից, նրանց շարքում աղվանացիներ չեն հիշատակվում, բայց դատելով Պարսկաստանին նրանց ենթակայությունից, պետք է որ հիշատակվեին: Ի դեպ, պատմական այդ հեռավոր ժամանակներում նրանք չեն հիշատակվում նաև այլուր: Ուսումնասիրողներն այս հանգամանքը բացատրում են նրանով, որ մինչև մ.թ.ա. IV դարը՝ մինչև պատմության մեջ «աղվանացիների» անվանական հիշատակումը[14], մերձկասպյան ցեղերը կրել են մի ընդհանուր անուն և այդ անունով էլ հանդես եկել պատմության մեջ: Նրանց կարծիքով, դա կարող էր լինել «Կասպ, «Կասպեր» անվանումը, որը գործածվել է ընդհանրապես Կասպից ծովի ափերին բնակվող ցեղերի համար[15]: Դրանում դժվար չէ համոզվել, եթե անդրադառնանք ինչպես Հերոդոտոսի, այնպես էլ ավելի ուշ շրջանի հեղինակների հաղորդումներին, որոնցում Կասպից ծովի արևմտյան ափագծի երկարությամբ հիշատակվում են միայն «կասպեր»[16], «կասպիական ժողովուրդ»[17], «կասպիացիներ» անունով ցեղեր[18]: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնելու, որ, իսկապես, հազիվ թե նշված անուններով արտահայտվեր Կասպիականի արևմտյան ափին ապրող մի որոշակի ցեղ ու ժողովուրդ: Դրանք, իրոք, Կասպից ծովի շուրջը բնակվող ցեղերի հավաքական անվանումներն էին[19]:

[13] Հերոդոտոս, III, 92: Ի. Մ. Դյակոնովը ենթադրում է, որ 11-րդ սատրապության կազմի մեջ մտել են և կատիշները (անտիկ հեղինակների կադուսիները, տե՛ս И. М. Дьяконов, История Мидии, էջ 447): Սակայն այս ենթադրությունը կարիք ունի ճշգրտման:

[14] Арриан, III, 8, 4.

[15] W. W. Ta  , A e a de  e G ea , . II, S  d e a d S  ce , Ca  b  dge, 1950, էջ 13, И. М. Дьяконов, История Мидии, с. 449, пр. 5; К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 50.

[16] Известия древних писателей, т. II, с. 116, 125.

[17] P  , Na ural H  ory, VI, 15.

[18] Известия древних писателей, т. I, с. 201, 605-608.

[19] Հավանական է, որ մերձկասպյան ցեղերին «կասպեր» ընդհանուր անունով կոչելիս, հունա-հռոմեական հեղինակները նկատի են ունեցել վերջիններիս զբաղեցրած աշխարհագրական դիրքը, տվյալ դեպքում Կասպից ծովի անունը: Այդպիսի օրինակ առկա է Պոմպոնիոս Մելայի «Երկրագրություն» աշխատության մեջ, ուր նա գրում է. «Պոնտական (ծովի) շուրջը, զբաղեցնելով առանձին մարզեր, ապրում են մի քանի ժողովուրդներ, որոնք բոլորը, կրում են մի անուն՝ պոնտական, Մեոտական լճի շուրջը՝ մեոտական» (տե՛ս ВДИ, 1949, թիվ 1, էջ 273): Պոմպոնիոս Տրոգոսը ևս, Յուստինիոսի համառոտությամբ մեզ հասած աշխատության մեջ նշում է խալիբների ցեղերի, որոնք իրենց անունը ստացել էին համանուն գետից (Юстин, Эпитома сочинеия Помпея Трога, XLIV, III, 8): Այսպիսի հետևողականությամբ, կարծում ենք, Կասպից ծովի շուրջը բնակվող ժողովուրդները կամ ցեղերն էլ պետք է անվանվեին «կասպեր»: Այս ենթադրությունը հավանական է դառնում, մանավանդ, երբ դիմում ենք Ստ. Բուզանդացու ուղղակի վկայությանը. «Կասպից ծով,- գրում է նա,- նրանից են առաջացել Կասպեր, Կասպից լեռ, Կասպիական այրեր, Կասպից երկիր և Կասպ անվանումները» (Известия древних писателей..., т. 1, с. 261): Գիտության մեջ տարածված այն կարծիքը, թե իբր ծովը «Կասպ» անունով ցեղից է իր անունը ստացել, կազմվել է Ստրաբոնի հետևյալ տեղեկության հիման վրա. «... Կասպիանա մարզը, որն այդպես է կոչվել այժմ անհետացած ցեղի անունով, որով կոչվել է և ծովը (Страбон, XI, IV, 5): Ծովի, իբր Կասպերի անունով կոչվելու մասին նրա աղբյուրը Էրատոսթենեսն է, որը, սակայն կասպերի անունից բխեցնում է ոչ թե ծովի, այլ Կովկաս լեռան անունը: Այդ մասին մեզ հայտնում է դարձյալ Ստրաբոնը իր մեկնաբանությամբ. «Էրատոսթենեսի խոսքերով,- գրում է նա,- տեղի բնակիչները Կովկասը կոչում են Կասպ, *հավանաբար վերանվանելով այդպես, «կասպեր» (ցեղի) անունով* (նույն տեղում, XI, II, 15 ընդգծ. Հ.Ս.): Ինչպես տեսնում ենք վկայության ընդգծված տողերից, Ստրաբոնն ինքն է ենթադրություններ անում «կասպ» անունով ցեղի լեռան (ապա նաև ծովի) անվանման մասին, ենթադրություն, որն այնուհետև օգտագործվել է հունա-հռոմեական հեղինակների աշխարհագրական ու պատմագիտական երկերում:

Կովկասյան ցեղերի շարքում «աղվանացիներ» չհիշատակվելու պատճառը ուսումնասիրողները համարում են այն, որ նրանք, ինչպես և մերձկասպյան մյուս ցեղերը, կրել են «կասպեր» ընդհանուր անվանումը և մտել Աքեմենյան Պարսկաստանի սատրապություններից 11-րդի մեջ[20]: Սակայն «կասպեր» հավաքական անվանումը ոչ թե արտահայտել է որոշակի «աղվանացի» ցեղի կամ ցեղերի, ինչպես սխալմամբ կարծել են ուսումնասիրողները, այլ, քանի որ այդպիսիք չեն եղել ընդհանրապես, մերձկասպյան բոլոր ցեղերին անխտիր:

11-րդ սատրապությունում հիշատակվող ցեղային միություններից պավսիկներին ու պանտիմաթներին ուրիշ ոչ մի հեղինակ չի հիշատակում: Դարեյթներին գիտի Պտղոմեոսը, որպես Մարաստանի մի մասը զբաղեցրած ցեղերի[21]: Նա և այլ հեղինակներ հաճախ են հիշատակում այս սատրապությունը կազմող մյուս ցեղային միությանը՝ կասպերին, որոնց բնակության վայրով էլ որոշվում է 11-րդ սատրապության տեղը: Կասպերի բնակության վայր Կասպից ծովի արևմտյան ափը ցույց տալով, ուսումնասիրողները, սակայն, ափագծի երկարությամբ նրանց տարբեր տեղեր են հատկացնում: Ի. Մ. Դյակոնովը, օրինակ, կասպերի բնակության վայր է ճանաչում Ապշերոնի թերակղզուց հարավ ընկած տարածությունը[22]: Վ. Վ. Մինորսկին[23] ու Ա. Ի. Բոլտունովան՝ այժմյան Մուղան-Միլի-Ղարաբաղ գոտին[24], Վ. Բարտոլդը՝ հին Կասպիանե երկրի շրջակայքը[25], իսկ Կ. Վ. Տրեվերը, հիմք ընդունելով Ստրաբոնի տեղեկությունը, ուղղակի գրում է. «Խոսելով Կասպիանեի մասին, Ստրաբոնը նկատի ուներ ոչ միայն Կուրից հարավ ընկած տարածքը, այլև նրա նախափնյակը (Ապշերոնի թերակղզին և նրան հարող մարզերը), ուր բնակչությունը մ.թ. I դարում, հնարավոր է, շարունակում էր կրել կասպերի անվանումը»[26]: Ք. Ալիևի կարծիքով, «Կասպերի բնակության վայրը գտնվել է Կուրի և Արաքսի միախառնման կետից հարավ և տարածվել դեպի հարավ, ընդհուպ մինչև Թալիշի լեռները»[27], որն այնքան էլ չի տարբերվում մինչ այդ Վ. Լևիատովի հայտնած կարծիքից[28]: Ըստ Ա. Սումբատզադեի, «հարավարևելյան մերձափնյա շերտը (Կուրից մինչև Գիլյան) ներկայացնում էր կիսանկախ 11-րդ սատրապությունը՝ «Կասպիանե» անվամբ»[29]: Այստեղից էլ պատմագիտական գրականության մեջ և քարտեզներում 11-րդ սատրապությունը սխալմամբ ցույց է տրված մի ընդարձակ տարածության մեջ՝ Կուրի աջ ու ձախ կողմերում, Արաքսից հարավ ընկած տարածքի լայն ընդգրկումով[30]: 11-րդ սատրապությունը տեղադրվել է նաև Կասպից

---

[20] И. М. Дьяконов, История Мидии, с. 447, пр. 5; К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 50.

[21] Птолемей, VI, 2, 6.

[22] И. М. Дьяконов, История Мидии, с. 359.

[23] В. В. Минорский, История Ширвана и Дербенда X-XI вв., М., 1963, с. 27.

[24] А. И. Болтунова, Племена обитавшие на территории Азербайджана..., с. 224, 226.

[25] В. В. Бартольд, Сочинения, т. II, ч. II, с. 654.

[26] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 45.

[27] К. Алиев, Кавказская Албания, с. 143.

[28] В. Н. Левиатов, Азербайджан с V в. до н. л. по III в. н. л., с. 88.

[29] А. С. Сумбатзаде, К истории Атропатеным, Известия АН АзССР, 1978, N 3, с. 51-52.

[30] А. И. Болтунова, Племена обитавшие на территории Азербайджана, с. 226 և ներդիր քարտեզի, էջ 224-225-ում: К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 44-45; И. М. Дьяконов, История Мидии, с. 336-337 ներդիր քարտեզը: М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, с. 90-91 ներդիր քարտեզը:

ծովի հարավային ափերին, Սեֆիդրուդ (Ամարդոս) գետով անցնող արևմտյան սահմանով[31]: Սակայն, 11-րդ սատրապությունը զբաղեցրել է զգալիորեն հյուսիս ընկած ու ավելի փոքր տարածք, քան ներկայացվում է:

Այս միտքը բխում է անտիկ և հայ հեղինակների տվյալներից:

Հերոդոտոսի ժամանակներում «կասպերը», լինելով Կասպից ծովի մերձափնյա ցեղերի ընդհանուր հավաքական անվանումը, ավելի ուշ՝ ցեղերի տարբերակման ժամանակ, դառնում է մի էթնիկական միավորի՝ կասպերի անունը: Ահա թե ինչու կասպերի տեղորոշման համար կարևորվում են հետագա հեղինակների ու, հատկապես, Ստրաբոնի, Պոմպոնիոս Մելայի և Դիոնիսիոսի վկայությունները: Ինչպես հայտնի է, Ստրաբոնն ունի տեղեկություններ, որոնց համաձայն հիշյալ ցեղերը գտնվում էին մի դեպքում Աղվանքի, իսկ մյուս դեպքում՝ Մարաստանի կազմում[32]: Ստրաբոնը կասպերի մասին ունի մի ուրիշ հաղորդում ևս, որն անտեսվել է ուսումնասիրողների կողմից, բայց քննվող հարցի կապակցությամբ ունի որոշակի արժեք: «Ծովի (Կասպից - Հ. Ս. շուրջը,- գրում է նա,- հյուրկաններից հետո բնակվում էին ամարդները, անարիակները, կադուսիները, ալբանացիները, կասպերը, ուտիները և, հնարավոր է, մինչև սկյութները, ուրիշ ժողովուրդներ»[33]: Ստրաբոնի այս տեղեկությունը խիստ ներդաշնակ է մյուս հեղինակների համանման տեղեկություններին: Պոմպոնիոս Մելան (մ.թ. 44թ.) «Երկրագրություն» աշխատության մեջ, Կասպից ծովը պատկերացնելով որպես ծովածոց, գրում է. «Ծովաբերանից աջ, նեղուցի ափերին ապրում են քոչվոր սկյութները, հետո Կասպից ծովի մոտ ապրում են կասպերը և սավրոմատուհիներ կոչվող ամազոնուհիները, Հյուրկանյան ծոցի մոտ՝ ալբանացիները...» և այլն[34]:

Կասպերի բնակության վայրն ավելի որոշակի է ցույց տալիս Դիոնիսիոսը: «Ես այժմ կպատմեմ,- գրում է մ.թ. 2-րդ դարի հռոմեացի հեղինակը,- այն ամենի մասին, թե ինչ ցեղեր են ապրում նրա (Կասպից ծովի - Հ. Ս.) շուրջը, սկսելով հյուսիսարևմտյան կողմից: Նախ սկյութներն են..., ապա ունները, նրանցից հետո կասպերը, սրանցից հետո ռազմատենչ ալբանացիներն ու...»[35] ուրիշ ցեղեր:

Այսպիսով, հիմք ընդունելով Ստրաբոնի, Պոմպոնիոս Մելայի, Դիոնիսիոսի և նրանց հետևող մյուս հեղինակների (Պրիսցիանոս և ուրիշներ[36]) վկայությունները, կարծում ենք, որ կասպերի բնակության վայրը պետք է փնտրել Կովկասյան լեռնաշղթայի ծովամերձ փեշերին: Այդ է հուշում նաև Էրատոսթենեսի հայտնի վկայությունը՝ տեղի բնակիչների կողմից Կովկասը Կասպ կոչելու մասին[37], որն անշուշտ նշանակում է, թե կասպերը ապրել են Կովկասյան լեռնաշղթայի մոտերքում և իրենց անունը թողել լեռան վրա:

Կասպերի բնակության վայրի տեղորոշման համար կարևոր տեղեկություններ են պարունակում նաև հայկական աղբյուրները, որոնցից Ագաթանգեղոսը առաջինն

---

[31] Ս. Հակոբյան, Կասպերի և Կասպիանեի (Կասպ) մարզի տեղադրության մասին, Լրաբեր հաս. գիտ., 1983, թիվ 1, էջ 91-94:
[32] Страбон, XI, IV, 5; XI, XIV, 5.
[33] Նույն տեղում, XI, VIII, 8.
[34] Известия древних писателей..., т. II, с. 125.
[35] Там же, т. I, с. 186.
[36] Նույն տեղում, т. II, с. 207, 293.
[37] Страбон, XI, II, 15.

է, որ կասպերին հիշատակում է այլ ցեղային միությունների՝ լփինների և ճիղբերի կողքին: «Վաղվաղակի,- գրում է Ագաթանգեղոսը պարթև Արշակունիներից վերջինի՝ Արտավանի սպանության համար վրեժի ելած Հայոց Խոսրով թագավորի կոչին արձագանքած ցեղերի մասին,- ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր և քաջ առն և ձիոյ և բուռն կազմութեամբ Աղուանք, Լփինք, և Ճիղբք, Կասպք և այլ ևս որ ի սմին կողմանց, զի զվրէժ արեանն Արտևանայ խնդրեսցեն»[38]: Ուխտանեսը ևս ունի նույնանման մի վկայություն. «Սկսաւ զօրաժողով լինել Խոսրով արքայն Հայոց և ժողովեաց զզօրս Աղուանից և զՎրաց, և զԼփնաց, և զՃղբաց, և զԿասբից, և զզօրս Հոնաց»[39]: Մովսես Կաղանկատվացին, Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական գործունեության մասին խոսելիս, նույնպես հիշատակում է կասպերին, նրանց տեղը նշելով այնտեղ, որտեղ և վերոհիշյալ հեղինակները, այն է՝ լփիններից ու ճիղբերից հետո. «Զգէր զքարոզութիւն աւետարանին (Մաշտոցը - Հ. Ս.) յաշխարհն Ուտէացւոց, և յԱղուանս, և Լփինս, և ի Կասպս, և մինչև ի դուռն Չորայ և զայլազգի ազգսն»[40]: Կովկասյան լեռների փեշերին ապրող կասպերին հիշատակում է և VII դարի հայոց «Աշխարհացոյցը». «Եւ ի նոյն լերինն՝ (Կովկասյան - Հ. Ս.) բնակին ... Խենուկք, ապա Շիղեայք. Ճիւղայք, Խեղայք, Կասբք»[41]: Բերված վկայությունների քննությունը ցույց է տալիս, որ հայ, ինչպես և անտիկ հեղինակների մոտ, աշխարհագրական վայրերը, մասնավորապես մեզ հետաքրքրող երկրամասերը, տրված են որոշակի աշխարհագրական հերթականությամբ՝ արևմուտքից արևելք - հյուսիսարևելք:

Միաժամանակ, անտիկ ու հայ հեղինակների վկայությունների համադրումը ցույց է տալիս, որ առաջինների ալբանացիներ-կասպեր-ուններ կամ, եթե թվարկումը սկսենք հյուսիս արևմուտքից, սկյութ քոչվորներ-ուններ-կասպեր-ալբանացիներ շարքին համապատասխանում է վերջիններիս ալբանացիներ-լփիններ և ճիղբեր-կասպեր-հոներ շարքը: Ակնառու այս համապատասխանությունը, սակայն, կարծես խախտվում է նրանով, որ անտիկ հեղինակները կասպերին հիշատակում են անմիջապես աղվանացիների կողքին, իսկ հայ պատմիչները՝ լփինների ու ճիղբերի հարևանությամբ: Նկատենք, որ հույն-հռոմեական հեղինակները ծանոթ չլինելով կասպերին, բնականաբար, նրանց պետք է ներկայացնեին «աղվանացիներ» ընդհանուր անվան տակ, առանց տարբերակման: Մինչդեռ հայ պատմիչները, ավելի քաջատեղյակ լինելով աղվանացիների ցեղային կազմին, նրանց բնակեցրած տարածքին, իսկ ժամանակաշրջանով էլ ավելի մոտ կանգնած լինելով նրանց, չէին կարող այդ ցեղերին չհիշատակել առանձին-առանձին: Տարակուսանք չի կարող առաջացնել նաև այն հանգամանքը, որ նախորդ հիշատակություններում կասպերի հյուսիսային հարևանները, որոնք ներկայացված են «ուրիշ ժողովուրդներ», «սկյութ-քոչվորներ», «ուններ» արտահայտություններով,

---

[38] Ագաթանգեղոս, էջ 24-26:

[39] Ուխտանես, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 70:

[40] Կաղանկատվացի, Ա, գլ. ԻԷ:

[41] Սրբոյ հօրն մերոյ Մովսիսի Խորենացւոյ Մատենագիտութիւնք, Վենետիկ, 1865, էջ 604: Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմ. առաջաբանը և ծանոթ. Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 287: «Կասպերը» «Աշխարհացոյցի» ընդարձակ խմբագրության մեջ չեն հիշատակվում, իսկ «Ճիղբք»-ին հաջորդում է «փիփքը», որը, ըստ Ս. Տ. Երեմյանի, Լփինքի աղավաղված ձևն է (տես նրա Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 54):

ուշ շրջանում՝ հայ հեղինակների վկայություններում հանդես են գալիս «այլևս որ ի սմին կողմանց», «զայլազգի ազգսն», «ի դուռն Չորայ», «Հոնք» անուններով: Ակնհայտ է, որ խոսքը միևնույն ժողովուրդների կամ ցեղերի մասին է: Այսպիսով, հայկական աղբյուրների կասպերը ևս, ինչպես տեսանք վերոբերյալ վկայություններից, համապատասխանում էին հունա-հռոմեական աղբյուրների կասպերին և նրանց նման, ապրում էին Կուրից հյուսիս ընկած շրջանում՝ լփինների հարևանությամբ և արևմուտքում սահմանակցում նրանց: Այդ սահմանագիծն անցնում էր Կովկասյան լեռնաշղթա-Փիրսահաթ գետից արևմուտք գտնվող բլուրներ - Կուր գետ գծով[42]:

Անտիկ հեղինակների վկայությունները այն մասին, որ Աքեմենյան Պարսկաստանի սահմանները հասել էին մինչև Կովկասյան լեռնաշղթա և, որ կասպերն ապրում էին հենց այդ լեռան փեշերին, հավաստում են, որ ամբողջ տերության հյուսիսային սահմանը՝ Կովկասյան լեռնաշղթան, սահման էր նաև կասպերի երկրի համար: Եվ, վերջապես, հարավային սահմանը Կուր գետն էր, քանի որ նրանից հարավ տարածված էր Երվանդունիների թագավորությունը[43]:

Այսպիսով, կասպերը բնակվում էին մի երկրամասում, որի սահմանները հյուսիսից եզերվում էին Կովկասյան լեռնաշղթայով, արևելքից՝ Կասպից ծովով, հարավից՝ Կուր գետով, իսկ արևմուտքից՝ Կովկասյան լեռների՝ Ալթըաղաչ գյուղի շրջանում սկսվող ու հարավում՝ Փիրսահաթ գետից մի փոքր արևմուտք՝ Կուր գետի հետ հատվող գծով: Այդ երկիրը որոշակիության համար կարելի է անվանել «Կասպք», որն ի դեպ, հանդիպում է և հայկական աղբյուրներում՝ «Կազբք», «Կասպք» ձևերով:

Կասպերի այս տեղորոշումը Կուրից հյուսիս՝ ապագա Աղվանքի տարածքում, թույլ է տալիս հիմնավորապես պնդելու, որ այն ժամանակներում գոյություն է ունեցել կասպերով բնակեցված նույնանուն երկու մարզ: Մեկը, որն, ինչպես ասվեց վերևում, գտնվում է Կուրից հյուսիս, իսկ երկրորդը գտնվում էր Արաքսից հարավ՝ Կասպից ծովի արևմտյան ափին: Իրենց գրաված աշխարհագրական դիրքով այս նույնանուն մարզերը ոչ մի կապ չունեին միմյանց հետ, և Ստրաբոնի հայտնի հաղորդումը՝ աղվանացիների երկրին պատկանող Կասպիանե մարզի մասին[44], վերաբերվում է առաջին երկրին և չի կարող հիմք հանդիսանալ այն սխալ կարծիքի համար, թե երկրորդը մտել է 11-րդ սատրապության մեջ, և դրանով արհեստականորեն ընդարձակել նրա տարածքը: Այս մարզերն իրենց համանունության համար պարտական էին երբեմնի ընդհանուր «կասպեր» անվանը, որ ցեղերի տարբերակվելուց հետո պահպանել էին նրանք, զբաղեցնելով տարբեր տեղեր Կասպից ծովի արևմտյան ափին:

Կասպքը հյուսիսային, արևելյան ու հարավային կողմերից շրջափակված լինելով այնպիսի բնական սահմաններով, ինչպիսիք Կովկասյան լեռնաշղթան, Կասպից ծովն ու Կուր գետն էին, պայմանավորել էր նաև 11-րդ սատրապության համապատասխան սահմանները: Նրա վերջին՝ արևմտյան սահմանը որոշելու հարցում զգալիորեն օգնում են հնագիտական հայտնագործությունների հիման

[42] Բ. Հարությունյան, Լփինքի տեղադրության հարցի շուրջը, ԲԵՀ, 1981, թիվ 1, էջ 123:

[43] Գ. Տիրացյան, Երվանդյան Հայաստանի տարածքը , (մ.թ.ա. VI դ. վերջ- մ.թ.ա. III դ. վերջ), էջ 68-84:

[44] Страбон, XI, IV, 5.

վրա կատարված վերջին ուսումնասիրությունները, որոնց համաձայն 11-րդ սատրապությունը սահմանակից է եղել 18-րդ սատրապության այն հատվածին, որ անցել է Կուրից հյուսիս և ընդգրկել Արևելյան Վրաստանի որոշ շրջաններ[45], հավանական է, անտիկ հեղինակների նշած Կամբեճանի տարածքը: Ստրաբոնը վերջինիս արևելյան սահման է ցույց տալիս Ալազան գետը[46]: Իսկ քանի որ դա այդպես է, ուրեմն Ալազանն է այն սահմանային գիծը, որ արևելքից շրջափակելով 18-րդ սատրապությունը՝ արևմուտքում բաժանում էր 11-րդը:

Այսպիսով, 11-րդ սատրապությունն ընդգրկել է մի տարածություն, որն ամփոփված է եղել հյուսիսից Կովկասյան լեռնաշղթայի հարավային փեշերի, արևելքից՝ Կասպից ծովի, հարավից՝ Կուր, իսկ արևմուտքից՝ Ալազան գետերի միջև: Այս տարածքում պետք է փնտրել և այն ցեղերին, որոնք կասպերի հետ մեկտեղ հիշատակվում են 11-րդ սատրապության կազմում, այն է՝ պավսիկներին, պանտիմաթներին ու դարեյթներին[47]: Այդպես կարծելու հիմք է տալիս սատրապություններ կազմավորելու Աքեմենյանների սկզբունքը: Հերոդոտոսի վկայությամբ, նրանք սատրապությունները ստեղծում էին հիմնականում միմյանց հարևան ժողովուրդներին մեկ վարչական միավորման մեջ համախմբելու ելակետով[48]: Բացի դրանից, առաջարկված կարծիքի հավանականությունը ուժ է ստանում այստեղ նշված պավսիկների ու Ստ. Բուզանդացու հիշատակած պավսարկների նույնացման վարկածով: Պավսիկները, ըստ Բուզանդացու հաղորդման[49], ապրում էին «Կովկասի տակ», այն Կովկասի, որից սկսվում էր 11-րդ սատրապությունը:

11-րդ սատրապությունը Աքեմենյանների վարչական համակարգում պետք է որ կարևոր դեր կատարեր: Գտնվելով Աքեմենյանների տերության ծայրակետում, այն ուներ Կովկասյան լեռնանցքները պահպանողի դեր և արտոնված էր հյուսիսային հզոր ցեղերի՝ սկյութների արշավանքների առջև դռները փակելու կամ բացելու լայն իրավունքներով: Սատրապությունը նաև հարկեր էր մուծում և իր զորքերով մասնակցում Աքեմենյան տիրակալների ռազմական արշավանքներին: Այսպես էր արտահայտվում կասպյան ցեղերի ենթակայությունը Աքեմենյան Պարսկաստանից, որը,սկսվելով մ.թ.ա. VI դարի կեսերից, շարունակվել է մինչև Պարսկաստանի համար բախտորոշ Գավգամելայի ճակատամարտը՝ 331 թ., երբ Ալեքսանդր Մակեդոնացու հաղթանակով վերջ է դրվում Աքեմենյանների ավելի քան 200-ամյա տիրապետությանը:

---

[45] Գ. Տիրացյան, Երվանդյան Հայաստանի տարածքը , (մ.թ.ա. VI դ. վերջ- մ.թ.ա. III դ. վերջ), էջ 72-73:

[46] Страбон, XI, IV, 5.

[47] Դարեյքների հիշատակումը Մարաստանում և 11-րդ սատրապության կազմում սովորական էթնիկական տեղաշարժերի հետևանք կարող է լինել:

[48] Հերոդոտոս, III, 89:

[49] Известия древних писателей..., т. I, с. 264.

## Բ. Աղվանական ցեղային միությունները ու նրանց հասարակական-քաղաքական կացությունը

Մ.թ.ա. IV դարում մերձկասպյան ցեղերի հասարակական կյանքում տեղի են ունենում սոցիալական ու տնտեսական այնպիսի խոշոր տեղաշարժեր, որոնց հետևանքով նրանց համար ընդհանուր «կասպեր» անվանումը, տեղի տալով նոր, ընդհանրական «աղվանացիներ» անվանը դադարում է արտահայտել մերձկասպյան բոլոր ցեղերին:

«Աղվանացիներ» անվանումը պատմության մեջ առաջին անգամ հանդիպում է մ.թ.ա. IV դարի 30-ական թթ. վերջերին, պատմական խոշոր իրադարձությունների ոլորապտույտում: Մ.թ. II դարի պատմիչ Փլավիոս Արրիանոսը, հենվելով Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների մասնակիցներ ու ականատեսներ Արիստոբուլոս Կասանդրացու և Լագոս Պտղոմեոսի ռազմական օրագրերի ու հիշատակարանների վրա[50], հաղորդում է, որ Գավգամելայի ճակատամարտում՝ մ.թ.ա. 331 թ., Դարեհ Գ Կոդոմանոսի կողմում, ընդդեմ մակեդոնացիների, կռվում էին նաև աղվանացիները: Նրա հաղորդման համաձայն, աղվանացիները մարերի, կադուսիների ու սակեսինների հետ մեկտեղ կազմել էին Դարեհ Գ-ի հսկայական բանակի առանձին զորամիավորը՝ Մարաստանի սատրապ Ատրոպատեսի գլխավորությամբ: «Մարերին,- գրում է նա,- գլխավորում էր Ատրոպատեսը, մարերի հետ միասին էին կադուսիները, ալբանացիները և սակեսինները»[51]: Արրիանոսը բերում է նաև Գավգամելայում Դարեհ Գ-ի զորքերի դասավորության պլանը, ուր, ինչպես պարզվում է, իրենց որոշակի տեղն են ունեցել և հիշյալ ցեղերը: Համաձայն այդ պլանի, որն, ըստ Արիստոբուլոսի, հետագայում ընկել էր հաղթողների ձեռքը[52], պարսից բանակի «աջ (թևում) կանգնած էին Կոյլե-Սիրիայից (Ներքին Ասորիք - Հ. Ս.) և Միջագետքից եկած զինվորներ, ինչպես նաև մարերը, նրանցից հետո պարթևները ու սակերը, ապա տապյուրները ու հյուրկանները, հետո ալբանացիները ու սակեսինները»[53]: Աղվանական զինվորներ հիշատակվում են նաև Դարեհ Գ-ի թիկնապահ զորքերի շարքում. «Երբ (թշնամի) բանակները մոտեցան, երևաց, որ Դարեհը իրեն շրջապատողների՝ խնձորակիր-պարսիկների[54], հնդերի, ալբանացիների, «գաղթեցրած» կարիյցիների ու նետաձիգ-մարդերի հետ կանգնած է Ալեքսանդրի ու թագավորական շքախմբի դեմ»[55]:

Այսպիսով, պատմության մեջ աղվանացիների մասին առաջին հիշատակությունը կապված է պատմական շրջադարձային մեծ իրադարձությունների հետ, որոնց նրանք առնչվել են ամենաանմիջական մասնակցությամբ: Այս հանգամանքը թույլ է տալիս պնդելու, որ ուսումնասիրվող

---

[50] Арриан, I, I, I.
[51] Նույն տեղում, III, 8, 4:
[52] Նույն տեղում, III, II, 4:
[53] Նույն տեղում:
[54] «Խնձորակիրները» պարսից արքաների թիկնապահ-զվարդիական զորքերն էին, որոնց սպառազինության համար բնութագրական էր կլոր, խնձորաձման զնդիկով ծայր ունեցող նիզակը (տե՛ս К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 53, пр. 2).
[55] Арриан, III, 13, 1.

շրջանում աղվանական ցեղային միությունները սոցիալական ու տնտեսական զարգացմամբ զգալիորեն առաջ էին անցել և հատկապես աչքի էին ընկնում իրենց ռազմատենչությամբ: Դրա անառարկելի ապացույցը Գավգամելայի ճակատամարտում նրանց զբաղեցրած կարևոր ռազմա-ստրատեգիական դիրքերն էին, ինչպես պարսից հսկա բանակի աջ թևում, այնպես էլ Դարեհի թիկնապահ զորքերի շարքում՝ «խնձորակիր» պարսիկների հետ կողք կողքի: Արիանոսի վկայակոչած հաղորդումներից երևում է, որ աղվանական ցեղերը ապրում էին ցեղային միություններով, և նրանց քաղաքական կազմակերպությունները ցեղային միություններից այն կողմ չէին անցնում: Եվ դա էր պատճառը, որ նրանք Գավգամելայի ճակատամարտում հանդես էին գալիս ոչ թե որպես առանձին զորամիավոր, ինչպես օրինակ, Մեծ ու Փոքր Հայքերի բանակները[56] Միթրաուստեսի ու Օրոնտեսի գլխավորությամբ[57], այլ Մարական պետության սատրապ Ատրոպատեսի գլխավորած զորախմբավորման կազմում:

Արրիանոսի հաղորդումները միաժամանակ հիմք են հանդիսացել, որ ուսումնասիրողները փորձեն որոշել նաև նրանց քաղաքական կացությունը: Վ. Վ. Բարտոլդի կարծիքով, աղվանացիները Գավգամելայում սոսկ վարձկան զորքեր էին մարական բանակում[58]: Ըստ Ի. Մ. Դյակոնովի՝ աղվանացիները, սակեսինները ու կադուսիները մի դեպքում մարերի դաշնակիցներն էին և ենթակա չէին Մարաստանի սատրապ Ատրոպատեսին[59], մյուս դեպքում՝ այդ դաշնակցությունը «կախվածության ձև էր, ինչպես բոլոր նման դաշնակցությունները հնում»[60]: Ի դեպ, կախվածությունը Մարաստանի սատրապից, ըստ Ի. Մ. Դյակոնովի, իբր ավելի վաղ շրջանի իրողություն էր, քան Գավգամելայի ճակատամարտի ժամանակաշրջանը[61]:

Աղվանացիների ու Ատրոպատեսի դաշնակցության մասին են գրում նաև «Ադրբեջանի պատմության» հեղինակները[62], Ի. Ալիևը[63] և ուրիշներ:

Ուսումնասիրողները, սակայն բացի Արրիանոսի հիշյալ հաղորդումից, այլ փաստարկներ չունեն: Իսկ նշվածն էլ, գտնում ենք, բավարար չէ նման եզրահանգումների համար: Կարծում ենք, ուսումնասիրվող ժամանակաշրջանում աղվանական ցեղային միությունների քաղաքական կացության մասին ավելի լիարժեք պատկերացում են տալիս պարսից զորքերի դասավորության պլանի մասին նույն Արրիանոսի տեղեկությունները, ուր աղվանացիները հիշատակվում են Դարեհի բանակի տարբեր դիրքերում՝ մի դեպքում սակեսինների հետ՝ աջ թևում, մարերից հեռու, վերջիններից կտրված լինելով պարթևների, սակերի, տապյուրների ու հյուրկանների զորքերով, մյուս դեպքում՝ Դարեհի թիկնապահ զորքերի շարքում, ուր ընդհանրապես չկային մարական զորքեր[64]: Նույն պլանի համաձայն,

---

[56] Квинт Курций Руф, История Александра Македонского, IV, 12, 10, IV, 12, 12.
[57] Арриан, III, 8, 5.
[58] В. В. Бартольд, Соч., т. II, ч. 1, с. 658; Его же, Краткий обзор истории Азербайджана, Там же, с. 775-776.
[59] И. М. Дьяконов, История Мидии, с. 339, пр. 3.
[60] Նույն տեղում, էջ 447:
[61] Նույն տեղում, էջ 448:
[62] История Азербайджана, т. 1, с. 45.
[63] И. Алиев, О скифах и скифском царстве, с. 10.
[64] Арриан, III, II, 4.

աղվանացիների ու սակեսինների հետ հիշատակվող և Ատրոպատեսին ենթակա համարվող[65] մյուս ցեղային միությունը՝ կատիշները, զբաղեցրել էին դարձյալ մարերից հեռու, բոլորովին ուրիշ տեղ՝ ձախ թևում[66]: Այսպիսի պարագայում դժվար է ենթադրել, թե դաշնակիցներին միմյանցից բաժանելով տարբեր ռազմական դիրքեր էին հատկացրել և կամ, ինչպես իրավացիորեն նկատել է Կ. Վ. Տրեվերը, «մարերի վարձկաններին՝ ալբանացիներին, անջատել էին նրանցից (մարերից - Հ. Ս.) և մտցրել արքայի մերձավորների շարքը»[67]: Ուրեմն, Արրիանոսի վերջին տեղեկություններից միանգամայն ստույգ բխում է այն ենթադրությունը, որ աղվանացիները, սակեսինները ու կատիշները չէին կարող Ատրոպատեսի ենթակաները լինել: Դա առանձնապես ցցուն է դառնում կատիշների օրինակով, որոնք պատմագրության մեջ հիշատակվում են հիմնականում որպես Պարսկաստանին ենթակա ցեղեր[68]: Ուսումնասիրվող դեպքերին անմիջապես նախորդող ժամանակաշրջանում էլ կատիշները Աքեմենյանների ենթակայության տակ էին: Դիոդորոս Սիկիլիացին ու Հուստինոսը հաղորդում են, որ Արտաքսերքսես Գ Օքոսի օրոք (358-338) կատիշների դեմ ուղղված պատերազմը ես ավարտվում է Աքեմենյանների հաղթանակով և կատիշների հնազանդեցմամբ: Նրանք պատմում են, որ այդ պատերազմի ելքը վճռվել է մի մենամարտով, որ վարել է Դարեհ Կոդոմանոսը՝ ապագա արքայից արքան, հակառակորդ բանակի մի վիթխարի հսկայի հետ[69]:

Այսպես հպատակվելով Աքեմենյաններին, մանավանդ Դարեհ Գ-ի օրոք, որի մենամարտով է փաստորեն որոշվել պատերազմի ելքը, կատիշները Գավգամելայի ճակատամարտին մասնակցել են որպես անմիջականորեն Պարսկաստանին հպատակ ցեղեր: Եվ քանի որ դա այդպես է, ապա նրանց կողքին հիշատակվող աղվանացիներն ու սակեսինները ևս Գավգամելայի ճակատամարտին մասնակցելու էին միայն որպես Պարսկաստանին ենթակա ցեղեր:

Արրիանոսի վերոհիշյալ հաղորդումները պատմագրության մեջ առաջացրել են այլ կարգի սխալներ ևս: Նրանցում հիշատակվող մյուս ցեղային կազմավորումը՝ «սակեսինները» նույնացվել են հայոց Ուտիք նահանգի՝ Ծակաշեն գավառի բնակիչների հետ՝ եզրակացնելով, որ գավառն ու նրա բնակիչները պատկանել են Աղվանքին և նույնպես ենթակա եղել Ատրոպատեսին[70]: Բայց ճիշտ չէ հիմնվելով, Արրիանոսի վկայությունների վրա, հայոց Ուտիք գավառն ու նրա բնակիչներին տեսնել Աղվանքի կազմում և նրանց դասել Ատրոպատեսի ենթակաների թվին: Եվ դա այն պարզ պատճառով, որ նրա հիշատակած սակեսիններն ու հիշյալ գավառի բնակիչները նույնական չեն, չնայած թե՛ առաջինները և թե՛ վերջինները այն սակ-սկյութների բեկորներից էին, որոնք դեռևս մ.թ.ա. VII դարում[71] դուրս գալով

[65] И. М. Дьяконов, История Мидии, с. 339, пр. 5; И. Алиев, История Мидии, с. 104, пр. 10.
[66] Арриан, III, II, 8.
[67] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 54.
[68] И. В. Пьянков, Борьба Кира II с Астиагом, ВДИ, 1971, N 1, с. 35.
[69] Դիոդորոս Սիկիլիացի, թարգմ. բնագրից, առաջ. և ծանոթ. Ս.Մ. Կրկյաշարյանի, երևան, 1985, VII, 5: J       , X, III, 2-5.
[70] И. М. Дьяконов, История Мидии, с. 250, пр. 2; И. Алиев, О скифах и скифском царстве, с. 11; Его же, История Мидии, с.230, пр. 5; К. Алиев, Кавказская Албания, с. 185-187.
[71] Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 20, 304: Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 144:

իրենց բնակության նախկին վայրից՝ Ասիայից ներխուժել էին Անդրկովկաս և ավելի հարավ ընկած շրջաններ: Այդ արշավանքների ժամանակ էլ նրանց մի մասը, ինչպես վկայում է Ստրաբոնը, «նվաճեցին Բակտրիան և տիրեցին Հայաստանի լավագույն հողին, որին թողեցին իրենց անունը՝ Սակասեն»[72]: Հույն աշխարհագետի այս աներկիմաստ տեղեկությունից երևում է, որ, այսպես հաստատվելով Հայաստանում և դառնալով նրա հյուսիսարևելյան եզերական նահանգներից մեկի բնակիչները, սակասեն-շակաշենցիները այնուհետև իրենց պատմական բախտը մշտապես կապում են Հայաստանի հետ: Մասնավորապես ուսումնասիրվող ժամանակաշրջանում, երբ Հայաստանը Երվանդունիների իշխանության ներքո պետական-քաղաքական կայունացում էր ապրում, նրանք չէին կարող գտնվել նրա կազմից դուրս և, բնականաբար, Գավգամելայի ճակատամարտում հանդես էին գալիս հայոց բանակների կազմում: Հայտնի է, որ նշված ճակատամարտին, Օրոնտեսի ու Միթրաուստեսի գլխավորությամբ, մասնակցում էին նաև Մեծ ու Փոքր Հայքերի բանակները: Վերջիններիս առաջնորդներից հիշյալ Օրոնտես-Երվանդը աղբյուրներում հիշատակվում է բավականին հաճախ և «թագավոր», այն էլ՝ «Մեծ» հորջորջումով: Վրաց պատմիչ Ջուանշերի հաղորդմամբ, «թագավորեաց Հայոց Մեծն Երուանդ և էառ ի Վրաց զԱրտահան մինչև ցԿուր գետ, և զքաղաքն Ծօնդայ»[73]: Լեոնտի Մրովելին նույնն է վկայում հայոց թագավորի գործունեության մասին. «Ապա թագավոր դարձավ Հայքում (Սոմխիթում) մեծն Երվանդ (Իարվանդ), որը ... գրավեց Քարթլիի սահմանները, քաղաքն Ծունդան և Արտահանը (Արտանը) մինչև Կուրը»[74]:

Բերված փաստերը վկայում են, որ Երվանդ-Օրոնտեսը կենտրոնացված ուժեղ հայկական պետություն ստեղծելու ջանադիր մի անձնավորություն էր, և նրա հուժկու բազկի տակ ամբողջանում էր Երվանդունիների թագավորությունը՝ իր ավանդական-պատմական սահմաններով: Մասնավորապես նրա հյուսիսարևելյան սահմանը անցնում էր Կուր գետով[75] իր մեջ առնելով ոչ միայն խնդրո առարկա գավառը, այլև Ուտիք ու Արցախ նահանգները: Նրա ուժի և ազդեցության համընդհանուր ճանաչումն էր, որ Կապադովկիայի թագավոր Արիարաթ Բ-ն, մակեդոնացիներից փախչելով, ապաստանում է Հայաստանում, իսկ հետո, նրանից ստանալով օժանդակ ուժեր ու վտարելով մակեդոնացիներին իր երկրից, տեր է դառնում հայրենի իշխանությանը: Այս փաստը, որ հայտնի է Դիոդորոս Սիկիլիացու պատմական աշխատությունից[76], թույլ է տվել բնութագրել նրան որպես «հեռավոր ու մեծ երկրի թագավոր», որ «պետք է ունեցած լիներ բավական մեծ զորք»[77] և,

---

[72] Страбон, XI, VIII, 4: Սկզբնաղբյուրի այս վկայությանը Ի. Մ. Դյակոնովը տալիս է խիստ կամայական բացատրություն, որի համաձայն իբր «Ստրաբոնի ժամանակներում Հայաստանը ժամանակավորապես տիրում էր ներկայիս Ադրբեջանի որոշ մասերի (տե՛ս И. М. Дьяконов, История Мидии, с. 250, пр. 2).

[73] Համառոտ պատմություն Վրաց, էջ 31:

[74] Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին, հ. Ա, էջ 155:

[75] Գ. Տիրացյան, Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI դարի վերջ - մ.թ.ա. III դարի վերջ), էջ 82; Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 508:

[76] Դիոդորոս, XXXI, 19, 5:

[77] J. Sandalgian, Histoire documentarie de l'Armenie, t. II, Rome, 1917, էջ 409: Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, էջ 101-102:

չվախենալով հզոր մակեդոնացիներից, օգնության ձեռք մեկներ հարևանին՝ նախ ապաստան և ապա նաև ռազմական ուժ տրամադրելով: Անա թե ինչու անտրամաբանական է մտածել, որ այսպիսի ուժեղ ու մեծ թագավորի գլխավորությամբ քաղաքական կայունացում ապրող պետության գավառներից մեկը՝ այն էլ աշխարհագրականորեն Մարաստանից հեռու ընկած և նրանից բաժանված Մեծ Հայքի ուրիշ գավառներով, ենթակա էր դարձել Մարաստանին և կռվում էր նրա սատրապի առաջնորդությամբ:

Այսպիսով, լինելով Հայաստանի գավառներից մեկի բնակիչները, շակաշենցիները ոչ մի կապ չունեին Արրիանոսի հիշատակած «սակեսիններին» հետ, ուստի և միանգամայն սխալ են նրանց նույնացմանը, Մարաստանից Շակաշենի (ուրեմն և Ուտիքի) կախվածությանը, առավել ևս Աղվանքին պատկանելու մասին կարծիքները: Արրիանոսի հիշատակած սակեսինները նույն սակ-սկյութների այն առանձին խմբերից էին, որոնք դեպի Անդրկովկաս ու Առաջավոր Ասիա արշավանքներ կատարելիս, բնակություն էին հաստատել ապագա Աղվանքի տարածքում: Այստեղ սկյութ-սակերի այդպիսի խմբերի գոյությունը ապացուցվում է թե՛ հնագիտական պեղումների միջոցով լույս աշխարհ հանված սկյութական տիպի նյութերով[78] և թե՛ տեղանուններով, որոնցից է Ադրբեջանի Նուխի քաղաքի մոտ գտնվող Շաքին[79] և այլն:

Հաստատվելով իրենց նոր բնակատեղիներում, հիշյալ քոչվոր ցեղերը բնականաբար պետք է հանդես գային այն երկրի կամ ցեղային միությունների կողմից, որոնց զբաղեցրած տարածքում հաստատվել էին. սակ-շակաշենցիները՝ Մեծ Հայքի, սակեսինները՝ աղվանական ցեղային միությունների: Եվ ինչպես ցույց է տալիս Արրիանոսի հայտնի հիշատակությունը՝ Գավգամելայի կռվում աղվանացիների հետ սակեսին-սակեսինների մասնակցության մասին, հենց այդպես էլ էր: Դա երևում է նաև նրանից, որ նույնիսկ այն դեպքում, երբ Գավգամելայում նրանց հետ հիշատակվող կատիշները հանդես էին գալիս առանձին, նրանք գործում էին աղվանացիների հետ միասին, նրանց հետ կողք կողքի[80]: Այսպիսով, ճիշտ չեն այն ուսումնասիրողները, որոնք Արրիանոսի սակեսիններին նույնացնելով Մեծ Հայքի Շակաշեն գավառի բնակիչների հետ, նրանց համարում են աղվանական ցեղերից մեկը և եզրակացնում, թե Շակաշենը (դրանով և Ուտիքը) Աղվանքի գավառներից (նահանգներից) մեկն էր և նրա հետ մեկտեղ ենթարկվել է Ատրպատականին: Եվ դա այն դեպքում, երբ «Աղուանք»

[78] Б. Б. Пиотровский, Археология Закавказья, с. 115 и сл.; Его же, Ванское царство, М., 1959, с. 244 и сл.

[79] Ի. Ալիևը Աղրբեջանի տարածքում սկյութ-սակ էթնիկական անունից առաջացած տեղանունների թվում մատնանշում է նաև Սիսիանի շրջանի Շաքին, ստեղծելով սխալ տպավորություն, թե Սիսիանի շրջանը ևս կազմել է Աղրբեջանի տարածքի մասերից (տե՛ս նրա О скифах и скифском царстве в Азербайджане, с. 11): Ի դեպ, այդպիսի մոտեցումը նորություն չէ աղրբեջանական պատմագրության համար: Զ. Բունիյաթովի կարծիքով էլ, Սիսիանը Ուտիքի ու Արցախի հետ կազմել է պատմական Աղվանքի շրջաններից մեկը (տե՛ս З. М. Буниятов, Азербайджан в VII-IX вв, էջ 4): Սյունիքում աղվանական ցեղեր բնակվելու, Սյունիքի բնակչության հայացման և այդ նահանգը ևս Աղրբեջանի կազմում լինելու կեղծ ու պատիր հայտարարություններով հանդես են եկել նաև Մ. Ս. Նեյմատովան (տե՛ս Еще раз об Урудских памятниках Зангезура, Известия АН Аз ССР, 1985, N 4, с. 87-94) և Ֆ. Մամեդովան (Политическая история... Албании, с. 105-111 и сл.).

[80] Арриан, III, II, 3-4.

քաղաքական-պետական միավորումը դեռ պետք է կազմավորվեր: Իսկ ընդհանուր առմամբ մ.թ.ա. IV դարի վերջերին աղվանական ցեղերը կազմավորել էին ռազմական դեմոկրատիայի մոտ պայմաններում ապրող և քաղաքականապես Աքեմենյան Պարսկաստանին ենթակա ցեղային մեծ միություններ և կատարում էին հպատակ ցեղերի իրենց պարտավորությունը՝ հարկեր վճարելով ու մասնակցելով Աքեմենյանների ռազմական գործողություններին: Գավգամելայի ճակատամարտն ավարտվում է Դարեհ Գ-ի լիակատար ջախջախմամբ: «Կավե ոտքերով հսկան» տապալվելով դուրս է գալիս պատմության թատերաբեմից, իր տեղը զիջելով նոր նվաճողին՝ Մակեդոնիային: Ալեքսանդր Մակեդոնացու հաղթանակը Գավգամելայում, Աքեմենյանների տիրապետությանը վերջ դնելով, վերջ է դնում նաև աղվանցիների ենթակայությանը Պարսկաստանից, սակայն, ի տարբերություն վերջինիս ենթակա այն մյուս երկրների ու ժողովուրդների, որոնք ընկնում են աշխարհակալ Մակեդոնացու կամ նրա հետնորդների ազդեցության տակ, Անդրկովկասը ընդհանրապես[81], իսկ աղվանական ցեղային միություններն էլ մասնավորապես, դուրս են մնում նրանց ազդեցությունից: Չնայած մի այնպիսի արժանահավատ հեղինակ, ինչպիսին Պլինիոսն է, գրում է, թե մակեդոնական զորքերը անցել են «Ասիայի, Հայաստանի, Իբերիայի, Ալբանիայի ... ու Կովկասի վրայով»[82], բայց և այնպես ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մակեդոնացիների արշավանքի ուղին «երբեք չի անցել ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ Անդրկովկասյան երկրների տերիտորիայով»[83]: Դա հաստատվում է նաև ուրիշ փաստերով: Հայտնի է, որ Ալեքսանդր Մակեդոնացու գործունեության կարևոր ու առանձնահատուկ կողմերից մեկը նվաճված երկրներում, սոցիալ- տնտեսական, ռազմական ու քաղաքական ամուր հենարան ստեղծելու նպատակով, քաղաքների կառուցումն էր»[84]: Խնդրին այս տեսակետից մոտենալով ու հաշվի առնելով, որ ուսումնասիրվող շրջանում՝ IV-III դարերում, Աղվանքում ոչ միայն չեն հանդիպում Ալեքսանդրի կամ նրա հետնորդների կողմից կառուցված քաղաքներ, այլև քաղաքներ բառի իսկական հասկացությամբ, ապա տարակույս չի մնում, որ աղվանական ցեղային միությունները ևս չէին նվաճվել մակեդոնացիների կողմից:

Ազատվելով Աքեմենյանների ենթակայությունից, աղվանական ցեղերը սկսում են ապրել ինքնուրույն ու անկախ կյանքով: Աղբյուրները, որոնք խոսում են այդ շրջանում Առաջավոր Ասիայում տեղի ունեցող քաղաքական մեծ

[81] М. М. Дьяконов, Очерк по истории древнего Ирана, с. 160.
[82] Известия древних писателей..., т. II, էջ 169: Կ. Վ. Տրեվերը ենթադրում է, որ Պլինիոսը այս հաղորդմամբ «նկատի ունի ոչ թե անձամբ Ալեքսանդրի և նրա դիադոքների արշավանքները, այլ, հնարավոր է, սելևկյան զորավար Պատրոկլեսի շրջագայությունը Կասպից ծովի շուրջը և նրա հաշվետվությունը, որից էլ օգտվել է և Պոմպեոսը (К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 55) : Սակայն այդպիսի ենթադրությունը համոզիչ չէ: Կարծում ենք, Պլինիոսի այս տեղեկության հիմքում ընկած են դեպի Միջին Ասիա, մասնավորապես՝ Բակտրիա կատարած Ալեքսանդրի արշավանքի արձագանքները, որի ժամանակ նա 329 թ. մ.թ.ա. անցել է նույնպես «Կովկաս» կոչված Հինդուքուշի լեռներով (М. М. Дьяконов, Очерк по истории древнего Ирана, էջ 147): Ահա և այս երկու լեռնաշղթաների համանունությունն էլ շփոթ է առաջացրել Պլինիոսի մոտ, որն էլ կրկնում է ավելի ուշ շրջանի՝ մ.թ. III դարի առաջին կեսի հռոմեացի պատմիչ Հուլիոս Սոլինը (Юлий Солин, Сборник достопримечательностей, ВДИ, 1949, N3, с. 241).
[83] Հայ ժողովրդի պատմություն, h. 1, էջ 502:
[84] Ս. Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ 106:

փոփոխությունների՝ տիրապետությունների բաժանման, առանձին նվաճողների բարձրացման ու ազդեցության ոլորտների վերաձևման համար սուր, կատաղի ու անզիջում պայքարի մասին, ընդհանրապես չեն հիշատակում աղվանական ցեղերին ու նրանց երկիրը, որն ասվածի պերճախոս վկայությունն է: Չնայած դրան, ուսումնասիրողները գտնում են, որ աղվանական ցեղերը Աքեմենյաններից հետո ընկել էին նորակազմ Ատրպատական պետության[85] ազդեցության տակ: Ըստ նրանց, մարական նախկին սատրապ ու նոր պետության հիմնադիր Ատրոպատեսը իր արտաքին քաղաքականության մեջ իբր հասել էր այնպիսի զգալի հաջողությունների, որ կարողացել էր նույնիսկ իրեն ենթարկել թե՛ աղվանացիներին և թե՛ նրանցից հյուսիս գտնվող ցեղերին՝ դառնալով Արևելյան Անդրկովկասի վերահսկողը[86]: Բայց ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ալեքսանդրի կյանքի վերջին տարիներին ու մահից հետո առաջացած խռովահույզ ու անհանգիստ քաղաքական իրադրությունը Ատրոպատեսին հարկադրելու էր ավելի շուտ մտահոգվելու իր երկրի անկախության պահպանմամբ, քան զբաղվելու նվաճումներով[87]: Ուստի ճիշտ չեն այն ուսումնասիրողները, որոնք Ատրոպատեսին վերագրելով չեղած նվաճումներ, եզրակացնում են, թե նա, իբր, արտաքին նվաճումներով կարողացել է հպատակեցնել Արևելյան Անդրկովկասի ցեղերին, մասնավորապես աղվանացիներին: Վերջիններս Մակեդոնիայի հաղթանակով ազատվելով Աքեմենյան Պարսկաստանի ենթակայությունից, վարում էին ինքնուրույն ու ազատ կյանք, հեռու Առաջավոր Ասիայում ծավալված բուռն իրադարձություններից: Աղվանացիների ինքնուրույնությունը մեծ չափով նպաստում էր նաև նրանց և Ալեքսանդր Մեծի ու նրա ժառանգների տերությունների միջև ընկած նույնպես անկախություն վայելող Հայաստանն ու Ատրպատականը:

Աղվանական ցեղերի պատմության մեջ սկսվում է ինքնուրույնության ու անկախության մի ժամանակաշրջան, որը լի էր սոցիալ-տնտեսական ու քաղաքական խոշոր տեղաշարժերով:

---

[85] Մանրամասնորեն տե՛ս Հ. Ս. Սվազյան, Ատրպատականի պետության կազմավորումն ու Կովկասյան Ալբանիան, Լրաբեր հաս. գիտ., թիվ 2, էջ 71-79:
[86] И. М. Дьяконов, История Мидии, с. 446.
[87] Հ. Ս. Սվազյան, Ատրպատականի պետության կազմավորումը...:

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
# ՀԵԼԼԵՆԻԶՄՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ: ՑԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴԵՊԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
(մ.թ.ա. III-մ.թ. I դար)

## Ա. Հելլենիզմն Արևելքում և աղվանական ցեղերի հասարակական-քաղաքական կացությունը

Ալեքսանդր Մեծի մահից հետո նրա ստեղծած անծայրածիր տերությունը արագորեն քայքայվում և տրոհվում է մանր ու խոշոր մի քանի պետությունների մակեդոնական նվաճողական քաղաքականության ավանդույթները ամենից շատ պահպանած Սելևկյան տերության, բուն Մակեդոնիայի, Եգիպտական թագավորության ու Փոքր Ասիայում առաջացած՝ Բութանիայի, Պերգամոնի, Պոնտական Կապադովկիյաի և ուրիշների:

Առաջացած նոր պետությունները հին արևելյան ստրկատիրական հասարակության պատմական զարգացման արդյունք էին: Անտիկ ստրկատիրական հասարակարգի այս նոր փուլը, որ պատմագրության մեջ ստացել է «հելլենիզմի դարաշրջան» անունը, բնութագրվում է որպես սոցիալական, տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի աննախընթաց վերելքի մի ժամանակաշրջան, որի տնտեսական ու քաղաքական հիմքը կազմում են արևելքի ու արևմուտքի ժողովուրդների դարերով ստեղծած տնտեսության (գյուղատնտեսությունն ու արհեստագործությունն իրենց բազմաթիվ ճյուղերով), քաղաքական կյանքի ու պետական կառուցվածքի ձևերի, նյութական ու հոգևոր մշակույթի մերձեցումն ու փոխադարձ ազդեցությունը[1]:

Ներթափանցելով Արևելք և բախվելով զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքին, արևմուտքի քաղաքակրթությունը վերացնում էր դրանց տարբերությունները ու նաև էթնիկական խայտաբղետությունը: Հելլենիզմի այդ համահարթման զորեղ ազդեցությանն էին ենթարկվում ոչ միայն հելլենիստական աշխարհի կենտրոնները, այլև նրա ամենածայրամասային երկրները՝ Հայաստանը, Ատրպատականը, Իբերիան, Կապադովկիան և ուրիշներ:

Որքան էլ հեռու, նաև մերձկասպյան մարզեր էին ներթափանցում հելլենիզմի տարրերը: Աղվանական ցեղերը, որ Ալեքսանդր Մեծի տերության փլատակների վրա ձեռք էին բերել անկախություն ու ինքնուրույնություն, նույնպես ներգրավվել էին հելլենիզմի ամենազոր ազդեցության ոլորտը: Այս շրջանում փոխվում է թաղման ծիսակատարությունը: Թաղումները դառնում են գետնափորային, դամբարաննյութը՝ մեծաքանակ նրբագեղ փայլեցված անոթներ, հիմնականում գորշ գույնի: Բացի նետասլաքներից, որոնք պատրաստված էին բրոնզից, զենքը երկաթյա էր: Զարդերը՝ բրոնզից: Պատահում էին և՛ ոսկյա, և՛ արծաթյա իրեր, մանավանդ օղեր[2]:

---

[1] А. Б. Ранович, Эллинизм и его историческая роль, М., 1850; Всемирная история, т. II, М., 1956, с. 211-342; Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 489-499:
[2] С. М. Казиев, Археологические памятники Мингечаура, с. 173.

Հելլենիստական աշխարհի հետ աղվանական ցեղերի շփումը, սակայն, իրականացվում էր ոչ թե հունական տարրի ներթափանցմամբ ու հաստատմամբ, այլ հիմնականում տնտեսական կապերի ընդլայնմամբ, միջազգային տարանցիկ առևտրի ծաղկմամբ ու այն քաղաքական իրադարձությունների արձագանքներով, որոնք տեղի էին ունենում Առաջավոր Ասիայում՝ նորաստեղծ Սելևկյան ու մյուս պետությունների միջև:

Սելևկյան պետությունը «ամենահելլենիստական» տերությունն էր հելլենիստական մյուս պետությունների շարքում, և սոսկ նրա գոյությունն իսկ Հին Արևելքի ժողովուրդների տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման համար արդեն նշանակալից երևույթ էր: Նրա ազդեցությամբ տեղի էին ունենում տնտեսական կյանքի զարգացում ու արտադրողական ուժերի աճ՝ իրենց բոլոր հետևանքներով:

Սելևկյան տերությունը իր հելլենիստական մշակույթով ու տնտեսական, քաղաքական կյանքով զգալի ազդեցություն էր թողնում նաև աղվանական ցեղերի վրա: Այդ ազդեցությունը տարածվում էր այն փոխադարձ կապերի միջոցով, որ գոյություն ուներ Սելևկյան տերության ու աղվանական ցեղերի միջև: Նման կապերի հնարավորության մասին են վկայում ինչպես մատենագիտական, այնպես էլ նյութական աղբյուրները: Ըստ առաջինների, դեռևս Սելևկյան թագավոր Սելևկոս Նիկատորի օրոք (312-280 թթ.) և նրա հանձնարարությամբ զորավար Պատրոկլեսը մ.թ.ա. 283-282 թթ. կատարել է Կասպից ծովի հետազոտմանն ուղղված մի ճանապարհորդություն[3] և, լինելով ապագա Աղվանքի տարածքում, բնական է, հարաբերությունների մի հորձանք է առաջացնում աղվանական ցեղերի ու Սելևկյան տերության միջև[4]: Աղվանական ցեղային միությունների և Սելևկյան տերության միջև եղած հարաբերություններ են մատնանշում նաև Աղվանքի տարածքում

---

[3] Դեռևս Ալեքսանդր Մակեդոնացուն էր հետաքրքրել Կասպից ծովը և նրա հետազոտման համար լուրջ նախապատրաստական աշխատանքներ էր տարել: Սակայն վերահաս մահը խանգարել էր նրան իրագործելու իր մտադրությունը: Ժամանակաշրջանի այդ հրամայական խնդիրը Ալեքսանդրի տերության հետ մեկտեղ ժառանգում են նրա հաջորդները, որոնցից մասնավորապես Սելևկյանները, ի բավարարումն հելլենիզմի առաջ քաշած այդ պահանջի, ձեռնամուխ են լինում Կասպից ծովի հետազոտմանը և տերության տնտեսական ու քաղաքական շահերին նրա արդյունքների ծառայեցմանը:

[4] Պատրոկլեսի այս ճանապարհորդության մանրամասնությունները մեզ հայտնի չեն: Այդ մասին հաղորդում են անտիկ հեղինակները, մասնավորապես Ստրաբոնն ու Պլինիոսը, որոնք իրենք էլ օգտվել են նրանից միջնորդավորված ձևով՝ Էրատոսթենեսի միջոցով (Страбон, XI, XII, 3; Pliny, VI, 36): Նրանց հաղորդումների համաձայն, Պատրոկլեսի իբր շուրջկասպյան այդ ճանապարհորդությունը վերջանում է մի այնպիսի «հայտնագործությամբ», որ նույնիսկ մի քայլ ետ էր ժամանակի աշխարհագրական պատկերացումներից: Այն դեպքում, երբ դեռևս Հերոդոտոսին էր հայտնի, որ Կասպից ծովը ներքին մի ծով է, փակ ջրամբար, որ ոչ մի կապ չունի այլ ծովերի հետ (Հերոդոտոս, I, 203), Պատրոկլեսի արշավախումբը «բացահայտում է», թե այն հյուսիսում միանում է օվկիանոսի հետ, այսինքն՝ ծովածոց է (Страбон, XI, VI, 1; Pliny, VI, 36-38): Այսպիսի «հայտնագործությունը» կասկածելի է դարձրել նրա ճանապարհորդության շուրջկասպյան բնույթը (Дж. Томсон, История древней географии, М., 1953, с. 192) , Նույնանի կարծիքով, Պատրոկլեսը այդ ճանապարհորդության ընթացքում հասել է հավանաբար մինչև Սուլակ ու Թերեք, ըստ Գիզինգերի՝ անցել է ընդամենը Կուրի և Բաքվի միջև ընկած տարածությունը (К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 57) : Բայց թե՛ առաջին և թե՛ երկրորդ դեպքում Պատրոկլեսի արշավախումբը կլիներ ուսումնասիրվող տարածքում և կշփվեր տեղի բնակչության հետ:

հայտնաբերված դրամական գանձերի մեջ գտնված սելևկյան դրամները[5]:

Այսպիսով, աղվանական ցեղերի ու Սելևկիայի միջև, իրոք, կարելի է ենթադրել այնպիսի փոխհարաբերություններ, որոնք նպաստել են առաջինների մեջ հելլենիստական տարրի ներթափանցմանն ու նրանց հասարակական-քաղաքական կյանքի վերափոխմանը: Հելլենիզմի այս զորեղ ազդեցությամբ էլ աղվանական ցեղերի կյանքում տեղի էին ունենում լուրջ սոցիալական փոփոխություններ: Աղվանական ցեղային միությունների հասարակական կյանքում սոցիալական շերտավորումն արդեն կատարված փաստ էր և գնալով խորանում էր: Նրանց հասարակական-քաղաքական զարգացման վրա մեծ ազդեցություն էին գործում նաև անմիջական հարևանները՝ Մեծ Հայքը և մ.թ.ա. III դարի սկզբներին առաջացած Քարթվելա-Իբերական պետությունը:

Այսպիսով, մի կողմից հելլենիզմի, մյուս կողմից պետականություն ունեցող մերձավոր հարևանների ներգործությունը աղվանական ցեղերի հասարակական զարգացման վրա հասցրել էին քայքայել նախնադարյան-համայնական հարաբերությունները նրանց մոտ՝ տանելով դեպի դասակարգային հասարակություն:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում աղվանական ցեղային միությունները ապրում էին նաև քաղաքական կայունացման շրջան, բայց պատմագրության մեջ նրանց այդ ժամանակաշրջանի քաղաքական պատմությունն ևս ներկայցվում է զգալի անճշտություններով: Նախ, մեղանչելով պատմական ճշմարտության առջև և աղվանական ցեղային միություններին վերագրելով արդեն կազմավորված և «Աղվանք» կոչված միաձույլ պետության գոյավիճակ, ուսումնասիրողները տվյալ ժամանակաշրջանում պատկերում են հայ-աղվանական այնպիսի հարաբերություններ, որոնց ժամանակ իբր Մեծ Հայքը թագավոր Արտաշես Ա-ի գլխավորությամբ Աղվանքի հաշվին ընդարձակել է իր տարածքը՝ գրավելով Ուտիք, Արցախ, Փայտակարան նահանգներն ու «այլ գավառք»: Այստեղ մանրամասնելով խոսքը, բերում ենք Ստրաբոնի հաղորդումը, որը որպես հիմք վկայակոչում են հակապատմական այս գաղափարի հեղինակները[6]: «Պատմում են, որ Հայաստանը առաջ եղել է Փոքր և մեծացել Արտաքսիասի և Զարիադրեսի պատերազմներով: Նրանք սկզբում Անտիոքոս Մեծի զորավարներն էին և հետագայում, նրա անկումից հետո, դարձան թագավորներ, մեկը Ծոփքի, Ակիսենեի, Օդոմանտիսի և մի քանի այլ գավառների, իսկ մյուսը՝ Արտաշատի շուրջը գտնվող երկրի: Սրանք միասին ընդարձակեցին իրենց երկրների սահմանները, գրավելով շրջակա ժողովուրդների մարզերի մի մասը և հատկապես մարերից խլեցին Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեդան, իբերներից՝ Պարիադրեսի լեռան ստորոտները և Խորզենեն և Գոգարենեն, որոնք գտնվում էին Կուրի մյուս կողմում, խալյուբներից և մոսյունոյկներից՝ Կարենիտիսը և Դերքսենեն, որոնք Փոքր Հայքին սահմանակից

[5] И. А. Бабаев, С. М. Казиев, Кабалинский клад монет эллинистической эпохи, Нумизматика и этнографика, М., 1971, N IX, с. 1-32; Е. А.Пахомов, Античные монеты в Албании (в пределах Азербайджанской ССР), Сб., Вопросы истории... Албании, с. 107: Խ. Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում (IV դ. .մ.թ.ա. XIVդ. մ.թ.), Երևան, 1983, էջ 32:

[6] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 58 и сл.; Ф. Мамедова, Политическая история ... Албании, с. 117 и сл.

էին և կամ նրա մասն էին կազմում, կատոններից՝ Ակիլիսենեն և Անտիտավրոսի շրջանները, սարրիներից՝ Տամոնիտիսը, ուստի և բոլորը միալեզու էին»[7]: Ինչպես տեսնում ենք Ստրաբոնից քաղված այս ամբողջական մեջբերումից, Արտաշեսի կարծեցյալ «նվաճումների» թվում չեն հիշատակվում վեճի առարկա մարզերը, տրամագծորեն ներհակ այնպիսի մի ուրիշ եզրակացության հիմք տալով, որ դրանք Արտաշեսի թագավորության մասերն էին անհամեմատ ավելի շուտ, քան նրա «նվաճումներն» էին: Դրանում հեշտ է համոզվել Արտաշեսի՝ հայոց թագավորության գլուխ անցնելու պատմության ուսումնասիրությամբ: Մ.թ.ա. 223 թ. Սելևկիայում գահ է բարձրանում Անտիոքոս Գ-ն (223-187 թթ.), որը, հմտորեն օգտագործելով Մեծ Հայքում Երվանդունիների վերջին ներկայացուցչի՝ Օրոնտես-Երվանդի դեմ ծագած դժգոհությունները, կռիվ է հրահրում նրա դեմ և այն վարում Արտաշեսի ձեռքով: Վերջինս, որ Երվանդից դժգոհ հայ ազնվականներից մեկն էր, ինչպես գիտենք Խորենացու պատմածից, Երվանդի դեմ իր կռիվն սկսում է շարժվելով դեպի Ուտիք, ուր գտնվում էր Երվանդը: Հակառակորդների միջև վճռական ճակատամարտը տեղի է ունենում Երվանդավան վայրում և ավարտվում Արտաշեսի հաղթանակով[8]: Հաղթանակի շնորհիվ Մեծ Հայքում վերահաստատվում է Սելևկյանների իշխանությունը և Անտիոքոս Գ-ն այստեղ ստրատեգոս է նշանակում Արտաշեսին, իսկ մինչ այդ նվաճված Ծոփքում՝ Զարեհին[9]: Դա փաստարկված է նաև Ստրաբոնի հաղորդումներում. «Նրանք (Արտաշեսն ու Զարեհը - Հ. Ս.),- գրում է նա,- թագավորի (Անտիոքոսի - Հ. Ս.) հանձնարարությամբ իշխում էին երկրում»[10]:Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանի բաժանումները ստրատեգիաների ու Արտաշեսի ու Զարեհի նշանակումները որպես սելևկյան ստրատեգոսների, տեղի են ունեցել մ.թ.ա. 201 թ.[11]: Այս նշանակումով սելևկյան ստրատեգոս Արտաշեսի ձեռքն են անցնում Երվանդունիների նախկին թագավորության ողջ տարածքը և, բնականաբար, նաև այդ տարածքի ամբողջականությունը կազմող Ուտիք, Արցախ ու Փայտակարան նահանգները: Իսկ որ վերջիններս Երվանդունիների թագավորության մարզերից էին, մենք համոզվել ենք վերը կատարած մեր քննությամբ[12]:

Այսպիսով, վեճի առարկա նահանգները, որոնք մինչև Արտաշեսն էլ կազմում էին Մեծ Հայքի մարզերը, նրա իշխանության տակ են անցնում Սելևկյան ստրատեգոս եղած ժամանակ՝ մ.թ.ա. 201թ., այսինքն նրա գործունեության անհամեմատ ավելի վաղ շրջանում, քան «նվաճումների» ժամանակաշրջանը: Պատահական չէ, որ Ստրաբոնը խոսելով այդ գործունեության մասին, «նվաճված» երկրների թվում չի հիշատակում աղբբեջանցի ուսումնասիրողների համար վիճահարույց մարզերը:

---

[7] Страбон, XI, XIV, 5.

[8] Խորենացի, Բ, գլ. ԽԴ- ԽԷ:

[9] Մանրամասն տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Անտիոքոս Գ Սելևկյանը և հայկական պետությունները, ԲԵՀ, 1969, թիվ 1:

[10] Страбон, XI, XIV, 15.

[11] Գ. Խ. Սարգսյան, Անտիոքոս Գ Սելևկյանը ..., էջ 50, Ժ. Գ. Էլչիբեկյան, Հայաստանը և սելևկյանները, էջ 52:

[12] Տե՛ս վերը:

Մինչդեռ աղվանական ցեղերն ուսումնասիրվող ժամանակաշրջանում ապրում էին քաղաքական կայունացման շրջան և անշեղորեն ընթանում պատմական զարգացման օրինաչափ ուղիով: Նրանց համար ստեղծվել էին բոլոր նախադրյալները պետության կազմավորման համար:

## Բ. Աղվանական պետության կազմավորումը: Նրա հասարակական քաղաքական կառուցվածքը

Աղվանական պետության գոյության մասին առաջին հիշատակությունը պատկանում է հին ու նոր դարաշրջանների սահմանագլխին ապրող հույն աշխարհագետ Ստրաբոնին (մ.թ.ա.63-մ.թ.20թթ): «Նրանց (աղվանացիների - Հ. Ս.) թագավորները,- գրում է նա,- նույնպես հոյակապ են: Այժմ, ճիշտ է, նրանց մոտ մեկ թագավոր է կառավարում բոլոր ցեղերին այն դեպքում, երբ նախկինում յուրաքանչյուր օտարալեզու ցեղ կառավարվում էր սեփական թագավորով[13]: Լեզուները նրանց մոտ քսանվեցն են, այնպես որ նրանք միմյանց հետ հեշտությամբ չեն մտնում հարաբերությունների մեջ»[14]:

Ստրաբոնի այս հաղորդումը՝ կապված ստրկատիրական Հռոմի կայսերական ժամանակաշրջանի նվաճումների ու, հատկապես, Պոմպեոսի կովկասյան արշավանքների հետ, հաստատվում են անտիկ շրջանի այլ հեղինակների տեղեկություններով: Պլուտարքոսի, Ապպիանոսի ու ապա նաև Դիոն Կասսիոսի վկայությամբ այդ արշավանքների ժամանակ Պոմպեոսը իր ճանապարհին հանդիպում է արդեն ձևավորված պետական միավորի, իսկ նրա լեգիոնները կովում են լավ զինված, մեծաքանակ և թագավորի կողմից առաջնորդվող կանոնավոր բանակի դեմ[15]:

Չնայած աղբյուրների որոշակի հաղորդումներին, մի խումբ ուսումնասիրողներ աղվանական պետության կազմավորման ժամանակաշրջան համարել են մ.թ. I դարը: Այսպես, Ադրբեջանի պատմության առաջին խորհրդային

---

[13] Ստրաբոնը չի գրում «ցեղ», «ժողովուրդ» կամ «թագավորություն»: Նրա մոտ այս հասկացությունները արտահայտված են «լեզու» բառով (տես К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 59; С. М. Кркяшарян, К интерпретации некоторых сведений древнегреческих авторов об Армении (В кн. Проблемы античной истории и культуры, Ереван, 1979, с. 132), որ բառացի հասկանալու դեպքում համապատասխան կապակցությունը կստանար «յուրաքանչյուր լեզու կառավարվում էր սեփական թագավորով» անճիշտ բովանդակությունը, քանի որ լեզուները թագավորներ չեն ունենում: Զ. Յամպոլսկին ելնելով Աղվանքում մեկ ընդհանուր լեզվով խոսող բնակչություն տեսնելու ցանկությունից, գտնում է, որ այստեղ խնդրո առարկա բառը գործածված է «բարբառ» իմաստով և ըստ այդմ էլ եզրակացնում, թե աղվանական ցեղերը ոչ թե խոսել են տարբեր լեզուներով, այլ նույն լեզվի 26 բարբառներով (տես З. Ямпольский, Древние авторы о языке населения Азербайджана, с. 65. Две заметки, с. 74): Անշուշտ սխալվում է Զ. Յամպոլսկին իր նպատակային մեկնաբանությամբ, քանի որ այդ դեպքում նույն կապակցությունը կհնչեր «յուրաքանչյուր բարբառ կառավարվում էր սեփական թագավորով» անիմաստ ձևով, այնքանով որքանով անհեթեթ է կարծել, թե բարբառները ունենում են թագավորներ: Այսպիսով կասկածից վեր է, որ Ստրաբոնի մոտ խոսքը, իրոք, գնում է ցեղի մասին: Եվ որովհետև դա այդպես է, իսկ հայտնի է, որ ցեղերն էլ թագավորներ չեն ունենում, ուստի միանգամայն հավանական է կարծել, որ հույն աշխարհագետի նշած թագավորները պարզապես ցեղային առաջնորդներ էին:

[14] Страбон, XI, IV, 6.

[15] Плутарх, Помпей, XXXIV, XXV; Известия древних писателей, т. I, с. 531., Դիոն Կասսիոս, էջ 142-143:

հետազոտողներից մեկը՝ Վ. Ն. Լևիատովը գտնում է, որ աղվանացիները «մ.թ.ա. I դարում դեռևս ապրում էին չքայքայված, տոհմացեղային հարաբերությունների պայմաններում»[16]: Ըստ նրա, միայն այդ շրջանում է, որ գույքային անհավասարության առաջացման հետևանքով աղվանական ցեղերի մոտ սկսվում է տոհմական կարգերի քայքայման ու դասակարգերի ձևավորման պրոցեսը[17]: Նույն կարծիքին են նաև այլ հեղինակներ[18]:

Հարցը հատուկ քննության նյութ չդարձնելով հայ պատմաբաններից Ս. Երեմյանն ու Բ. Ուլուբաբյանը Աղվանից պատմության ծագման ժամանակաշրջան են համարում մ.թ. I դարը[19], իսկ Ա. Հակոբյանը՝ հենվելով բացառապես Ստրաբոնի գործածած «այժմ... նախկինում» կապակցության կառուցվածքի վրա՝ մոտավորապես մ.թ.ա. I դարի սկիզբը[20]:

Անտիկ հեղինակների վերոբերյալ վկայությունները ուսումնասիրողների մի այլ խմբի հանգեցրել են մի անվերապահ հետևության. մ.թ.ա. I դարի կեսերին արդեն գոյություն ուներ կազմավորված, 26 ցեղերից բաղկացած պետական մի միավորում «Աղուանք» (Albania) անունով, իր թագավորով, կառավարման նվիրապետական համակարգով ու ժամանակին համապատասխան սոցիալ-տնտեսական հասարակարգով:

Ընդունելով հանդերձ Աղվանից պետության գոյությունը նշված ժամանակաշրջանում, ուսումնասիրողների կարծիքները, սակայն, տարամիտվում են նրա կազմավորման ժամանակի հարցում: Նրանք հիմնականում Աղվանից պետության առաջացումը տանում են ավելի վաղ ժամանակներ: Նրանցից, օրինակ, Կ. Վ. Տրևերը Աղվանքի պատմության ու մշակույթի հարցերին նվիրված մենագրության մեջ գրում է, որ Աղվանքում պետությունն իր ավարտուն ձևը ստացած պետք է լինի մ.թ.ա. II դարի կեսերին[21], սակայն, քիչ հետո կրկնելով իրեն, ավելացնում է. «գուցե և ավելի շուտ»[22]: Նույն հարցի մասին խոսելիս ադրբեջանցի հեղինակներից Ի. Ալիևը ցույց է տալիս մ.թ.ա. III-II դդ. և կարծիքն հիմնավորում է Աղվանքի թագավորի համար Ստրաբոնի գործածած «այժմ» արտահայտությամբ, որն, ըստ Ալիևի «պետք է վերագրել, համենայն դեպս ոչ ուշ, քան մ.թ.ա. III-II դդ., իսկ, հնարավոր է, և ավելի վաղ ժամանակների»[23]:

Աղվանական պետության կազմավորման հարցի մասին հատուկ հոդված է հրատարակել Ի. Ա. Բաբաևը[24]: Հեղինակի նպատակն է եղել «հնագիտական նյութերի ու գրավոր աղբյուրների տվյալների համադրության հիման վրա վերանայել Աղվանքում պետության համեմատաբար ուշ ծագման տարածված

---

[16] В. Н. Левиатов, Азербайджан с V в. до н. л. по III в. н. л., с. 79-80.

[17] Նույն տեղում, էջ 80:

[18] О. Ш. Исмизаде, Ялойлутепинская культура, с. 89. История Азербайджана, с. 59.

[19] С. Т. Еремян, Основные проблемы периодизации истории народов Закавказья . Труды объединенной научной сессии АН ССР и АН Закавказских республик по общественным наукам, Баку, 1957, с. 100; Բ. Ուլուբաբյան, Դրվագներ..., էջ 113:

[20] А. Акопян, Албания-Алуанк, с. 18.

[21] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 144.

[22] Նույն տեղում, էջ 145:

[23] И. Алиев, К интерпретации ..., с. 160.

[24] И. А. Бабаев, К вопросу о возникновении государства Албании (Кавказской-), Известия АН Азерб. ССР, История, философия, право, Баку, 1975, с. 40-51.

կարծիքը»[25]: Դրանից էլ ելնելով նա այն համոզմունքն է հայտնում, թե «Աքեմենյան պետության կործանումից հետո, մ.թ.ա. I դարում, իսկ ըստ հնագիտական հետազոտությունների IV դարի վերջում– – III դարի սկզբում, ծագում ու ձևավորվում է Աղվանական պետությունը»[26]:

Աղվանական պետության մասին խոսելիս, Ֆ. Մամեդովան գրում է, որ այն «անտիկ գրավոր աղբյուրների համաձայն ստեղծվել է մ.թ.ա. I դարում, իսկ ըստ հնագիտական հետազոտությունների՝ IV դարի վերջին տասնամյակում -III դարում[27]: Եվ հիմք ընդունելով իբրև թե հնագիտական հետազոտությունների ցույց տված այս ժամանակաշրջանը, նա մ.թ.ա. I- մ.թ. I դարերի աղբյուրների հաղորդումները Աղվանքի սահմանների մասին, զուտ մեխանիկական «հետադարձումով», առանց փաստարկման, տեղափոխում է մ.թ.ա. III դար և այդ ժամանակից սկսած պատկերում արդեն ձևավորված, իր քաղաքական սահմաններն ունեցող պետական միավորում[28]: Նույն՝ մ.թ.ա. IV-III դարերը որպես Աղվանից պետականության առաջացման ժամանակաշրջան են համարում նաև ադրբեջանցի այլ հեղինակներ[29]:

Սակայն Աղվանից պետության ծագման համար ցույց տրվող ժամանակաշրջանները ադրբեջանցի հեղինակների կողմից լոկ ցանկալին իրականության տեղ ներկայացնելու հետևանք է, իսկ դրանց հաստատմանը միտված վկայությունները՝ անհամապատասխան: Այսպես, գրեթե բոլոր ադրբեջանցի հեղինակները որպես Աղվանից պետության ծագման ժամանակաշրջան համարելով իրենց համար ցանկալի IV-III դդ., վկայակոչում են Արրիանոսի հաղորդումը, ուր մ.թ. II դարի պատմիչը հայտնում է, որ Գավգամելայի ճակատամարտում, Աքեմենյանների կողմից կռվում էին նաև աղվանացիները[30]: Նրանց կարծիքով հաղորդման մեջ արտացոլված է Աղվանից պետության գոյության գաղափարը: Մինչդեռ, ինչպես տեսանք վերևում, աղվանացիները նշված ժամանակաշրջանում պետականություն չունեին, և կռվում հանդես էին գալիս սոսկ որպես ցեղային միություններ: Այս միտքը հաստատվում է նաև Արրիանոսի նույն հաղորդման հետագա քննությամբ: Պարզվում է, որ ինքը պատմիչը ևս տարբեր կարգավիճակներով է ներկայացրել Ատրոպատեսի հրամանատարության տակ կռվողներին: Նա նախ նշում է մարերին և ընդգծում, որ սրանց գլխավորում էր Ատրոպատեսը (հիշենք՝ «մարերին գլխավորում էր Ատրոպատեսը»), ապա հիշատակում է կադուսիներին, աղվանացիներին ու սակեսիններին որպես առաջինների հետ միասին հանդես եկողների («մարերի հետ էին կադուսիները, աղվանացիները ու սակեսինները»): Այսպիսի տարաբաժանմամբ անտիկ հեղինակը կարծես վերջիններիս՝ որպես առանձին ցեղային միությունների՝ հակադրում է մարերին՝ պետականություն ունեցող ժողովրդին, որոնք կռվում էին սեփական առաջնորդի գլխավորությամբ: Եվ, իսկապես, ուսումնասիրվող

[25] Նույն տեղում, էջ 40:
[26] Նույն տեղում, էջ 47:
[27] Ф. Мамедова, Политическая история..., с. 57.
[28] Նույն տեղում, էջ 144 և հաջ.:
[29] Дж. А. Халилов, Материальная культура..., с. 160, 197, 206; Р. Б. Геюшев, Христианство в Кавказской Албании, с. 3.
[30] Арриан, III, 8, 4.

ժամանակաշրջանում դա համապատասխանում էր պատմական իրականությանը: Անտիկ աղբյուրները մի կողմից վկայում են այդ ժամանակ Մարական պետության՝ մեր օրինակում, Հյուսիսային Մարաստանի գոյությունը (որը քիչ ավելի ուշ նրա սատրապ Ատրոպատեսի անվան հետևությամբ վերանվանվեց Ատրպատական), մյուս կողմից խոսում կատիշների (նրանց մոտ ու սակեսինների) մասին որպես միայն ու միայն առանձին ցեղային միավորումների[31]: Իսկ քանի որ կատիշներն ու սակեսինները աղբյուրներում բնորոշվում էին սոսկ որպես ցեղային միավորներ, ապա կասկած չի կարող լինել, որ մարերից առանձին ու այս ցեղային միությունների կողքին հիշատակվող աղվանացիները ևս Գավգամելայում հանդես էին գալու նմանատիպ քաղաքական կազմավորմամբ: Դա էլ հենց արտացոլել է Արրիանոսը՝ սահմանազատում մտցնելով մարերի և կատիշների, սակեսինների ու աղվանացիների միջև:

Այսպիսով, Արրիանոսի հիշյալ հաղորդումը չի կարող լինել այն հիմքը, որի վրա իրենց երազած եզրակացություններն են կառուցում ադրբեջանցի հեղինակները: Իրականում այն ցույց է տալիս, որ աղվանացիները նշված՝ IV-III դդ. ապրում էին միայն ու միայն ցեղային միություններով: Այդպիսի եզրակացության են հանգեցնում և հնագիտական աղբյուրները՝ Յալոյլութափա անունով հայտնի և մ.թ.ա. V-I դդ. թվագրվող[32] (այսինքն ուսումնասիրվող ժամանակշրջանը ներկայացնող) ու մյուս համաժամանակյա հնավայրերի պեղածո նյութերը[33]: Այդ հնավայրերին հատուկ գետնափոր թաղումներից հայտնաբերված իրերը հիմնականում աշխատանքային գործիքներ են, տարբեր տեսակի զենքեր, կենցաղային առարկաներ, բրոնզյա ու ոսկյա զարդեր[34]: Դրանք առանձնացնելով հանդերձ ցեղի որոշ արտոնյալ խավերի հարուստ դամբարանները նրա շարքային անդամների շիրիմներից, միաժամանակ ընդգծում են, որ աղվանացիների հասարակական կյանքում նշված շրջանում ընթանում էր սոսկ սոցիալական շերտավորման գործընթաց և ընդհուպ մ.թ.ա. I դարը նրանք ապրում էին ցեղային միություններով: Պեղված բազմաթիվ գերեզմաններն իրենց հիմնական պարունակությամբ, միմյանցից առանձնապես շատ չեն տարբերվում: Մինչդեռ Աղվանից պետության գոյության դեպքում դրանց մեջ հանդիպելու էին թագավորական թաղումներ, որոնց բնութագրական են հարուստ գույքը, որի մեջ աչքի են ընկնում ոչ այնքան ոսկյա և արծաթյա առօրյա գործածական իրերը, այլ նույն մետաղներից պատրաստված հազվագյուտ առարկաները, բարձրաստիճան ննջեցյալին հողին հանձնելու արարողությանն ուղեկցող մարդկային զանգվածային զոհաբերությունները, դամբարանի մեծածավալ կառուցվածքը[35]:

Իսկ մինչև օրս պեղված մեծաքանակ գերեզմանափոսերի շարքում նման բնութագրական կողմերով, և ոչ մի դամբարան Աղվանքում չի հայտնաբերված: Այս փաստը, որ մատնանշում են նաև իրենք՝ ադրբեջանցի հնագետները[36],

---

[31] Տե՛ս վերը, էջ 167-168, ծանոթ. 68-69:

[32] О. Ш. Исмизаде, Ялойлутепинская культура, с. 72.

[33] С. М. Казиев, Археологические памятники Мингечаура..., с. 169; Дж. А. Халилов, Материальная культура, с. 53.

[34] С. М. Казиев, Археологические памятники Мингечаура..., с. 171-172. О. Ш. Исмизаде, Ялойлутепинская культура, с. 4-5; Дж. А. Халилов, Материальная культура, с. 54-56.

[35] В. М. Массон, Экономика и социальный строй древних обществ, Л., 1976, с. 169.

[36] Дж. А. Халилов, Материальная культура, с. 201.

նմանապես ակներև է դարձնում այն հեղինակների կամայական մոտեցումը հարցին, ովքեր հայտարարում են, թե հնագիտական աղբյուրները որպես Աղվանից պետության ծագման ժամանակաշրջան ցույց են տալիս մ.թ.ա. IV-III դարերը:

Այսպիսով, գրավոր աղբյուրներն ու հնագիտական նյութերը վկայում են, որ սխալվում են ուսումնասիրողները Աղվանից պետության առաջացման համար ցույց տալով IV-III և, նույնիսկ, III-II դարերը: Այս ժամանակաշրջանում աղվանական ցեղերի քաղաքական կազմավորումները ցեղային միություններից այն կողմ չէին անցնում: Եվ միայն ազատվելով Գավգամելայում մ.թ.ա. 331 թ. պարտություն կրած Աքեմենյանների ենթակայությունից և ձեռք բերելով ինքնուրույնություն, նրանք հասարակական կյանքում տեղի ունեցող որոշակի սոցիալական տեղաշարժերի շնորհիվ գցում են դեպի պետություն տանող ուղու հիմքերը: Քաղաքական կյանքում իշխանությունը որպես մշտական ու ժառանգական պաշտոն կենտրոնանում է ցեղային առաջնորդների, զորապետների և արդեն հատուկ դաս դարձած քրմերի ձեռքում: Դա հանգեցնում է հասարակության այն վաղագույն քաղաքական կազմակերպության ձևին, որն հայտնի է «ռազմական դեմոկրատիա» անունով, իսկ տնտեսական կյանքում մեծ զարկ են ստանում հողագործությունը, արհեստագործությունն ու առևտուրը: Նոր, բարձր մակարդակի է հասնում մշակույթը: Այս հիմքերի վրա էլ աղվանական ցեղային միություններում աստիճանաբար հասարակությունը ենթարկվում է սոցիալական տրոհման, որոնց միջև ձևավորվում են այնպիսի հարաբերություններ, որոնք դնում են պետության, որպես նորաստեղծ հարաբերությունները կարգավորող հաստատության, պահանջ: Սոցիալական, տնտեսական ու քաղաքական բնույթի բնիկ-տեղական նոր ու որակական այսպիսի տեղաշարժերի հետ մեկտեղ աղվանական պետականության ծագման համար անհրաժեշտ էին նաև արտաքին, հոգևոր ու նյութական, մշակութային ազդակներ: Նման խոշոր ազդակ ծառայեց հելլենիզմն արևելքում, որն իր ծաղկուն շրջանում, այսինքն մ.թ.ա. III-I դդ. ընդգրկել էր բավականաչափ ընդարձակ շրջաններ, այդ թվում և մերձկասպյան մարզերը[37]: Հելլենիզմի զորեղ ազդեցությամբ աղվանական ցեղերի մոտ էլ ավելի է խորանում սոցիալական շերտավորումը, մեծանում գույքային անհավասարությունը, աճում մասնավոր սեփականությունը: Այս կապակցությամբ բավական է հիշատակել դամբարաններից հայտնաբերված կնիք-մատանիները, որոնք, ուսումնասիրողների կարծիքով, պատկանել են մասնավոր անձանց և կարող էին ի հայտ գալ միայն մասնավոր սեփականության գոյության պայմաններում[38]: Ըստ նրանց, այդ կնիք-մատանիների տերերը հանդես գալով որպես սեփականատերեր, օգտագործել են դրանք անհատական գույքային գործարքները անձնական կնիքով հաստատելու համար[39]: Նույն կնիքների վրա տարբեր հագուստներով պատկերված մարդկանց ուրվագծերում եւս իր արտացոլումն է գտել հասարակության սոցիալական շերտավորումը: Անվանի մարդկանց ճոխ, գոտեվորված երկար հագուստն ու բարձր գլխարկը խիստ տարբերվում են պարզ, շարժումների ազատության համար կարճ բաճկոնով կամ թիկնոցով, ոտքերը կիպ գրկող

---

[37] Տես վերը, էջ 177:

[38] В. Н. Левиатов, Азербайджан с V в. до н, л. по III в. н. л., с. 69; Дж. А. Халилов, Материальная культура..., с. 155, 159, 201.

[39] Նույն տեղում:

անդրավարտիքով զինվորի ու այլոց հագուստներից[40]:

Աղվանական ցեղերի հասարակական-քաղաքական զարգացման վրա մեծ ազդեցություն են գործում նաև նրանց անմիջական հարևան երկրների՝ Մեծ Հայքի ու Վիրքի պետական կազմավորումների գոյությունը:

Այսպես, մի կողմից հասարակական ու քաղաքական զարգացումը, մյուս կողմից էլ մերձավոր հարևանների պետական-վարչական ապարատի ներգործությունը, շուտով հասցնում են նախնադարյան-համայնական կարգերի քայքայմանը և դասակարգային հասարակության ու պետության ծագմանը աղվանական ցեղերի մոտ:

Աղվանից պետությունը, ինչպես արդեն ասվել է վերևում, գրավոր աղբյուրներում հիշատակվում է միայն մ.թ.ա. I դարից: Արձանագրելով այս փաստը, նույն աղբյուրները նման կազմակերպության գոյությունը նշված դարում ներկայացնում են որպես մի նորահայտ երևույթ երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Օրինակ, հենց Ստրաբոնի նկարագրություններում աղվանացիները պատկերված են որպես պետության ու պետական կառուցվածքի հարցերին անտարբեր մի ժողովուրդ: Աշխարհագետը գրում է. «Պատերազմի, *պետական կառուցվածքի* ու հողագործության հարցերին նրանք վերաբերվում են անհոգությամբ»[41]: Նման անհոգություն մարդիկ կարող էին ցուցաբերել միայն նորաստեղծ ու կենցաղում դեռևս չամրապնդված հասարակական-քաղաքական երևույթի՝ պետության նկատմամբ: Այս միտքը հաստատում է նաև աղվանական թագավորի համար նույն հեղինակի գործածած և արդեն նշված «այժմ» արտահայտությունը, որը ցույց է տալիս ոչ թե հեռավոր ժամանակներ, ինչպես իրենց ցանկության համեմատ մեկնաբանում են ուսումնասիրողներից ոմանք[42], այլ հենց հույն աշխարհագետի ապրած ժամանակաշրջանը՝ մ.թ.ա. I - մ.թ. I դարերը: Պլուտարքոսի դիտողությամբ էլ, ի հակադրություն Լուկուլլոսի դեմ պայքարում Տիգրան Մեծին օգնության եկած «թագավորների», այսինքն պետություն ունեցող ժողովուրդների, Կասպից ծովի մոտերքից եկել էր «աղավանացիների բազմությունը»[43], որի վերջին՝ «բազմություն» տերմինում դրսևորվել է աղվանացիների հասարակական-քաղաքական կյանքում պետության նորագոյացման գաղափարը:

Պետությունների բնութագրական հատկություններից է սեփական դրամների թողարկումը: Այս տեսակետից և մոտենալով հարցին, կտեսնենք, որ Աղվանքում տեղական կերտվածքի դրամները, որոնց թողարկումը որպես պետության տարբերիչ հատկանիշ, հաջորդել է նրա ծագմանը, ի հայտ են գալիս զգալիորեն ավելի ուշ: Պեղումներն ուսումնասիրվող երկրի տարածքում՝ Կաբալայում, Խինիսլիում, Շամախիում և այլուր, բացահայտել են դրամական գանձեր, որոնց մեջ մակեդոնական, սելևկյան, պարթևական ու այլ դրամների մեջ գտնվել են նաև տեղական կերտվածքի, հատկապես սելևկյան դրահմաների նմանողությամբ դրամներ[44]: Ըստ անկողմնակալ հեղինակների, վերջիններս կերտվել են ոչ շուտ,

[40] В. Н. Левиатов, Азербайджан с V в. до н, л. по III в. н. л., с. 69.
[41] Страбон, XI, IV, 4 (Ընդգծ. Հ. Ս.):
[42] И. Г. Алиев, К интерпретации..., с. 160. .
[43] Плутарх, Лукулл, XXVI.
[44] Е. А. Пахомов, Античные монеты в Албании, с. 106-113, (նույնի՝ Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, вып. IX, Баку, 1966; И. А. →

քան մ.թ.ա. I դարի երրորդ քառորդում[45], մի ժամանակաշրջան, որն հիմնավորվում է նաև մատենագիտական տվյալներով: Ստրաբոնը գրում է, որ դեռևս Պոմպեոսի արշավանքների ժամանակ՝ մ.թ.ա. 66-65 թթ., աղվանացիների մոտ «գործածության մեջ տարածված չէր դրամ»[46]: Եվ ելակետ ունենալով նշված դրամների դրվագման այս ժամանակը, ավելի քան հավանական կլինի կարծել, որ դրանք հատող պետությունը ծագած պետք է լինի նման պետական գործառնությունից քիչ առաջ:

Այսպիսով, ինչպես նյութական, այնպես էլ գրավոր աղբյուրները թույլ են տալիս հիմնավորապես պնդելու, որ պետությունն Աղվանքում ծագել է միայն ու միայն Պոմպեոսի Աղվանք կատարած արշավանքից քիչ առաջ՝ մ.թ.ա. I դարի սկզբներին:

Հարևանների՝ Մեծ Հայքի ու Վիրքի, համեմատությամբ Աղվանքում պետության ուշ ծագման խնդիրը պայմանավորված էր պատմական ու աշխարհագրական բնույթի մի շարք պատճառներով: Երկրի ֆիզիկաաշխարհագրական տեսակետից խիստ կտրտվածությունը, դրա հետևանքով նրա առանձին շրջանների միջև տնտեսական թույլ կապերն ու վատ հաղորդակցությունը, համեմատաբար քիչ զարգացած սոցիալ-տնտեսական հարաբերություններն ու, վերջապես, զարգացման տարբեր մակարդակի վրա գտնվող բազմաթիվ ու տարալեզու ցեղերի գոյությունը, որոնք Ստրաբոնի խոսքերով արտահայտված, «միմյանց հետ հեշտությամբ չեն մտնում հարաբերությունների մեջ» զգալի դժվարություններ էին առաջացնում:

Աղվանական պետությունը առաջանալով 26 ցեղերի միավորման հիմքի վրա մ.թ.ա. I դարի սկզբներին, վերոհիշյալ քաղաքական սահմաններով, որպես կենտրոնացված թագավորական պետություն, գոյատևում է մինչև մ.թ. V դարի կեսերը, որից հետո Անդրկովկասում ամուր հաստատվելու Սասանյան Պարսկաստանի վարած քաղաքականության հետևանքով վերածվելով մարզպանության, անդառնալիորեն վերանում է: Աղվանից թագավորության գլուխ կանգնած էր թագավորը, որը տեղական ազնվականության ներկայացուցիչն էր, առաջ էր քաշվել ցեղային միությունների առաջնորդների միջավայրից և դրանով տարբերվում էր մյուսներից: Պատմությունը ուսումնասիրվող ժամանակաշրջանի համար պահպանել է երկու այդպիսի թագավորների անունները՝ Օրոյսես և Զոբերոս, երկուսն էլ միևնույն՝ մ.թ.ա. I դարի գործիչներ: Ցավոք, անհայտ է մնացել նրանց դինաստիական պատկանելությունն ու կապը միմյանց հետ: Սակայն, նկատի ունենալով դեռևս ցեղային առաջնորդի պաշտոնի և ընդհանրապես թագավորական իշխանությունների ժառանգական բնույթը, կարելի է ենթադրել, որ Աղվանքում ևս թագավորի պաշտոնը ժառանգական էր, և հիշատակվող թագավորներն էլ պատկանում էին կառավարող միևնույն հարստությանը:Աղվանից թագավորները հողագործական շրջաններում առաջացած քաղաքական համայնքներից առանձնացած ազնվականական

→
Бабаев, С. М. Казиев, Кабалинский клад монет эллинистической эпохи, Нумизматика и эпиграфика, 1971, IX; Дж. А. Халилов, Материальная культура..., с. 152-155.
[45] Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана..., с. 20; Խ. Ա. Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում, էջ 30:
[46] Страбон, XI, IV, 4.

խավերից էին[47]: Այսպիսին է պատմական զարգացման օրինաչափությունը: Սակայն Ք. Ալիևը գտնում է, որ Աղվանից թագավորները մշտապես առաջադրվել են թյուրքական լեզվի բարբառներից մեկով խոսող քոչվոր-անասնապահ ցեղերից, որովհետև, նրա կարծիքով, հողագործական շրջանները, իբր քաղաքականապես բաժան-բաժան լինելով ու որպես սրբազան մարզեր հանդես գալով քրմերի գլխավորությամբ, թագավորներ առաջադրելու համար տնտեսական բազա չունեին[48]: Իսկ որ հատկապես թյուրքական լեզվի բարբառներից մեկով խոսող ցեղերից էին առաջադրվում թագավորներ, ըստ նրա, իբր,ցույց է տալիս Աղվանից թագավորներից Զոբերոսի անունը: Այն կապելով մ.թ. V դարում հիշատակվող հոն-կոնտրիգուրների առաջնորդ Զաբերգանի անվան հետ և նրանցում տեսնելով միևնույն արմատը (Զոբեր-Զաբեր-գան), նա պնդում է, որ Զոբերոսը թյուրքական լեզվի բարբառներից մեկով խոսող քոչվոր անասնապահ ցեղերի միջավայրից առաջադրված թագավորներից մեկն էր: Բայց ճիշտ չէ Ք. Ալիևը Աղվանքի թագավոր Զոբերոսի ու հոների առաջնորդ Զաբերգանի անձնանուններում միևնույն արմատի առկայության իր ենթադրությամբ: Ավելի քան հինգ հարյուր տարվա հեռավորությամբ միմյանցից բաժանված այդ անվանումների պատահական նմանությունը ոչինչ չի նշանակում: Զգձգված, բռնազբոսիկ ու շինծու այսպիսի եզրակացությունը պայմանավորված է մ.թ.ա. I - մ.թ. I դարերում Աղվանքում անպայման թյուրքական տարրեր տեսնելու և նրանց երկրի հասարակական-քաղաքական կյանքում առաջատար դեր հատկացնելու սնապարծ տենչով[49], հանուն որի հասարակության զարգացման մեջ անասնապահ ցեղերին առաջատար դեր է հատկացվում այն ժամանակներում, երբ վաղուց ի վեր հողագործական ցեղերի առանձնահատկությունն էր դարձել ցեղերի միավորման գործընթացի գլխավորումը: Դրանով նա միաժամանակ ի դերև է հանում իր անգիտությունը ընդհանրապես հասարակությունների զարգացման գործում անասնապահական ու հողագործական ցեղերի ունեցած պատմական դերի հարցում:

«Զոբերոս» անվան մեջ Կ. Վ. Տրեվերը իրավացիորեն տեսնում է «տեղական ալբանական անվան հունականացված ձև»[50]:

---

[47] С. Т. Еремян, Экономика и социальный строй Албании III-VII вв., с. 306.

[48] К. Алиев, Албаны-кочевников и Басилевс Зобер, Из. АН АзССРъ 1962, N 8, с. 23-29

[49] Ժամանակակից Ադրբեջանի տարածքում վաղեմի ժամանակներից թյուրքական տարր տեսնելու իր այդ ձգտմամբ Ք. Ալիևը միակը չէ: Այդպիսի ձգտումներ են ցուցաբերում նաև մի շարք այլ ուսումնասիրողներ (տես՝ Р. А. Гусейнов, О тюрках IV-VII вв в зоне Кавказской Албании, Сб. Вопросы истории... Албании, с. 181-192; М. Сеидов, Об этническом термине 'Хайландук' б историяеских трудах Егише и Мовсеса Каганкайтугского, Из. АН АзССР, 1965, N 6, (на. азерб. яз.). Նույնիսկ գտնվել են հեղինակներ, որոնք իրենց հաշիվ չտալով գիտական լրջության պակասի համար, կապեր են տեսնում շումերական ու թյուրքական լեզուների միջև և դրանով ձգտում «ապացուցել», որ թյուրքական լեզուները, իբր հնագույնն են ամբողջ Առաջավոր Ասիայում (А. Мамедов, Теоретические проблемы восстановления первичных языках, Сб. Вопросы азербайджанской филологии, вып. 2, Баку, 1984, с. 5-21) և կամ գտնում են, թե նրանք եղել են ամենահին զանգվածը Ադրբեջանի էթնիկական (°-Հ.Ս.) կազմում է III-V դդ. (С. Алиев, Об этногенезе азербайджанского народа (К постановке проблемы), Сб. Об этногенезе азербайджанского народа, Баку, 1984, с. 4-39): (А. П. Новосельев, Древнейшие государстба на территории СССР Некоторые итоги и задачи изучения), История СССР, 1985, N 6, с. 85-103

[50] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 113

Աղվանից թագավորները առաջադրվում էին հողագործական շրջաններում առաջացած քաղաքական կազմակերպություններից և տեղական ազնվականության ներկայացուցիչներ էին: Թագավորները ու թագավորական ընտանիքի անդամները Աղվանքում կազմում էին հասարակության բարձրագույն և արտոնյալ խավը: Նրանցից էին նշանակվում պետական, քաղաքական ու ռազմական պաշտոնյաները: Աղվանքում արտոնյալ խավերից աղբյուրները հիշատակում են թագավորի եղբայր ու Աղվանքի զորապետ Կոսիսին[51] և պատանդների ու գերված առաջնորդների՝ հեգեմոնների[52], որոնք կամ թագավորի որդիներից էին, կամ մերձավոր ազգականներից:

«Թագավորից հետո ամենահարգված մարդը» Աղվանքում քուրմն էր[53]: «Նա կանգնած էր մեծ ու խիտ բնակեցված սրբազան մարզի գլուխ, ինչպես նաև տնօրինում էր ստրուկներին»[54]: Սրանք, ինչպես դժվար չէ պատկերացնել, կազմում էին տիրող դասակարգի երկրորդ խավը, տնօրինում էին ընդարձակ հողերի և օժտված էին քաղաքական հզոր իշխանությամբ:

Այդ իշխանությունը ավելի էր ուժեղանում հասարակության հոգևոր կյանքի վրա ունեցած իրենց ազդեցությամբ, որը հաճախ տարածվում էր նաև երկրի տիրակալների վրա: Հավանաբար հենց երկրի տնտեսական ու քաղաքական կյանքի վրա քրմական դասի ունեցած ազդեցությունն էր լինում պատճառը, որ մի շարք դեպքերում թագավորները իրենք էին կատարում նաև քրմի պարտականությունները կամ դնում իրենց մերձավոր ազգականների վրա:

Քրմական դասի հասարակական դիրքի ու ունեցվածքային տարբերությունը ընդգծվում է նաև այլ աղբյուրներով: Կլավդիոս Էլիանոսը, օրինակ, գրում է, որ ուղտերի բրդից պատրաստված նրբագեղ հագուստներ էին հագնում «քրմերը և կասպերից ամենահարուստները ու նշանավորները»[55]:

Իրենց իրավական, սոցիալ-տնտեսական դրությամբ տիրապետող դիրք էին գրավում նաև ռազմածառայողական ավագանին, ազնվականության առանձին խավեր և այլն:

Հասարակության ամենաստվար մասը նյութական բարիքների անմիջական ստեղծողները էին՝ գյուղացիները: Նրանք նույնպես բազմաշերտ էին՝ ազատ, կախյալ կամ կիսանկախ, միավորված էին գյուղական համայնքներում և իրենց սոցիալական դրությամբ պետության, քրմական դասի ու առանձին բարձրաստիճան անձանց հիմնական հարկատուները էին: Բացի իրենց գլխավոր պարտավորություններից, նրանք հարկադրաբար կատարում էին նաև հասարակական նշանակության աշխատանքներ և այլ պարհակներ:

Հասարակության ամենաստորին ու ընչազուրկ դասակարգը ստրուկները էին: «Ստրուկ» բառի դասային հասկացությամբ Աղվանքում չկար: Նույնիսկ Ստրաբոնի հաղորդումը և «ստրուկ» բառի գործածումը լիովին չեն արտահայտում վերջինների իրավական- սոցիալական դրությունը: Տաճարային տնտեսություններում նրանք հանդես էին գալիս որպես հիերոդուլներ, որ հեռու էին իսկական, «ստրուկ»

[51] Плутарх, Помпей XXXV.
[52] Նույն տեղում, XIV; Аппиан, с. 117.
[53] Страбон, XI, IV, 7
[54] Նույն տեղում
[55] Известия древних писателей..., т. 1, с. 607.

հասկացությունից, տնային ծառաներ կամ այլ բանող ուժեր էին: Ի դեպ, այսպիսի ստրկական վիճակի էին հասցվում նաև շատ ազատ գյուղացիներ: Ստրկությունը Աղվանքում կրում էր պարզ, նահապետական բնույթ: Այն հանդես էր գալիս տնային ծառայության կամ այլ խոսքով՝ «չզարգացած» արևլյան ձևով:

Այսպիսով, պետությունն իր դասակարգերով ու հասարակական-քաղաքական կառուցվածքով Աղվանքում ծագում է մ.թ.ա. I դարի սկզբներին որպես հասարակական, տնտեսական ու սոցիալական զարգացման արդյունք և բնույթով նախնադարյան, տոհմատիրական կացութաձևերով ներհյուսված ստրկատիրական հասատատություն էր:

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

# ԱՂՎԱՆՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ Մ.Թ.Ա. I— – Մ.Թ. III ԴԴ.

## Ա. Աղվանքը մ.թ.ա. I դարում

Մինչ Աղվանքում ձևավորվում էր տնտեսապես տիրապետող դասակարգի քաղաքական կազմակերպությունը՝ պետությունը, Փոքր Ասիայում տեղի էին ունենում Հռոմի համար բարեհաջող Միհրդատյան պատերազմները, որոնք ի վերջո հանգեցնում են նրա նվաճողական քաղաքականությանն Անդրկովկասում և այդ հողի վրա հասցնում ընդհարման Աղվանից նորաստեղծ պետության հետ:

Սկզբնական շրջանում աղվանա-հռոմեական հարաբերությունները ծավալվում են հայ-հռոմեական հարաբերությունների բովում, երբ Միհրդատյան երրորդ պատերազմից հետո (73-71 թթ. մ.թ.ա.) հաջողությունից գոռոզացած հռոմեացի զորավար Լուկուլլոսը, որին էր վստահված Արևելքի պատերազմական գործերի վարումը, մ.թ.ա. 69 թ. գարնանը անձնական նախաձեռնությամբ ու պատասխանատվությամբ ձեռնարկում է իր հայկական արշավանքը և անակնկալ[1] հարձակվում Հայոց երկրի վրա: Սկսվում է հայ-հռոմեական պատերազմը, որի ժամանակ թշնամուն դիմագրավելու համար Տիգրան Մեծը օժանդակ զորքեր է բերում հարևան երկրներից, այդ թվում և Աղվանքից: Պլուտարքոսը գրում է «(Տիգրան Մեծի - Հ. Ս.) մոտ, իրենց ուժերով հավաքվեցին հայերն ու կորդվացիները, իրենց բանակների գլուխ անցած եկան մարական ու ադիաբենական թագավորները, ... Բաբելոնյան ծովից եկավ արաբների անթիվ-անհամար ամբոխը, իսկ Կասպից ծովից՝ ալբանացիների ու նրանց հարևան իբերների բազմությունը, դեռ նրանց էլ միացան Արաքսի ափից եկած, նույնպես ոչ քիչ թվով ազատ ցեղեր՝ գրավված Տիգրանի նվերներից ու բարերարությունից»[2]: Ահա այսպես, հայկական բանակի կազմում է տեղի ունենում աղվանացիների առաջին հանդիպումը հռոմեացիների հետ, որը շուտով վերաճելու էր պետության ինքնուրույնության ու անկախության համար մղվող ծանր պատերազմի:

Ուսումնասիրողներին բավական զբաղեցրել է այն հարցը, թե նոր հարաբերություններում քաղաքական ինչ կարգավիճակով էին մասնակցում աղվանացիները: Ն. Ադոնցը Աղվանքը դասում է Տիգրան Մեծի նվաճած երկրների թվին[3]: Լեոն[4], Հ. Ասատուրյանը[5], ինչպես և Հ. Մանանդյանը գտնում են, որ Տիգրան Բ-ն հռոմեական ներխ. զորավարին դիմագրավելու համար իր զորաբանակը կազմակերպել էր «իրեն ստորադրված վասալական թագավորություններից ու իշխաններից»[6]: Հ. Մանանդյանին, սակայն, առարկում է Կ. Վ. Տրևերը, որի

---

[1] Плутарх, Лукулл, XXIV.
[2] Плутарх, Лукул, XXVI.
[3] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, с. 410.
[4] Լեո, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 309:
[5] Հ. Ասատուրյան, Քաղաքական վերաբերություններ ընդ մեջ Հայաստանի և Հռովմա 190-են ն. ք. մինչև 428 հ. ք., Վենետիկ, 1912 էջ 40:
[6] Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, էջ 1978, 507:

կարծիքով աղվանացիները Տիգրանին օգնության են եկել անշահախնդիր՝ «ընդհանուր թշնամուն դիմադրելու անհրաժեշտությունից մղված»[7]: Նա գտնում է, որ Պլուտարքոսի այդ վկայության մեջ պարզապես պահպանվել է «Անդրկովկասյան ժողովուրդների պատմության մեջ ընդհանուր թշնամու դեմ քաղաքականապես միմյանցից անկախ հայերի, ալբանացիների ու իբերների համատեղ ռազմական գործունեության, այդ ժողովուրդների համախմբվածության մասին առաջին հիշատակությունը»[8]: Հայոց թագավոր Տիգրան Բ-ին ցույց տված «հին ադրբեջանցիների (հենց այդպես, ոչ ավել, ոչ պակաս «հին ադրբեջանցիների» - Հ. Ս.) նման անշահախնդիր օգնության մասին է նշում և Ք. Ալիևը[9]: Բայց որքան էլ իրավացի է Կ. Վ. Տրևերը, Պլուտարքոսի հաղորդման մեջ տեսնելով իրենց ազատության ու անկախության համար հայերի, աղվանացիների ու իբերների համատեղ բազմադարյան պայքարի սկիզբ, նույնքան էլ անիրավացի է, երբ ժխտում է Հայոց թագավորից աղվանացիների ունեցած քաղաքական ազդեցությունը: Այս տեսակետից ավելի իրական են հնչում Գ. Ա. Մելիքիշվիլու խոսքերը. «Ինչ վերաբերվում է Տիգրանակերտի ճակատամարտին մասնակցություն ցուցաբերած իբերներին ու աղվանացիներին... դատելով ենթատեքստից, նրանք ավելի շուտ դասվում են Տիգրանին ենթակա երկրների թվին»[10], մի հանգամանք, որն, իրոք, «բացառված չէր»[11] Տիգրան Մեծի ժամանակաշրջանի Հայաստանի համար: Աղվանքի ենթակայությունը Մեծ Հայքից հնարավոր է համարում նաև Ա. Պ. Նովոսելցևը[12]: Ուրեմն, աղվանացիների մասնակցությունը հայ-հռոմեական պատերազմներին պայմանավորված էր նախ և առաջ Մեծն Տիգրանի հզորությամբ ու Անդրկովկասում նրա ունեցած ազդեցությամբ: Չպետք է մոռանալ, որ նրանք պատերազմի էին եկել հենց Տիգրան Մեծի կանչով: Միաժամանակ չի կարելի ժխտել, որ այս կռիվներին մասնակցություն ցուցաբերելը կախված էր ոչ միայն հայոց թագավորի նկատմամբ ունեցած աղվանացիների պարտավորվածությամբ, այլև երկիրը հռոմեացիների ապագա ներխուժումից ապահովելու անհրաժեշտությամբ:

Այսպիսով, աղվանացիները Տիգրան Մեծի քաղաքական ազդեցության տակ գտնվող մյուս ժողովուրդներից կազմված բանակի շարքերում կռվի են դուրս գալիս հռոմեացիների դեմ և Տիգրանակերտը պաշարումից ազատելու համար մղվող ճակատամարտում՝ մ.թ.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին, պատմության մեջ առաջին անգամ բախվում հռոմեացիների հետ:

Ճակատամարտում աղվանացիների զբաղեցրած դիրքերի մասին կարելի է միայն ենթադրություններ անել: Աղբյուրները այդ մասին լռում են: Կ. Վ. Տրևերը, հաշվի առնելով աղվանական ցեղերի ունեցած առաջատար դիրքերը Գավգամելայի ճակատամարտում, իրավացիորեն գտնում է, որ Տիգրանակերտի ճակատամարտում ևս նրանք պետք է որ զբաղեցրած լինեին պատասխանատու

---

[7] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 90.
[8] Նույն տեղում, էջ 89:
[9] К. Алиев,Кавказская Албания, с. 12; Его же, Албаны-кочевники и Басилевс Зобер, с. 23-29.
[10] Г. А. Меликишвили, К истории древней Грузии, с. 323.
[11] Նույն տեղում:
[12] А. П. Новосельцев, Генезис феодализма..., с. 142.

տեղեր[13]: Աղբյուրները Տիգրանի բանակում հիշատակում են «զրահավոր հեծելազորի», որը տեղավորված է եղել ճակատամարտի վայրից ոչ հեռու գտնվող և ռազմավարական նշանակություն ունեցող մի բլրի ստորոտում[14]: Հավանաբար սրանց մեջ էին աղվանացիները: Այդպես կարծելու համար որոշակի հիմք է տալիս Ստրաբոնի հաղորդումը՝ աղվանացիների ռազմական հանդերձանքի մասին, ուր նշում է, որ նրանք և հայերի նման սիրում էին զրահապատ ձիեր: «Հեծելազորի այդպիսի (զրահապատ ձիերով - Հ. Ս.) տեսակի սիրահարներ են,- գրում է Ստրաբոնը, -ոչ միայն մարերն ու հայերը, այլև ալբանացիները, քանի որ նրանք էլ են պատերազմի ժամանակ օգտվում զրահով ծածկված ձիերից»[15]:

Ուրեմն, միանգամայն հնարավոր է, որ աղվանացիները Տիգրանակերտի ճակատամարտին մասնակցում էին ծանր զրահավոր հեծելազորում և տեղ էին զբաղեցրել ճակատամարտի ելքի համար վճռական նշանակություն ունեցած վերոհիշյալ բլրի ստորոտում: Նրանք, անշուշտ, կռվում էին նաև հետևազորի կազմում, քանի որ ամբողջ բանակը չէր, որ բաղկացած էր զրահապատ հեծելազորից և Ստրաբոնն էլ իր հերթին հաստատում է, որ ալբանացիները կռվել են «ինչպես հետևակ, այնպես էլ հեծյալ, թեթև ու ծանր սպառազինությամբ, ինչպես և հայերը»[16]:

Տիգրանակերտի ճակատամարտն ավարտվում է հռոմեացիների հաղթանակով: Գրավվում է Տիգրանակերտը, որով և ավարտվում է հայ-հռոմեական պատերազմների առաջին շրջանը: Պատերազմի առաջին փուլից հետո թեև Տիգրան Մեծի մի շարք հպատակներ հնազանդվում են Լուկուլլոսին[17], սակայն, աղվանացիները, իբերների ու Ատրոպատյան Մարաստանի հետ դեռ մնում էին Տիգրանի ազդեցության ոլորտում և շարունակում համատեղ պայքարը ընդհանուր թշնամու դեմ:

Նոր շրջանում Լուկուլլոսին ուղեկցող հաջողությունները կտրուկ նվազում են: Թ. Մոմզենի դիպուկ արտահայտությամբ՝ «պատերազմը այժմ պետք է կառավարությունների պատերազմից վերածվեր ազգային- ասիական պատերազմի՝ Ասիայի թագավորներն ու ժողովուրդները համախմբվում են հզոր ու գոռոզ Արևմուտքի դեմ»[18]: Եվ, իրոք, ճակատամարտում կրած պարտությունից հետո, ընտրելով ակտիվ պաշտպանական նահանջի տակտիկա, (իսկ Հայաստանը իր «բնական պայմանների ու ժողովրդի հայրենասիրության շնորհիվ կատարելապես պիտանի էր այդպիսի պատերազմի համար»[19]), Տիգրան Մեծն ու Միհրդատ Պոնտացին Լուկուլլոսին ներքաշում են թշնամուն անծանոթ երկրի խորքերը: Պատերազմին հաղորդելով ժողովրդական բնույթ, անակնկալ հարձակումների և մանր պարտիզանական կռիվների միջոցով անկայուն ու մշտապես լարված վիճակ ստեղծելով թշնամու համար, նրանք մ.թ.ա. 68 թ. Արածանի գետի ափին ջախջախում են հակառակորդին և հարկադրում բռնել

[13] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 90.
[14] Плутарх, Лукулл, XXVIII.
[15] Страбон, XI, XIV, 9.
[16] Նույն տեղում:
[17] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 590:
[18] Т. Моммзен, История Рима, т. III, с. 61.
[19] Նույն տեղում, էջ 62:

նահանջի ուղին[20]:

Լուկուլլոսի անհաջողությունները ու ինքնագլուխ գործունեությունը առաջացնում են հռոմեական ծերակույտի զայրույթը և սենատի որոշմամբ մ.թ.ա. 66 թ. Արևելքի իշխանությունը արտակարգ իրավունքներով հանձնվում է Հռոմի խոշորագույն ստրկատերերից մեկին՝ Գնեոս Պոմպեոսին, որը մինչ այդ հռչակել էր իրեն՝ կռվելով ծովահենների դեմ՝ Միջերկրական ծովում:

Այս նշանակումով Արևելքի ժողովուրդների համար սկսվում է նոր ժամանակաշրջան:

Տակավին Կիլիկիայում Պոմպեոսը նախապատրաստվում է իր արևելյան արշավանքներին և սկսում այն հռոմեացիների երդվյալ թշնամի Միհրդատ Եվպատորի վրա հարձակմամբ: Վերջինս, սակայն, խույս է տալիս նրա հետ ճակատամարտի բռնվելուց և իր հետևից ավերում երկիրը, դրանով պարենի ու ռազմերթի դժվարություններ ստեղծելով Պոմպեոսի համար, և Հայաստանի ու Իբերիայի վրայով փախչում է Կողքիս:

Նախքան փախչող Միհրդատին վերջնականապես հաղթելը և հաղթելու համար թիկունքն ապահովելու նպատակով, Պոմպեոսը նրա հետապնդման ճանապարհին ներխուժում է Հայաստան և մ.թ.ա. 66 թ. Արտաշատում հարկադրում Տիգրան Մեծին նվաճած մարզերից հրաժարվելու և 6.000 արծաթ տաղանդի չափով ռազմատուգանք վճարելու գնով հաշտություն կնքել[21], Հայաստանը դարձնել «Հռոմի բարեկամ և դաշնակից» ու ապահովելով թիկունքը, վերսկսել Միհրդատի հետապնդումը, իր հետ որպես գերի տանելով և Տիգրան Կրտսերին: Սակայն վրա հասած ձմռան պատճառով Պոմպեոսը, ժամանակավորապես, հարկադրված հրաժարվում է Միհրդատին հետապնդելու մտքից և զորքերը պահում՝ ձմեռման, գարնանը արշավանքը վերսկսելու որոշումով: Ամբողջ հռոմեական բանակը բաժանելով երեք մասի՝ իր, Մետելլոս Կելերի և Լուկիոս Փլակկոսի գլխավորությամբ ու երեք առանձին վայրերում կենտրոնացնելով, Պոմպեոսը նախապատրաստվում է ձմեռման Կուր գետի տաք և կերառատ շրջանում, նախօրոք գրավված Անահտական երկրում[22]:

Պոմպեոսի ձմեռվա կայանների տեղորոշման հարցի շուրջը պատմագրության մեջ կան տարաձայնություններ: Թ. Մոմզենի ու Գ. Մելիքիշվիլու կարծիքով, դրանք գտնվել են Եփրատի վերին հոսանքի ու Կուր գետի ակունքների միջև[23]: Հ. Մանանդյանը գտնում է, որ Պոմպեոսը կայանել է այժմյան Ախալցխայի ու Ախալքալաքի միջև ընկած շրջանում՝ «Պևտինգերյան քարտեզի Caspiae - (Խոսպիա) կայարանի ու Կուր գետի մոտերքում»[24]: Ի. Ջավադովը կրկնում է Հ.

---

[20] Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, էջ 219, 543: Մինչ Հ. Մանանդյանի այս կարծիքի հրապարակումը, արևմտաեվրոպական գիտնականները, հավատալով Պլուտարքոսի փքուն խոսքերին, գտնում էին, որ Արածանի ճակատամարտում ևս հաղթել է Լուկուլլոսը: Վերջիններիս այդ կարծիքի քննադատությունն ու նոր տեսակետի ապացույցները տե՛ս նույն տեղում, էջ 541-544: Տե՛ս նաև Հ. Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ...:

[21] Դիոն Կասսիոս, XXXVI, 53, 2; Плутарх, Помпей, XXXIII.

[22] Դիոն Կասսիոս, XXXVI, 48, 1, 53, 5:

[23] Т. Моммзен, История Рима, т. III, с. 106; Г. А. Меликишвили, К истории древней Грузии, с. 326.

[24] Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, էջ 236, 587:

Մանանդյանին[25]: Ըստ Կ. Վ. Տրեվերի, այդ բանակատեղին կամ Խաղխաղի մոտ էր, կամ Իբերիային ու Աղվանքին սահմանակից Գուգարքում[26]: Բայց, կարծում ենք, այս կարծիքը հակասում է աղբյուրների ցուցումներին: Պլուտարքոսը և Դիոն Կասսիոսը մատնանշում են, որ Պոմպեոսի ձմեռային ճամբարները խփված են եղել Կուր գետի աջ ափին, մի վայրում, որ գտնվում էր երեք պետությունների՝ Մեծ Հայքի, Վիրքի ու Աղվանքի սահմանամերձ շրջանում և իրենց մոտակայքում ունեին գետանց[27]: Հ. Մանանդյանը այդպիսին է համարում Պևտինգերյան քարտեզի Ad Metcurium կայարանի՝ այժմյան Ախալցխայի մոտ գտնվող գետանցը[28]: Բայց քանի որ նշված գետանցով տեղանքը հեռու է Աղվանքին սահմանակից շրջան լինելուց, ապա այս առաջարկությունը ևս չի կարելի ճիշտ համարել: Կարծում ենք, ավելի իրական է ու սկզբնաղբյուրների տեղեկություններին համապատասխան, Պոմպեոսի ձմեռային կայանատեղերը որոշել ներկայիս Մինգեչաուրի շրջանում, որտեղ գոյություն ուներ հնուց ի վեր գործող գետանց[29], իսկ աշխարհագրորեն էլ ընկած էր Մեծ Հայքի, Վիրքի ու Աղվանքի շփման կետում: Եվ, այսպես, Պոմպեոսը 66-65 թթ. ձմեռը մնում է անցկացնելու Կուրի տաք ու կերաշատ վայրերում: Սակայն նրան վիճակված չէր հանգիստ ձմեռել: Ցուտով նրանց վրա են հարձակվում աղվանացիները՝ Օրոյսեսի[30] թագավորի[31] գլխավորությամբ. «Օրոյսեսը՝ Կյուռնոսից վերև բնակվող ալբանների թագավորը, ցանկանալով մի կողմից շնորհ անել Տիգրան Կրտսերին, որը իրեն բարեկամ էր, մյուս կողմից հատկապես վախենալով, որ հռոմեացիները կներխուժեն Ալբանիա, և կարծելով, որ անկասկած հաջողության կհասնի, եթե ձմեռ ժամանակ անսպասելի հարձակվի նրանց վրա, քանի դեռ նրանք չեն կենտրոնացել մեկ միասնական զորակայանում, արշավեց նրանց վրա, Սատուռնալիա տոնի ժամանակ»[32]: Դիոն Կասսիոսի սույն հաղորդման մեջ պահպանվել է հռոմա-աղվանական ուղղակի հարաբերությունների մասին առաջին

---

[25] И. Джавадов, О стоянке римских воűск зимоű 66/65 гг до н. э. в Закавказье, ДАН, АзССР, 1960, т. 16, N 7, с. 707-709.

[26] К. В. Тревер, Очерки по историu... Албании, с. 93: Կ. Վ. Տրեվերը բերում է և Ս. Տ. Երեմյանի կարծիքը՝ հայտնված բանավոր զրույցի ժամանակ, ըստ որի նշված կայանատեղերը գտնվել են այժմյան Բորչալուի հարթավայրում (տե՛ս նշվ. աշխ., էջ 93, ծանոթ. 5):

[27] Плутарх, Помпеű, XXXIV; Դիոն Կասսիոս, XXXVI, 53, 5:

[28] Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, էջ 583; հ. Ե, էջ 164:

[29] С. М. Казиев, Археологические раскопки Мингечаура, с. 10; նրա Археологические памятники Мингечаура, էջ 168: Յու. Ջաֆարովը «Անահտական» երկիրն ու Պոմպեոսի ձմեռային կայանատեղերը ցույց է տալիս Ղազախի շրջանում, բայց ներկայացնելով որպես Աղվանքի տարածք (տե՛ս О локализации храмовоű области, էջ 103): Եվ որպեսզի աղբյուրների հաղորդումներն այն մասին, որ աղվանացիները Պոմպեոսի վրա հարձակվել են Կուր գետն անցնելով, որով և ընդգծվում է, որ գետը սահման էր Հայոց և Աղվանից միջև, հարմարեցնի իր ցանկությանը, պատճառաբանում է, թե այդ ժամանակ իբր Աղվանքի քաղաքական սահմանները չեն համապատասխանել էթնիկական սահմաններին: Սակայն Յու. Ջաֆարովը կեղծում է: Կուրը Աղվանքի համար ինչպես քաղաքական, այնպես էլ էթնիկական սահման էր, այնպես որ Պոմպեոսը ձմեռում էր հայկական տարածքում: Որ «Անահտական» երկիրը հայկական էր, և հենց այդ երկիրն էր գրավել Պոմպեոսը, վկայում է Դիոն Կասսիոսը, գրելով. « (Պոմպեոսը - Հ. Ս.) տիրացավ Հայաստանին պատկանող Անահտական երկրին» (Դիոն Կասսիոս, XXXVI, 48, 1, 53, 5):

[30] Ղ. Ալիշանը հակված է այդ անունը կարդալու «Վարազ» (տե՛ս Ղ. Ալիշան, Աղուանք, Բազմավեպ, 1970, թիվ 11-12, էջ 344):

[31] Թ. Մոմզենը նրան կոչում է իշխան (տե՛ս История Рима, т. III, с. 109).

[32] Դիոն Կասսիոս, XXXVI, 54,1-2.

վկայությունը:

Այս իրադարձություններով Աղվանքը պատմության մեջ առաջին անգամ ներքաշվում է հռոմեական առևելյան նվաճողական քաղաքականության շրջապտույտի մեջ՝ միաժամանակ առաջին անգամ հանդես գալով որպես ինքնուրույն քաղաքականություն վարող մի պետություն՝ թագավորի գլխավորությամբ, որի անվանական հիշատակությունն իսկ նրա պատմականության վկայությունն է:

Աղվանքի քաղաքական պատմության մեջ սկիզբ է դրվում պատմական մի նոր ժամանակաշրջանի, որի ավետումը Օրոյսեսի հարձակումն էր Պոմպեոսի վրա: Աղվանացիների 40 հազարանոց բանակը կտրելով Կուր գետը անցնում է հարձակման: Օրոյսեսի պլանը պարզ էր ու որոշակի. օգտվելով «Սատուռնալիա» կոչվող տոնակատարությամբ[33] զբաղված լինելուց, շեշտակի հարձակմամբ հռոմայեցիներին անակնկալի բերել՝ թույլ չտալով ուշքի գալ ու զորքերը միավորել և ջախջախել առանձին-առանձին: Այդ նպատակով ինքն էլ զորքերը բաժանելով երեք մասի, երեք ուղղություններով միաժամանակ շարժվում է Պոմպեոսի եռատված բանակի՝ ինքը Մետելլոս Կելերի, որի մոտ էր գերված Տիգրան Կրտսերը[34], իսկ մյուս երկուսը՝ Պոմպեոսի ու վերջինիս զորքի երրորդ մասի հրամանատար Լուկիոս Փլակկոսի վրա: Գլխավոր հարվածն ուղղված էր Մետելլոս Կելերի դեմ: Սակայն վերջինս, պատմիչի խոսքերով, Օրոյսեսին «ուժգնորեն ետ մղեց»: Ընդնելով Լուկիոս Փլակկոսի որոգայթը, նույն բախտին է արժանանում նաև նրա դեմ ուղարկված աղվանական մյուս զորամասը. «Փլակկոսը,- շարունակում է պատմել Դիոն Կասսիոսը,- քանի որ խրամատի շրջագիծը մեծ լինելու պատճառով անկարող էր այն պաշտպանել (ամբողջությամբ), ներսում մեկ այլ խրամատ պատրաստեց: Թշնամին այս տեսնելով ենթադրեց, որ նա վախեցել էր ու ետ նահանջել, որով և նա թշնամուն արտաքին խրամատից այս կողմ ներքաշեց և այստեղ նրանց վրա անակնկալ հարձակվելով, շատերին ձեռնամարտում, շատերին էլ փախուստի մատնելով սպանեց»[35]: Աղվանացիներին մեծ կորուստ է պատճառում նաև Պոմպեոսը. «Պոմպեոսը տեղեկանալով մյուսների դեմ բարբարոսների ձեռնարկած փորձի մասին, անակնկալ եկավ իր դեմ արշավողներին ընդառաջ և հաղթելով նրանց, իսկույն, ինչպես կար, շտապեց Օրոյսեսի դեմ: Եվ նրան չհանդիպեց, քանի որ (սա) ետ մղվելով Կելերի կողմից, և տեղեկանալով մյուսների ձախորդությունների մասին, փախուստի էր դիմել, սակայն (Պոմպեոսը) ալբաններից շատերին ձեռք գցելով Կյուռնոսի գետանցի մոտ, կոտորեց»[36]:

Այսպես, ճակատամարտերում կրած պարտությունից հետո, Օրոյսեսը ետ է քաշվում իր երկիրը և այնտեղից հաշտություն է խնդրում Պոմպեոսից: Սա հաշվի առնելով ձմեռային պայմանները ու որոշ դժվարություններ, իր մտադրություններին

---

[33] Կրոնոս աստծուն (լատինական Սատուռն աստվածության, որից էլ «Սատուռնալիա»)՝ Զևսի հորը, նվիրված 7 օրվա տևողությամբ կրոնական տոն, որը նշում էին հռոմեացիները ամեն տարի բերքահավաքից հետո, դեկտեմբերի 17-ին (տե՛ս Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, էջ 235, ծանոթ. 71):

[34] Տիգրան Մեծի այս ապստամբ որդուն Պոմպեոսը շղթայակապ տանում է Հռոմ՝ այնտեղ կայանալիք իր շքահանդեսում ցուցադրելու համար:

[35] Դիոն Կասսիոս, XXXVI, 54, 3:

[36] Նույն տեղում, XXXVI, 54, 3-4:

հակառակ, ընդունում է այդ առաջարկը[37] և մինչև 65 թ. գարունը հանգիստ անցկացնում ձմեռում:

Հռոմեացիների ու աղվանացիների այս առաջին զինված ընդհարման մասին պատմում է նաև Պլուտարքոսը, սակայն, ակնհայտ շեղումներով ու չափազանցություններով: Ըստ նրա՝ աղվանացիները «սկզբում համաձայնվել էին թույլ տալ Պոմպեոսին անցնելու իրենց երկիր միջով», ապա «ուխտադրժորեն» հարձակվել հռոմեացիների վրա: Բայց Պոմպեոսը ոչ մեծ դժվարությամբ ջախջախել է նրանց, և ընդառաջելով թագավոր Օրոյսեսի գթության աղերսանքներին, մեծահոգաբար ներել այդ հարձակմամբ իրեն հասցված «վիրավորանքը» և խաղաղության դաշն կնքել[38]: Ուսումնասիրողներից շատերը հավատ ընծայելով Պլուտարքոսի խոսքերին, կարծել են, թե իրոք, աղվանացիները (և իբերները) համաձայնվել են հռոմեական զորքի անարգել անցնելուն իրենց երկրներով: Այնինչ Պլուտարքոսի նման հաղորդումը, այլ հեղինակների տվյալներով, ժխտվում է: Դեպքերին ավելի մոտ կանգնած Տիտոս Լիվիոսը գրում է հակառակը, աղվանացիները Պոմպեոսին թույլ չեն տվել անցնելու իրենց երկրով և սա հարկադրական պայքարի մեջ է մտել նրանց հետ: «Պոմպեոսը,- գրում է նա այդ արշավանքներից ընդամենը 30-40 տարի անց,- հետապնդելով Միհրդատին, հասավ ամենահեռավոր ու անհայտ ժողովուրդների մոտ: Նա պայքարում հաղթեց իրեն բաց չթողնող իբերներին ու աղվանացիներին»[39]: Ի հակադրություն Պլուտարքոսի, Ապպիանոսը ևս գրում է. «Եվ այսպես, երբ Պոմպեոսը (հետապնդելով փախչող Միհրդատին - Հ. Ս.) շարժվեց առաջ (Պրոմեթեսի հետ կապված - Հ. Ս.) այդ վայրերը տեսնելու, հարևան այլ ցեղեր բարեկամաբար բաց թողին նրան, բայց ալբանական թագավոր Օրոյսեսը և իբերական Արտոկեսը 70 հազար բազմությամբ դարան սարքեցին Կուր գետի վրա»[40]:

Այսպիսով, Պլուտարքոսի հաղորդումը՝ իրենց երկրի միջով Պոմպեոսին անցնելու աղվանացիների նախապես տված թույլտվության մասին, չի համապատասխանում իրականությանը: Պոմպեոսն ինքն էլ դրա կարիքը չուներ, քանի որ վերջնական նպատակին՝ Կողքիս, հասցնող ճանապարհը չէր էլ անցնելու աղվանացիների երկրով: Իրականությունը խճողված ներկայացնելով, Պլուտարքոսը նպատակ է ունեցել մեծացնել Պոմպեոսի փառքը և աղվանացիների հարձակումը Պոմպեոսի վրա ներկայացնել որպես դավաճանություն հռոմեացիների նկատմամբ: Իրականում թշնամու ներխուժման վտանգն էր իր բոլոր հետևանքներով անհանգստացրել աղվանացիներին: Այդ վտանգն ավելի շոշափելի էր դարձել հատկապես, երբ Պոմպեոսը ձմեռելու վայր էր ընտրել իրենց երկրի սահմանամերձ գոտին և Դիոն Կասսիոսի արդեն վկայակոչած հաղորդման համաձայն, աղվանացիները «հատկապես վախենալով, որ հռոմեացիները կներխուժեն Ալբանիա»[41], դիմել էին վճռական գործողությունների:

Ոչ միայն աղվանացիների, այլև կովկասյան մյուս ժողովուրդների պայքարի ազատագրական բնույթը իր ցայտուն արտահայտությունն է գտել նաև Փլորոսի

[37] Նույն տեղում, XXXVI, 54, 4-5:
[38] Плутарх, Помпей, XXXIV.
[39] Известия древних писателей ..., т. II, с. 50-51.
[40] Նույն տեղում, т. 1, с. 531.
[41] Դիոն Կասսիոս, XXXVI, 54, 1-3:

հաղորդման մեջ, ըստ որի Պոմպեոսի արշավանքների ու Միհրդատի պարտության հետևանքով «գրգռվել էին իբերները, կասպերը, ալբանացիները և երկու Հայաստանները»[42]: Հռոմեացիների ներխուժման հետևանքով կովկասյան ժողովուրդների մեջ առաջացած խռովքը շատ լավ է հասկացել Թ. Մոմզենը: Վերլուծելով այդ ժամանակաշրջանի իրադարձությունները, գերմանացի գիտնականը գրում է . «Միջին և արևելյան Կովկասի քաջարի ժողովուրդները զայրույթով էին նայում իրենց երկրներում տեղավորված հեռավոր Արևմուտքից եկածներին»[43]:

Պատմագրության մեջ սխալ մեկնաբանություն է տրվել նաև Պոմպեոսի վրա աղվանացիների ու իբերների հարձակման մասին Ապպիանոսի հաղորդմանը՝ ենթադրելով, թե վերջիններս միաժամանակ և համատեղ են հարձակվել հռոմեացիների վրա[44]: Ավելին, նույնիսկ գտնում են, որ այդ հարձակման նախաձեռնողն ու գլխավորողը եղել է իբերական թագավոր Արտոկեսը[45]: Սակայն այդպես կարծելով, նրանք հաշվի չեն առել այն հանգամանքը, որ Ապպիանոսը խտացնում է դեպքերը և առանձին իրադարձություններ ներկայացնում միասին[46]: Այլ աղբյուրների հավաստումներով, այս ժողովուրդները Պոմպեոսի դեմ կռվի մեջ են մտել առանձին-առանձին, ընդ որում, մինչ աղվանացիների թագավոր Օրոյսեսը ինքն է նախահարձակ լինում, իբերներն իրենք են ենթարկվում հարձակման Պոմպեոսի կողմից[47]: Ուստի և ճիշտ չէ երկու ժողովուրդների տարբեր բնույթի ու ժամանակի գործողությունները միացնել և դիտել որպես համատեղ գործունեություն: Այս է իրականությունը, որը շարունակվում է հետևյալ հաջորդականությամբ: Պոմպեոսը չի հանդիպում անհաջողությունից հետո հեռացած աղվանացիների թագավորին, սակայն ջախջախում է գետանցի մոտ խռնված աղվանացիներին: Այսուհանդերձ հռոմեացի զորավարը չի զարգացնում իր ռազմական հաջողությունը և, նույնիսկ չանցնելով էլ գետից այն կողմ, այսինքն՝ չմտնելով աղվանացիների երկիրը, դաշինք է կնքում նրանց հետ, «թեպետև նա բուռն կերպով ցանկանում էր ներխուժել նրանց երկիրը՝ վրեժ լուծելու համար, բայց ձմեռվա պատճառով ուրախությամբ հետաձգեց պատերազմը»[48]: Աղվանք ներխուժելու բուռն ցանկությանը հակառակ դաշինքի կնքումը, ուրեմն, ավելի շուտ բխել է Պոմպեոսի շահերից և թելադրվել այն դժվարին դրությամբ, որի մեջ ընկել է հռոմեացի զորավարը, քան պայմանավորված էր նրա «մեծահոգությամբ», ինչպես փորձում է ներկայացնել Պլուտարքոսը: Որ Պոմպեոսը դժվարին դրության մեջ է եղել և աղվանացիների հետ կնքած դաշինքը ավելի շուտ բխել է նրա շահերից, ցույց է տալիս այն հանգամանքը, որ հաջորդ տարվա գարնանը, երբ սպասվում էր, թե Պոմպեոսը կհարձակվի աղվանացիների վրա, քանի որ, ըստ Դիոն Կասսիոսի, միայն ձմեռային պայմաններն էին խանգարել նրան դա անելու, նա

[42] Известия древних писателей ..., т. II, с. 258.
[43] Т. Моммзен, История Рима, т. III, с. 106.
[44] Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, էջ 236: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 599:
[45] Г. А. Меликишвили, К истории древней Грузии, с. 327.
[46] Դա հայտնի է պատմագրությանը (տե՛ս Р. Н. Осенюк, Роль Северного причерноморья в борьбе Понта с Римом II-I вв. до н. э.), Томск, 1953, с. 395.
[47] Դիոն Կասսիոս, XXXVI, 54,1; Плутарх, Помпей, XXXIV.
[48] Դիոն Կասսիոս, XXXVI, 54, 5.

նույնպես անակնկալ, հավանաբար աղվանացիների հետ կնքած դաշինքով թիկունքը ապահովված զգալով, հարձակվում է իբերների վրա: Պոմպեոսը բոլորովին այլ վերաբերմունք է ցույց տալիս իբերներին: Չնայած Արտոկես թագավորի՝ հաշտություն կնքելու երիցս արված առաջարկներին, նա շարունակում է խորանալ երկրում և հաշտություն է կնքում միայն այն ժամանակ, երբ Արտոկեսը իր որդիներին ուղարկում է նրա մոտ որպես պատանդներ[49]:

Այսպիսով, աղվանացիների հետ դաշինքի կնքումը, ձեռք բերած հաղթանակներից հետո Պոմպեոսի կողմից այն չամրապնդելը, իբերների թագավոր Արտոկեսի նկատմամբ ցույց տված ոչ «մեծահոգի» վերաբերմունքը մեզ թույլ են տալիս այնպիսի եզրակացության հանգելու, որ աղվանացիների դիմադրությունը շատ ավելի զորեղ է եղել, քան ներկայացնում են հռոմեացի պատմիչները և հռոմեացիներն էլ այնքան հեշտ հաղթանակներ չեն տարել նրանց նկատմամբ: Նշված ճակամարտերում կրած պարտությունից հետո էլ աղվանացիները պատրաստ են եղել պաշտպանելու իրենց երկիրը: Եվ Պոմպեոսը զգալով այդ, հնարավոր է նաև, հաշվի առնելով ձմեռային պայմանները, ընդունել է նրանց առաջարկն ու Աղվանք չմտնելու պայմանով կնքել հռոմեացիների համար ձեռնտու դաշինք: Կնքված դաշինքով Օրոյսեսը ևս փաստորեն հասնում է իր նպատակին. Պոմպեոսը այդ ձմեռ չի մտնում Աղվանք:

Մ. թ. ա. 65 թ. գարնանը Պոմպեոսը հարձակվում է իբերների վրա և նրանց պարտության մատնելուց ու Արտոկեսի որդիներին պատանդ վերցնելով, հաշտություն կնքելուց հետո ներխուժում է Կողքիս, ապա արշավում դեպի Բոսփոր՝ այնտեղ ապաստանած Միհրդատի դեմ: Սակայն բազմաթիվ անծանոթ ու թշնամական ցեղերի միջով անցնող ճանապարհի դժվարություններից ելնելով, նա փոխում է մտադրությունը և հետ դառնում «դեպի ալբանացիների (երկիրը) ոչ թե ամենակարճ ճանապարհով, այլ Հայաստան վերադառնալուց հետո, որպեսզի այս միջոցով, ինչպես նաև կնքված հաշտության պատճառով, նրանց անակնկալի բերի»[50]: Աղվանացիների վրա Պոմպեոսի այս հարձակումը, փաստորեն, դաշնադրության խախտում էր: Այնուամենայնիվ, Պլուտարքոսը կրկին անգամ փորձում է ներկայացնել այն որպես աղվանացիների խռովությամբ հարուցված արշավանք[51], որին, ի դեպ, հավատում են թե՛ Կ. Վ. Տրեվերը[52] և թե Թ. Մոմզենը[53]: Բայց Պոմպեոսի հիշյալ արշավանքի մասին ավելի մանրամասն խոսող Դիոն Կասսիոսի վերը բերված վկայություններից և հենց իր՝ Պլուտարքոսի հաղորդումներից երևում է, որ աղվանացիները ոչ միայն խռովություն չէին բարձրացրել, այլև կնքած դաշինքով հանգստացած, հռոմեացիների կողմից հարձակման չեն էլ սպասել: Այդ են վկայում թե՛ պատմիչների ուղղակի հաղորդումները և թե՛ երկար ու շրջանցիկ ճանապարհ ընտրելով իսկական մտադրությունը թաքցնելու և կնքված հաշտությամբ հանգստացած աղվանացիներին «անակնկալի բերելու» Պոմպեոսի ռազմական տակտիկան: Որ աղվանացիները հարձակման չեն սպասել հռոմեացիների կողմից և ոչ մի

[49] Նույն տեղում, XXXVII, 1-5; 2, 1-6.
[50] Նույն տեղում, XXXVII, 3, 3.
[51] Плутарх, Помпей, XXXV.
[52] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 96.
[53] Т. Моммзен, История Рима, т. III, с. 109.

խռովություն էլ չեն բարձրացրել վերջիններիս դեմ, երևում է նաև նրանից, որ Պոմպեոսին նրանք առաջին դիմադրությունը ցույց են տվել Ալազան ըստ անտիկ հեղինակների՝ Աբաս, Աբանտ գետի այն կողմում միայն: Պլուտարքոսի վկայությամբ, այդ դիմադրությունը ցույց է տրվել թագավորի եղբայր Կոսիսի գլխավորած՝ «վատ զինված ու գազանների մորթիներ հագած» աղվանական բանակի կողմից, որի նկատմամբ Պոմպեոսը հեշտ հաղթանակ է տանում[54]: Պլուտարքոսի նկարագրած աղվանական բանակի որակական կազմի քննությունը հանգեցնում է այնպիսի եզրակացության, որ սրանք աղվանացիների կանոնավոր զինված ուժերը չէին, որոնց մասին իրենք իսկ՝ անտիկ հեղինակներն են բազմիցս խոսել որպես մարտունակ ու ժամանակի ռազմական տեխնիկայով զինված բանակի[55]: Հավանական է, որ այս վատ զինված ու գազանի մորթիներ հագած բանակը հավաքագրված է եղել հապճեպ, ոչ զինվորականներից, անսպասելի ներխուժած թշնամուն կանգնեցնելու համար՝ մինչև հիմնական ուժերի մոտենալը: Եթե աղվանացիները ապստամբած լինեին, ապա նախապատրաստված լինելով՝ կունենային անհամեմատ ավելի լավ զինված ու կազմակերպված բանակ և ուխտադրուժ հակառակորդին կդիմավորեին կազմ ու պատրաստ:

Այսպիսով, Պոմպեոսի երկրորդ արշավանքը աղվանացիների դեմ պայմանավորված էր ոչ թե վերջիններիս ապստամբությամբ, այլ ընդհանրապես Հռոմի նվաճողական քաղաքականությամբ: Եվ Պոմպեոսը, որպես հռոմեական նվաճողական քաղաքականության իրագործողն Անդրկովկասում, մեկը մյուսի ետևից հնազանդեցնում էր հայերին, իբերներին ու աղվանացիներին: Վերջիններիս դեմ երկրորդ անգամ արշավելիս, Պոմպեոսը, սակայն, դեմ է առնում նրանց ձեռնարկած որոշ նախազգուշական միջոցառումներին. աղվանացիներն իրենց ամբողջ սահմանի երկարությամբ կառուցած ցանկապատերով փակել էին Կուր գետի հիմնական գետանցները[56]: Դրա հետևանքով Պոմպեոսը այս անգամ հարկադրված է լինում ուրիշ տեղերում փնտրել գետանցի հնարավորություն և գետը անցնել «դժվարությամբ ու զինվորների կյանքը վտանգի ենթարկելով»[57]: Անցնելով Կուր գետը[58] և ոչ մի դիմադրության չհանդիպելով՝ հռոմեական զորավարը շարունակում է առաջխաղացումը: Առաջնորդներ ունենալով գերեվարվածներից, որոնք նրան տանում էին բոլորովին էլ, ոչ հարմարագույն ճանապարհով»[59], դարձյալ դիմադրության չհանդիպելով, Պոմպեոսը մոտենում է Կամբյուսես - Կամբեճան (Իորի) գետին, որտեղ հագեցնելով ծարավը և թշնամուն չհանդիպելով, շարունակում է խորանալ երկրում: Ըստ Դիոն Կասսիոսի, ցերեկային շոգն ու ծարավը մեղմելու համար նա ռազմերթը կատարում էր գիշերով[60]: Բայց հավանական է, որ Պոմպեոսը դրա համար ուներ ուրիշ, ավելի զորավոր պատճառ.

[54] Плутарх, Помпей, XXXV.
[55] Страбон, XI, IV, 5.
[56] Плутарх, Помпей, XXXV.
[57] Նույն տեղում:
[58] Պոմպեոսն այդ անցումը կատարել է երեք շարքով. նախ հեծելազորը, ապա գումակը, հետո միայն հետևակը, որպեսզի հեծելազորային ձիերը իրենց մարմիններով թուլացնեին հոսանքի ուժը՝ հաջորդ շարքով անցնող գումակի համար, իսկ վերջինիս տեղի ունեցած որևէ կորուստ դեմ առներ մի փոքր ավելի ներքևից անցնող հետևակին և չքշվեր հոսանքից (Դիոն Կասսիոս, XXXVII, 3, 5):
[59] Նույն տեղում:
[60] Նույն տեղում:

որքան հնարավոր է գաղտնի պահել իր ահագին բանակի տեղաշարժը և անակնկալի բերել թշնամուն: Դա նրա սիրած ռազմական տակտիկական ձևն էր և քիչ հաջողություններ չէր բերել:

Պոմպեոսն, առաջ ընթանալով, հետը տասը հազար տիկերով միայն խմելու ջուր էր տանում, իսկ ուտելիք վերցնում էր տեղաբնիկներից[61]: Երկրորդ արշավանքի առաջին ընդհարումը Պոմպեոսի ու աղվանացիների միջև տեղի է ունենում Ալազան գետի ձախ ափին: Պլուտարքոսի տվյալներով այս ճակատամարտում աղվանական բանակը, որ բաղկացած էր 60 հազար հետևակից ու 12 հազար հեծելազորից, ունեցել է թվական գերակշռություն[62]: Աղվանացիների թվական գերակշռության մասին է հայտնում նաև մ.թ.I դարի պատմիչ Հուլիոս Ֆրոնտինոսը իր «Ռազմական հնարամտություններ» գրքում[63]: Սակայն հաշվի առնելով հակառակորդի ուժերը չափազանցնելու և սեփականը նվազեցնելու հույն-հռոմեական հեղինակների սովորությունը, կարծում ենք աղվանացիների ռազմական ուժերի գերազանցության մասին նրանց հաղորդումները ճիշտ չեն: Ավելին, Դիոն Կասսիոսի մի հաղորդումից պարզվում է հակառակը. հռոմեացիներն իրենք են ունեցել թվական գերակշռություն: Նա գրում է. «Երբ արդեն նրանք (հռոմեացիները - Հ. Ս.) անցել էին գետը, լուր հասավ, թե Օրոյսեսը մոտենում է: Այնժամ Պոմպեոսը ցանկացավ նրան կռվի մեջ քաշել, *նախքան սա կիմանար հռոմեացիների քանակի մասին, որպեսզի չլինի թե (վախենալով) ետ նահանջի»*[64]: Այսպիսի անկանխակալ վկայությունը ուրիշ եզրակացությունների տեղ չի թողնում, քան այն, որ աղվանացիները կռվել են հռոմեացիների համեմատությամբ փոքրաթիվ ուժերով: Դիոն Կասսիոսից քաղված այս սկզբնաղբյուրային տեղեկությունը, հաստատելով մեր միտքը, նոր եզրակացությունների տեղիք է տալիս: Ըստ Դիոն Կասսիոսի, Պոմպեոսի հետ կռվի բռնվողն ինքը՝ աղվանացիների թագավորն է, այն դեպքում, երբ Պլուտարքոսի մոտ հիշատակված է նրա եղբայրը՝ Կոսիսը, որին էլ մենամարտում սպանում է Պոպեոսը[65]: Աղբյուրների հաղորդումների այսպիսի անհամապատասխանությունը հիմք է տալիս ենթադրելու, որ Պոմպեոսը աղվանացիների դեմ ուղղված երկրորդ արշավանքի ժամանակ երկու ճակատամարտ է տվել: Առաջին անգամ (որի մասին պատմում է Պլուտարքոսը) տեղական բնակիչներից շտապ հավաքագրված ու երկիրը անակնկալ ներխուժած թշնամու առաջխաղացումը կանխելու փորձ անող ու, այսպիսով, Օրոյսեսին կազմակերպվելու հնարավորություն ընձեռող Կոսիսի գլխավորած և երկրորդ անգամ արդեն Օրոյսեսի հրամանատարությամբ գործող աղվանական կանոնավոր բանակի դեմ:

Առաջին ճակատամարտը, որի ամենաթեժ պահը եղել է աղվանական թագավորի եղբայր և, հավանաբար, զորքի գլխավոր հրամանատար Կոսիսի և Պոմպեոսի միջև կայացած մենամարտը, երբ Պոմպեոսը նիզակահար է անում Կոսիսին, նկարագրված է Պլուտարքոսի, իսկ երկրորդ ճակատամարտը՝ Դիոն

[61] Плутарх, Помпей, XXXV, Դիոն Կասսիոս, XXXVII, 3, 6.

[62] Плутарх, Помпей, XXXV.

[63] Известия древних писателей, т. II, с. 229: Ստրաբոնը հեծյալների թիվը հասցնում է 22000-ի (Страбон, XI, IV, 5).

[64] Դիոն Կասսիոս, XXXVII, 4, 1 (ընդգծ. Հ. Ս.):

[65] Плутарх, Помпей, XXXV.

Կասսիոսի մոտ: Այսպիսի ենթադրությունը հաստատվում է IV դարի (370 թ. մ.թ.) հռոմեացի պատմիչ Եվտրոպոսի վկայությամբ, որի համաձայն, «Պոմպեոսը պայքարեց ալբանացիների դեմ և երեք անգամ հաղթեց նրանց թագավոր Օրոյսեսին»[66]: Պոմպեոսի՝ աղվանացիների թագավորին երեք անգամ հաղթելու մասին են խոսում նաև Ռուփոս Փեստոսը[67] և ուրիշներ[68]: Կ. Վ. Տրեվերը կարծում է, թե նշված պատմիչները իրենց հաղորդումներով կամ նկատի ունեն 66-65 թթ. ձմռանը միաժամանակ երեք տեղում տված ճակատամարտերը, կամ ակնարկում են Ալազանի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո կայացած մի ուրիշ, դարձյալ աղվանացիների համար անհաջող մի ճակատամարտ[69]: Բայց, կարծում ենք, ո՛չ մեկը, ո՛չ մյուսը: Եթե տեղի ունեցած լիներ նման մի դեպք, ապա այդ մասին անկասկած կխոսեին Պոմպեոսի փառքը գովերգող հեղինակները և, հատկապես, Պլուտարքոսը, որը պատմում է նաև Ալազանի ճակատամարտից հետո ընկած ժամանակաշրջանում Պոմպեոսի գործողությունների մասին: Եվ քանի որ նրանք այդ չեն անում, ապա նշանակում է վերոհիշյալ հաղորդումները վերաբերում են ուրիշ երեք ճակատամարտերի, այն է՝ 66-65 թթ. ձմռանը և 65 թ. ամռանը Ալազան գետի մոտ Նախ Կոսիսի, ապա Օրոյսեսի դեմ տված ճակատամարտերին: Այսպիսով, նկարագրվող շրջանում Պոմպեոսը երրորդ անգամ է դուրս գալիս ճակատամարտելու աղվանացիների դեմ: Վերջին ճակատամարտը տեղի է ունենում մ.թ.ա. 65 թ. ամռանը, Աբանտ (Ալազան) գետի ձախ ափին, ինչ-որ բլրի մոտ, որից ոչ հեռու եղել է մի կիրճ: Պոմպեոսը, Օրոյսեսի դեմ ճակատամարտի բռնվելիս, օգտագործելով տեղանքը, հաջողությամբ կիրառում է հակառակորդին հեշտ հաղթանակով հրապուրելու, կեղծ նահանջի ու դարանած զորքերով շրջապատելու և ջախջախելու ռազմական խորամանկ տակտիկա: «Նա (Պոմպեոսը - Հ. Ս.),- գրում է Դիոն Կասսիոսը,- իր հեծելազորը դասավորեց առաջամասում, նախապես հանձնարարելով նրանց անելիքը, իսկ մնացյալին նա ամբողջովին անշարժ, վահաններով իրար ծածկած, դասավորեց (հեծյալների) ետևում, այնպես, որ Օրոյսեսը չկարողանար կռահել նրանց ներկայությունը, նախքան մարտի բռնվելը: Այսպիսով (Օրոյսեսը), արհամարհելով հեծյալներին, կարծելով, թե նրանք մենակ են, կռվի բռնվեց նրանց հետ և երբ քիչ անց նրանք դիտավորյալ փախուստի դիմեցին, նա ամբողջ թափով հալածեց նրանց: Այնժամ հետևակայինները խսկույն վեր կացան և, երկու մասի բաժանվելով, իրենց շարքերի միջով յուրայիններին ապահով նահանջ շնորհեցին, միաժամանակ անզգույշ կերպով հետապնդմամբ հրապուրված թշնամիներին իրենց շարքերի մեջ ընդունելով, շատերին շրջապատեցին: Այսպիսով, նրանք շրջապատվածներին կոտորեցին, իսկ հեծյալները, մի մասը աջ, մյուս մասը հակառակ կողմից շրջանցելով, թիկունքից հարձակվեցին շրջապատվածների վրա: Եվ այստեղ էլ այս զորամասերը շատերին սպանեցին»[70]: Չեն փրկվում նաև նրանք, ովքեր փախել թաքնվել էին անտառներում: Պոմպեոսի զինվորները հրդեհելով անտառները, նետահարում են այնտեղից

[66] ВДИ, 1949, N 3, с. 280.
[67] СМОМПК, вып. 4, с. 193.
[68] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 102.
[69] Նույն տեղում:
[70] Դիոն Կասսիոս, XXXVII, 4,4: Պոմպեոսի կիրառած այս ռազմական խորամանկության մասին պատմում է նաև Ֆրոնտինոսը (Известия древних писателей, т. II, с. 229):

փախչող աղվանացիներին[71]:

Ամբողջ ճակատամարտը հռոմեացիների կողմից ուղեկցվել է «Ով, Սատուռնալիա» աղաղակներով[72]: Այս բացականչությունները պետք է աղվանացիներին հիշեցնեին 66 թ. դեկտեմբերի իրենց առաջին հարձակումը և հռոմեացիների վրեժխնդրությունը: Վերջին հանգամանքը կրկին հանգեցնում է այն կարծիքին, որ հռոմեացիների հաղթանակը Կուր գետի շրջակայքում հեշտ չէր եղել, և ժամանակը չէր մարել նրանց վրեժի զգացումը:

Աղվանացիների կազմում կռվում էին նաև օտար ցեղեր, որոնց էլ, հավանաբար, նկատի ուներ Ստրաբոնը, երբ գրում էր. «Քոչվորները օտարերկրացիների հետ պատերազմում օգնում են ալբանացիներին, ինչպես և իբերներին»[73]: Մասամբ այս հանգամանքն էլ է դրդապատճառներից մեկը եղել, որ Պոմպեոսը Կովկասից մինչև Կասպից ծով ընկած շրջանում ապրող և աղվանացիների հետ համատեղ իր դեմ կռվող ցեղերին հարկադրել է ընդունել Հռոմի «բարեկամությունն ու դաշինքը»:

Ճակատամարտն ավարտվում է Պոմպեոսի հաղթանակով և Օրոյսեսի լիակատար պարտությամբ: Սակայն աղվանական թագավորին հաջողվում է խույս տալ հռոմեացի զորավարից և հեռվից բանակցություններ վարել՝ հաշտություն խնդրելով: Այդ նպատակով նա զանազան նվերներ ու հաշտության խնդրանքով նամակներ է ուղարկում Պոմպեոսին: Բայց վերջինս շարունակում է ասպատակության ենթարկել երկիրը և միայն երկար բանակցություններից հետո տեղի տալով պարտված թագավորի հաշտություն կնքելու թախանձանքով լի նամակների հետ ուղարկվող նվերներին ու պատանդներին[74], վերջապես համաձայնվում է հաշտություն կնքել: Դրա համար նա իր մոտ՝ ճամբար է կանչում Օրոյսեսին: Հռոմեացի պատմիչ Ֆլորուսը (մ.թ. II դարի առաջին կես) գրում է. «Ճամբար խփելով անմիջապես Կովկասի տակ[75], նա (Պոմպեոսը - Հ. Ս.) կարգադրեց Կոլխիդայի (իմա Աղվանքի - Հ. Ս.) թագավոր Օրոյսեսին իջնել ցած»[76]: Այստեղ Պոմպեոսը հաշտություն է կնքում Օրոյսեսի հետ և, եթե հավատալու լինենք պատմիչին, նույնիսկ փոխադարձ նվեր է անում նրան[77]: Այնուհետև նա հաշտության ու խաղաղության պայմանագրեր է կնքում նաև նույն ցանկությամբ իր մոտ բանագնացներ ուղարկած՝ Կովկասից մինչև Կասպից ծովն ընկած տարածքում ապրող մի շարք ցեղերի հետ[78]:

Աղվանքը նվաճված էր:

Նկարագրվող իրադարձություններից հետո Պոմպեոսը մտադրվում է ուղևորվել դեպի Կասպից ծով, որը վաղուց ի վեր հռոմեացիների հետաքրքրությունների օբյեկտն էր: Ըստ պատմագրության մեջ տիրապետող կարծիքի, Պոմպեոսի

---

[71] Известия древних писателей, т. II, с. 531.

[72] Դիոն Կասսիոս, XXXVII, 4,4:

[73] Страбон, XI, IV, 5.

[74] Известия древних писателей, т. I, с. 531; т. II с. 258; ВДИ, 1949, N 3, с. 280. Այդ նվերների թվում Ֆլորուսը հիշատակում է նաև մի ոսկե գահ (տե՛ս Известия древних писателей, т. II, с. 258).

[75] Ըստ Կ. Վ. Տրևերի, հավանաբար Աղվանքի մայրաքաղաք Կապաղակի շրջակայքում: Տես Очерки по истории... Албании, с. 104.

[76] Известия древних писателей, т. II, с. 258.

[77] Նույն տեղում:

[78] Դիոն Կասսիոս, XXXVII, 5, 1:

նպատակն է եղել ուսումնասիրել այն առևտրական ճանապարհը, որը, հների վկայությամբ, հնարավոր էր դարձնում առևտուրը Հնդկաստանից մինչև Սև ծով: Պլուտարքոսը պատմում է, որ Պոմպեոսը ուղևորվել է դեպի Կասպից ծով, բայց երբ ծովին հասնելու համար մնացել է ընդամենը երեք օրվա ճանապարհ, հրաժարվել է այդ մտքից և ետ դարձել իբր այնտեղ վխտացող «թունավոր զեռունների պատճառով»[79]: Ստրաբոնը, սակայն, գրում է, որ Պոմպեոսը հասել է Կասպից ծով. « (Պոմպեոսը - Հ. Ս.) արշավեց իբերների ու ալբանացիների վրա, մինչև Կասպից և Կոլխական (Սև - Հ. Ս.) ծովերի երկու կողմերը»[80]: Ամմիանոս Մարքելլինոսն այս դեպքերից ավելի քան չորս հարյուր տարի անց նույնպես գրում է, թե իբր «Պոմպեոսը անցել է ալբանացիների ու մասքաթների երկրով և տեսել Կասպից լիճը»[81]: Նրան ժամանակակից Հուլիոս Սոլինն էլ, օգտվելով Պոմպեոսի ուղեկիցներից մեկի՝ Վարրոնի տեղեկություններից, հայտնում է, որ Կասպից ծովի ջրի քաղցրահամությունը փորձել են ժամանակին Ալեքսանդր Մակեդոնացին, ապա Պոմպեոսը, որը «ցանկացել էր անձամբ համոզվել դրանում»[82]: Սակայն հաշվի առնելով, որ դեպքերին ավելի մոտ կանգնած ու Պոմպեոսի գործունեությանը քաջատեղյակ հեղինակները, մանավանդ Պլուտարքոսը, հակառակն են պնդում, վերջին հաղորդումները համարում ենք ոչ ճիշտ: Պոմպեոսը չի հասել մինչև Կասպից ծով և ոչ թե նրա համար, որ դրանում «մեղավոր» էին «թունավոր զեռունները», այլ՝ անցնող ճանապարհին ընկած ժողովուրդների դիմադրությունն ու երկրի խորքերը հասած հռոմեացիների համար սննդամթերք հայթայթելու և այլ կարգի դժվարությունները:

Այսպես թե այնպես Պոմպեոսը մ.թ.ա. 61 թ. վերադառնում է Հռոմ, իր հետ տանելով Աղվանքին, Մեծ Հայքին ու Իբերիային հաղթանակողի փառքը:

Հռոմեացիները մեծ նշանակություն են տվել Պոմպեոսի հաղթանակներին և նրա արևելյան արշավանքները դիտել որպես Հռոմի աննախընթաց հզորության արտահայտություն: Նրանց պատվին Հռոմում կազմակերպվել է հաղթական շքահանդես: Երկու օր տևած այս շքահանդեսում «առջևից տարվող տախտակների վրա նշված էին այն երկրներն ու ժողովուրդները, որոնց նկատմամբ տարած հաղթանակներն էին տոնվում. Պոնտոս, Հայաստան, Կապադովկիա..., իբերներ, ալբանացիներ, Սիրիա, Կիլիկիա, Միջագետք...: Հաղթահանդեսի ընթացքում, չհաշված ծովահենների գլխավորներին, որպես գերիների տանում էին Տիգրանին՝ Հայաստանի թագավորի որդուն՝ կնոջ ու աղջկա հետ, Տիգրանի կնոջը՝ Զոսիմային..., ապա ալբանացիներից ու իբերներից վերցրած պատանդներին, Կոմագենեի թագավորին...»[83]: Ապպիանոսը Պլուտարքոսի նկարագրություններին ավելացնում է, որ այդ պատանդներից էին՝ «երեք իբերական ու երկու ալբանական առաջնորդներ», իսկ տարվող տախտակների վրա մակագրություններ էին.

---

[79] Плутарх, Помпеú, XXXVI.

[80] Страбон, XI, I, 6 : Կ. Վ. Տրևերը գտնում է, որ այս հաղորդման մեջ գործածվող հունարեն «մինչև» բառով Ստրաբոնը նշում է աղվանացիների ու իբերների աշխարհագրական դիրքը՝ ընկած Սև և Կասպից ծովերի միջև (տե՛ս , К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 105), որը համոզիչ չէ:

[81] Аммиан, История, XXIII, 5, 16.

[82] ВДИ, 1949, N 3, с. 245.

[83] Плутарх, Помпеú, XLV.

«հաղթված են թագավորներ հայոց Տիգրանը, իբերական Արտոկեսը, ալբանական Օրոյսեսը, մարական Դարեհը...»[84]:

Պոմպեոսի արշավանքներից հետո ամբողջ Անդրկովկասն ընկնում է Հռոմի գերիշխանության տակ: Բայց ի տարբերություն մի շարք այլ երկրների՝ Պոնտոսի, Կոլխիդայի, Կապադովկիայի և ուրիշների, Աղվանքը, Իբերիան ու Հայաստանը չնայած հռչակվում են «հռոմեական ժողովրդի բարեկամ ու դաշնակից», որը նշանակում էր Հռոմի գերիշխանության ընդունում, չեն կորցնում իրենց թագավորությունները: Դա է վկայում թեկուզ և այն հանգամանքը, որ Պոմպեոսի հաղթահանդեսի ժամանակ, ինչպես նկատել է Կ. Վ. Տրեվերը[85], անդրկովկասյան երկրների և ոչ մի թագավոր չի ցուցադրվել: Մասնավորապես Աղվանքն այդ շքահանդեսում ներկայացվել էր միայն «երկու առաջնորդներով» ու պատանդներով[86], որ նշան էր, թե Աղվանքը, պահպանելով հանդերձ ներքին ինքնավարությունը, մյուս հարևանների նման, սոսկ դարձել էր Հռոմի քաղաքական գերիշխանությանը ենթակա երկիր: Պետք է առանձնապես ընդգծել, որ եղած գերիշխանությունն էլ Աղվանքում կայուն չէր: Դա երևում է նրանից, որ Պոմպեոսից հետո էլ Հռոմը հարկադրված էր զգալի ուժեր կենտրոնացնել Աղվանքը կրկին ու կրկին անգամ նվաճելու համար, որովհետև, ինչպես վկայում են հունա-հռոմեական հեղինակները, այն Մեծ Հայքի ու Վիրքի հետ մեկտեղ հաճախ ապստամբելով ազատվում էր Հռոմի ենթակայությունից: Նրանցից դեպքերին ամենամոտ կանգնած ու քաջատեղյակ Ստրաբոնը գրում է. «Ինչ վերաբերվում է հայերին ու Կոլխիդայից վեր բնակվող ժողովուրդներին (ալբանացիներին ու իբերներին), ապա նրանց համար բավական է միայն նշանակված կուսակալների ներկայությունը, քանի որ նրանք հիանալի ենթարկվում են հռոմեացիների իշխանությանը: Իմիջիայլոց, երբ հռոմեացիները զբաղված են այլ գործերով, նրանք ապստամբություն են բարձրացնում»[87]:

***

Պոմպեոսի կողմից Աղվանքը նվաճելուց շատ չանցած, աշխարհակալ Հռոմում մեկը մյուսի ետևից հաջորդում են իրադարձություններ (Կատիլինայի դավադրությունը, մ.թ.ա. 60 թ. Պոմպեոսի, Հուլիոս Կեսարի ու Կրասոսի կողմից

---

[84] Известия древних писателей, т. I, с. 537-538.

[85] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 100.

[86] Ըստ Կ. Վ. Տրեվերի, այս երկու առաջնորդները կարող էին լինել Աղվանքի վերնախավի ներկայացուցիչները, որոնք փոխարինել էին պատանդներին՝ Օրոյսեսի որդիներին (К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 109-110). Ն. Ադոնցի կարծիքով, հիշատակված երկու առաջնորդներն են եղել «թագավորն ու քուրմը» (տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 409, ծանոթ. 3): Բայց հազիվ թե ճիշտ լինի Ն. Ադոնցը, քանի որ այս դեպքում դա անպայման կնշվեր Պոմպեոսի շքահանդեսը նկարագրողների կողմից, ինչպես Կոմագենեի թագավորը: Հավանական է Կ. Վ. Տրեվերի կարծիքը, միայն թե այնպիսի վերապահությամբ, որ այդ ազնվականության ներկայացուցիչները պատանդության էին տրվել բոլորովին էլ ոչ Օրոյսեսի որդիների փոխարեն: Այդպես ենք կարծում, որովհետև աղբյուրները, խոսելով Օրոյսեսից պատանդներ վերցնելու մասին, չեն նշում թագավորի հետ ունեցած նրանց ազգակցական կապը, ինչպես դա արել են Արտոկեսի համար: Թագավորի որդիներին պատանդներ վերցնելը, ևս նշանակալի երևույթ էր և, եթե այդպիսի բան տեղի ունեցած լիներ, ապա այն ևս անպայման կշեշտվեր:

[87] Страбон, VI, 2.

առաջին եռապետության կազմումն ու հռոմեական ընդարձակ տերության բաժանումը եռապետերի միջև, քսան տարի մղվող քաղաքացիական կռիվները և այլն), որոնք հանգեցնում են խորը ճգնաժամի: Օգտվելով Հռոմում ստեղծված խառը իրադրությունից, այսինքն, ինչպես Ստրաբոնը կասեր, «հռոմեացիների զբաղվածությունից» աղվանացիները ապստամբելով դուրս են գալիս Հռոմի ենթակայությունից: Աղվանքի համար սկսվում է խաղաղության ու ինքնուրույնության մի ժամանակաշրջան, որը տևում է գրեթե քառորդ դար՝ մինչև մ.թ.ա. 37 թ.՝ Անտոնիոսի արևելյան արշավանքները:

Տևական խաղաղության այդ ժամանակամիջոցը աղվանացիների սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման համար դրական տեղաշարժերի ու քաղաքական նոր կողմնորոշման ժամանակաշրջան էր: Նրանք այդ շրջանում հայոց Արտավազդ թագավորի (մ.թ.ա. 55-36 թթ.) գլխավորությամբ կազմել էին հակահռոմեական մի միություն, ուր ներգրավված էին նաև իբերներն ու ատրպատականցիները և գործուն մասնակցություն էին ունենում հայ-հռոմեական հակամարտություններում: Դրա մասին է պատմահայր Մ. Խորենացու վկայությունը, որն, ի դեպ, դուրս է մնացել Աղվանքի պատմությունն ուսումնասիրողների տեսադաշտից: «Հայոց թագաւորէ Արտաւազդ որդի Տիգրանայ: ... Սա ... մանաւանդ զի և զՄիջագետս Անտոնիոսի հանեալ էր ի նմանէ, զայրացեալ հրաման տայր զօր յարուցանել զհիւսիսոյ Ատրպատական նահանգին և զնակիչս լերինն Կաւկասու հանդերձ Աղուանիւք և Վրօք խաղալ իջանէ ի Միջագետս, և հալածականս առնէ զզօրս հռոմայեցոց»[88]: Մ. Կաղանկատվացին էլ, փորձելով գրել Աղվանքի հին ժամանակաշրջանի պատմությունը, ուրախությամբ դիմում է պատմահոր հենց այս հաղորդմանը: «Յայսմ վայրի,- գրում է նա,- նպաստաւորէ մեզ Քերթողահայրն Մովսես զպատերազմելն Արտաւազդայ ընդ հռովմայեցիսն: Վասն զի ի գումարելն նորա զհիւսաւորսն Ատրպատականայ անդ կոչեաց զհզօր ազգս լերինն Կաւկասու և զզօրս Աղուանից և Վրաց և խաղաց ի Միջագետս, և սոցին ուժով հալածեաց զզօրսն հռովմայեցւոց»[89]: Մատենագիտական նման տեղեկությունները թույլ են տալիս պնդելու, որ, իրոք, աղվանացիները ոչ միայն ազատվել էին հռոմեական ենթակայությունից, այլև հարելով հակահռոմեական խմբակցությանը՝ մասնակցել հայոց թագավորի՝ Միջագետք կատարած արշավանքին: Դեպքը կարող էր տեղի ունեցած լինել Անտոնիոսի կողմից Միջագետքը հայերից խլելուց անմիջապես հետո՝ 38 կամ 37 թ.:

Արտավազդի գլխավորությամբ հռոմեացիների դեմ Անդրկովկասի ժողովուրդների պայքարն էլ պայմանավորեցին Անտոնիոսի նոր արշավանքը դեպի Կովկաս, որը հայերին, ալբանացիներին, վրացիներին ու մյուս ժողովուրդներին կրկին հպատակեցնելու հետ մեկտեղ ուներ և նախապատրաստական բնույթ՝ պարթևական արշավանքի համար: Անհրաժեշտ էր վերջին արշավանքից առաջ ապահովել թիկունքը, սեպ խրել այդ ժողովուրդների մեջ, «բաժանիր և տիրիր» հայտնի քաղաքականությամբ մեկը մյուսի դեմ հանել, զրկել դաշնակից պարթևներին օգնության գալու հնարավորությունից և այդպիսով Առաջավոր Ասիայում հասնել լիակատար գերիշխանության:

---

[88] Խորենացի, Բ, գլ. ԻԲ:

[89] Կաղանկատվացի, Ա, գլ. Ը:

Նոր արշավանքը դեպի Անդրկովկաս Անտոնիոսն անձամբ չի վարել, այլ նրա զորավարներից Պուբլիոս Կանիդիոս Կրասսոսը: Մ.թ.ա. 37 թ. Կանիդիոսը գալիս է Արևելք, նախ ստանում հայոց Արտավազդ թագավորի խոստումը՝ աջակցելու Անտոնիոսին նրա պարթևական արշավանքի ժամանակ և շարժվում է դեպի Վիրք ու Աղվանք: Նրան հաջողվում է նվաճել նաև Վիրքը և հարկադրել վերջինիս իր հետ միասին արշավել դեպի Աղվանք: Հռոմեա-իբերական միացյալ բանակի դեմ է դուրս գալիս աղվանից թագավոր Զոբերոսը: Տեղի ունեցած կռվում Զոբերոսը պարտվում է, ստիպված հարում հռոմեացիներին ու համաձայնվում մասնակցել դեպի Պարթևք ծարգրվող արշավանքին: Այս իրադարձությունների մանրամասնությունները հայտնի չեն: Դիոն Կասսիոսը միայն հաղորդում է, որ «Գելլիոսի և Նարվայի իշխանության ժամանակ Պուբլիոս Կանիդիոս Կրասսոսը, արշավելով իբերների դեմ, այդ կռվում հաղթեց նրանց թագավոր Փառնաբազոսին, ստիպեց նրան դաշնակից դառնալ և, նրա հետ միասին ներխուժելով հարևան Ալբանիա և հաղթելով սրանց ևս ու սրանց թագավոր Զոբերոսին, սրանց նույնպես իր կողմը գրավեց»[90]: Դիոն Կասսիոսի հաղորդումից կարելի է ենթադրել, որ Զոբերոսը վարել է հակահռոմեական քաղաքականություն, եղել հայոց թագավոր Արտավազդի դաշնակիցը և մասնակցել նրա գլխավորած միջագետքյան արշավանքին: Միաժամանակ այն անդրկովկասյան ժողովուրդներին միմյանց դեմ հանելով և ուժերը ջլատելով նրանց նվաճելու հռոմեական եղանակի ցայտուն օրինակ է:

Կանիդիոսի արշավանքով, որի ժամանակ նա «գերիշխանության է հասնում և՛ հայերի, և՛ իբերների, և՛ աղվանացիների թագավորների նկատմամբ ու հասնում է մինչև Կովկաս»[91], ավարտվում է Աղվանքի ինքնուրույնության շրջանը: Այստեղ դարձյալ վերականգնվում է հռոմեական ազդեցությունը:

Աղվանքի նվաճումը Կանիդիոսի կողմից միաժամանակ խախտում է հայոց թագավոր Արտավազդ Բ-ի և Զոբերոսի միջև կնքված հայ-աղվանական դաշնակցությունը: Անդրկովկասյան ժողովուրդների ուժերի ջլատման հռոմեական տակտիկան գործել էր անվրեպ: Դատելով ընդհանրապես անդրկովկասյան երկրների նկատմամբ հռոմեացիների վարած քաղաքականությունից ու մատենագիտական այլ տվյալներից, այս անգամ հռոմեական տիրապետությունը Աղվանքում եղել է համեմատաբար կայուն ու երկարատև: Այստեղ, ինչպես և Վիրքում, գտնվել են հռոմեական իշխանության ներկայացուցիչներ՝ կուսակալներ[92], որոնք իշխանությունն իրացնում էին իրենց տրամադրության տակ թողնված մեծաքանակ զինված ուժերի միջոցով[93]: Հռոմեական տիրապետության կայունությունն Աղվանքում կարելի է բացատրել նրանով, որ հռոմեացիները այստեղ վարել են աղվանացիներին սիրաշահելու և իրենց կողմը մշտապես պահելու մեղմ տակտիկա: Դա արվում էր ընդգծված հակահռոմեական քաղաքականություն վարող Հայաստանը մեկուսացնելու և վերջնականապես ընկճելու նպատակով: «Դեռևս Լուկուլլոսի և Պոմպեոսի արշավանքների ժամանակ Հռոմը համոզվել էր,

[90] Դիոն Կասսիոս, XLI, 24, 1:
[91] Плутарх, Антоний, XXXIV.
[92] Страбон, VI, IV, 2.
[93] Դիոն Կասսիոս, XLIX, 44, 2-4 , LI, 16, 2:Հրանդ Ք. Արմեն, Անկում Արտաշեսյան հարստութեան, Պեյրութ, 1967, էջ 123:

որ Հայաստանին դաշնակից են ու բարեկամ և նրա հետ սերտ կապված են Անդրկովկասի ժողովուրդները, գլխավորապես իբերներն ու աղվանացիները: Նա գիտեր, որ Հայաստանը թուլացնելու ու նվաճելու համար հարկավոր է չեզոքացնել կամ հռոմեական ազդեցությանը ենթարկել ամբողջ Հյուսիսային Անդրկովկասը մինչև Կովկասյան լեռները և մինչև Կասպից ծովի արևմտյան ափերը»[94]: Բացի Մեծ Հայքի քաղաքական մեկուսացման գործում ունեցած մեծ դերից, Աղվանքը (և Վիրքը) հռոմեացիների համար կարևորվում էր նաև նրանով, որ նրանց ձեռքին էին գտնվում Կովկասյան լեռնաշղթայի կարևորագույն լեռնանցքները՝ Դերբենդի ու Դարիալի հայտնի դռները, որոնցից մեկ անգամ չէ, որ օգտվել էին:

Հռոմի նվաճողական քաղաքականության մեջ շրջադարձային տակտիկան հատկապես կիրառվել է Օկտավիանոսի (մ.թ.ա. 31 - մ.թ. 14 թթ.) կողմից, որի ժամանակ մասնավորապես Աղվանքի ու Հռոմի միջև հաստատվում են նույնիսկ դիվանագիտական հարաբերություններ: Այս մասին վկայում է ինքը՝ Օկտավիանոս-Օգոստոսը: «Դեսպանների միջոցով,- հպարտորեն տեղեկացնում է կայսրը,- մեր բարեկամությունը խնդրեցին... նաև ալբանացիների, իբերների ու մարերի թագավորները»[95]: Այնուամենայնիվ, որքան էլ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը հռոմեացիների հետ խոսում է տվյալ շրջանում Աղվանքի քաղաքական կշռի բարձրացման, նրա պետական ապարատի ամրապնդման ու կատարելագործման մասին, այն Հռոմին ստորադրված երկիր էր:

---

[94] Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, էջ 284-285:
[95] Известия древних писателей, т. II, с. 41.

## Բ. Աղվանքը պարթևա-հռոմեական հարաբերություններում

Մ. թ.ա. I դարի վերջերին ու մ.թ. I դարի սկզբներին Աղվանքը շարունակում էր մնալ Հռոմի «բարեկամն ու դաշնակիցը»: Այստեղ գահակալում էր Հռոմի կողմից նշանակված տեղացի թագավորը և վայելում հռոմեացիների հովանավորությունը, որն էլ թույլ էր տալիս նրանց պատմիչներին սնապարծ հայտարարություններ անելու, թե Սիրիայից մինչև Եփրատ գետն ընկած տարածության հարևանությամբ «...թագավորում էին սահմանակից պետությունների ոտնձգություններից մեր վսեմության շնորհիվ պաշտպանված իբերների, ալբանացիների ու մյուս ժողովուրդների թագավորները»[96]:

Այդ նույն ժամանակաշրջանում Արևելքում տեղի էին ունենում իրադարձություններ, որոնք վտանգի տակ էին դնում Հռոմի գերիշխանությունը ոչ միայն Իբերիայում ու Աղվանքում, այլև ընդհանրապես : Մ.թ. 12 թ. պարթևական գահ է բարձրանում Արտավան Գ-ն (12-38 թթ.), որով սկսվում է Պարթևական պետության հզորության մի նոր ժամանակաշրջան[97]: Մի շարք միջոցառումների շնորհիվ բարելավելով երկրի ներքին կյանքը, Արտավան Գ-ն վերականգնում է Պարթևստանի միասնությունն ու նախկին հզորությունը և տարվելով Աքեմենյան Պարսկաստանի վաղեմի սահմանների վերականգնման աշխարհակալ ծրագրով[98], մտածում Արևելքում գերիշխանության հասնելու մասին: Ծուտով ներկայանում է հարմար առիթը. Հայաստանում մահանում է թագավոր Զենոն-Արտաշեսը և Արտավան Գ-ն հմտորեն օգտագործելով հայ ավագանու դժգոհությունը հռոմեական ազդեցությունից, նրանց օժանդակությամբ հայոց թագավոր է հաստատում որդուն՝ Արշակին: Սա արդեն Հռոմի հեղինակության լուրջ խախտում էր և իրական սպառնալիք նրա ասիական նահանգների համար: Այժմ միայն Օգոստոսին հաջորդած հռոմեական նոր կայսր Տիբերիոս Կլավդիոս Ներոնը (14-37 թթ.) վճռական միջոցների է դիմում կայսրության վարկը փրկելու համար: Բախումը այս տերությունների միջև դառնում է անխուսափելի: Սակայն Տիբերիոսը ձգտում է հեռու մնալ պարթևների հետ անմիջականորեն բախվելու վտանգից: Նա նախընտրում է պարթևներին սիրաշահելու քաղաքականություն, իսկ ռազմական գործողությունների մղում աղվանացիներին ու իբերներին: «Տիբերիոսը,- գրում է Փլավիոսը,- թուղթ է ուղարկում Վիտելլիոսին[99], հրահանգելով նրան բարեկամություն հաստատել պարթևների թագավոր Արտաբանոսի հետ: Որովհետև նրան սարսափեցնում էր այն, որ չլինի թե (Արտաբանոսը), որը թշնամի էր և հափշտակել էր Հայաստանը, ավելի մեծ չարիքներ գործի:... Տիբերիոսն այս ամենը Վիտելլիոսին գրելուց հետո, մեծ գումարներ տալով, համոզում է և՛ իբերների, և՛ աղվանների թագավորներին, առանց վարանելու պատերազմի ելնել Արտաբանոսի դեմ: *Իսկ նրանք թեև դեմ կանգնեցին, սակայն Կասպյան դռները բաց անելով ալանների առաջ, իրենց երկրի միջով ճանապարհ տվեցին նրանց*`

---

[96] Тацит, Анналы, IV, 5.

[97] М. М. Дьяконов, Очерк истории ... Ирана, с. 220-224; Г. А. Кошеленко, Внутриполитическая борьба в Парфии (вторая половина I в. до н. э. – начале I в. н. э.); ВДИ, 1963, N 3, с. 59-67.

[98] Тацит, Анналы, VI, 31.

[99] Լուկիոս Վիտեելիոսը Սիրիայի կառավարիչն էր (տե՛ս Դիոն Կասսիոս, (LX, 27, 2).

Արտաքանոսի դեմ[100]։

Անա այսպես, իրենց կամքից անկախ աղվանացիները ներքաշվում են պարթևա-հռոմեական հարաբերությունների ոլորտը։ Դատելով Փլավիոսի վկայությունից, աղվանացիներն ու իբերները դժկամորեն են ընդունել կայսեր առաջարկը, խուսափելով անմիջական ռազմական բախման մեջ մտնել պարթևների հետ։ Սակայն Տիբերիոսը հարցը լուծում է դիվանագիտորեն։ Առիթ դարձնելով իբերական Փառնավազյան ու հայկական Արտաշեսյան դինաստիաների կապը[101], նա առաջինների ուշադրությունը հրավիրում է հայոց գահի վրա, որպես Արտաշեսյաններից հետո միակ դինաստիական հավակնորդների։ Դա անմիջականորեն պարթևների դեմ ուղղված քայլ էր, քանի որ այդ ժամանակ Հայաստանում թագավորում էր Արտավանի որդի Արշակը։ Իբերական թագավոր Փարսմանը (35-74 թթ.), ընկնելով կայսեր որոգայթը, հայոց գահի համար առաջ է քաշում եղբոր՝ Միհրդատի թեկնածությունը, իբրև Արտաշեսյանների շառավղի։ Այսպիսով Մեծ Հայքին տիրելու համար պարթևա-հռոմեական մրցակցությունում հանդես է գալիս մի նոր ուժ՝ Իբերիան։

Իրենց մտադրության իրականացման ճանապարհին եղբայրները նախ թունավորում են Արշակին, ապա մ.թ. 35 թ. մեծ ուժերով մտնում Հայաստան և գրավում մայրաքաղաք Արտաշատը։ Ստանալով ավագ որդու սպանության ու Արտաշատի գրավման լուրը, Արտավան Գ-ն պարթևական զորք ու վարձու բանակ կազմելու համար մարդիկ է ուղարկում և երկրորդ որդուն՝ Օրոդեսին հանձնարարում վրեժխնդիր լինել եղբոր սպանության համար ու տիրանալ հայոց գահին։

Հռոմը հասնում է նպատակին։ Սկսվում է պարթևա-իբերական պատերազմ, որտեղ որպես իբերների դաշնակիցներ, հանդես էին գալիս նաև աղվանացիները։ Վերջիններիս ներքաշվելը այդ դաշնակցության մեջ, որ անկասկած Հռոմի ազդեցության հետևանքը էր, հսկայական գերակշռություն էր տալիս Իբերիային։ Իրենց ձեռքում ունենալով Կովկասյան լեռների հիմնական լեռնանցքները, աղվանացիները հեշտությամբ ճանապարհ էին տալիս Փարսմանի նվերներով հրապուրված Արտավանի դեմ եկող սարմաթներին ու, հակառակը, արգելակում պարթևներին օգնության շտապողների մուտքը։ Իբերա-աղվանական կողմը ուժեղ էր նաև նրանով, որ ապրելով «անտառախիտ լեռներում, սովոր էին գոյության ծանր պայմաններին և այդ պատճառով ավելի դիմացկուն էին, քան պարթևները»[102]։ Այսպիսով, պատերազմը տեղի էր ունենում ուժերի խիստ անհավասարության ու պարթևների համար անբարենպաստ պայմաններում։ Պարթևական հեծելազորը, որ նրանց հիմնական հարվածող ուժն էր, տեղանքի անհարմարության պատճառով չէր կարողանում գործել իր ամբողջ ուժով։ Դրանից օգտվելով, աղվանացիներն ու իբերները «բռնում են պարթևներին, ցած քաշում ձիերից ու հարկադրում նրանց կռվել անհավասար պայմաններում, քանի որ վերևից նրանց վրա էին թափվում հեծյալների հարվածները, իսկ ներքևից խփում էր նրանցից ետ չմնացող հետևակը»[103]։ Այստեղ միմյանց դեմ մենամարտի են դուրս գալիս վրաց թագավոր

[100] Известия древних писателей, т. I, с. 482.

[101] Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ ժամանակ Իբերիայում գահակալում էին մոր գծով Արտաշեսյաններին ներկայացուցիչները։ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 715-716։

[102] Тацит, Анналы, VI, 34.

[103] Նույն տեղում, VI, 35.

Փարասմանն ու հայոց գահի հավակնորդ Օրոդեսը: Այն ավարտվում է վերջինիս պարտությամբ, որն էլ ապահովում է աղվանացիների ու իբերների հաղթանակը[104]:

Իբերա-պարթևական այս պատերազմի հետևանքով հայոց գահը անցնում է Փարասմանի եղբայր Միհրդատին, որ Հռոմին ձեռնտու փոփոխություն էր: Սակայն իբերա-աղվանական դաշինքը, որ այդքան արդյունավետ էր եղել, շուտով խախտվում է: Բանն այն է, որ Հռոմին հաջողվել էր դարձյալ խախտել անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունն ու միասնականությունը և հասնել իբերների ու աղվանացիների հակադրությանը: Հռոմի այդ «բաժանիր և տիրիր» քաղաքականության իրագործողն Անդրկովկասում իբերների Փարասման թագավորն էր, որն այժմ տարված նվաճողական ծրագրերով, զենքն ուղղում էր երեկվա դաշնակցի՝ Աղվանքի դեմ: Ուժեղացած Իբերիան, որ մինչ այդ Հռոմի ու Պարթևստանի նման պայքարում էր Հայաստանին տիրելու համար, այժմ ձգտում է իրեն ենթարկել Աղվանքը և պատերազմի է դուրս գալիս նրա դեմ: Մեզ հայտնի չեն աղվանացիների ու իբերների միջև տեղի ունեցած այս պատերազմի մանրամասնությունները: Տակիտոսը 50-ական թթ. պատմական իրադարձությունները նկարագրելիս հպանցիկ գրում է, որ Փարասմանը ժամանակին կռվել է ալբանական թագավորի դեմ և օգնության համար դիմել հռոմեացիներին[105]: Ուշագրավ է, որ Փարասմանը դիմել է հռոմեացիների օգնությանը: Դա լիովին բացահայտում է Հռոմի երկդիմի քաղաքականությունը անդրկովկասյան երկրներում: Ի դեպ, այդ օգնությանը դեմ է եղել Փարասմանի եղբայրը՝ հայոց վրա թագավորող Միհրդատը: Այս հանգամանքը ուսումնասիրողներին բերել է այնպիսի եզրակացության, թե Փարասմանը նման քայլով նպատակ է ունեցել մի կողմից ցույց տալու, որ ինքը գործում է Հռոմի շահերին համապատասխան և դրանից ելնելով[106], մյուս կողմից՝ նա ցանկացել է օգտագործել Հայաստանում գտնվող հռոմեական զորքերը, որոնց ուժերով էր Միհրդատը պահում իշխանությունը Հայաստանում և վերջինս վախենալով նրանց բացակայության ժամանակ իր անկայուն իշխանությունը կորցնելուց, հակառակվել է եղբորը[107]: Անշուշտ հակառակությունը չէր խանգարել Փարասմանին և նա, ունենալով հռոմեացիների եթե ոչ ռազմական օգնությունը, ապա գոնե խրախուսանքը, հարձակվել է Աղվանքի վրա և գուցե ժամանակավորապես նրան ենթարկել իրեն: Այն ժամանակվա ուժեղ Իբերիան կարող էր հասնել հաջողության, մանավանդ, երբ դրան նպաստում էր նաև հռոմեական քաղաքականությունը[108]:

[104] Պատերազմի և նրա ելքի նկարագրությունը տե՛ս նաև Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, էջ 78:

[105] Анналы, XII, 45.

[106] Г. А. Меликишвили, К истории древней Грузии, с. 342.

[107] Հենց այս հակառակությունն էլ պատրվակ դարձնելով՝ Փարասմանը սեփական գահի անվտանգության նպատակով ուզում էր եղբորը՝ Միհրդատին գահընկեց անել հօգուտ որդու՝ Հռադամիզդի:

[108] Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ենթակա երկրների նկատմամբ Հռոմի վարած երկդիմի ու նենգ քաղաքականությունը Հայաստանի օրինակով ցայտուն կերպով է բնորոշել Հ. Մանանդյանը: Նա գրում է. «Հռոմեական դիպլոմատիան առաջ էր բերում Հայաստանում խառնակություններ և երկպառակություններ, խորացնում էր երկրում անբարոյացումը և ներքին կազմալուծումը և չէր ցանկանում, որ Հայաստանում հաստատվեր ուժեղ ու ազնվականությանը հաճելի նոր դինաստիա» (տե՛ս Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, էջ 317): Իրենք՝ հռոմեական պատմիչներն էլ չեն թաքցնում Հռոմի վարած քաղաքականության արատավոր մեթոդները: →

Մ.թ. I դարի երկրորդ կեսին իրադրությունն Արևելքում կտրուկ փոփոխվում է: Պարթևական գահը ժառանգում է ձեռներեց ու եռանդուն մի միապետ՝ Վոլոգեսոսը (Վաղարշը՝ 51-75 թթ.), որն իր գահակալության առաջին իսկ օրերից, Արևելքում գերիշխանություն ձեռք բերելու համար, անզիջում պայքար է սկսում Հռոմի դեմ: Հայաստանը գրավելու հռոմա-պարթևական հարաբերություններում ուժերի հարաբերակցությունն այժմ փոխվում է հօգուտ վերջիններիս: Վաղարշակ-Վոլոգեսոսին հաջողվում է Հայաստանի գահը տալ՝ կրտսեր եղբորը՝ Տրդատ Ա-ին և հարկադրել հզոր Հռոմին՝ ընդունելու իր համար ոչ ձեռնտու այդ փոփոխությունը: Տրդատ Ա-ն մ.թ. 66 թ. հանդիսավորապես թագադրվում է Հռոմում՝ Ներոնի ձեռքով:

Պատմագրության մեջ կարծիքներ կան, որ նույն թագավորը քաղաքական նպատակներով Աղվանքում ևս հաստատել է իր տոհմի ներկայացուցիչներից կամ եղբայրներից մեկին և սկիզբ դրել այնտեղ Արշակունյաց հարստությանը[109]: Սակայն այսպիսի իրավիճակ, որ կնշանակեր Պարթևստանի ազդեցության տարածում Աղվանքում, աղբյուրների քննությամբ չի հաստատվում: Ուսումնասիրողների նման կարծիքները հիմնականում կառուցված են Ագաթանգեղոսի այն տեղեկության վրա, որի համաձայն Պարթև Արշակունիները իրենց տոհմակիցներին, իրոք, քաղաքական նպատակներով, որպես գահակալներ նշանակել են սահմանակից երկրների վրա. «Պարթևք իբրև դէպք ի բարի հաջողէին նոցա, զթագաւորութիւն Պարսից, զՀայոց և զՀնդկաց՝ որ սահմանակիցք են արևելեայ Պարսից, նաև զխստալուծ զազգն Մասքթաց՝ յինքեանս կորզեալ ժառանգէին այսպիսի իմն կարգաւ, երիցագոյնն ի Պարթևաց տոհմէ, որ ապա զԱրշակունի ընկալան անուն...: Եւ որ երկրորդն էր զկնի նորա՝ զՀայաստանեայց առնոյր յինքն զթագաւորութիւն, իսկ որ երրորդն էր՝ զՀնդկաց կալաւ զտէրութիւն զհպաւորն սահմանացն Պարսից: Իսկ չորրորդն ի նոցանէ՝ զՄասքթացն ընկալաւ զիշխանութիւն թագաւորութեան»[110]: Ինչպես տեսնում ենք, Ագաթանգեղոսի վկայության մեջ Աղվանքի մասին խոսք չկա: Ուսումնասիրողները ելնում են Մասքթաց երկրի և Աղվանքի նույնացման սխալ տեսությունից, որոնք, սակայն, տարբեր երկրներ էին և մինչև մ.թ. V դարի կեսերը պատմության մեջ հանդես էին գալիս առանձին-առանձին: Արդեն իսկ այս հանգամանքը բավական է ցույց տալու, որ

Այսպես, հայոց գահը Հռադամիզդի կողմից հանցագործ ձևով ձեռքբերման լուրը քննելիս, Հռոմի սենատը գտնում է, «որ օտարների ամեն մի ոճրագործություն պետք է ընդունվի ուրախությամբ, որ անհրաժեշտ է նույնիսկ նրանց մեջ ատելության սերմեր ցանել, ինչպես այդ հաճախ արել են հռոմեական կայսրերը, որոնք հենց նույն Հայաստանը տվել են իբրև առատաձեռն նվեր, որպեսզի բարբարոսների մեջ առաջ բերեն երկպառակություններ: Թող Հռադամիզդը, ասում էին, ունենա իր իշխանության տակ հանցանքով ձեռք բերածը, միայն թե լինի ատելի և վտարանդի, որովհետև այդ ավելի օգուտ կբերե, քան եթե նա վտարվելու լինի փառքով (Анналы, XII, 48): «Հռոմի բարձր իշխանավորների այսպիսի տրամադրությունը հավասարաչափ տարածվում էր Վիրքի ու Աղվանքի վրա:

[109] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 145; C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, էջ 258: Բ. Ուլուբաբյան, Աղվանից թագավորական տան հարցի շուրջը, Լրաբեր հաս. գիտ., 1971, թիվ 7, էջ 63: Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 169 և հաջ.: Ն. Պիգուլևսկայայի կարծիքով, մ.թ.II դարում Աղվանքում իշխում էր Արշակունյաց հարստությունը (տե՛ս Н. В. Пигулевская, История Ирана с древнейших времен до конца XVIIIв., Л., 1958, с. 40.

[110] Ագաթանգեղոս, էջ Կ: Տե՛ս նաև Գ. Զարբհանալյան, Հայկական հին դպրության պատմություն, (Դ-ԺԳ դդ.), Վենետիկ, 1897, էջ 207:

սխալվում են ուսումնասիրողները՝ կարծելով, թե Աղվանքում ևս պարթևները գահակալներ են նշանակել իրենց տոհմակիցներից: Որ ուսումնասիրվող շրջանում Պարթև Արշակունիները իրենց ներկայացուցիչները և ընդհանրապես որևէ ազդեցություն չունեին Աղվանքում, հաստատվում է նաև մատենագիտական տվյալներով և, առաջին հերթին, այդ մասին հունա-հռոմեական աղբյուրների հաղորդումներով: Նրանք խոսում են Պարթևաց թագավորի միայն երկու երկրների՝ Ատրպատականի ու Հայաստանի վրա թագավորներ նշանակելու և, դրան էլ համապատասխան, սոսկ երկու եղբայր (Բակուր և Տրդատ) ունենալու և լռում ընդհանրապես Վաղարշի կողմից որևէ մեկին այլուր թագավոր նշանակելու մասին: Այսպես, Վաղարշին ժամանակակից Հովսեպոս Փլավիոսը գրում է, որ Գոտարզեսի սպանությունից հետո պարթևական գահին հաջորդել է «Նրա եղբայր Վոլոգեսոսը, որն իր հայրակից երկու եղբայրներին ևս թագավորություններ վստահեց. ավագին՝ Պակորոսին, նա տվեց Միդիան, իսկ կրտսերին՝ Տրդատին՝ Հայաստանը»[111]: Տակիտոսն էլ է բերում Վաղարշի խոսքերը՝ ուղղված պարթևական ավագանու խորհրդին. «Քանի որ,- ասում է Վաղարշը հավաքվածներին,- այստեղ ներկա գտնվող Տրդատը, ծնված նույն հորից, որից և ես, ինձանից տարիքով փոքր լինելու պատճառով ինձ զիջեց առաջնությունը, ես նրան տվեցի Հայոց թագավորությունը, որը մեր տոհմում համարվում է տիրապետության երրորդ աստիճանը, որովհետև մարերին նախօրոք իր ձեռքի տակ էր առել Պակորոսը: Ինձ թվում է, որ հակառակ եղբայրների միջև հին գժտություններին ու երկպառակություններին, ես ինչպես պետքն է կարգավորեցի մեր ընտանեկան հարաբերությունները»[112]: Որ Վաղարշն ուներ ընդամենը երկու եղբայր, Տակիտոսը շեշտում է նաև այլուր[113]: Դրանք հաստատվում են նաև իրենց ընտանեկան հարաբերությունների կարգավորման մասին Վաղարշի վերոբերյալ հայտարարությամբ: Այդպիսի հայտարարություն անելու համար Վաղարշն այլևս վախ չպիտի ունենար իր այնպիսի եղբորից կամ եղբայրներից ու տոհմի այլ ներկայացուցիչներից, որոնք կարող էին հանդես գալ գահի հավակնություններով:

Այդպես է նաև Դիոն Կասսիոսի հաղորդումներում: Այստեղ ևս Տրդատը դիտվում է միայն Վաղարշի ու Պակորոսի եղբայրը և որպես այդպիսին էլ նա ներկայանում է Ներոնին: Նա, որ Հռոմ էր գնացել եղբայրներ Վոլոգեսոսի, Պակորոսի և նրանց որդիների հետ, կայսերը դիմելիս ուղղակի ասում է. «Ես, ով վեհապետ, Արսակեսի հետնորդն եմ, Վոլոգեսոսի ու Պակորոս թագավորների եղբայրը, իսկ քո ծառան»[114]:

Այսպիսով, բերված վկայակոչումները հանգեցնում են մի անառարկելի

[111] Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, էջ 85: Ինչպես երևում է այս վկայությունից, ի տարբերություն Ագաթանգեղոսի և ընդհանրապես հայկական աղբյուրների, Վաղարշից հետո, որպես ավագ եղբայր անտիկ պատմիչները համարում են Բակուրին, իսկ նրա ստանձնած Ատրպատականի թագավորությունը երկրորդը Պարսից տերության մեջ, կրտսեր Տրդատին, իսկ վերջինիս հայոց թագավորությունը՝ երրորդը:
[112] Анналы, XV, 2.
[113] Հռոմեական զորավար Պետոսի հաշտություն կնքելու խնդրական նամակին Վաղարշը պատասխանում է, որ ինքը պետք է սպասի իր եղբայրներ Բակուրի ու Տրդատի գալուն, (Анналы, XV, 14), իսկ Տրդատն էլ Հռոմ ճանապարհվելուց առաջ Կորբուլոնից թույլտվություն է խնդրում տեսնելու իր եղբայրներին և, հեռանալով հռոմեական ճամբարից, «Բակուրին գտնում է մարերի մոտ, իսկ Վոլոգեսոսին՝ Էկբատանում» (Анналы, XV, 30).
[114] Դիոն Կասսիոս, LXIII, 5, 2.

եզրակացությամբ. պարթևաց Վաղարշ Ա թագավորը միայն երկու եղբայրներին՝ Տրդատին ու Բակուրին է համապատասխանաբար դարձրել Հայաստանի ու Միդիա-Մարաստանի (Ատրպատականի) թագավորներ և ոչ մի հիմք չի թողել Աղվանքում Պարթև Արշակունիների մի ճյուղի գոյության մասին կարծիքի համար:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Աղվանքը թեև ենթակա էր Հռոմին, բայց քաղաքական կողմնորոշմամբ հակված էր դեպի հայ-պարթևական խմբակցությունը: Իբերիայի դաշնակցային անհավատարմությունը, Հռոմից եկող մշտագո վտանգը, նրան կմղեին իր քաղաքական ինքնուրույնությանն ու անկախությանը ոչնչով չսպառնացող այդ խմբակցությունը: Բայց այդպիսի հակվածությամբ էլ հայ-պարթևական ու հռոմեական հակամարտությունների ժամանակ Աղվանքն ունեցել է չեզոք դիրք և զբաղված է եղել սեփական երկրի ներքին կյանքի կայունացման խնդիրներով:

Այդպես ենք կարծում, որովհետև այս ամբողջ քաղաքական բուռն իրադարձությունների՝ Հայաստանի գահի համար իբերա-պարթևական (Հռադամիզդ-Տրդատ) մրցակցության, ապա և պարթևա-հռոմեական 10-ամյա պատերազմի (54-64 թթ.) ու դրանց հաջորդող դեպքերի ժամանակ աղվանացիները քաղաքական ասպարեզում չեն երևում:

Պարթևա-հռոմեական պատերազմներն ավարտվում են նրանով, որ Հռոմի ծերակույտը պաշտոնապես ճանաչում է Տրդատ Ա-ին որպես հայոց թագավոր: Մ. թ.66 թ. Հռոմում տեղի է ունենում նրա թագադրության հանդիսավոր արարողությունը, որից հետո Տրդատը վերադառնում է Հայաստան: Սակայն «Ներոնի ձեռքից Տրդատի թագ ստանալու արարողության հանդիսությունն ու փքունությունը չէր կարողացել սքողել այն փաստը, որ հաղթողները պարթևներն ու հայերն էին»[115]: Այս հանգամանքը լուրջ հարված էր հասցնում Հռոմի հեղինակությանն Արևելքում, ուստի և հզոր Հռոմը, ի դեմս Ներոն կայսեր, հարկադրված էր խախտված հեղինակությունը վերականգնելու և Արևելքի երկրներին կրկին հպատակեցնելու համար նախաձեռնել մի մեծ արշավանք: Մ.թ. 68 թ. ծրագրվող արշավանքի համար լուրջ աշխատանքներ են տարվում: Ինչպես պատմում են անտիկ հեղինակները, Ներոնն այդ նպատակով նախ 6 фուտ հասակ ունեցող նորակոչիկներից կազմում է մի նոր ընտիր լեգեոն և որպես անպարտելիության նշան այն կոչում «Ալեքսանդր Մեծի» փաղանգ[116], ապա Գերմանիայից, Իլլիրիայից ու Իսպանիայից Հռոմ հրավիրում բազմաթիվ զորամասեր ու այդ ահագին բանակը ուղարկում դեպի Կասպյան դռներ, ըստ Տակիտոսի՝ աղվանացիների, իսկ ըստ Պլինիոսի՝ սարմաթ-ալանների դեմ: Առաջինը գրում է. «Այն բանից հետո, երբ Հռոմում, ուր արդեն կանգնած էր Ներոնի կողմից ծովային հետևակից կազմավորված մի լեգեոն, լեգեոններ եկան նաև Իսպանիայից, քաղաքը լցվեց մինչ այդ չտեսնված (բանակի- Հ. Ս.) զինվորներով: Սրանց պետք է ավելացնել և այն բազմաթիվ զինվորական զորամասերը, որոնց հավաքագրել էր Գերմանիայից, Բրիտանիայից ու Իլլիրիայից և, պատրաստվելով պատերազմի ալբանացիների դեմ, ուղարկեց (նրանց դեպի- Հ. Ս.) Կասպյան լեռնանցքները, բայց ճանապարհից ետ կանչեց Վինդեկսի բարձրացրած

[115] Հայ ժողովրդի պատմություն, հ. Ա, էջ 764:
[116] Suetunius, Thr lives of the Ceasars in two volumes, London, 1950, 1960, Nero, XIX, 2.

ապստամբության ճնշման համար»[117], իսկ Պլինիոսը ուղղում է. «Նույնիսկ նրանց, ովքեր վերջերս մասնակցել են Կորբուլոնի արշավանքին: Նրանք Կասպյան են անվանում այն դռները Իբերիայում, որոնք կոչվում են Կովկասյան...: Եվ Ներոն կայսեր սպառնալիքը իբր վերաբերվում էր Կասպյան դռներին, այն դեպքում, երբ ենթադրվում էին այն դռները, որոնք իբերների միջով տանում էին դեպի Սարմաթների երկիրը»[118]: Աղբյուրների այս հակասական հաղորդումները ուսումնասիրողների մոտ ևս տարակարծություններ են առաջացրել: Թ. Մոմզենը[119], Հ. Մանանդյանը[120], Գ. Մելիքիշվիլին[121] և ուրիշներ գտնում են, որ Ներոնի վերոհիշյալ արշավանքը ուղղված է եղել ալանների դեմ՝ կապված «Կովկասյան մերձսևծովյան շրջաններում հռոմեական իշխանության ամուր հաստատման քաղաքականության հետ» և նպատակադրված «ալանների հարձակումներից ապահովելու Մեոտիս-Կողքիսյան հին ճանապարհը, որն ուներ առևտրական միջազգային նշանակություն»[122]: Այսպիսով, նրանք եզրակացնում են, որ Տակիտոսի հաղորդման մեջ ալանները շփոթվել են աղվանացիների հետ: Գերմանացի գիտնական Վ. Շուրը[123], ապա և Կ. Վ. Տրեվերը[124] գտնում են, որ Տակիտոսի հաղորդման մեջ ոչ մի շփոթություն էլ չկա, և Ներոնի արշավանքը նախատեսված է եղել իրոք աղվանացիների դեմ գնալու համար: Վերջին երկու հեղինակների կարծիքով էլ այդ արշավանքը պատճառաբանված էր Դերբենդի լեռնանցքի կարևորությամբ, որով հաճախ էին հյուսիսային ցեղերը արշավանքների դուրս գալիս դեպի հռոմեական տիրույթները[125]: Մասնավորապես Կ. Վ. Տրեվերը իր կարծիքը հիմնավորելով նաև նրանով, որ եթե Ներոնի նպատակը իսկապես ալանների դեմ արշավելը լիներ, ապա Տակիտոսի հաղորդման մեջ կհիշատակվեին իբերները և ոչ թե աղվանացիները[126]: Նա գտնում է, որ Ներոնը նկատի ուներ Դերբենդի լեռնանցքը, որ նրա արշավանքը պետք է կասեցներ աղվանական թագավորության հզորացման աճը և հսկողության տակ դներ Կասպյան դռները, որոնցից աղվանացիները կարող էին բաց թողնել Ատրպատականի ու Հայաստանի, ինչպես և Փոքր Ասիայի հողագործական շրջանները արշավանքներ կատարող հյուսիսային ցեղերին»[127]: Որ ձեռնարկվող արշավանքը ուղղված է եղել աղվանացիների դեմ, ընդունվում է և այլ հեղինակների կողմից[128]:

Տարբեր նպատակակետեր հատկացնելով Ներոնին՝ ուսումնասիրողները արշավանքի ձեռնարկումը, այսպիսով, պատճառաբանում են Կովկասյան լեռնանցքներին տիրելու և նրա՝ առևտրական միջազգային ճանապարհները ձեռք բերելու քաղաքականությամբ:

Կովկասյան լեռնանցքներին տիրելը, անշուշտ, հռոմեական քաղաքականության կարևոր մասն էր կազմում: Բայց ուսումնասիրվող շրջանում դրանցից ելնող որևէ

---

117 Тацит, История, I, 6.
118 Известия древних писателей, т. II, с. 184.
119 Т. Моммзен, История Рима, т. V, с. 356.
120 Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ե, Երևան, 1984, էջ 324-338:
121 Г. А. Меликишвили, К истории древней Грузии, с. 344.
122 Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ե, էջ 338:
123 Վ. Շուր, Ներոն կայսեր արևելյան քաղաքականությունը, էջ 94 և հաջ.:
124 К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 121.
125 Նույն տեղում, էջ 123: Վ. Շուր, նշվ. աշխ., էջ 104:
126 К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 124.
127 Նույն տեղում, էջ 125:
128 В. Ф. Гайдукович, Боспорское царство, с. 331.

սպառնալիք չկար: Ալանաց (Դարիալի) դուռն պահով էր նրանով, որ տնօրինում էին «հռոմեական ժողովրդի բարեկամ ու դաշնակից» իբերները, իսկ Դերբենդը պահպանելու համար բավական էին և այն ուժերը, որոնք կարող էին դուրս բերել ինչպես իբերները, այնպես էլ Ներոնի ձեռքից թագ ստացած ու նրա նկատմամբ լավ տրամադրված հայոց թագավոր Տրդատ Ա-ն: Ուրեմն, հակառակ նշված աղբյուրների տեղեկությունների, կարծում ենք, Ներոնի սպառնալիքը ուղղված չէր ո՛չ մեկի, ո՛չ էլ մյուսի դեմ: Մի հանգամանքը, որ Ներոնը շատ լուրջ էր նախապատրաստվում այդ արշավանքին, խոսում է նրա ծրագրերի մեծ մասշտաբների մասին, որպիսին չէր կարող լինել ալվանացիների կամ ալանների դեմ նպատակամղված արշավանքը: Կ. Վ. Տրեվերի ճիշտ դիտողությամբ՝ Ներոնի նախապատրաստությունը ինչ-որ փոքր, պատժիչ արշավախմբի մասին չէր, այլ լուրջ պատերազմական գործողությունների[129]: Դա բխում էր Հռոմի վարած ներքին ու արտաքին քաղաքականությունից և ուղղվելու էր այնտեղ, որտեղ ամենից շատ էր այն վտանգվելու: Հռոմի այդպիսի քաղաքականությունը վտանգված էր, ինչպես արդեն տեսանք, պարթևա-հռոմեական հարաբերություններում: Միայն մի նոր հաղթական արշավանքով էր հնարավոր չեզոքացնել վտանգը և բարձրացնել Հռանդեայի դաշնագրով վարկաբեկված Հռոմի վարկը: Եվ Ներոնը խնամքով ու լրջորեն էր նախապատրաստվում դրան: Որ Ներոնի մտահղացումը ուղղված էր պարթևների դեմ, ցույց են տալիս նաև նրա կենսագիր Սվետոնիոսի ու Դիոն Կասսիոսի հաղորդումները, որոնք պատմելով նախատեսվող արշավանքի մասին, պարզապես նշում են, որ կայսեր արշավանքն ուղղված է եղել դեպի Կասպյան դռների կողմը[130]: Իսկ Կասպյան դռներ են կոչվել նաև Կասպից ծովի հարավային մասում գտնվող դռները[131], որոնք հաճախ են հիշատակվել անտիկ հեղինակների կողմից: Հետևաբար, Ներոնի արշավանքի կապակցությամբ պատմիչների հիշատակությունները Կասպյան դռների մասին կարող էին վերաբերել Կասպից ծովի հարավում՝ Ռագայի (Հռեւ, Ռեյ) մոտ գտնվող դռներին և Ներոնի՝ իր տեսակի ու քանակի մեջ աննախադեպ զինված ուժերով նախապատրաստվող արշավանքն էլ, այսպիսով, ուղղված կլինեն Առաջավոր Ասիայում Հռոմի ամենավտանգավոր ու ուժեղ հակառակորդի՝ Պարթևստանի դեմ: Միաժամանակ կարծում ենք, որ ալվանացիների հիշատակությունը Տակիտոսի հաղորդման մեջ պարզապես գրչական սխալ է, որ առաջացել է Կասպյան կամ Կովկասյան դռների հիշատակման ազդեցությամբ:

Պատմության մեջ այդքան աղմուկ բարձրացրած արշավանքը, սակայն, չի կայանում: Այն շուտով ընդհատվում է նույն Ներոնի կողմից՝ Վինդեկսի[132] առաջնորդությամբ բռնկված գալլական ապստամբության պատճառով:

Արևելքում պահպանվում է 63 թ. Հռանդեայի դաշնագրով հաստատված քաղաքական իրավիճակը:

---

[129] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 123.
[130] Suetunius, Nero, XIX, 2; Դիոն Կասսիոս LXIII, 8, 1.
[131] Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 67, ծանոթ. 1:
[132] Тацит, История, I, 6. Մարկոս Մակրինիոս Վինդեկսը Գալլիայի ապստամբների առաջնորդն էր՝ Հուլիոս Կեսարի ապօրինի որդու տղան, որով և շատ էր հպարտանում: Ըստ Թ. Մոմզենի, նա ապստամբել էր ոչ այնքան հռոմեացիների լծից ազատագրվելու, որքան հռոմեական իշխանության մեջ վերափոխումներ մտցնելու համար կամ, այլ խոսքով, ժամանակի հռոմեական կայսրության դեմ (Т. Моммзен, История Рима, т. V, с. 83):

## Գ. Հյուսիսային ցեղերի ներխուժումներն Աղվանք

Մ.թ. I դարի երկրորդ կեսից ավելի ու ավելի հաճախակի են դառնում հյուսիսային վաչկատուն ցեղերի արշավանքները դեպի Անդրկովկաս ու ավելի հեռու: Այս ցեղերը, որոնք հաճախ, որպես վարձու զորքեր հանդես էին գալիս Անդրկովկասյան երկրների կողմից, այժմ ասպատակության էին ենթարկում նրանց իսկ երկրները: Առանձնապես ծանր էին անդրադառնում ալանների ներխուժումները, որոնք ուղեկցվում էին բերքառատ դաշտերի ամայացմամբ, տնտեսության քայքայմամբ ու բնակչության ոչնչացմամբ:

Ալանների մ.թ. 72 թ. այդպիսի մի արշավանքի մասին է պատմում Հովսեպոս Փլավիոսը և, նրանից էլ օգտվելով, Մ. Խորենացին: Սակայն ո՛չ մեկի և ո՛չ մյուսի մոտ ալանների հարձակմանը ենթարկված երկրների թվում Աղվանքը չի նշվում: Պատմիչների տեղեկությունների համաձայն, նրանք ավերածության, թալանի ու կողոպուտի են ենթարկել միայն Հայաստանն ու Ատրպատականը, գերեվարություններ կատարել և ավար տարել այս երկու երկրներից: «Ալանաց ազգը,- գրում է Հովսեպոս Փլավիոսը,- որը բնակեցրել է Տանայիս (Դոն - Հ. Ս.) գետի և Մեոտիս (Ազովի - Հ. Ս.) լճի շրջակայքը... նպատակ ունենալով արշավել Մեդիա և նրանից ավելի այն կողմ այլ վայրեր ավարառության համար, համաձայնության են գալիս հյուրկանների թագավորի հետ, որը տերն էր այն անցուղու, որ Ալեքսանդր (Մակեդոնացի) թագավորը փակել էր երկաթյա ամուր դարպասներով: Ու քանի որ այդ մուտքը նրանց տրամադրեց, ապա նրանք հոծ բազմությամբ հարձակվեցին մեդացիների վրա, որոնք ոչինչ չէին կասկածում, ավարի մատնեցին բազմաթիվ և ամեն տեսակ անասուններով հարուստ երկիրը, իսկ ոչ ոք չհամարձակվեց նրանց դիմադրել: ... Շատ հեշտությամբ, առանց մարտի, կողոպուտի ենթարկեցին մինչև Հայաստան ու վերադարձան ամեն ինչ թալանելով: Իսկ (Հայաստանում) թագավորում էր Տիրիդատեսը, որը ռազմերթի ելնելով նրանց դեմ, ճակատամարտ տվեց, բայց քիչ էր մնացել, որ կռվի ընթացքում նրանց ձեռքը գերի ընկներ կենդանի: Որովհետև (ալաններից) մեկը հեռվից պարան ձգեց նրա վրա և նրան արդեն կբռներ, եթե (Տիրիդատեսին) չհաջողվեր իր սրով իսկույն կտրել պարանը և անհապաղ ճողոպրել: Մինչդեռ ալանները այդ կռվի (ելքից) ավելի գազազած, երկիրը թալանեցին և երկու թագավորություններից էլ մարդկանց հոծ բազմություն և ուրիշ շատ ավար տանելով, նորից վերադարձան իրենց երկիրը»[133]: «Զայսու ժամանակաւ,- արդեն գրում է Խորենացին,- միաբանեալ Ալանք[134] լեռնականօքն ամենայնիւ, յինքեանս արկանելով և զկէս Վրաց աշխարհին[135]՝ մեծաւ

[133] Известия древних писателей, т. II, с. 484. Փլավիոսի այս հաղորդման մեջ խառնաշփոթություն կա: Տանայիս գետի և Մեոտիս լճի շուրջը ապրող ալանները չէին կարող համաձայնության գալ Կասպից ծովի հարավարևելյան ափերի մոտ գտնվող Հյուրկանիայի հետ և նրանց թույլտվությամբ Կասպյան դռներով (Ռագա, Հռեւ, Ռեյ քաղաքի մոտ) անցնել Միդիա (Ատրպատական): Այս խառնաշփոթությունը վերանում և ամն ինչ իր ճիշտ տեղն է ընկնում, երբ հիշյալ «Հյուրկանիան» ուղղում ենք «Իբերիայի» մանավանդ, երբ հունա-հռոմեական աղբյուրներում հաճախ է Իբերիա-Վիրքը անվանել H   ca   a (տես Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, էջ 14):

[131] Մ. Կաղանկատվացին, որ կրկնում է Խորենացուն «ալանքի» փոխարեն սխալմամբ գրում է «աղուանք» (տես Կաղանկատվացի, Ա, գլ. Ը):

[135] Մ. Խորենացու այս վկայությունը լիովին արդարացնում է Հյուրկանիայի ուղղումը Իբերիայի:

ամբոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր»[136]: Մատենագիտական այս տեղեկություններում Աղվանքի չհիշատակվելը ուսումնասիրողներին բերել է այնպիսի կարծիքի, թե «Ալբանիան մի կողմ է մնացել Հայաստանն ու Ատրպատականը ցնցող ալանների՝ 72-74 թթ. արշավանքից»[137]: Սակայն հնագիտական պեղումները Ադրբեջանի տարածքում (Մինգեչաուրի շրջանում՝ Կուրի ձախ ափին, Շամախիում և այլուր) բացահայտել են մ.թ. առաջին դարերին վերաբերվող կատակոմբային թաղումներ, որոնք իրենց թաղման ծիսակարգով ու դամբարանանյութերով ամբողջովին նույնական են ողջ Հյուսիսային Կովկասում տարածված ու անվիճելիորեն ալաններին պատկանող նույնատիպ թաղումների հետ և ուսումնասիրողներին հանգեցրել են այն եզրակացության, որ դրանք պատկանում են ալաններին[138]: Այս կարևոր հայտնագործությունները թույլ են տալիս պնդելու, որ մ.թ. I դարի 70-ական թթ. ալանները ներխուժել են նաև Աղվանք, ենթարկել թալանի ու ավերածությունների[139]: Ավելին, նրանք այստեղ մնացել են բավականին երկար ժամանակ: Նույնիսկ ունեցել են իրենց կայուն զորակայանները այստեղ կամ նրան սահմանակից շրջաններում: Դա երևում է «Քարթլիս Ցխովրեբայի» մի հաղորդումից, որի համաձայն ալանները ճամբար էին խփել Կամբեճանում և արշավանքներից հետո իրենց ավարները բաժանել այնտեղ[140]: Ի դեպ, Գողթան երգերում էլ որպես ալանների ռազմակայան ցույց է տրված Կուրի հյուսիսային ափը՝ նույն շրջաններում: Այստեղ է քշում Արտաշեսը (բայց ինչպես կարծվում է Տրդատ Ա-ն[141]) ալաններին և այստեղից էլ նրան է դիմում ալանաց թագավորի աղջիկը՝ Սաթենիկը, եղբորը գերությունից ազատելու խնդրանքով: «Ժողովէ և Արտաշէս զիւրոց զօրացն բազմութիւն, և լինի պատերազմ ի մէջ երկոցունց ազգացն քաջացն և աղեղնաւորաց: Սակաւ ինչ տեղի տայր ազգն Ալանաց, և գնացեալ անցանէ ընդ գետն մեծ Կուր, և բանակի առ եզերբ գետոյն հիւսիսոյ, և հասեալ Արտաշէս բանակի ի հարաւոյ, և գետն ընդ մէջ նոցա:

Բայց քանզի զորդի Ալանաց արքային ձերբակալ արարեալ զօրացն Հայոց ածեն առ Արտաշէս... և ի չառնուլ յանձն Արտաշէսի առ ի տալ զպատանին՝ գայ քոյր պատանւոյն յափն գետոյն ի դարաւանդ մի մեծ և ի ձեռն թարգմանաց ձայնէ ի բանակն Արտաշիսի...»[142]:

Այսպիսով, անկասկած է, որ ալանների արշավանքներին ենթարկվել է նաև Աղվանքը և կրել նման ավերիչ արշավանքների բոլոր հետևանքները: Դեպի Աղվանք կատարված այս արշավանքներին, զգալի ուժերով, ինչպես Խորենացին է ասում, մասնակցել են նաև իբերները՝ «զկէս Վրաց աշխարհին»: Դատելով ալանների ու իբերների դաշնակցության փաստից, Աղվանքի վրա հարձակումը տեղի է ունեցել ոչ թե Դերբենդի լեռնանցքով, ինչպես կարծում են որոշ

[136] Խորենացի, Բ, գլ. Ծ:
[137] К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 127.
[138] И. Алиев, Г. Асланов, Племена сармато-массагето-аланского круга в Азербайджане, с. 218-237.
[139] Իբերիան զերծ է մնացել ալանների այս ավերիչ արշավանքից, որովհետև, ինչպես տեսանք Փլավիոսի ու Խորենացու վկայություններից, այն հանդես էր գալիս որպես նրանց դաշնակից:
[140] Картлис Цховреба, т. I, էջ 45-46, (на груз. яз.)
[141] Ա. Գարագաշյան, Քննական պատմութիւն Հայոց, h. Բ, Թիֆլիս, 1895, էջ 242-244: Մ. Աբեղյան, Երկեր, h. Ա, Երևան, 1966, էջ [115], Հ. Մանանդյան, Երկեր, h. Բ, էջ 16:
[142] Խոռենացի, Բ, գլ. Ծ:

ուսումնասիրողներ[143], այլ Իբերիա-Աղվանք սահմանագծի հատվածներից մեկով՝ հավանաբար Կամբեճանի վրայով, որը նաև նրանց ռազմակայաններից մեկն էր:

Ալանների արշավանքները, սակայն, սրանով չեն սահմանափակվում: Նրանք հաջորդ տարիներին ևս իրենց ներխուժումներով իրական սպառնալիք էին ստեղծում ոչ միայն Մեծ Հայքի ու Աղվանքի, այլև Ատրպատականի և Պարթևստանի համար, որի պատճառով էլ Վաղարշ Ա պարթևաց թագավորը ու, ամենայն հավանականությամբ, նաև նրա եղբայրներ Բակուրն ու Տրդատ Ա-ն, որոնք համապատասխանաբար թագավորում էին Ատրպատականում և Հայաստանում, օգնության խնդրանքով դիմում են Հռոմի կայսր Վեսպասիանոսին (69-79 թթ.): Արևելքի այս երկրներին օգնելու մեծ պատրաստակամություն է հայտնում կայսեր որդին՝ Դոմետիանոսը, սակայն հայրը, հաշվի առնելով երկրի տնտեսական ծանր դրությունը[144] մերժում է ընդհանրապես որևէ օգնություն ցույց տալ տուժված երկրներին[145]: Այս հանգամանքը նպաստում է, որ ալանները մոտ մեկ ու կես տասնամյակ մնան բերքառատ ու հարուստ Աղվանից երկրում: Հասկանալի է, որ այդ ամբողջ ժամանակաշրջանում Հռոմի ազդեցությունը այստեղ հավասարվել էր ոչնչի: Հռոմի համար վարկաբեկիչ իրադրությանը վերջ է տրվում միայն 80-ական թթ. վերջին՝ Դոմետիանոսի կողմից: Դառնալով կայսր (81-96 թթ.), նա արշավանքի է դուրս գալիս այս կողմերը, որի արձագանքը Աղվանքի բուն տարածքում հայտնաբերված լատիներեն արձանագրությունն է: Վերջինս, ինչպես արդեն ասել ենք[146], հայտնում է, որ այն թողել է «Դոմետիանոս Գերմանիկոս կայսեր ժամանակ Հուլիոս Մաքսիմոսը՝ XII Ֆուլմինատ[147] լեգեոնի ցենտուրիոնը»[148]: Անդրադառնալով արձանագրությանը՝ Կ. Վ. Տրևերը նրա բովանդակությանը ավելացնում է «կառուցեց» բառը[149] և դրանով արձանագրությանը հաղորդում շինարարական բնույթ: Միաժամանակ, նրա իսկ կարծիքով, հիշյալ լեգեոնը կամ նրա առանձին զորամասեր Աղվանքում կատարել են տեղական բնույթի առաջադրանքներ, Կասպից ծովի ափերի ուսումնասիրությանն ուղղված հետախուզական աշխատանքներ և այլն: Նա իր այս կարծիքը հաստատում է հռոմեացիների այն բուռն հետաքրքրությամբ, որ ցուցաբերում էին նրանք Կասպից ծովի հետազոտման համար[150]: Լ. Ա. Ելնիցկու կարծիքով, լեգեոնն իր բնույթով պատժիչ ջոկատ էր[151], իսկ Վ. Ն. Լևիատովը գտնում է, որ այն Աղվանքում էր գտնվում իրենց իսկ՝ աղվանացիների խնդրանքով, պարթևների դեմ կռվելու համար[152]: Օ. Վ. Կուդրյավցևը արձանագրության մեջ հիշատակվող ցենտուրիոնին

---

143 И. Алиев, Г. Асланов, Племена сармато-массагето-аланского круга в Азербайджане, с. 218-237.

144 Н. А. Машкин, История древнего Рима, с. 427.

145 Suetunius, Domitian, 2. Dio, LXVI, 15, 3.

146 Տե՛ս վերը:

147 Սովորաբար հռոմայեցիները իրենց լեգեոններին տալիս էին ահեղ անուններ, ինչպես օրինակ, «Ալեքսանդր Մեծի փաղանգ», «Ապոլոնյան», «Շանթասլաց» և այլն: Այստեղ «Ֆուլմինատը» նշանակում է «Շանթասլաց», «Կայծակնասլաց» (տե՛ս վերը):

148 Տե՛ս վերը:

149 К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 127.

150 Նույն տեղում, էջ 128, 345:

151 Л. А. Ельницкий, Северочерноморские заметки, Римляне у Каспийских ворот, с. 194.

152 В. Н. Левиатов, Азербайджан с V в. до н. л. по III вв. н. л., с. 87.

վերագրում է Արևելքի ժողովուրդների ու թագավորների հետ բանակցություններ վարելու դիվանագիտական առաքելություն[153]: Հարցը, սակայն, ավելի ճիշտ պարզաբանել է Լ. Խաչիկյանը: Կապելով Մ. Խորենացու ակնարկների հետ, նա գտնում է, որ գտնված արձանագրությունն արտացոլում է Դոմետիանոս կայսեր կատարած ինչ-ինչ արշավանքներ[154]: Իսկ Մ. Խորենացին գրում է. «Աղմուկ շփոթից իմն լեալ յարևմուտս ընդ որ վստահացեալ Արտաշես՝ նշկանեալ ընդդիմանալ հռոմայեցոցն տէրութեանն ոչ տալով հարկս: Իսկ Դոմետիանոսի կայսեր ցասուցեալ՝ զօրս ի վերայ Արտաշիսի առաքէ... ընդդեմ դիպեալ Արտաւազդ արևելեայ և հիւսիսային զօրօքն, հանդերձ ամենայն որդւովքն արքայի, և պատերազմեալ՝ սաստկապէս վտանգին: Յորոյ ի վերջո պատերազմին հասեալ Սմբատ հարաւային զօրօքն՝ ընդ մէջ անցեալ ապրեցուցանէ զորդիսն արքայի, յաղթութիւն և զրաւ պատերազմին արարեալ... և հետամուտ եղեալ հալածեաց զզօրսն հռոմայեցւոց մինչև ի սահմանս Կեսարու»[155]: Խորենացու նշած «աղմուկ շփոթիցը» հավանաբար 89 թ. Դոմետիանոսի կուսակցության դեմ ուղղված Անտոնիոս Սատուռնինոսի՝ Վերին Գերմանիայի լեգատոսի ապստամբությունն էր, որ էր «իմն լեալ յարևմուտս» և, որից էլ օգտվելով, հայերը նույնպես ապստամբում և հրաժարվում են հռոմեացիներին հարկ վճարելուց: Երկրում ալանների տնօրինության պայմաններում, բնականաբար, Հռոմի նկատմամբ որևէ պարտավորություն չէր կատարում նաև Աղվանքը: Այս ամենը հարկադրում են կայսերը ռազմական արշավանք կատարել դեպի Անդրկովկաս և այնտեղ վերականգնել նախկին դրությունը: Արշավանքը, սակայն, ինքը՝ Դոմետիանոսն, անձամբ չի վարել[156]: Դրա համար նա օգտագործել է հենց այդպիսի նպատակների համար Փոքր Ասիայում գտնվող հիշյալ լեգեոնը: Վերջինս ուղևորվելով Հայաստան, իր առանձին զորամասերն էլ ուղարկում է Աղվանք: Հիմնվելով Խորենացու վկայակոչած հաղորդման վրա, կարելի է եզրակացնել, որ այդ լեգեոնը Հայաստանում անհաջողության էր մատնվել[157], մինչդեռ, ինչպես երևում է արձանագրությունից, նրա զորամասերին հաջողվում է դուրս վանել ալաններին Աղվանքից և այնտեղ վերականգնել հռոմեական ազդեցությունը:

Կատարելով իր առաջադրանքը՝ այդ զորամասը կամ զորամասերը այնուհետև մնացել են Աղվանքում, որպես հռոմեացիների ռազմական հենարան, ինչպես աղվանացիներին հնազանդության մեջ պահելու, այնպես էլ երկրի վրայով օտար ցեղերի ներխուժումների դեմ պայքարելու համար: Որ զորամասն ունեցել է ռազմական խնդիր, երևում է նաև որպես ռազմակայան ընտրված տեղանքի դիրքից: Այն շրջապատի նկատմամբ գերիշխող էր, լավ ամրացված բնական ամրոց, որտեղ հեշտությամբ կարելի էր պաշտպանական դիրքեր գրավել: Բացի դրանից երևում են պաշտպանական նշանակության մի կառույցի հետքեր, կառույց, որ

[153] Всемирная история, т. II, М., 1955, с. 691.

[154] Լ. Խաչիկյան, Դիտողություն Մ. Խորենացու Հայոց պատմության երկրորդ գրքի ԾԴ գլխի մասին..., էջ 91-97:

[155] Խորենացի, Բ, գլ. ԾԴ:

[156] «Ոչ ինքն եկեալ այսր, այլ զիրամանն նորա և զզօրս» (Խորենացի, Բ, գլ. ԾԴ):

[157] Գուցե հռոմեացիների հենց այս անհաջողություններն էին պատճառը, որ այս արշավանքի մասին չեն խոսում ո՛չ Դոմետիանոսի կենսագիրները, ո՛չ էլ մի ուրիշ պատմիչ: Խորենացու այս հաղորդումը, լրացնելով այդ պակասը, բացահայտում է նաև Դոմետիանոսի քաղաքական գործունեության մի նոր՝ արևելյան կողմը:

տեղանքի դիրքերը ուժեղացնելու համար կանգնեցրել էին հռոմեացիները:

Այսպիսով, մ.թ. I դարի վերջին Աղվանքում դարձյալ վերականգնվում է Հռոմի ազդեցությունը և այդպես էլ թևակոխում իր պատմության երկրորդ դարը:

## Դ. Աղվանքը մ.թ. II դարում

Մ. Թ. 96 թ. սպանվում է Դոմետիանոսը: Փլաբիոսների հարստությանը փոխարինելու է գալիս Անտոնինոսների հարստությունը որին ևս նախորդների նման վիճակված էր միայն զենքի ուժով պահպանել իր ազդեցությունը Արևելքի երկրներում, այդ թվում և Աղվանքում: Դոմետիանոսի ներքին քաղաքականությամբ պայմանավորված ուժեղ ընդդիմադիր պայքարը, նոր հարստության հաստատվելն ու ամրապնդվելը, կռիվները Ստորին Դանուբի շրջանում՝ նորից ուժեղացած Դակիական թագավորության դեմ, Աղվանքի համար ստեղծել էին այնպիսի քաղաքական իրավիճակ, երբ իրավաբանորեն գտնվելով Հռոմի ազդեցության ոլորտում, ապրում էր փաստական անկախության ու ինքնուրույնության ժամանակաշրջան: Այդ ժամանակ Արևելքում գերիշխում էին պարթևները, որոնք էլ խախտելով Հռանդեայի դաշնագիրը (63 թ.), որի համաձայն հայկական գահի թեկնածու էր առաջադրվում պարթևներից, իսկ հաստատվում Հռոմի կողմից, ինքնագլուխ հեռացնում են հայոց նոր թագավորին՝ Աշխադարին (110-113 թթ.) և առանց Հռոմի համաձայնության նոր թագավոր հաստատում Պարթամասիրին (113-118 թթ.): Վտանգված տեսնելով հռոմեական քաղաքականությունն Արևելքում կայսր Մարկոս Տրայանոսը (98-117 թթ.), որ մինչ այդ հաջողությամբ (106 թ.) ավարտել էր Դակիական պատերազմը, Դակիան կցել Հռոմին և արդեն ի զորու էր խառնվելու արևելքի երկրների գործերին, 114 թ. մեծ ուժերով արշավում է հայերի ու պարթևների վրա և արագորեն վերականգնում նախկին դրությունը:

Տրայանոսի արևելյան արշավանքը վերջ է դնում նաև Աղվանքի քաղաքական անորոշ վիճակին: Այստեղ տեղի են ունենում կառավարական վերնախավի փոփոխություններ: Գահ է բարձրանում Տրայանոսի թեկնածուն: «Տրայանոսը,- գրում է Ռուփոս Փեստոսը,- որը Օգոստոսից հետո մեծացրեց հռոմեական տերության հզորությունը, խլեց Հայաստանը պարթևներից, ոչնչացրեց Մեծ Հայքի ինքնուրույնությունը, միացրեց հռոմեական կայսրությանը, ալբանացիներին թագավոր տվեց և իրեն հնազանդեցրեց իբերներին, կոլխերին ու բոսպորացիներին»[158]: Այս հեղինակին կրկնում է և Եվտրոպիոսը, Տրայանոսի նվաճած ժողովուրդների շարքում ավելացնելով նաև սավրոմաթներին, արաբներին ու օսրոյենացիներին[159]: Ուշադրության է արժանի այն փաստը, որ հռոմեական կայսրը «թագավոր է տվել ալբանացիներին»: Պետք է ենթադրել, որ նախորդը իր քաղաքականությամբ չի բավարարել հռոմեացիներին և վերջիններս նրան փոխարինել են իրենց դրածոյով: Ինքնըստինքյան պարզ է, որ Հռոմի կողմից Աղվանքում թագավոր կարգելը նշանակում էր նրա ազդեցության լիակատար վերականգնում երկրում: Նոր թագավորը[160], լինելով նրանց դրածոն, բնականաբար

[158] СМОМПК, вып. 4, с. 193

[159] ВДИ, 1949, N 3, с. 281.

[160] Անհայտ է այս թագավորի անունը: Ալիշանը չգիտես ինչ հիմքով սրան անվանում է «Վարազման

→

վարելու էր հռոմեասեր քաղաքականություն և ապահովելու էր հռոմեացիների գերիշխանության անսասանությունը: Սա ուրիշ այլ բան չէր նշանակում, քան Աղվանքի հնազանդեցում Հռոմին, ուստի դժվար է համաձայնվել Կ. Վ. Տրեվերի այն մտքի հետ, թե Տրայանոսի ժամանակ «բացառությամբ Ալբանիայի, ողջ Կովկասը հնազանդվեց Հռոմին»[161]: Նրան հետևում է և Ֆ. Մամեդովան[162]:

Հռոմեացիների դրածոն, հավանաբար, տեղական ազնվականության ներկայացուցիչներից էր, որը, սակայն, կարճ ժամանակ, մինչև Տրայանոսի մահը է (117 թ.) մնացել գահին: Դեռևս կայսեր կյանքի վերջին տարիներին Արևելքում վերականգնվում է նախկին դրությունը: Դիոն Կասսիոսը, ամփոփելով Տրայանոսի արևելյան արշավանքի արդյունքները, գրում է. «Այսպիսով, հռոմեացիները, Հայաստանի և Միջագետքի մեծ մասը գրավելով և պարթևներին հաղթելով, իզուր վտանգվեցին և իզուր տանջվեցին: Քանզի պարթևները ևս Պարթամասպատեսին գահազրկելով, նորից սկսեցին կառավարել իրենց սեփական եղանակով»[163]:

Աղվանքը ևս, մյուս երկրների հետ մեկտեղ, վերստին ստանում է իր ինքնուրույնությունը:

Ստեղծված քաղաքական հանգամանքները հարկադրում են Տրայանոսի հաջորդ Պուբլիոս Հադրիանոսին (117-138 թթ.) հրաժարվել Ալեքսանդր Մեծին նմանվելու ձգտումով տարված իր նախորդի հարձակողական-նվաճողական քաղաքականությունից և ընտրել սիրաշահելու ու բարեկամական հարաբերությունները պահպանելու քաղաքականություն: Նա Հայաստանից ետ է կանչում բանակները, Եփրատը կրկին սահման ընդունում երկու երկրների միջև և վերականգնում հայկական թագավորությունը՝ հռոմեական նահանգից վերածելով հռոմեական իշխանության տակ գտնվող երկրի, իսկ աղվանացիների ու իբերների հետ պահպանում «ամենաբարեկամական հարաբերությունները, որի համար էլ առատորեն պարգևներ է բաշխում նրանց թագավորներին, չնայած նրանք չցանկացան գալ իր մոտ»[164]: Պատմիչի խոսքերից հետևում է, որ II դարի առաջին կեսին Հռոմի տիրապետությունը նշված երկրներում դարձել էր անվանական և այդ ձևական տիրապետությունը պահպանելու համար իսկ տիրակալը առատ պարգևներ էր բաշխում նրանց թագավորներին նույնիսկ այն դեպքում, երբ վերջիններս կայսեր՝ իրեն ներկայանալու առաջարկը մերժելու համար ենթակա էին պատժի:

Անդրկովկասում Հռոմի ազդեցության թուլացումից շտապում է օգտվել իբերական Փառնավազյան տոհմը: Օգտագործելով Կովկասյան լեռնանցքները տնօրինելու իր հնարավորությունները՝ նա հաճախ է գրգռում հյուսիսային քոչվորական ցեղերին՝ անցնելու այդ դռներով և հարևան երկրներում ասպատակություններ ու ավերածություններ սփռելու: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ևս՝ 30-ական թթ. կեսերին, այդ տոհմի ներկայացուցիչներից

---

←
բագավոր Աղուանից, զոր Փարասմանն կոչին լատինք (Ալիշան, Աղուանք, Բազմավեպ, թիվ 11-12, էջ 344):

161 К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 129.

162 Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 123.

163 Դիոն Կասսիոս, LXVIII, 33, 1-2.

164 СМОМПК, вып. 4, с. 175.

մեկի՝ Փարասման Բ-ի[165] դրդմամբ ալանները հարձակվում են անդրկովկասյան երկրների, այդ թվում և Աղվանքի վրա: Դրա մասին է Դիոն Կասսիոսի հաղորդումը, ըստ որի ուժգին հարձակմամբ ալանները մեծ ավերածություններ են գործել Աղվանքում, ոտնակոխ արել Հայաստանն ու Կապադովկիան և հեռացել միայն շլացած հայոց թագավոր Վաղարշ Ա-ի (117-140 թթ.) նվերներից ու երկյուղած Կապադովկիայի կառավարիչ Փլավիոս Արրիանոսից[166]: «Մի երկրորդ պատերազմ սկսեցին ալանները - սրանք մասսագետներ են - Փարասմանի դրդմամբ: Այն մեծապես վնասեց Ալբանիային և Մեդիային, շոշափեց նաև Հայաստանն ու Կապադովկիան, որից հետո ալանները մասամբ համոզվեցին Վոլոգեսոսի ընծաներից, մասամբ էլ վախեցան Կապադովկիայի կառավարիչ Փլավիոս Արրիանոսից և դադարեցրին (պատերազմը)»[167]: Ինչպես երևում է այս վկայությունից, ալանների հարձակումից ամենաշատ տուժում են Աղվանքն ու Ատրպատականը: Այն քիչ վնասներ չի հասցնում նաև Հայաստանին, որի պատճառով էլ հայոց թագավոր Վաղարշ Ա-ն 138 թ. դիմում է Հռոմի նոր կայսր Անտոնինոս Պիոսին (138-161 թթ.)՝ բողոքելով Փարասման Բ-ի սադրիչ գործողությունների դեմ: Կայսրը իր մոտ՝ պատասխանատվության է կանչում վրաց թագավորին, սակայն վերջինս գալով Հռոմ, մեծաքանակ թանկագին նվերներով ոչ միայն կարողանում է մեղմել նրա զայրույթը, այլև արժանանալ նոր շնորհների[168]:

Օգտվելով կայսեր բարեհաճությունից ու ալանների ներխուժումներից, Փարասման Բ-ն, որի թագավորության տարիները համարվում են իբերական թագավորության հզորության ամենաբարձր շրջանը[169], ավելի լայն գործողությունների ազատություն է ստանում: Նա փորձեր է անում հարևան Աղվանքի հաշվին ընդարձակելու իր սահմանները արևելքում: Երկու երկրների միջև ընդհարումներ են տեղի ունենում սահմանային հարցերի շուրջը, որոնք էլ առիթ են հանդիսանում հռոմեաիների կրկին միջամտությանը նրանց ներքին գործերին: Դա երևում է հռոմեական պատմիչ Թեմիստոսի նույն ժամանակաշրջանին վերաբերող դեպքերի նկարագրությունից: «Հռոմեական զորավարները,- գրում է նա-, անցան Կասպյան դռները, դուրս քշեցին ալաններին Հայաստանից և սահմաններ կարգեցին իբերների ու ալբանացիների համար»[170]: Հասկանալի է, որ այս հանգամանքը ավելի էր ամրապնդելու հռոմեացիների դիրքերը նշված երկրներում, ինչը այդ բանը արտահայտված է նաև իրենց՝ հռոմեացի պատմիչների մոտ: Խոսելով Անտոնինոս Պիոս կայսրին հաջորդած Մարկոս Ավրելիանոսի (161-180 թթ.) մասին, Փլավիոս Վոպիսկոսը գրում է. նրա «առջև, ինչպես ատոռ՝ խոնարհվում էին ... իբերները, ալբանացիները, հայերը»[171]: Ստեղծված իրադրությունն առաջացել էր Ավրելիանոսին նախորդող տարիների

---

[165] Այս Փարասմանը վրաց թագավոր Փարասման Ա-ի թոռն էր և բռնությամբ հայոց գահին տիրացած, բայց Հռանդեայի դաշնագրով այնտեղից վռնդված Հռադամիզդի որդին:

[166] Նա II դարի հայտնի պատմիչն էր՝ «Ալեքսանդրի արշավանքը» նշանավոր գրքի հեղինակը:

[167] Դիոն Կասսիոս, LXIX, 15, 1:

[168] Նույն տեղում, LXIX, 15, 3:

[169] История Грузии, т. I, Тбилиси, 1962, с. 64; Г. А. Меликишвили, К истории древней Грузии, с. 353-356.

[170] Известия древних писателей, т. I, с. 697.

[171] СМОМПК, вып. 4, с. 176.

իրադարձությունների և նրա օրոք կայացած «հայկական» ու «պարթևական» կոչվող ռպատերազմների հաղթական ավարտով եւ 166 թ. պարթևների հետ կնքած խաղաղության պայմանագրով, որի համաձայն, բացի պարթև-հռոմեական սահմանային տեղաշարժերից, որոշվում է նաև, որ Հայաստանն իրեն համար թագավորներ ընտրի տեղական ազնվականության այն ներկայացուցիչներից, որոնք կարժանանան Հռոմի հավանությանը[172]: Պետք է ենթադրել, որ համանման վիճակ առաջանում է նաև Աղվանքում: Այստեղ վերականգնվում է իրենց դրածոներն Աղվանից գահի վրա ունենալու այն կարգը, որ մտցրել էր դեռևս Տրայանոսը, և որը խախտվել էր նրա իսկ կյանքի վերջում:

Այնուհետև, երկար ժամանակ՝ մինչև III դարի կեսերը, Աղվանքը գրավոր աղբյուրներում չի հիշատակվում: Աղբյուրների լռությունը պետք է բացատրել ընդհանրապես այն հարաբերականորեն կայուն դրությամբ, որ հաստատվել էր անդրկովկասյան երկրներում: Այստեղ գտնվել են զգալի թվով հռոմեական զորամասեր, որոնք կոչված էին պաշտպանելու Հռոմի շահերը երկրամասում: Ճիշտ է, դա հաստատող հուշարձաններն և լատիներեն արձանագրությունները խոսում են միայն Հայաստանում նրանց գտնվելու մասին[173], բայց այդպիսի զինված ուժերի առկայությունը նաև Աղվանքում (ու Վիրքում) միանգամայն հնարավոր է, քանզի այդպես էր լինում ամեն անգամ, երբ Անդրկովկասում տեղի էր ունենում Հռոմի ազդեցության վերականգնում: Այդպես էր մ.թ. I դարի 80-ական թթ.՝ Դոմետիանոսի ժամանակներում, այդպես էր և նրա հաջորդների օրոք: Ենթադրություններ կան, որ Աղվանքը, ինչպես և Հայաստանը ներգրավվել են դեռևս 166 թ. հռոմեացների ձևավորած ռազմական համակարգի՝ ավելի ստույգ, Կապադովկյան զինվորական համակարգի մեջ[174]: Եթե այդպես է, ապա այն Հայաստանի նման ունենալու էր Հռոմի հաշվին պահվող մշտական հեծելազոր և պարտավորվելու էր պաշտպանել Կովկասյան անցքերը[175]:

II դարի վերջին՝ 198 թ.[176], Անդրկովկասը մեկ անգամ ևս ենթարկվում է ալանների ավերիչ արշավանքին: Մ. Խորենացին նկարագրում է դրանք և որպես անցուղի ցույց է տալիս Ճորա դուռը՝ Դերբենդի լեռնանցքը: «Ի սորա (Վաղարշ Բ-ի - Հ. Ս.) աւուրս,- պատմում է նա,- միաբանեալ ամբոխութիւն հիւսիսականաց, զխազրաց ասեմ և զբասլաց, արտաքս քան զդուռն Ճորայ ելանեն..., որք անցեալ վտարին այսր զԿուր գետով: Որոց պատահեալ Վաղարշ ամբոխիւ մեծաւ և արամբք մարտկօք՝ ցիր դիաթաւալ կացուցանէ զամբոխն ընդ երեսս դաշտին, և ձիգ զհետ եղեալ՝ անցանէ ընդ կապանն Ճորայ»[177]: Հյուսիսայինների արշավանքը երկրորդվում է, որի ժամանակ, չնայած Վաղարշը կրկին հաղթում է նրանց, սակայն ինքն էլ «մեռանի ի ձեռաց կորովեաց աղեղնաւորաց»[178]: Հոր սպանության վրեժը լուծելու համար ոտքի է ելնում Խոսրով Ա հայոց թագավորը (198-216 թթ.), որը

[172] К. В. Тревер, Очерки по историии культуре древней Армении, Л. , с. 23.

[173] К. В. Тревер, Очерки по истории... Армении, с. 251-267; М. И. Ростовцев, Новая греческая надпись из Эчмиадзина, "ХВ", т. III, вып. 3, СПб, с. 15.

[174] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 790:

[175] J. Marquart, Eranshahr, էջ 102, ծանոթ. 4:

[176] Նույն տեղում, էջ 102:

[177] Խորենացի, Բ, գլ. ԿԵ:

[178] Նույն տեղում:

հյուսիսային ցեղերի վրա հարձակվելու համար Կովկաս լեռը նույնպես անցնում է Ճորա պահակով[179]: Չնայած այս իրադարձությունների նկարագրություններում աղվանացիները չեն հիշատակվում, բայց և այնպես նրանց մասնակցությունը դրանց ավելի քան հավանական է: Դեպի Անդրկովկասի խորքերը արշավելիս ալանները անցել են Ճորա պահակով, որով պետք է անցնեին նաև այստեղից վտարվելիս: Իսկ դա հնարավոր էր միայն Աղվանքի վրայով: Ահա թե ինչու թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում Աղվանքը ևս կենթարկվեր ալանների ավերիչ արշավանքներին և նրանց կհարկադրեր հայոց բանակի կազմում ունենալու գործուն մասնակցություն՝ ալաններին դուրս վռնդելու գործում:

Բացի դրանից, կարծում ենք, այդպիսի գործուն մասնակցությունը աղվանացիներին կպարտադրեր նաև հայոց հետ մեկտեղ միևնույն ռազմական համակարգում գտնվելու հանգամանքը:

Ալանների վրա կատարած հաղթական արշավանքից վերադառնալով, Խոսրով Ա հայոց թագավորը որպես «զիւրոյ տէրութեանն նշանակ արձան հաստատէ հելլենացի գրով, որպեսզի յայտ լիցի ընդ հնազանդութեամբ լինել Հռոմայեցւոց»[180]: Սա արդեն լուրջ մատենագիտական վկայություն է և հավաստում է, որ Հայաստանը, ուրեմն և նրա հետ քաղաքական ու ռազմական կապերով կապված Աղվանքը, մ.թ. II դարի վերջերին գտնվում էր Հռոմին ենթակա երկրի վիճակում:

## Ե. Աղվանքն առաջին Սասանյանների օրոք

III դարը Առաջավոր Ասիայի պատմության մեջ մտավ որպես քաղաքական ու սոցիալական փոփոխությունների ժամանակաշրջան:

Ստրկատիրական հասարակարգը խոր ճգնաժամ էր ապրում: Նրա ընդերքում վաղուց սաղմնավորված նոր երևույթները արդեն իրենց զգացնել էին տալիս: Արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև առաջացած անհամապատասխանությունը, դասակարգային, սոցիալ-տնտեսական ու այլ հակասություններ, հասարակությանը տանում էին դեպի քայքայում: Դա արտահայտվում էր ստրկական աշխատանքի շահագործման նոր ձևերի, ստրուկներին որոշ ազատություն տալու, նրանց մոտ շահագրգռվածություն առաջացնելու, բացի պետականից, նաև մասնավոր ճանապարհով արտատնտեսական հարկադրանք կիրառելու, համայնական գյուղացու շահագործումն էլ ավելի ուժեղացնելու մեջ և հասարակական կյանքի այլ բնագավառներում: Փոխվում էր համայնքի դեմքը: Համայնքի ազատ գյուղացին աստիճանաբար վերածվում էր կախյալ գյուղցու: Քայքայման ընթացքը ներթափանցել էր նաև պետական կառավարման ոլորտները. թուլացել էին կենտրոնական իշխանությունները, սրվել հարաբերությունները կառավարող վերնախավում: Միմյանց էին հաջորդում երկպառակչական կռիվները, որոնք հանգեցնում էին առանձին, ինքնուրույն քաղաքական կազմակերպությունների առաջացմանը:

Տեղի էր ունենում հին տնտեսակարգի անկման ու նորի կազմավորման

[179] Նույն տեղում:
[180] Նույն տեղում:

գործընթաց, որին նպաստում էր նաև Առաջավոր Ասիայում ձևավորված քաղաքական բարդ իրավիճակը:

Դարասկզբին դեռևս շարունակվում էին պարթևա-հռոմեական հակամարտությունները: Անտոնինոս Կարակալլայի (211-217 թթ.) պարթևական արշավանքները թեև հռոմեացիներին ցանկալի արդյունք չէին տալիս, բայց ծանր վնասներ էին հասցնում Պարթևքին: Վերջինս պետականորեն թուլացել էր, ապակենտրոնացել և այլևս ոչ միայն չէր կարողանում լուրջ դիմադրություն ցույց տալ հռոմեացիներին, այլև դիմագրավել այն մեծ շարժմանը, որ ծագել էր Պարսքում Արշակունյաց հարստության դեմ: Եվ շուտով, անվերջ պատերազմներից հոգնած, ներքին երկպառակություններից ու սոցիալական շարժումներից հյուծված պարթևական երբեմնի հզոր պետությունը տեղի է տալիս և 227 թ. Մարաստանի Որմիզդական կոչվող հարթավայրում տեղի ունեցած ճակատամարտում[181] վերջնականապես պարտվելով Սասանի թոռ Արտաշիրին, դուրս է գալիս պատմության ասպարեզից: Նույն թվականին Տիզբոնում Արտաշիրը թագադրվում է որպես Իրանի արքայից արքա[182]: Այսպես, Պարթևքին փոխարինելու է գալիս մի նոր աշխարհակալ պետություն՝ Սասանյան Իրանը: Առաջավոր Ասիայում գերիշխանության հասնելու համար պայքար է սկսվում Հռոմի ու Սասանյանների միջև, որն իր բնույթով ու ծավալով պակաս համառ, կատաղի ու անզիջում չէր, քան մինչ այդ Հռոմի և Սասանյանների դինաստիական հակառակորդ պարթևների միջև տեղի ունեցած պատերազմները: Այդ անհեղ պատերազմներին, դարձյալ իրենց շահերին ներհակ, մասնակից էին դառնում հայերը, աղվանացիներն ու իբերները: Վերջիններս նոր բռնակալի դեմ հաճախ պայքարի էին դուրս գալիս նաև հանուն իրենց գոյատևման իրավունքի:

Սասանյանները, որոնք խնդիր էին դրել վերացնել Արշակունյաց հարստության բոլոր ճյուղերը, սկզբից ևեթ թշնամական դիրք են բռնում հայկական ժառանգական Արշակունյաց հարստության հանդեպ և ամեն կերպ ձգտում վերացնել նրանց ու նվաճել Հայաստանը: Միաժամանակ իրենց համարելով Աքեմենյանների ժառանգորդներ՝ նպատակադրվում են վերականգնել աշխարհակալ նախորդների տերության նախկին սահմանները:

Նոր քաղաքական հարաբերություններում, երբ սպառնալիք վտանգը այժմ գալիս էր Սասանյան Իրանից, Հայաստանը կամաց-կամաց քաղաքականապես թեքվում է դեպի հռոմեական կայսրությունը և, հակադրվելով զրադաշտականությանը, որն ընդունվել էր որպես Սասանյանների պետական կրոն և դարձել նրանց նվաճողական քաղաքականության գաղափարական զենքը, հարում նրան նաև կրոնագաղափարական բնագավառում:

Աղվանքը Հայաստանի հետ կազմում էր մի ընդհանուր ճամբար: Նրանց հետ էր և Իբերիա-Վիրքը:

Սասանյանների մուտքը քաղաքական ասպարեզ նշանավորվում է հայերի,

---

[181] Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 23: Որոշ ուսումնասիրողներ Որմիզդականի ճակատամարտն ու Իրանի պատմության Սասանյան շրջանի սկիզբը համարում են 224 թ. (տե՛ս A. Christensen, L'Iran sous les Sassanides, Copenhague, Paris, 1944, էջ 88):

[182] Հ. Մանանդյանը (Երկեր, հ. Բ, էջ 71), ապա և Մ.Մ. Դյակոնովը (Очерк истории древнего Ирана, с. 258) և ուրիշներ գտնում են, սակայն, որ Արտաշիրի, որպես Իրանի արքայից արքայի թագադրությունը Տիզբոնում տեղի է ունեցել 226 թ.:

աղվանացիների ու վրացիների կռիվներով, որոնք ուղղված էին դինաստիայի հիմնադիր Արտաշիր Ա-ի դեմ: Այդ պայքարը, որ գլխավորում էր հայոց թագավոր Տրդատ Բ-ն (216-252 թթ.), արտացոլված է հայկական աղբյուրներում՝ Մ. Խորենացու, Հովհան Մամիկոնյանի, Ագաթանգեղոսի ու Ուխտանեսի մոտ: Թեև նրանցից առաջին երկուսը սոսկ հայտնում են, որ հայոց ու պարսից միջև տեղի են ունեցել երկարատև կռիվներ[183], սակայն վերջիններս մատնանշում են նաև կռիվների մասնակիցներին՝ աղվանացներին, իբերներին ու կովկասյան այլ ժողովուրդների: «Իբրև չետ մահուն (Արտավանայ - Հ. Ս.),- գրում է Ագաթանգեղոսը,- հասանելոյ գուժիս այսորիկ առ Խոսրով[184] թագաւորն հայոց ... միւս ևս ի գլուխ տարւոյն սկսանէր ... գունդ կազմել և զօր բովանդակել, գումարել զզօրս, ասպատակ դնել Աղուանից և Վրաց, և բանալ զդրունս Ալանաց և զՃորայ պահակին, հանել զզօրս, ասպատակ դնել ի կողմանս Պարսից, արշավել ի կողմանս Ասորեստանի, մինչև ի դրունս Տիսբոնի»[185]: Պատերազմի մասնակիցների նույն թվարկումն է անում և Ուխտանեսը. «Սկսաւ զորաժողով լինել Խոսրով արքայն Հայոց և ժողովեաց զզօրս Աղուանից և զՎրաց, և զԼփնաց, և զՃղբաց, և զԿասբից, և զզօրս Հոնաց»[186]: Վերջիններս հայոց թագավորի կոչին արձագանքում են անմիջապես լավ պատրաստված, մեծաքանակ ու մարտականորեն տրամադրված բանակով: Իր քաջությամբ ու մարտական ոգու բարձրությամբ աչքի է ընկել հատկապես այրուձին: Այդ է ցույց տալիս Ագաթանգեղոսի վկայությունը, որ յուրօրինակ հավելում է աղվանացիների ռազմական բարձր հատկությունների մասին անտիկ հեղինակների հաղորդումներին: «Վաղվաղակի,- գրում է նա,- ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր և քաջ առն և ձիոյ և բուռն կազմութեամբ Աղուանք, Լփինք, և Ճիղբք, Կասպք և այլ ևս, որ ի սմին կողմանց, զի զվրեժն արեանն Արտևանայ խնդրեսցեն»[187]:

Այսպիսով, Աղվանքը Մեծ Հայքի ու Վիրքի հետ դառնում է այն առաջին երկրներից մեկը, որոնց հետ հարկադրված էին ընդհարվել Սասանյանները քաղաքական ասպարեզում հայտնվելուն պես: Այս առաջին համատեղ կռիվները սկիզբն էին այն մեծ, երկարատև ու դաժան պայքարի, որ այսուհետև մղելու էին հայերը, աղվանացիները, վրացիներն ու կովկասյան մյուս ժողովուրդները Սասանյանների դեմ հանուն իրենց ազատության ու անկախության: Աղվանացիների ու վրացիների մասնակցությամբ մղվող հայ-պարսկական կռիվները, ըստ հայ պատմիչների, տևում են տաս-տասնմեկ տարի[188], որը ընդունվել է որպես հավաստի հաղորդում[189]:

Պատմագրության մեջ փորձեր են արվել որոշելու նաև այդ տարիները, սակայն, մի ընդհանուր, բոլորի կողմից ընդունելի տարեթիվ չի որոշվել: Առաջարկվել են

[183] Խորենացի, Բ, գլ. ՀԱ-ՀԳ: Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 66-67:

[184] Ինչպես իրավացիորեն ցույց է տվել Հ. Մանանդյանը, հայ-պարսկական այս առաջին կռիվներում եղել է ոչ թե Խոսրովը, այլ Տրդատ Բ-ն (տես Երկեր, հ. Բ, էջ 80): Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 25:

[185] Ագաթանգեղոս, էջ 18-19:

[186] Ուխտանես, էջ 70:

[187] Ագաթանգեղոս, էջ 18:

[188] Նույն տեղում, էջ 23, Յ. Մամիկոնեան, էջ 67:

[189] Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 37:

228-238 թթ., 238-248 թթ., 242-252 թթ.[190], 245-256 թթ.[191] և այլն: Առաջնորդվելով Ագաթանգեղոսի մի վկայությամբ, կարծում ենք, սակայն, որ առաջարկվող և ոչ մի տարեթիվ ճիշտ չէ: Պատմագրության մեջ Արտավանի սպանության և Արտաշիրի գահակալության թվականը ընդունված է համարել 227 թ.: Ըստ Ագաթանգեղոսի, Արտաշիրի դեմ պատերազմը սկսվել է ոչ թե նույն՝ Արտավանի սպանության տարում, այլ «ի միւս ևս ի գլուխ տարւոյն»[192], այսինքն՝ 228 թ.: Ուստի տրամաբանական է ու պատմականորեն ճիշտ հայ պատմիչների նշած պատերազմական ժամանակաշրջանը համարել 228-237/38 թթ.: Եվ բոլոր տարիներին հայերի հետ մեկտեղ Սասանյան Պարսկաստանի դեմ մարտի են ելել նաև աղվանացիները: Վերջին եզրակացությունը սոսկ անդրկովկասյան ժողովուրդների միմյանց հետ ունեցած քաղաքական, տնտեսական ու բարեկամական կապերից ու ընդհանուր թշնամու դեմ պայքարի անհրաժեշտությունից բխող տրամաբանական եզրակացություն չէ, այլ ունի նաև իր մատենագիտական հիմքը: Ագաթանգեղոսը գրում է, որ պատերազմի հաջորդ տարում ևս՝ ուրեմն 228 թ. Խոսրով - Տրդատ Բ թագավորը «զօր բազում կուտեր յոյժ, գումարտակ առնէր, *զնոյն զօր* կոչէր. և սա բազում քան զնոյն ասպատակ սփռեալ»[193], «եւ ամս մետասան ստեպ-ստեպ զայս օրինակ աւար առեալ»[194]: Նույն զորքերով Տրդատ Բ-ի մեկից ավելի վարած պատերազմներն Արտաշիրի դեմ վկայված են նաև Խորենացու մոտ[195]: Հայ պատմիչների տեղեկությունները կասկածի տեղ չեն թողնում, որ աղվանացիները հայերի գլխավորությամբ հակապարսկական խմբավորման կազմում, նույնպես 11 տարի շարունակ մարտնչել են պարսիկների դեմ: Այդ կռիվները, ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, տեղի են ունենում հիմնականում Մարաստանում ու նրան հարևան Ադիաբենում[196] և չեն թողնում Արտաշիրին նվաճելու Հայաստանն ու անդրկովկասյան երկրները:

Թշնամությունը Հռոմի հանդեպ ու պայքարը նրա դեմ նոր ուժգնությամբ շարունակվում է Արտաշիրի որդու՝ Շապուհ Ա-ի օրոք (241-272 թթ.), որը Սասանյան տերության հետ միասին ժառանգում է նաև հոր նվաճողական քաղաքականությունը: Նրա ռազմատենչ ցանկություններին խորթ չէր և Անդրկովկասի նվաճումը: Սկսվում են պարսկա-հռոմեական սուր կռիվներ, որոնք ավարտվում են 244 թ. կնքված հաշտության պայմանագրով, որի համաձայն հռոմեական կայսր Մարկոս Հուլիանոս Փիլիպոսը պարսիկներին է զիջում Միջագետքն ու Հայաստանը կամ, որ ավելի ճիշտ է, Հայաստանի մեծ մասը[197]:

Աղվանքը շարունակում է մնալ Հռոմի «բարեկամը»: Շապուհը դեռ զբաղված էր Հայաստանը վերջնականապես նվաճելու խնդրով և շուտով, Ագաթանգեղոսի վկայությամբ, գրավում է նաև 244 թ. պայմանագրով Հռոմին անցած մյուս մասը: «Զորաժողով լինէր, խաղայր, գնայր (Շապուհը - Հ. Ս.) ասպատակ սփռէր

[190] Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, էջ 92: Ինքը՝ Հ. Մանանդյանը գտնում է, որ այդ ժամանակամիջոցը պետք է փնտրել 228 և 252 /3 թթ. միջև (տե՛ս նույն տեղում):

[191] Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 37:

[192] Ագաթանգեղոս, էջ 18:

[193] Նույն տեղում, էջ 23 (ընդգծ. - Հ. Ս.):

[194] Նույն տեղում:

[195] Խորենացի, Բ, գլ. ՀԲ, ՀԳ:

[196] Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, էջ 92:

[197] Նույն տեղում, էջ 87:

զկողմամբք Հայաստան աշխարհին ... և զզօրսն Յունաց փախստական արարեալ, հալածական տանէին մինչև ի սահմանս Յունաց»[198]: Հռոմը չէր կարող հանդուրժել իր համար նվաստացուցիչ այդ դրությունը և, ինչպես հաղորդում է հռոմեացի պատմիչ Հուլիոս Կապիտոլինոսը, կայսր Վալերիանոսը (253-260 թթ.), անձամբ գալով Արևելք, փորձում է կասեցնել Շապուհ Ա-ի բացառիկ նվաճողական հաջողությունները: Կայսեր ու արքայից արքայի միջև 260 թ. Եդեսիայի մոտ տեղի է ունենում մի ճակատամարտ, որտեղ, սակայն, կայսրը չարաչար պարտություն է կրում, գերվում է Շապուհի կողմից և տարվում Տիզբոն: Այս հաղթանակի մասին Շապուհը նամակներ է հղում իրեն հայտնի բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև աղվանացիներին ու իբերներին: Այս քայլով արքայից արքան, հավանաբար ցանկացել է, տարած ուժն ցուցադրելով, նախազգուշացնել Աղվանքին ու Վիրքին և հակել իր կողմը: Սակայն նրանք, արհամարհելով Շապուհից եկող վտանգը, ոչ միայն չեն ընդունում նրա նամակները, այլև հռոմեական զորավարներին իրենց պատրաստակամությունն են հայտնում Վալերիանոսին գերությունից ազատելու համար օգնական զորքեր տրամադրել: «Իբերները, ալբանացիներն ու տավրոսկյութները Շապուհից չընդունեցին նամակները,- գրում է պատմիչը,- այլ իրենց կողմից գրեցին հռոմեական զորավարներին, խոստանալով Վալերիանոս կայսրին գերությունից ազատելու համար (ուղարկել - Հ. Ս) օժանդակ զորքեր»[199]: Այս փաստը ցույց է տալիս, որ Շապուհը դեռևս ազդեցություն չուներ Աղվանքում, իսկ Հռոմի ու Աղվանքի դիվանագիտական հարաբերություններն այդ շրջանում ավելի էին ամրապնդվել, որի վկայությունը վերոհիշյալ նամակների փոխանակությունն էր երկու երկրների միջև: Ամուր այդ դաշինքով ու իրենց անկախությամբ Աղվանքը համարձակորեն հրաժարվում է ընդունել անհեդ Շապուհի նամակները և, առանց հետևանքներից վախենալու, հռոմեացիներին առաջարկում է իր օգնությունը:

Սակայն նման դրությունը երկար չի պահպանվում: Աղվանացիները ևս շուտով հպատակվում են Շապուհին: Դա արդեն երևում է Նախշ-Է-Ռուստամում Քաաբե-ի-Զարդուշտ կոչվող շինության վրա նրա թողած եռալեզվյան արձանագրությունից, ուր նշված են Շապուհի հաղթանակներն ու նվաճած «Ատրպատականը, Հայաստանը, Իբերիան, Մաքելոնիան[200], Ալբանիան (մինչև) Կապկոհ (և Ալանական[201]) դռներն ընկած երկրները»[202]: Հավանական է, որ Աղվանքի ենթարկումը Պարսկաստանին տեղի է ունեցել 261 թ.՝ Վալերիանոսի՝ գերության մեջ մեռնելուց ու հայոց թագավոր Արտավազդին[203] գահընկեց անելուց

[198] Ագաթանգեղոս, էջ 35-36:
[199] СМОМПК, вып. 4, с. 175.
[200] Արձանագրության պարթևական տարբերակումª Sykn, որը, ըստ Ս. Տ. Երեմյանի, հայկական աղբյուրների Բազկան երկիրն է (տե՛ս С. Т. Еремян, Страна “Махелония”, с. 52).
[201] Առաջարկվել է նաև «Ալբանական դռներ» ընթերցումը E. Honigmann et A. Maricg, Recherches... էջ 88-90; A. Maricg, Res gestae divi Sapories, էջ 307:
[202] E. Honigmann ..., Recherches... էջ 11; A. Maricg, Res gestae ... էջ 307:
[203] Այս թագավորի ծագման, անձնավորության ու թագավորության տարիների խնդիրը երկար ժամանակ բանավեճերի նյութ է եղել: Կարծիքներ են հայտնվել, որ նա Արշակունի չէր (Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, էջ 97), որի պատճառով նրան նույնացրել են մերթ Արտավազդ Մամիկոնյանի (Հ. Ասատրյան, Քաղաքական վերաբերություններ..., էջ 245-246), մերթ Արտավազդ Մանդակունու (Ալիշան, Այրարատ, 1890, էջ 374) հետ և այլն: Նորագույն →

և սպանելուց հետո, երբ Հայաստանը հայտարարվել է Սասանյան դինաստիայի դաստակերտ (դինաստիական սեփականություն) և արքայից արքայի ժառանգական «դոմեն»[204]: Այդ ժամանակ միայն Շապուհի համար ստեղծված կլիներին նպաստավոր պայմաններ և ազատ ժամանակ՝ իր նամակները արհամարհաբար չընդունած աղվանացիներին ու մյուսներին հպատակեցնելու համար և կհասներ հաջողության: Սակայն Սասանյանների տիրապետությունը Աղվանքում դեռևս հաստատուն չէր: Դրան ժամանակավորապես վերջ է դնում Հռոմի նոր կայսր Լուկիոս Դոմիտիոս Ավրելիանոսը (270-275 թթ.): Օգտվելով Պարսկաստանում տիրող երկպառակություններից[205], նա ետ է գրավում մի շարք երկրներ, որոնց թվում և Աղվանից երկիրը: Ավրելիանոսի հաջողությունները անսահման բարձրացրել էին նրա վարկը այդ երկրների ժողովուրդների աչքում և մեծ հույսեր արթնացրել իրենց ազատագրման համար: Պատմիչ Վոպիսկոսը գրում է. «Նա (Ավրելիանոսը - Հ. Ս.) պարսիկներին, որոնք մինչ այդ ամբարտավանացել էին Վալերիանոսի կործմանման պատճառով, ցաքուցրիվ արեց, ի փախուստ դարձրեց և պարտության մատնեց: Նրան սարակինոսները ... իբերները, ալբանացիները, հայերը նաև Հնդկաստանի ժողովուրդները մեծարում էին գրեթե ինչպես աստծո»[206]: Սակայն Ավրելիանոսի հաջողությունների հետ կապված հայերի և նրանց հարևանների ազատագրման հույսերը չեն արդարանում: Կայսեր մահից և Վահրարան Բ-ի՝ պարսկական գահը բարձրանալուց հետո Սասանյանները դարձյալ վերականգնում են իրենց տիրապետությունը թե՛ Հայաստանում[207], և թե՛ Աղվանքում: Պարսկաստանի կողմից Աղվանքը վերստին գրավված լինելու հանգամանքը փաստարկվում է նրա դրամական գանձերի մեջ մ.թ. III դարի վերջերին պատկանող Սասանյան դրամների առկայությամբ: Գտածոները վերաբերվում են պարսից արքայից արքա Վահրարան (Վահրան, Վռամ) Բ-ի ժամանակներին (276-293 թթ.) և գանձերի պարունակության մեջ քանակապես զգալի գերակշռություն են կազմում (մոտ 200 հատ, մյուսների հատ ու կենտ նմուշների դիմաց[208]): Հնագիտական պեղումները լույս աշխարհ են հանել նաև Շապուհ Ա-ի ժամանակների դրամներ[209]: Միևնույն գանձարանում Սասանյան դրամների առատությունն արտացոլում է այն իրադրությունը, որում գտնվում էր Աղվանքը: Ուրեմն, այստեղ Սասանյանները հասել էին քաղաքական տիրապետության, որ իրենց դրամներն էին դրել շրջանառության մեջ:

Հետագա ամբողջ ժամանակաշրջանում Արևելքում գերիշխանության հասնելու համար Սասանյան Իրանի ու Հռոմեական կայսրության միջև փոխնիփոխ

---

← ուսումնասիրություններում ոչ միայն ցույց տրվեց նրա Արշակունի լինելը, այլև որոշվեցին նրա թագորության ստույգ տարիները (253-261 թթ.): (Տես Ս. Տ. Երեմյան, Հայաստանի քաղաքական վիճակը Արտավազդ Ե-ի ժամանակ (252/3-261), Լրաբեր հաս. գիտ., թիվ 1, էջ 13-22):

[204] Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 49:

[205] Շապուհին պարսկական գահի վրա կարճ ժամանակով փոխարինում են որդիները՝ Որմիզդ Ա-ն (272-273 թթ.), որ մինչ այդ թագավորում էր հայոց վրա և Վահրարան կամ Վահրան Ա-ն (273-276 թթ.):

[206] Известия древних писателей, т. II, с. 176.

[207] Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն Ա, Կոստանդնուպոլիս, 1913, էջ 78:

[208] К. Г. Голенко, Заметки об обращении римской монеты в Закавказье, ВДИ, 1971, N 4, с. 64; Խ. Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում, էջ 113:

[209] Дж. А.Халилов, Материальная культура..., с. 65.

հաջողությամբ մղվում են արյունահեղ պատերազմներ, որոնք ձեռքից ձեռք էին փոխանցում վերոհիշյալ երկրները և անորոշ վիճակ ստեղծում նրանց համար: Վերջապես դրանք ավարտվում են 298 թ., կողմերի միջև Մծբինում 40-ամյա ժամկետով հաշտության պայմանագրի կնքմամբ:

Մծբինի պայմանագիրը[210] վճռական դեր է ունենում: Մասնավորապես Մեծ Հայքն ու Իբերիան ազատվում են Պարսկաստանի ենթակայությունից և վերականգնում իրենց թագավորությունները: Հայաստանն անցնում է Հռոմի հովանավորության տակ, ետ ստանում ժամանակին Սասանյանների խլած Անգեղ տուն, Ծոփք, Աղձնիք, Կորդուք և Ծավդեք երկրները, վերամիավորվում և վերամիավորված Հայաստանի թագավոր է հաստատվում 287 թ. հռոմեական, իսկ 293 թ. էլ պարսկական մասում թագավորող Տրդատ Գ-ն[211]: Իբերիայի հարցում որոշվում է, որ նրա թագավորը իր բարձրագույն իշխանության նշանները պետք է ստանա հռոմեացիներից[212]:

Մծբինի պայմանագրում Աղվանքը չի հիշատակվում, որը մղում է այնպիսի հավանական եզրակացության, որ անդրկովկասյան այս երկիրը, հակառակ հանգամանքների, հեռու է մնացել պարսկա-հռոմեական պատերազմներից և այդպիսով տեղ չի գտել պայմանագրի որոշումներում: Պայմանավորվող կողմերը շոշափել են միայն պատերազմի մասնակիցների՝ հռոմեացիների դաշնակից Հայաստանի ու, դատելով իբերիայի մասին ընդունած որոշումից, Պարսկաստանի կողմից հանդես եկող Իբերիայի հարցերը: Պարսկա-հռոմեական վերջին պատերազմներում Աղվանքը պահպանել է չեզոքություն, չնայած չի բացառվում ընթացքում պարսկական ազդեցության գոյությունն այնտեղ:

Մծբինի պայմանագիրը, այսպիսով, ոչնչով չի փոխում Աղվանքի քաղաքական դեմքն ու աշխարհագրական քարտեզը: Աղվանքը շարունակում է պարփակված մնալ իր պատմական սահմաններում:

Պայմանագրի շնորհիվ Սասանյաններն ամբողջ 40 տարի ձեռնպահ են մնում անդրկովկասյան երկրների ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական կյանքին միջամտելուց: Մեծ Հայքի, Աղվանքի ու Վիրքի համար նշված տարիները խաղաղության ժամանակաշրջան էին, լի սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող նորորակ տեղաշարժերով: Որպես դրանց բնականոն հետևանք, Աղվանքում վրա է հասնում ստրկատիրական կարգերի ճգնաժամը: Առաջանում են նոր հասարակական հարաբերություններ, որոնք երկրի տնտեսական զարգացումը տանում են ֆեոդալականացման ուղիով:

---

[210] Петр Патриций (Византийские историки, перевод с греческого Спиридона Дестуниса, СПб, 1861), с. 304.

[211] Հայ ժողովրդի պատմություն, h. 2, էջ 62-65:

[212] Петр Патриций, с. 304.

## ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

## ԱՂՎԱՆՔԸ ՎԱՂ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
## ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ: ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՂՎԱՆՔՈՒՄ

### Ա. Ֆեոդալական հարաբերությունների ձևավորումը

Աղվանքում ֆեոդալական հարաբերությունների ձևավորման ու հիմնական արտադրաեղանակ դառնալու, հասարակական կառուցվածքի ու առանձին սոցիալական խավերի իրավական դրության հետազոտությունը բուն տեղական աղվանական գրավոր նյութի բացակայության պայմաններում իրականացվում է բացառապես հայկական աղբյուրների տվյալներով: Սակայն դրանք շատ սուղ են և Աղվանքի ֆեոդալական հասարակարգի նկարագրի մասին հնարավոր է պատկերացում կազմել միայն ընդհանուր գծերով: Շատ մանրամասնություններ՝ կապված սոցիալական խավերի, նրանց փոխհարաբերությունների, տեղական անվանումների, ըմբռնումների ու գործածության երանգների հետ, գրեթե մնում են անհայտ:

Աղվանքի ֆեոդալական հարաբերություններում առկա բազում մանրամասների ու անդրկովկասյան մյուս երկրների նկատմամբ այդ հասարակարգի առանձնահատկությունների բացը դեռևս չեն կարողացել լրացնել նաև հնագիտական պեղումները:

Աղվանքի ֆեոդալական հասարակարգի հետազոտությանը խոչընդոտում է նաև այն հանգամանքը, որ Աղվանքը իր՝ աշխարհագրորեն միմյանցից խիստ կտրտված տնտեսական շրջաններով ու սոցիալական զարգացման տարբեր մակարդակի վրա գտնվող և այդպես էլ մեկ ընդհանրության չհասած ցեղերի առկայության հետևանքով տնտեսական տարբեր կացութաձևերի խառնարան էր և սոցիալական խավերը, հասարակության կառուցվածքը, սեփականության ձևերն ու հասարակական-սոցիալական այլ կատեգորիաներ արտահայտելու համար չէր կարող ունենալ միանշանակ տերմիններ: Ուստի Աղվանքի ֆեոդալական հասարակարգի հետազոտությունը զգալի դժվարություն է ներկայացնում: Ասենք նաև, որ հիմնահարցի լուծման խնդիր այստեղ չի էլ դրվում: Կանգ չառնելով սոցիալական տերմինների բացատրության վրա (մանավանդ, երբ դրանք վաղուց ստացել են իրենց մեկնաբանությունը մեր պատմագրության մեջ) և չխորանալով սոցիալական հարաբերությունների որակական կողմի քննության մեջ, պարզապես, ցույց է տրվում, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Աղվանքում ևս ծագել և գործում էին ֆեոդալական հարաբերություններ, իրենց բնորոշ ավատատիրական հողատիրությամբ: Որպես խնդրի իրականացման ելակետ նկատի են առնվել Աղվանքի այն շրջանները, որոնք, տնտեսապես ավելի զարգացած լինելով, հիմնականում բնորոշում են երկրի տնտեսական կարգը[1]: Աղվանքում այդպիսի շրջաններ էին Ավթարանի ու Ալազանի հովիտները: Բնակլիմայական բարենպաստ

[1] А. П. Новосельцев, Генезис феодализма в странах Закавказья, М., 1980, с. 78.

պայմանները, ջրառատ գետերով լավ ոռոգվող[2] դաշտերը, փարթամ բուսականությունն ու հարուստ ընդերքը տվյալ հովիտները դարձնում էին Աղվանքի տնտեսապես զարգացած այն առաջատար շրջանները, որոնցով հնարավոր է դատել նրա հասարակական-տնտեսական կարգի մասին: Հարցի լուծմանը որոշ դյուրություն է հաղորդում ինչպես սոցիալական շատ տերմինների պահլավական ծագումը (նախարար, ազատ, ռամիկ և այլն) և հիմնականում իրենց նշանակությամբ գործածությունը Մեծ Հայքում, Աղվանքում և Վիրքում, այնպես էլ նշված երկրների ֆեոդալական հասարակարգերի նմանությունը, որի մասին խոսում են հայկական աղբյուրները[3]: Խնդրին մոտենալով այս տեսանկյունով և հիմք ընդունելով Աղվանքի մերձավոր հարևանների՝ ֆեոդալական հասարակարգերի ծագման նախադրյալները, կարելի է ենթադրել, որ Աղվանքում ևս նախորդ տնտեսական հասարակագի նկատմամբ գերազանցության հասնելու կարևոր գործոնները լուրջ տեղաշարժերն էին, որոնք տեղի էին ունեցել մինչ այդ տիրող արտադրական հարաբերություններում և պայմանավորել հին կարգերի ճգնաժամն ու նորի հաղթանակը: Աղվանքի տարածքում կատարված հնագիտական պեղումներն ընդգծում են բարձր մակարդակ, որին հասել էր Աղվանից հասարակարգը տնտեսական զարգացման ընթացքում: Պեղումները լույս աշխարհ են հանել գյուղատնտեսական տարբեր մթերքների մնացորդներ, բազմաթիվ աշխատանքային գործիքներ ու տնային գործածության իրեր, որոնք աչքի են ընկնում իրենց կատարելությամբ: Դրանք խոսում են այն մասին, որ այդ ժամանակներում զարգացման նոր աստիճանի էին հասել հողագործությունն ու անասնապահությունը, մետաղամշակությունն ու արհեստագործությունն ընդհանրապես: Հայտնաբերված գյուղատնտեսական այնպիսի գործիքներ, ինչպիսիք էին գերանդին, մանգաղը, փոցխը և այլն ցույց են տալիս, որ երկրագործական աշխատանքներում երկաթյա գործիքների կիրառումը հաստատուն տեղ է գտել, որի շնորհիվ էլ կատարելագործվել էր հողի մշակումը և աճել բերքատվությունը: Այսպիսի պայմաններում, բնական է, գնալով բարձրանում է հողի արժեքը: Այն դառնում է արտադրության հիմնական միջոց: Վերջին հանգամանքը պայմանավորում էր, որ երկրի հասարակական կյանքում ձևավորվեն այնպիսի հարաբերություններ, որոնցում վճռական գործոն է դառնալու արտադրության հիմնական միջոցի նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Երկրի սոցիալ-տնտեսական կյանքում ձևավորվում են նոր՝ ֆեոդալական հարաբերություններ, որոնք կառուցվում են հողի նկատմամբ ունեցած իրավունքի հիմքի վրա:

Հայտնի է ֆեոդալիզմի ծագման երկու ուղի՝ գյուղական համայնքի զարգացման, որի ժամանակ ազատ համայնականը վերածվում էր ֆեոդալականապես կախյալ գյուղացու և ստրուկների՝ ուղղակի ֆեոդալականապես կախյալ գյուղացու

---

[2] Страбон, XI, IV, 3.

[3] Եղիշեն, օրինակ, գրում է, որ Հայաստանում ռազմագնդերը կազմավորվում էին ազատներից, ազատորդիներից ու ոստանիկ մարդկանցից, ավելացնելով, որ Վիրքում և Աղվանքում ևս բանակներն ստեղծվում էին նման ձևով (Եղիշե, էջ10): Նշված երկրների հասարակարգերի նմանություն է դիտվում նաև Հազկերտին տված Վարդանի պատասխանում. «Բազումք են յայս երից աշխարհաց յազատորերոյ, որք են աւագ քան զիս և գահու և աւուրք, և շատ են, որ ի խոնարհ են» (Փարպեցի, Բ, գլ. ԻԶ):

փոխարկման: Ելնելով ֆեոդալիզմի ծագման այս ընդհանուր դրույթից, կարելի է ենթադրել, որ Աղվանքի տնտեսապես զարգացած շրջաններում նոր տնտեսակարգի մուտքը տեղի է ունեցել հենց այդպիսի ավանդական ուղիներով: Բացառված չէ, որ նրանց հետ մեկտեղ ֆեոդալականապես կախյալ գյուղացու փոխարկման գործընթացը տեղի է ունեցել նաև այլ, միջանկյալ ուղիներով:

Նոր տնտեսաձևի ձևավորումն Աղվանքում տեղի է ունենում IV դարից: Այդպիսի եզրակացության է հանգեցնում Աղվանից Ուռնայր թագավորի ճառը՝ ուղղված իր զինվորներին Ջիրավի ճակատամարտից առաջ: «Յանձն լիցի ձեզ,- դիմում է նա իր զինվորներին,- յիշելով ի ժամանակին իբրև ձերբակալ արասցուք զզօրս Յունաց, զբազումս ի նոցանէն ապրեցուսջիք, զի կալեալս կապեալս տարցուք յաղթանս[4] ի գործ կաւագործութեան, գաղատս որմաշէնս պիտոյից մերոց քաղաքաց ապարանից և այլոց պիտոյից»[5]: Ինչպես նկատվել է մեր պատմագրության մեջ, Ուռնայրի ճառի մեջ խոսքը գերիներին թագավորական ու նախարարական տիրույթներում բնակեցնելու և նրանց աշխատանքային ուժն այնտեղ օգտագործելու մասին է[6]: Նշված ժամանակաշրջանի Աղվանքում ֆեոդալական հարաբերությունների առկայություն են մատնանշում ուրիշ հայ պատմիչներ ևս, որոնք, երկրի հասարակական կյանքի սոցիալական կառուցվածքը, սոցիալական տարբեր խավերն ու սեփականության զանազան տեսակները արտահայտելու համար օգտագործում են «թագավոր», «նախարար», «ազատ», «շինական», «տանուտեր», «երդ», «ազգ», «ազգապէտ», «եկն-եկվոր», «կալվածք», «վիճակ», «սեպհական» և ֆեոդալական հարաբերություններին բնորոշ նման շատ այլ տերմիններ:

Այսպիսով, ուսումնասիրվող շրջանում Աղվանքը թևակոխել էր իր զարգացման ֆեոդալական շրջանը՝ աստիճանաբար ձեռք բերելով այդ տնտեսակարգին բնորոշ գծեր:

Ինչպես հատուկ է բոլոր ֆեոդալական հասարակարգերին, Աղվանքում ևս հասարակությունը բաժանված էր երկու հիմնական դասակարգերի՝ ֆեոդալների, որոնք ընդհանուր առմամբ կազմում էին «ազատների» դասը և ֆեոդալականապես կախյալ ու ազատ գյուղացիների, որոնց սոցիալական կարգավիճակը արտահայտվում էր «անազատ», «ռամիկ» կամ «շինական» տերմիններով: Նույն տերմինները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր դաս և դասակարգ իր հերթին բաժանվում էր ենթախմբերի: Վերին կամ «ազատների» դասին պատկանում էին թագավորը, նախարարները, բարձր հոգևորականությունը և ազնվականության մյուս ներկայացուցիչները: Նրանք ունեին մեծ արտոնություններ: Ստորին դասի մեջ մտնում էին, բացի նշված գյուղացիներից, նաև քաղաքացիները՝ առևտրականներն ու արհեստավորները: Հատկանշական է, որ դասերն ու դասակարգերը հասարակության մեջ իրենց զբաղեցրած դիրքի համապատասխան էլ ունեին իրավունքներ ու պարտավորություններ:

Աղվանքի ֆեոդալական հասարակությանը ևս հատուկ էր դասային աստիճանակարգությունը՝ կրտսերի նվիրապետական կախվածությունը ավագից:

[4] Ստ. Մալխասյանը, ելնելով ձեռագրերից մեկի տարընթերցումից, կարդում է «յԱղուանս» և դա ճիշտ է (տե՛ս Բուզանդ, Պատմություն Հայոց, էջ 236):

[5] Բուզանդ, Ծ, գլ. Դ:

[6] А. П. Новосельцев, Генезис феодализма..., с. 181.

Ֆեոդալական նվիրապետության ամենաբարձր աստիճանի վրա Աղվանքում նույնպես կանգնած էր թագավորը, իսկ թագավորության վերացումից հետո՝ մարզպանը:

Աղվանքի հասարակական ավատական սանդուղքի երկրորդ աստիճանի վրա թագավորից հետո նախարարներն էին, որոնք, ենթադրվում է[7] դուրս էին եկել անտիկ շրջանի աղբյուրներում հիշատակվող «հեգեմոնների» միջավայրից: Նախարարների դասը ևս միատարր չէր: Բաժանման հիմքում ընկած էր ավագությունը «և գահու և աւուրբք», որն էլ պայմանավորել է նրանց մեջ կրտսերի նվիրապետական կախվածության սկզբունքը ավագից:

Նախարարները բացի այն, որ անհրաժեշտության դեպքում թագավորի կամ իշխանի կանչով ներկայանում էին իրենց զորքերով, այսինքն՝ կատարում էին վասալական պարտավորություններ, արքունիքում վարում էին նաև գործակալական պաշտոններ և նստում մայրաքաղաքում: Այլ խոսքով, նրանք իրականացնում էին երկրի կառավարումը, որի հիմքը գործակալական համակարգն էր: Դրանցից Աղվանքի պետական-կառավարման համակարգում աղբյուրները հիշատակում են հազարապետության գործակալությունը: Ըստ հիշատակությունների, իրենց համար ծանր օրերին օգնության խնդրանքով Հայաստան է գալիս «հազարապետն Աղուանից սուրբ եպիսկոպոսաւն աշխարհին»[8] կամ Աղվենի եկեղեցական ժողովին մասնակցել և ընդունած որոշումն իր մատանիով կնքել-հաստատել է Աղվանից Միրհորիկ անունով հազարապետը[9]: Հազարապեհի պարտականությունն էր պետական շինարարությունը և հարկերի սահմանումը: Նրան էին ենթարկվում քաղաքային ու գյուղական համայնքները: Աղվանից թագավորության անկումից հետո այդ պարտականությունն անցնում է Սասանյան Իրանի արքունիքում գործող գարիկպետին:

Դժվար չէ ենթադրել, որ Աղվանքում ևս «մեծի դատավորութեան» գործակալությունը գտնվել է երկրի հոգևոր առաջնորդի ձեռքում: Թե ուրիշ ինչ գործակալություններ են եղել Աղվանքում, հայտնի չէ: Աղբյուրները լռում են: Բայց ելնելով հիշյալ գործակալությունների գոյության փաստից, կարելի է ենթադրել, որ այստեղ ևս թագավորները երկիրը կառավարել են այն նույն գործկալությունների միջոցով, ինչպես և Հայաստանում՝ Արշակունիների ժամանակաշրջանում:

Քաղաքական իշխանության նմանվող նվիրապետական համակարգ է ունեցել նաև հոգևորականությունը:

Աղվանից երկրի բանակը նույնպես ծառայում էր թագավորին և ենթակա էր նրան: Բանակը կազմավորվում էր հիմնականում ազատներից, նրանց որդիներից ու ոստանիկներից: Բանակների կազմման սկզբունքը երևում է Եղիշեի մի հաղորդումից, ըստ որի Հազկերտ Բ-ի պահանջով Մեծ Հայքը «գունդ կազմէր ի Հայոց Մեծաց զազատ և զազատորդի և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ, ըստ նմին օրինակի ի Վրաց և յԱղուանից»[10]: Պատերազմների ժամանակ այն գլխավորում էր թագավորը, բայց և ուներ իր գերագույն հրամանատարը՝

---

[7] Նույն տեղում, էջ 134, 163:

[8] Եղիշե, էջ 70: Կաղանկատվացի, Բ, գլ. Բ:

[9] Կաղանկատվացի, Ա, գլ. ԻԶ: Կանոնագիրք Հայոց, հ. Բ, Աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1971, էջ 100:

[10] Եղիշե, էջ 10:

սպարապետը: Բանակը բաղկացած էր ինչպես ազատներից հավաքագրվող հեծելազորից, այնպես էլ ստորին դասերից համալրվող հետևակից: Ելնելով նրանից, որ հայոց բանակում գործում էր նաև ռամիկ հեծյալներից բաղկացած «ռամիկ այրուձին»[11], կարելի է ենթադրել նմանօրինակ հեծելազորի գոյություն նաև Աղվանից բանակում: Դժվար է որևէ բան ասել նրա թվական կազմի մասին, սակայն մի բան պարզ է, որ խաղաղ ժամանակ պահվող զորամասերը պատերազմի դեպքում ավելանում էին ինչպես մյուս նախարարների զորքերով, այնպես էլ աշխարհազորայիններով և բաժանվում էին առանձին զորատեսակների: Զորքի զինվածությունը չէր սահմանափակվում միայն նիզակով ու սուսերով: Նրանց ռազմական լրիվ հանդերձանքը կազմում էին ժամանակի բոլոր տեսակի զենքերը՝ նետ ու աղեղը, սուրը, կարճ սուսերը, նիզակը, վահանը և այլն:

Աղվանքում (և ո՛չ միայն Աղվանքում) հողի գերագույն տերը համարվում էր թագավորը, բայց ֆեոդալականացման գործընթացի խորացման համեմատ, հողը տրոհվում էր առանձին ֆեոդալ նախարարների միջև՝ դառնալով նրանց սեփականությունը: Սակայն թագավորը մնում էր երկրի ամենամեծ հողատերը: Հողատերեր էին նաև թագավորական ընտանիքի անդամները: Ցավոք, աղբյուրներում նյութերի պակասության պատճառով առայժմ դժվար է խոսել ընտանեկան կամ տոհմական հողատիրությունից անհատական, ընտանիքի առանձին անդամներին հողի անցման գործընթացի և այդպիսի հողատիրության էության մասին: Բայց նման հողատիրության գոյության փաստեր կան ինչպես թագավորական ընտանիքի, այնպես էլ խոշոր նախարարական տների անդամների համար, որոնք սկսում են հանդես գալ որպես առանձին հողատեր-ֆեոդալներ: Ինչպես սրանք, այնպես էլ խոշոր ֆեոդալ-նախարարները հողը տիրում էին ժառանգական-սեփականատիրական իրավունքով, մի կարևոր հանգամանք, որ նշանակում է, թե Աղվանքում ևս գործում էր հողատիրության «հայրենական» ձևը: Հողատիրության այդ ձևի առկայության լավագույն օրինակ է Աղվանից թագավոր Վաչեի վարքագիծը: Թողնելով թագավորությունը, նա «հաճեցաւ միայն զսեպհականն առնուլ բաժին իւր, զոր ի հօրէն էր առեալ հազար երդ, առ զայն ի (Պերոզ - Հ. Ս.) թագաւորէն և նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ»[12]: Այս վկայակոչումը ոչ միայն ցույց է տալիս «հայրենական» հողատիրության գոյությունը Աղվանքում և նրա ժառանգական բնույթը, այլև մատնանշում է, որ ժառանգական սեփականություն են համարվել նաև տվյալ հողային տարածքի վրա տեղավորված բնակիչները, երդերը կամ ծխերը: Ժառանգական սեփականություն էին նաև նույն տարածքում գտնվող լճերը, գետերը, արոտավայրերը, անտառները: Պետք է ենթադրել, որ Աղվանքի ավատատիրական համակարգում գործում էր հողատիրության մյուս ձևը ևս՝ «պարգևականը»:

Ֆեոդալական հասարակարգի ժամանակ խոշոր ֆեոդալ-հողատեր էր նաև եկեղեցին:

VII դարի կեսերից արաբները սկսում են իրենց նվաճումները, իսկ VIII դարի սկզբներին արդեն հաստատվում Անդրկովկասում: Արաբների տիրապետության հաստատումը խիստ բացասաբար է անդրադառնում հատկապես ֆեոդալական

---

[11] Փարպեցի, Գ, գլ. ՀԸ:

[12] Կաղանկատուացի, Ա, գլ. Ժ:

տնտեսության վրա: Տեղի են ունենում որակական փոփոխություններ: Տնտեսական կյանքում ի հայտ է գալիս մի նոր երևույթ՝ կոմենդացիայի ինստիտուտ, որի պայմաններում տնտեսապես թույլ և սակավազոր գյուղացին ձգտում էր ձեռք բերել որևէ զորեղ հովանավորի աջակցությունը, որը, սակայն, ժամանակի ընթացքում փոխարինվում էր կախվածությամբ և ենթարկվածությամբ: Հովանավորություն ստանալու այս ձևը տարածվում է ոչ միայն գյուղացիների, այլև ավագանու շրջանում:

Ֆեոդալական Աղվանքի հասարակարգի հակադիր կողմում էին բոլոր շահագործվող խավերը՝ ֆեոդալականապես կախյալ ու ազատ գյուղացիները, արհեստավորները, մանր առևտրականները, քաղաքի աշխատավորությունն ու նրանք, ովքեր, ինչպես ասել ենք, ընդհանուր անունով կոչվում էին «ռամիկներ»: Սրանք էլ կազմում էին երկրի հիմնական հարկատու դասը:

Աղվանից աշխարհում մյուս դասը արհեստավորությունն էր: Նրանք հիմնականում ապրում էին քաղաքներում, կազմում քաղաքային բնակչության ավելի ստորին խավը ու իրենց գոյության միակ միջոցը գտնում էին զանազան արհեստներ բանեցնելով: Երկրի հարուստ ընդերքն ու բնական պայմանները նպաստավոր նախադրյալներ էին ստեղծում տարբեր տեսակի արհեստների զարգացման համար: Զիրավի ճակատամարտից առաջ Ուռնայր Աղվանից թագավորի զգուշացումը զինվորներին ձերբակալվելիք հակառակորդի կենդանի ուժին ողջ թողնելու և տանելով իրենց քաղաքներում որպես որմնադիրներ, կավագործներ և այլն աշխատացնելու վերաբերյալ, խոսում է նման արհեստների գոյության և դրանք քաղաքներում կենտրոնացված լինելու մասին: Իսկ Աղվանքի տարածքում կատարված հնագիտական պեղումների ժամանակ գտնված նյութերը, նշված արհեստների գոյությունը ուսումնասիրվող երկրում ապացուցելով հանդերձ, մատնանշում են նաև ուրիշ՝ մետաղագործության, փայտամշակության, ապակեգործության, մետաքսագործության ու սրանցից բխող այլ արհեստների առկայություն: Լայն զարգացում է ստանում նաև տեխնիկական կուլտուրաների մշակումը: Բանեցնելով զանազան արհեստներ, արհեստավորությունը, այնուամենայնիվ, շարունակում էր կապված մնալ հողին և զբաղվել գյուղատնտեսությամբ:

Գյուղատնտեսության և արհեստագործության զարգացումը խթանում է նաև առևտրին: Եվ, իրոք, աշխույժ առք ու վաճառքի մասին վկայությունների շատ ենք հանդիպում աղբյուրներում: Զարգացած էր ոչ միայն ներքին, այլև տարանցիկ առևտուրը: Ծուկա վաճառահանման էին դուրս բերվում հիմնականում տեղական արհեստավորության արտադրության արտադրության արտադրանքներն ու գյուղատնտեսական մթերքները: Արտահանվում էին քարախունկ, տորոն, ձիեր, ջորիներ[13]: Աղվանքը ցամաքային ճանապարհով կապված էր Դվինի, Տփղիսի, ծովային ճանապարհով՝ Կասպից ծովի, իսկ սրա միջոցով էլ՝ Իրանի, Հնդկաստանի ու արևելյան այլ երկրների հետ:[14]

Առևտրի ու արհեստների կենտրոններ էին քաղաքները: Զարգանում էր նաև երկրի մայրաքաղաք Կապաղակը՝ ձեռք բերելով ֆեոդալական քաղաքի տեսք:

[13] СМОМПК, вып. 29, с. 7, 25; вып. 38, с. 14, 97.
[14] СМОМПК, вып. 29, с. 9, 25, 31, 33; вып. с. 17, 97, 101.

Աղվանից մարզպանության կազմավորումից հետո մայրախաղաքի իր դերը Կապաղակը զիջում է Պարտավին, որն էլ սկսած 462 թվականից դառնում է Աղվանից մարզպանության կենտրոնը, իսկ 789 թ.՝ Արմինիայի ոստիկանի գլխավոր նստավայրը Դվինից հետո[15]: Կաղանկատվացին այն անվանում է «զմեծն Պարտաւ»[16], իսկ արաբ հեղինակները հիացմունք ու զարմանք են հայտնում, երբ որևէ առիթով խոսում են այդ ճոխ ու հարուստ քաղաքի մասին[17]: Քաղաքային բնակչությունը միատարր չէր ո՛չ էթնիկական, ո՛չ էլ սոցիալական առումով: Բնակչության գերակշռող մասը կազմում էր արհեստավորությունը: Սրանց կողքին կային նաև մեծ թվով հողագործներ և օրավարձով աշխատողներ: Նրանք բոլորը միասին հայտնի էին մեկ ընդհանուր «քաղաքացի» անունով: Աղբյուրները Աղվանքում, Կապաղակից բացի, այլ քաղաքների մասին չեն խոսում, ուստի դժվար է որևէ բան ասել դրանց ու քաղաքային մարմինների վարչական գործառույթների մասին:

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Աղվանքում գործում էին ֆեոդալական հարաբերությունները՝ ավատատիրական խոշոր հողատիրությամբ, պաշտոնակարգության համակարգով և սոցիալական տարբեր դիրքերի վրա գտնվող խավերով:

Սակայն անհրաժեշտ է նաև նշել, որ արտադրության ֆեոդալական եղանակը միակ տիրապետող տնտեսաձևը չէր ողջ Աղվանքում: Բազմակացութաձևությունը ֆեոդալական Աղվանքի հասարակական-տնտեսական առանձնահատկությունն էր: Ինչպես արդեն ասել ենք, աշխարհագրորեն միմյանցից կտրված, տնտեսական ու մշակութային զարգացմամբ իրարից զանազանվող շրջաններում գործում էին այլազան հարաբերություններ: Տնտեսապես չափազանց պարզունակ և իրենց զբաղմունքին հարիր կյանքով էին ապրում քոչվոր անասնապահ ցեղերը՝ ալպիական մարգագետիններով հարուստ Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայի հարավային փեշերին ու մերձկասպյան հարթավայրերում: Է՛լ ավելի պարզունակ կյանքով էին ապրում ձկնորսությամբ զբաղվող ցեղերը Կասպից ծովի մերձափնյա շրջաններում, իսկ Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայի կիրճերում ու բարձրադիր անտառային գոտիներում բնակվող ցեղերն իրենց կենցաղով ու տնտեսական հարաբերություններով զիջում էին նույնիսկ վերջիններիս:

IV-VII դարերում Աղվանքում գոյություն ունեին նաև ստրուկի աշխատանքի վրա հիմնված տնտեսություններ:

---

[15] Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 71, 263:

[16] Կաղանկատվացի, Ա, Գլ. Ե:

[17] СМОМПК, вып. 29, с. 7, 17, 19; вып. 38, с. 7.

## Բ. Արշակունյաց հարստությունն Աղվանքում

IV դարում ֆեոդալական հարաբերությունների ձևավորմանը զուգընթաց Աղվանքի քաղաքական կյանքում տեղի էին ունենում կազմավորվող հասարակարգին համապատասխան փոփոխություններ, որոնց հետևանքով տեղի նախկին (հավանական է տեղական) թագավորական տանը փոխարինելու է գալիս նոր հարստություն, որը, դատելով Մ. Կաղանկատվացու հաղորդումից, Արշակունիների մի ճյուղն էր Աղվանքում: Կաղանկատվացին գրում է. «Եւ թիւ անուանցն յԱռանայ մինչև զքաջն Վաչագան, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց, չէ յայտ. և զոտացայն ստոյգն, թէ յորմէ տոհմէ են, չունիմ ասել: Եւ որք ըստ կարգի կացին թագաւորք Աղուանից տասն. անուանք են այսոքիկ. Վաչագան Քաջ, Վաչէ, Ուռնայր, Յաւչագան, Մերհաւան, Սատոյ, Ասայ, Եսվաղէն, Վաչէ, ապա բարեպաշտն Վաչագան՝ արքայն Աղուանից[18]:

Պատմագիտության մեջ այս հարստությունը դիտվել է որպես Մասքթաց Արշակունիների մի ճյուղը և նրա հիմնադիր է համարվել, այսպես կոչված, «Մասքթաց թագավոր» Սանեսանը[19]: Մասքթաց երկիրը նույնացնելով Աղվանից աշխարհի հետ՝ նրա այդ կարծեցյալ տիրակալը հայտարարվել է Աղվանից թագավոր[20], իսկ ուռնձգությունները հայոց գահի նկատմամբ որակվել են որպես պայքար իբր նախօրոք բռնագրավված «ալբանական» մարզեր Ուտիքի ու Արցախի ետգրավման, ողջ Աղվանքի միավորման և Հայաստանը իրեն ենթարկելու համար[21]: Միաժամանակ, ելնելով սույն մտացածին եզրակացությունից և շահարկելով Կաղանկատվացու հաղորդումը, թե «Իսկ ի վախճանելն Տրդատայ Սանատրուկ ոմն թագաւորեաց Աղուանից ի Փայտակարան քաղաքի և եկաց ընդդիմակաց Հայոց»[22], Փայտակարանը նույնպես համարվել է Աղվանքի մարզերից մեկը[23]:

Հենց սկզբից ասենք, որ Սանեսանի՝ Աղվանից թագավոր լինելու միտքն ինքնին արդեն ճիշտ չէ այն պատճառով, որ նա հորջորջվում է «Մասքթաց երկրի» թագավոր, երկիր, որն ըստ VII դարի հայոց «Աշխարհացույցի» ուներ իր սեփական աշխարհագրական սահմանները և Աղվանից աշխարհից առանձին, ինքնուրույն երկիր էր: Դա հաստատում է նաև Բուզանդի հետևյալ տեղեկությունը. (Սանեսանը - Հ. Ս.) եկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր»[24]: Ի դեպ, հենց այս հաղորդումն է, որ ուսումնասիրողներին թույլ է տվել կարծելու, թե Կուրը Սանեսանի հարավային սահմանն էր, ուրեմն և Սանեսանի երկիրն (Մասքութքը) ու Աղվանքը նույնական են և, հետևաբար, Սանեսանն էլ Աղվանքի թագավորն էր: Մինչդեռ

---

[18] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԵ:

[19] С. Т. Еремян, Политическая история Албании III-VIIвв., с. 310-311.

[20] M. Brosset, Extraits de histoire des Aghovans en armenien par Moise Caghancatovatsi (Additions et eclaitcissments a l'Histoire de la George, SPb, 1851). Բ. Ուլուբաբյան, Դրվագներ..., էջ 147: Բ. Հարությունյան, Մազքթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան, Լրաբեր հաս. գիտ., 1981, թիվ 6, էջ 74: Ը. А. Акопян, Албания-Алуанк..., с. 108-109, 182.

[21] Н. Гулиевм, Торговые связи Кавказской Албании в раннем средневековье, Баку, 1972, с. 9-10; Т. Мамедов, Кавказская Албания в IV-VIIвв, с. 13; Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 98.

[22] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԲ:

[23] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 97-100.

[24] Բուզանդ, Գ, գլ. Է:

Բուզանդի տեղեկությունը ավելի շուտ ցույց է տալիս Սանեսանի գործողությունների հաջորդականությունը. Այսինքն՝ Սանեսանը նախ անցել է Մասքթաց երկրի սահմանը՝ «ըստ իր սահմանն», ապա նոր միայն Կուր գետը՝ «ընդ գետն մեծ ընդ Կուր»: Ասվածի հետևությամբ Բուզանդի հաղորդումը պետք է հասկանալ այնպես, թե Սանեսանը «եկավ անցավ իր սահմանից այն կողմ (ապա և մեծ Կուր գետը)» և սփռվեց, տարածվեց Հայաստանում[25]: Բուզանդն ունի մի ուրիշ հաղորդում ևս, որ նույնպես սխալ հետևությունների տեղիք է տալիս: Նրանում խոսվում է այն մասին, որ Մանուկ Գրիգորիսը կաթողիկոս է նշանակվում Վրաց և Աղվանից երկրների վրա, և սրան որպես բացատրություն ավելացվում, «այսինքն՝ Մասքթաց սահմանների» վրա: «Եհաս (Գրիգորիսը - Հ. Ս.) յեպիսկոպոսութեան աշխարհին Վրաց և Աղուանից, այս ինքն սահմանացն Մասքթաց»[26]: Հաղորդման մեջ վերջին կապակցությունը, որ ուրիշ ոչ մի տեղ չի հիշատակվում, անկասկած, հետագայի հավելագրում է իբրև բացատրություն, Աղվանից և Մասքթաց աշխարհների նույնացման սխալ կարծիքի արգասիք: Այնպես որ Բուզանդի հաղորդումները չեն կարող հիմք լինել Աղվանից և Մասքթաց աշխարհների նույնացման և դրա հիման վրա Սանեսանին Աղվանից թագավոր ճանաչելու համար: Ասվածը հաստատվում է նաև նույն դարի 30-40-ական թթ. Սանեսանի մասնակցությամբ Հայաստանում և Արևելյան Անդրկովկասում տեղի ունեցող պատմական իրադարձությունների ընթացքի վերլուծությամբ:

Սանեսանը պատմության ասպարեզում երևում է IV դարի 30-ական թթ. հայկական թագավորական իշխանության ու կենտրոնացված պետականության դեմ ուղղված երկպառակտչական կռիվներում, որ հաճախ տեղի էին ունենում Ծապուհ Բ-ի սադրանքով և աջակցությամբ: Նրա մասին Բուզանդը խոսում է որպես Մանուկ Գրիգորիսի սպանության կազմակերպչի, Հայաստանի վրա հյուսիսային վաչկատուն ցեղերի արշավանքի նախաձեռնողի ու ղեկավարի և նրանց հորջորջում «մասքթաց թագավոր» տիտղոսով[27]:

Նույն ժամանակաշրջանում (330-338 թթ.) հայոց վրա հյուսիսայինների մի այդպիսի հարձակման, նույն հայ զորավարների գլխավորությամբ նրանց դեմ երկու՝ Վաղարշապատում և Օշականի մոտ գտնվող առապար վայրում ճակատամարտ տալու, նրանց գլխովին ջախջախելու մասին է պատմում և Խորենացին, որը, սակայն, հյուսիսայինների գլխավոր զորահրամանատարին անվանում է Սանատրուկ[28]: Հիշյալ իրադարձություններին առնչվող երկու հայ պատմիչների ակնառու նման հաղորդումները միմյանցից տարբերվում են լոկ նրանով, որ գլխավոր գործող անձը մեկի մոտ հանդես է գալիս Սանեսան, իսկ մյուսի մոտ՝ Սանատրուկ անունով: Հետևաբար, ինչպես բխում է այդ հաղորդումներից, Բուզանդի Սանեսանն ու Խորենացու Սանատրուկը միևնույն անձնավորությունն են, մի հանգամանք, որ, բացառությամբ առանձին դեպքերի[29], հիմնականում

[25] Հմմտ. «Եկավ (Սանեսանը - Հ. Ս.) իր սահմաններից դենը, անցավ մեծ Կուր գետը (Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, էջ 148):

[26] Բուզանդ, Գ, գլ. Ե:

[27] Նույն տեղում, գլ. Զ:

[28] Խորենացի, Գ, գլ. Թ:

[29] Բ. Հարությունյան, Մասքթաց Սանեսան թագավորի արշավանքը: Նրան է հետևում և Ա. Հակոբյանը: Տե՛ս նրա Албания-Алуанк..., с. 108.

ընդունված է ուսումնասիրողների կողմից: Նրանց նույնության մասին մեր եզրակացությունը հաստատվում է նաև Արշակունիներից սերված լինելու վերաբերյալ պատմիչների հաղորդումներով: Ըստ Բուզանդի, Սանեսանը «մի ազգաւորութիւն էր» հայոց թագավորի հետ, իսկ ըստ Խորենացու՝ հայոց Տրդատ Գ թագավորի ազգակիցն էր: Նա պատմում է, որ ընդառաջելով Փայտակարան քաղաքի վերակացուների կամ Հայոց արևելից կողմանց գործակալների խնդրանքին, Տրդատ թագավորը Մանուկ Գրիգորիսին Փայտակարան է ուղարկում. «Հանդերձ Սանատրկաւ ոմամբ յիւրմէ ազգէն Արշակունեաց»[30]: Նրանց նույնությունը ապացուցվում է նաև հայոց գահի նկատմամբ ունեցած իրենց նպատակամղվածությամբ, որի մասին խոսք կլինի ստորև, և այն տրամաբանական հիմքով, որ Սանատրուկի սպանած Գրիգորիսին կրկին անգամ չէր կարող սպանել Սանեսանը:

Այստեղ թերևս պարզաբանման կարիք ունի մի հանգամանք. այն դեպքում, երբ, ըստ Խորենացու, Սանատրուկը իրեն Փայտակարանում թագավոր էր հռչակել Գրիգորիսի սպանությունից հետո, Բուզանդը պատմում է, որ Գրիգորիսին Սանեսանը ընդունել է արդեն որպես թագավոր: Բայց ուշադիր ընթերցելով Խորենացու հաղորդումները և համոզվելով, որ նա մանրամասնությամբ ծանոթ է իրադարձություններին, գտնում ենք, որ այդ տարբերությունն առաջացել է դեպքերի ընթացքից Խորենացու առաջ ընկնելուց, որի ժամանակ նա նախ պատմել է Գրիգորիսի սպանության մասին: Հակառակ դեպքում անհնար է պատկերացնել, թե Խորենացին, որ Վատնյան դաշտը գիտե որպես պատանի կաթողիկոսի սպանության վայր, իսկ Փայտակարանը՝ Սանատրուկի նստոցի՝ թույլ տար անճշտություն, որից բխեր մի այնպիսի անհնար միտք, թե Սանատրուկը մեկնել է Մասքթաց երկիր, սպանել Գրիգորիսին ու, վերադառնալով Փայտակարան, իրեն հռչակել հայոց թագավոր: Բայց, այնուամենայնիվ, ինչո՞ւ է Բուզանդը նրան Մասքթաց թագավոր անվանում այն դեպքում, երբ Խորենացին նրան գիտե որպես հայոց Տրդատ թագավորի ազգակիցը: Բանն այն է, որ երբ Սանատրուկը իրեն հռչակում է հայոց թագավոր, Փայտակարանը դարձնում է ռազմատեղի և ողջ Հայաստանում թագավորելու նպատակով զորք գումարելով, պատրաստվում է արշավանքի: Նրան կանխում է գահի իսկական հավակնորդը՝ Տրդատի որդի Խոսրով Կոտակը, որը, հռոմեական կայսր Կոստանդիանոս Մեծից օգնություն ստանալով, հայկական զորքերի հետ, կայսեր պալատական կառավարիչ Անտիոքոսի գլխավորությամբ, ուղարկում է Սանատրուկի վրա[31]: Վերջինս զգալով,

[30] Խորենացի, Գ, գլ. Գ: Դատելով Խորենացու «գործակալք կողմանցն արևելից հիւսիսոյ, վերակացուք հեռաւոր քաղաքին, որ կոչի Փայտակարան» (տե՛ս նույն տեղում), կարելի է եզրակացնել, որ Տրդատ Գ-ի ազգակից՝ ծագումով Արշակունի այս Սանատրուկը ուղարկվում է Փայտակարան, ստանձնելով նաև համանուն գավառի իշխանությունը: Գուցե դա է հիմք տվել ավելի ուշ շրջանի հայ պատմիչ Կ. Գանձակեցուն, որ գրի. «Սանատրուկ, որ կողմանցն Աղուանից (իմա՝ Հայոց Արևելից կողմանց - Հ. Ս.) վերակացու կարգեալ էր ի Տրդատայ» (Կիրակոս Գանձակեցի, էջ 16-17): Մաղաքիա արքեպիսկոպոսի քիչ չափազանցված խոսքերով «Սանատրուկ Արշակունին, որ հիւսիսակողմանցն բդեշխ էր դրուած Տրդատեն, և Գուգարաց և Փայտակարանից նահանգներեն զատ, Վրաց և Աղուանից երկրներուն վրայ ալ գերիշխանութիւն կվարեր, և Կովկասեան բազմածղի ցեղերուն վրա ազդեցութիւն ուներ, հիւսիսեն մինչև Մազքթաց երկիրը և հարավեն մինչև Ատրպատական» (տե՛ս Ազգապատում, մասն Ա, էջ 138):
[31] Խորենացի, Գ, գլ. Զ:

որ անկարող է դիմադրել հայ-հռոմեական միացյալ զորքերին, «պարսկական զօրօք լցեալ զքաղաքն Փայտակարան»[32], փախչում է Շապուհ Բ-ի մոտ՝ ապավինելով նրան: Այսպես էլ պատերազմական գործողություններ չսկսելով, Անտիոքոսը «հրաման տայ առիւ զիշխանութիւն պառակտելոցն նուազեցուցանէլ. և իւր ժողովեալ զհարկն՝ առ կայսր գնայր»[33], համարելով իր առաքելությունն ավարտված: Թվում էր, թե ճնշված է հայոց գահի համար մղվող այդ երկպառակտչական պայքարը: Սակայն Խորենացու հաղորդումը, թե Սանատրուկը հյուսիսայինների օժանդակությամբ հարձակում է գործել Հայաստանի վրա, ցույց է տալիս, որ կրած անհաջողությունը վերջ չէր դրել նրա ձգտումներին և ո՛չ նա, և ո՛չ էլ Շապուհը չէին հրաժարվել հայոց գահը ձեռք գցելու մտքից: Ուստի Սանատրուկ-Սանեսանը երկրորդ անգամ է արշավում Հայաստան, այս անգամ օգնական ուժի դեր հատկացնելով հյուսիսային վրանաբնակ ցեղերին, որոնց նա իր կողմն էր գրավել զանազան խոստումներով և նրանց թալանի տենչն ու վայրենի ողջ ուժը ուղղել Մեծ Հայքի վրա:

Այնուհետև ծավալվող իրադարձությունների մասին տեղեկություններ հաղորդող Խորենացուն միանում է Փ. Բուզանդը: Վերջինս, որ ոչինչ չի հաղորդում (գուցեև չգիտի) վերը նկարագրված դեպքերի մասին, ավելի մանրամասն տեղեկություններ ունի հաջորդող դեպքերի նկարագրություններում: Բուզանդի հաղորդումներից էլ սկսվում է հայոց գահի համար մղվող պատերազմի երկրորդ շրջանը[34], որի ժամանակ արշավանքը հայոց վրա տեղի է ունենում արդեն Մաքսթաց երկրից: Այս հանգամանքն այնպիսի հնարավոր ենթադրության հիմք է տալիս, որ առաջին անհաջողությունից հետո Պարսկաստան փախած Սանատրուկը, նախապատրաստվելով նոր հարձակման, Շապուհից նախօրոք ստացած կարգադրության համաձայն, Պարսկաստանից անցել է կովկասյան խառնիճաղանջ ցեղերի մոտ՝ նրանցից բանակ կազմելու միտումով և հասել հաջողության: Անցնելով հյուսիսային ցեղերի մոտ, նրանց համակրանքը շահելու, նրանցից բանակ հավաքագրելու և ցանկալի ձևով օգտագործելու նպատակով, Սանատրուկը նախ դավանափոխ է լինում[35], հետևաբար, ընդունում նոր անուն՝ Սանեսան և ապա ստանում «Մասքթաց թագավոր» տիտղոսը: Այդ անունով ու տիտղոսով էլ նա մտնում է Բուզանդի «Պատմության» մեջ:

Այսպիսով, անկասկած է, որ երկու հայ պատմիչները միմյանց լրացնելով, խոսում են միևնույն պատմական իրադարձությունների մասին և, որ Սանատրուկ-Սանեսանը նույն անձնավորությունն է՝ կենտրոնախույս տրամադրություններ ունեցող հայ Արշակունի, որ կռվում էր հայոց գահի համար, և է՛լ ավելի էր նախատինքի արժանի, քանզի «զօրութեամբ օտար ազգաց խորհէր

---

[32] Նույն տեղում:

[33] Նույն տեղում:

[34] К. В. Тревер, Очерки по истории ... Албании, с. 188.

[35] Քրիստոնեությունից հրաժարվելուն որպես հավաստիացում Սանատրուկ-Սանեսանը հալածանքների է ենթարկում քրիստոնյաներին, չխնայելով նույնիսկ իր սեփական զավակներին: Այդ մասին ունենք Կաղանկատվացու վկայությունը, որում Սանեսանի որդիները հանդես են գալիս քրիստոնեական անվանումներով՝ սուրբն Մովսէս, սուրբն Դանիէլ, սուրբն Եղիա: «Սոքա որդիք գոլով Սանեսանայ արքային Մասքթաց, որք աշակերտեալ սրբոյն Գրիգորիսի. և ԳՌ և Հայր ընդ նոսա... զորոց զհետ եկեալ արիւնարբուն Սանեսան՝ ի սուր սուսերի արկ զնոսա ի Թ Նաւասարդի ամսոյ (Կաղանկատվացի, Բ, գլ. Ե):

տիրել բոլորումս Հայոց»[36]: Նա էր Փայտակարան ուղարկված Տրդատ Գ-ի ազգակիցը և այդ ազգակցությունն էր պատճառը, որ Խոսրով Կոտակը, տեսնելով Սանեսանի կտրված գլուխը, լալիս է՝ ասելով. «Եղբայր իմ էր ազգաւ Արշակունի»[37]: Եվ քանի որ «եղբայր» բառը Բուզանդն օգտագործում է արյունակից ազգականություն ցույց տալու համար[38], ապա տարօրինակ չէ, որ Սանատրուկ-Սանեսանը, լինելով Տրդատ Գ-ի ազգակիցը, կարող էր նրա որդու կողմից անվանվել «եղբայր» և ողբակոծվել: Այդպես կընդունվեր միայն մոլորված ազգականի մահը:

Ինչպես Փ. Բուզանդի, այնպես էլ Մ. Խորենացու հաղորդումներից պարզ երևում է, որ Սանատրուկ-Սանեսանի պայքարը ծավալվում էր միայն ու միայն հայոց գահի համար: Խորենացին գրում է, որ երբ Փայտակարան է հասնում հայոց թագավոր Տրդատ Գ-ի մահվան լուրը, Սանատրուկ-Սանեսանը անմիջապես իրեն հայտարարում է հայոց թագավոր. «Իսկ Սանատրկոյ թագ կապեալ ինքեան՝ ունի զքաղաքն Փայտակարան, զօրութեամբ օտար ազգաց խորհէր տիրել բոլորումս Հայոց»[39]: Ավելի քան հավանական է, որ Սանատրուկը հայոց գահի նկատմամբ ցուցաբերած նկրտումները շղարշել է նրա հանդեպ ունեցած իր, իբր օրինական պահանջով, որպես Արշակունի, քանզի հայ պատմիչների հաղորդումների համաձայն, միայն Արշակունիները իրավունք ունեին թագ կրելու[40]: Ուշագրավ այս փաստը մեկ անգամ ևս ընդգծում է, որ Սանատրուկ-Սանեսանի ողջ գործունեությունը պտտվել է Հայաստանի ու նրա գահի շուրջը: Բուզանդի պատմելով էլ Սանեսանի արշավանքներն ուղղված էին հատկապես հայոց դեմ: Երբ Գրիգորիսը քարոզներով փորձում է հյուսիսայիններին ետ կանգնեցնել ավարառուական արշավանքներ կատարելու մտադրությունից, նրանք միմյանց ասում են. «Այս խորհուրդ Հայոց թագաւորին է. զսա յղել առ մեզ, զի այսու ուսմամբ խափանեսցէ զմեր արշաւանս ասպատակութեան հինի յաշխարհէն իւրմէ, այլ եկեայք զսա պակասեցուցուք ի միջոյ և մեք ի Հայս արշաւեսցուք, աւարաւ զմեր աշխարհս լցցուք»[41]: Որ, իսկապես, Սանատրուկ-Սանեսանի հիմնական նպատակը հայոց գահին տիրելն էր, ցույց է տալիս նաև այն հանգամանքը, որ նա, գրավելով Վաղարշապատը, մնում է այնտեղ «բուն գնդաւն, անթիւ, անհամար զօրքն

[36] Խորենացի, Գ, գլ. Գ:

[37] Բուզանդ, Գ, գլ. Է:

[38] Այս իմաստով «եղբայր» բառը բացի Սանատրուկ-Սանեսանի համար երկու անգամ գործածելուց, Բուզանդը նույնքան անգամ գործածում է նաև Մուշեղ Մամիկոնյանի համար, Մանվել Մամիկոնյանի (Ե, գլ. ԼԷ) և Մեհրուժանի հանդեպ (Ե, գլ. ԽԳ), Մամիկոնյան տիկնանց (Ե, գլ. ԽԶ) և Գնելի համար Տիրիթի հանդեպ (Դ, գլ. ԺԵ): Ավելի մանրամասն տե՛ս Հ. Ս. Սվազյան, Աղվանից թագավորության Առշակունյաց ճյուղի սկզբնավորումը, էջ 164-165:

[39] Խորենացի, Գ, գլ. Գ:

[40] «Քանզի,- գրում է Խորենացին,- ի վախճանել երանելւոյ Տրդատայ՝ մեծ իշխանն Բակուր, որ բդեաշխն Աղձնեաց կոչէր, տեսեալ զՍանատրուկ թագաւորեալ ի Փայտակարան՝ զնոյն խորհեցաւ և ինքն. թէպէտև ոչ թագաւորել, զի ոչ էր Արշակունի (տե՛ս Խորենացի, Գ, գլ. Դ): Նույնը տեսնում ենք և Փ. Բուզանդի մոտ. Մանվել Մամիկոնյանը Վարազդատին Արշակունի չի համարում, ուստի, նրա կարծիքով, ապօրինի է տիրում հայոց գահին, և առաջարկում է հեռանալ երկրից, եթե չի ուզում մեռնել իր ձեռքով: Վարազդատն էլ պատասխան խոսքում ընդգծում է իր Արշակունի ծագումը և որպես այդպիսին պաշտպանում հայոց թագավոր լինելու իր իրավունքը (տե՛ս Բուզանդ, Ե, գլ. ԼԷ):

[41] Բուզանդ, Գ, գլ. Զ:

հանդերձ»[42] կարծելով, թե գրավելով հայոց մայրաքաղաքը, ձեռք է բերել և հայոց գահը: Այն փաստից, որ Սանատրուկ-Սանեսանը հաստատվել է Վաղարշապատում՝ իր մոտ պահելով «բուն գունդը», իսկ մնացածը, սփռվելով Հայաստանով մեկ, կողոպուտի են ենթարկել երկիրը, կարելի է ենթադրել, որ առաջինը եղել է նրա նախարարական բանակը, որպիսին ֆեոդալական հասարակարգում ունենում էին բոլոր նախարարները, իսկ վերջինները՝ հյուսիսայինները, որոնց, ի վարձատրումն նրանց ծառայության, Սանատրուկ-Սանեսանը թույլ էր տվել ազատ, անարգել թալանել երկիրը:

Այսպիսով, հայ պատմիչներից բերված ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի վկայակոչումները անառարկելիորեն ցույց են տալիս, որ Սանատրուկ-Սանեսանի նպատակը, հայոց գահին տիրելն էր, և նրա կռիվները մղվում էին սոսկ «թագավոր Հայոց Մեծաց» դառնալու նրա փառասիրական տենչը բավարարելու նպատակով:

Այս ամենը պարզորոշ վկայում է, որ նա չէր կարող լինել Աղվանից թագավորը և պայքարել իր համար օտար թագավորության միավորման համար: Իսկ Փայտակարանի, որպես Աղվանից մարզերից մեկը լինելու մասին կարծիքը հեշտությամբ ժխտվում է աղբյուրների տեղեկությունների հիման վրա: Վերջիններից «Աշխարհացոյցը» Փայտակարանը տասներկու գավառներով հիշատակում է որպես հայոց տասնհինգ նահանգներից մեկը և հենց այդպիսին էլ նկարագրում[43]: Որ Փայտակարանը համանուն քաղաքով հայոց նահանգներից մեկն էր և Սանատրուկի՝ այնտեղ իրեն թագավոր հռչակելով չէր դադարել այդպիսին լինելուց, նշում է և Խորենացին: Խոսելով ուսումնասիրվող դեպքերի մասին, պատմահայրը գրում է, որ Անտիոքոսը «հրաման տայ առիւ զիշխանութիւն պառակտելոցն»: «Պառակտվածների իշխանությունը» կարող էր անվանվել մեկ ամբողջությունից հեռացած, պառակտված մասը: Իսկ եթե դրան ավելացնենք, որ Խորենացին, առանց Փայտակարանը նվաճելու մասին խոսքի, միայն հայտնում է, որ պառակտվածների իշխանությունը թուլացնելու նպատակով Անտիոքոսը հրամայում է ավարի ենթարկել Փայտակարանը և սոսկ արքունի հարկն է վերցնելով հեռանում, տարակույս չի մնում, որ Փայտակարանը հայոց մարզ էր և կենտրոնախույս ուժերի շնորհիվ պառակտվել էր հայոց միաբանությունից ու այնտեղ գտնվող Տրդատի ազգակից Սանատրուկի միջոցով ձգտել էր ինքնուրույնության:

Հայոց գահի շուրջը ծավալված ամբողջ իրադարձությունների գործուն մասնակիցներն էին աղվանացիները: Այսպես, երբ պատրաստվելով արշավանքի՝ Սանատրուկը Փայտակարանում զորք է գումարում, նրան օգնության են գալիս նաև Աղվանից նախարարներն իրենց զորագնդերով, բայց Անտիոքոսի գլխավորած հայ-հռոմեական բանակի հարձակումից սարսափահար, փախչում և ապաստանում են Ծապուհի մոտ[44]: Խորենացին գրում է, որ Սանատրուկը Պարսկաստան է փախել «յանդերձ Աղուանից նախարարօք»[45], իսկ

---

[42] Նույն տեղում, գլ. Է:

[43] Աշխարհացոյց, էջ 33:

[44] Կաղանկատվացու սխալ կարծիքով հայ-հռոմեական այս զորքը շարժվել է «ի վերայ Աղուանից» (Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԲ):

[45] Խորենացի, Գ, գլ. Ձ:

Կաղանկատվացին՝ «զօրօքն Աղուանից»[46]: Աղվանացիները Սանատրուկ-Սանեսանին չէին լքել նաև այն ժամանակ, երբ նա բանակ հավաքագրելու միտումով անցել էր Մասքթաց երկիր: Դա երևում է Խորենացու հաղորդումից, ըստ որի Գրիգորիսի սպանությունը Մասզքթաց երկրում տեղի էր ունեցել նաև աղվանացիների սադրանքով: «Ի դաւելոյ նորին Սանատրկոյ և այլոց ոմանց արանց Աղուանից սպանին զերանելին»,- գրում է Խորենացին[47], որից էլ միանգամայն պարզորոշ բխում է, որ աղվանացիները չէին կարող մասնակցել Մանուկ Գրիգորիսի սպանությանը, եթե չգտնվեին Սանատրուկ-Սանեսանի ռազմական ճամբարում: Խրովարար Սանատրուկ-Սանեսանի արշավուղին, սկսվելով Մասքթաց երկրից, անցնում էր Աղվանքի տարածքով: Ուստի նկատի ունենալով այս հանգամանքը, ինչպես նաև մինչև արշավանքը աղվանացիների կատարած ակտիվ դերը նշված իրադարձություններում, հավանական կլինի ենթադրել, որ աղվանացիները ևս մասնակցում էին արշավանքին: Բացի դրանից, դա նրանց կարող էր պարտադրել Շապուհ Բ-ն, որ տիրակալի դիրք ուներ այդ երկրում և շահագրգռվածություն արշավանքի հաջող ելքի համար: Այս գործում իր քաղաքական հաշիվներն ունեցող պարսից Շապուհ Բ-ն, մտածելով իր վաղեմի հակառակորդ Հռոմի նկատմամբ գերիշխանության հասնելու մասին, բայց չկարողանալով անմիջական ռազմական գործողություններ սկսել, քանի որ նրա ձեռքերը կապում էր Մծբինի պայմանագիրը, նրա դեմ ապագա պայքարում թիկունքը ապահովելու նկատառումներով, օգտագործում էր զանազան նախարարական երկպառակություններն ու խռովությունները: Ուստի, Սանատրուկ-Սանեսանի գործողությունների մեջ տեսնելով իր ցանկությունների իրականացման ամենահարմար միջոցը, ըստ ամենայնի խրախուսում էր դրանք: Շապուհի սադրիչ դերի մասին համերաշխորեն հաղորդում են թե՛ Մ. Խորենացին և թե՛ Մ. կաղանկատվացին: Ըստ առաջին պատմիչի, Սանատրուկը արշավանքն սկսել էր «ի գաղտնի հրամանէ Շապհոյ»[48], իսկ ըստ երկրորդի՝ «հրամանաւ Շապհոյ»[49]: Պատմիչների հաղորդումները հաստատվում են նաև նրանով, որ Շապուհը պատրաստակամորեն և սիրահոժար ընդունում և ապաստան է տալիս Անտիոքոսից հալածված Սանատրուկ-Սանեսանին ու Աղվանից նախարարներին: Այս փաստը բացահայտում է նաև մասնավորապես Հայաստանի կենտրոնական իշխանության դեմ ուղղված ամեն մի երկպառակտչական շարժում, խրախուսելով այն՝ թուլացնելու Շապուհի քաղաքականությունը: Նկարագրվող իրադարձություններում իրենց քաղաքական հաշիվներն ունեին նաև աղվանացիները, ուստի և Սանատրուկ-Սանեսանի՝ հայոց թագավոր լինելու ձգտումները պարարտ հող էին գտնում նրանց մոտ: Ինչպես ամենուր, այնպես էլ Աղվանքում գոյություն ուներ ավատատիրական կարգերին հատուկ իշխանության ու թագավորական հարստության դեմ ուղղված ընդդիմություն, ուստի հավանական է կարծել, որ այս իրադարձությունների մասնակիցները հենց դժգոհ նախարարական-ազնվականական տարրեն էին, որոնք դրանցում տեսնում էին քաղաքական փոփոխությունների ամենահարմար պահը, իսկ ի դեմս Շապուհ Բ-ի

[46] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԲ:
[47] Խորենացի, Գ, գլ. Գ:
[48] Նույն տեղում, գլ. Թ:
[49] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԲ:

լայն օժանդակությունը վայելող Սանատրուկ-Սանեսանի՝ իրենց ընկրտումների կենսագործողին: Պատերազմում կրած անհաջողությունն է՛լ ավելի է խորացնում իշխանության համար պայքարը և, ի վերջո, հանգեցնում հին թագավորական հարստության փոխարինմանը նորով: Դատելով քաջ Վաչագանին տրված բնորոշումից, թե նա «էր ի մեծ ազգէն Արշակունեաց»[50] Աղվանքում հաստատվել էր Արշակունյաց հարստություն: Հաշվի առնելով Աղվանից նախարարների ակտիվ մասնակցությունն Սանատրուկ-Սանեսանի միջադեպում և, վերջինիս ունեցած քաղաքական ազդեցությունը Աղվանքում ու նրա սահմաններից դուրս, Ծապուհի ռազմական ու քաղաքական օգնության ու հովանավորության նրա վայելումը, տրամաբանական է կարծել, որ նոր հարստության հիմնադիրները սերում էին Սանատրուկ-Սանեսանից: Նա իր գործողություններով լուրջ հիմքեր էր ստեղծել դրա համար, իսկ գրավելով հայոց գահն ու մեկ տարի այնտեղ թագավորելով, սերնդակիցների համար թողել էր թագավորական տոհմ կոչվելու, հետևաբար և թագավորելու հավակնություններ ունենալու մեծ նախադրյալներ: Զախողվելով հայոց գահին տիրանալու հարցում և հայ զորականների հարվածներից փախչելով ու ապաստանելով Աղվանքում, Սանատրուկ-Սանեսանի սերուդները, օգտվելով այնտեղ տիրող քաղաքական իշխանության համար մղվող երկպառակտչական կռիվների հետևանքով առաջացած խառնակ վիճակից, ընդգրկվում են այդ պայքարի մեջ: Ունենալով Աղվանից դժգոհ ազնվականության աջակցությունը, ինչպես նաև որպես Պարսից քաղաքականության կրողների՝ Ծապուհի խրախուսանքն ու օգնությունը, նրանք շուտով հասնում են Աղվանքում թագավորելու պատվին և, այսպիսով, հիմք դնում Աղվանից թագավորական հարստության Արշակունյաց ճյուղին:

Պատմագիտության մեջ հայտնվել է այն թյուր կարծիքը, թե Ծապուհը, ընդհանրապես լինելով Արշակունիների թշնամի, չէր կարող թույլ տալ նոր Արշակունյաց ճյուղի հաստատում Աղվանքում[51]: Սակայն Ծապուհի վերաբերմունքը նոր հարստության հանդեպ, խնամիական կապերի հաստատումը վերջինիս առանձին ներկայացուցիչների հետ[52], ցույց են տալիս, որ նման կարծիքը ոչ միայն սխալ է և անընդունելի, այլ նույնիսկ հակառակը: Նոր հարստության հաստատում Աղվանքում քաղաքականապես ձեռնտու էր նաև Ծապուհ Բ-ին: Իր օժանդակությամբ թագավորական գահ ստացած նոր հարստության գլխավորությամբ Աղվանքն էր դառնում Ծապուհ Բ-ի քաղաքականության կենսագործողը Անդրկովկասում:

Արշակունյաց հարստությունը Աղվանքում հեշտությամբ չի հասնում թագավորական իշխանության: Այն հարկադրված էր հաղթահարելու տեղական իշխող վերնախավի դիմադրությունը և ուժով տիրանալու գահին: Դա հաստատվում է նույն Վաչագան Քաջի մասին Կաղանկատվացու մի ուրիշ հաղորդմամբ, ըստ որի նոր հարստության առաջին ներկայացուցիչը «միանգամայն տիրեաց կողմանցս Աղուանից»[53], այսինքն՝ կատարելապես տիրեց Աղվանքին, որին նա կարող էր հասնել ամեն կարգի դիմադրություն հաղթահարելով, վճռական

[50] Նույն տեղում, Ա, գլ. ԺԵ:

[51] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 183-184.

[52] Կաղանկատվացի, Ա, գլ. Թ: Տե՛ս նաև ստորև:

[53] Նույն տեղում, Ա, գլ. Ձ:

գործողությունների շնորհիվ միայն:

Այնքանով որքանով ենթադրվում է, որ Աղվանից թագավորական հարստության Արշակունյաց ճյուղը սերում է Սանատրուկ-Սանեսանից, ապա նրա իշխանության գլուխ անցնելու ժամանակաշրջանը, պարզ է, որոշվելու է նրա հետ կապված իրադարձությունների ժամանակագրության և հիմնականում Սանեսանի արշավանքի տարեթվի պարզաբանումով: Ի դեպ, այդ հարցով զբաղվել են նաև այլ ուսումնասիրողներ: Մարկվարտը, ապա Մանանդյանն ու ուրիշներ Սանեսանի արշավանքի տարին համարում են 335 թ.[54], Բ. Հարությունյանը՝ 331-332 թ.[55], իսկ Ֆ. Մամեդովան՝ 336-337 թթ.[56]: Բայց ելնելով Սանատրուկ-Սանեսանի նույնական լինելու փաստից և դատելով Խորենացու վկայությունից, որ Սանատրուկ-Սանեսանը իրեն հայոց թագավոր է հռչակել Տրդատ Գ-ի մահից՝ 330 թ. հետո կարելի է եզրակացնել, որ Սանատրուկի հայոց թագավոր հռչակվելը, Անտիոքոսի գալուստն ու առաջինի փախուստը Պարսկաստան տեղի է ունեցել 330-331 թթ.: Այդ փախուստից որոշ ժամանակ անց նա հասնում է Մասքթաց երկիր, և նրանցից ու կովկասյան լեռնային ցեղերից մի մեծ բանակ հավաքագրում: Մինչ նա արշավանքի նախապատրաստության մեջ էր, ճամբար է հասնում Մանուկ Գրիգորիսը, որը ողջախոհության կոչող քարոզի համար հատուցում է կյանքով: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Գրիգորիսի սպանությունը կատարվել է 336 թ.[57]: Եվ քանի որ պատմական փաստերի համաձայն նրա սպանությունից հետո է Սանատրուկ-Սանեսանը, որին այլևս ոչ ոք չէր խանգարում, մտադրությունն իրականացնելու նպատակով արշավում Հայաստան, ապա ծրագրված արշավանքը կարող էր տեղի ունեցած լինել լոկ 336 թ.: Այնուհետև Հայաստանում մեկ տարի թագավորելուց և 337 թ. Օշականի ճակատամարտում ջախջախվելուց հետո Սանատրուկ-Սանեսանի սերունդները բանակի մնացորդների հետ վռնդվում են Հայոց երկրից և ընդգրկվում Աղվանից գահի համար ծավալված պայքարի մեջ ու հասնում հաջողության:

Այսպիսով, Արշակունյաց հարստությունը Աղվանքում հաստատվում է IV դարի 30-ական թթ. վերջերին, սերում էր հայ Արշակունիներից և նրա առաջին ներկայացուցիչն էր Քաջ Վաչագան Արշակունին:

---

[54] J. Marquart, Die Entstehung der armenischen Bistumer, Rom, 1932, "Orientalia Christiana, vol. XXVII, 2. Հ. Մանանդյան, Երկեր, հ. 2, էջ 148: Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 34:

[55] Բ. Հարությունյան, Մասքթաց Սանեսան թագավորի արշավանքը, էջ 77:

[56] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 98.

[57] Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 79:

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
## ԱՂՎԱՆՔՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՕՐՈՔ

### Ա. Աղվանքը IV դարի 40-50-ական թթ.

Արշակունյաց հարստության տիրապետությունը նշանավորվեց Աղվանքի վրա հյուսիսային քոչվորական ցեղերի հարձակումով: Վերջիններս, որ Սանատրուկ-Սանեսանի քաղաքական միջադեպի ժամանակ նրա ու աղվանացիների դաշնակիցներն էին, այժմ ավարառության նպատակով արշավում են Աղվանք: Հավանական է, որ նրանց մոտ այդպիսի միտք հղացվել էր դեռևս Սանատրուկի բանակի կազմում Աղվանքով Հայաստան արշավելիս: Այն ժամանակ, ինչպես իրավացիորեն նշում է Կ. Վ. Տրեվերը, այդ հարձակումից Աղվանքը չէր տուժել[1], բայց անհա դրանից որոշ ժամանակ անց նրանց նոր խմբերը արշավում են Աղվանք, գրավում և, հաստատվելով այնտեղ, չորս տարի շարունակ կեղեքում: Երկիրը դարձնելով ռազմական հենակետ,հյուսիսայինները այստեղից անընդհատ հարձակումներ են կազմակերպում դեպի հարևան Մեծ Հայքի պետությունը, ավերածություն ու կողոպուտ սփռելով նաև այստեղ: Այս պարագան, բնականաբար անհանգստացնում է հայոց թագավոր Տիրանին (338-344 թթ.): Հյուսիսայինների չորսամյա տիրապետությունը Աղվանքում լուրջ հարված էր նաև Սասանյան Պարսկաստանի հեղինակությանը: Հարկավոր էր վերականգնել նախկին ազդեցությունը երկրում և Շապուհ Բ-ն ձեռնամուխ է լինում նրանց արտաքսմանը, գործի մեջ ներգրավելով նաև հայոց Տիրան թագավորին: «Շապուհ Որմզդեան առ Տիրան մեր արքայ առաւել սէր հաստատեաց,- գրում է Խորենացին,- մինչև զօրավիգ օգնականութեան ելեալ՝ թափէ զնա յարձակմանէ հիւսիսականացն ազգաց, որք միաբանեալ եկին արտաքս քան զկապանն Ճորայ և բանակեցան ի սահմանս Աղուանից ամս չորս»[2]: Կաղանկատվացին էլ է գրում այս մասին, միայն թե, ըստ նրա, ոչ թե Շապուհ Բ-ն է օգնել Տիրանին՝ ազատվելու հյուսիսայիններից, այլ հակառակը՝ Տիրանն է օգնության հասել արյաց արքային: «Թագաւորեալ Տիրանայ Հայոց՝ առնէ խաղաղութիւն ընդ Պարսս և լեալ օգնական Շապհոյ, թափէ զնա ի յարձակմանէ հիւսիսայնոցն, որք ամս չորս բնակեալ յԱղուանս նեղէին զՀայս»[3]: Ինչպես երևում է հայ պատմիչների վկայություններից, հայ-պարսկական բանակները հարձակվում են ավարառու ցեղերի վրա, դուրս վռնդում Աղվանքից և այնտեղ կրկին վերականգնում Պարսկաստանի ազդեցությունը: Աղբյուրները չեն խոսում վաչկատուն ցեղերին Աղվանքից արտաքսելու գործում աղվանացիների ունեցած մասնակցության մասին: Սակայն անտրամաբանական կլինի կարծել, թե աղվանացիները, որոնց տնտեսական ու քաղաքական կյանքի վրա խիստ բացասաբար էր անդրադառնում հյուսիսայինների չորսամյա բնակությունը, կարող էին հեռու մնալ այդ գործողություններից:

Աղվանքում ծավալվող նշված պատմական իրադարձությունների ժամանակ իշխանության գլուխ էր կանգնած Վաչագան Քաջը: Աղբյուրների ու, հատկապես, Կաղանկատվացու սակավախոսությունը հնարավորություն չի տալիս ստույգ որոշելու նրա թագավորության տարիները, բայց ելնելով վերը նկարագրված

---

[1] К. В. Тревер, Очерки по истории ... Албании, с. 197.

[2] Խորենացի, Գ, գլ. ԺԲ:

[3] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԳ:

իրադարձությունների ժամանակագրական հաշվումներից, կարելի է հնարավոր տարեթվեր համարել 338-342 թթ.: Նույն պատճառով դժվար է խոսել նաև նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականության մասին: Իրավացի է Լեոն, երբ գրում է. «Մովսես Կաղանկատվացին բերում է աղվանից թագավորների անունները, որոնք իսկապես միայն անուններ են, առանց գործերի և ժամանակագրական տվյալների»[4]:Այս հանգամանքը պատճառ է դարձել, որ նա նույնիսկ հայտարարվի Կաղանկատվացու հնարածը[5]: Մինչդեռ Վաչագան Քաջը պատմական անձնավորություն է, թագավորել է IV դարի 30-ական թթ. վերջերին-40-ականների սկզբներին և, ինչպես կարելի է ենթադրել, վարել է մի այնպիսի քաղաքականություն, որով պահպանել է բարեկամությունը Շապուհ Բ-ի հետ:

Վաչագան Քաջի քաղաքական գործունեության շարքում թերևս կարելի է դասել նաև Տիրան թագավորի և Շապուհ Բ-ի հետ հյուսիսայինների դեմ ուղղված պատերազմի մասնակցությունը, որի ժամանակ էլ՝ 342 թ., գուցե, Արշակունյաց հարստությունը կորցրել է իր ներկայացուցչին:IV դարի 40-ական թթ. սկզբներին Աղվանքի քաղաքական կյանքում տեղի են ունենում լուրջ իրադարձություններ: Այդ ժամանակ ընդվզում և Աղվանքի ենթակայությունից դուրս գալով՝ իր հպատակությունն անմիջականորեն Պարսկաստանին է հայտնում Ցրի բերդաքաղաքը: «Բերդաքաղաքն անուանեալն Ցրի ապստամբեալ յԱղուանից թագաւորէն և ձեռն տուեալ ի պարսից արքայն»,- գրում է Կաղանկատվացին[6]: Դատելով Կաղանկատվացու մի շարք այլ հաղորդումներից, Ցրի քաղաքը գտնվում էր Ճղբաց երկրում[7], որ նշանակում է, թե Աղվանից թագավորի դեմ ապստամբել էր Ճղբաց երկիրը:Պատմագիտության մեջ այս երկիրը դիտվել է որպես Աղվանքի ազգագավառներից մեկը, իսկ ճիղբերը՝ աղվանական ցեղեր[8]: Բայց այս կարծիքը սխալ է և հեշտությամբ ժխտվում է մատենագիտական տվյալներով: Ըստ վերջիններիս, ճիղբերը հյուսիսային վայրի ցեղեր էին, հայտնի էին դեռևս Պլինիոսին և ապրում էին Կովկաս լեռան հյուսիսային լանջին՝ Աղվանքի սահմաններից դուրս: «Սկսած Աղվանքի սահմաններից,- վկայում է Պլինիոսը, Կասպից ծովի արևմտյան ափի երկարությամբ ապրող ժողովուրդների ու ցեղերի նկարագրությունը հարավից հյուսիս անելով,- լեռան ամբողջ երկարությամբ ապրում են ճիղբերի վայրենի ցեղերը»[9]: Ճիղբերին Աղվանքի սահմաններից դուրս՝ հարևան Սարմաթիայում է տեղադրում նաև «Աշխարհացոյցը»[10]: Եվ վերջապես Կաղանկատվացին էլ հարկ է համարել հատուկ շեշտելու, որ ազգագավառը գտնվում է Աղվանքի իշխանության ներքո՝ «յԱղուանից իշխանութեանն»[11], հանգամանք, որի կարիքը չէր զգացվի, եթե այն իրոք լիներ Աղվանքի մարզերից մեկը: Ուստի հավանական է կարծել, որ ինչ-որ ժամանակ Ճղբաց երկիրը նվաճվել է Աղվանքի թագավորների կողմից: Թե երբ է դա կատարվել, դժվար է ասել, սակայն փաստ է , որ IV դարի 30-ական թթ. սկզբին, երբ Մանուկ Գրիգորիսը քարոզչական գործունեությամբ հասել էր այնտեղ, այն արդեն կրում էր Աղվանքի ազդեցությունը: Ճիղբերը

[4] Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 153:

[5] Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի..., էջ 63:

[6] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԴ:

[7] Նույն տեղում, Ա, գլ. ԺԴ, ԺԹ:

[8] К. В. Тревер, Очерки по истории ... Албании, с. 46.

[9] Известия в древних писателей ..., т. II, с. 182.

[10] Աշխարհացոյց, էջ 27:

[11] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԴ:

Սանատրուկ-Սանեսանի խառնիճաղանջ բանակի ցեղային միավորներից էին և նրա ռազմական դաշնակիցն ու ավարի բաժնեկիցը: Այնուհանդերձ նրանք չէին հաշտվել Աղվանքի ենթակայության տակ գտնվելու մտքի հետ և, օգտվելով խառը իրադրությունից, որ կարող էր առաջացած լինել հյուսիսայինների չորսամյա տիրապետությանը վերջ դնելու կռիվների ու Վաչագան Քաջի մահվան հետևանքով, ապստամբում են և ձեռք մեկնում պարսից արքային: Ցրի քաղաքը լցվում է պարսիկներով: Ապստամբները վերջիններիս օգնությամբ աշխատում են արմատախիլ անել քրիստոնեության առաջին ծիլերը երկրից, որպես իրենց ավարառուական ցանկություններին ու ընչաքաղցությանը հագուրդ տալուն խանգարող գլխավոր արգելամիջոց: Դրա համար նրանք բռնում են դեռևս քարոզչական գործունեության ժամանակ Գրիգորիսի կողմից եկեղեցու սպասավոր կարգված երեցին ու նրան աշակերտող ճիղբ մանկանը, առաջարկում թողնել քրիստոնեությունը, սակայն մերժում ստանալով սպասում նրանց[12]: Աղբյուրները լռում են ապստամբության վախճանի մասին: Դատելով նրանից, որ Աղվանքում քրիստոնեությունը դեռ ընդունված պաշտոնական կրոն չէր, կարելի է մտածել, որ Աղվանքը անտարբեր է մնացել այդ շարժման նկատմամբ և ճիղբերն էլ բավարարվել են իրենց երկրում քրիստոնեության ամրապնդման վտանգը վերացնելով: Պարսիկների մասնակցությունն էլ շարժմանը, որոնց թիկունքին կանգնած էր Ծապուհ Բ-ն, հարկադրել է Աղվանից ազնվականությանը ներողամտորեն նայել դեպքերին: Նկարագրելով Ճղբաց երկրի ապստամբությունը, Կաղանկատվացին նշում է, որ այն տեղի է ունեցել «առ Քաջիւն Վաչեիւ՝ Աղուանից արքայիւ»[13]: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրելու, որ Քաջ Վաչագանին Աղվանքի գահի վրա 342 թ. փոխարինել էր Քաջ Վաչեն: Ցավոք, նրա գործունեությանը վերաբերող այլ հաղորդումներ չկան, որի համար նա էլ, ինչպես և իր նախորդը, համարվել է հնարովի[14]: Սակայն մի բան պարզ է. այնպիսի խոշոր իրադարձության հետ կապված նրա անվան հիշատակումը, ինչպիսին Ճղբաց երկրի ապստամբության փաստն է, ցույց է տալիս, որ նա գոյություն է ունեցել և Աղվանից թագավորացանկում նրա զբաղեցրած տեղը, ըստ Կաղանկատվացու, իրական է, այնքան իրական, որ Կաղանկատվացին V դարի կեսերին ապրած և գործած նրա անվանակցից՝ «սուրբ Վաչեից» տարբերելու համար, նրան տալիս է «Քաջ» մականունը: Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Քաջ Վաչեն էր Աղվանքի թագավորը և նրա դեմ էր ապստամբել Ցրի բերդաքաղաքը:

Քաջ Վաչեի օրոք Սասանյան Պարսկաստանը ժամանակի քաղաքական հանգամանքներով պայմանավորված Աղվանից և ընդհանրապես հպատակ երկրների նկատմամբ վարում էր մեղմ, հանդուրժողական քաղաքականություն: Պատրաստվելով Հայաստանի ու Միջագետքի համար պատերազմի դուրս գալ Հռոմեական կայսրության դեմ և ցանկանալով դրանում օգտագործել հպատակ երկրների զինված ուժերը, նա այդ երկրներին ինքնուրույն կառավարվելու հնարավորություն էր տալիս և նրանց թագավորներին ու կառավարիչներին պարսից արքունիքում ու պետական վարչական կազմում բարձր դիրքերի արժանացնում: Աղբյուրների վկայությունների համաձայն, այդպիսի բարձր դիրք պարսից արքունիքում ուներ նաև Աղվանքի թագավորը, որին դրա համար

---

[12] Նույն տեղում:

[13] Նույն տեղում:

[14] Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի..., էջ 63:

կոչում էին «շահրդար»[15]: Նա իր զորագնդերով IV դարի 50-ական թթ. պարսկա-հռոմեական պատերազմների ժամանակ Շապուհ Բ-ի անբաժան ուղեկիցն էր: Աղվանից թագավորը, որի անունը հայտնում է միայն Կաղանկատվացին (որպես Վաչե), ակտիվ մասնակցում էր 359 թ. Ամիդ քաղաքի պաշարման ու գրավման համար մղվող ճակատամարտին գտնվելով անմիջապես Շապուհ Բ-ի կողքին: Ամիիանոսը, որ պաշարված քաղաքի պարիսպներից տեսել է պարսկական անհաշիվ զորքերը և նրանց մեջ «իր հանդերձանքի ծիրանիով փայլող» Շապուհ Բ-ին, այսպես է նկարագրում այնտեղից բացվող տեսարանը. «Նրա մոտ (Շապուհի - Հ. Ս.) ձախ կողմից գնում էր Գրումբատը՝ խիոնիտների[16] նոր թագավորը...: Աջ կողմից գնում էր ալբանների թագավորը, իր դիրքով ու պատվով առաջինի հետ հավասար, ետևից՝ իրենց հեղինակությամբ ու իշխանությամբ աչքի ընկնող զանազան հրամանատարներ»[17]: Աղվանից զորագնդերը զբաղեցրել են չորս կողմից շրջապատված Ամիդ քաղաքի հյուսիսային կողմը: «Պարսիկները շրջապատել էին քաղաքը պարսպի ողջ երկարությամբ,- գրում է ականատես հեղինակը,- արևելյան մասը ... բաժին էր ընկել խիոնիտներին ..., հյուսիսային կողմը գրավել էին ալբանները»[18]:

Շապուհ Բ-ին հաջողվում է կոտրել ամիդցիների դիմադրությունը և 73-օրյա պաշարումից հետո գրավել քաղաքը: Ամիդի գրավումից հետո Առաջավոր Ասիայում սկսվում է խաղաղության մի ժամանակաշրջան, որն ավելի շուտ ժամանակ շահելու, դաշնակիցներ որոնելու և նոր պատերազմի նախապատրաստության լարված ու համառ պայքարի մի շրջան էր:

Այդ ամբողջ ժամանակաշրջանում Աղվանքը շարունակում էր մնալ պարսից քաղաքականության կրողը Անդրկովկասում:

---

[15] Այդպես էին ընդհանրապես անվանում Սասանյանները իրենց հպատակ երկրների կառավարիչներին: Տես L'Iran sous les Sassanidas par Arthur Christensen, p. 101; Н. Пигулевская и др., История Ирана ..., с. 46.

[16] Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Բակտրիայում ուժեղ պետություն կազմած ցեղերից մեկը: Տես М. М. Дьяконов, Очерк по истории Ирана, с. 402, пр. 51; Р. Фрай, Наследие Ирана, с. 310-311.

[17] Аммиан, XVIII, 6, 22.

[18] Նույն տեղում, XIX, 2, 3.

## Բ. Աղվանից Ուռնայր թագավորը և հայ-աղվանական հարաբերությունները նրա օրոք

IV դարի 60-70-ական թթ. Աղվանքում թագավորում էր հայ մատենագիտության մեջ քաջ հայտնի Ուռնայր թագավորը: Ըստ մատենագիտական տվյալների, նա էր «քեռայր Շապհոյ Պարսից արքայի՝ քաջազօր այր, որ ի մեծամեծ պատերազմունս զհոյակապ անուն ժառանգեաց, ի մեջ Հայաստանեայց նշան հաղթութեան կանգնեալ»[19]: Ուռնայր արքան Մ. Կաղանկատվացու հաղորդումների համաձայն, հունաց Կոստանդիանոս կայսեր (306-337 թթ.) և հայոց Տրդատ թագավորի (298-330 թթ.) ու Գրիգոր Լուսավորչի ժամանակակիցն էր: Եթե դա այդպես էր, ուրեմն նա Աղվանքում պետք է թագավորած լիներ IV դարի սկզբներին: Ուսումնասիրողները հենց այդպես էլ կարծել են: Ք. Պատկանյանը, օրինակ, գտնում է, որ Ուռնայրը ապրում էր չորրորդ հարյուրամյակի առաջին քառորդում[20]: Մ. Բարխուտարյանցի կարծիքով, «Ուռնայր գահակալած է երևում Տրդատի հանության, մոտավորապես Փրկչական 300-301 թթ.»[21] : Ֆ. Մամեդովան նրա թագավորության տարիներ է համարում 313-371 թթ.[22]: Կարելի էր հավատալ և՛ պատմիչին, և՛ նրա տեղեկության հիման վրա եզրակացություններ կառուցող ուսումնասիրողներին, եթե հայ պատմիչներ Խորենացին, Բուզանդն ու նաև ինքը՝ Կաղանկատվացին, չհիշատակեին Ուռնայրին որպես Պապ թագավորի (370-374 թթ.) ժամանակակցի ու Շապուհ արյաց արքայի զինակցի, Ձիրավի հայտնի ճակատամարտում (371թ.): Ստացվում է այնպես, որ դեռևս դարասկզբին թագավորելու տարիք ունեցող Ուռնայրը նույն դարի 70-ական թթ. այնքան կորովի ու առողջ էր, որ նույնիսկ մասնակցում էր պատերազմների: Չնայած դրա անհնարինությանը, Ֆ. Մամեդովան հավատում է դրան, օրինակ բերելով Շապուհ Բ Երկարակյացի թագավորության տևական ժամանակամիջոցը[23]: Բայց ուսումնասիրողը անտեսել է այն պարագան, որ Շապուհ Բ-ի գահակալության երկարատևությունը պայմանավորված էր նրանով, որ նա թագավոր էր հռչակվել դեռ օրորոցից[24], իսկ այդ տարիքում հասկանալի է, չէր կարող կանգնած լինել պետության ղեկի առջև, մինչդեռ Ուռնայրը Տրդատի ու Կոստանդիանոսի օրոք արդեն ինքնուրույն թագավորելու տարիքի պետք է լիներ, որ փոխհարաբերությունների մեջ մտած լիներ նրանց հետ: Ուրեմն, Ձիրավի ճակատամարտում կռվող Ուռնայր արքան Կոստանդիանոսի, Տրդատի ու Գրիգոր Լուսավորչի ժամանակակիցը չէր կարող լինել, և նրա անվան հիշատակումը նրանց կողքին չի համապատասխանում պատմական իրականությանը: Կաղանկատվացու հաղորդումը ուսումնասիրողներին նաև հիմք է ծառայել երկու Ուռնայր ենթադրելու համար[25]: Սակայն, ինչպես ցույց է տրվել վերևում, մինչև IV դարի 50-ական թթ.

---

19 Կաղանկատվացի, Ա, գլ. Թ: Պատմիչի այս խոսքերից ելնելով, Հր. Աճառյանը, հետևելով Բրոսսեին, հայտնում է նույնիսկ Շապուհի քրոջ և Ուռնայրի կնոջ անունը՝ Ասայ (տե՛ս Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 220):

20 История агван, с. 305.

21 Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 55:

22 Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 186.

23 Նույն տեղում, էջ 261:

24 Е. Крымский, История Сасанидов, М., 1904, с. 37.

25 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 204, Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի..., էջ 61:

Աղվանքում թագավորում էին Վաչագան Ա և Վաչե Ա թագավորները, որոնց պատմականությունն ու թագավորության նշված ժամանակաշրջանները որոշվել են այդ ժամանակներում տեղի ունեցած պատմական իրադարձություններով:

Ուստի ոչ միայն ճիշտ չէ Ուռնայրի թագավորության սկիզբը դարասկզբին դնելը, այլև երկու Ուռնայր լինելու ենթադրությունը: Ելնելով այն ստույգ իրողությունից, որ Ձիրավի ճակատամարտում՝ 371 թ. Ուռնայրն արդեն թագավոր էր, տրամաբանական է կարծել, որ նա Աղվանքի թագավորական գահն էր բարձրացել դարի 60-ական թթ.:

Ուռնայրի թագավորելով հայ-աղվանական հարաբերությունները մտնում են նոր փուլ: Եթե Սանատրուկ-Սանեսանի միջադեպում աղվանացիները հանդես էին գալիս սոսկ որպես նրան օժանդակող ուժեր, ապա այժմ նրանք իրենք են ռազմական արշավանքներ նախաձեռնում դեպի Հայաստան: Օգտվելով Շապուհի ձեռնարկումների ու հայ նախարարների երկպառակությունների հետևանքով Հայաստանում 30-60-ական թթ. առաջացած քաղաքական ծանր կացությունից, աղվանացիները հարձակվում են Հայաստանի վրա և տարածքներ նվաճում: Նրանք գրավում են Հայաստանի հյուսիսարևելյան գավառները՝ Ուտի-Առանձնակը, Շակաշենը, Գարդմանը, Կողթը և այլ գավառներ, որոնք, Բուզանդի խոսքերով արտահայտված «շուրջն էին զնովաւ»[26]: Ընդհանրապես այդ շրջանում Աղվանքը հանդես էր գալիս որպես Պարսկաստանի դաշնակից և ակտիվ մասնակցում դեպի Հայաստան կատարվող նրա արշավանքներին: Այսպես, երբ 371 թ. գարնանը Շապուհ Բ-ն մեծաքանակ բանակով ներխուժում է Հայաստան, նրա հետ էին նաև աղվանից զնդերը՝ թագավոր Ուռնայրի գլխավորությամբ:

Բուզանդը գրում է. «Իսկ իբրև զօրահաւաքն առնէր Շապուհ Պարսից թագաւորն զզօրս իւր ի վերայ աշխարհին Հայոց և ի վերայ զօրացն Յունաց, Ուռնայր արքայ Աղուանից անդ էր առ թագաւորն Պարսից»[27]: Բացի վասալական պարտավորվածությունից, Ուռնայր արքան այս պատերազմին մասնակցում էր նաև անձնական փառք և հասրտություն ձեռք բերելու հույսերով: Երբ հայ ժողովուրդը, օգնություն ստանալով հռոմեացիներից, ոտքի է ելնում իր անկախությունը պաշտպանելու, և կողմերի միջև ճակատամարտը դառնում է անխուսափելի, նա ճակատամարտից առաջ պարսից արքային խնդրում է Մուշեղի դեմ մարտի վարումը վստահել իրեն, իսկ զինվորներին կարգադրում է չսպանել գերիներին, այլ պահել, տանել Աղվանք՝ շինարարական ու այլ ծանր աշխատանքներում օգտագործելու նպատակով[28]:

Ճակատամարտը տեղի է ունենում 371 թ., Նպատ լեռան մոտ, Ձիրավի դաշտում: Այն սկսվում է հայերի բուռն գրոհներով: Նրանց հարձակման թափից երերում է պարսից բանակը և շուտով դիմում փախուստի: Ճակատամարտի ժամանակ Մուշեղ սպարապետը, որին արդեն հասցրել էր զգուշացնել պարսից բանակում գտնվող Մերուժան Արծրունին հատկապես հայերի դեմ կռվելու Ուռնայրի ցանկության մասին, կռվով մոտենում է աղվանից զնդերին, կոտորում նրանց և հարկադրում նույնպես փախուստի դիմել: Տեսնելով կռվի նման ընթացքը, Ուռնայր արքան ևս փորձում է փախչելով ազատվել, սակայն, նրան հասնում է Մուշեղը և, նիզակի կոթով ծեծելով փախչող թագավորի գլուխը, ասում. «Շնորհս կալ, զի այր թագաւոր

[26] Բուզանդ, Ե, գլ. ԺԳ:
[27] Նույն տեղում, Ե, գլ. Դ:
[28] Նույն տեղում:

ես և թագ ունիս. ես ոչ սպանից զայր թագաւոր, թէ կարի նեղ համցէ ինձ» և մեծահոգաբար թույլ է տալիս հեռանալ[29]: Խորենացու հաղորդմամբ էլ պատերազմում «ի վերին օգնականութենէն զօրացեալ հասարակ զօրքն Յունաց և Հայոց, դիակամբք թշնամեաց լցին զդաշտն ամենայն և զմնացորդսն ամենայն ի փախուստ շրջեալ հալածեցին: Ընդ որս և զՈւռնայր Աղուանից արքայ, խոցոտեալ ի Մուշեղայ որդւոյ Վասակայ Մամիկոնենի, հանին ի պատերազմի»[30]: Այս դեպքերն արտացոլված են նաև Կաղանկատվացու մոտ, որը, սակայն, իրադարձությունները այնպես է ներկայացնում, կարծես թե պատերազմը մղվում է Պապ թագավորի ու Մերուժանի միջև: «Մեռանի Արշակ,- գրում է Կաղանկատվացին,- և թագաւորէ Պապ. ապստամբի Մեհրուժան Արծրունի՝ զԱքիտոփելին խորհեցեալ զկորուստն անձին իւրոյ. լինի մեծ պատերազմ ի մէջ Պապայ և Մեհրուժանայ: Յայնժամ քաջն Ծերգիր՝ ղեկաց արքայ մեռանի ի ձեռաց Սպանդարատայ Կամսարականի: Անդ առնու խոց մեծ արքայն Աղուանից Ուռնայր ի Մուշեղէ Մամիկոնէ՝ Վասակայ որդւոյ»[31]:

Հայերի այս հաղթական ճակատամարտից հետո փոխվում է Ուռնայր արքայի վերաբերմունքը Հայաստանի ու, մասնավորապես, Մուշեղի նկատմամբ: Կամենալով երախտահատույց լինել Մուշեղին Զիրավի ճակատամարտում իր նկատմամբ ցուցաբերած մեծահոգության համար, նա գաղտնի լուր է ուղարկում նրան՝ հայտնելով Հայաստանի վրա կրկին անգամ Շապուհի հարձակվելու մտադրության մասին[32], որով և փրկում է հայոց աշխարհը պարսիկների նոր, անակնկալ հարձակման վտանգից և ապահովում հայերի հաղթանակը նոր կռվում ևս:

Հայ-պարսկական պատերազմներից հետո Մուշեղը ձեռնամուխ է լինում Հայաստանից անջատված նահանգների վերամիավորմանը, այնուհետև հատուկ արշավանք է ձեռնարկում դեպի Աղվանք, հաղթում և հարկադրում վերադարձնել խլված նահանգները: Ապա պատանդներ վերցնելով ու երկու երկրների միջև սահման վերահաստատելով Կուր գետը, վերադառնում է հայրենիք: Մուշեղ Մամիկոնյանի Աղվանք կատարած արշավանքի ու նրա արդյունքների մասին հատուկ՝ «Յաղագս Աղուանից» վերնագրով գլխում պատմում է Բուզանդը: «Առնէր պատերազմ,- գրում է նա,- ընդ երկիրն Աղուանից հարկանէր զնոսա ի հարուածս անհնարինս: Եւ թափէր ի նոցանէ բազում գաւառս զոր հատեալ էր նոցա ի նոցանէն, զՈւտի, զՇակաշէն, զԶորն Գարդմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք: Եւ զԿուր՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին և ի գլխաւորացն բազումս սպանանէին. և զմնացորդսն ի հարկի կացուցանէին, և պանդանտս ի նոցանէ առնուին»[33]: Այսպես, շուրջ մեկ տասնամյակ տիրելուց հետո, Աղվանքը

[29] Նույն տեղում:

[30] Խորենացի, Գ, գլ. ԼԵ:

[31] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԳ:

[32] Բուզանդ, Ե, գլ. Ե:

[33] Նույն տեղում, Ե, գլ. ԺԳ: Ուշադրության է արժանի այն, որ Աղվանքից ետ վերցված հայկական նահանգի ու գավառների թվում հիշատակվում է միայն Արցախի Կողթ գավառը: Այս փաստը հիմք է տալիս եզրակացնելու, որ Աղվանքն իր նվաճումների ժամանակ ողջ Արցախը չէր, որ գրավել էր: Դա հաստատվում է նաև նրանով, որ Բուզանդը հայոց թագավորի դեմ ըմբոստացած նահանգների վերահնազանդեցման պատմությունն անելիս, Արցախին տեղ է հատկացնում այդ նահանգների շարքում և ինչպես յուրաքանչյուրի, այնպես էլ նրա հնազանդեցման պատմությանը նկարում է մի առանձին գլուխ «յաղագս Արծխայ» հատուկ խորագրով (տե՛ս, Բուզանդ, Ե, գլ. ԺԲ):

ստիպված ետ է վերադարձնում Հայաստանից գրաված գավառները և քաշվում իր նախկին՝ Կուրով անցնող սահմանը: Ավելին, հարկեր վճարելով ու պատանդներ տալով, այն սկսում է կրել Հայաստանի ազդեցությունը: Վերջին շրջանում հայերից կրած սոսկալի պարտություններից հետո, Շապուհ Բ-ն հարկադրված էր հաշտվելու ստեղծված իրադրության հետ:

Աղվանքի համար այս խռովահույզ ժամանակներին հաջորդում է խաղաղության մի ժամանակաշրջան, որը նպաստում է երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի զարգացմանը: Հասարակության ներսում ի հայտ են գալիս նոր երևույթներ: Զարգանում է հասարակական միտքը, քրիստոնեությունն Աղվանքում հռչակվում է որպես պետական պաշտոնական կրոն: Ուռնայրը դառնում է Աղվանքի առաջին քրիստոնյա թագավորը, որը IV դարի 70-ական թթ. երկրորդ կեսին քրիստոնեությունն հայտարարում է պետական կրոն այսպիսով նմանվելով հայոց Տրդատ թագավորին, ծնունդ տալով նրան Տրդատի ժամանակակիցը, ուրեմն և նրա համահավասարը լինելու վարկածին[34]:

Դժվար է ասել, թե երբ և ինչ հանգամանքներում է վախճանվել Ուռնայրը: Ջիրավի ճակատամարտից ու քրիստոնեությունը նրա կողմից պետականորեն ընդունելու մասին հաղորդումներից հետո, աղբյուրներում նա այլևս չի հիշատակվում: Միայն կարելի է ենթադրել, որ նա մահացել է քրիստոնեությունն ընդունելուց ոչ շատ ուշ:

IV դարի 80-ական թթ. դարձյալ սրվում է Հայաստանի համար պայքարը Սասանյան Պարսկաստանի ու Հռոմեական կայսրության միջև, որն էլ 387թ. հանգեցնում է Մեծ Հայքի բաժանմանը երկու բռնապետությունների միջև: Տարածված է այսպիսի կարծիք. Աղվանքի թագավորները, օգտվելով Մեծ Հայքի բաժանումից, հաջողեցրել են իրենց միացնել և կամ, որ առավել սխալ է, ետ վերադարձնել Արցախ և Ուտիք նահանգները[35]: Բայց բաժանումը, երկիրը ազդեցության ոլորտների տրոհելուց բացի, ուրիշ և ոչ մի (ո՛չ տնտեսական, ո՛չ քաղաքական և ո՛չ էլ նույնիսկ տարածքային) փոփոխությունների չի ենթարկում: Դա վկայում է Եղիշեի հանրահայտ հաղորդումը՝ բաժանումից հետո Հայաստանում ստեղծված քաղաքական իրադրության մասին: «Թեպէտ և գանձն յարքունիս Պարսից երթայր,- գրում է Եղիշեն,- սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմ, վասն որոյ և ստուածապաշտութիւնն բարձրագլուխ կամակորութեամբ երևելի լինէր յաշխարհին»[36]: Այնպես որ բաժանումից հետո էլ Մեծ Հայքը պահպանելով քաղաքական ու տնտեսական հզորությունը, ի վիճակի էր հակահարված հասցնելու իր տարածական ամբողջականությանը սպառնացող ամեն մի վտանգի: Բացի դրանից, ո՛չ հայ և ո՛չ

[34] Պատմագրության մեջ որպես Աղվանքում քրիստոնեության պաշտոնապես ընդունման տարեթիվ առաջարկվել են 313 (Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 5) և 315 թթ., ընդ որում վերջին դեպքում ժխտելով այն, որ Ուռնայրն էր պաշտոնապես քրիստոնեությունը ճանաչել որպես պետական կրոն (տես, А. Акопян, Албания-Алуанк ..., էջ 126 և հաջ.): Բայց քանի որ այդ հարցը պահանջում է հատուկ ուսումնասիրություն, առայժմ չենք անդրադառնում դրան:

[35] К. В. Тревер, Очерки по истории ... Албании, с. 201, И. Гулиев, Торговые связи ..., с. 10; Cyril Toumanoff, Studies..., էջ 132.

[36] Եղիշե, էջ 6: Տես նաև Բ. Ուլուբաբյան, Հյուսիս-արևելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչաքաղաքական վիճակի հարցի շուրջ, ԲԵՀ, թիվ 2, էջ 149-164: Բ. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387-451 թթ., ԲԵՀ, 1976, թիվ 2, էջ 77-85:

էլ օտարազգի որևէ մատենագիր ակնարկ անգամ չի անում այդ ժամանակաշրջանում Աղվանքի կողմից նման ոտնձգությունների մասին: Հետևաբար նրան վերագրվող ինչ-ինչ նվաճումները սոսկ ուսումնասիրողների երևակայության արդյունքն են: Քրիստոնեությունը նոր ընդունած Աղվանքի վրա 387 թ. քաղաքական ակտը ոչ մի ազդեցություն չի թողնում և այն նույն վարչական կառուցվածքով, աշխարհագրական ու քաղաքական սահմաններով թևակոխում է իր պատմության հինգերորդ դարը:

## Գ. Եսվաղեն՝ Աղվանից արքա: Սասանյան Պարսկաստանի ճնշման սաստկացումն Աղվանքում: Կրոնափոխության առաջարկը և անդրկովկասյան երկրների ընդվզումը

### Ռազմական գործողություններն Աղվանքում

IV դարի վերջերին (395 թ.) ձևավորված Արևելյան Հռոմեական կայսրության Բյուզանդիայի ու Սասանյան Պարսկաստանի միջև շարունակվում էր պայքարը Փոքր Ասիայում ու Անդրկովկասում գերիշխանության հասնելու համար: Այդ պայքարում կամա թե ակամա ներքաշվում էին նաև անդրկովկասյան երկրները՝ դաշնակցելով մերթ մեկի, մերթ մյուսի հետ: Սակայն, եթե Հայաստանը գրեթե միշտ հանդես էր գալիս Բյուզանդիայի կողմում՝ ընդդեմ Պարսկաստանի, ապա Վիրքն ու Աղվանքը, ելնելով քաղաքական հանգամանքներից, ավելի շատ հարում էին Պարսկաստանին:

Նոր դարի արշալույսին Աղվանքում թագավորում էր Եսվաղեն (Արսվաղեն) անունով մի Արշակունի: Նա ըստ Մ. Կաղանկատվացու, Աղվանից թագավորացանկում հաջորդում է Հոչական (կամ Վաչական Բ), Մրհավան, Սատո, Ասա թագավորներին և, ի տարբերություն նրանց, պատմական անձնավորություն է: Նրա մասին տեղեկություններ են հաղորդում հայ մատենագիրներից բոլոր նրանք, ովքեր անդրադարձել են հայոց գրերի գյուտին և ընդհանրապես դրանց ստեղծողի Մեսրոպ Մաշտոցի գործունեությանը: Վերջինիս լուսավորչական գործունեությունը Աղվանքում սերտորեն կապված է այս թագավորի անվան հետ, որի անմիջական օժանդակությամբ էլ նա ձեռնամուխ է եղել տեղում դպրոցների ստեղծմանը[37]: Ըստ Ստ. Օրբելյանի հաղորդման, Եսվաղենը Ծապուհ Ա-ի քրոջ թոռն էր: «Իսկ թագաւորն Եսվաղէն Աղուանից, որ էր առաջին Ծապհոյ Արտաշրեան՝ Պարսից թագավորի թոռն քուեր»[38]: Այստեղ, ամենայն հավանականությամբ, Սյունյաց պատմիչը շփոթում է Ծապուհ Բ-ին Ծապուհ Ա-ի հետ: Դա դժվար չէ պարզել, քանի որ IV դարի թագավորը չէր կարող լինել III դարում ապրած Ծապուհ Ա-ի քրոջ թոռը: Ուրեմն Եսվաղենը, լինելով Ծապուհ Բ-ի քրոջ թոռը, նաև Ուռնայրի թոռն էր, որովհետև, ըստ Կաղանկատվացու արդեն վկայակոչված հաղորդման, վերջինիս կինը հենց Ծապուհի քույրն էր: Սա մի կարևոր հանգամանք է, որ ընդգծում է Աղվանքում Արշակունյաց թագավորական հասրտության ժառանգական բնույթը:

Պատմագիտությունը միայն մոտավորապես կարող է ցույց տալ Եսվաղեն թագավորի գահակալության շրջանը, այն էլ Մ. Կաղանկատվացու թողած մի տեղեկության շնորհիվ: Աղվանից երկրի պատմիչը, կրկնելով իր նախորդներին՝ Մաշտոցի կողմից աղվանական այբուբենի հորինման մասին, ավելացնում է նաև, որ հայ գիտնականի այցը Աղվանք և աղվանից գրերի գյուտը տեղի է ունենում «յորում ժամանակի Թէոդոս Փոքր Յունաց էր կայսր և Վռամշապուհ Հայոց թագավոր, և Յազկերտ Պարսից արքայ և Արսվաղէն Աղուանից թագավոր»[39]: Այս մեջբերումից պարզվում է, որ Եսվաղենը, լինելով բյուզանդական կայսր Թեոդոս

---

[37] Կորյուն, ԺԸ, Խորենացի, Գ, գլ. ԾԴ: Կաղանկատվացի, Բ, գլ. Գ:

[38] Օրբելյան, գլ. ԺԶ:

[39] Կաղանկատվացի, Բ, գլ. Գ:

Փոքրի (408-458 թթ.), պարսից Հազկերտ Ա թագավորի (399-420 թթ.), հայոց թագավոր Վռամշապուհի (400/401-414 թթ.[40]) ժամանակակիցը, Աղվանքում պետք է թագավորած լիներ V դարի առաջին երկու տասնամյակում, ուստի հավանական է համարել Ն. Ակինյանի նշած 414 թ., որպես նրա թագավորության սկիզբ[41]: Պատմության համար անհայտ է նաև Աղվանից այս թագավորի մահվան թվականը, բայց և այնպես Մ. Բարխուտարյանցը այ ն համարում է 444 թ.[42] :

Որքան էլ հիշյալ թագավորի կյանքն ու գործունեությունը անհայտ են մնացել պատմությանը, բայց այն, որ նա մեծ աջակցություն ու օժանդակություն է ցույց տվել Մաշտոցին, բնութագրում են նրան որպես առաջադեմ, քաղաքական իրադրություններում ճիշտ կողմնորոշվող, պարսկական քաղաքականությանը ընդդիմադիր, խելացի քաղաքական գործիչ, որ գիտակցելով ժամանակի խառը վիճակը, Սասանյան Պարսկաստանի ազգաձուլման քաղաքականությանը հակադրել է դպրության ստեղծումը:Երկրի լուսավորության գործը եղել է նրա ներքին քաղաքականության հիմնական գիծը: Ինչպես վկայում են աղբյուրները, նա հրամայում է Աղվանքում բացել դպրոցներ, հավաքել մանուկներին, ուսուցանել տարբեր գիտություններ ու բոլորի համար ռոճիկ սահմանել: Եպիսկոպոս Երեմիայի հետ նա մեծ ոգևորությամբ լծվում է սուրբ գրքերի թարգմանության գործին: Կորյունի մի հաղորդումից երևում է, որ թագավորը լուրջ պայքար է ծավալել հեթանոսական կրոնը արմատախիլ անելու և քրիստոնեությունը երկրում արմատավորելու ուղղությամբ: Դրա համար նա նախ և առաջ հոգ է տանում, որ ժամասացության լեզուն՝ ժողովրդի մեծամասնության համար անհասկանալի հունարենը փոխարինվի նրան հասկանալի լեզվով: «Դարձյալ,- գրում է Մաշտոցի աշակերտը,- առաւել ևս երկիւղածն յաստուծոյ արքայն Աղուանից՝ միամիտ փութով հրաման տայր սատանայակիր և դիւամոլ ազգին սաստիւ՝ թափել զերծանել յունայնավար հնացելոցն և հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի»[43]: Թե որքան մեծ նշանակություն է նա տվել գրի ու լուսավորության տարածմանն Աղվանքում, ցույց է տալիս այն հանգամանքը, որ, ըստ Ստ. Օրբելյանի, Աղվանքում լուսավորչական աշխատանքները գլխավորող Անանիա Սյունեց եպիսկոպոսին, որպես երախտագիտության բարձրագույն արտահայտություն, պարգևատրում է թագավորական ոսկեգունդ գլխով ու դրոշմով, որի վրա կար պատվական խաչ[44] մետաքսյա ոսկեհյուս նուրբ հյուսվածքով երիզված:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում քոչվորական ցեղերի հարձակումները դառնում են ավելի հաճախակի: Անցնելով Կովկասյան լեռնանցքներով, նրանք հաճախ մեծ ուժերով ներխուժում են Արևելյան Կովկաս, իսկ այնտեղից էլ Պարսկաստան ու Բյուզանդիա՝ ավերի, կողոպուտի ու թալանի ենթարկելով իրենց ճանապարհին ընկած երկրները: Սասանյաններն սկզբից ևեթ լարված պայքար են ծավալում քոչվոր ցեղերի դեմ՝ գործի դնելով իրենց ռազմական, քաղաքական, տնտեսական ու գաղափարական ողջ զինանոցը: Քոչվոր հրոսակախմբերի դեմ Սասանյանների մղած պայքարում իր ստրատեգիական դիրքով առանձնահատուկ

---

40 Հայագիտության մեջ վիճաբանության առարկա է Վռամշապուհի թագավորության սկզբի հարցը, սակայն նրա վախճանի ժամանակի մասին, որ տեղի է ունեցել 414 թ., տարակարծություն չկա:

41 Ն. Ակինյան: Մովսես Դասխուրանցի ..., էջ 166:

42 Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 75:

43 Կորյուն, գլ. ԺԷ:

44 Օրբելյան, գլ. ԺՁ:

Նշանակություն է ձեռք բերում Աղվանքը: Ուստի Պարսկաստանը մեծ ուժեր է կենտրոնացնում այստեղ և քոչվորների ճանապարհը փակելու համար ձեռնարկում պաշտպանական ամրությունների կառուցման վիթխարի աշխատանքներ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առաջին պաշտպանական ամրությունը Կովկաս լեռան ու Կասպից ծովի միջև՝ այնտեղ, որտեղ լեռնաբազուկը ամենից շատ է մոտենում ծովին, կառուցվել է Հազկերտ Բ-ի (438-457 թթ.)[45] և Աղվանից այս թագավորի օրոք: Դա այն ամրությունն է, որ ընկած է այժմյան Բեշ-Բարմակ անունով լեռան և Կասպից ծովի միջև: Հայ մատենագիտության մեջ այն հայտնի է «Խորսվէմ», «Պահակ Հոնաց», «Պահակ Որմոյն» անուններով[46]: Ամրությունների կառուցման աշխատանքներն ընկած էին ժողովրդի ուսերին: Այդ մասին է Կաղանկատվացու վկայությունը. «Բազում ծախիւք թագաւորացն Պարսից մաշեալ էր զաշխարհ հիրեանց՝ գումարել ճարտարապետս և հնարելով ազգի ազգի նիւթս ի շինուածս մեծամեծս գործոյն, զոր փակեցին աղխեցին ընդ լեառն Կաւկաս և ընդ մեծ ծովն Արևելից»[47]: Միայն կառուցողական աշխատանքները չէին, որ վիթխարի ծախսեր էին պահանջում: Ամրությունները հսկում էին մեծ թվով զինվորներ, որոնց պահելու համար ահագին գումարներ էին պետք: Քանի որ վաչկատուն ցեղերի հարձակումներից տուժում էր նաև Բյուզանդական կայսրությունը, ապա Սասանյանները կարողանում են հասնել նրան, որ 422 թ. կնքում են մի պայմանագիր, որով բյուզանդացիները պարտավորվում են հոգալ լեռնանցքների պահպանման համար պահանջվող ծախսը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ լեռնանցքների պահպանման գործում ներգրավվել են հատկապես Սյունիքից հավաքագրված զինվորները, որոնք արաբական աղբյուրներում հիշատակվում են «սիսաջան», «սիյասիջիներ» անվանումներով[48]: Այսպիսի եզրակացությունը հաստատվում է նաև այն փաստով, որ Դարիալի լեռնանցքը ժամանակին հանձնված էր Վասակ Սյունեցուն՝ ի պաշտպանություն, որն էլ նա իրականացնում էր սիսականցիներից կազմված զորքերով:

Եսվաղենի թագավորության վերջին շրջանում Աղվանքը Պարսկաստանի կողմից ենթարկվում է նոր փորձությունների:

438 թ. Պարսկաստանում Վահրամ Ե թագավորին հաջորդում է որդին՝ Հազկերտ Բ-ն (438-457 թթ.): Ժամանակակիցների վկայությամբ՝ դաժան և կոպիտ մի բռնակալ, խռովությունների ու արյունահեղությունների սիրահար, որ իր թագավորության հենց սկզբից «եգիտ սատանայ իւր գործակից»[49], ու իր կատաղի բնավորության ողջ թույնը թափում էր անդրկովկասյան ժողովուրդների վրա: Հազկերտ Բ-ն թագավորության հենց առաջին տարում «դիմէ ի վերայ զօրացն

---

45 С. Т. Еремян, Сюния и оборона сасанидами кавказских проходов, Изв. АрмФАНа, 1941, N 7, с. 34; Его же, Политическая история..., с. 316.

46 Աշխարհացոյց, էջ 27, Եղիշե, էջ 43, 78, 142, Փարպեցի, գլ. ԼԵ: Սրա և մյուս պաշտպանական ամրությունների ավերակները XVII դարից սկսած գրավել են տարբեր ժամանակների ճանապարհորդների և ուսումնասիրողների ուշադրությունը: Դրանց առաջին մանրակրկիտ ուսումնասիրությունը կատարել է Ե. Պախոմովը (Е. А. Пахомов, Крупнейшие памятники сасанидского строительства в Закавказье, Проблемы истории материальной культуры, 1983, N 9-10).

47 Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԱ:

48 С. Т. Еремян, Сюния и оборона..., с. 37-38.

49 Եղիշե, էջ 6:

Յունաց, որք առ Մծբնին»[50] և «բազում գաւառս Հոռոմոց աւերեաց ապականեալ, և զամենայն եկեղեցիս հրձիգ արար, կոտեաց զաւար և զգերի և ահաբեկ արար զամենայն զօրս աշխարհին»[51]: Այս հաղթանակներից հետո բյուզանդական կայսր Թեոդոսիոս Բ Փոքրը (408-450 թթ.) ամբողջովին ենթարկվում է Հազկերտին և պատրաստակամությամբ կատարում նրա ամեն մի պահանջը[52]:

Չհանգստանալով ձեռք բերածով, Հազկերտ Բ-ն որոշում է հարձակվել քուշանների վրա՝ տերության հյուսիսային սահմանները նրանց սպառնալիքներից պաշտպանելու մտադրությամբ: Նա նպատակադրվում է արշավանքին մասնակից դարձնել նաև Մեծ Հայքի, Աղվանքի ու Վիրքի զինված ուժերին: Դրանով արյաց արքան, մի կողմից թշնամու նկատմամբ թվական գերակշռություն էր ձեռք բերում, մյուս կողմից թուլացնում էր այդ երկրների պաշտպանունակությունը՝ դյուրացնելով իր քաղաքականության անցկացումը տեղերում: Ինչպես պատմում է Եղիշեն, նա հրովարտակներ է ուղարկում հպատակ ժողովուրդներին և հատկապես Հայոց, Աղվանից ու Վրաց երկրներ՝ պահանջելով նրանցից այրուձի կազմել ու հանդիպել իրեն՝ Ապար աշխարհում[53]: Հրամանի համաձայն շուտափույթ կազմված բանակները անհապաղ գնում են Հազկերտ Բ-ին ընդառաջ:

Պատերազմը ձգձգվում է, որի ընթացքում այդ երկրները ամեն տարի նորակոչիկներ են ուղարկում Հազկերտին: Չնայած պատերազմում Հազկերտը շոշափելի առավելության չի հասնում, սակայն ապահովում է իր երկիրը քուշանների, ապա և ի դեմս խայլանդուրների՝ հյուսիսային ցեղերի ներխուժումների վտանգից՝ ձեռնամուխ լինելով որդեգրած վաղեմի ծրագրի իրականացմանը՝ քրիստոնեության վերացմանն ու անդրկովկասյան երկրներում զրադաշտականության տարածմանը: Մասնավորապես Աղվանքում այդ ուղղությամբ Հազկերտի վարած քաղաքականության մասին Կաղանկատվացին գրում է. «Ի ժամանակս Յազկերտի ամբարշտի վառէր, բորբոքէր սատանայ ի միտս նորա բառնալ զքրիստոնէութեան կրօնս: Եհաս հրաման սաստկագոյն յաշխարհս Աղուանից՝ թողուլ զհաւատս և հնազանդ կալ մոգական աղանդոյն՝ կրակապաշտութեան»[54]: Հազկերտ Բ-ն փորձում է դա անել նախ Հայաստանում, որը քրիստոնեության հիմնական պատվարն էր տարածաշրջանում: Պարսից արքունիքում այն կարծիքին էին, որ եթե Մեծ Հայքը ընդուներ զրադաշտականությունը, ապա նրա տարածումը մյուս երկրներում այլևս դժվարության չէր հանդիպի: «Յորժամ Հայք սրտիւ մեր լինին՝ Վիրք և Աղուանք այնուհետև մեր իսկ են»,- ասում է պարսից մեծ վեզիր Միհրներսեհը Հազկերտին[55]: Նպատակին հասնելու համար պարսից արքան ամենից առաջ «ի ներքոյ պահ դրանն արգելոյր զբազմութիւն այրուձիոյն Հայոց, զՎրաց և զԱղուանից և զամենեցուն՝ որ էին հաւատացեալ ի սուրբ աւետարանին Քրիստոսի»[56]: Դրանից հետո կրոնափոխության առաջարկներով հրովարտակներ է ուղարկում Հայոց, Աղվանից և Վրաց երկրները[57]: Կրոնափոխության առաջարկը, սակայն, թե՝

---

[50] Խորենացի, Գ, գլ. ԿԷ:

[51] Եղիշե, էջ 7:

[52] Նույն տեղում:

[53] Նույն տեղում, էջ 10:

[54] Կաղանկատվացի, Բ, գլ. Բ:

[55] Փարպեցի, գլ. ԻԱ:

[56] Եղիշե, էջ 19:

[57] Փարպեցի, գլ. ԻԲ:

աղվանացիների ու վրացիների և թե հայերի կողմից կտրուկ մերժվում է: Զայրացած Հազկերտը երկրորդ հրովարտակով իր մոտ է կանչում երեք երկրների նախարարներին: Նրանք ի վերջո որոշում են գնալ, բայց այն հաստատ մտադրությամբ, որ երբեք չեն համաձայնվի «ուրանալ զԱրարիչն երկնի և երկրի»[58]: «Եւ այսպէս միաբանեալք ուխտիւք և երդմամբ երեքեան աշխարհին Հայք, Վիրք, Աղուանք, գնացին ի դուռն»,- գրում է Ղ. Փարպեցին[59]: Կաղանկատվացու վկայությամբ, աղվանացիներն էլ էին «միաբան յուխտն Հայաստանեայց»[60]: Ղ. Փարպեցին հականե-հանվանե թվարկելով Տիզբոն մեկնած հայ իշխաններին, վրացիներից անվանապես հիշելով Աշուշա բդեշխին և «այլ տանուտեարք աշխարհին», Աղվանքից գնացածներից և ոչ մեկի անունը չի տալիս: Վերջիններիս չի հիշատակում նաև Եղիշեն, բայց ելնելով բոլոր հաղորդումներից, որոնց համաձայն աղվանացիները ևս հայերի ու վրացիների հետ կրում էին ճակատագրի նույն հարվածները, կարծում ենք, որ Աղվանից երկիրը եւս ուներ իր ներկայացուցիչները մահապարտության գնացող այդ պատգամավորութեան մեջ:

Պատգամավորներին անմիջապես ներկայացնում են արքայից արքային, որն էլ զայրացած նախատելով նրանց ընդդիմության համար, կրկնում է պահանջը, միաժամանակ սպառնալով չարաչար պատիժներով փոխհատուցել նրանց համառությունը: «Եթե այլազգազգոյն ինչ խորհիք,- ասում է Հազկերտը ներկաներին,- և արդարև յորում միտս և մոլար օրէնս ցայժմ կեցեալ եք և ի նմին յամառեալ պնդիք դուք, Հայք, Վիրք և Աղուանք՝ առ ոչինչ համարիմ զայնչափ ի ձէնջ օգուտս և զվաստակս, այլ կնաւ և որդւոք և ազգաւ կորուսանէմ ի միջոյ»[61]: Նախարարները անելանելի վիճակից դուրս գալու միակ միջոցը գտնում են կեղծ ուրացության մեջ[62]: Հազկերտ Բ-ն գոհությամբ է ընդունում նրանց որոշումը, անմիջապես կազմակերպում է զրադաշտական կրոնի ընդունման արարողությունը և մեծամեծ պատիվներով ու արքայական նվերներով, գյուղերի ու ագարակների շնորհումով ճանապարհում հայրենիք՝ կարգադրելով իրենց երկրներում ևս տարածել մոգականությունը: Նախարարների հետ գնում էին նաև մեծ թվով այրուձի և «բազմութիւն մոգուցն», որոնց հանձնարարված էր «յերեսին յաշխարհին կարգել զխաբեութեան դպրոցս և ուսուցանել առհասարակ զքնաւս, զարս և զկանայս, զուսմունս մոգուցն»[63]:

Այդպես նրանք պետք է վարվեին նաև Աղվանից և Վրաց երկրների հետ, որովհետև արքունիքից հրաման ունեին «որպէս Հայոց աշխարհին, նոյնպես և Վրաց և Աղուանից և Լփնաց, Աղձնեաց և Կորդուաց և Ծաւդէից և Դասն և որ այլևս ուրէք ուրէք ի ծածուկ յիշխանութեանն Պարսից ունէին զքրիստոնեութիւն»[64]: Հազկերտի հրամանով մոգական կրոնը երեք երկրներում պետք է վերջնականապես հաստատված լիներ մեկ տարվա ընթացքում՝ «մինչև ի նաւասարդէ ի նաւասարդ»[65]: Հնարավոր անպատեհությունից խուսափելու համար Հազկերտ Բ-ն Պարսկաստանում որպես պատանդներ պահում է վրաց Աշուշա բդեշխին և Վասակ

---

[58] Նույն տեղում, գլ. Իե:

[59] Նույն տեղում:

[60] Կաղանկատվացի, Բ, գլ. Բ:

[61] Փարպեցի, գլ. ԻՁ:

[62] Նույն տեղում, գլ. Իէ, Եղիշե, էջ 50:

[63] Փարպեցի, գլ. ԻԸ:

[64] Եղիշե, էջ 51:

[65] Նույն տեղում, էջ 52:

Սյունեցու որդիներին՝ Բաբիկին ու Ատրներսեհին:

Ըստ որոշ ուսումնասիրողների, պատահել է եղել նաև Աղվանից թագավոր Վաչեն[66]:

Բաժանվելով՝ նրանք ուխտում են անհրաժեշտության դեպքում օգնել միմյանց[67]:

Ուրացության լուրն ավելի շուտ է տեղ հասնում, քան նախարարները: Ծանր գույժը ցնցում է մարդկանց, համախմբում և նախապատրաստում մեծ դեպքերի:

Դրությունն ավելի վատթար էր Աղվանքում: Բացի այն զորաբանակից, որ «ի դրանէ եկին», ինչպես հայտնում են Եղիշեն ու Կաղանկատվացին[68], այստեղ էր գտնվում նաև հոնաց պատերազմից վերադարձած պարսից 10 հազարանոց բանակը[69]: Բայց դա դեռ բոլորը չէր: Պարսից արքունիքից եկած զորաբանակը իր հետ բերել էր նաև մոգերի ստվարաթիվ մի խումբ՝ 300 հոգի: «Եւ թող զերկոսեանդ,- լալահառաչ պատմում է հայերին օգնության խնդրանքով եկած Աղվանից հազարապետը, նկատի ունենալով հոնաց արշավանքից վերադարձած ու Տիզբոնից եկած բանակները,- այլևս երեք հարիւր վարդապետ ածեալ են ընդ ինքեանս»[70]: Սրանք գալով Աղվանք, «պառակտեցին զաշխարհն, զոմանս յինքեանս արկին, կամէին զեկեղեցիս ձեռնարկել, հրամանաւ արքայի ստիպեն զամենեսեան և ասեն. «եթէ կամաւ յանձն առնուք զօրէնս՝ պարգևս և պատիւ գտանեք ի նմանէ և թողութիւն հարկաց արքունի լիցի ձեզ, ապա եթէ կամաւ զայդ ոչ առնէք, հրաման ունեմք ի գիւղս և ագարակս շինել ատրուշանս և զվռամական կրակն ի ներքս դնել, և կացուցանել մոգս և մոգպետս օրէնսդիրս աշխարհիս: Եւ եթէ ստամբակէ ոք, մահուամբ սատակի. և կին և որդիք այնպիսւոյ անաշխարհիկ լինիցին»[71]:

Աղվանք ներխուժած պարսկական բանակները հաստատվում են երկրի տարբեր քաղաքներում ու բերդերում: Շատ եկեղեցիներ մոգերի ձեռքով վերածվում են ատրուշանների: Երկիրը ենթարկվում է դաժան բռնությունների ու թալանի: Բնակչության մեծ մասը՝ նախարարները և շինականները, չդիմանալով պարսիկ զինվորների ու մոգերի սանձարձակություններին, հեռանում են երկրից և ապաստան գտնում Կովկասի ծերպերում: Աղվանքին սպառնում է տնտեսական ու քաղաքական անկման վտանգը: Ծանր վիճակը ստիպում է Աղվանից երկրի հազարապետին եպիսկոպոսի հետ գնալ հայերի մոտ, պատմել նրանց այդ մասին և, նախնական ուխտի համաձայն, օգնություն խնդրել[72]: Հայերը խոստանում են օգնություն՝ միաժամանակ քաջալերելով ու հուսադրելով ետ են ուղարկում՝ պարսիկներին մի կերպ խաբելու ու եկեղեցիների անխախտությունը առժամանակ պահպանելու խորհրդով, մինչև ստեղծված դրությունից դուրս գալու ելքը գտնելը: Միակ ելքը ապստամբությունն էր՝ Բյուզանդիայի օգնությամբ: Այդ նպատակով նրանք դեսպանություն են ուղարկում Թեոդոս Բ կայսեր մոտ: Կայսրը խոստանում է օգնել, սակայն վերահաս մահը խանգարում է նրան կատարելու խոստումը: Նոր

[66] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 190.

[67] Փարպեցի, գլ. ԻԸ:

[68] Եղիշե, էջ 70, Կաղանկատվացի, Բ, գլ. Բ:

[69] Կարծիքներ կան, որ սա սահմանապահ այն զորամասն էր, որ գտնվում էր Աղվանքում և միշտ գտնվելով Նորա Պահակում (Դերբենդում), կոչված էր պահպանելու Պարսկաստանի հյուսիսային սահմանները քոչվոր ցեղերի ներխուժումներից (տե՛ս Միքայել Փորթուգալ փաշա, Եղիշեի վարդապետի վասն Վարդանայ և հայոց պատերազմին և քննադատութիւնք, Վենետիկ, 1903, էջ 29 և ծանոթ. 5 նույն էջում: Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 12):

[70] Կաղանկատվացի, Բ, գլ. Բ, Եղիշե, էջ 70:

[71] Նույն տեղում:

[72] Նույն տեղում:

կայսր Մարկիանոսը, ի ցավ ապստամբների, ոչ միայն հրաժարվում է օգնել, այլև հայտնում է Հազկերտ Բ-ին նրանց մտադրության մասին: Որքան էլ ծանր էր մերժողական պատասխանը, այնուամենայնիվ ապստամբները շարունակում են պայքարը: Սակայն, երբ պարսից արքունիքում հայտնի է դառնում ապստամբներին օգնելու բյուզանդացիների մերժումը, Սասանյանները որոշում են զենքի ուժով հնազանդեցնել ըմբոստ հպատակներին: Նրանք Փայտակարանում կուտակում են մեծաթիվ բանակ և պատրաստվում խեղդելու ժողովրդական շարժումները նախ Աղվանքում, ապա Հայաստանում: Փարպեցին գրում է. «Միհրներսեհ Արեաց հազարապետը եկեալ ի Փայտակարան քաղաք՝ գունդ կազմէ և ընդ Աղուանս արձակէ ի Հայս»[73]: Այդ մասին իմանալով, հայոց բանակում գտնվող աղվանից ազատները (հեծելազորը) շտապում են Աղվանք[74], ապա հայոց բանակն է բաժանվում երեք մասի և մի մասը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ ուղարկվում է Աղվանք՝ «ի վերայ մարզպանին Ճորայ, որ եկեալ էր աւերել զեկեղեցիսն Աղուանից»[75]: Դեռ հայկական զորքերը Աղվանք չհասած, Վասակ Սյունեցին տեղեկացնում է Ճորա մարզպան Սեբուխտին Վարդանի զորքի փոքրաթիվ լինելու մասին: Սեբուխտը կամ, ինչպես Կաղանկատվացին է նրան անվանում, Մերսեբուխտը[76], իսկ ըստ Փարպեցու՝ «զորագլուխք Պարսից»[77], շտապում է թույլ չտալ Վարդանի բանակին մտնելու Աղվանք և մեծաթիվ զորքով անցնում է Կուր գետը և ճամբար խփում Խաղխաղ քաղաքի մոտ: Սեբուխտը առանց այն էլ իր հսկա բանակը համալրել էր կովկասյան առանձին երկրների՝ Բաղասականի ու Լփինքի զորագնդերով: Հայերը և, պետք է ենթադրել, նաև աղվանացիները, չսարսելով պարսկական բանակի թվային գերակշռությունից, խիզախորեն հարձակվում են նրանց վրա ու, Եղիշեի պատկերավոր արտահայտությամբ՝ «զաջ թևն բեկեալ՝ զձախոյ կողմամբն արկեալ, սրոյ ճարակ զամենեսեան տային ընդ երեսս դաշտին և փախստական առնէին մինչև յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիւքն Լոփնաս գետոյ»[78]: Այս խիզախ հարձակումը մեծ հաջողություն է բերում հայերին: Նրանց «առ յոյժ յանդուգն յարձակմանէ բազումք այն էին, զոր գետասոյզ առնէին, քան զանկեալսն սրով ի ցամաքի: Եւ ի բազմութենէ անկելոցն յատակ ջուր գետոյն յարիւն դառնայր, և ոչ գտանէր ոք ի նոցանէ ամենևին ապրեալ և թաքուցեալ յանտառախիտ մայրիսն դաշտաց»[79]: Կովում Արշավիր Արշակունու ձեռքով սպանվում է Լփնաց թագավորի եղբայր Վուրկը: Սակայն հայերն էլ չեն խուսափում կորուստներից: Այստեղ նահատակվում է Դիմաքսյան Մուշը, և վիրավորվում Գազրիկը՝ Բաղասական թագավորների կողմից[80]: Այնուհետև, առաջին խոշոր հաղթանակից թևավորված, «զօրքն Հայոց» անցնելով ողջ Աղվանքով, մաքրում է երկիրը պարսիկներից, նրանց դուրս վռնդելով այն բոլոր բերդերից, քաղաքներից ու ամրություններից, որոնցում հաստատվել էին, քանդում ատրուշանները, սպանում մոգերին: Տեսնելով հայոց բանակի մեծ հաղթությունը, Աղվանից երկրի շատ նախարարներ ու ազատ մարդիկ,

---

[73] Փարպեցի, գլ. ԼԳ:
[74] Նույն տեղում:
[75] Եղիշե, էջ 74:
[76] Կաղանկատվացի, Բ, գլ. Բ:
[77] Փարպեցի, գլ. ԼԵ:
[78] Եղիշե, էջ 76:
[79] Նույն տեղում, Կաղանկատվացի, Բ, գլ. Բ:
[80] Եղիշե, էջ 76-77:

շինականներ, որոնք փախել-թաքնվել էին Կովկասյան լեռներում, վերադառնում են հայրենիք, համալրում հայոց բանակը և ընդգրկվում ռազմական գործողությունների մեջ: Հայ-աղվանական միացյալ բանակը, շարժվելով դեպի Ճորա դուռը «առնուին քանդէին զպահակն, և կոտորէին զզօրսն, որ ի ներքս բնակեալ էին և զդուռն տային ի ձեռն Վահանայ, որ էր յազգէ թագաւորացն Աղուանից»[81]: Այնուհետև նույն Վահանին[82] հաղթողները ուղարկում են հոների մոտ՝ վերջիններիս հետ միաբանության ուխտ կնքելու, որն էլ հաջողությամբ իրականացվում է:

Դեպքերի նման անսպասելի շրջադարձից սարսափած, պարսից արքունիքը դիմում է փորձված և իր սիրած միջոցին՝ ապստամբների մեջ երկպառակություն սերմանելով ջլատել նրանց ուժերը և առանձին-առանձին ջախջախել: Այդ պարտականությունը դրվում է Վասակ Սյունեցու վրա, որի ջանքերով էլ Սասանյաններին հաջողվում է սեպ խրել ոչ միայն հայ-աղվանական, այլև հայ-վրացական դաշնակցության մեջ: Եղիշեն գրում է, որ Վասակը «քակեաց և զմիաբանութիւն աշխարհի Վրաց, ի Հայոց, և Աղուանիցն ոչ ետ յառաջ խաղալ»[83]: Վասակ Սյունեցին պառակտչական գործունեություն է ծավալել «ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանս, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց. յղէր պնդէր, զի ասպանջականութեան ոք արժանի մի արասցէ»[84]: Միաժամանակ փորձելով կանխել իրենց դեմ բարձրացող ապստամբության ալիքը, Սասանյանները նաև որոշ զիջումների են գնում, բայց և ռազմական լուրջ պատրաստություն տեսնում՝ ստվարաթիվ բանակ կազմելով ու այն ուժեղացնելով ռազմական փղերի երամակներով: Բյուզանդիա՝ Մարկիանոս կայսեր մոտ, գաղտնի ուղարկված մի դեսպանությամբ համոզվելով, որ նա դեռ պահպանում է ապստամբներին չօգնելու իր որոշումը, նրանք հավաքագրված հսկա բանակը Միհրներսեհի գլխավորությամբ շարժում են ապստամբների վրա: Սակայն արդեն ոչինչ չէր կարող կասեցնել ապստամբության ոգով տոգորված հայերին, և նրանք ոտքի են ելնում՝ թոթափելու պարսկական լուծը: Դրա պատասխանը Ավարայրի ճակատամարտն էր, որը տեղի ունեցավ 451 թ. մայիսի 26-ին: Վասակ Սյունեցու պառակտիչ գործունեությունը տվել էր իր արդյունքը: Ավարայրի ճակատամարտում հայերը մեն-մենակ էին կանգնած հզոր Պարսկաստանի դեմ: Չնայած հայոց հետ ունեցած պայմանին, Աղվանքը չէր մասնակցում այդ ճակատամարտին, չէր մասնակցում նաև պարսից կողմից:

Ավարայրի ճակատամարտը հաղթանակ չբերեց կողմերից և ոչ մեկին. «այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան»[85]:

Ավարայրի ճակատամարտից հետո պատերազմը պարսիկների դեմ ընդունում է տեղական մեծ ու փոքր կռիվների բնույթ: Ուշացած, բայց օգնության են հասնում հոները, որոնք, իրենց հերթին, հարձակվելով Աղվանքում գտնվող պարսից զորաբանակների վրա, մեծ ջարդ են տալիս և բազմաթիվ գերիներ ու ավար տանում: Դրությունը շտկելու և իրենց ազդեցությունը Աղվանքում ու մյուս տեղերում վերահաստատելու նպատակով պարսից արքունիքը զորահրամանատար Մուշկան

[81] Եղիշե, էջ 78: Փարպեցի, գլ. ԼԵ:
[82] Մ. Բարխուտարյանցը ենթադրում է, որ այս Վահանը կարող էր լինել Վաչե Բ-ի եղբայրը (տե՛ս Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 76, ծանոթ. 2):
[83] Եղիշե, էջ 93:
[84] Նույն տեղում, էջ 94:
[85] Նույն տեղում, էջ 119:

Նյուսալավուրտի գլխավորությամբ «զորուն գումարէր յաշխարհն Աղուանից և Լփնաց և Ճղբաց և ի Հեճմատակաց և ի Թաւասպարաց և ի Խիբիովան, և յամենայն ամրականս, զորս աւերեալ էր գնդին հոնաց վասն ուխտին Հայոց»[86]: Այս արշավանքներով Սասանյանները փաստորեն վերականգնում են իրենց ազդեցությունը նշված երկրներում: Բայց և այնպես նրանք այլևս չէին կարող շարունակել իրենց նախկին քաղաքականությունը Աղվանքում և մյուս երկրներում: Ճակատամարտը հնարավորություն է տալիս Մեծ Հայքին մնալու քրիստոնեության պատվարը տարածաշրջանում և պարսից քաղաքագետներին ստիպելու փոխել իրենց քաղաքականությունը ոչ միայն Հայաստանում, այլև Աղվանքում և Վիրքում: Ղ. Փարպեցու վկայությամբ, Հազկերտ Բ-ն Վասակ Սյունու փոխարեն հայոց մարզպան նշանակված Ատրորմիզդին «յանձն առնէր հրովարտակով զմարդիկն Հայոց չընդոստուցանել, այլ սիրով նուաճել, և զպաշտօն քրիստոնէութեանն համարձակապես ունել ամենեցուն»[87]: Նույն կարգադրությունը պետք է արված լիներ նաև Աղվանքի ու Վիրքի համար, չնայած այդ մասին պարզորոշ վկայություններ չկան:

Աղվանքը կրում էր պարսից ազդեցությունը:

[86] Եղիշե, էջ 127-128:

[87] Փարպեցի, գլ. Խ:

## Դ. Վաչե Բ Աղվանից թագավորը: Հակասասանյան շարժումն Աղվանքում և նրա ճնշումը

Վաչե Բ-ի՝ Աղվանքի թագավորի մասին տեղեկություններ են հաղորդում ինչպես Եղիշեն, այնպես էլ Մ. Կաղանկատվացին, այն տարբերությամբ սակայն, որ Եղիշեն թագավորի անունը չի նշում: Չնայած պատմագրության մեջ եղած այդ որոշակի հաղորդումներին, այնուամենայնիվ Եղիշեի «Աղվանից արքան», որը Կաղանկատվացուն հայտնի չէ, թե որտեղից «Վաչե» անունով է ճանաչ, կրկին ուսումնասիրողների կողմից չի ընդունվել որպես պատմական անձնավորություն[88]: Որ ճիշտ չէ այսպիսի եզրակացությունը, ապացուցվում է հենց նրանով, որ Աղվանից թագավորի մասին Եղիշեի բերած հատվածը ունի իր ներքին տրամաբանական կապը պատմության նյութի հետ և ամբողջացնում է նկարագրվող պատմական իրադարձությունները: Այսպես, Եղիշեն խոսելով 450-451 թթ. ապստամբության պատճառով աքսորված հայ նախարարների հայրենիք վերադառնալու ձգձգումների մասին, ի թիվս խանգարիչ հանգամանքների, նշում է նաև Աղվանից այս թագավորի ապստամբությունը պարսից արքայի դեմ[89]: Այսպիսով, Վաչե Բ-ն ոչ միայն պատմական, այլև իր թագավորության ամբողջականությանն ու անկախությանը նախանձախնդիր անձնավորություն էր:

Ավանդությունը Վաչե Բ-ին ևս կապում է Սասանյանների հետ: Ըստ պատմական աղբյուրների, նա Պերոզի քրոջ որդին էր[90], այսինքն՝ Հազկերտ Բ-ի թոռը:

Վաչե Բ-ն, ըստ Մ. Բարխուտարյանցի, Աղվանքում սկսել է թագավորել 444 թ.[91], կամ, այլ խոսքով, Աղվանից գահի վրա հաջորդել է Եսվաղենին: Պետք է ասել, որ նշված թվականի հավանականությունը բավական մեծ է, քանի որ Հազկերտ Բ-ն Հայոց, Աղվանից և Վրաց երկրներին դավանափոխության հրաման է ուղարկում 447-448 թթ., իսկ Վաչեն, նրա մասին եղած հաղորդումների համաձայն, քրիստոնյա էր և Հազկերտը «արար բռնութեամբ զնա մոգ»[92]: Ուրեմն Վաչե Բ-ն մինչև 447 թ., այսինքն՝ մինչև Հազկերտ Բ-ի դավանափոխության առաջարկը, արդեն թագավորում էր Աղվանքում:

Գործելով անդրկովկասյան երկրների համար ծանր ու արհավիրքներով լի ժամանակաշրջանում, նա վարած քաղաքականությամբ համակիր էր հայոց հակասասանյան դիրքորոշմանը և ընդհանուր պայքարում հանդես էր գալիս նրա կողմից: Բայց Աղվանքում ռազմական գործողությունների ավարտից հետո, պարսից արքունիքի վարած մի կողմից որոշ զիջողական, մյուս կողմից էլ պառակտչողական քաղաքականության հետևանքով, Վաչե Բ-ն չի կարողանում մասնակցել Ավարայրի ճակատամարտին: Սակայն, ինչպես ցույց են տալիս հետագա դեպքերը, նա դեռ տարված էր պարսկական լծից ազատագրվելու գաղափարով և պատեհ առիթ էր փնտրում պայքարի դուրս գալու Սասանյանների դեմ: Առիթը ներկայանում է 457 թ. Հազկերտի մահով և նրա երկու որդիների միջև գահի համար ծագած պատերազմով: Օգտվելով նրանց զբաղվածությունից

---

[88] Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի ... , էջ 80-96:
[89] Եղիշե, էջ 119:
[90] Կաղանկատվացի, Ա, գլ. Ժ, Եղիշե, էջ 197:
[91] Մ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 75:
[92] Կաղանկատվացի, Ա, գլ. Ժ:

Աղվանքի թագավորը նախ ինքն է թողնում առերևույթ ընդունած մոգական կրոնը, ապա քրիստոնեությունը հայտարարում է վերստին պետական պաշտոնական կրոն: Նա քրիստոնեական հավատի է բերում նաև մորն ու կնոջը, որոնք «ի բնէ մոգ էին»[93]: Երկու տարի, քանի դեռ թագաժառանգ եղբայրները կռվում էին միմյանց դեմ, Աղվանքում ծաղկում է քրիստոնեությունը, եկեղեցիներում վերականգնվում է ժամասացության կարգը, զարկ տրվում լուսավորությանը: Երկիրն ապրում է անկախ ու ինքնիշխան կյանքով:

Երկու տարի կռվելուց հետո Հազկերտի որդիներից կրտսերը՝ Պերոզը, հաղթելով եղբորն ու տիրելով հոր գահին, մտահոգվում է երկրի բախտով: Նրա առաջին գործը լինում է Աղվանքի կրկին հնազանդեցումը: Այդ նպատակով նա իր բանակները շարժում է Աղվանքի վրա: Թագավոր Վաչե Բ-ն, չուզենալով դարձյալ ենթարկվել Սասանյան Իրանի ազդեցությանը, պատրաստվում է պատերազմի: Նա դաշինք է կնքում մասքութների ու տասնմեկ այլ լեռնաբնակ ցեղերի հետ և կենաց ու մահու կռիվ սկսում Պերոզի դեմ: «Իսկ արքայն Աղուանից,- գրում է Կաղանկատվացին,- ոչ կամեցաւ նուաճել անդրէն ի ծառայութիւն, այլ խռամատեաց զպահակն Չողայ և անցոյց յայն կոյս զզօրսն Մասքթաց: Միաբանեաց ընդ իւր և զմետասան թագաւորսն զլեռնորդեայսն և ընդդէմ եկաց պատերազմաւ Արեաց գնդին»[94]: Անկախության համար մղվող նոր պատերազմը սկզբում ապստամբների համար ընթանում է մեծ հաջողությամբ: Վաչեն ու նրա դաշնակիցները համատեղ ուժերով մի քանի անգամ ծանր պարտություններ են մատնում արքունի բանակներին[95]: Պերոզը, զգալով մոտալուտ պարտությունը, ցանկանում է պատերազմն ավարտել դիվանագիտական միջոցներով և երկու-երեք անգամ դիմում է Վաչեին կռիվներին վերջ տալու առաջարկով: Ամենայն հավանականությամբ այդ առաջարկներն ուղեկցվել են առատ խոստումներով: Բայց Աղվանից արքան, որ լավ ծանոթ էր պարսից արքաների նենգ քաղաքականությանը, մնում է անդրդվելի: Քաջատեղյակ լինելով հայերի հանդեպ նրանց ունեցած վարվելաձևին, նա ոչ միայն մերժում է Պերոզին, այլև «գրով և պատգամաւ յանդիմանէր զնա (Պերոզին - Հ. Ս.) վասն զուր աւերելոյն զաշխարհն Հայոց»[96]: Ցույց տալու համար, թե պարսից արքունիքը ինչպես է վարձահատույց լինում հավատարմության դիմաց, նա «յիշեցուցանէր և զմահ նախարարացն և զչարչարանս կապելոցն», «որոց փոխանակ կեանս տալոյ սիրոյն և վաստակոց զարևսն հատեք» և վերջացնում իր որոշման մեջ հաստատ մնալու հայտարարությամբ. «լավ լիցի ինձ չարչարանօք մեռանել, քան ուրացութեամբ կեալ»[97]: Տեսնելով, որ իր առաջարկները մերժվում են, Պերոզը անցնում է վճռական գործողությունների: Մարդիկ ուղարկելով խայլանդուրների երկիրը, և, հոներից կազմելով մի հսկա վարձու բանակ, Պերոզը այն Ալանաց դռներով շարժում է Վաչե Բ-ի վրա: Բանակը, որի վիթխարի քանակը ընդգծելու համար Կաղանկատվացին նմանեցնում է «համատարած ծովի»[98], համալրվում է նաև ռազմական փղերի երամակներով: Ավելի պատկերավոր է բանակի զինավառության նկարագիրը, որ միաժամանակ նաև նրա՝ տարբեր զորատեսակներից կազմված լինելու

[93] Նույն տեղում, Ա, գլ. Ժ:

[94] Նույն տեղում:

[95] Նույն տեղում:

[96] Նույն տեղում:

[97] Նույն տեղում:

[98] Նույն տեղում, Ա, գլ. ԺԱ:

վկայությունն է: Այն, ըստ Կաղանկատվացու, տարատեսակ հեթանոսներից կազմված մի խուռն բազմություն էր՝ «ահաւոր գազանօք, խառնադրոշմն նշանօք, բազմաձայն փողօք, գալարափող գոչմամբ, անտառախիտ նիզակօք, ճառագայթաւոր սուսերօք, ոսկեկմբեայ վահանօք, թանձր և ստուար մկնդօք»[99]:

Պատերազմը տևում է մի ամբողջ տարի: Պարսկական բանակի ուժգին հարվածներից ջլատվում են ապստամբների ուժերը, ցաք ու ցրիվ լինում զորքերը: Մարդկային ու նյութական կորուստները հասնում են ահավոր չափերի: Երկիրն ընկնում է տնտեսական ծանր կացության մեջ: Սակայն Աղվանքի սակավաթիվ բանակը հերոսական դիմադրություն է ցույց տալիս: Նրանց խիզախ հարձակումներից պարսկական բանակից շատերը ջախջախվում են, շատերն էլ կոտորվում տանջալից հիվանդություններից: Կաղանկատվացին գրում է. «Եւ թեպէտ պակասեցան և ցրուեցան զօրք նորա (Վաչեի - Հ. Ս.), սակայն, զնա ոչ կարացին ածել ի հաւանս, այլև հարուածք մեծամեծք հասին ի վերայ նոցա՝ էր որ կռուով և էր որ չարաչար ախտիւք ծիւրեցան[100]: Եւ յերկարել պաշարմանն՝ Մեծ Կողմն աշխարհին աւերեցաւ, այլ ոչ ոք ի նմանէն բաժանեցաւ»[101]: Այնուամենայնիվ կռվող կողմերի ուժերը խիստ անհավասար էին և ապստամբները, ի վերջո, տեղի են տալիս: Անկախության համար ծագած ապստամբությունը ճնշվում է 461թ.: Որպես ապստամբության ճնշման տարեթիվ Ֆ. Մամեդովան մատնանշում է 463 թ.[102], որը, մեր կարծիքով, ճիշտ չէ: Եղիշեի տվյալներով, Հազկերտի որդիների միջև գահակալական կռիվները, ընդվզումներն ու ապստամբությունը Աղվանքում «եղեն մինչև ի հինգերորդ ամի Պերոզի արքայից արքայի»[103]: Իսկ այս հինգ տարիները, որոնցում Եղիշեն ներառում է նաև եղբայրների վարած գահակալական կռիվները, որոնք հայտնի են, սկսվել էին 457 թվականին, կազմում են 457-461 թթ.:

Այսպիսով, հակասասանյան շարժումը Աղվանքում տևում է հինգ տարի՝ 457-461 թթ. և ճնշվում հակառակորդի գերակշիռ ուժերի շնորհիվ: Ճնշելով ապստամբությունը, Պերոզը սկսում է դաժան հաշվեհարդար տեսնել ապստամբների հետ: «Իբրև զկատաղեալ շուն» Պերոզը մոլեգնում է երկրում: Նրա հրամանով «յոյժ անթիվ անմեղաց անձինք խողխողեալ լինէին սրով չարին: Այլ և կանայք տղայովքն հանդերձ արտօսրահառաչ ձայնիւ գերեալ լինէին յօտար աշխարհի դառն ստրկութիւն»[104]: Նա նոր թափով է ձեռնամուխ լինում քրիստոնեության վերացմանը, դրա համար օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները՝ բռնություն ու դաժանություն, զրպարտանք, կապանքներ ու բանտ, նաև առատ խոստումներ ու պարգևներ: «Բազում նախարարս Հայոց, Վրաց և Աղուանից ի մոգութիւն դիւապաշտութեանն առածեալ կործանեաց,- դառնությամբ գրում է Կաղանկատվացին,- և ոմանս բռնութեամբ, և զոմանս պարգևօք մեծամեծս իշխանութիւնս ընձեռելով, և տեղիս տեղիս ատրուշանս կանգնեալ զօրանայր կրակալոյց պաշտամունք դիցն աղտեղութեան: Եւ ազգի ազգի աղանդք չարախոհ սատանայի յոլովեալ թշուառացուցանէին զհիքացեալ մարդիկ աշխահիս Աղուանից, զորս ամենապիղծն զրպարտէր ապստամբութեամբ պատճառաւ,

[99] Նույն տեղում, Ա, գլ. Ժ:

[100] Հավանաբար համաճարակային հիվանդություն է, որ բռնկվել է պարսից բանակում:

[101] Կաղանկատվացի, Ա, գլ. Ժ:

[102] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 191-192.

[103] Եղիշե, էջ 199:

[104] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԶ:

կապանօք և բանտիւք նեղէր և ակամայ ի մոգութիւն խոնարհեցուցանէր»[105]:

Ապստամբության ճնշումից հետո Պերոզը Վաչե Բ-ին հեռացնում է գահից: Չնայած պատմիչի հավաստիացումներին, թե Վաչեն ինքն է հրաժարվել, որին, ի դեպ, հավատում են Ն. Ակինյանն ու Կ. Վ. Տրեվերը[106], Պերոզն ինքն է զրկում նրան գահից, թույլ տալով վերցնել միայն իր սեփական կալվածքը, «զոր ի հօրէն էր առեալ հազար երդ»[107] և կյանքի մնացած մասը անցկացնել այնտեղ: Պատմիչը չի նշում թե որտեղ, բայց որ Վաչե Բ-ն հայրական կալվածքն ընտրել է որպես «ապաշխարության» վայր, ենթադրել է տվել, թե նա մեկնել է նախնիների երկիրը, իբր Չող[108]: Կարծիք է հայտնվել նաև, որ Վաչեն գահից հեռացվելուց հետո մեկնել է Կուրի աջափնյակում գտնվող Ավետարանոց գյուղը[109]: Սակայն, թե՛ առաջին և թե՛ երկրորդ ենթադրությունները ճիշտ չեն: Առաջին կարծիքը կազմվել է՝ ելնելով Աղվանից և Չողում նստող Մասքթաց թագավորների ենթադրյալ ազգակցական կապից, իսկ երկրորդը՝ Վաչե Բ-ին վերաբերվող վարքագրական ավանդության հիման վրա, գյուղի անվան առաջացումը կապելով Վաչե Բ-ի հետ, ամենայն հավանականությամբ նպատակ ունենալով ընդգծելու նրա ծագման աստվածային բնույթը և բարձրացնել հեղինակությունը:

Հեռացվելով գահից, Վաչեն մնացել է հայրական կալվածքում, որը, հնարավոր է, գտնվել է աղվանից արքունիքի շրջապատում՝ ոստանում, իսկ սա էլ երկրի մայրաքաղաքում՝ Կապաղակում: Հավանական է, որ նա այստեղ պահվել է որպես պատվավոր գերի:

Այսպիսով, ճնշելով Աղվանից երկրի ապստամբությունը, Պերոզ արքան հեռացնում է Աղվանից թագավոր Վաչե Բ-ին գահից: Նա դառնում է վերջին թագավորը Աղվանքում: Նրանից հետո Պերոզը, ելնելով անդրկովկասյան երկրների նկատմամբ վարած Պարսկաստանի ընդհանուր քաղաքականությունից, վերացնում է Աղվանից թագավորական իշխանությունն ու այն վերածում մարզպանության:

---

105 Նույն տեղում:

106 Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի ..., էջ 89: К. В. Тревер, Очерки по истории ... Албании, с. 214-215 :

107 Կաղանկատվացի, Ա, գլ. Ժ:

108 С. Т. Еремян, Идеология и культура Албании III-VII вв., с. 324.

109 Ս. Ջալալեանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 248:

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

# ԱՂՎԱՆԻՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ

Աղվանից մարզպանության կազմավորումը, որը երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում առաջ բերեց լուրջ որակական փոփոխություններ, տարածքային վերափոխումներ առաջացրեց նաև Արևելյան Անդրկովկասի վարչաքաղաքական բաժանումներում: Դրանից էլ ելնելով, ուսումնասիրողները նրա կազմավորումը ավելի շուտ դիտել են որպես տարածքային փոփոխություններով պայմանավորված մի գործընթաց և, անտեսելով քաղաքական, վարչական ու տնտեսական մյուս գործոնները, նրա առաջացման ժամանակն ու պատճառները որոշել են ըստ այդ փոփոխությունների: Եվ քանի որ Աղվանքը իր քաղաքական ու տնտեսական կյանքի ոլորտներով սերտորեն կապված էր Մեծ Հայքի հետ, ուստի նրանք գտնում են, որ 387 թ. արևելյան երկու խոշոր տերությունների միջև Մեծ Հայքի բաժանումից անմիջապես հետո, պարսկական մասում մարզպանություն ստեղծելիս, նրանից անջատում են Արցախ և Ուտիք նահանգները, տրվում Աղվանքին և նույն՝ 387 թ. այն ևս վերածում մարզպանության[1]: Հետագայում, երբ աղբյուրների ուսումնասիրությունից եզրակացվեց, որ մարզպանությունը Հայաստանում կազմավորվել է միայն Արշակունյաց հարստության վերացումից հետո՝ 428 թ., իսկ մինչ այդ հիշյալ նահանգները եղել են Հայաստանի կազմում, նույն ժամայն տեղաշարժվեց նաև Աղվանից մարզպանության կազմավորման տարեթիվը՝ մինչև վերը նշված թվականը[2]: Եղել են նաև կարծիքներ, որ Աղվանքը սկսել է կառավարվել մարզպաններով Վաչե Բ-ի գահից հեռանալուց հետո՝ 461[3] կամ 463 թ.[4]:

Աղվանից մարզպանության կազմավորման թվականը ճշտելիս ուսումնասիրողները ելնում են նրանից, որ հայ մատենագիտությունը հիշատակում է Սեբուխտ անունով մի պարսիկ պաշտոնյայի, նրան հորջորջելով «Ճորա մարզպան» տիտղոսով և նրա գործունեության ժամանակաշրջանը դնելով 450-451 թթ.[5]: Հիմք ընդունելով այս հիշատակությունը և ելնելով Ճորա, Չողա կամ Մասքթաց ու Աղվանից երկրների նույնացման սխալ մտայնությունից, նրանք գտնում են, որ հիշյալ Սեբուխտը Աղվանքի մարզպանն էր, հետևաբար և Աղվանից մարզպանությունը կազմավորվել էր մինչև նրա գործունեությունը, այսինքն մինչև 450 թ. և կենտրոնն էլ մինչ Պարտավը, ըստ Սեբուխտի նստավայրի, եղել է՝ Չողը:

[1] С. Т. Еремян, Политическая история Албании III-VIIвв., с. 314, Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 18:

[2] Բ. Ուլուբաբյան, Աղվանից թագավորական տան հարցի շուրջը, էջ 53, 60: Նույնի՝ Հյուսիս-արևելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչաքաղաքական վիճակի հարցի շուրջը, էջ 149, 160: Նույնի՝ Խաչենի իշխանությունը X-XIV դարերում, Երևան, 1975, էջ 57: Բ. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387-451 թթ., ԲԵՀ, 1976, էջ 89, 91: А. Акопян, Албания-Алуанк..., с. 118.

[3] В. Ф. Минорский, История Ширвана и Дербенда, с. 29; К. В. Тревер, Очерки по истории... Албании, с. 225.

[4] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 192.

[5] Б. Арутюнян, Административное деление Закавказских владений сасанидского Ирана согласно труду Елише (Кавказ и Византия, вып. 1, Ереван, 1979, с. 23); А. Акопян, Албания-Алуанк..., с. 118.

Ավելին, նրանց կարծիքով ով էլ մարզպանական կարգավիճակ մտցնել, Սասանյաններն Աղվանքում պահպանել են թագավորական իշխանությունը: Բայց նման կարծիքները ժխտվում են աղբյուրների և, առաջին հերթին, Եղիշեի ու Փարպեցու տեղեկությունների քննությամբ: Այսպես, երբ Վարդան Մամիկոնյանը, ընդառաջելով Աղվանքից եկած հազարապետի օգնության խնդրանքին, փոքրաթիվ ուժերով մեկնում է Աղվանք, Վասակը դեսպանների միջոցով հայտնում է Սեբուխտին, թե «զգուճդն երրորդ արարի ընդ Վարդանայ յԱղուանս»[6]: Եթե Սեբուխտը լիներ Աղվանքի մարզպան, ապա Վասակը հազիվ թե հարկ համարեր շեշտելու Վարդանի՝ հատկապես Աղվանք մեկնելու փաստը: Տվյալ դեպքում երկուսին էլ կբավարարեր լոկ Վարդանի արշավանքը սկսելու մասին տեղեկությունը: Եղիշեի մի ուրիշ վկայությամբ, նույն Սեբուխտը «եկեալ էր աւերել զեկեղեցիսն Աղուանից»[7], որից երևում է, որ Եղիշեն Սեբուխտի մասին խոսում է այնպես, ինչպես կխոսեր դրսից եկած օտարի մասին: Ուրեմն, անկասկած է, որ նա Աղվանքի մարզպանը չէր: Նա կարող էր լինել Հոնաց երկրից վերադարձած պարսկական այն գնդի հրամանատարը, որի մասին Աղվանից աշխարհի հազարապետը պատմում էր հայերին. «որ էր ի կողմանս աշխարհին հոնաց, դարձաւ այսրէն, եկն եմուտ յաշխարհս մեր»[8]:

Այս կարծիքը ավելի է հիմնավորվում Փարպեցու՝ նույն դեպքերի մասին պատմությամբ: «Իշխանն Սիւնեաց Վասակ վաղվաղակի գաղտ դեսպանս առնէր առ Միհրներսեհ հազարապետն Արեաց և գիր ենենգաւոր խորհուրդն (հայոց գնդերը երեք մասի բաժանելու մասին - Հ. Ս.) նամակաւ ծանուցանէր նմա: Նոյնպես արար նամակ և առ Նիխորական Սեբուխտ և առ այլ աւագս, զորս արարեալ էր Միհրներսեհի ի վերայ Հայոց»[9]: Փարպեցու վկայությունը հավաստում է, որ Սեբուխտը մեկն էր այն ավագներից, որ բերել էր Միհրներսեհը հայոց վրա հարձակվելու համար, և Աղվանքի մարզպանը լինել չէր կարող: Եվ, վերջապես, եթե նա Ձողում Աղվանից մարզպանն էր, ապա պատմիչը նրան ավելի շուտ կանվաներ Աղվանից, քան թե «Ձողա մարզպան», որովհետև մարզպանությունը կրում էր «Աղվանից» անունը: Երբեք էլ մարզպանները չեն կոչվել իրենց նստավայրի անունով՝ Աղվանքում՝ «Պարտավի մարզպան», իսկ Հայաստանում՝ «Արտաշատի» կամ «Դվինի» մարզպան: Սեբուխտը, այսպիսով, ավելի շուտ, Հոնաց երկրից վերադարձած պարսկական գնդի և Ճորա Պահակի պահպանման համար այնտեղ մշտապես պահվող այրուձիու հրամանատարն էր և, հավանական է, նաև տեղի (Ձողի ռազմական շրջանի) քաղաքացիական բարձրաստիճան իշխանավորը, որն էլ իրավունք է տալիս նրան մարզպան կոչվելու, քանի որ մարզպանները մարմնավորում էին քաղաքացիական ու զինվորական իշխանությունը: Սեբուխտի մասին աղբյուրները լռում են հենց որ հայ-աղվանից միացյալ բանակը գրավում է Ճորա Պահակը և այնտեղ զորահրամանատար նշանակում Վահանին[10]: Համոզված ենք՝ ոչ ոք չի պնդի, որ այդ փաստով Վահանը դառնում է Աղվանից մարզպան:

Այսպիսով, ճիշտ չէ ի դեմս Սեբուխտի տեսնել Աղվանքի մարզպանի,

[6] Եղիշե, էջ 75:
[7] Նույն տեղում, էջ 74:
[8] Նույն տեղում, էջ 70:
[9] Փարպեցի , գլ. ԼԴ (ընդգծ. Հ. Ս.):
[10] Եղիշե, էջ 78:

մարզպանության կազմավորումը դնել 451 թ. առաջ և ենթադրել, թե Սասանյանները մարզպանություններ կազմավորելիս մի շարք երկրներում դեռ պահպանում էին թագավորական իշխանությունը: Ասվածի հետևությամբ ճիշտ չէ նաև այն, որ Աղվանից մարզպանության կենտրոնը սկզբնական շրջանում եղել է Չողը:

Մարզպանությունների ստեղծումը Սասանյան Պարսկաստանի համար ինքնանպատակ չէր, այլ բխում էր հպատակ երկրների կառավարման-վարչական անհրաժեշտությունից և թելադրված էր ժամանակի քաղաքական-տնտեսական պահանջներով:

V դարում Սասանյան Պարսկաստանի հասարակությունն ընթանում էր ֆեոդալական ուղիով: Նոր կարգերին համապատասխան փոխվել էին նաև կառավարման հին ձևերն ու մեթոդները ինչպես բուն, այնպես էլ նվաճված երկրներում[11]: Սասանյանների առջև դրվել էին նոր, ավելի հեռուն գնացող նպատակներ. վերջնականապես իրենց ենթարկել Մեծ Հայքն ու Անդրկովկասը, դրանք դարձնել պարսից տերության մի մասը, հասնել աշխարհակալ տիրապետության: Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների շարքում առաջին քայլը մարզպանությունների ստեղծումն էր, որոնք կազմավորելիս Սասանյաններն ամենից առաջ վերացնում էին թագավորական իշխանությունները: Այնուհետև նրանք նախարարներին էին զրկում իրենց իրավունքներից, նրանց փոխարեն երկրի գլխավոր պաշտոններում նշանակելով պարսիկների, եկեղեցին և հոգևորականությանը վերածում հարկատու դասի ու, ապա անցնում ինքնուրույնությունների տարբեր դրսևորումների աստիճանական վերացմանը: Որ Սասանյանները մարզպանություններ ստեղծելիս նախ և առաջ վերացնում էին թագավորական իշխանությունները, վկայում են Մշիխա Զեխայի և Պրոկոպիոս Կեսարացու հաղորդումները: «Արևելքի բոլոր թագավորներին հաղթելով, փոխարենը (պարսիկները) իրենց ենթակա կառավարիչներ ու մարզպաններ էին նշանակել»[12]: Նույնը հաստատում է Պրոկոպիոս Կեսարացին մասնավորապես Վիրքի օրինակով: «Այն ժամանակից, երբ բարբարոսների (վրացիների - Հ. Ս.) մեծամեծները թագավոր Գուրգենի հետ միասին որոշեցին ապստամբություն բարձրացնել ..., պարսիկները թույլ չէին տալիս, որ իրենց թագավոր կարգեն»[13]: Պատմիչի հիշատակած այս ապստամբությունը տեղի է ունեցել 523 թ., որի ճնշումից հետո վերացվում է թագավորությունը Քարթլիում և երկիրը սկսում է կառավարվել մարզպաններով[14]:

Սասանյան Պարսկաստանի այդօրինակ քաղաքականությունն է՛լ ավելի ակնառու է երևում Հայաստանի օրինակով, ուր միայն 428 թ., Մեծ Հայքում Արշակունյաց թագավորության վերացումից հետո, ստեղծվեց մարզպանություն: 457-461/462 թթ. ապստամբությունը ճնշելուց հետո, Պերոզը, որն այլևս վստահ չէր, թե այն չի կրկնվելու և հակասասանյան բոլոր հնարավոր շարժումները մեկընդմիշտ վերջ տալու ձգտումով, հեռացնում է Աղվանից թագավորին գահից և Աղվանքը վերածում մարզպանության: Այսպիսի եզրակացությունը, բացի

[11] Ուսումնասիրվող ժամանակաշրջանի Սասանյան Պարսկաստանի հասարակական ու քաղաքական կառուցվածքի մասին մանրամասն տե՛ս М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, с. 278-292.

[12] Մշիխա Զեխա, Ադիաբենի եկեղեցու պատմությունը, Ասորական աղբյուրներ, էջ 84:

[13] Պրոկոպիոս Կեսարացի, Պատերազմների մասին, էջ 154:

[14] История Грузии, т. I, с. 110.

մարզպանությունների ստեղծման Սասանյանների սկզբունքից ելնող տրամաբանական հիմքից, ունի նաև մատենագիտական հիմք: Մ. Կաղանկատվացին հաղորդում է, թե ինչպես Վաչե Բ-ին գահից հեռացնելուց հետո «ամենաչար և ամբարիշտ թագաւորն պարսից (Պերոզը - Հ. Ս.) զայրագնեալ մոլեգնէր իբրև զկատաղեալ շուն՝ *կամէր բառնալ զամենայն թագաւորութիւնս աշխարհի, միանգամայն շարժել եկեղեցիս, բառնալ զկարգ քրիստոնէութեան և հաստատել, կարգել յիւրում իշխանութեան զմոլեգնութեան դիւապաշտութիւն»*[15]: Վկայակոչված հատվածի ընդգծված տողերը ցույց են տալիս Աղվանքի քաղաքական կյանքում Պերոզի մտցրած նոր վարչական փոփոխությունները: «Կամէր բառնալ զամենայն թագաւորութիւնս» արտահայտությունը չէր նշանակում սոսկ թագավորական իշխանության, այլ ընդհանրապես այն ամենի վերացում, ինչը պայմանավորում էր երկրում նրա գոյությունը: Իսկ թագավորության վերացումը նշանակում էր նոր քաղաքական ռեժիմ, երկրում նոր վարչակարգի ստեղծում: Այդպիսին ուսումնասիրվող ժամանակաշրջանում կարող էր լինել միայն ու միայն մարզպանական վարչակարգը: Այս հարցում առանձնակի կարևորություն ունի գահից հեռացվելիս միայն հազար երդ, որպես հայրական ժառանգություն, Վաչե Բ-ին տալու մասին Մ. կաղանկատվացու վկայությունը: «Իսկ սա (Վաչեն - Հ. Ս.),- գրում է հայ պատմիչը,- հաճեցաւ միայն զսեպհականն առնուլ բաժին իւր, զոր ի հօրէն էր առեալ հազար երդ»[16]: Ինչպես երևում է Վաչե Բ-ին թույլատրվել էր վերցնել միայն հորից ժառանգություն ստացածը: Նրա իրավասությունից դուրս էին մնացել արքունական կալվածքները, որոնք անցել էին հաղթողին, տվյալ դեպքում Պարսկաստանին, իսկ սա նշանակում է, որ Պարսկաստանը յուրացրել էր Աղվանից արքունիքի կալվածքները, մի միջոցառում, որ կիրառում էին պարսիկները մարզպանություններ ստեղծելիս:

Այսպիսով, Աղվանից մարզպանությունը ստեղծվել է Վաչե Բ-ին գահից հեռացնելուց և թագավորական իշխանության վերացումից հետո, այն է՝ 461 թվականին:

Ընդունելով, որ Աղվանից մարզպանությունը կազմավորվել է 461 թ., կարող է ծագել մի շատ բնական հարց: Ինչո՞ւ Աղվանքում այն ավելի ուշ է ստեղծվում, քան, ասենք, Մեծ Հայքում: Արդեն ասվել է, որ Պարսկաստանը մարզպանություններ էր հիմնում Անդրկովկասում՝ լիակատար տիրապետության հասնելու նպատակով: Պարզ է, որ այդպիսի քաղաքականություն պարսից արքունիքը պետք է անցկացներ առաջին հերթին, իրենց համար ավելի հարմար օգտավետ և կարևոր երկրում: Դրանից հետո նույն քաղաքականությունը մյուս երկրներում արդեն դժվարությունների չէր հանդիպի: Պարսից թագավորության համար նման մի երկիր էր Մեծ Հայքը: Ղ. Փարպեցին մեկից ավարի վկայություններ ունի, Աղվանքի ու Վիրքի համեմատությամբ, Հայոց երկրի դերի, հեղինակության ու ազդեցության վերաբերյալ՝ պարսից արքունիքի ունեցած բարձր կարծիքի մասին[17]: Հետևաբար, Սասանյանները պետք է որ Անդրկովկասը վերջնականապես իրենց ենթարկելու առաջին քայլը անեին նախ Հայաստանը ենթարկելով: Ուստի, այստեղ էլ մարզպանությունը ավելի շուտ է կազմավորվում, քան մյուս երկրներում:

---

[15] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԶ (ընդգծ. - Հ. Ս.):
[16] Նույն տեղում, Ա, գլ. Ժ:
[17] Փարպեցի, գլ. ԻԱ, ԻԲ, ՁԸ:

Ծուտով Պարսկաստանի համար կարևորվում է նաև Աղվանքի դերը: Կովկասյան քոչվոր լեռնականների հաճախակի ներխուժումները վտանգի տակ են դնում ինչպես Սասանյանների՝ Անդրկովկասում ամուր կերպով հաստատվելու ծրագրի իրականացումը, այնպես էլ անմիջական սպառնալիք էին ստեղծում սեփական երկրի անվտանգության համար: Հյուսիսային վաչկատուն ցեղերի ներխուժումը Անդրկովկաս կանխելու, ինչպես նաև Կովկասյան լեռնանցքներին տիրելու համար Սասանյանները Աղվանքը ևս վերածում են մարզպանության, որի մարզպանը, կրոնով ու գաղափարով հավատարիմ Պարսկաստանին, պարսից իշխանության քաղաքականության իրագործողը պետք է լիներ Աղվանքում:

Մարզպանության կազմավորմամբ վերանում է թագավորական իշխանությունն Աղվանքում: Այստեղ հաստատվում է մարզպանական վարչակարգ:

Աղվանից մարզպանության ստեղծումը, սակայն, միայն քաղաքական փոփոխություններ չի առաջացնում: Այն իր հետ բերում է նաև տարածքային փոփոխություններ: Սասանյանները Մեծ Հայքից անջատում և Աղվանքին են միացնում հայոց եզերական նահանգներ Ուտիքն ու Արցախը, ձևափոխությունների ենթարկում երկու երկրների աշխարհագրական տարածքը: Գրում է «Աշխարհացոյցը». «աշխարհ Ալբանիա, այսինքն Աղուանք, յելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչև ցՀայոց սահմանս առ Կուր գետով ... աստի ցԿուր զամենայն սահմանս հանեալ է ի Հայոց»[18]: Մի փոքր հետո նշում է նաև, որ «Հայաստանից հանված» երկրամասը Ուտիքն ու Արցախն են իրենց գավառներով: «Արցախ յերի կալով Սիւնեաց. ունի գաւառս երկոտասան. զՄիւսն Հաբանդ, զՎակունիս, զԲերձոր, զՄեծիրանս, Մեծկուենս, զՀարճլանս, զՄուխանս, զՊիանս, զՊածկան, զՍիսականիս, զԿոտակ, զՔուստիփառէնս, զԿոխտ, յորում լինի քարախունկ. զայս ամենայն Աղուանք ունին հանեալ ի Հայոց» և «Ուտի առ մտից կայ Երասխայ ընդ մէջ Արցախայ եւ Կուր գետոյ. ունի գաւառս զօր Աղուանք ունին՝ եւթն՝. Արանռոտ, Տրի, Ռոտպացեան, Աղուե, Տուչքատակ, Գարդման, Ծիկաշեն, Ուտի Առանձնակ, յորում Պարտաւ քաղաք»[19]: Հաղորդելով այս մասին՝ «Աշխարհացոյցի» հեղինակը, ցավոք, չի հայտնում նշված փոփոխությունների գոնե մոտավոր ժամանակը: Ուստի ուսումնասիրողները, ցանկանալով որոշել այն, ինչպես ասացինք, հայոց նշված նահանգների անջատումն ու Աղվանքին միացումը կապում են Մեծ Հայքի բաժանման, կամ Արշակունյաց հարստության վերացման հետ, կամ էլ գտնում, որ այն կարող էր տեղի ունեցած լինել «450-451 թթ. հայերի՝ պարսկական տիրապետության դեմ բարձրացրած ապստամբության պարտությունից հետո կամ անմիջապես 451 թ., կամ էլ 451-481 թթ. ընթացքում»[20]: Եղած կարծիքներից մեկի համաձայն էլ Ուտիքն ու Արցախը Աղվանքին միացվել են առանձին-առանձին, Ուտիքը՝ 428 թ., իսկ Արցախը՝ 451 թ հետո[21]: Այս հարցում իրենց հատուկ դիրքորոշումն ունեն ադրբեջանցի ուսումնասիրողները, որոնք խնդրո առարկա նահանգները համարում են սկզբից ևեթ Աղվանքի կազմում գտնվող հիմնական մարզեր[22] և դրանով, փաստորեն, նրանց անջատման կամ միացման հարցն ինքնըստինքյան դուրս թողնում: Այսպես վարվելով, նրանք անտեսում են

[18] Աշխարհացոյց, էջ 28-29:

[19] Նույն տեղում, էջ 33:

[20] Բ. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը, էջ 92:

[21] А. Акопян, Албания-Алуанк..., с. 113-114.

[22] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 101, 104.

սկզբնաղբյուրների (Փավստոս Բուզանդ, Անանիա Շիրակացի) հաղորդումները կամ էլ, լավագույն դեպքում, հայտարարում, թե դրանք չեն համապատասխանում Աղվանքի ու Հայաստանի անտիկ ու վաղ միջնադարյան շրջանների պատմական իրականությանը[23]: Բայց ինչպես էլ նրանք մոտենան հարցին, որքան էլ ձգտեն անտեսել պատմական աղբյուրների հաղորդումները, կամ նրանց անհամապատասխանության մասին հայտարարություններով փորձեն ազատվել դրանցից, փաստերը համառորեն վկայում են, որ Ուտիքն ու Արցախը լինելով հայոց նահանգներ, որոշակի ժամանակաշրջանում կտրվել են մայր երկրից և տրվել Աղվանքին: Պատմական աղբյուրների հաղորդումների քննությունից պարզվում է, որ Արևելյան Անդրկովկասի պատմական աշխարհագրությունը խաթարած այդ իրադարձությունը կարող էր տեղի ունեցած լինել 451 թ. հայոց ապստամբությունից հետո, քանի որ Եղիշեն ունի հաղորդումներ, որոնց համաձայն Ուտիքն ու Արցախը մինչև 451թ. ու դրանից հետո էլ դեռ գտնվում էին հայոց կազմում: Պատմելով մինչ հայոց ապստամբությունը Վասակ Սյունեցու երկպառակտչական գործունեության մասին, պատմիչը գրում է, որ նա իր գործունեությունը ծավալել էր «յամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն, և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանս, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց»[24], որից պարզ երևում է, որ Արցախն ու Աղվանքը դեռևս մի ընդհանուր վարչական միավոր չէին կազմում, և Վասակը նրանց առանձին-առանձին էր դիմում: Ավարայրի ճակատամարտից հետո ընկած դեպքերի մասին խոսելով, Եղիշեն գրում է, որ շատ հայ փախստականներ էլ ապաստան են գտնում Արցախի անտառներում[25], որ նույնպես նշանակում է, թե այն դեռ իրենց հայրենիքի մի մասն էր կազմում: Ուրեմն կարելի է եզրակացնել, որ Արցախն ու Ուտիքը Հայաստանից անջատվել և Աղվանքին էին միացվել ավելի ուշ ժամանակներում, այլ խոշոր քաղաքական իրադարձությունների ժամանակ: Ավարայրի ճակատամարտից հետո այդպիսի խոշոր իրադարձությունը Աղվանից մարզպանության կազմավորումն էր, որը, բացի քաղաքականից, Սասանյանների համար ուներ նաև տնտեսական նշանակություն, որովհետև նրանք մարզպանություններ կազմավորելիս, հարկահանության համակարգի կենտրոնացման նպատակով[26], տարբեր վարչաքաղաքական կացության երկրներից ստեղծում էին նաև մեկ միասնական, հարկատու միավոր: Ուստի Սասանյան արքունիքը Աղվանից մարզպանության կազմավորման ժամանակ հաշվի էր առնելու պետության համար կարևոր այդ պայմանը ևս և նոր վարչաքաղաքական կազմավորումը միաժամանակ հարկային միավորի վերածելու նպատակով բուն Աղվանքին կցելու էին նրան սահմանակից երկրներ և այդպիսով ստեղծելու իրենց անհրաժեշտ վարչական հարկային միավորը: Աղվանքի համար այդպիսի սահմանակից մարզեր էին Ուտիքն ու Արցախը, որոնք էլ մարզպանության կազմավորման ժամանակ կցվում են Աղվանքին:

Այսպիսով, հայոց նահանգների համար բախտորոշ այս փոփոխությունը կարող էր տեղի ունենալ Աղվանից մարզպանության կազմավորման ժամանակ՝ 461 թ., քանի որ մարզպանության կազմավորման ակտը քաղաքական, տնտեսական ու

---

[23] Նույն տեղում, էջ 53 և հաջ.:

[24] Եղիշե, էջ 94:

[25] Նույն տեղում:

[26] Ինչպես արդեն նկատվել է պատմագրության մեջ, հարկահանության համակարգի կենտրոնացումն էլ տարբերվում էր անդրկովկասյան երկրները եվրոպական պետությունների համապատասխան համակարգերից (տե՛ս А. П. Новосельцев, Генезис феодализма, с. 231).

վարչական ձեռնարկում էր և պահանջում բոլոր հարցերի միաժամանակյա լուծում[27]: Անհրաժեշտ է հատկապես ընդգծել, որ հայոց նշված նահանգները սոսկ կցվում կամ միացվում են Աղվանքին և ոչ թե «վերադարձվում են» կամ «նվաճվում» նրա թագավորների կողմից, կամ էլ, որն ավելի սխալ է, «վերամիավորվում են» նրա հետ[28]: Ըստ Ֆ. Մամեդովայի, Ուտիքը, Արցախն ու Գուգարքը 387 թ. Հայաստանի բաժանումից հետո «իրավաքանորեն կրկին ամրացվում են այն երկրների հետ, որոնց կազմի մեջ մտնում էին հնուց ի վեր»[29]: Այսպիսի կարծիքները, դեպքերի ոչ ճիշտ գնահատման արդյունք են և, ինչպես տեսանք, հակասում են Աղվանքի ու Հայաստանի պատմության իրական ընթացքը լուսաբանող հայկական աղբյուրների հաղորդումներին:

Այսպիսով, հպատակ երկրների նկատմամբ Սասանյան Պարսկաստանի վարած նվաճողական քաղաքականության հետևանքով, Անդրկովկասում 461 թ. ստեղծվում է մի նոր վարչաքաղաքական միավոր՝ Աղվանից մարզպանությունը, որն ընդգրկում էր «բուն աշխարհն Աղուանից, որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն»[30] և հայկական Ուտիք ու Արցախ նահանգները: Քաղաքական ու վարչական փոփոխությունների հետևանքով առաջացած այս նոր միավորի սահմանները հյուսիսում կազմում էին նույն Կերաունյան լեռները, արևելքում՝ Կասպից ծովը, արևմուտքում՝ Իբերիան, իսկ հարավում, Ուտիքի ու Արցախի միացման շնորհիվ, արդեն Արաքս գետը: Նոր ձևավորված ամբողջ տարածքը կրում էր մարզպանության ամենամեծ ու հիմնական միավորի՝ «Աղուանք» անունը, որն այժմ ստանում է նոր իմաստ ու դառնում ողջ տարածքի, այդ թվում և հայոց Ուտիք ու Արցախ նահանգների ընդհանուր աշխարհագրական անվանումը:

Այսպես, Ուտիքի ու Արցախի վրա տարածվում է «Աղուանք» անունը, որպես նույնանուն մարզպանության բաղկացուցիչ մարզեր, իսկ Արաքսը դառնում է սահման Հայաստանի և Աղվանից մարզպանության միջև:

Աղվանից մարզպանության կենտրոնն է դառնում Պարտավ քաղաքը, որն էլ վերակառուցվում է ու հարմարեցվում Պերոզի կողմից՝ այդ նպատակի համար: Եվ հայ պատմիչի հաղորդումը, թե «ի հրամանէ Պերոզի՝ պարսից արքայի, շինեցաւ ի Վաչէ Պերոզապատ մեծ քաղաքն, որ այժմ կոչի Պարտաւ»,[31] ոչ թե պետք է դիտել որպես քաղաքի հիմնադրում, այլ ավելի շուտ նրա հարմարեցում մարզպանության մայրաքաղաքի նոր դերին[32]: Այսուհետև այստեղ էին նստում Աղվանից մարզպանները:

Աղվանքի առաջին մարզպանը, ըստ երևույթին, Ղ. Փարպեցու մոտ

---

[27] Միևնույն ժամանակ Սասանյանները Մեծ Հայքից անջատում և Ատրպատականին ու Իբերիային են միացնում Փայտակարանն ու Գուգարքը, որ Հայաստանը թուլացնելու, նախ այնտեղ, ապա և ամբողջ Անդրկովկասում ամուր կերպով հաստատվելու նպատակ էր հետապնդում: Չնայած Շիրակացու այն պարզորոշ հաղորդմանը, թե Փայտակարանը միացվել է Ատրպատականին («Աշխարհացոյց», էջ 33), այնուամենայնիվ ադրբեջանցի ուսումնասիրողները պնդում են, թե Փայտակարանը IV դարից կամ նրա երկրորդ կեսից եղել է Աղվանքի մարզերից մեկը (տե՛ս Т. Мамедов, Кавказская Албания в IV-VII вв., с. 13; Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 97-98).

[28] К. В. Тревер, Очерки по истории ... Албании, с. 58, 201; J. Marquart, Eranšahr, էջ 118:

[29] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 127.

[30] Աշխարհացոյց, էջ 29:

[31] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԵ:

[32] Աղբյուրները հաճախ են պարսից արքաներին քաղաքաշինական գործունեություն վերագրում այնտեղ, որտեղ կատարվել են սոսկ վերակառուցման աշխատանքներ:

հիշատակվող Զարմիհր Հազարավուխտն էր: Այդպես ենք կարծում, որովհետև այն ժամանակ, երբ Հայաստանի մարզպան է հիշատակվում Ատրվշնասպ Յոզմանդյանը, Հազարավուխտը հորջորջում է Աղվանքում գտնվող պարսից զորքերի զորագլուխ[33]: Իսկ եթե հաշվի առնենք, որ մարզպանները, բացի քաղաքացիական իշխանությունից, ունեին նաև զինվորական իշխանություն, ինչպես դա երևում է Վահան Մամիկոնյանին տրված «սպարապետն հայոց և մարզպան», «զորաւարն Հայոց և մարզպան»[34] տիտղոսներից և որ զորագլուխը նաև երկրի մարզպանն էր[35], ապա ավելի քան հավանական պիտի համարել Հազարավուխտի՝ Աղվանքի մարզպան լինելը:

Նոր մարզպանության ստեղծումով ավելի ամուր զգալով Անդրկովկասում՝ Սասանյան Պարսկաստանը եռանդագին շարունակում է այն վերջնականապես իրեն ենթարկելու գործը, ձգտում հաստատուն կերպով ամրանալ Կասպից ծովի ողջ արևմտյան ափագծի շրջանում և լուրջ նախապատրաստական աշխատանքներ է տանում հյուսիսային վաչկատուն ցեղերի ներխուժումը կանխելու համար: Ուսումնասիրվող շրջանում առանձնապես վտանգավոր էին պատմության ասպարեզում հայտնված խազարները, որոնք ժամանակավորապես տիրելով ափագծի երկարությամբ ընկած ազգագավառներին, իրենց ասպատակություններով անհանգիստ ու խռովահույզ վիճակ էին ստեղծում Սասանյանների տիրապետության համար: Ուստի Կավատ Ա (488-531 թթ.) և Խոսրով Ա Անուշիրվան (531-578 թթ.) արյաց արքաները իրենց նվաճումների սլաքն ուղղում են դեպի հյուսիս և շուտով նվաճում Կասպից ծովի արևմտյան ափին գտնվող Խսրվանը, Ծրվանը, Չողը, Ղեկաց և Թավասպարաց ազգագավառները, ընդհուպ մինչև Դերբենդ, ապա նաև այն իր շրջապատով[36]: Նվաճված ողջ տարածությունները Սասանյանները միավորում էին Աղվանից մարզպանությանը՝ դեպի հյուսիս շարժվելուն զուգընթաց կառուցելով նաև պաշտպանական ամրություններ[37]: Նման տարածքային աճից հետո Աղվանից մարզպանությունն ընդարձակվում է արդեն հյուսիսում՝ հասնելով մինչև Դերբենդի ամրությունները:

Ավարտուն ու վերջնական տեսք ստացած Աղվանից մարզպանությունն, այսպիսով, ընդգրկում է «բուն աշխարհն Աղուանից», Հայաստանից անջատված Ուտիք, Արցախ նահանգները և Կասպից ծովի արևմտյան ափին ընկած Խսրվան, Ծրվան, Չող, Ղեկաց ու Թավասպարաց ազգագավառները: Այս ամբողջ տարածքը, հասկանալի է, դարձյալ կրելու էր նույն «Աղուանք» անվանումը: Բայց տեղին ու անհրաժեշտ է ավելացնել, որ, չնայած նշված բոլոր նահանգներն ու գավառները կազմում էին մեկ վարչական միավոր՝ Աղվանից մարզպանություն, ընդհանուր կառավարչի՝ մարզպանի գլխավորությամբ, սակայն, նրանց միջև ոչ մի օրգանական կապ չկար, և նրանք ավելի շուտ միմյանցից անկախ, ներքին ինքնավարությամբ, ինքնուրույն քաղաքական միավորներ էին, քան կենտրոնացված, ուժեղ մի վարչական կազմավորման բաղկացուցիչ մարզեր: Ի դեպ, դրան մեծապես նպաստում էին ինչպես ավատատիրական հասարակարգին

[33] Փարպեցի, գլ. ԿԶ:
[34] Նույն տեղում, գլ. Դ:
[35] Նույն տեղում, գլ. ՀԹ, ՁԸ:
[36] Баладзори, Книга завоевания стран, с. 6; Յակուտ ալ-Համավի, Աշխարհագրական բառգիրք (Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 17):
[37] С. Т. Еремян, Политическая история Албании III-VIIвв., с. 316.

հատուկ տնտեսկան ու քաղաքական մասնատվածությունը, այնպես էլ իրենք՝ պարսից արքաները, յուրաքանչյուր մարզի վրա առանձին կառավարիչ նշանակելու ու նրանց տիտղոսներ շնորհելու իրենց քաղաքկանությամբ[38]:

Մարզպանությունների կազմավորմամբ ամբողջովին ենթարկվելով Սասանյան Պարսկաստանին, վերոհիշյալ երկրները մեկ անգամ ևս ենթարկվում են նրա անսանձ ուժի բռնությանը: Դա այս անգամ դրսևորվում է նվաճված ու ենթակա երկրների ավելի ու ավելի կենտրոնացմամբ: Ելնելով վարչաքաղաքական կառավարման նպատակահարմարությունից, Սասանյանները նոր բաժանումների են ենթարկում իրենց ողջ երկիրը, ըստ կողմերի բաժանելով չորս մասի՝ քուստակների: Այսպիսի քուստակներից մեկում հյուսիսայինում «որ է կողմն Կավկասու լերանց» և որի համար էլ ստանում է «Քուստ ի Կապկոհ» անունը, ընդգրկվում են «աշխարհ երեքտասան, Ատրպատական, Արմն (որ է) Հայք, Վարջան՝ որ է Վիրք, Ռան՝ որ է Աղուանք, Բալասական, Սիսական, Առէ, Գեղան, Շանճան, Դլմունք, Դմբավանդ, Տապրստան, Ռւան, Ամլ ...»[39]: Քուստակների ստեղծումով, որոնց գլուխ կանգնած էին պատգոսպաններն, ամբողջանում էր պարսից քաղաքականությունը Մեծ Հայքում, Աղվանքում, Վիրքում և դրանց հարևան մանր երկրներում:

Այսպիսով, Աղվանից մարզպանության կազմավորման ողջ գործընթացն ընդգրկել է երկարատև մի ժամանակամիջոց և ընթացել երկու փուլով.

1. 461 թ. Աղվանքի թագավոր Վաչե Բ-ին հեռացնելուց հետո, մինչև Պարսկաստանի նվաճումները Կասպից ծովի արևմտյան ափին:

2. Այդ նվաճումներից մինչև մերձափնյա երկրների վերջնական ենթարկումն ու Աղվանից մարզպանությանը միացումը, ժամանակագրական առումով մինչև VI դարի երրորդ քառորդը:

Առաջին փուլում, սոցիալ-տնտեսական ու քաղաքական փոփոխությունների հետ մեկտեղ, նրանց կցվում են հայոց Ուտիք ու Արցախ նահանգները, մարզպանության սահմանները հարավում ընդարձակելով ու հասցնելով մինչև Արաքս գետը, իսկ երկրորդ փուլում ընդարձակումը ընթանում է արդեն հյուսիսում՝ ներառելով Կերանսյան լեռներից հյուսիս ընկած ազգագավառները, մինչև Դերբենդ:

Աղվանից մարզպանությունը էթնիկական կազմով միատարր, մի ամբողջական կենտրոնացված քաղաքական կազմավորում չէր: Այն ձևավորող բաղադրիչ մարզերն ու ազգագավառները, շարունակելով իրենց գոյությունը որպես ինքնուրույն վարչական միավորներ, պայմանավորում են ողջ մարզպանության էթնիկական խայտաբղետությունը: Նախկին բուն Աղվանքի առանց այն էլ ոչ միատարր ազգաբնակչության կողքին ապրում էին այնքան տարբեր ժողովուրդներ ու էթնիկական խմբեր, որքան մարզեր ու ազգագավառներ էին մտնում մարզպանության կազմի մեջ:

---

[38] Баладзори, Книга завоевания стран, с. 7.

[39] Աշխարհացոյց, էջ 40:

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

# ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ԱՂՎԱՆՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
(V դարի երկրորդ կես - VI դար)

### Ա. Ազատագրական շարժումները Անդրկովկասում: Վաչագան Գ Բարեպաշտ

461 թ. ապստամբության ճնշումից հետո Պերոզ արքան արևելյան բռնակալին հատուկ դաժանությամբ սկսում է հաշվեհարդար տեսնել ապստամբների հետ: Նա «զայրագնեալ մոլեգնէր իբրև զկատաղեալ շուն» և «արիւնք ... հեղոյր յերկիր»[1]: Արյաց արքայի դաժանությանը զոհ էին գնում ոչ միայն ապստամբության անմիջական մասնակիցները, այլև «յոյժ անթիւ անմեղաց անձինք խողխողեալ լինէին սրով չարին»[2], որոնց թվում նաև բազում կանայք ու երեխաներ: Երկրի շատ բնակիչներ գերեվարվում և տարվում են օտար երկրներ, վաճառքի հանվում: Նորից առաջ է քաշվում հավատափոխության հարցը, կրկնապատկվում են բռնությունները: Բազմաթիվ նախարարներ ենթարկվում են անլուր չարչարանքների: Նրանցից շատերին զրկելով ժառանգական իրավունքներից ու կալվածքներից, ոմանց էլ «կապանօք և բանտիւք» նեղելով՝ Պերոզը «ակամա ի մոգութիւն խոնարհեցուցանէր»[3]: Երկրում լայնորեն տարածվում են զրադաշտականությունն ու կրոնական զանազան աղանդներ: Ինչպես Աղվանքում, այնպես էլ անդրկովկասյան մյուս երկրներում, Պերոզի վարած քաղաքականության մասին Մ. Կաղանկատվացին գրում է. «Բազում նախարարս Հայոց, Վրաց և Աղուանից, ի մոգութիւն դիւապաշտութեան առածեալ կործանեաց՝ և զոմանս բռնութեամբ, և զոմանս պարգևօք մեծամեծս իշխանութիւնս ընձեռելով և ի տեղիս տեղիս ատրուշանս կանգնեալ՝ զօրանայր կրակալոյց պաշտամունք դիցն աղտեղութեան: եվ ազգի ազգի աղանդք չարախոհն սատանայի յոլովեալ թշուառացուցանէին զհիքացեալ մարդիկ աշխարհին Աղուանից»[4]: Այս ամենին ավելանում է նաև հեփթաղների դեմ մղվող պատերազմի ողջ ծանրությունը: Երկարատև պատերազմի համար տարեցտարի ավելացող հարկերն ու զորակոչերը ծանր վիճակ էին ստեղծում Հայաստանում և նրան հարևան երկրներում: Ողջ երկրամասը տնքում էր խուլ դժգոհությունից և պատեհ առիթ փնտրում ազատագրական պայքարի դուրս գալու: Առիթը շուտով ներկայանում է, երբ Պերոզը, հեփթաղներից կրած իր նախորդ պարտությունների (459 և 478 թթ.) ու գերության[5] խայտառակության համար վրեժխնդիր լինելու ցանկությամբ տարված, ամբողջ երկրից հավաքելով պարսկական ու դաշնակից զորքերը[6], շարժվում է հեփթաղների վրա: Օգտվելով Պերոզի բացակայությունից, Մեծ Հայքը, Աղվանքն

---

[1] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԶ:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[5] Ըստ ասորի պամիչ Յոշվա Ստիլիտի, հեփթաղների դեմ մղած կռիվներից մեկում գերի է ընկնում Պերոզը և զոռզաքար այնքան փրկագին է խոստանում ազատության համար, որ այդքան գումար չգտնելով պետական գանձարանում, հարկադրված որդուն՝ Կավատին թողնում է որպես պատանդ (տե՛ս Ժամանակագրություն, 10):

[6] Պրոկոպիոս Կեսարացի, Պատերազմների մասին, I, 4:

ու Վիրքը ոտքի են կանգնում՝ թոթափելու պարսկական լուծը: Սեբեոսը, որի վկայությունն ամբողջացնում է նաև Պերոզի՝ Անդրկովկասում վարած քաղաքականության՝ Կաղանկատվացու նկարագրությունը, ապստամբության դրդապատճառները տեսնում է հենց այդ քաղաքականության մեջ. «Եւ եղեւ յամս Պերոզի արքայի Պարսից բարձումն ամենայն իշխանութեանցն և կարգաց և ազգաց քրիստոնեութեան, և այնպիսի վտանգ նեղութեան հալածանաց և քամահանաց ի վերայ հասեալ իշխանաց, մինչ զի ի բաց ընկեցին յինքեանց զլուծն ծառայութեան»[7]:

Ազատագրական շարժումները տարածաշրջանում, ինչպես եզրակացնում ենք Ղ. Փարպեցու մի վկայությունից, առաջինը սկսում են աղվանացիները: Փարպեցին գրում է. «Լինէր հանկարծակի խռովութիւն յուզմանց յաշխարհին Վրաց. Վախթանգ սպանանէր զբդեշխն զանօրէնն Վազգէն յամի քսաներորդի հինգերորդի Պերոզի արքայի: Զոր լուեալ Հայոց աշխարհիս մարդկան յորոց բովանդակին բազումք այն ամ յԱղուանս էին, յապստամբ ամրականացն կռուի, որոց բովանդակին զօրագլուխ էր Զարմիհր Հազարավուխտ»[8]: Բերված վկայությունից պարզվում է, որ վրաց թագավորը ապստամբել էր, երբ Աղվանքում այն արդեն սկսվել էր: Ամրանալով երկրի բերդերում ու ամրոցներում, ապստամբ աղվանացիները լուրջ հարվածներ էին հասցնում պարսկական զորքերին և հարկադրում նրանց զորագլուխ Զարմիհր Հազարավուխտին՝ վճռական գործողություններով ճնշել շարժումը: Այդ նպատակով, բացի իր տրամադրության տակ եղած պարսկական զորքերից, Հազարավուխտը օժանդակ ուժեր է բերում նաև Հայաստանից և փորձում նրանց օգնությամբ վճռել ապստամբության բախտը: Մինչ նրանք գտնվում էին պատերազմական վիճակի մեջ, 482 թ. ապստամբում է և վրաց թագավոր Վախթանգ Գորգասարը (456-502 թթ.): Նա նախօրոք սպանում է բդեշխ Վազգենին, որ պարսիկների դրածոն էր և հսկում էր թագավորի գործունեությունը, որին արդեն և ոչ առանց հիմքի կասկածում էին ապստամբության նախապատրաստման մեջ եւ ապստամբում է, որի լուրն է հասնում Հայաստան և (արդեն ապստամբած) Աղվանքում գտնվող հայերին:

Աղվանից, ապա և Վրաց աշխարհում բռնկված այս ապստամբությունների խթան պարսից արքունիքը համարում էր Սասանյանների հանդեպ հայ ավագանու մինչ այդ ունեցած հնազանդ վերաբերմունքի փոփոխությունը: Պարսկական վերնախավի կարծիքով, քանի դեռ նրանք հանդուրժում էին պարսիկների իշխանությունը, «Վիրք և Աղուանք չիշխէին բնաւ թիւրել զանձինս և զայլազգագոյնս ինչ խորհել»[9]: Եվ իրավացի էին նրանք, քանի որ շուտով ապստամբության կենտրոն է դառնում Մեծ Հայքը, իսկ նրա առաջնորդ՝ Վահան Մամիկոնյանը[10]:Պարսից ուժերը այժմ ուղղվում են միայն Վահան Մամիկոնյանի դեմ՝ ձգտելով նրա շուտափույթ ջախջախմամբ վերջ տալ ապստամբությանն ամբողջ երկրում:

Ապստամբությունը տևում է չորս տարի և ավարտվում 484 թ., երբ հեփթաղների դեմ պատերազմներից մեկում սպանվում է Պերոզը, և նրան փոխարինում է եղբայրը՝ Վաղարշ Ա-ն (484-488 թթ. )[11]:

---

[7] Սեբեոս, գլ. Ը:
[8] Փարպեցի, գլ. ԿԶ:
[9] Փարպեցի, գլ. ԶԸ:
[10] Ըստ Կաղանկատվացու Վաղարշը Պերոզի հորեղբայրն էր (Տե՛ս Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԷ):
[11] Նույն տեղում:

Պարսից Գոր թագավորը, որը բնութագրվում է նաև որպես «խոնարհ և խաղաղասեր մարդ»[12], շտապում է հարթել դրությունը և ամեն ինչ բարդելով եղբոր՝ Պերոզի վրա, սկսում հաշտության բանակցություններ վարել Վահան Մամիկոնյանի հետ: Վերջինս առաջարկում է այնպիսի պայմաններ, որոնք ինչպես Հայաստանի, այնպես էլ Աղվանքի ու Վիրքի համար, բացի կրոնական ազատությունից, ապահովելու էին նաև նախկին նախարարական արտոնությունները: Պարսկաստանի քաղաքական անկայուն վիճակը, ներքին ու արտաքին վտանգները ստիպում են Վաղարշ Ա-ին ընդունել Վահան Մամիկոնյանի առաջարկած պայմանները և այն հաստատելու համար Նվարսակ ուղարկել իր զորականներից Նիխոր Վշնասպյանին: Վերջինս գալով Նվարսակ, 484 թ. հայոց զորավարի հետ կնքում է պայմանագիր, որը հայտնի է Նվարսակի պայմանագիր անունով[13]:

481-484 թթ. ապստամբությունը վճռական նշանակություն է ունենում երեք երկրների համար: Պարսկաստանը ստիպված փոխում է վերաբերմունքը և սկսում վարել համեմատաբար մեղմ, հանդուրժողական քաղաքականություն: Վերականգնվում են տեղական ազնվականության իրավունքներն ու արտոնությունները, շատ իշխաններ կրկին տեր են կանգնում իրենց կորցրած տիրույթներին: Ջեռք է բերվում կրոնի ազատություն:

Որպես Նվարսակի պայմանագրի ուղղակի հետևանք, հայոց մարզպանի պաշտոնը սկսում է վարել Վահան Մամիկոնյանը: Աղվանից մարզպանության իշխանության գլուխ է անցնում նույնպես տեղական ազնվականության ներկայացուցիչը՝ Վաչագան Գ-ն (485-510 թթ.)՝ Բարեպաշտ մականունով: Ըստ պայմանագրի, հպատակ երկրների կառավարիչները մեկնելու էին Տիզբոն՝ վավերացնելու իրենց վստահված բարձրագույն իշխանությունը: Եվ ահա, Նվարսակի պայմանագրի կնքումից հետո՝ 485 թ. գարնանը, երբ Վահան Մամիկոնյանը մեկնում է Տիզբոն՝ Հայաստանի «տանուտեր և սպարապետ» հաստատվելու համար, Աղվանից նախարարներն էլ, իրենց հերթին «առնուին զՎաչագան յիւրեանց հայրենի թագաւորական զարմէն քաջարութեանց, իմաստուն և վարժ խոհականութեամբ, բարձր և վայելուչ հասակաւ, որդի Յազկերտի՝ եղբօր Վաչէի՝ արքային Աղուանից և տարեալ (Տիզբոն - Հ. Ս.) թագաւորեցուցանէին ի ձեռն Վաղարշու արքային Պարսից»[14]:

Արշակունիների նոր ներկայացուցչի կառավարության գլուխ անցնելու ժամանակը Ֆ. Մամեդովան համարում է 487 թ.[15], որը, սակայն հավանական չենք գտնում: Ըստ Մ. Կաղանկատվացու, նա իշխանության գլուխ է անցնում Վաչե Բ-ի գահից հեռացվելուց՝ 461 թ. հետո, երեսուն տարի անց[16], ուրեմն՝ 490-491 թթ.: Սակայն փաստը, որ նրան «թագավոր» է կարգել Վաղարշ Ա-ն, որի գահակալության տարիները 484-488 թթ. են, բացառում է այդ տարեթիվը ևս: Ուստի կարծում ենք, Վաչագան Բարեպաշտը իշխանության գլուխ է անցել, երբ Վաղարշը

[12] Բացի երկրում ծավալված խուլ դժգոհությունից, որն առաջացել էր տնտեսության քայքայումից ու անվերջ պատերազմներից, Պարսկաստանը, ըստ Պրոկոպիոս Կեսարացու, Պերոզի պարտությամբ, երկու տարի ընկավ հեփթաղների գերիշխանության տակ՝ հարկ վճարելով նրանց (Տե՛ս Պրոկոպիոս Կեսարացի, Պատերազմների մասին, I , 4:):

[13] Փարպեցի, գլ. ՂԵ, ՂՋ:

[14] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԷ:

[15] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 193.

[16] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺՋ:

հատկապես զբաղվում էր անդրկովկասյան երկրների հարցով և, նրանց առաջնորդներին հրավիրել էր իր մոտ՝ Տիզբոն, իշխանության բարձր նշանները հանձնելու համար: Դա, ինչպես տեսնում ենք Վահան Մամիկոնյանի օրինակով, տեղի է ունենում 485 թ., որն էլ թույլ է տալիս եզրակացնելու, որ Վաչագան Գ Բարեպաշտն էլ իշխանությունն ստանձնել է նույն՝ 485 թվականին:

Վաչագան Բարեպաշտի ու նրա գործունեության մասին միակ աղբյուրը Մ. Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմությունն» է: Ըստ դրա, Վաչագանը Վաչե Բ-ի եղբոր՝ Հազկերտի որդին էր[17], այլ խոսքով, շառավիղն այն թագավորական տան, որ մինչ այդ թագավորում էր Աղվանքում: Սա հաստատվում է նաև Կաղանկատվացու այլ հաղորդումներով: «Ի քաջէն Վաչագանայ մինչև ի Վաչէ թագաւորք էին Աղուանից թուով Թ ըստ կարգի, յորոց տասներորդն էր բարեպաշտ և աստուածասէր թագաւորն Վաչագան՝ Աղուանից արքայ»[18] կամ «եւ թիւ աւուրցն յԱռանայ մինչև զքաջն Վաչագան, որ էր ի մեծ ազգէն Արշակունեաց, չէ յայտ և զանցայն ստոյգն, թէ յորմէ տոհմէ են, չունիմ ասել: Եւ որք ըստ կարգի կացին թագաւորք Աղուանից տասն անուանք են այսորիկ. Վաչագան քաջ, Վաչէ, Ուռնայր, Յաչագան, Մերհաւան, Սատոյ, Ասայ, Եսվաղէն, Վաչէ, ապա բարեպաշտն Վաչական՝ արքայ Աղուանից»[19]:

Այսպիսով, 485 թ. Աղվանից մարզպանության շրջանակներում, իշխանության գլուխ է կանգնում ծագումով Արշակունի Վաչագան Գ Բարեպաշտը, որը նաև եղավ այդ հարստության վերջին ներկայացուցիչը: Նրա ընտրությունը պատահական չէր: Դա Նվարսակի պայմանագրից բխող պահանջի բավարարումն էր, որի համաձայն անդրկովկասյան երկրներում բարձրաստիճան պաշտոնյաներ ընտրելիս պարսիկները պետք է խստորեն հաշվի առնեին ընտրյալի տոհմիկության աստիճանը և ժառանգական իրավունքները: Նոր թեկնածուն, լինելով տոհմիկ ազնվական և ի լրումն դրա «ի թագաւորական տոհմէ» լիովին հարմար էր այդ բարձր պաշտոնի համար:

Վաչագան Բարեպաշտը պատմիչի կողմից որակվել է որպես «թագավոր», իսկ նրա իշխանության տարիները՝ թագավորական ժամանակաշրջան: Ուսումնասիրություններում այս փոփոխությունը դիտվել է իբրև ընդհանրապես մարզպանության վերացում և Աղվանից թագավորության վերականգնում[20]: Ժամանակի քաղաքական պայմանների թելադրանքով իշխանության գլուխ անցած Վաչագան Բարեպաշտի «թագավորությունը»,ըստ էության, Պարսկաստանի անկայուն քաղաքական վիճակով պայմանավորված և անմիջապես արյաց արքային ենթակա մի քաղաքական կազմավորում էր, որի գլուխ կանգնած էր տեղական ազնվականության ներկայացուցիչը: Պատմիչի համար նա թագավոր էր, որովհետև ոչ միայն «թագաւորական զարմէ էր», այլև՝ պարսիկ մազպանների ավելի քան քառորդ դար տևած իշխանությունից հետո երկրի գլուխ էր կանգնել խելացի, գործունյա և եռանդուն քաղաքական գործիչ, որն իր եկեղեցապաշտ գործունեությամբ «ոչինչ նուազ գոլ ..., քան զարեւմտականին տիրող Կոստանդիանոս կայսր կամ զԱրշակունին Տրդատիոս՝ Մեծաց Հայոց փրկութեան գտող»[21]: Հնարավոր է նաև, ելնելով ժամանակի պահանջից, պարսից արքունիքը,

17 Նույն տեղում, գլ. ԺԴ, ԺԷ:
18 Նույն տեղում, գլ. ԺԴ:
19 Նույն տեղում, գլ. ԺԵ:
20 Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 193.
21 Կաղանկատվացի, Ա, գլ. ԻԳ:

սիրաշահելու միտումով, որպես թագավորական տոհմից սերված ներկայացուցիչ, թողնում է նրան կրելու «թագավոր» տիտղոսը, որը, անկասկած,ուներ անվանական բնույթ:

Նորանշանակ «թագավորը» իշխանության գլուխ է անցնում որպես Աղվանից մարզպանության ողջ տարածքի գերագույն գլխավոր սյուզերեն: Բայց քանի որ Աղվանից մարզպանության կազմավորումով ու մայրաքաղաքի Պարտավ փոխադրումով մարզպանության տնտեսական ու քաղաքական կարևոր կենտրոն էր դարձել Կուրի աջափնյակը՝ Ուտիք ու Արցախ նահանգների տարածքը, Վաչագանի իշխանությունն էլ, կենտրոնանալով այնտեղ, սկսում է աստիճանաբար գործել հիմնականում այդ շրջաններում: Ուշադրություն դարձնելով իր ենթակայության տակ գտնվող մյուս մարզերին էլ, նրա քաղաքական գործունեությունը ծավալվում է գլխավորապես նշված (հայաշխարհի) շրջանակներում և ուղղվում նրանց շենացմանը, բարեկարգմանն ու բարգավաճմանը: Եվ այդ ժամանակաշրջանից սկսած, նկատվում է Աղվանից մարզպանության աստիճանական տարաբաժանման և նրա յուրաքանչյուր մասում նոր կառավարող տների քաղաքական իշխանության գլուխ անցնելու միտում:

Վաչագան Բարեպաշտի վարած արտաքին քաղաքականության մասին պատմագրությունը տվյալներ չունի: Ենթադրվում է, որ նա, ստանալով իշխանությունը Վաղարշից, աշխատել է պարսից արքունիքում պահպանել իր հանդեպ եղած բարյացակամությունը և, հնարավոր է այդ նպատակով էլ իրեն փեսա է դարձնում Վաղարշի եղբոր որդուն՝ Աբլ-Աբասին, վերջինիս քրիստոնեություն ընդունելուց հետո: Նա բարեկամական հարաբերություններ է հաստատում նաև Սյունյաց իշխանի ու եպիսկոպոս Գյուտի հետ, որոնց օգնությամբ էլ Արաքսի ափին բերդ է կառուցում և մոտակա վանքի կրոնավորներին պաշտպանելու համար իր փեսա Աբլ-Աբասին բնակեցնում այնտեղ: Այնուհետև Վաչագանն ու Աբլ-Աբասը նույն իշխանի թույլտվությամբ հիշյալ վանքի համար առանձնացնում են հինգ գյուղ և հաստատում նրա «յուտեստի» սահմանները: «Դարձեալ յետ աուրց,- գրում է Ստ. Օրբելյանը,- մկրտեցին (այնուեցները - Հ. Ս.) և զեղբօր որդի նոյն թագաւորին Պարսից (Վաղարշ Ա-ի - Հ. Ս.) Աբլ-Աբաս անուն. և փեսայացուցին Վաչագանայ՝ Աղուանից արքայի և շինեցին բերդ յեզր գետոյն (Երասխայ - Հ. Ս.) զի անդ բնակեալ պահեսցե զեղբարսն: Իսկ Աբլ-Աբաս և Վաչագան խնդրեալ յիշխանէն Սիւնեաց սահման հատին վանիցն և ետուն հինգ գիւղ»[22]:

Ներքին քաղաքականության հարցերում, ըստ հաղորդումների նա եղել է ազատ և ինքնուրույն: Անցնելով իշխանության գլուխ, Վաչագան Գ-ն, օգտվելով Նվարսակի պայմանագրով ընձեռված դավանանքի ազատությունից, երկրում քրիստոնեությունը հայտարարում է ազատ դավանանքի պետական կրոն և պարսից արքաների կողմից բռնությամբ քրիստոնեական հավատը թողածներին կրկին վերադարձնում իրենց հայրերի կրոնին, նախօրոք ինքը ևս ազատվելով կեղծ ուրացությունից[23]:

Այսպիսով, իր ձեռքում կենտրոնացնելով երկրի կառավարման երկու հզոր լծակները՝ քաղաքական ու տնտեսական իշխանությունը, և այն ամրապնդելով վերականգնված քրիստոնեական գաղափարախոսությամբ, Վաչագան Բարեպաշտն անցնում է տերության քաղաքական ինքնուրույնության

[22] Օրբելյան, գլ. ԻԱ:
[23] Կաղանկատվացի, Ա, գլ. ԻՁ:

ամրապնդմանն ու տնտեսական վերելքին ուղղված միջոցառումների իրականացմանը: Եվ որպես այդ ծրագրի հաջող իրականացման պայման, նա վերականգնում է բոլոր նախարարների ժառանգական իրավունքները և նրանց վերադարձնում Պերոզի կողմից խլված կալվածքները: Ինչպես գրում է Կաղանկատվացին, Աղվանքի արքան «հրաման տայր ամենայն կողմանց իւրոյ թագաւորութեանն, զորոց չարին Պերոզի հանեալ էր, զթագաւորութիւնն և զիշխանաց զհայրենի և զբնիկ իշխանութիւնն բարձեալ էր, անդրէն առ յիւրաքանչիւրսն դարձուցանէր զտէրութիւնն»[24]: Այնուհետև նա ձեռնամուխ է լինում իր երկրի ներքին դրությունը կայունացնելու խնդրին: Նրա օրոք «բազում հակառակութիւնք լինէր ի մէջ աշխարհականաց և եպիսկոպոսաց և քահանայից, քորեպիսկոպոսաց, ազատաց և ռամկաց»[25]: Ուստի, դասակարգերի ու սոցիալական տարբեր խավերի, աշխարհիկ մարդկանց ու հոգևորականության մեջ ծագած գժտությունններին վերջ տալու նպատակով, Վաչագան Գ Բարեպաշտը 488 թ. Աղվենում[26] հրավիրում է եկեղեցական ժողով, որտեղ ընդունվում է կանոնական մի որոշում, որով օրենսդրորեն վավերացվում է ֆեոդալների իրավունքը հողի ու մարդկանց վրա, հաստատվում են ժողովրդից գանձվող հարկերի ու զանազան տուրքերի որոշակի չափեր, սահմանազատություն մտցվում եկեղեցական աստիճանակարգության մեջ և սահմանվում ավագից կրտսերի նվիրապետական կախման կարգն ապահովող պարտավորություններ[27]: Կազմված լինելով նախարարների ու եկեղեցական գործիչների կողմից, Աղվենի ժողովի կանոնները կրում են ֆեոդալական հասարակարգի սոցիալական կնիքը և դասակարգային բնույթ ունեն:

Իր տերության բարեկարգմանը նախանձախնդիր Վաչագան Գ-ն աչալրջորեն հետևում է քրիստոնեությունը երկրում արմատավորելու, երկիրը զանազան աղանդներից մաքրելու, տեղերում եկեղեցիներ ու դպրոցներ հիմնելու շնորհակալ գործին՝ ամենածանր պատիժների ենթարկելով բոլոր նրանց, ովքեր փորձում էին հակառակվել բարեկարգումներին: Կաղանկատվացու վկայությամբ՝ նա «պատուհաս մեծ և տուգան ի վերայ ածէր և կարգէր որ ոք բագին արասցէ և դիւթ հարցցէ, և կամ եթէ զինչ և իցէ, որ դից աղտեղեաց պաշտօն տարցի և զկարգս

[24] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԷ:
[25] Նույն տեղում, գլ. ԻԶ:
[26] Աղվենը Ուտիքի համանուն գավառի կենտրոնն էր այժմյան Գյուլիստան գյուղի մոտակայքում (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 34):
[27] Աղվենի ժողովի կանոնները բազմիցս գրավել են ուսումնասիրողների ուշադրությունը: Դրանք քննարկվել են և՛ որպես իրավական, և՛ որպես սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի վավերագրական փաստաթղթեր, սակայն միանշանակ գնահատականի չեն արժանացել (մանրամասն տե՛ս Բ. Ուլուբաբյան, Դրվագներ..., էջ 165-183: Նույնի՝ Դարձյալ Աղվենի ժողովի գումարման տարեթվի մասին, Լրաբեր հաս. գիտ. 1969, թիվ 6, էջ 51-60): Գիտական բանավեճերի ժամանակ առաջ են քաշվել գիտության հետ ոչ մի առնչություն չունեցող այնպիսի կեղծ դրույթներ, որոնց համաձայն դրանք իբր վաղ միջնադարյան Աղվանքի իրավական ու պատմական վավերագրեր են, որոնք, նախապես գրված լինելով աղվաներեն, հետագայում իբր թարգմանվել են հայերեն (տե՛ս Ф. Мамедова, История албан... как источник, с. 153-157): Այսպիսի կարծիքները, մտացածին են և պատմական հիմք չունեն: Աղվենի ժողովի կանոնները մեզ են հասել իրենց բնագրային լեզվով և զուտ հայկական իրավաբանական մտքի արգասիք են՝ ծագելով հայկական միջավայրում և սնվելով նրա ակունքներից: Դրանք նախատեսված էին ամբողջ մարզպանական Աղվանքի եկեղեցական թեմի համար, որն էլ պայմանավորել է ժողովին ու նրա կանոնների ընդունմանը Կապաղակի ու Ցրվոյ եպիսկոպոսների մասնակցությունը (տե՛ս Կաղանկատվացի, Ա, գլ. ԻԶ):

քրիստոնէութեան ամբողջ և հաստատուն ոչ պահեցէ: Եւ զկախարդս և զդիւթս և զքուրմս յետ միանգամ և երկիցս խրատելոյ և դարձեալ ի նմին չարութեան գտանիցի ի գործ, յայնժամ չարաչար տանջանօք և գանիւք, կապանօք ի դուռն արքունի հասուցեալ՝ մեծագոյն պատուհաս կրեսցեն: Եւ զբազում կախարդս այնուհետև, և զդիւթս, և զքուրմս՝ զոմանս խեղելով, և զոմանս շկօթակ առնելով և զոմանս ի ստրկութիւն արկանելով, և զյոլովս խրատելով՝ տուեալ զքրիստոնէական կնիքն՝ առնէր ուսեալս աստուածագիտութեան ճանապարհին»[28]:

Վաչագան Բարեպաշտի գործունեության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում երկրի լուսավորության, մշակութային կյանքի ու դպրության զարգացմանը նվիրված միջոցառումները: Այդ ուղղությամբ նրա թափած ջանքերն ապարդյուն չեն անցնում: Վերանում են այնպիսի հեթանոսական սովորույթներ, ինչպիսիք էին՝ մատնահատությունն ու դեղատվությունը, որոնց հիմքում ընկած էր մարդկային զոհաբերության ծիսակատարությունը: Մի դեպքում զոհին ողջ-ողջ մաշկում ու մորթին նվիրաբերում էին քրմերին, իսկ մյուս դեպքում թույնի միջոցով սպանում էին տարեկան մեկ հոգու՝ չխորշելով զոհեր ընտրել նաև իրենց հարազատների միջավայրից: Հատուկ դպրոցներ հիմնելով, Վաչագան Գ-ն այնտեղ է հավաքում աղանդավորների երեխաներին. «զմանկունս կախարդացն և դիւթաց, և քրմաց, և մատնահատաց, և դեղատուաց» և «հրամայէր ի դպրոցս ունել և ուսուցանել զաստուածեղէն ուսումն և տեղեակս առնել վարուց քրիստոնէութեան, առ ի հաստատել ի հաւատս երրորդութեանն և ուղղել յաստուածապաշտութիւն զիւրեանց ամբարիշտ հայրունեան ազգս»[29]: Նա մեծ ուշադրություն էր դարձնում դպրոցներին ու հետևում դրանց գործունեությանը: Պատմիչի վկայությամբ, նա ուսուցիչներ է կարգում և ռոճիկ սահմանում, հաճախակի այցելում դպրոցներ և հետևում դասավանդմանը, հաճախ էլ երեխաների հետ միասին մասնակցում սուրբ գրքերի ընթերցումներին[30]: Երկրում լուսավորության, գրի, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում Վաչագան Գ-ի ցուցաբերած ջերմեռանդության ու ակտիվ գործունեության մասին է խոսում այն ավանդությունը, ըստ որի, նա իբր կառուցել է տարվա օրերի թվով, այսինքն՝ 365 կամ 366 եկեղեցի[31]՝ որպես կրթության ու լուսավորության տեղի: «Երկիւաղծն Աստուծոյ» այդպես էր վարվում իր ենթակայության տակ գտնվող բոլոր վայրերում՝ «Արցախայ ամուր աշխարհին յիւրում ծառայութեան» «և ի Կամբէճն և յԱղուանս» կարգելով «տեղեաց տեղեաց եպիսկոպոսունս, և երիցունս, և հայեցողս»[32]:

Լինելով կրթված անձնավորություն, Վաչագան Գ- Բարեպաշտը աչալրջորեն հետևում էր ժամանակի առաջադեմ գաղափարներին: Նամակագրական լայն կապեր ուներ ժամանակակից նշանավոր հոգևոր ու աշխարհիկ գործիչների հետ՝ պարզելով կյանքի ու մահվան մի շարք խնդիրներ[33]:

Ավելի քան քառորդ դար իշխում է Վաչագանը, պատմիչի բնորոշմամբ, «յոյժ

[28] Կաղանկատվացի, Ա, գլ. ԺԷ:

[29] Նույն տեղում, գլ. ԺԸ:

[30] Նույն տեղում: Հայոց արևելից կողմերում լուսավորության և դպրության տարածման ուղղությամբ Վաչագան Գ-ի ծավալած գործունեության մասին մանրամասն տե՛ս Բ. Ուլուբաբյան, Վաչագան Բարեպաշտը և Հայոց արևելից կողմանց լուսավորական-մշակութային կյանքի վերելքը, Սովետական մանկավարժ, 1969, թիվ 3, էջ 82-86:

[31] Կաղանկատվացի, Գ, գլ. ԻԳ:

[32] Նույն տեղում, Ա, գլ. ԺԷ:

[33] Նույն տեղում, գլ. ԻԴ, ԽԵ:

բարեմիտ, և բարերար, և յաշխարհաշէն, և խաղաղասէր գոլով»[34]: Վաչագան Գ Բարեպաշտը վախճանվում է 510 թ.՝ փեսայի հետ միասին, տարօրինակ և կասկածելի հանգամանքներում, իր երկրի սահմաններից դուրս՝ Բարկուշատում[35]: Այդ մասին հաղորդում է Ստ. Օրբելյանը՝ գրելով. «Ապա մեռան ի Բարկուշատ թագաւորքն Վաչագան և Աբլ-Աբաս»[36]: Հավանական է՝ նրանք զոհ են գնացել պարսիկների կրոնահալած քաղաքականությանը: Թերևս դա է ապացուցում այն փաստը, որ լսելով նրանց մահվան լուրը՝ պարսկական մեծաթիվ զորքը հանկարծակի ներխուժում է Աբլ-Աբասի պաշտպանությանը հանձնված վանքը և կոտորում կրոնավորներին[37]:

Վաչագան Գ Բարեպաշտը Արշակունյաց հարստության վերջին ներկայացուցիչն էր, որ ունեցավ բարձրագույն պետական իշխանություն: «Յետ մահուն նորա սկսաւ նուազել ազգն այն»[38] և դուրս եկավ պատմության ասպարեզից: Նրա մահից հետո պարսկական արքունիքը տեղական ներկայացուցիչների փոխարեն Աղվանից կառավարիչներ է նշանակում արդեն պարսիկ պաշտոնյաների: Մինչդեռ Վաչագանի կառավարման ժամանակներից սկզբնավորված Ուտիքի ու Արցախի աստիճանական առանձնացումով ինչպես նաև Պարսկաստանի վարած քաղաքականության հետևանքով, Աղվանից մարզպանությունը գնում է դեպի տրոհում:

[34] Նույն տեղում, գլ. ԺԷ:
[35] Բարկուշատը նախկին Քաշունիքը: (Օրբելյան, գլ. Ի, ԻԱ) Սյունյաց նահանգի 9-րդ գավառի՝ Բաղքի անվանումն էր:
[36] Օրբելյան, գլ. ԻԱ:
[37] Նույն տեղում:
[38] Կաղանկատվացի, Գ, գլ. ԻԳ:

## Բ. Քաղաքական իրադարձությունները VI դարում: Աղվանից մարզպանության տրոհումն ու «Աղուանք» նոր հասկացության առաջացումը

VI դարի սկզբներին ողջ Անդրկովկասը, ապա նաև Փոքր Ասիան ենթարկվում են խազարներին ցեղակից հոն-սաբիրների ավերիչ արշավանքներին: Առաջին իսկ արշավանքի ժամանակ՝ 516 թ., նրանք հաստատվում են Ուտիքի Խաղխաղ քաղաքում և, ճամբար խփելով այնտեղ, ասպատակություններ են դուրս գալիս շրջակա գավառներում՝ Արցախում, նախկին բուն Աղվանքի տարածքում և Վիրքում: Կաղանկատվացին գրում է. «Թագաւորն Ռոսմոսոքեան[39] իւրովք զօրօքն և Թոբելական գնդիւն գումարեալ՝ ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և անց յայս կոյս Կուրական գետոյն՝ տարածեալ յՈւտիացւոց գաւառն: Եւ ածեալ նստուցանէր զղակիշն իւր մերձ ի Խաղխաղն քաղաք: Եւ անդէն արս երիս ընտրեալ զօրավարս՝ ոստիկանս առնէր ի վերայ գնդին մեծի և բովանդակեալ գումարէր ի ձեռս նոցա զմեծասաան զօրացն բազմութիւն և հրամայէր յերիս առաջս առնել՝ ասպատակել ի վերայ աշխարհին Աղուանից, Հայոց և Վրաց»[40]: Ցրվելով Արևելյան Անդրկովկասի տարբեր մասերում, նոր ասպատակիչները գերեվարում են մարդկանց ու թալանում նրանց երկրները: Կաղանկատվացին նշում է, որ հոների թագավորը ասպատակություններից ճամբար էր վերադառնում «բազմահույլ գերութեամբն և մեծամեծ աւարօքն»[41]: Արևելյան Անդրկովկաս կատարած այս վայրագ արշավանքները անմիջական սպառնալիք էին ստեղծում նաև պարսից տերության համար, ուստի և Սասանյանները ստիպված էին լրջորեն զբաղվել իրենց հյուսիսային տիրույթների ու սեփական երկրի անվտանգության հարցերով և պաշտպանական միջոցներ ձեռնարկել: Այժմ, ի տարբերություն Հայաստանի ու Վրաստանի, բացառիկ նշանակություն է ձեռք բերում Աղվանից մարզպանությունը, որի վրայով էին անցնում նրանց՝ դեպի Պարսկաստանի խորքերը տանող արշավուղիները: Պարսկաստանին ենթակա հենց այս երկրում էլ Սասանյանների գործունեությունն արտահայտվում է հյուսիսայինների դեմ մղվող պատերազմներով ու, նրանց դուրս քշելուց հետո, ազատված տարածքներում զանազան ամրություններ կառուցելով, տեղական իշխանական տներին արտոնություններ տալով, կառավարելու իրավունք ու բարձր տիտղոսներ շնորհելով, ամրացվող բնակավայրերում ժողովուրդներ բնակեցնելով և այլ ձեռնարկումներով: Առաջինը Պերոզի որդի Կավատն էր (488-531 թթ.), որ մտահոգվելով իր տերության անվտանգության հարցերով՝ «դժվարին պատերազմի»[42] է դուրս գալիս նրանց դեմ Հայոց արևելից կողմերում և Կասպից արևմտյան ափին ընկած

[39] Այս անվանումը բանասիրության մեջ տարբեր մեկնաբանություններ է ստացել: Ք. Պատկանյանը գտնում է, որ այն Կովկասից հյուսիս ապրող ժողովուրդների աստվածաշնչյան անվանումն է (տե՛ս История агван, էջ 311), Կ. Վ. Տրեվերը այն համարում է ցեղանուն և այդ բառի առաջին «рос» վանկի մեջ տեսնում սլավոնական ցեղերի էթնիկական անվանումը՝ եզրակացնելով, որ այդ հաղորդումը, հնարավոր է, հիշատակություն է սլավոնների առաջին արշավանքների մասին (տե՛ս Очерки по истории... Албании, էջ 227): Վ. Առաքելյանի կարծիքով՝ այն «հոների թագավորի՝ գրական ճանապարհով հորինված անունն է» (տե՛ս Մովսես Կաղանկատվացի, էջ 231, ծանոթ. 123): Ավելի հավանական է Ք. Պատկանյանի կարծիքը:

[40] Կաղանկատվացի, Ա, գլ. ԻԹ:

[41] Նույն տեղում, գլ. Լ:

[42] Պրոկոպիոս Կեսարացի, Պատերազմների մասին, I, 10:

ազգագավառներում: Այդ մասին արդեն պատմում են արաբ պատմիչները ու, ամենից առաջ, Բալաձորին: Վերջինս գրում է. «Հյուսիսայինների հարձակումը, դրդեց Կավատին, Պերոզ արքայի որդուն (նրանց դեմ) ուղարկել իր մեծ զորավարներից մեկին՝ 12 հազար (զինվորով): Նա մտավ Առանի մարզը և գրավեց Ար-Ռաս (Արաքս - Հ. Ս.) գետի ու Շիրվանի միջև ընկած ողջ տարածությունը»[43]: Գրեթե բառացի նույն պատմությունն են անում նաև Իբն ալ-Ասիրը և Յակուտ ալ-Համավին[44]: Կավատը, սակայն, չի բավարարվում նշված մարզերի սոսկ գրավումով: Արաբ պատմիչների վկայությամբ, նա ամրացնում է Աղվանից մարզպանության կենտրոն Պարտավը՝ վերանվանելով իր անունով՝ Պերոզ-Կավատ, ապա անցնում է Կապաղակի, որպես հյուսիսային ցեղերի արշավանքների դեմ պատվարի, վերակառուցմանը[45]: Կավատի ամբողջ գործունեությունն ամփոփված է արաբ պատմիչի հետևյալ հաղորդման մեջ. «Նրա (նախորոք ուղարկված զորավարի - Հ. Ս.) հետևից շարժվեց Կավատ արքան, որը կառուցեց Առանում Բայլական քաղաքը, Պարտավ քաղաքը՝ ամբողջ երկրի (գլխավոր քաղաքը) և Կաբալա, որն է Խազար քաղաքը»[46]: Յակուտ ալ-Համավին նույն պատմությունն անելիս ավելացնում է, որ Կավատը կառուցել է նաև Շաքիի ու Կամիրանի դռները[47]: Այնուհետև Կավատ արյաց արքան շարժվում է դեպի հյուսիս և, հաջողությամբ դուրս մղելով այնտեղ հաստատված հյուսիսայիններին, այդ երկրներն ու ազգագավառները միավորում է Աղվանից մարզպանության հետ, վերջինիս սահմանները ընդարձակելով մինչև այժմյան Գիլգիլչայ գետը: Այնուհետև նվաճված վայրերում դիրքերն ամրապնդելու և հյուսիսայինների ներթափանցումները այնտեղ կասեցնելու նպատակով, Կավատը հիշյալ գետի երկարությամբ կառուցում է պաշտպանական պարիսպների մի նոր շարք՝ երկրորդ շարքը, որը հայտնի է Ապզուտ-Կավատ անունով[48], իսկ նրա շուրջը հիմնում, ըստ արաբ պատմիչների, մեծ թվով քաղաքներ, բայց, ամենայն հավանականությամբ, զինվորական ավաններ: Իբն ալ-Ֆակիհը գրում է. «(Կավատը - Հ. Ս.) կառուցեց աղյուսե պարիսպ և այդ պարսպի երկարությամբ հիմնեց 360 քաղաքներ»[49]: Այդպես և Իբն Խորդադբեն ու Կուդաման[50]: Սակայն հաղորդումներում նշված թվով քաղաքների կառուցումը բացարձակապես անհնարին է: Բացառությամբ

---

[43] Баладзори, Книга завоевания стран, с. 6.

[44] Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն, էջ 39-40, Յակուտ, Աշխարհագրական բառգիրք, էջ 17:

[45] Քաղաքների վերակառուցման այս աշխատանքները, որ կատարել է Կավատը, արաբ պատմիչներին սխալմամբ կարծել են տվել, թե դրանք կառուցվել են նրա կողմից, որն, իհարկե, ճիշտ չէ: Կապաղակը հիշատակվում է դեռևս Պլինիոսի կողմից և այն էլ որպես Աղվանքի մայրաքաղաք, իսկ Պարտավը վերակառուցվել էր նրա հոր՝ Պերոզի կողմից:

[46] Баладзори, Книга завоевания стран, с. 6. Բ. Խալաթյանցը այս հատվածը թարգմանում է այսպես. «Կավատը ... շինեց ... Կաբալայ խազարների դեմ (տե՛ս Արաբացի մատենագրեր, էջ 29): Այսպես է նաև Թ. Նալբանդյանի թարգմանության մեջ (տե՛ս նշվ. աշխ., էջ 17): Ավելի հավանական են այս թարգմանությունները, որովհետև Կավատի ձեռնարկումներն ուղղված էին հյուսիսային ցեղերի արշավանքների դեմն առնելու նպատակին, որն էլ ճիշտ են արտահայտում նշված վերջին թարգմանությունները:

[47] Յակուտ, էջ 17: Շաքիի ու Կամիրանի (ըստ Բալաձորի՝ Կամիբերանի (էջ 6), իսկ ըստ Խալաթյանցի՝ Կամբեճանի (էջ 31, ծանոթ. 1, 2) դռների կառուցումը Բալաձորին վերագրում է Խոսրով Անուշիրվանին (տե՛ս էջ 6):

[48] Աշխարհացույց, էջ 27:

[49] СМОМПК, вып. 31, с. 15.

[50] СМОМПК, вып. 32, с. 15.

Ճապորան կամ Ճաբրան քաղաքների այդ վայրերում[51] ուրիշներ չեն բարձրացել: Ուստի, կարծում ենք, որ արաբ պատմիչների նշած քաղաքները ավելի շուտ եղել են զորակայաններ: Այս միտքը հաստատվում է նաև նրանով, որ Բաբ ու Աբվաբի կամ Դերբենդի կառուցմամբ դրանք փաստորեն դառնում են ավելորդ և վերանում են[52]:

531 թ. վախճանվում է Կավատը և նրա թողած կտակի համաձայն, պարսկական գահն անցնում է նրա կրտսեր որդիներից Խոսրով Ա Անուշիրվանին (531-578 թթ.), որը շարունակում է Անդրկովկասում ամուր հաստատվելու հոր քաղաքականությունը: Նրա թագավորության տարիները համընկնում են նոր-նոր պատմության ասպարեզ դուրս եկած խազարների արշավանքներին, որոնք անցնելով Դերբենդի լեռնանցքով և հայտնվելով Աղվանքում, անխնա ասպատակում էին երկիրը, որին զոհ էին գնում մարդիկ ու մշակութային արժեքներ, թալանվում ու հրկիզվում էին եկեղեցիներ: Հաճախակի կրկնվող ավերիչ արշավանքներից փրկվելու համար Աղվանից կաթողիկոսական աթոռը 552 թ. Չողից տեղափոխվում է Պարտավ: «Գերեցաւ ի Խազրաց աշխարհս Աղուանից,- գրում է Կաղանկատվացին,- հրկէզ եղեն եկեղեցիք և կտակարանք: Ապա յերկրորդ ամին Խոսրովու՝ արքային արքայի, յորժամ զսկիզբն հայ թուականին եդին[53] ի սոյն ամին փոխեցին զաթոռ հայրապետութեանն Աղաունից ի Չորա քաղաքէն ի մայրաքաղաքն Պարտաւ վասն հինահալած արշաւանաց թշնամեացն խաչին Քրիստոսի»[54]:

Նոր ու վտանգավոր հարևանի հայտնվելը անհանգստացնում է ինչպես Բյուզանդիային, այնպես էլ Պարսկաստանին: Խազարները ոչ միայն ավերածություններ էին կատարում նրանց ենթակայության տակ գտնվող երկրներում ու, հատկապես, Աղվանքում, այլև իրենց ասպատակությունների ալիքը հասցնում էին մինչև նրանց բուն տարածքները: Ուստի նրանք խազարների դեմ պայքարելուց բացի, ստիպված էին մեծ ուշադրություն դարձնել Կովկասյան լեռնանցքների պահպանությանը: Դրանք Սասանյան Պարսկաստանի հյուսիսում վարած նվաճողական քաղաքականության ամենախոցելի տեղերն էին, և պատահական չէ, որ մի ամբողջ դար՝ V դարի կեսերից մինչև VI դարի երկրորդ կեսը[55], արյաց արքաները ամենայն ջանասիրությամբ զբաղված էին այդ լեռնանցքներն ամրապնդելու խնդրով, դրա համար չխնայելով ո՛չ մարդկային և ո՛չ էլ դրամական միջոցներ[56]: Սրանց շինությունները մեծ թափ են ստանում հատկապես Խոսրով Ա-ի օրոք, որն էլ հենց ամենաակտիվ ու նախաձեռնող թագավորն էր պարսից արքաների մեջ՝ Կովկասյան լեռնանցքները փակելու գործում: Հետևելով հորը՝ Կասպից ծովի արևմտյան ափի երկայնությամբ ամրապնդվելու և խազարների արշավանքների ճանապարհը փակելու հարցում, նա շարունակում է նվաճումները դեպի հյուսիս և դրան զուգընթաց հաջողությամբ ծավալում լայն շինարարական աշխատանքներ: Արաբ մատենագիրները

---

[51] Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 73:

[52] СМОМПК, вып. 31, с. 15. Իբն ալ-Ասիր, էջ 40:

[53] Կաղանկատվացին շփոթում է: Խոսրով Ա-ի թագավորության երկրորդ տարին 532 թ. է, իսկ Հայոց թվականության սկիզբը՝ 52 թ.:

[54] Կաղանկատվացի, Բ, գլ. Դ:

[55] Ն. Պախոմովի հաշվումներով՝ մինչև 567 թ. (տե՛ս Е. А. Пахомов, К истолкованию пехлевийских надписей Дербенда, Известия Азерб. научно-исслед. института, т. I, вып. 2, Баку, 1926).

[56] Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԱ:

բավականաչափ տեղեկություններ են թողել նրա նվաճումների, պաշտպանական հզոր կառույցների և ընդհանրապես նրա քաղաքական, վարչական ու ռազմական գործունեության մասին: Նրանք Խոսրով Ա Անուշիրվանին են վերագրում Կասպից ծովի արևմտյան ափին գտնվող այնպիսի քաղաքների ու ամրությունների կառուցումը, ինչպիսիք են՝ Շաբորանը, Մասքատը, Դուրձուկի դռները, Գարդմանի բերդը, Կարկառը, Բաբ ուլ-Աբվաբը և, որ ամենանշանակալիցն էր նրա շինարարական գործունեության մեջ, Դերբենդի պարսպները[57]: Վերջիններիս կառուցումը Խոսրով Անուշիրվանին է վերագրում նաև հայ պատմիչ Սեբեոսը: «Այս Խոսրով,- գրում է նա,- ի ժամանակս իւրոյ թագաւորութեանն կալեաց զՊահակն Ճորայ և Աղուանից»[58]: Արաբ պատմիչները զամրանքի ու հիացմունքի խառը զգացումով են նկարագրել Դերբենդի ամրությունները[59]: Դա Կասպից ծովի և Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի միջև եղած միակ անցքը փակող՝ մի ծայրով լեռների գագաթները հասնող, մյուսով ծովը մտնող, անմատչելի մի պարիսպ էր, որի կառուցմամբ, լեռնանցքը պահպանելու համար, արաբ մատենագրի խոսքերով արտահայտված, «բավական էր 100 մարդ, այն դեպքում, երբ նախկինում նրա պահպանության համար նա կարիք ուներ 50 հազար մարդու»[60]: Հոյակապ այդ կառույցի քարերը միացված էին երկաթե գամերով և լցված էին արճիճով: Այն ուներ յոթ անցում, որոնցում տեղավորված էին «սիյասիջիդների»՝ անցումները պահպանող զորքերի զորակայանները[61]: Աշխատանքների համար պահանջվող անընդհատ բանվորական ուժ և այլ միջոցներ ապահովելու նպատակով Խոսրով Ա-ն անցկացնում է աշխարհագիր ու մտցնում նոր հարկային համակարգ: Աշխատապարհակը դառնում է կարևորագույն հարկերից մեկը: Մարդիկ մեծ խմբերով քշվում են աշխատելու: Ապա նվաճված տարածքներում ամրապնդվելու և կառավարելու համար նա ընտրում է տեղական իշխանների ու, նրանց շնորհելով թագավորական տիտղոսներ ու սահմաններ հաստատելով, կանգնեցնում է իշխանության գլուխ: Մասուդին հաղորդում է, որ Խոսրով Ա-ն, վերջացնելով Բաբ ուլ Աբվաբի կառուցումը, այդ շրջանները «բնակեցնում էր ժողովուրդների՝ իրենց թագավորներով, նշանակում էր յուրաքանչյուրին չին, շնորհում տիտղոս և սահմաններ անցկացնում»[62]: Նույնը ավելի որոշակիորեն հաղորդում է Բալաձորին. «Ընտրում էր Անուշիրվանը,- գրում է նա,- թագավորներ և նշանակում էր նրանց, նրանցից յուրաքանչյուրին շնորհելով շահական իրավունք առանձին մարզերի վրա: Դրանցից էին լեռների Խաքանը, այսինքն՝ Սերիրի (գահի) տիրակալը՝ Վահրարզանշահ տիտղոսով, Գիլանի թագավորը՝ ինքը՝ Գիլանշահը և Տաբարսարան շահը և ալ-Լակզերի թագավորը՝ Գուրջանշահ տիտղոսով, Մասքութների թագավորը՝ Լիրանշահ տիտղոսով և Շիրվանշահ կոչվող Շիրվանի թագավորը»[63]: Արաբ պատմիչները շեշտելով, որ արյաց արքաներն իրենց համար հուսալի մարդկանցով էին բնակեցնում այդ սահմանային մասերը, ընդգծում են նաև նման միջոցառումների հիմնական նպատակը: Ալ-Իսթախրին գրում է. «Այս վայրերը բնակեցվեցին տարբեր մարզերից գաղթեցրած, նրանց կարծիքով

[57] Баладзори, էջ 5, Յակուտ, էջ 103, СМОМПК, вып. 31, с. 15, 17.
[58] Սեբեոս, գլ. Թ:
[59] СМОМПК, вып. 29, с. 13. вып. 31, с. 18; вып. 38, с. 40-41.
[60] СМОМПК , вып. 31, с. 17.
[61] Նույն տեղում, էջ 23:
[62] Նույն տեղում, вып. 38, с. 41.
[63] Баладзори, с. 7.

պաշտպանության համար հուսալի վերաբնակիչներով և ողջ բնակեցված վայրերը որոնց տիրում էին նրանք, թողնվում էր նրանց բացարձակ օգտագործմանը, առանց պետության համար որևէ ծախսերի, առանց այս կողմերի նկատմամբ հոգսերի ո առանց միջամտության նրանց գործերին: Այս ամենն արվում էր այն ուժեր ցանկությունից, որպեսզի այդ մասը բնակեցվեր հուսալի մարդկանցով և դրանու իսկ պաշտպանվեր զանազան թշնամական թուրք և «քյաֆիր» ցեղերից: Այստեղ սահմանի պաշտպանության համար բնակեցվածների թվում էր Տաբարսարան ցեղը, իսկ վերջիններիս հետ հարևանությամբ՝ Ֆիլան և Լակզ անուններով հայտնի ցեղերը. հատկապես վերջինները բազմամարդ էին և քաջ: Բացի այդ, այնտեղ կային Լիրան, Ծարվան և այլ ցեղեր: Յուրաքանչյուր ցեղի համար կարգվում էր բնակության հատուկ վայր, որը նրանք պարտավոր էին պաշտպանել: Նրանք բազմաթիվ էին և ուժեղ, ունեին ինչպես հեծյալ, այնպես էլ հետևակ (բանակ)»[64]:

Այսպիսի միջոցառումներով Խոսրով Ա-ն այս թագավորներին ոչ միայն պահում էր իրեն հլու կամակատարների դերում, այլև նրանցից յուրաքանչյուրին շնորհելով ինքնիշխան դեր իրենց տիրույթներում, նպաստում էր երկրի պաշտպանությանը:

Բայց Խոսրով Ա-ի նման քաղաքականությունն իր հետ բերում է և հակառակ գործընթաց. երկրամասը մասնատվելով բաժանվում է մանր վարչական միավորների՝ իրենց սեփական տիրակալներով:

Մասնատման գործընթացն ավելի արագ էր ընթանում մարզպանության Կուրի ձախափնյակն ընդգրկող կամ Նախկին բուն Աղվանքի տարածքում: Այստեղ քաղաքական մասնատվածությունը մեկը մյուսից ե՛լ ավելի է հեռացնում առանց այն էլ աշխարհագրորեն կտրտվածության հետևանքով միմյանց հետ տնտեսական թույլ կապերի մեջ գտնվող և այդպես էլ կենտրոնացման չհասած առանձին ազգագավառները: Քաղաքական ու տնտեսական բաժանվածությունն էլ իր հերթին խորանում էր այն էթնիկական փոփոխություններով, որոնք պայմանավորված էին «խոսրովների» անցկացրած միջոցառումներով: Արյաց արքաների կարծիքով հուսալի նոր ցեղերի վերաբնակեցումները, պաշտպանական կառույցներում աշխատելու համար տարբեր ժողովուրդներից կատարած հավաքագրումները, զորակայաններում լեզվով ու կրոնով տարատեսակ զորքերի կենտրոնացումը, խիստ փոփոխում են նշված շրջանի առանց այն էլ ոչ միատարր էթնիկական կազմը: Արաբ մատենագիրները հայտնում են, որ այդ վայրերում ապրում էին յոթանասունից ավելի ցեղեր, որոնք միմյանց հետ հաղորդակցվում էին թարգմանչի միջոցով[65]: Եվ քաղաքական, տնտեսական ու էթնիկական բաժանվածության հետևանքով նոր վաչական-իրավական կազմավորումների վերածված ազգագավառները ժամանակի ընթացքում այնքան են ամրապնդվում, որ հետագայում հանդես են գալիս որպես առանձին, ինքնուրույն իշխանություններ, իրենց իշխանական տների, տվյալ աշխարհագրական վայրի ու ցեղերի անվանումներով: Այսպես, Բալաձորին գրում է, որ Անդրկովկասի այս շրջաններում նվաճումների ելած արաբ զորավար Սալմանը, VII դարի կեսերին անցնելով Կուր գետը և հաղթելով նրանից հյուսիս ընկած զանազան ժողովուրդների, նրանց առաջնորդների հետ առանձին-առանձին հաշտություն է կնքում: Նա, հաղորդում է արաբ պատմիչը, «գրավում է Կաբալան և հաշտություն է կնքում Ծաքիի ու Կամիբերանի տերերի հետ՝ հարկեր վճարելու պայմանով: Սալմանի հետ այդպիսի

[64] СМОМПК, вып. 29, с. 15.

[65] СМОМПК, вып. 29, с. 13, вып. 31, с. 33, вып. 38, с. 40.

հաշտություն են կնքում նաև Խայզանի բնակիչները, Շիրվանի թագավորը և լեռների մնացած թագավորները. այսպես նրան են ներկայանում Շիրվանշահը, Լիրանշահը, Տաբարսարանշահը և Մասքաթի և Շաբիրանի և Բաբ (Դերբենդ) քաղաքի բնակիչները»[66]: Ավելի ուշ, մի ուրիշ արաբ զորավարի՝ Մասլամայի հետ են «շտապում հաշտություն կնքել լեռների թագավորները. այսպես նրան են ներկայանում Շիրվանշահը, Լիրանշահը, Տաբարսարանշահը, Ֆիլանշահը և Ջուրջանշահը, ինչպես նաև Մասքաթի տիրակալը»[67]: Այսպիսով, դառնալով առանձին քաղաքական կազմավորումներ և պատմության մեջ հանդես գալով ինքնուրույն ու նոր անվանումներով՝ Գիլան, Լակզ, Լիրան, Շիրվան, Տաբարսարան և այլն, Աղվանից մարզպանության նախկին մարզերի համար բնականաբար ավելորդ է դառնում մինչ այդ ընդհանուր «Աղուանք» աշխարհագրական անվանումը, որն էլ շուտով, տեղի տալով, դադարում է նրանց համար գործածական լինելուց: Ավելին, նոր ցեղերի ու ժողովուրդների հոսքը նպաստում է, որ եկվորներն իրենց մեջ ձուլելով տեղի անմիատարր բնակիչներին՝ աղվանացիներին, էթնիկական փոփոխությունների սկիզբը դնեին: Այդ փոփոխություններն է՛լ ավելի մեծ թափ են ստանում արաբների հաստատումով և վարած քաղաքականությամբ: Նրանք էլ ավարտում են երկրամասի էթնիկական ձուլման գործընթացը: Արդեն VIII դարում աղվանացիներ, որպես նախկին Աղվանքի բուն բնակիչներ, այլևս գոյություն չունեին: Ձուլվելով եկվոր մահմեդականներին, նրանք դուրս են մղվում պատմության ասպարեզից:

Այն ժամանակ, երբ Կուրի ձախափնյակում տեղի էին ունենում նկարագրվող փոփոխությունները, Աղվանից մարզպանության Կուրի աջափնյակում ընկած մասում, կամ որ նույնն է՝ Ուտիքում և Արցախում, կազմավորվում է ևս մի ինքնուրույն իշխանություն՝ Առանշահիկների իշխանությունը: Ի տարբերություն Կուրից հյուսիս ընկած մարզերի, այս իշխանությունն իր հայ բնակչությամբ էթնիկապես միատարր էր, որն էլ նրան ապահովում էր ձուլման վտանգից:

Աղվանից մարզպանությունը քայքայված էր: Սրա հետևանքով «Աղուանք» հասկացությունը կորցնում է մարզպանության ողջ տարածքն արտահայտող նախկին ընդարձակ իմաստը և տարածքային առումով սկսում է գործածելի դառնալ միայն նրա հարավային մարզերի՝ Ուտիքի ու Արցախի համար, որոնք այդ անվանումը կրում էին մարզպանության կազմավորումից սկսած՝ 461 թ.: Այսուհետև Կուր և Արաքս գետերի միջև ընկած և Առանշահիկների իշխանության ներքո գտնվող այդ տարածությունը սկսում է պատմության մեջ հանդես գալ «Աղուանք» անվամբ, որը նշված քաղաքական ու էթնիկական փոփոխությունների հետևանքով ստացել էր նոր իմաստ և արտացոլում էր միայն ցույց տրված երկրամասը:

---

[66] Баладзори, с. 14.

[67] Նույն տեղում, էջ 17:

## ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

## ՆՈՐ ԱՆՎԱՆԱԿՈՉՎԱԾ ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԸ VII-VIII ԴԱՐԵՐՈՒՄ

### ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

### ՆՈՐ ԱՆՎԱՆԱԿՈՉՎԱԾ ԱՂՎԱՆՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐ: ՄԻՀՐԱՆՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՀՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԱՆՎԱՆԱԿՈՉՎԱԾ ԱՂՎԱՆՔՈՒՄ

#### Ա. Նոր անվանակոչված Աղվանքի քաղաքական սահմանները և հարակից հարցեր

Վերը նկարագրված քաղաքական ու էթնիկական փոփոխությունների հետևանքով «Աղուանք» անվանումը ստանում է նոր իմաստ՝ ընդգրկելով նախկինից տարբեր մի տարածություն, որի սահմաններն հյուսիսում անցնում էին Կուր գետով, հյուսիս-արևմուտքում՝ Հնարակերտ ամրոցով, հարավ-արևելքում՝ Արաքս գետով, իսկ հարավ-արևմուտքում՝ Արցախյան, Սևանի ու Մուրղուզի (Միափորի) լեռներով: Այլ խոսքով, այս «Աղուանքը» ներառում է հայոց եզերական նահանգներ Ուտիքն ու Արցախը կամ «ուտեացւոց» ու «ծաւդեացւոց» իշխանությունները՝ դրանք բնակեցրած ցեղերով՝ ուտիացիներով, գարդմանացիներով, ծավդեացիներով ու գուգարներով:

Դժվար չէ նկատել, որ այս «Աղուանքը» իր սահմաններով ու բնակիչներով ամբողջովին տարբերվում է անտիկ հեղինակների նկարագրած 26 ամենատարբեր ցեղերով բնակեցված բուն Աղվանքից, որի սահմաններն, ինչպես տեսանք, անցնում էին հյուսիսում՝ Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայի Կերաունյան ճյուղով, հարավում՝ Կուր գետով, արևելքում՝ Կասպից ծովով, իսկ արևմուտքում՝ Ալազան գետով:

Այսպիսով, Աղվանից մարզպանության տրոհումից հետո «Աղուանք» անունը կրում են հայոց Ուտիք և Արցախ նահանգները:

«Աղուանք» անվանումը աստիճանաբար ամրապնդվում է այս տարածքի վրա: Իրենց միասնական քաղաքական իշխանության, էթնիկական միատարրության, տնտեսական ու մշակութային միասնականության ու բարձր զարգացածության շնորհիվ Արցախի ու Ուտիքի միացյալ քաղաքական կազմավորումը տեղական իշխանական Առանշահիկ տոհմի գլխավորությամբ տեղ չէր թողնում այնպիսի փոփոխությունների համար, ինչպիսիք կային մարզպանության Կուրից հյուսիս ընկած տարածքում և բացառում է «Աղուանք» տեղանվան փոփոխությունը, որը նշված նահանգների համար ավելի շուտ աշխարհագրական, քան քաղաքական անվանում էր:

Սկսած այդ ժամանակաշրջանից, հայ պատմիչների աշխատություններում «Աղուանք» անվանումը գործածվում է հիմնականում նոր իմաստով և հանդես գալիս որպես նշված տարածքին նաև տրվող «Հայոց Արևելից կողմանք», «Կողմն Արևելից», «Հյուսիս Արևելից կողմանք», «Խորին աշխարհ Հայոց», «Խորին Հայք» անվանումներին հոմանիշ հասկացություն: Դրա ցայտուն արտահայտությունը XI-XII դարերի հայ պատմիչ Մատթեոս Ուռհայեցու հաղորդումն է, «Աշխարհ

Աղուանից, որ ասի՝ խորին աշխարհ Հայոց»[1]:

Հայկական հին մարզերին տրված նոր անվանումով էլ XVIII դարում հայ պատմական գիտության մեջ առաջանում է «Աղուանք Հայոց» աշխարհագրական ու քաղաքական հասկացությունը[2]:

Նույն երկրամասը արաբական աղբյուրներում կոչվում էր «Առան»:

Այս նոր անվանակոչված Աղվանքում կամ Ուտիք-Արցախյան հայաշխարհում VI դարի վերջերին, դարձյալ պարսից քաղաքականության հետևանքով, բարձրանում է մի նոր հարստություն՝ Միհրանյան իշխանական հարստությունը, որին վիճակված էր նշանակալից դեր խաղալ երկրամասի քաղաքական ու տնտեսական կյանքում:

«Աղուանք» աշխարհագրական անունը կրող Ուտիք-Արցախյան քաղաքական կազմավորման իշխանական գահի վրա Միհրանյանների բարձրանալը ադրբեջանական հետազոտողների կողմից դիտվել է որպես նոր թագավորական հարստության բարձրացում բուն Աղվանքում, իսկ նրա ներկայացուցիչները՝ նրա թագավորների ավանդույթների շարունակողներ: Նրանցից Թ. Մամեդովը, օրինակ, գրում է. «VI դարից սկսած բարձրանում է Միհրանյանների աղվանական թագավորական դինաստիան»[3] և ապա, այդ դինաստիայի ներկայացուցիչներին շարունակ կոչում է թագավորներ[4]: Ֆ. Մամեդովան էլ չնայած նրանց չի մեծարում թագավորական տիտղոսով, այնուամենայնիվ, որպես իր հետազոտության արդյունք, գրում է. «Հետազոտությունը թույլ է տալիս խոսելու երկրի կառավարիչների՝ ալբանական Արշակունի թագավորների (I-IV դդ.) և նրանց փոխարինած Միհրանյան մեծ իշխանների (VII-VIII դդ.) հաջորդականության և անընդմեջության մասին»[5]: Այսպիսի դատողությունների անհիմն լինելը բավականին պարզությամբ ցույց են տալիս հենց միայն Միհրանյանների տիրույթների սահմանները, որոնք իրենց տարածքային ընդգրկումներով և ծագման ժամանակաշրջանով կտրուկ տարբերվում էին բուն Աղվանքի սահմաններից: Երկու նույնանուն երկրները միմյանցից տարբերվում էին նաև իրենց էթնիկական կազմով ու քաղաքական կառուցվածքով:

Կաղանկատվացին, իր «Պատմության» մեջ Միհրանյանների մասին խոսելիս, բազում անգամներ նրանց տիրությունը անվանում է «իշխանություն», իսկ այդ տան ներկայացուցիչներին՝ «իշխաններ»: Այսպես, գրքի գլուխներից մեկը վերնագրելով «Կարգեալն Վաղարշակայ զնախագահութիւնն Աղուանից»[6], նա դրանով տարբերակում է «Աղուանք» կոչված երկրների քաղաքական կառուցվածքները:

---

[1] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 230:

[2] «Աղուանից աշխարհ, կրկին առմամբ հիշատակի սա ի գիրս մեր. զմի ի փոխանակ այնր աշխարհին որ է ընդ մեջ Կուր գետոյ և Կասպից ծովու մինչև ի Դարբանդ և սա կոչի Աղուանք Շիրուանայ կամ Շիրուան, երկրորդ ի մասնավորի փոխանակ այնր մասին Հայաստանի, որ պարունակէ յինքեան զերիս աշխարհս այս զՈւտի, զԱրցախ և Փայտակարան և զմասն ինչ յայնկոյս Կուր գետոյ և սա կոչի հատկապես՝ Աղուանք Հայոց, ուր կաթողիկոսարանն Աղուանից ի Գանձասար» (տե՛ս Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784 թ., յօրինեալ ի հայր Միքայել վարդապետէ Չամչեանց, հ. Գ, Երևան, 1984, էջ 131, նոր էջակալմամբ): Այդ տարածքը «Աղվանից Հայք» է կոչում նաև Ստ. Կանայանցը (տե՛ս նրա «Անհայտ գավառներ հին Հայաստանի», Վաղարշապատ, 1914, էջ 146-147 և հաջ.):

[3] Т. Мамедов, Кавказская Албания в IV-VII вв., с. 21.

[4] Նույն տեղում, էջ 22:

[5] Ф. Мамедова, Политическая история... Албании, с. 241.

[6] Կաղանկատվացի, Ա, գլ. Դ: (ընդգծ. - Հ. Ս.):

Նույնը նա անում է և մի ուրիշ տեղում: «Եվ Միհրեանն, որ ի Սասանեան տոհմեն էր եկեալ ի Պարսից, հաստատեցաւ ի նախարարութիւն»[7], իսկ պատմելով Միհրանյան իշխան Ջուանշիրի մասին, գրում է. «Արդ՝ այս երրեակք տասներրեակք և տարիք երեք, յոր սկսաւ տէր բազմամեծար զքաջեյաղթ իշխանն Աղուանից առնել, ի չորից ազգաց թագաւորաց աշխարհակալաց պատուել և մեծարել յոյժ... Մի ոք տղայական բարուք և անիմաստ խորհրդով փոքր վարկանելով զսորայս տիրողութիւնս յաղագս ոչ ունելոյ թագ և եթ ի գլուխ, ծայրայապաւիչ թագաւորական պատւոյ, յոգնավայելուչ մեծութեան»[8]: Երկու կարծիք լինել չի կարող. Միհրանյանների կառավարությունը իշխանություն էր, իսկ նրանք՝ ընդամենը իշխաններ: Իշխելով Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածքում, նրանք չէին կարող լինել աղվանական թագավորների հաջորդները, առավել ևս ապահովել նրանց կառավարման անընդմեջությունը Աղվանք-Ալբանիայում, որի հարավային սահմանը վերջանում էր այնտեղ, որտեղ սկսվում էր Միհրանյաններին ենթակա երկրի հյուսիսային սահմանը:

[7] Նույն տեղում, Գ, գլ. ԻԳ: (ընդգծ. - Հ. Ս.):
[8] Նույն տեղում, Բ, գլ. ԻԸ (ընդգծ. - Հ. Ս.):

## Բ. Միհրանյան տոհմը նորանվանակոչված Աղվանքում

Միհրանյան տոհմը նոր անվանակոչված Աղվանից աշխարհում թեև պատմության ասպարեզ է իջնում VI դարի վերջերին, սակայն դա չի խանգարում, որ արդեն VII դարի սկզբներին դառնա տեղի իշխանական այն տոհմը, որը երկու դար շարունակ՝ մինչև 821 թ. իրեն վերապահի Աղվանից «առաջին իշխան» տիտղոսը կրելու իրավունքը:

Միհրանյանների՝ Աղվանքում կամ Ուտիք-Արցախում իշխանական գահին տիրելու և նրանց ծավալած քաղաքական ու տնտեսական գործունեության մասին միակ աղբյուրը Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմությունն» է, որի երկրորդ գրքի հիսուներկու գլուխներից քսանհինը (ԺԷ-ԽԵ) հատկացված է ուսումնասիրվող տոհմի պատմությանը: Նշված գլուխներից էլ, սակայն, միայն Բ գրքի ԺԷ գլուխն է պարունակում Միհրանյանների նախնական պատմությունը՝ տոհմի հիմնադիր Միհրանից մինչև աղվանից մեծ իշխան Ջուանշիրը:

Միհրանյան տոհմը սերում է պարսից թագավորների զարմից և ուսումնասիրվող երկրամասում հաստատվում այսպես. պարսից Որմիզդ թագավորի (578-590 թթ.) սպանությունից ու Վահրամ Չուբինի խռովության ճնշումից հետո նորընծա արքայց արքան՝ Որմիզդի անչափահաս որդի Խոսրով Բ Փարվեզը (590-628 թթ.), դրությունը երկրի ներսում շտկելու և հոր սպանողներից վրեժխնդիր լինելու նպատակով կոտորում է դավադրության մասնակիցներին ու պարագլուխներին՝ իր Բնդոյ և Վստամ քեռիներին ու նրանց ազգակիցներից վաթսուն հոգու: Այդ սպանդի ժամանակ ազգակիցներից մեկը՝ Միհրան անունով, իբր արքայի վրեժխնդրությունից խուսափելու համար, մոտ երեսուն հազար ընտանիքով հեռանում է Պարսկաստանից՝ ցույց տալով, թե մտադիր է անցնել Խոսրովին թշնամի խազարների մոտ: Այս հանգամանքը, ըստ Մ. Կաղանկատվացու, լուրջ մտահոգություն է պատճառում Խոսրովին, և նա շտապում է Միհրանին կանխել: Մի գրությամբ նրան իրավունք է տալիս ընտրելու բնակության վայր, որտեղ կամենա, եթե չի ցանկանում ապրել բուն Պարսկաստանում: Միհրանը այդ ժամանակ հասած է լինում «յՈւտի գաւառ՝ մերձ ի քաղաքն մեծ Պարտավ: ... Եվ ի գալ հրովարտակին՝ պատահի նմա ի սարոտն գաւառին Գարդմանայ: ... Եւ տեսեալ զբարեւլաւութիւն աշխարհին՝ հաճեցաւ ի նմա լինել բնաբար: Եւ շինեաց յիւր անուն քաղաք մի՝ կոչելով զնա Միհրավան»[9]: Նոր վայրում դիրք և հեղինակություն ստեղծելու համար նրանք շուտով խնամիանում են տեղի տիրապետող իշխանական տան՝ Առանշահիկների հետ, իրենց փեսա դարձնելով նրանցից Զարմիհր Առանշահիկին: Այնուհետև գավառի իշխանությանը տիրելու համար, ապագա պայքարում մրցակցությունից հեռացնելու նպատակով, Միհրանն ընտրելով հարմար պահ իր մոտ է հրավիրում նրանց նշանավոր մարդկանցից տասներկու հոգու, դավով սպանում և դառնում գավառի տերը: Միհրանին հաջորդում են որդիները՝ «Արմայէլ, որ ծնաւ զՎարդ, Վարդ ծնաւ զքաջն Վարդան, որ շինեաց զբերդն Գարդմանայ զերիս ամս»[10]: Այս Վարդանն ավելի հեռուն գնացող նպատակներ էր հետապնդում, քանի որ սկսել էր բերդեր կառուցել Գարդմանում: Նրան, հավանաբար, այլևս չէր բավարարում սոսկ Գարդմանի տեր լինելը: Ձնայած տեղական իշխանական տների հետ ունեցած խնամիական կապերին, Վարդանը

[9] Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԷ:
[10] Նույն տեղում:

ողջ երկրամասում տիրապետության հասնելու համար դիմում է խարդավանքի «և ճենգեալ ի սիրտ իւր զնախնական ազգս Հայկազնեանց Եռանշահիկս... կոչէ որպէ ի սէր իմն ի ճաշ և հաց կորստեան գործեալ նոցա տայ ուտել ի ճաշի անդ արեամ իւրեանց: Արար գլխատումն արանց վաթսնից, միայն թողույր ի նոցանէ զփեսայացեալն իւրում ցեղին Զարմիհրն Եռանշահիկ: Այսպէս եղև նոցայն տիրե Աղուանից»,- եզրափակում է պատմիչը և շարունակում թվարկել քաջ Վարդանից հետո եկող Միհրանյաններին. «Սորա (Վարդանին - Հ. Ս.) լինի որդի Վարդ, Վարդ ծնանի զՎարազման և զՃուշիկ տիկին և զՎարազ Գրիգոր՝ առաջին իշխանն Աղուանից, որ էառ զմկրտութիւն ի Վիրոյէ՝ Աղուանից կաթողիկոսէ: Վարազ Գրիգորի լինին որդիք չորք՝ Վարազ Փերոժ, Ջիւանշիր, յԵզուտ Խոսրով, Վարազման»[11]:

Միհրանյան տոհմի ծագումնաբանական պատմությունը պատմագիտության մեջ բավական կասկածների տեղիք է տվել: Այդ տեղեկության մեջ առաջին անգամ անհամապատասխանություն է գտել Մ. Բրոսսեն[12], որին կրկնել է Ք. Պատկանյանը[13]: Խնդրո առարկա հարցը բարձրացրել է նաև Հ. Մանանդյանը: Ապացուցելու համար, որ Մ. Կաղանկատվացին X դարի հեղինակ է և ոչ թե VII , Հ. Մանանդյանը որպես կռվան բերում է հենց Միհրանյան տոհմի ծագումնաբանական պատմությունը: Նա գրում է. «Արդեն տարօրինակ է, նույնիսկ պատմականորեն անհնարին, որ այս վեց սերունդները Միհրանից՝ Խոսրով Փարվեզի (590-628 թթ.) ազգականից սկսած, մինչև Ջիվանշիր իշխանը (իշխել է ըստ մեր հեղինակի 637 թվականից), մի քանի տասնամյակում են իշխել»[14]: Այլ խոսքով, գիտնականը կասկածի տակ է առել այս հատվածի պատմականությունը:

Այնուհետև Հ. Մանանդյանի վերոհիշյալ կարծիքը կրկնել են Ն. Ադոնցը, Ն. Ակինյանը, Կ. Վ. Տրեվերը, Զ. Դուսեթը և Կ. Թումանովը[15]:

Միհրանյան տոհմի ծագումնաբանական պատմությունը առասպել է համարվել նաև նորագույն աշխատություններում[16]: Նշված ուսումնասիրողների կարծիքով. Միհրանից մինչև Ջուանշիր իշխել են վեց սերունդ, որոնք չեն տեղավորվում Կաղանկատվացու ցույց տված ժամանակահատվածում: Հետևաբար պատմիչի տեղեկությունը կարոտ է ճշգրտման կամ էլ, եթե այն հավաստի է պետք է Միհրանյանների մուտքը Աղվանք հետ տանել որոշ ժամանակով[17]: Այսպիսի առաջարկություն անելիս նրանք հենվում են Կաղանկատվացու Ա գրքի ԻԶ գլխի այն տեղեկության վրա, ըստ որի իբր Միհրանյան Քաջ Վարդանը մասնակցել է

---

[11] Նույն տեղում:

[12] История агван, с. 341.

[13] Նույն տեղում:

[14] A. Manandian, Beitrage zur albanischen Geschichte, Leipzig, 1897,  . 13.

[15] Ն. Ադոնց, Քննություն Մովսես Կաղանկատվացու («Անահիտ», 1939 թիվ 6, էջ 4): Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի, էջ 66, К. В. Тревер, Очерки по истории ... Албании, с. 236; The History of the Caucasian Albanians, p. 107, s. 3, Cyril Toumanoff, Studies...., p. 478-479.

[16] А. А. Акопян, Албания-Алуанк..., с. 196.

[17] К. В. Тревер, Очерки по истории ... Албании, с. 236; Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի ..., էջ 37; Cyril Toumanoff, Studies...., p. 478. Վերջինս Միհրանյան տոհմի համար կազմել է մի նոր ժամանակագրություն՝ Միհրանից մինչև Վարազ-Գրիգորը իշխած յուրանաքանչյուր իշխանի համար սահմանելով գահակալության 30 տարի (տե՛ս նույն տեղում, էջ 479, ծանոթ. 178): Նմանօրինակ առաջարկություն՝ Միհրանյանների հանդես գալը ետ տանել անում է Զ. Բունիաթովը, միաժամանակ Կ. Թումանովի հետևությամբ, բայց, առանց անունը տալու, առաջարկելով յուրանքանչյուր իշխանի համար իշխանության 30 տարի (տե՛ս З. Буниятов, Albanica – III, Известия АН АзССР, 1964, N 4, с. 90). И. Алиев, Ф. Османов, Бассейн рек..., с. 201.

488 թ. Աղվենում Վաչագան Բարեպաշտի գումարած եկեղեցական ժողովին: Սակայն պատմագիտության մեջ արդեն ցույց է տրվել նման կարծիքի սխալ լինելը, կարծիք, որ առաջացել էր տարբեր ժամանակներում ապրող և միևնույն «Քաջ Վարդան» անունը կրող այլ անձնավորություններին թյուրիմացաբար նույնացնելուց[18]: Ուստի ճիշտ չէ Միհրանյանների Աղվանք գալու ժամանակաշրջանը ետ տանել և Կաղանկատվացուն մեղադրել ժամանակագրությունը խախտելու մեջ:

Միհրանյան տոհմի վեց սերունդները՝ Միհրանից մինչև Վարազ-Գրիգորը ներառյալ, ըստ պատմիչի, իշխել են 590թ. (Խոսրով Բ Փարվեզի գահակալումից ու Միհրանի կարծեցյալ փախուստից) մինչև Աղվանից մեծ իշխան Ջուանշիրը, որը, ինչպես կարծել են ուսումնասիրողները, իշխել է 636 թ., բայց իրականում 642 թ.[19], այսինքն՝ 46-47 (թեկուզ 50-52) տարվա մի ժամանակամիջոցում, որն, իրոք, քիչ է, եթե որդին հաջորդել է հորը: Բանն այն է, որ որդին հորը հաջորդելու ենթադրության հնարավորություն տալիս է նաև Կաղանկատվացու շարունակողն իր հաղորդումներով, ըստ որոնց՝ Միհրանյանները Աղվանքին տիրել են «որդի ի հօրէն առնելով»[20]: Ուսումնասիրողները այս հարցի կապակցությամբ առաջ են քաշել զանազան տարբերակներ՝ փորձելով լուծել առաջացած անհամապատասխանությունը: Սակայն կա խորհելու առիթ տվող մի շատ կարևոր հանգամանք, որին ուշադրություն չեն դարձրել ուսումնասիրողները, բայց և որը վճռական նշանակություն ունի հարցի պարզաբանման համար:

Ըստ «Պատմության» շարադրանքի, Միհրանյան տոհմի ամենանշանավոր ներկայացուցչի՝ Ջուանշիրի սպանությունից հետո (638 թ.) Աղվանից իշխանական գահը անցնում է նրա եղբորորդուն՝ Վարազ-Տրդատին. «Տեառք տոհմից, կուսակալք, կողմնակալք, մեծամեծք, նախարարք և ամենայն իշխանք աշխարհից այսորիկ ժողովեալք առ մեծ արքեպիսկոպոսն Եղիազար՝ ... հաճեցան առժամայն հաւանութեամբ ընտրել զնախարար ոմն աւագ որ մեծարեալն էր կայսերակերպ պատուով զպատիհպատի պատրկութեան ստացեալ պատիւ, որոյ անուն էր Վարազ-Տրդատ՝ որդի Վարազ-Փերոժի՝ եղբօր Ջիւանշիրի»[21]: Վարազ-Տրդատը փաստորեն Աղվանից առաջին իշխան է նշանակվել այն դեպքում, երբ Ջուանշիրն ուներ բյուզանդական Կոստանդ Բ կայսեր կողմից պատրիկության տիտղոս ստացած որդիներ[22]: Անմիջական ժառանգ չէր նաև կրկին Ջուանշիր անունով մի ուրիշ «մեծ իշխան»՝ Ստեփանոսի որդի Վարազ-Տրդատ Գ-ն և այլն: Ուրեմն, Միհրանյան տոհմում միշտ չէր, որ իշխանությունն անցնում էր իշխանի անմիջական ժառանգին, չնայած պատմիչի «որդի ի հօրէ առնլով» տեղեկությանը: Ի դեպ, Միհրանյան տոհմում հաճախ իշխանությունն անցել է ոչ թե ավագ որդուն, այլ կրտսերին: Իրենց հայրերի կրտսեր որդիներն էին «զՎարազ Գրիգոր՝ առաջին իշխանն Աղուանից»[23] և վերջինիս «զերկրորդ» որդին ... Ջիվանշիր խորոխտ և սիգողանճեմ»[24]: Վերջապես պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ

[18] Ս. Հովհաննիսյան, Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ, ՊԲՀ, 1967, թիվ 4, էջ 269:
[19] Տե՛ս ստորև:
[20] Կաղանկատվացի, Գ, գլ. Ի:
[21] Նույն տեղում, Բ, գլ. ԼՁ:
[22] Նույն տեղում, Բ, գլ. ԻԲ:
[23] Նույն տեղում, Բ, գլ. ԺԷ:
[24] Նույն տեղում, Բ, գլ. ԺԷ, ԺԸ:

անմիջական ժառանգականության տպավորություն ստեղծողը Կաղանկատվացու երկի շարունակողն է, որը, խոսելով իր համար հեռավոր ժամանակների մասին և հաջորդաբար թվարկելով Աղվանից առաջին իշխաններին, սխալմամբ կարծել է, թե նրանք անմիջական ժառանգներ են եղել, և այդպես էլ մատուցել է ընթերցողին: Այսպիսով, Միհրանյան իշխանների՝ Աղվանքում վերջնականապես հաստատվելու կարճատև ժամանակամիջոցում հաջորդականությունը պետք է դիտել ոչ թե հորից որդուն անմիջականորեն փոխանցվելու կարգով, որի ժամանակ Մ. Կաղանկատվացու նշած ժամանակամիջոցը իրոք չէր բավականացնի, այլ նույն տոհմի տարբեր ժառանգների միմյանց հաջորդելու օրինաչափությամբ: Հարցին մոտենալով այս տեսանկյունով, Միհրանյան իշխանների այսպիսի արագ հաջորդականությունը դառնում է տրամաբանական և պատճառաբանված քաղաքական հանգամանքներով: Միհրանյաններն Աղվանք էին եկել նվաճելու և տեղական Առանշահիկ իշխանների դարերով սրբագործված իրավունքի հաշվին էին ուզում իշխանություն ձեռք բերել, որը և, բնականաբար, հանգեցնում էր նրանց դիմադրությանը: Առանշահիկները, ամենայն հավանականությամբ, բոլոր միջոցներով ջանացել են վերացնել իրենց գահի հավակնորդ Միհրանյաններին: Վերջիններս էլ իրենց հերթին միջոցների մեջ խտրություն չեն դրել Առանշահիկների նկատմամբ գերիշխանության հասնելու համար: Հիշենք Միհրանի ու նրա թոռ Քաջ Վարդանի կազմակերպած դավադիր խնջույքները, խնամիական կապերի հաստատումն Առանշահիկների հետ և այլն[25]: Նրանք կենաց և մահու պայքար են մղել, որի ժամանակ, բնականաբար, գահակալների հաջորդականությունն արագանալու էր: Այդ է պատճառը նաև, որ պատմիչը նույնպես չի խոսում այս տոհմի վեց ներկայացուցիչների մասին, այլ միայն թվարկում է նրանց: Վեց սերունդներից նա միայն երկուսի՝ Միհրանի ու Քաջ Վարդանի գործունեության մասին է խոսում: Առաջինի, որ եկավ Աղվանք ու նենգորեն սպանեց տասներկու նշանավոր իշխանների ու, երկրորդի, որ բերդ կառուցեց երեք տարում և նմանվեց իր նախապապին՝ «հաց կորստեան» տալու գործում:

Միհրանյանների՝ Պարսկաստանից գալու պատմությունը Ն. Ակինյանին հանգեցրել է մի այնպիսի եզրակացության, թե աշխատության «խմբագիրը ձգտում կցուցնէ Աղուանից ինչպես թագավորները, նույնպես իշխանները Արշակունի և Սասանյան ծագումէ սերած հավատացնել»[26]: Բայց ճիշտ չէ այս պատմության մեջ փնտրել հեղինակի ինչ-որ ցանկություններ և չտեսնել Պարսկաստանի՝ դարեր շարունակ երկարաձգվող զավթողական քաղաքականությունը, որ նա վարում էր Մեծ Հայքում, Աղվանքում և Վիրքում: Հայաստանի առաջին բաժանումը Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև և Անդրկովկասում վերջնականապես ու ամուր կերպով հաստատվելու նրա ջանքերը, բավականին պերճախոս են վերը նշված միտքը հաստատելու համար: Հայոց Արևելից կողմերում կամ նոր անվանակոչված Աղվանքում Միհրանյան տոհմի հաստատվելը ևս Պարսկաստանի նույն քաղաքականության շարունակությունն էր և ուներ իր պատճառները: Պարսկաստանի սահմանները IV-V դարերում գնալով ընդարձակվում էին և ավելի ու ավելի մոտենում կովկասյան քոչվոր ցեղերով բնակեցված տարածություններին, հաճախ ենթարկվելով ընչաքաղց քոչվորների հարձակումներին: Նրանց ճանապարհը փակելու և իրենց հյուսիսային սահմանները պաշտպանելու համար,

[25] Տես վերը

[26] Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի..., էջ 66:

Սասանյաններն, ինչպես արդեն վերևում տեսանք, չխնայեցին ո՛չ նյութական, և ո՛չ էլ մարդկային միջոցներ: Եվ դա արվում էր՝ Անդրկովկասում տիրապետության հասնելու համար: Այդպիսի քաղաքկանությունը վաղուց էր որդեգրված Տիզբոնի կողմից և չէր թուլացել նաև Խոսրով Բ-ի օրոք, մանավանդ, երբ 591 թ. Հայաստանը կրկին բաժանվել էր Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև: Ստեղծված պայմաններում այլևս նպատակահարմար չէր նվաճված երկրները կառավարել սոսկ մարզպանների միջոցով: Անհրաժեշտ էր ուժեղացնել պարսկական տարրը և հատկապես Ուտիքի Գարդման գավառում, որը Հայաստանի ու Վրաստանի երկրորդ բաժանումից հետո ձեռք էր բերել կարևոր ռազմավարական դիրք: Գտնվելով Բյուզանդիայիին ենթակա հայկական ու վրացական հողերի անմիջական սահմանակցությամբ, Բյուզանդիայի հնարավոր ոտնձգությունները դեպի Պարսկաստանի ազդեցության շրջաններ տեղի էին ունենալու հենց այստեղից: Ուստի նրա տիրակալների առջև ծառացել էր Սասանյան իշխանակալության արևմտյան սահմաններն այդ ոտնձգություններից պահպանելու ծանր ու պատասխանատու խնդիրը: Այսպիսի պայմաններում Խոսրով Փարվեզը չէր կարող հենվել տեղական իշխանների վրա, չնայած այնտեղ նստած էր պարսից մարզպանը: Պետք էր ավելի իրական ուժ, կրոնով ու գաղափարով հավատարիմ Պարսկաստանի զավթողական քաղաքականությանը: Եվ նա գտնում է այդ ուժը: Միհրանը, ինչպես ասվեց, իր հետ վերցնելով երեսուն հազար ընտանիք, տեղափոխվում է նոր անվանակոչված Աղվանք և բռնությամբ հաստատվում Գարդմանում:

Ամրապնդվելով Ուտիքի Գարդման գավառում, Միհրանյանները փոխարինելու եկան նրա նախկին բուն հայկական նախարարական տանը: Թվում էր, թե նրանց հաստատվելով ու Գարդմանի հայ նախարարական տան վերացումով կամ ժամանակավորապես քաղաքական կյանքից հեռացումով, ողջ գավառը նոր հարստության ազդեցության տակ կկորցնի հայկականությունը: Բայց տեղի է ունենում հակառակը, Միհրանյաններն իրենք են աստիճանաբար հայանում, ընդունելով քրիստոնեական կրոնը: Մ. Կաղանկատվացին գրում է. «Եվ Միհրեանն, որ ի Սասանեան տոհմէն էր եկեալ ի Պարսից, հաստատեցաւ ի նախարարութիւն. և անուանք նոցա որդի ի հօրէ առնելով՝ են այսոքիկ. Միրհ, Արմայէլ, Վարդ, քաջ Վարդան, որ հաւատացեալ ի Քրիստոս և ոչ շինողն Գարդման բերդոյ»[27]:

Ընդունելով քրիստոնեություն, ապա խնամիական կապեր հաստատելով տեղական հայ իշխանական տների ներկայացուցիչների հետ, մանավանդ հայ գրի ու գրականության առկայության պայմաններում[28], Միհրանյանները վերջնականապես հայանում են և հանդես գալիս որպես հայկականության ջատագովներ՝ յուրացնելով հայ ավագանուն հատուկ սովորույթները:

Սկզբնական շրջանում Միհրանյաններն ամփոփված էին Գարդման գավառում և, ինչպես երևում է նրանց տրվող «Գարդմանայ տեառն» տիտղոսից[29], այն վերածում են հայրենական կալվածքի, ապա առաջին իսկ հնարավորության

[27] Կաղանկատվացի, Գ, գլ ԻԳ (ընդգծ. - Հ. Ս.): Ս. Կանայանը գտնում է, որ «ոչ շինողն Գարդման բերդոյ» պետք է սրբագրել «որ շինողն Գարդման բերդոյ» (Տե՛ս նրա «Անհայտ գավառներ հին Հայաստանի», էջ 160, ծանոթ. 2): Այս ուղղումը շատ հավանական է, մանավանդ որ Կաղանկատվացին ունի հենց այդ հաստատող վկայություն. «զքաջն Վարդան, որ շինեաց զբերդն Գարդմանայ» (Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԷ):

[28] Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը:

[29] Կաղանկատվացի, Բ, գլ. ԻԱ, Ծ:

դեպքում, կարողանալով գերիշխանության հասնել գլխավոր հակառակորդների՝ Առանշահիկների նկատմամբ, իրենց հռչակում են Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածության վրա իշխելու հավակնություն ունեցող միակ իրավատերերը:

Առաջինը Միհրանյան տոհմից, որ հասնում է նշված ողջ տարածքում իշխելու պատվին, Վարազ-Գրիգորն էր՝ Միհրանից հետո 6-րդ իշխանը: Դա է վկայում ոչ միայն նրա համար գործածվող «զառաջին իշխան Աղուանից» տիտղոսը, որը Միհրանյաններն սկսում են կրել նրանից սկսած[30], այլև 20-ական թթ. վերջում Աղվանքում տեղի ունեցած դեպքերի ժամանակ երկրի մայրաքաղաք Պարտավում նստող Գայշաք անունով մեկի՝ որպես Աղվանից աշխարհի իշխանի, հիշատակությունը: «Գայշաք, որ առաքեալն էր ի Խոսրովայ պետ և իշխան աշխարհիս»[31], «որ պահէր և ունէր զքաղաքն Պարտաւ»[32]: Խազարների հարձակումից ահաբեկված, այս իշխանի փախուստից ու Խոսրով Բ Փարվեզի սպանությունից հետո․և 628 թ. Վարազ-Գրիգորի Աղվանից առաջին իշխան նշանակումով[33] միայն Միհրանյանները հասնում են ողջ Աղվանից աշխարհում իշխելու պատվին:

Այսպիսով, Միհրանի ժառանգները, լինելով շրջահայաց ու հեռատես քաղաքական գործիչներ, ժամանակի ընթացքում կարողանում են իրենց տիրապետությունն ամրապնդել Կուրի և Արաքսի միջագետքում՝ դառնալով այն իշխանական հարստությունը, որ միայն իր ձեռքում էր կենտրոնացնում քաղաքական իշխանությունը: Ավելին, իրենց հզորության գագաթնակետին՝ Ջուանշիր իշխանի օրոք, նրանք այդ իշխանությունը տարածում են նույնիսկ Կուրի ձախակողմյան տարածքի որոշ մասի վրա և[34]: Հարկ է ընդգծել, որ վերջում նշված որոշ տարածությունների ենթակայությունը Միհրանյաններից կրում էր ավելի շուտ ժամանակավոր ու անվանական բնույթ: Նրանց քաղաքական գործունեությունը հիմնականում ծավալվում էր Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածքում՝ Ուտիքում և Արցախում կամ ժամանակի հասկացողությամբ՝ Աղվանք-Առանում:

Այսպիսով, Միհրանյան իշխանական հասրտությունը, բարձրանալով իր տարածքով ու էթնիկական կազմով «Ալբանիայից», բոլորովին տարբեր մի երկրամասում, այնպիսի խառը ժամանակներում, երբ արաբները սկսել էին բախել Բյուզանդիայի ու Պարսկաստանի դռները, իսկ հյուսիսից խազարները հյուսիսային ամեն տեսակ ցեղերի հետ ավարառուական նպատակներով հանգիստ չէին տալիս Կովկասի հարավային լանջին ապրող ժողովուրդներին, կարողանում են հասնել քաղաքական ու տնտեսական հաջողությունների՝ պահպանելով իրենց երկրի ներքին ինքնուրույնությունը:

---

[30] Նույն տեղում, Բ, գլ. ԺԷ, Գ, գլ. Ի:

[31] Նույն տեղում, Բ, գլ. ԺԱ:

[32] Նույն տեղում:

[33] Տե՛ս ստորև:

[34] Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԷ, ԻԱ:

# ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

# ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԸ ՄԻՀՐԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ (590-821 թ.թ.)

## Ա. Աղվանքը մինչարաբական նվաճումները

Նոր հարստության հաստատվելը Աղվանքում նշանավորվում է 603-604 թվականների մի ապստամբությամբ: Ն. Ադոնցի կարծիքով, այս թվականներին «քաղաքական ընդհանուր կացությունը հիմք չի տալիս ենթադրելու որևէ ապստամբական շարժում Աղվանքում»[1]: Բայց որ VII դարի սկզբներին պարսից տերության դեմ տեղի է ունեցել ապստամբություն և դաժանորեն ճնշվել է Խոսրով Բ-ի կողմից, երևում է «Պատմության»՝ Աղվանքի կաթողիկոս Վիրոյին նվիրված գլխից: Վիրոն քսանհինգ տարի շարունակ գտնվել է «առ դրանն Խոսրովու», որովհետև վերջինս նրան «յանցական գտեալ ընդ ապստամբողս մեծամեծաց իշխանաց աշխարհին Աղուանից, որք ապստամբեցան յարքայէն Պարսից և կորեան անկան բազումք ի նոցանէ ոմանք ի սուր, ոմանք ի խեղութիւնս անդամոց և ոմանք տարագրեալք յաշխարհս հեռաւորս»[2]: Աղվանից երկրում տեղի ունեցած ապստամբության մասին հիշատակվում է նաև Կյուրիոն վրաց կաթողիկոսի՝ Ցուրտավի եպիսկոպոսին՝ Մովսեսին ամբաստանող նամակում, որն ուղղված էր Վրկանից մարզպան Սմբատ Բագրատունի հայ իշխանին: Նամակում հայտնվում է մարզպանին, որ վերոհիշյալ Մովսեսը «վասն չար գործոց իւրոց գաղտ ի գիշերի փախստական գնաց եւ յապստամբս (Աղուանից) չոգաւ առ Վահրամ եւ այնպէս չարութեամբ գիտաց առնէլ զի սակաւիկ ինչ պիտեցաւ եւ դեռ զքաղաքս առնուլ տայր եւ Արեաց աշխարհին մեծ զիան հասուցանէր»[3]: Այս հիշատակումները ցույց են տալիս, որ, իրոք, VII դարի սկզբներին պարսից տերության դեմ ծագել է ապստամբություն: Ապստամբության պատճառը, անկասկած, ի դեմս Միհրանյանների, Աղվանքում պարսկական մի տոհմ հաստատելու Սասանյան Պարսկաստանի քաղաքականությունն էր, որով ձգտում էր, տեղական տարրի վերացումով, տիրապետության հասնել նախ Աղվանք-Առանում, ապա նաև ողջ արևելյան Անդրկովկասում: «Աղուան ապստամբների գլուխն էր», ըստ Ն. Ակինյանի[4], Ցուրտավի եպիսկոպոսի նամակում հիշատակված Վահրամը: Կարծիք կա, որ նա կարող էր լինել Աղվանքի ապագա կաթողիկոս Վիրոն[5]: Տրամաբանական է ենթադրել, որ ապստամբության ռազմական ղեկավարը հիշյալ Վահրամն էր, այն դեպքում, երբ Վիրոն կարող էր ստանձնած լինել հոգևոր առաջնորդի դերը:

Ապստամբերի համար պատեհ առիթ էին պարսկա-բյուզանդական պատերազմները: 602թ. բյուզանդական արքունիքում պալատական հեղաշրջման

---

[1] Ն. Ադոնց, Քննութիւն Մովսես Կաղանկատուացոյ, «Անահիտ», 1940, թիվ 3, էջ 31:

[2] Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԴ:

[3] Գիրք թղթոց, էջ 171:

[4] Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի ..., էջ 200:

[5] З. М. Буниятов, О деятельности католикоса Албании Виро (590-630 гг.), Ближный и Средный Восток, 1962, с. 16: Его же, Азербайджан в VII-IX вв., с. 48: Ն. Ադոնցի կարծիքով ընդհանրապես Վիրոն չի մասնակցել ապստամբությանը (Տե՛ս «Անահիտ», էջ 30):

ժամանակ սպանվում է Մորիկ կայսրը, և նոր կայսր է հռչակվում Փոկասը (602-610 թթ.): Պարսից Խոսրով Բ Փարվեզ թագավորը պարսկական զորագնդերը շարժում է Բյուզանդիա՝ իր բարերարի սպանության վրեժը լուծելու պատրվակով: Եվ «մեծամեծք իշխանք Աղուանից», օգտվելով նրա բացակայությունից և պատերազմով զբաղված լինելուց, ապստամբում են: Դժվար է խոսել այս ապստամբության որևէ դրվագի մասին: Բացի ապստամբելու փաստն ընդգծող նշված ընդհանուր հիշատակություններից, աղբյուրները ոչինչ չեն հաղորդում: Ամենայն հավանականությամբ ապստամբությունը սուր բնույթ չի կրել, քանի որ, չնայած զբաղվածությանը, Խոսրով Բ-ն կարողանում է ճնշել այն, իսկ նրա մասնակիցների հետ դաժան հաշվեհարդար տեսնել՝ ոմանց սրի քաշելով, ոմանց խեղանդամ դարձնելով, ոմանց էլ աքսորելով հեռավոր երկրներ[6]: Ինքը՝ ապստամբության ենթադրյալ առաջնորդ Վիրոն, մի կերպ ազատվում է իրեն սպասվող մահապատժից, Խոսրով Բ-ի կանանոցում գտնվող քրիստոնյա, տիկնանց տիկին Շիրինի միջնորդությամբ[7]: Վերջինս, որ Խոսրով թագավորից ստացել էր «համարձակութիւն վասն հաւատոյ»[8] «մեծաւ ջանիւ կարաց գտանել ի պարգևի զկեանս նորա ի թագաւորէն»[9], պայմանով, սակայն, որ Վիրոն ընդմիշտ մնա պարսից արքունիքում:

Ապստամբությունը ճնշելուց հետո Աղվանից կամ Ուտիք-Արցախյան աշխարհը հարկադրված էր ճանաչել նոր իշխանական տան իրավունքները կառավարման համակարգում: Այժմ արդեն ապահովված Միհրանյանները կարող էին լայն գործունեություն ծավալել ողջ երկրամասում՝ լիիրավ տիրակալության հասնելու համար: Մինչդեռ շարունակվում էին պարսկա-բյուզանդական պատերազմները, որոնց, շուտով, իր կամքից անկախ, մասնակից է դառնում և Աղվանից աշխարհը:

610թ. բյուզանդական գահի վրա Փոկասին փոխարինում է Հերակլ կայսրը (610-641 թթ.), որն էլ 622 թ. սկսում է պատմության մեջ հայտնի պարսկական արշավանքները[10]: Ռազմական թատերաբեմ են դառնում Հայաստանի կենտրոնական շրջանները, նրա հյուսիսարևելյան կողմերը, այսինքն՝ նոր անվանակոչված Աղվանից աշխարհը և Վրաստանը: Եվ ահա «յամի ԼԴ-երորդի Խոսրովայ արքայի», այն է՝ 624 թ. «չուեաց գնաց Երակլոս ծի հազարաւ, և երթեալ ի դուռն թագաւորին Պարսից»[11]: Պոնտոսից անցնելով Ատրպատական[12] ու նրա Գանձակ քաղաքը, ի փոխհատուցումն Երուսաղեմի[13], հիմնովին քանդելուց հետո, Հերակլը շարժվում է Խոսրովի վրա: Վերջինս, սակայն, հարձակման թափից խուճապահար նահանջում է Ասորեստան: Տեսնելով այդ, Հերակլը դադարում է Խոսրովին հետապնդելուց և ետ է դառնում ձմեռն անցկացնելու «ի կողմանս Աղուանից, Վրաց և Հայոց աշխարհաց»[14]: Աղվանքն ու շրջակա երկրները

---

[6] Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԴ:

[7] Սեբեոս, գլ. ԺԱ: Մխիթարայ Անեցւոյ Պատմութիւն, ՍՊԲ, 1879, էջ 34:

[8] Մխիթար Անեցի, էջ 34:

[9] Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԴ:

[10] Այս արշավանքների ու դրանց մանրամասների մասին տե՛ս Թեոփանես Խոստովանող, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1983, էջ 18-37:

[11] Սեբեոս, գլ. ԼԶ:

[12] Հերակլի այս և մյուս արշավանքների երթուղիների մասին տե՛ս Հ. Մանանդյան, Երկեր, h. Ե, էջ 375-405:

[13] Երուսաղեմը մինչ այդ գրավել, հրկիզել ու սբ. Խաչի նշանը գերեվարել էին պարսից զորքերը (Կաղանկատվացի, Բ, գլ. Ժ):

[14] Կաղանկատվացի, Բ, գլ. Ժ:

ընտրելով որպես ձմեռելու համար հարմար մի վայր, բյուզանդական կայսրը փորձում է օգտագործել նաև նրանց զինված ուժերը, «ուստի և գիր արարեալ առ իշխանս և առաջնորդս աշխարհաց, զի ինքնակամ կամօք եկեսցեն ընդ առաջ նորա և ընկալցին զնա հանդերձ զօրօքն իւրովք յաւուրս ձմերայնոյ. ապա եթե ոչ, - սպառնում է կայսրը, - համարեսցին առաջին նորա իբրև հեթանոսք, առցին ամուրք նոցա և գերեսցին սահմանք աշխարհացն այնոցիկ ի զօրաց նոցա»[15]: Բայց նրանք ուշադրություն չեն դարձնում Հերակլի պահանջներին և, չվախենալով նրա սպառնալիքներից ու ունենալով Խոսրովի հրամանը, ամրանում են երկրի տարբեր վայրերում: Կաղանկատվացու պատմելով, մասնավորապես Աղվանից իշխանները «ի նոյն ինքն ի հրամանէ Խոսրովու թողեալ զմեծ քաղաքն Պարտաւ, ելեալ գնացին ամրացան ի տեղիս տեղիս»[16]: Դա փաստորեն նշանակում էր հրաժարվել նաև դիմադրությունից: Դրանից էլ օգտվելով, կայսերական բանակը անթիվ բազմությամբ մտնում է Ուտիք և, ապա ճանապարհին ավերածություններ սփռելով, բանակում է Տրդու գետի ափին՝ Դյուտական գյուղի մոտ[17]: Այնուամենայնիվ, Հերակլին չի հաջողվում 624-625թթ. ձմեռն անցկացնել այնտեղ: Թեոփանեսը պատմում է, որ Խոսրովը, պարսից բանակի գլխավոր հրամանատար նշանակելով Շահրապղական անունով զորավարին և նրան «տալով Խոսրովական և Պերոզական կոչվող զորքերը, ուղարկեց Ալբանիա՝ Հերակլիոսի դեմ»[18]: Կաղանկատվացին էլ է պատմում, որ պարսից «նոր» կոչված զորքը զորավար Շահրապղականի գլխավորությամբ հետամուտ է լինում Հերակլին և հարկադրում նրան ռազմական գործողություններ սկսել[19]: Ռազմական գործողությունները ծավալվում են Աղվանքի տարածքում, ուր հասնում է Բյուզանդիայից վարադարձած պարսից մյուս բանակը՝ Շահր-Վարազի գլխավորությամբ: Շահրապղականի ու Շահր-Վարազի բանակները մի կողմից, պարսից մի երրորդ բանակ էլ զորավար Շահենի հրամանատարությամբ մյուս կողմից, Հերակլին առնում են շրջապատման մեջ: Դյուտական գյուղի մոտ ճամբար խփած Հերակլի դեմ Գարդմանի Մյուս Տիգրանակերտ ավանում կանգնում են առաջին երկու զորավարների բանակները, իսկ թիկունքում՝ նույնպես Տիգրանակերտ կոչվող ավանում՝ Շահենի բանակը: Հերակլը շրջապատումից դուրս գալու համար ամբողջ զորությամբ հարձակվում է Շահենի երեսուն հազարանոց բանակի վրա, «Հապճեպ զորութեամբ եհար զնա և խորտակեաց և գնաց ի ծղուկս. և թափեցաւ ընդ լեռնակողմն ի դաշտն Նախճաւանն ի ձմերան ժամանակի»[20]: Նույնը պատմում է և Կաղանկատվացին[21]: Պատերազմական գործողություններին Աղվանքի մասնակցության մասին աղբյուրներում ուղղակի տեղեկություններ չկան: Բայց ելնելով այն փաստից, որ Հերակլը օգնության պահանջով դիմել է Աղվանից երկրի իշխաններին, իսկ նրանք, մերժելով նրա պահանջը, հնազանդվել են Խոսրովի կարգադրությանը, կարելի է ենթադրել, որ մասնակցում էին այդ պատերազմներին և հանդես էին գալիս Պարսկաստանի կողմից ընդդեմ Բյուզանդիայի: Դրան էր մղելու նաև այն, որ Աղվանից իշխանության գլուխ կանգնած էր պարսկական

[15] Նույն տեղում:
[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում:
[18] Թեոփանես, էջ 23:
[19] Կաղանկատվացի, Բ, գլ. Ժ:
[20] Սեբեոս, գլ. ԼՁ:
[21] Կաղանկատվացի, Բ, գլ. Ժ:

ծագում ունեցող ու Պարսկաստանի հպատակ Միհրանյան հարստությունը:

625-626 թթ. ձմեռն անցնում է երկուստեք նոր պատերազմների նախապատրաստման, դիվանագիտական եռանդուն գործունեության մեջ: Պարսիկները կարողանում են դաշնակցել Բալկանյան թերակղզում տիրապետող ավարների հետ և նրանց ուշադրությունը հրավիրել Կոստանդնուպոլսի վրա[22], իսկ Հերակլը այս միությանը հակադրում է խազարների հետ իր դաշնակցությունը: Նրա նպատակն էր «բանալ զդրունս Չողայ, հանել զազգս ազգս բարբարոսաց և նոքօք վանել զթագաւորն Պարսից զհպարտն Խոսրով»[23]: Սա արդեն Հերակլի քաղաքականության մեջ նոր երևույթ էր, որն իրեն լիովին արդարացնում է: Պատմիչի վկայությամբ, Հերակլը խազարների առաջնորդ Ջեբու խաքանի մոտ է ուղարկում իր նախարարներից Անդրե անունով մեկին՝ «բազում խոստմամբք անթիւ անհամար գանձուց»[24]: Ամենայն հավանականությամբ, Հերակլը բացի խոստացած անհամար գանձերից, նրան էր տվել և Աղվանքը, Լփինքը և Չողը, որպես սեփական տիրույթներ: Այս ենթադրությունը ուժ է ստանում խազարների արքայորդի Շաթի խոսքերով՝ ուղղված Աղվանից կաթողիկոս Վիրոյին. «Ստացաւ հայր իմ զաշխահրս զայսոսիկ երեսին՝ Աղուանից, Լփնաց և Չողայ յիւր սեպհական ժառանգութիւն յաւիտենականն»[25]: Վաչկատուն խազարների ընչաքաղց առաջնորդը, հրապուրված կայսեր խոստումներից և պարսից արքայից հնազանդության մեջ գտնվող երկրները ասպատակելու հնարավորությունից, արձագանքում է Հերակլի կոչին, որի հետևանքն են 627, 628 և նույնիսկ պատերազմի ավարտին հաջորդող՝ 629 թ. մեկը մյուսի հետևից կրկնվող ավերիչ արշավանքները դեպի երկրամաս, որոնց ժամանակ ծանր ու տագնապալից վիճակ էր ստեղծվում նրա բնակիչների համար: Կաղանկատվացին սարսափազդու գույներով է նկարագրում խազարների արշավանքները. «Իսկ ի մտանել ամին երեսներորդի եօթներորդի նոյն ինքն Խոսրովու, - գրում է պատմիչը, - առաքեաց թագաւորն հիւսիսոյ զխոստացեալ զօրսն պատերազմող, զօրավար կարգեալ զեղբօրորդին իւր, որում ի պատիւ իշխանութեանն իւրեանց Շաթ[26] անուն կարդային, որ եկեալ արշաւեաց յամենայն սահմանս աշխարհիս Աղուանից և ընդ մասն ինչ Ատրպատականու և մաշեաց ի սուր սուսերի զբազում անձինս քրիստոնեից և հեթանոսաց. իսկ զթիվ նոցա որք գերեցան ի նոցանէ ո՞ կարիցէ հասու լինել կամ ընդ գրով արկանել»[27]: Սա խազարների առաջին արշավանքն էր, կամ, եթե կարելի է այսպես արտահայտվել, առաջին ուժեղ հարվածը Պարսկաստանին՝ թիկունքից հասցված:

Հաստատվելով Արաքսի ափին, խազարների առաջնորդը պատգամավորներ է ուղարկում Խոսրով արքայի մոտ՝ պահանջելով նրանից ետ վերադարձնել բազմաթիվ գերիներին և սբ. Խաչի նշանը, ազատել քաղաքներն ու զինվորներին դուրս բերել գրաված տարածքից, հակառակ պարագայում սպառնալով նրա

[22] Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 248:

[23] Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԲ:

[24] Նույն տեղում:

[25] Նույն տեղում, Բ, գլ. ԺԴ:

[26] Ն. Ադոնցը գտնում է, որ «Շաթ հատուկ անուն չէ, այլ տիտղոս, ishad կամ Ù alshad, ըստ արաբ հեղինակների (Տե՛ս «Անահիտ», 1939, 4-5, էջ 26): Վ. Առաքելյանն առարկում է՝ գտնելով, որ «ինչպես որ իշխանը և՛ տիտղոս է, և՛ հատուկ անուն, այնպես էլ այստեղ Շաթը հատուկ անուն է» (Կաղանկատվացի, էջ 282, ծանոթ. 147): Այստեղ, կարծում ենք, բառը օգտագործված է հենց տիտղոսի իմաստով: Ուշադրություն դարձնենք «Որում ի պատիւ իշխանութեանն իւրեանց Շաթ անուն կարդային» Կաղանկատվացու խոսքերին:

[27] Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԲ:

պատճառած վնասների համար հատուցել կրկնակի[28]: Այդ նույն ժամանակ՝ 627թ. դեկտեմբերի 23-ին[29], Նինվեի մոտ մղվող ճակատամարտում, Հերակլը ջախջախիչ հարված է հասցնում Պարսկաստանին: Ճակատամարտի ժամանակ սպանվում է պարսից զորավար Ռոճ Վեհանը, իսկ բյուզանդական զորքերը հսկայական ավար են ձեռք բերում[30]: Հաղթանակն ազատ է արձակում խազարների ձեռքերը, և նրանք երկրորդ անգամ՝ 628թ.[31], նոր ուժգնությամբ հարձակվում են Հայոց Արևելից կողմանց՝ Աղվանքի վրա: Խազարական բանակն այս անգամ գլխավորում էր ինքը՝ Ջեբու խաքանը: «Յամին երեսներորդի ութերորդի, որ ամ էր տագնապի և աղետի սպանման Խոսրովու, - հաղորդում է Կաղանկատվացին ու նկարագրում այդ արշավանքի հետևանքները, - եկեալ նոյն ինքն զոր վերագոյնն ասացաք, որ էր նա Ջեբու խաքան, ունելով ընդ իւր և զորդին իւր. և զհամար զօրուն նորա ոչ ոք կարէր արկանել ընդ թուով: ... Իբրև զգայլս գիշախանձ անամոթացեալս դիմեցին ի վերայ նոցա և անխնայ կոտորեցին անցս և ի փողոցս քաղաքին. և ոչ խնայէր ակն նոցա ի գեղեցկատես, պայծառագեղ, մանկահասակ արուի կամ իգի, և ոչ յանպիտանս և յանօգուտս. և ոչ թողուին զհաշմս կամ ծերս, և ոչ գթային կամ գալարեին աղիք նոցա ի խանդաղատանս տղայոց, որք զկոտորեալ մարբքն փարէին և դիեին զարիւն ստեանց նոցա իբրև զկաթն: Այլ իբրև զհուր վառեալ յեղեգն՝ մտանէին ընդ դուռն և ելանէին ընդ միւս գործ գազանաց երկրի և թռչնոց երկնից թողեալ ի նմա, ապա տակաւ շարժէին ալիքն ընդդէմ մեր»[32]: Աղվանից աշխարհում պատրաստվում են դիմադրել խազարներին: Տեղի իշխանը, որին Կաղանկատվացին Գայշաք է անվանում, փորձում է Պարտավի բերդում կենտրոնացնել քաղաքի ու շրջակա վայրերի բնակչությանը և դիմագրավել թշնամուն: Կաղանկատվացին գրում է. «Իբրև եհաս յերկիրս Աղուանից բօթն ահագին կամեցեալ ամրացուցանել զաշխարհս մեր ի մեծ մայրաքաղաքն Պարտաւայ բերդին. և լինէր այն ի հրամանէ առն միոյ, որում անուն էր Գայշաք, որ առաքեալն էր ի Խոսրովայ պետ և իշխան աշխարհիս, որ փակեաց ի ներքս զբազմութիւն շրջակայից գաւառաց և կամէր պնդել զինքն միաբանութեամբ հանդերձ մեծամեծաց աշխարհիս և բնակչաց քաղաքին կալ ընդդեմ նոցա»[33]: Սակայն դա այլևս անհնար էր: Թշնամին մոտեցել էր Պարտավին և սրընթաց առաջ էր շարժվում: Փրկության միակ ելքը փախուստն էր, որին էլ դիմում է ժողովուրդը: Փախստականները անապարում են Արցախի անմատույց լեռներում ապաստան գտնելու, բայց քչերին է հաջողվում փրկվել կոտորածից: Փախչում և Պարսկաստանում ապաստան է գտնում նաև Գայշաք իշխանը, ընդմիշտ կորցնելով նաև իր իշխանությունը Աղվանք կոչված Հայոց Արևելից կողմերում:

Աղվանքը նվաճելուց հետո խազարներն արշավում են դեպի Վրաց երկիր և պաշարում նրա մայրաքաղաք Տփղիսը: Այստեղ է շտապում և ինքը՝ Հերակլ կայսրը, օգնական զորքերով: Սակայն տեղի բնակչությունը ուժեղ դիմադրություն է ցույց տալիս, չլատում պաշարողների ուժերը և հարկադրում վերացնել քաղաքի

[28] Նույն տեղում, Բ, գլ. ԺԲ:
[29] Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 251:
[30] Սեբեոս, գլ. ԼՁ, Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԲ:
[31] Զ. Բունիյաթովը այս արշավանքի ժամանակը ցույց է տալիս 623թ., որը ճիշտ չէ (Տե՛ս О длительности пребывания хазар в Албании в VII-VIII вв., Известия АН АзССР, 1961, N 1, с. 22).
[32] Կաղանկատվացի. Բ, գլ. ԺԱ:
[33] Նույն տեղում:

պաշարումն ու հեռանալ: Տփղիսից վերադառնալու ճանապարհին Հերակլ կայսրը կանգ է առնում Գարդմանի գավառի Խուզաշեն վայրում, ուր հրավիրում է Միհրանյան տոհմից Վարազ-Գրիգորին: Հրավերի նպատակը, հավանաբար, Վարազ-Գրիգորին նվաճված Աղվանքի իշխան նշանակելն էր: Հասկանալի է, որ նման նշանակումով Բյուզանդիան ի դեմս Վարազ-Գրիգորի կունենար իրեն հավատարիմ վասալը և կամրապնդեր ազդեցությունը Հայոց Արևելից կողմերում: Այդ ազդեցությունն էլ ավելի հաստատուն դարձնելու համար Հերակլը մկրտում է Վարազ-Գրիգորին[34]:

Ելնելով Հերակլ կայսեր կողմից Վարազ-Գրիգորին մկրտելու այս մասնավոր դեպքից, Ռ. Գեյուշևը սխալ ընդհանրացում է անում, թե իբր Միհրանյան տոհմը քրիստոնեությունն ընդունել է 628 թ.՝ մկրտությունն ստանալով Հերակլից[35]: Բայց այսպիսի կարծիքը պատմական հիմք չունի: Զրադաշտականությունը Միհրանյան տոհմում, ինչպես մատնանշում է աղբյուրը[36], թողել էր դեռևս Վարազ-Գրիգորի պապը՝ Քաջ Վարդանը: Ուստի Վարազ-Գրիգորի մկրտությունը Հերակլի կողմից ավելի շուտ նրան հունադավան կրոնի հետևորդ կամ քաղկեդոնական դարձնելու ակտ էր, որով և երաշխավորելու էր նրա հավատարմությունը Բյուզանդիային:

Խազարների երկրորդ արշավանքը համընկնում է Պարսկաստանի պարտության ժամանակի հետ: Բյուզանդիայի հաղթանակը 628թ. պարսկական արքունիքում պալատական հեղաշրջում է առաջացնում, որի ժամանակ սպանվում է Խոսրով Փարվեզը, և նրան փոխարինելու է գալիս որդին՝ Կավատ Բ-ն, որին վիճակված էր իշխել ընդամենը վեց ամիս: Նա անհապաղ հաշտություն է կնքում Հերակլ թագավորի հետ[37]: Սրա օրոք բանտից ազատվում և հայրենիք է վերադառնում դեռևս Խոսրով Բ-ի կողմից Պարսկաստանում ցմահ մնալու դատապարտված Վիրոն և գրավում կաթողիկոսական գահը (628-630թթ.): Կարելի է մտածել, որ Հերակլի հեռանալուց և մանավանդ Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև հաշտության պայմանագրի կնքումից հետո, Աղվանքում վերահաստատվում է Պարսկաստանի ազդեցությունը: Այդպես մտածելու համար, կարծում ենք, բավարար հիմք է այն, որ նշված ժամանակաշրջանում երկրի քաղաքական կյանքում հայտնվում է պարսիկ մարզպանը: Այդպիսի մեկին հիշատակում է Կաղանկատվացին, նրան անվանելով Սեմա Վշնասպ և ավելի ակտիվ դեր հատկացնելով, քան երկրի առաջին իշխան Վարազ-Գրիգորին:

Երկու հզոր տերությունների միջև կնքված հաշտության պայմանագրից հետո, թվում էր, թե Աղվանից երկրի համար սկսվելու էր խաղաղության և անդորրության մի շրջան: Բայց նախորդ արշավանքների հարուստ ավարներից արբած խազարները երրորդ անգամ՝ 629թ. Առան-Աղվանքը ենթարկում են սրածության և մեծ ավերածությունների: Սկզբում Ջեբու Խաքանը «հանդերձ արինարբու կորեամբ իւրով՝ Շաթն կոչեցելով»[38] արշավում է Տփղիսի վրա, գրավում այն և աննկարագրելի ավերածությունների ենթարկում քաղաքը: Վրեժխնդիր լինելով այն ծաղրուծանակի համար, որ քաղաքի բնակիչները հասցրել էին Տփղիսի նախորդ

34 Картлис Цховреба, т. I, с. 375 (на груз. яз.);Е. С. Такайшвили, Источники грузинских летописей, СМОМПК, вып. 28, с. 128: С. Т. Еремян, Заметки к тексту “Хроники Сумбата”, Известия АрмфАНа СССР, 1941, N 9, с. 28.

35 Р. В. Геюшев, Христианство в Кавказской Албании, с. 77-78, 134.

36 Կաղանկատվացի, Գ, գլ. ԻԳ:

37 Սեբեոս, գլ. ԼԷ:

38 Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԴ:

պաշարման ժամանակ[39], խազարների առաջնորդը ետ է վերադառնում, իսկ Աղվանքի վրա ուղարկում որդուն՝ Ծաթին «հանդերձ դաստիարակօք», խստիվ պատվիրելով, «թէ ելցեն մեծամեծք, առաջնորդք նոցա աշխարհին ընդ առաջ որդւոյ իմոյ և տացեն ի ձեռս զաշխարհն իւրեանց ինձ ի ծառայութիւն և ընդարձակեսցեն զքաղաքս և զամրոցս իւրեանց և զվաճառս առաջի զօրաց իմոց, թողացուցէք և դուք նոցա կեալ և ծառայել ինձ. ապա եթէ ոչ՝ մի խնայեսցէ ակն ձեր ի նոսա յամենայն հասակ արուի ի հնգետասանամենից ի վեր. և զմատաղատունկս արուացն և զազգն իգականացն պահեցէք ինձ և ձեզ ի ծառայութիւն և յաղախնութիւն»[40]: Ունենալով նման հանձնարարական, խազարները պատգամավորություն են ուղարկում Աղվանքի մարզպան Սեմա Վշնասպի և Աղվանից կաթողիկոսի՝ Վիրոյի մոտ: Պարսիկ մարզպանը հրաժարվում է ճանաչել Ծաթի պատգամավորությանը և խուճապահար փախչում է Պարսկաստան: Այստեղ խիստ ծանրանում է կաթողիկոս Վիրոյի վիճակը: Մի կողմից խազարների արշավանքի ողջ վնասակարության գիտակցումը, մյուս կողմից գերությունից նոր ազատված լինելու հանգամանքը և պարսից արքունիքում նորից ամբաստանվելու վախը, ծանր կացության մեջ են դնում նրան: Նա սկսում է վարել երկդիմի քաղաքականություն. ընդունում է Ծաթի պատգամավորությանը, նրանց առատ նվերներ է բաժանում, զանազան պատրվակներով՝ ձգձգում պատասխանը, բայց և գաղտնի լուր է ուղարկում Տիզբոն՝ հայտնելով ստեղծված իրադրության մասին: Պարսից արքունիքից ուշանում է պատասխանը, պատգամավորները շտապեցնում են Վիրոյին: Նրանք հասկանում են վերջինիս խորամանկությունը և միակ բանը, որ կարողանում են անել, իբրև իրենց նկատմամբ Վիրոյի կատարած մեծ նվիրատվությունների երախտագիտության նշան, հայտնում են խազարների հարձակման օրը և խորհուրդ տալիս Վիրոյին փախչել: Բայց արդեն ուշ էր, քանզի «մինչդեռ նոքա զայս խոսէին, յանկարծակի պատեաց մէգն և մառախուղն զամենայն երեսս երկրիս մերում առ հասարակ, զդաշտս և զգլուխս լերանց, զբլուրս և զխորս ձորոց, և ոչ ուրեք մնաց քայլ մի ոտին յամենայն սահմանս երկրի մերում, ի շէնս և յագարակս ի տունս և յանցս ճանապարհաց»[41]: Կաթողիկոս Վիրոն, ոչինչ չկարողանալով անել, Արցախի Ձարաբերդ (այժմ՝ Ջրաբերդ) ամրոցում հրավիրում է Հայոց Արևելից կողմանց «զամենայն գլխաւորս, զորդիս թագաւորազանց և մեծաց աշխարհիս, զգաւառապետս, և գիւղապետս, և զերիցունս և զսարկավագունս, և զդպիրս, որք ի ժամուն անդ հանդիպեցան»[42] Ներկաներին բացատրում ստեղծված վիճակն ու հայտնում Ծաթի առաջադրած պայմանները: Ժողովականները որոշում են բավարարել դրանք: Վիրոյի խորհրդով նրանցից յուրաքանչյուրը բերում է մեծ քանակությամբ ոսկի, արծաթ և այլ թանկարժեք իրեր, որոնք վերցնելով՝ Վիրոն գնում է Ծաթի բանակատեղին՝ Ուտիքի Պարտավ քաղաքի մոտ[43]: Ծլացած նվերներից և Վիրոյի նկատմամբ առաջացած պատկառանքից, Ծաթը նրա խնդրանքի համաձայն ազատում է բոլոր գերիներին ու ավարը[44] և առաջադրում իր պայմանները: Դրանք բոլորն ընդունում է Վիրոն և խազարներին խոստանում է այնպիսի ծառայություն, ինչպիսին մինչ այդ եղել է Սասանյան

[39] Նույն տեղում, Բ, գլ. ԺԱ:
[40] Նույն տեղում, Բ, գլ. ԺԴ:
[41] Նույն տեղում:
[42] Նույն տեղում:

Պարսկաստանի նկատմամբ[45], այսինքն՝ ընդունում է խազարների գերիշխանությունը:

Այսպես, 629թ. արշավանքով Աղվանքն ընկնում է խազարների տիրապետության տակ: Դրանից հետո խազարները մարդիկ են ուղարկում նորանվաճ երկիրը՝ այնտեղ աշխարհագիր անցկացնելու և հարկեր սահմանելու նպատակով: Ըստ Կաղանկատվացու, հյուսիսի իշխանը «առաքեաց գործակալս ի վերայ ազգի ազգի արուեստագործաց, որք զգիտութիւն ոսկեծնութեան, և արծաթահալութեան, և երկաթահանութեան, և պղնձագործութեան ունէին: Նա և զանցս վաճառաց և զկարթընկեցս ձկնորսութեան մեծամեծ գետոցն Կուրայ և Երասխայ՝ զամենայն ճշդիւ պահանջէր, և զդիդրաքմայսն ըստ սովորութեան աշխարհագրին Պարսից թագաւորութեանն»[46]:

Ոգևորված հաջողություններից, խազարները սփռվում են ողջ Հայոց արևելից կողմերում, խորանում երկրում, մտնում Վիրք, ամենուրեք ավերելով ու թալանելով հարուստ ու շեն քաղաքները: Մինչ Ծաթի զինվորներն զբաղված էին ավերածություններով, գուժկանը բերում է Ջեբու Խաքանի՝ յուրայինների կողմից կործանման լուրը[47]: Ծաթը դադարեցնում է ասպատակությունները և վերադառնում իր երկիրը, որով և ավարտվում է նաև խազարների տիրապետությունը տարածաշրջանում:

Խազարների տիրապետության վերացումից հետո երկիրը նոր միայն սկսում է առժամանակ հանգիստ առնել և ապրել ինքնուրույն կյանքով: Այս ինքնուրույնությանը մեծ չափով նպաստում է և այն, որ պարսկա-բյուզանդական պատերազմներից կռվող կողմերը դուրս են գալիս չափազանց հոգնած և հյուծված: Նոր պայմաններում պարսից արքունիքը ձգտում էր քաղաքական իշխանությունն Աղվանքում պահպանել տեղական իշխանների միջոցով: Ինչպես հայտնի է, դեռևս 628թ. Բյուզանդիայի կայսր Հերակլի կողմից Աղվանքի առաջին իշխան էր նշանակվել Վարազ-Գրիգորը: Սակայն, ամենայն հավանականությամբ, նա այդ կոչումը կրել է սոսկ անվանական, իսկ երկրի փաստական կառավարիչը եղել է վերոհիշյալ մարզպան Սեմա Վշնասպը: Դրա ապացույցն է այն փաստը, որ Ծաթ արքայորդին իր դեսպաններին ուղարկում է հենց նրա ու կաթողիկոս Վիրոյի մոտ և ոչ թե Վարազ-Գրիգորի: Այժմ, երբ վերացել էր Աղվանքի վրա նախ Բյուզանդիայի, ապա խազարների արշավանքների սպառնալիքը, և առաջացել էին պայմաններ, որոնք Պարսկաստանից պահանջում էին նոր վերաբերմունք հպատակ երկրների նկատմամբ, այն 629թ. ճանաչում է Վարազ-Գրիգորի իշխանական իրավունքները (628-642 թթ.):

Այսպիսով, ի դեմս Վարազ-Գրիգորի, Աղվանքի իշխանական գահի վրա էր գտնվում Միհրանյան տոհմի վերցերորդ ներկայացուցիչը, որը դառնում է «զառաջին իշխանն Աղուանից»[48]: Այստեղ նրան տրվող «առաջին իշխան Աղուանից» որոշիչը, անկասկած, տիտղոս է և ընդգծում է այն , որ վերջապես Միհրանյանները հասել էին ամբողջ Աղվանքում կամ հայոց հյուսիս-արևելյան կողմերում իշխելու աստիճանին: Ըստ նրա մասին խոսող հայ պատմիչի, Վարազ-Գրիգորը «Էառ զմկրտութիւն ի Վիրոյէ Աղուանից կաթողիկոսէ»[49]: Քանի որ սա

---

[45] Նույն տեղում:

[46] Նույն տեղում, Բ, գլ. ԺԶ:

[47] Նույն տեղում:

[48] Նույն տեղում, Բ, գլ. ԺԷ:

[49] Նույն տեղում:

չէր կարող նշանակել քրիստոնեության ընդունում, որովհետև, ինչպես հայտնի է, զրադաշտական կրոնը թողել էր դեռ նրա պապը՝ Քաջ Վարդանը, ուստի իրավացի է կարծել, որ նա այս ակտով քաղկեդոնական կրոնից, որին նա հարել էր կայսր Հերակլի հարկադրանքով[50], վերադարձել է լուսավորչական դավանանքի, և այդ արարողությունն իրականացրել է կաթողիկոս Վիրոն:

Խազարների՝ միմյանց հաջորդող հարձակումներն ու անհաշիվ գերությունները երկիրը հասցնում են տնտեսական ծանր դրության: Անվերջ արշավանքներն ահաբեկ բնակիչներին թույլ չէին տալիս զբաղվելու երկրագործական և այլ աշխատանքներով, ու արդեն 630թ. երկրում տարածվում է սովը: Այն իր հետ բերում է նաև համաճարակ, որին էլ նույն թվականին զոհ է գնում ինքը՝ կաթողիկոս Վիրոն:

VII դարում Մերձավոր արևելքում հայտնվում են արաբները, որոնք մեծ արագությամբ կազմավորվում են և սկսում իրենց նվաճումները: Նրանց խորտակիչ ուժի հարվածն առաջինն զգում է աշխարհակալ Պարսկաստանը: Արաբների հարձակումները Պարսկաստանի վրա ավելի հաճախակի են դառնում 632թ., այստեղ գահ բարձրացած Հազկերտ Գ-ի (632-652 թթ.) օրոք, որը դարձավ վերջին Սասանյանը պարսից գահի վրա:

Արաբների դեմ պայքարելու համար պարսից արքան հնազանդ երկրներից պահանջում է օգնական զորք ուղարկել իրեն: Նման կարգադրություն է ստանում նաև Առան-Աղվանքի իշխան Վարազ-Գրիգորը, որն ուներ չորս որդիներ՝ Վարազ-Պերոժ, Ջուանշիր, Յեզուտ-Խոսրով, Վարազման: Պարսից երկրի վրա կախված սպառնալիքի դեմ պայքարելու համար Աղվանից իշխանը նպատակահարմար է գտնում երկրորդ որդուն՝ Ջուանշիրին, իր փոխարեն ուղարկել Հազկերտ Գ-ի կոչին[51]: Այդ 636 թվականին էր: Ջուանշիրի զորագունդը պարսից բանակում ներկայանում է որպես Աղվանից աշխարհից եկած օգնական զորք, որը մեկ անգամ ևս ապացուցում է, որ Գարդմանի երբեմնի իշխանների սրի ուժն արդեն տարածվում էր Կուր և Արաքս գետերի միջև ընկած ողջ տարածքի վրա: Միհրանյանների իշխանությունն էլ ավելի հաստատուն է դարձնում Ջուանշիրը, որը 642թ. Նեհավենդի ճակատամարտից հետո, տուն վերադառնալով, դեռևս հոր կենդանության ժամանակ ստանձնում է Կուր և Արաքս գետերի միջև ընկած Աղվանից աշխարհի առաջին իշխանի պաշտոնը:

[50] Տես վերը:

[51] Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԸ:

## Բ. Ջուանշիր (642-683 թթ.): Արաբական տիրապետության հաստատումն Աղվանքում

Պարսկա-բյուզանդական երկարատև պատերազմներից հետո (603-628թթ.), որն ավարտվեց Պարսկաստանի պարտությամբ և Խոսրով Բ Փարվեզի սպանությամբ, Սասանյանները կորցրին իրենց ազդեցությունը: Մերձավոր արևելքում նրան փոխարինելու եկավ նոր ուժ: Այնուամենայնիվ Պարսկաստանը չէր ուզում զիջել Արևելյան Անդրկովկասը, ուր դեռևս պահպանում էր ազդեցությունը: Նույն տարածքին տիրելու փորձեր էին անում Բյուզանդիան ու, Պարսկաստանի թուլությունից օգտվելով, նաև խազարները:

Քաղաքական նման խառը պայմաններում Աղվանից իշխանական գահը ժառանգում է Վարազ-Գրիգորի երիտասարդ որդին՝ Ջուանշիրը: Վերջինս մինչ այդ պարսկա-արաբական պատերազմներում իրեն դրսևորել էր որպես քաջ զորավար ու հմուտ քաղաքագետ: Հոր հանձնարարությամբ ստանձնելով իրեն վստահված զորքի հրամանատարությունը, ժամ առաջ կռվի մեջ մտնելու ձգտումով՝ «նախքան զիշխանն Սիւնեաց և զսպարապետն»[52] հայոց, Ջուանշիրը շտապ հասնում է Տիզբոն և ներկայանում պարսից զորավար Ռոստոմին: Վերջինս, զգալով երիտասարդ իշխանազնի խանդավառ պատրաստակամությունը՝ կռվելու Պարսկաստանի համար, նրան ներկայացնում է պարսից արքային: Հազկերտ Գ-ն գովում է Ջուանշիրին և կոչում «սպարապետն Աղուանից»[53]: Սպարապետության կոչում Ջուանշիրը, իհարկե, ուներ: Նա սպարապետ էր դեռ այն ժամանակ, երբ հայրը տալով Աղվանից զորագնդերը, նրան ուղարկեց Պարսկաստան: Հազկերտ Գ-ին այնտեղ մնում էր միայն հաստատել տրված կոչումը:

Մեռյալ ջրերից[54] այն կողմ տեղի ունեցած մի քանի մանր ճակատամարտերում Ջուանշիրն աչքի է ընկնում քաջությամբ և կորովով, բայց առաջին մարտական մկրտությունն ստանում է Քադեսիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում՝ 637թ. հունվարի 6-ին: Այդ ճակատամարտում պարսից բանակի կազմում կռվում էին նաև «Մուշեղ Մամիկոնեան որդի Դաւթի, զաւրավարն Հայոց, երեք հազար սպառազինաւք և Գրիգոր իշխանն Սիւնեաց տէրն՝ Ռ արամբ»[53]: Աղբյուրները չեն հայտնում Ջուանշիրի գլխավորած բանակի թիվը: Հայտնի է միայն, որ Նեհավենդի՝ 642թ. ճակատամարտում նա գլխավորել է երեքհազարանոց մի բանակ: Արդյոք դա այն բանա՞կն էր, որ Վարազ-Գրիգորը տվել էր նրան, թե՞ համալրված էր պարսիկներով, դժվար է ասել:

Քադեսիայի օրհասական ճակատամարտում պարսից զորքը չարաչար պարտություն է կրում, որի ժամանակ զոհվում են նաև մի շարք նշանավոր նախարարներ, մի քանիսն էլ հեռանում են իրենց երկրները[56]: Մի քանի տեղից ծանր վիրավորվում է նաև Ջուանշիրը, բայց կարողանում է հաջողությամբ անցնել Տիգրիս գետը՝ փրկվելով թշնամու հետապնդումից: Նրա քաջության համբավն

---

[52] Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԸ: Տիզբոն՝ Հազկերտ Գ-ին օգնության գնացած Սյունյաց իշխանն էր Գրիգոր Սյունեցին, իսկ Հայոց սպարապետն էր Մուշեղ Մամիկոնյանը (Տես Սեբեոս, գլ. Խ):
[53] Կաղանկատվացի, Բ, գլ. ԾԸ:
[54] Նույն տեղում «Մեռյալ ջուրը» Ալ-Բատիհի կամ Նաջաֆ լիճն է և գտնվում է Իրաքում (Տես The History of the Caucasian Albanians, էջ 110, ծանոթ. 3):
[55] Սեբեոս, գլ. Խ:
[56] Նույն տեղում:

հասնում է Հազկերտ Գ-ին, և վերջինս Ջուանշիրի բուժումը հանձնարարում է արքունի բժիշկներին, իսկ բուժվելուց հետո պարգևատրում է նրան այնպես, ինչպես կարող էր պարգևատրել արյաց արքան:

Քադեսիայի ճակատամարտից հետո, Հազկերտի թագավորության 8-րդ տարում, այն է՝ 640թ., արաբները պաշարում են Տիզբոնը և վեցամսյա պաշարումից հետո գրավում[57]: Բայց Իրանի հետագա պատմության մեջ վճռական նշանակություն է ունենում 642թ. տեղի ունեցած Նեհավենդի հայտնի ճակատամարտը: Այս ճակատամարտում պարսից բանակում կռվում էր նաև Ջուանշիրը՝ երեք հազար հոգուց բաղկացած բանակի գլուխ անցած: Նկարագրում Կաղանկատվացին. «Զօրավարն Խոռազատ և ասպարապետն Աղուանից դիմեալ շարժէին զօրօք հանդերձ: Անդ ակն ի վեր եդեալ արին Ջուանշիր երիւք հազարօք նախընթաց լինէր ի վերայ, և հինահալած արշաւանօք տարեալ զնոսա անցուցանէր ընդ գետն և ոչ տայր նոցա թոյլ զամիսս վեց անցանել ընդ Դկղաթ գետ մինչև առեալ զթագաւորն ելանէին ի դաստակերտն մեծ»[58]: Այս ճակատամարտի մասին խոսում է և Սեբեոսը, սակայն, ինչպես այս, այնպես էլ Քադեսիայի կռվի մասնակիցների թվում չի հիշում Աղվանքի որևէ իշխանի: Հազկերտ Գ-ն ստիպված էր փախչել նախ Դաստակերտ, ապա Բեկղաղ՝ Տիգրիսի ափին գտնվող արքայական ամրոցները[59]: Նրա փախուստն ապահովում էր Ջուանշիրը: Նեհավենդի ճակատամարտից հետո պարսից թագավորությունը գնում է դեպի կործանում: Տեսնելով Պարսկական հզոր տերության արևամուտը, Ջունաշիրը շտապում է վերադառնալ հայրենիք՝ այնտեղից նրան ավելի օգտակար լինելու ձգտումով: Հետդարձի ճանապարհին Ատրպատականի պարսիկ իշխանն ու զորապետը՝ Վահրամ Բ Փառոխզատը, որը և նույնն է, ինչ Խոռոխազատը, առաջարկում է նրան քրոջը «ի կնութիւն, իսկ նա վասն չկամելոյ զոք յանօրինաց առնել կին՝ դիմեալ գայր յերկիր իւր»[60]՝ մեծ ուրախություն պատճառելով հորը:

Ըստ Կաղանկատվացու, Ջուանշիրը Պարսկաստանում մնացել էր յոթ «Է» տարի[61], որը, սակայն, Ն. Ադոնցը և Ն. Ակինյանը առաջարկում են կարդալ «հինգ տարի (Ե)»[62], «որով ակնարկուած կըլլայ 637-642 շրջանը»[63]: Ուղղումը, կարծում ենք, տեղին չէ, որովհետև 637թ. տեղի է ունենում Քադեսիայի ճակատամարտը, որից առաջ արդեն պարսից բանակում էր գտնվում Ջուանշիրը և մինչ այդ մասնակցել էր մի քանի մանր ճակատամարտերի՝ Մեռյալ ջրերի այն կողմում: Նշանակում է՝ Աղվանքի երիտասարդ իշխանը Պարսկաստանում մնացել էր 636-642 թթ., այսինքն՝ ճիշտ յոթ տարի:

Վերադառնալով հայրենիք՝ Ջուանշիրը նոր միայն ստանձնում է Աղվանք-Առանի իշխանական գահը՝ դեռևս հոր կենդանության օրոք: Ուստի Ջուանշիրի իշխանության առաջին տարին պետք է հաշվել ոչ թե 636 թ., ինչպես մինչև այժմ կարծվել է[64], այլ 642 թ., երբ նա վերադառնում է Պարսկաստանից հասունացած,

[57] Ն. Ադոնց, Քննութիւն Մովսես Կաղանկատվացոյ, «Անահիտ», 1939, թիվ 6, էջ 6:
[58] Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԸ:
[59] The History of the Caucasian Albanians, էջ 112, ծանոթ. 6:
[60] Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԸ:
[61] Նույն տեղում:
[62] Ն. Ադոնց, Քննութիւն Մովսես Կաղանկատվացոյ, «Անահիտ», 1939, թիվ 6, էջ 8: Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի, էջ 247:
[63] Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի, էջ 247-248:
[64] Տես Հ. Ս. Սվազյան, Աղվանից իշխաններ Ջուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության →

կոփված և փառք ու լայն ճանաչում ստացած: 636թ. Ջուանշիրի իշխանության առաջին տարի ընդունելու համար ուսումնասիրողներին հիմք է ծառայել Կաղանկատվացու հաղորդումը, թե «ի քսաներորդ ամի (651թ. - Հ. Ս.) Հազկերտի համօրեն ի բաց բառնայր ի միջոյ տէրութիւնն Պարսից և այն երեսուն և մի ամ էր տիեզերամարտութեանն Հագարացւոց և տեառն իմոյ Ջուանշիրի տասն և հինգ ամ»[65] (651-15=636): Բայց, այստեղ պատմիչը նկատի ունի Ջուանշիրի սպարապետության և ոչ թե իշխանության առաջին տարին, որը չի նշվել և, որում հեշտ է համոզվել, օրինակ, հետևյալ վկայությամբ: 664 թ., երբ խազարաց խաքանի հետ դաշինք կնքելու շնորհիվ ետ են վերադարձվում մինչ այդ բոլոր գերեվարվածները ու ավարը, պատմիչը ցույց է տալիս, որ «այս եղև երկու ամք պակաս յերից տասներեկաց, յորս աշխարհակալ սպարապետութեամբն իւրով ի տիոց անտի երիտասարդականացն մինչև ցմիջակ արբունս ժամանակին դրուատայեղց համաշխարհալուր կատարեաց»[66] (664-28=636): «Աղվանից աշխարհի պատմության» մեջ բացի Ջուանշիրից ուրիշ և ոչ մի իշխան չի կոչվել սպարապետ և պետք է ասել, որ այն էլ մի քանի անգամ[67]: Չմոռանանք նշել, որ Բ գրքի ԺԹ գլուխն էլ ուղղակի վերնագրված է. «Սպարապետութիւն Ջուանշիրի Աղուանից և գրթահարել նորա զՊարսիկս»: Բացի դրանից, Կաղանկատվացին վկայում է, որ Հազկերտ Գ-ի օրոք տեղի ունեցած արաբների հարձակումները ու նրանց դեմ պարսից արքունիքի կազմակերպած պայքարը եղել են հենց Վարազ-Գրիգորի և ոչ թե Ջուանշիրի իշխանության ժամանակներում. «Եւ ի լինել այսորիկ՝ Վարազ-Գրիգոր՝ իշխանն Աղուանից»[68]: Եվ, վերջապես, այն հանգամանքը, որ Վարազ-Գրիգորն է որոշում Ջուանշիրին ուղարկել պատերազմ, որը չէր լինի, եթե վերջինս լիներ երկրի իշխանը, քանի որ ոչ մի իշխան իր երկրի սահմաններում չէր սպասի այլուստ եկող հատուկ կարգադրության, ոչ մի կասկած չեն թողնում, որ 636 թ. Ջուանշիրը դեռ Աղվանքի իշխանը չէր: Այդ թվականին նա հորից Աղվանից զորագնդերի հետ ստանում է միայն սպարապետի պաշտոնը:

Այսպիսով, 636 թ. Ջուանշիրը ստանում է Աղվանքի սպարապետության պաշտոնը, իսկ 642 թ.՝ իշխանական գահը: Այդ նույն պատճառով էլ Վարազ-Գրիգորի իշխանության տարիներն էլ պետք է առաջ բերվեն մինչև 642թ.:

Անցնելով իշխանության գլուխ, Ջուանշիրի առաջին գործն է լինում Պերոզապատ (Պարտավ) տեղափոխվելը[69], որն, ինչպես գիտենք, դեռ Աղվանից մարզպանության գոյության տարիներին, նրա մայրաքաղաքն էր: Ջուանշիրի այստեղ տեղափոխվելը վկայում է, որ Միհրանյանների իշխանության սահմաններն ընդարձակվել էին, և Ջուանշիրն այնտեղ է տեղափոխում իշխանական տունը՝ ընդարձակված իշխանության կառավարումն այնտեղից ավելի դյուրին դարձնելու համար: Պարտավը Աղվանից մարզպանության մայրաքաղաքի իր դերը փոխարինում է Հայոց արևելյան կողմերի մայրաքաղաքը լինելու դերով:

Իշխանության մայրաքաղաքը Պարտավ տեղափոխելը նաև երկիրը դեպի անկախություն տանելու մի քայլ էր, որը զգացին և իրենք՝ պարսիկները, որոնք, տեղափոխությունը դիտելով որպես ապստամբության նախապատրաստություն,

← տարեթվերի հարցի շուրջը, Լրաբր հաս. գիտ., 1973թ., թիվ 11, էջ 108, ծանոթ. 1:

[65] Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԹ:

[66] Նույն տեղում, Բ, գլ. ԻԶ:

[67] Նույն տեղում, Բ, գլ. ԺԸ, ԺԹ, ԻԶ:

[68] Նույն տեղում, Բ, գլ. ԺԸ:

[69] Կաղանկատվացի, Բ, գլ ԺԹ:

շարժվում են Ջուանշիրի վրա: Նրանք իրենց երբեմնի զինակցի դեմ դուրս են բերում Գիլանի լեռներում ապրող դելմիկներին[70]: Ջուանշիրը հաջողությամբ ետ է շպրտում նրանց: Բայց մինչ նա զբաղված էր դրանով, պարսից մի ուրիշ զորագունդ հարձակվում է Պարտավ քաղաքի վրա, ավերում այն և գերեվարում Ջուանշիրի մորն ու եղբայրներին, նրանց ետ, անշուշտ, և քաղաքի այլ բնակիչների:Աղվանքի իշխանը զորքերի գլուխ անցած շտապում է օգնության և, Կամբեճան («Կապիճան»[71]), գավառում հանդիպելով նրանց, կռվի բռնվում: Պատերազմը, սակայն, հաջողություն չի բերում իշխանին: Չնայած նա պատերազմում էր նրանց դեմ «ոչ վարկպարազի, այլ խոհականապես դէմ առ դէմ»[72], բայց և այնպես պարտվում է, ծանր վիրավորվում գլխից և հանգրվան գտնում Վրաց աշխարհի սահմաններում[73]: Վրաստանում նրան լավ ընդունելության է արժանացնում Ատրներսեհ իշխանը[74]: Վերջինս ոչ միայն բժշկական օգնություն է ցույց տալիս Աղվանից իշխանին, այլև նրան է տրամադրում իրեն ենթակա վրաց զորքերը: Վերջիններիս օժանդակությամբ Ջուանշիրը ձեռնամուխ է լինում իր երկիրը պարսիկներից ազատելու գործին: Շուտով ողջ Ուտիքն ազատագրվում է, բայց Ջուանշիրի դեմ Ատրպատականից ելնում են նոր ուժեր: Ծակաշեն գավառում տեղի ունեցած ճակատամարտում Աղվանից իշխանը կարողանում է սրանց ևս պարտության մատնել, որից հետո պարսիկները հաշտության ուղիներ են փնտրում՝ խնդրելով Սյունյաց իշխանի միջնորդությունը, որին, ի դեպ, փեսայացել էր Ջուանշիրը[75]: Սյունյաց իշխանի միջնորդությամբ թշնամի բանակների միջև կնքվում է հաշտություն, և կողմերն հեռանում են յուրաքանչյուրն իր երկիրը: Ջուանշիրը վերադառնում է գերությունից ազատված մոր և եղբայրների հետ: Բայց հաշտությունը կայուն ու երկարատև չեղավ: Ջուանշիրը, յուրաքանչյուրն իր իշխանությունների սահմաններում անկախ ու ինքնուրույն իշխելու առաջարկությամբ, դիմում է պարսից զորապետին, որը, սակայն, ի պատասխան զանազան պատրվակներով իր մոտ է կանչում Ջուանշիրի հորը՝ Վարազ-Գրիգորին, գերեվարում նրան, իրեն հնազանդվելու կոչ անում Ջուանշիրին և գնդեր ուղարկում նրա դեմ: Ջուանշիրը, զինակից ունենալով ավագ եղբորը՝ Վարազ-Պերոժին, զենքը ձեռքին պայքարի է դուրս գալիս պարսիկների դեմ, կոտորում նրանց և ազատում հորը[76]:

Ջուանշիրի՝ հայրենիքի անկախության համար պայքարը պարսիկների դեմ ընդհատվում է արաբների հարձակումով, որոնց համար Նեհավենդի ճակատամարտից հետո (642 թ.) լայն ճանապարհ էր բացվել դեպի Անդրկովկաս: Արաբների առաջին արշավանքները սկսվեցին VII դարի 40-ական թթ.: Հայաստան կատարած (640 թ. Աղձնիքի վրայով) արշավանքով: Առաջին արշավանքի ժամանակ արաբները, սակայն, չէին հասել մինչև Հայոց արևելյան կողմերը: Նրանք միայն 642-643 թթ. են մտնում նշված կողմերը, երբ իրենց երկրորդ արշավանքն սկսում են Ատրպատականից: Սեբեոսը գրում է. «Եկն զաւրն իսմայելի յԱտրպատական, և բաժանեցան երիս: Առաջ մի յԱրարատ, և առաջ մի ի

70 Նոյն տեղում, Բ, գլ. ԺԹ:
71 Նոյն տեղում:
72 Նոյն տեղում:
73 Նոյն տեղում:
74 Նոյն տեղում: Տես Т. Папуашвили, Вопросы истории Эрети, с. 45.
75 Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԹ:
76 Նոյն տեղում:

Սեպհական գնդին կողմանս և յառաջ մի յԱղուանս»[77]: Արաբների առաջին արշավանքի ժամանակ Աղվանից իշխանը փորձում է պատերազմի դուրս գալ նրանց դեմ, սակայն լսելով հոր՝ Վարազ-Գրիգորի խորհուրդները ու, տեսնելով հարավցիների հզորությունը, հրաժարվում է այդ մտքից և, համաձայնության գալով հայոց սպարապետ ու իշխան Թեոդորոս Ռշտունու հետ, իր հնազանդությունն է հայտնում Բյուզանդիային: Օգտվելով դրանից Բյուզանդիան 648 թ. Դվինում հրավիրված եկեղեցական ժողովում նրանց քաղկեդոնականություն պարտադրելու անհաջող փորձ է անում: Այս դաշնակցությունը, սակայն, կարճատև է լինում, քանի որ շուտով ինքը՝ հզոր Բյուզանդիան էլ է հարկադրված լինում ընդունել արաբների գերիշխանությունը[78]: Վերջին հանգամանքը ստիպում է առաջադեմ ուժերին մտածել նոր քաղաքական (արաբական) կողմնորոշում ընդունելու մասին, որն այդ պայմաններում ամենանհիշտն էր: Ուստի 652 թ. Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ Հայաստանն ու Անդրկովկասի մյուս երկրները կամովին ենթարկվում են Արաբական խալիֆայությանը[79]: Այս քայլը խիստ վրդովեցնում է Կոստանդ Բ կայսրին, որը վերցնելով հարյուրհազարանոց մի բանակ, շարժվում է նրանց վրա[80]: Դա 653 թ. էր՝ «յամի ԺԲ-երորդի թագաւորութեան իւրում, ի քսան ամի Իսմայլեացւոց տէրութեանն»[81]: Կանգ առնելով Կարինում, բյուզանդական կայսրը իր մոտ է կանչում Թեոդորոս Ռշտունու վարած հակաբյուզանդական քաղաքականությունից դժգոհ իշխաններին: Միաժամանակ, հայոց իշխանի հետ Աղվանից և Վրաց երկրների ունեցած դաշնակցությունը խզելու համար, նա զորքեր է ուղարկում այդ երկրներ: Սա լրջորեն անհանգստացնում է Ջուանշերին և նա շտապում է հանդիպման: Երկիրը նոր հարձակումներից ու ավերածություններից հեռու պահելու նպատակով նա հայտնում է իր հպատակությունը: Ըստ Կաղանկատվացու, Կոստանդին կայսեր ու Ջուանշերի հանդիպումը տեղի է ունեցել «յինն և ի տասներորդի ամի թագաւորութեան» Կոստանդնի, այսինքն՝ 660 թ., երբ նա գտնվելիս է եղել Մարաստանում, Համադանից ոչ հեռու գտնվող Քունգր կամ Կանգավար գյուղում[82]: Այս հաղորդումը տարակուսանքներ է առաջացրել ուսումնասիրողների մոտ՝ իրավացիորեն նկատել տալով, որ Կոստանդին կայսրը նշված տարում «ոչ Պարսկաստան և ոչ էլ Հայաստան գացած է»[83]: Մեզ թվում է, որ Կաղանկատվացու բերած թվականը գրչական սխալ է և ճշգրտման կարիք ունի: Կարծում ենք՝ նրանում «յինն և տասաներորդը»՝ «ԺԹ»-ն ուղղելի է «երկուտասաներորդի»՝ «ԺԲ»-ի, քանի որ «Բ»-ն ձեռագրերում հեշտությամբ կարելի է շփոթել «Թ»-ի հետ: Այս ուղղումով Կոստանդին կայսեր հետ Ջուանշերի հանդիպումը կայացած կլիներ նրա թագավորության տասներկուերորդ տարում, այսինքն՝ 653 թ., ինչպես ցույց է տալիս Սեբեոսը: Կասկածելի է նաև Քունգր գյուղի մատնանշումը Կաղանկատվացու կողմից՝ որպես նրանց հանդիպման վայր: Եվ քանի որ պատմությամբ չի հաստատվում, որ կայսրը գնացած լինի այդքան հեռու, մնում է ընդունել Սեբեոսի վկայությունն այն մասին, որ հանդիպումը կայացել է Կարին քաղաքում, ուր մեկնել էին նաև ուրիշ հայ իշխաններ: Կոստանդին Բ կայսրը

[77] Սեբեոս, գլ. ԽԲ:
[78] Նույն տեղում:
[79] Նույն տեղում, գլ. ԽԸ:
[80] Նույն տեղում:
[81] Նույն տեղում:
[82] Կաղանկատվացի, Բ, գլ. ԻԲ:
[83] Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի, էջ 254:

առատ պարգևներ ու բարձր տիտղոսներ է շնորհում իրեն ներկայացած իշխաններին, այդ թվում և Ջուանշիրին ու նրա որդիներին: Կայսեր ողորմածությամբ Ջուանշիրը ստանում է «պրոտոն պատրիկի», իսկ զավակները՝ «պատրիկի» կոչումներ[84]: Կայսրը Ջուանշիրին նաև վերահաստատում է պաշտոնում և իրավունք տալիս «արևելեայցս ամենեցուն արքայաբար առնել տեսչութիւն»[85]:

654 թ. Արաբական խալիֆայությունը փոխում է քաղաքականությունը Մեծ Հայքի, Աղվանքի ու Վիրքի նկատմամբ և սկսում սանձարձակ կերպով կողոպտել այդ երկրները, թալանել եկեղեցիներն ու պատանդ վերցնել նշանավոր իշխաններին, նրանց կանանց, ուստրերին ու դուստրերին[86]: Արաբների քաղաքականության փոփոխությունը, մասնավորապես ուսումնասիրվող ռեգիոնում, ցույց է տալիս և Կաղանկատվացին[87]: Իսկ արաբ պատմիչները, սկսած այդ ժամանակից խոսում են Առան-Աղվանքում ու Կուրից հյուսիս ընդհուպ մինչև Դերբենդ ընկած շրջանում արաբների նվաճումների մասին: Նվաճումների ելած արաբներին տեղ-տեղ ժողովուրդը ապարդյուն դիմադրություն է ցույց տալիս: Բալաձորին գրում է. «Հաղորդում են, որ Սալման իբն-Ռաբիա-ալ-Բախիլին շարժվեց (խալիֆ) Օսմանի հրամանով Առան և գրավեց Բայլականը հաշտության պայմանագրով, որով նա երաշխավորում էր նրա բնակիչների կյանքը, ունեցվածքը և նրանց քաղաքի պարիսպները, նրանց պարտադրելով հողահարկ և գլխահարկ վճարել: Ապա Սալմանը եկավ Պարտավ և ճամբար խփեց քաղաքից մեկ փարսախից էլ պակաս հեռավորության վրա գտնվող Թարթառ գետի (ափին): Քաղաքի բնակիչները փակեցին նրա առաջ դարպասները, և նա ստիպված էր մի քանի օր նրանցով զբաղվել: Նա միաժամանակ արշավանքներ էր կատարում նրան (շրջապատող) գյուղերի վրա, ուր հունձը արդեն ավարտված էր: Այս (ստիպեց) նրանց կնքել նրա հետ նույնպիսի հաշտություն, ինչպիսին և Բայլականի բնակիչները: Նրանք բաց արեցին նրա առջև քաղաքային դարպասները, և նա մտավ քաղաք և այնտեղ անցկացրեց որոշ (ժամանակ): Այստեղից նա շարժեց իր հեծելազորը և գրավեց Շավշին, Մեսվան, Ուդ, Խերխիլյան, Տաբար[88] և Առանի այլ վայրերը»[89]:

Այս նվաճումներով Աղվանք-Առանը փաստորեն ընկնում է արաբների տիրապետության տակ: Զբավարարվելով այսքանով, Սալմանը անցնում է Կուր գետը և շարունակում նվաճումները հյուսիսում: Այստեղ նա գրավում է Կապաղակը, Շաքին, Շիրվանը, Մասքաթը և ուրիշ մանր իշխանություններ՝ Դերբենդի հետ մեկտեղ՝ հարկադրելով նրանց նույնպես հարկ վճարել[90]:

Արաբների տիրապետությունն Աղվանքում կարճատև էր: Նրանց քաղաքականության կտրուկ փոփոխությունն ու պաշտպանվելու անհրաժեշտությունը հարկադրում են իշխող վերնախավին հետևել բյուզանդական կողմնորոշում ունեցող իշխաններին և նրանց հետ մեկտեղ 659 թ. ընդունել Բյուզանդիայի գերիշխանությունն ու հնազանդվելու նրան[91]:

---

[84] Կաղանկատվացի, Բ, գլ. Ի, ԻԲ:
[85] Նույն տեղում, Բ, գլ ԻԲ:
[86] Սեբեոս, գլ. ԾԲ:
[87] Կաղանկատվացի, Բ, գլ. ԺԹ:
[88] Համապատասխանաբար՝ Շակաշենը, Մեծ Կուենքը, Ուտին, Հարճլանքը, Տրին:
[89] Баладзори, с. 13.
[90] Նույն տեղում:
[91] Սեբեոս, գլ. ԾԲ:

Բյուզանդիային հնազանդություն հայտնելուց երկու տարի անց, այն է՝ 661 թ., Հայոց երկրի սույն հատվածը ենթարկվում է նոր հարձակման, այս անգամ խազարների կողմից: Նրանք բանակում են Կուրի ձախ ափին, որտեղ էլ Ջուանշիրը ճակատամարտի է բռնվում նրանց հետ, հաղթում է և խորհուրդ տալիս այլևս չխանգարել իր անդորրը. «Գնա,- ասում է Ջուանշիրը խազարաց խաքանին,- մուտ ընդ Դուռն Չողայ և մի ևս յաւելցես գալ այսր, զի արգել Տէր զյառնելն քո»[92]: Բայց վերջինս հաջորդ տարին իսկ «եւ... հոգնահազար հեծելովք», որոնք «յայսկոյս գետոյն Կուրայ և զեզերբ Երասխայ ոչ միայն զքնաշխարհիկսն, այլև որ յԱյրարատեան գաւառաց և ի Սիւնեստանեաց աշխարհէն հօտք և անդեայք ի ձմեռնանաշակ դաշտն եկեալ էին յարօտն գերի վարեալ զամենայն ի բանակատեղն ժողովէին»[93]: Սակայն այս անգամ խազարների առաջնորդն այնքան էլ մարտականորեն չէր տրամադրված: Կողմերի միջև կնքվում է հաշտություն, որն էլ ավելի ամրապնդելու համար, Ջուանշիրը իրեն կնության է վերցնում խազարների առաջնորդի դստերը: Պայմանագրով Ջուանշիրը ետ է ստանում նաև իր երկրից տարված ավարը, գերիներին և ձիերի ու արջառների երամակները ու նախիրները[94]:

Այդ ժամանակաշրջանում փոխվում է քաղաքական իրադրությունը ողջ Մերձավոր Արևելքում: Եվ Ջուանշիրի հեռատեսությունը հուշում է նրան, որ ստեղծված պայմաններում երկրի համար ձեռնտու քայլ է արաբների հետ մերձեցումը: Ուստի նա մեծամեծ նվերներով 667 թ. ուղևորվում է Դամասկոս՝ Մուավիայի մոտ, ինչպես մի ժամանակ հայոց մեծ իշխան և սպարապետ Թեոդորոս Ռշտունին: Խալիֆ Մուավիան (661-680 թթ.) ընդունում է «արևելքի իշխանին», նրանից հպատակության երդումներ է վերցնում, փոխարենը մեծամեծ պարգևների հետ շնորհում աջը համբուրելու պատիվը և թույլ տալիս վերադառնալ հայրենիք: Ետդարձի ճանապարհին նա հյուրընկալվում է նույն Մուավիայի կողմից հայոց կառավարիչ նշանակված Գրիգոր Մամիկոնյանի մոտ՝ Արուճում, որի կինը՝ Հայոց աշխարհի տիկինը, իր քույրն էր[95]: Այնտեղ Ջուանշիրը օրհնություն է ստանում հայոց հայրապետ Անաստասից (661-667) ու մեծ շուքով վերադառնում հայրենի կալվածքը՝ Գարդման:

Արաբների հետ դաշնակցության շորհիվ, երեք տարի շարունակ Աղվանից աշխարհը զերծ է մնում օտար ներքխուժումից: Ջուանշիրի հեղինակությունը Մուավիայի մոտ այնքան է բարձրանում այդ տարիների ընթացքում, որ նրան խալիֆը նույնիսկ մասնակից է դարձնում արտաքին հարաբերություններին: Ջուանշիրը երկրորդ անգամ՝ 669 թ. ուղևորվում է Դամասկոս: Եթե հավատալու լինենք ներբողագիր հեղինակին, այնտեղ էին և Բյուզանդիայի դեսպանները, որոնք եկել էին իրենց հնազանդությունն հայտնելու Մուավիային և այդ ուղղությամբ բանակցություններ էին վարում: Բանակցություններին արաբների կողմից մասնակցելու էր նաև Ջուանշիրը: «Նմա (Ջուանշիրին - Հ Ս),- խանդավառված գրում է պատմիչը,- հրամայէր (Մուավիան - Հ. Ս.) առ նորա բանս խաղաղականս դնել»[96]: Ջուանշիրն բանակցություններն այնպիսի հմտությամբ ու դիվանագիտորեն է վարում, որ երկու կողմերն էլ չափազանց գոհ են մնում[97]:

[92] Կաղանկատվացի, Բ, գլ. ԻԳ:
[93] Նույն տեղում, Բ, գլ. ԻՁ:
[94] Նույն տեղում:
[95] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 67:
[96] Կաղանկատվացի, Բ, գլ. ԻԸ:
[97] Նույն տեղում:

Այնուհետև Ջուանշիրը «հարավի թագավորից» ստանում է արքավայել պարգևներ, որոնց թվում և Հայոց արևելյան կողմերի համար այնպիսի հեքիաթային հրաշալիքներ, ինչպիսիք են՝ փիղն ու թութակը: Նրան առաջարկվում է իշխել նաև Ատրպատականում, սակայն Աղվանից իշխանը չի համաձայնվում, փոխարենը խնդրում է Մուավիայից թեթևացնել երկրի հարկերը և ստանում խնդրածը[98]:

Այսպիսով, Ջուանշիրը հեռատես քաղաքականությամբ իր իշխանության տարիներին սոսկ հարկերի վճարումով կարողանում է պահպանել երկրի անկախությունն ու պետական կառավարման ներքին համակարգը: Ավելին, նա ընդարձակում է իր երկրի սահմանները: Կաղանկատվացու վկայությամբ՝ Ջուանշիրը «ի սահմանացն Վրաց մինչև ի Դրունս Հոնաց, միահեծան ճոխութեամբ եղև տէր մինչև ցգետն Երասխ»[99]:

Ջուանշիրը կրում էր «Գարդմանայ տէր և Աղվանից իշխան» տիտղոսը, որ նշանակում էր, թե նա Գարդմանին տիրում էր որպես հայրենական կալվածք, իսկ իշխում էր ամբողջ Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածքում և «Հանդիսացուցանէր ընդ ինքեան զբովանդակ տունն Աղուանից ըստ թագաւորական հրամանին»[100]: Նրա իշխանության մայրաքաղաքը շարունակում էր մնալ Պարտավը և «արևելից մեծ իշխանն Ջուանշիր և եպիսկոպոսապետն Ուխտանէս անդ նստէին ամենայն նախարարօքն»[101]:

Ջուանշիրի վարած ներքին քաղաքականության մեջ, ըստ Մ. Կաղանկատվացու, առաջնային էին երկրի շենացմանն ու բարգավաճմանն ուղղված միջոցառումները: Նա «վերստին առնէր հրաման ընդ որ իւրն էր աշխարհն շինել, տնկել, վայելել և կեալ ի խաղաղութեան»[102], ինքն էլ շինարարական գործունեության օրինակ ծառայելով: Նրա կառուցումների մեջ հիշատակվում են ապարանքներ, եկեղեցիներ, իջևանատներ և մարդկանց համար պիտանի այլ շինություններ[103]:

674 թ. խալիֆ Մուավիան վերսկսում է ռազմական գործողություններն ընդդեմ Բյուզանդիայի: Բայց նոր հարձակումները խալիֆայությանը բոլորովին էլ չեն տալիս սպասված արդյունքը: Արաբների իրար հաջորդող մի քանի հարձակումները Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլսի վրա անհաջող վախճան են ունենում, իսկ երբ 678 թ. արաբական նավատորմը մեծ կորուստ է ունենում՝ հրդեհվելով այսպես կոչված «հունական կրակից», խալիֆը ստիպված է լինում հաշտություն կնքել Բյուզանդիայի հետ, պարտավորվելով երեսուն տարի շարունակ, տարեկան երեք հազար դրամ, հիսուն գերի և հիսուն ձի տալ կայսրությանը[104]: Դրանից շատ չանցած՝ 680 թ. մեռնում է Մուավիան: Վերջին պարտություններն ու խալիֆի մահը ոտքի են հանում ոչ միայն Օմայանների վաղեմի թշնամիներին, այլև խալիֆի դաշնակիցների՝ տվյալ դեպքում՝ Ջոանշիրի հակառակորդներին: Վերջիններիս թվում էին, ամենայն հավանականությամբ, Առանշահիկները, որոնց իշխաններին Միհրանյանները, այնուամենայնիվ, ամբողջովին չէին կարողացել ոչնչացնել: Նրանցից ոմանք կենդանի էին մնացել,

[98] Նույն տեղում:
[99] Նույն տեղում, Բ, գլ. ԻԱ:
[100] Նույն տեղում, Բ, գլ. ԺԹ:
[101] Նույն տեղում, Բ, գլ. ԼԱ:
[102] Նույն տեղում, Բ, գլ. ԻԲ:
[103] Նույն տեղում, Բ, գլ. ԻԲ, ԻԴ:
[104] История Византии, т. II, М., 1967, с. 372.

կենդանի պահելով «հին աշխարհի նվիրագործական արյան վրիժառությունը»[105] հաջող պարագայում հանդես գալու համար: Առաջացած քաղաքական իրադրությամբ հասել էր պահը, և շուտով Ջուանշիրը դառնում է քաղաքական նպատակներ հետապնդող դավադրության մի խեղճ զոհ: Աղվանից իշխանի սպանությունը «տարօրէն և վատանշան»[106] մարդու կողմից տեղի է ունենում Պարտավ քաղաքում, 683 թ. սեպտեմբերի 13-ին, Սուրբ Խաչի տոնի օրը: Նրա մահվամբ Միհրանյան տոհմը կորցնում է իր նշանավոր ներկայացուցչին և քաղաքական գործչին:

[105] Լեո, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 327:
[106] Կաղանկատվացի, Բ, գլ. ԼԴ:

## Գ. Աղվանքը Ջուանշիրի հաջորդների օրոք

Ջուանշիրի մահից հետո՝ 683 թ. Աղվանից աշխարհի առաջին իշխանի աթոռը գրավում է նրա ավագ եղբոր՝ Վարազ-Պերոժի որդին՝ Վարազ-Տրդատը[107]: Այս փաստը հետաքրքիր է նրանով, որ Ջուանշիրին հաջորդում է ոչ թե անմիջական ժառանգը, այլ նույն տոհմի մի ուրիշ ներկայացուցիչ և դա այն դեպքում, երբ Ջուանշիրն ուներ որդիներ[108]: Ժառանգության հարցը չի լուծում նաև ինքը՝ Ջուանշիրը մահից առաջ, երբ կարգավորում էր մի շարք պետական գործեր և Աղվանից աշխարհի իշխանական աթոռն անցնում է նրա եղբորորդուն՝ Վարազ-Տրդատին, որն այդ ժամանակ արդեն «զպատիւ պատրկութեան ստացեալ պատիւ» և «մեծարեալ էր կայսերակերպ պատուով»[109]:

Պատմագրության մեջ կա այն կարծիքը, թե Ջուանշիրի մահը և Վարազ-Տրդատի իշխանության գլուխ անցնելը տեղի է ունեցել 669-670 թթ.[110] կամ 680-681 թթ.[111]: Բայց աղբյուրների քննությունը բացասում է նման կարծիքը ևս:

VII դարի 80-ական թթ. Արաբական խալիֆայությունը զբաղված էր ներքին վիճակը կայունացնելու խնդրով, և նրա ազդեցության տակ գտնվող երկրները առժամանակ դուրս էին մնացել նրանց ուշադրությունից: Ստեղծված դրությունից շտապում են օգուտ քաղել Անդրկովկասի նվաճված երկրները: Հայ պատմիչների վկայությամբ, խալիֆ Եզիդ Ա-ի օրոք (680-683 թթ.) հայերը ապստամբում են և դադարում արաբներին հարկ վճարել: Ապստամբությունը տևում է երեք տարի՝ ընդգրկելով նաև Հայոց արևելյան կողմերն ու Վիրքը: Այսպես, Ղևոնդի վկայությամբ, «ի ժամանակի պատերազմին որ ի մէջ Տաճկաց դադարեցին ի հարկատուութենէ նոցա Հայք, Վիրք, Աղուանք, ծառայեալ նոցա ամս Լ: Եւ եղեն աւուրք ապստամբութեան նոցա ամք Գ»[112]: Ապստամբության շնորհիվ ձեռք բերված ազատությունը, այսպիսով, տևել է մինչև 684 թ., երբ անդրկովկասյան երկրները նորից են ենթարկվում խազարների հարձակումներին: «Եւ ի չորրորդում ամին,- շարունակում է Ղևոնդ վարդապետը,- տիրեցին ի վերայ աշխարհիս Հայոց հիւսիսային ազգն, որ ասին Խազիրք և սպանին ի պատերազմին զիշխանն Գրիգոր և զբազումս ի նախարարացն և զիշխանսն Վրաց և Աղուանից»[113]: Նույն ժամանակաշրջանի ու նույն դեպքերի մասին է պատմում նաև Անանուն ժամանակագիրը. «Եղև շփոթումն Տաճկաց՝ սաստիկ պատերազմաւ և դադարեցին ի հարկատրութենէ նոցա Հայք, Վիրք եւ Աղուանք, ծառայեալ նոցա ամս երեսուն»[114],

---

[107] Չ. Դոուսեթը նրան անվանում է Ջուանշիրի որդին (տե՛ս The History of the Caucasian Albanians, էջ 109, ծանոթ. 7):

[108] Իսկ որ Ջուանշիրն ուներ որդիներ, երևում է նախ նրա աղոթքից «զուստերս և զդստերս իմ աներկիւղ արասցես ի չարէ և զօրաւոր յամենայնի (Կաղանկատվացի, Բ, գլ. ԻԵ) և ապա նաև այն վկայությունից, ուր նա իր մահից առաջ «որդւոց իւրոց իւրաքանչիւրումն զզանձս՝ և զպատիւս յայտ առնելով կարգէր զնոսա ի բաժինս նոցին»(Կաղանկատվացի, Բ, գլ. ԼԴ): Ջուանշիրի որդիները նույնիսկ Կոստանդ Բ կայսրից ստացել էին պատրիկության կոչումներ (Կաղանկատվացի, Բ, գլ. ԻԲ):

[109] Կաղանկատվացի, Բ, գլ. ԼԶ:

[110] Տե՛ս Հ. Ս. Սվազյան, Աղվանից իշխաններ Ջուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվերի հարցի շուրջ, էջ 108, ծանոթ. 1:

[111] Ф. Мамедова, Политическая история ... Албании, с. 210.

[112] Ղևոնդ, էջ 15:

[113] Նույն տեղում, էջ 15-16:

[114] Անանուն, Ժամանակագրութիւն, էջ 79:

իսկ բյուզանդական կայսր Հուստինիանոս Բ-ի (685-695, 705-711 թթ.) թագավորության «առաջին ամին տիրեցին հիւսիսային ազգն, որ ասին Հազիրք (Խազիրք), Հայոց, Վրաց եւ Աղուանից. եւ սպանին ի պատերազմի զիշխանս Հայոց, Վրաց եւ Աղուանից յամսեանն սահմի, որ ապ տասն էր ամսոյն ի ՃԼԴ[115] թուականին Հայոց[116]: Մյուս հայ պատմիչների՝ Հովհ. Դրասխանակերտցու[117], Ասողիկի[118], Վարդան Արևելցու[119] մոտ ևս տեսնում ենք նույն դեպքերի նկարագրությունը, որոնք մանր ուղղումներով համընկնում են 684 թ. հետ[120]: Այսպիսով, խազարների առաջին արշավանքը «իբրև թէ վրէժխնդիրք արեանն Ջուանշիրի»[121] Վարազ-Տրդատի օրոք տեղի է ունեցել 684 թ. հունիսին՝ նրա իշխանության առաջին տարում[122]: Ժամանակի կաթողիկոսն էր Ուխտանեսին (670-682 թթ.) փոխարինած Եղիազարը (683-688 թթ.), որի օրոք դեռևս իշխում էր Ջուանշիրը. «պարկեշտ այն Եղիազար ... առնու զառաքելական պատիւն, մինչդեռ բարեպաստիկն Ջուանշիր զաշխարհական տէրութիւնն վարէր՝ յանհաստատելի կենցաղումս ի կամս Աստուծոյ»[123]: Նշանակում է՝ Ջուանշիրի սպանությունը չէր կարող լինել 683 թ. շուտ, իսկ քանի որ Վարազ-Տրդատի իշխանության առաջին տարում տեղի ունեցած արշավանքը եղել է 684 թ. հունիսին, իսկ Ջուանշիրի սպանությունը, ըստ պատմիչի, սբ. Խաչի տոնակատարության օրը[124] (սեպտեմբերի 13-ին, իսկ ըստ Ն. Ակինյանի՝ 14-ին)[125], ապա դեպքը կատարված պետք է լիներ 683 թ. սեպտեմբերին: Ուստի, այն լինելով Ջուանշիրի իշխանության վերջին տարին, համապատասխանաբար կլիներ նաև Վարազ-Տրդատի իշխանության առաջին տարին:

Անցնելով իշխանության գլուխ, Վարազ-Տրդատը (683-669, 705-709)[126] ամենից առաջ խաղաղեցնում է այն հակամարտ ուժերին, որոնք գլուխ էին բարձրացրել Ջուանշիրի սպանությունից հետո[127] և կարողացել էին երկրի որոշ մարզեր, դրանց թվում և մայրաքաղաք Պարտավը իրենց ձեռքը գցել: Այս մասին Կաղանկատվացին լռում է, բայց դա երևում է նրա անուղղակի հայտնած մտքերից, թեկուզև հետևյալից. «թէպէտ և անբեղուն միտս ունէին ընդ նմա (Վարազ-Տրդատ - Հ. Ս.) ոմանք ի մախայորդոր տոհմակցացն. այլ նա ի ձեռն իմաստակիր և քաղցրահամբոյր խօսից նուաճէր և յանկուցանէր յինքն զամենեցուն սիրտ: Եւ երկայնամիտ հեզութեամբն հնազանդեցուցանէր զաշխարս ըստ սովորական իւրոյ նախնական տէրութեանն: Եվ իսկոյն անձապարեալ՝ ունէր զհռչակաւոր մայրաքաղաքն Պարտաւ»[128]: Ինչպես

[115] Ս. Տ. Երեմյանը ՃԼԴ (134) ուղղում է ՃԼԳ (133), որից հետո լինում է 684 թ. հունիսի 13-ը (տե՛ս Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Алп-Илитверу, ЗИВАН СССР, т. VII, М.-Л., 1939, с. 131, пр. 3).
[116] Անանուն, էջ 80:
[117] Դրասխանակերտցի, էջ 93:
[118] Ասողիկ, Բ, գլ. Բ:
[119] Վարդան, էջ 70:
[120] С. Т. Еремян, Моисей Каланкатуйский..., с. 135-136.
[121] Կաղանկատվացի, Բ, գլ. ԼԷ:
[122] Խազարների այս արշավանքը Մ. Ի. Արտամոնովը դնում է 669 թ. (տե՛ս М. И. Артамонов, История хазар, Л., 1962, էջ 186), իսկ Զ. Բունիյաթովը՝ 681 թ. (տե՛ս З. Буниятов, Азербайджан в VII-IX вв., с. 102-103).
[123] Կաղանկատվացի, Բ, գլ. ԼԲ:
[124] Նույն տեղում, Բ, գլ. ԼԴ:
[125] Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի, էջ 258:
[126] Տե՛ս ստորև:
[127] Կաղանկատվացի, Բ, գլ. ԼԴ:
[128] Նույն տեղում, Բ, գլ. ԼԷ:

րևում է վերջին տողերից, Վարազ-Տրդատը կարողանում է իր իշխանությունն սրագործեն տարածել Աղվանքի այն տարածքի վրա, որը մինչ ինքը ենթակա էր որ նախորդին՝ Ջուանշիրին:

Ներքին խռովությունները վերացնելուց հետո Միհրանյան տան իշխանը տիպված է լինում դիմագրավել և արտաքին ուժերին: Ջուանշիրի սպանությամբ վերջ է տրվում աղվանա-խազարական բարեկամությանը, և վերջիններս վերսկսում ն իրենց արշավանքները դեպի Կովկասից հարավ ընկած երկրները: Եզիդ Ա-ն խաղաղության դաշն է կնքում խազարների հետ և որպես հաշտության գրավական, ամուսնանում է խազարաց խաքանի քրոջ՝ Խաթունի հետ: Սակայն վերջինիս անժամանակ մահը, որը դիտվում է որպես դավով սպանություն, ժամանակից շուտ վերացնում է նրանց միջև հաստատված խաղաղությունը և նոր արշավանքների դուռ բացում: Նրանք նախ գրավում են Կուրի ձախափնյա տարածությունը: Կաղանկատվացին պատմում է. «Ասպատակ սփռեալ (խազարները - Հ. Ս.) յաշխարհն Աղուանից առ ստորոտովն մեծ լերինն Կաւկասու և յաւանս Կապաղակայ գաւառին»[129]: Նույնը, բայց մեկ առ մեկ թվարկելով Կուրի հյուսիսում խազարների գրաված գավառները, հաղորդում է Ղևոնդը. «սփռեալ զասպատակս իւրեանց ըստ հիւսիսոյ գետոյն հզորագունի, որ կոչի Կուր՝ առնուին բազում գաւառս զՀէջար, զՔաղա, զՈստան, զՄարզպանեան[130], զՀաբանդ, զԳեղաւու, զԾաքէ, զԲեխ, զԽենի, զԿամբեխճան, զԽողմաղ»[131]:

Կուրի ձախափնյակում ունեցած հաջողությունները գրգռում են քոչվոր խազարների ախորժակը, և նրանք որոշում են նվաճել «հզորագոյն գետի» աջափնյա տարածությունները ևս: Իրենց խաքանի՝ Ալփ-Իլիթվերի գլխավորությամբ անցնում են Կուրը և սկսում ասպատակությունները նրա աջափնյակում: «Ինքն (Ալփ-Իլիթվերը - Հ. Ս.) իւրով յօգնական գնդիւն ի հովիտս դաշտացն ճախր առեալ՝ անցանէր յՈւտի գաւառ ընդ գետն Կուր և ահա սաստիկ ամփոփէր զմարդ և զանասուն աշխարհին այնորիկ, աւար առեալ գերէին զամենայն»[132]: Բայց պետք է ասել, որ խազարների արշավանքից, ի հակադրություն կենտրոնական Հայաստանի ու Վրաստանի, Առան-Աղվանքը ամենաքիչն է տուժում: Այն դեպքում, երբ խազարների հարձակմանը զոհ է դառնում հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը, Աղվանից իշխան Վարազ-Տրդատը երկիրը նոր ավերածություններից փրկելու հեռատես քաղաքականությամբ կաթողիկոս Եղիազարին ուղարկում է խազարների խաքան Ալփ-Իլիթվերի մոտ՝ «ցուցանելով ի ձեռն նորա զիւրն հաւատարմութիւն միամիտ և զսէրն, զոր ունէր առ նա մտերմաբար իբրև եղբօր սիրելւոյ»[133]: Եղիազարը կարողանում է համատացնել Ալփ-Իլիթվերին, որ իրենք մեղք չունեն Ջուանշիրի սպանության գործում և բանակցությունները ավարտել են հաշտության կնքումով[134]: Խազարները հեռանում են Աղվանքից, բայց և պատավորեցնում Աղվանից իշխանին՝ իրենց հարկ վճարել, փոխարենը օգնություն խոստանալով[135]: Այլ խոսքով, խազարների խաքան

[129] Նույն տեղում:

[130] Ստ. Կանայանն այս երեք անվանումներն առաջարկում է կարդալ որպես մեկ գավառի անուն. «Քապաղա Ոստան ի Մարզպանեան» (տե՛ս նրա «Անհայտ գավառներ հին Հայաստանի, էջ 172):

[131] Ղևոնդ, էջ 132:

[132] Կաղանկատվացի, Բ, գլ. ԼԶ:

[133] Նույն տեղում:

[134] Նույն տեղում:

Ալփ-Իլիթվերը ճանաչում է Վարազ-Տրդատի իրավունքները Աղվանքի իշխանական գահի վրա: Վարազ-Տրդատը, որպես Աղվանքի իշխան, շուտով ճանաչվում է նաև արաբական նոր խալիֆի՝ Մրվան Ա-ի (683-685 թթ.) կողմից[136] որն հաջորդել էր խալիֆ Եզիդ Ա-ին և այդ քայլով, հավանաբար, ձգտում էր վերականգնել իր նախորդի դեմ ապստամբության և հարկերի մուծումից հրաժարվելու պատճառով ընդհատված հարկերի անխափան մուտքը:

Վարազ-Տրդատի պետական ու քաղաքական գործունեության մեջ աչքի ընկնող տեղ է գրավել դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Հայաստանի առանձին մարզերի և այլ երկրների հետ: Այսպես, երկրի ներքին ու արտաքին դրությունը քիչ թե շատ բարելավելուց հետո, նա Արցախի Մեծ Կողմանց գավառի եպիսկոպոս Իսրայելին ուղարկում է կենտրոնական Հայաստան «ի գործ ինչ խորհրդական և ի սեր ... առ մեծ կաթողիկոսն Հայոց և առ բարեպաշտ իշխանն Այրարատեան գաւառին»[137]: Այս պատգամավորության արդյունքների մասին լռում է Կաղանկատվացին, սակայն, ինչպես ցույց են տալիս հետագայում ծավալված դեպքերը, կողմերը ձեռք են բերել խազարների դեմ համատեղ գործելու պայմանավորվածություն:

Երկիրն առաջվա պես տնքում էր խազարներին ու արաբներին տրվող կեղեքիչ հարկերից: Ստեղծված դժվարին դրությունից դուրս գալու նպատակով Վարազ-Տրդատը կաթողիկոս Եղիազարի հետ հրավիրում է նախարարական խորհուրդ, որտեղ ներկաներին ծանոթացնում է երկրում առաջացած իրադրությանը: «Ահա հարկք որ եդան ի վերայ մեր ի դժնդակ ազգէն Տաճկաստանեայց, յոյժ վտանգեալ տարակուսեալ զմեզ: Եւ երկրորդ անգամ անհնարին աղէտք այն են մեզ՝ ամի ամի ասպատակեալ յաշխարհս մեր զօրացն Հոնաց: Եւ երկաքանչիւր կողմանց բռնութենէ թշնամեացն աւերեալ պակասեցաւ երկրիս»[138]: Ժողովականները որոշում են պատգամավորություն ուղարկել Հոնաց (խազարների) աշխարհը՝ խաղաղության դաշն կնքելու: Ընտրությունը պատահական չէր: Այդ ժամանակաշրջանում արաբները բավականանում էին սոսկ հարկեր գանձելով: Նրանք երկիրը չէին ասպատակում և մարդկանց չէին գերեվարում: Դրան հակառակ խազարներն էին, որ բացի ծանր հարկերից պարբերաբար ասպատակում էին երկիրը, ավերում այն, գերեվարում բնակիչներին: Ժողովականների հիշողության մեջ դեռ թարմ էին խազարների վերջին ավերիչ արշավանքի հետևանքներն Հայաստանում, Աղվանքում և Վիրքում, որի ժամանակ չնայած Աղվանքը համեմատաբար քիչ է տուժում և, ինչպես տեսանք, կաթողիկոս Եղիազարի ջանքերով նույնիսկ խաղաղություն է հաստատվում խազարների ու Աղվանքի միջև, բայց և այնպես ոչ մի գրավական չկար, որ վերջինս կրկին չէր ենթարկվի նոր, կողոպտիչ արշավանքների: Ուստի ժողովականները կազմում են պատգամավորություն և դարձյալ նույն Իսրայելի գլխավորությամբ «ի վաթսներորդ երկրորդ ամի հարաւայնոյ իշխանութեանն» «յամսեանն մեհեկանի, որ օր ԺԸ էր»[139], այսինքն՝ 684 թ. դեկտեմբերի 22-ին[140], ուղարկում են «ի հեռաբնակ աշխարհն Հոնաց»[141]: Պատմագրության մեջ կարծիք կա, թե Կաղանկատվացին այստեղ

[136] Նույն տեղում, Բ, գլ. ԼԷ:

[137] Նույն տեղում:

[138] Նույն տեղում, Բ, գլ. ԼԹ:

[139] Նույն տեղում:

[140] С. Т. Еремян, Моисей Каланкатуйский о посольстве..., с. 134.

[141] Կաղանկատվացի, Բ, գլ. ԼԹ:

Նկատի ունի Հիջրայի թվականի 62-րդ տարին, որը համապատասխանում է Ներկա թվականության 682 թ.[142]: Բայց վերը մենք տեսանք, որ նշված թվականին անդրկովկասյան երկրները ապստամբել էին և, հասկանալի է, այդ տարի որևէ պատգամավորության մասին խոսք լինել չէր կարող: Բացի դրանից, 682 թ. երկրի առաջին իշխանը դեռևս Ջուանշիրն էր, իսկ աղբյուրը մատնանշում է, որ պատգամավորությունը կազմակերպվել է Վարազ-Տրդատի կողմից, որն իշխանության գլուխ էր անցել 683 թ.: Եվ եթե նկատի ունենանք, որ նրա իշխանության առաջին տարում տեղի ունեցան խազարների արշավանքը, Եղիազարի բանակցությունները ու դրանց հաջորդող դեպքերը, ապա տրամաբանական կլինի կարծել, որ Իսրայելի պատգամավորությունը ճանապարհ կարող էր ընկնել միայն նրա իշխանության երկրորդ տարում, այն է՝ 684 թ.:

Իսրայելի պատգամավորությունը, ճանապարհորդության ընթացքում բավականին դժվարություններ հաղթահարելով, 685 թ. փետրվարի 11-ին[143] հասնում է խազարների մայրաքաղաք Վարաչան, ուր մեծ ընդունելություն է գտնում խազարաց իշխանի կողմից[144]: Իսրայելի առաքելությունը պսակվում է հաջողությամբ: Նա կարողանում է իրենց կողմը տրամադրել խազարներին և նույնիսկ, պատմիչի վկայությամբ, «մեծագահ» իշխան Ալփ-Իլիթվերին «հանդերձ բանակօքն... հնազանդեցուցեալ զանձինս լծոյ քաղցրութեան Քրիստոսի»[145]: Չնայած հաջողությանը, խազարները կարճ ժամանակից հետո վերսկսում են իրենց հարձակումները Աղվանք-Առանի վրա և հարկադրում նրան կրկին հարկ վճարել:

Այդ ժամանակ փոխվում է քաղաքական իրադրությունը Անդրկովկասում: Արաբական խալիֆ Մրվան Ա-ին (683-685 թթ.) հաջորդում է որդին՝ Աբդ ալ-Մալիքը (685-705 թթ.), որին հաջողվում է երկրի ներքին խռովությունները վերացնելուց հետո խալիֆայությունը նորից տանել վերելքի ուղիով[146]: Բյուզանդիայի կայսր Հուստինիանոս Բ-ի և Աբդ ալ-Մալիքի միջև շուտով կնքվում է համաձայնագիր, որով կողմերը տասը տարվա ընթացքում (685-695 թթ.) հավասար իրավունքով պետք է իշխեին Կիպրոս կղզում, Հայաստանում, Աղվանքում և Վիրքում՝ այդ երկրներից գանձվող հարկը հավասարաչափ բաժանելով միմյանց միջև[147]: Որ Աղվանքն էլ էր գտնվում Բյուզանդիային ու Արաբիային հարկատու երկրների շարքում վկայում է Կաղանկատվացին. «իշխանն Վարազ-Տրդատ ընդ երիս հարկէր՝ Խազրաց, Տաճկաց և Հոռոմոց»[148]:

688 թ. Հուստինիանոսն, անձամբ առաջնորդելով մի հսկա բանակ, շարժվում է դեպի Անդրկովկաս իրական սպառնալիք Հայաստանի, Աղվանքի ու Վրաստանի համար: Նա հարկադրում է այդ երկրների կառավարող շրջաններին նենկայանալ

[142] Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի ..., էջ 268: The History of the Caucasian Albanians, էջ 153, ծանոթ. 1: З. Буниятов, Азербайджан в VII-IX вв., с. 192, пр. 143.

[143] С. Т. Еремяи, Моисей Каланкатуйский о посольстве..., с. 148.

[144] Իսրայելի պատգամավորության անցուղին մանրամասնորեն ցույց են տվել Ս. Տ. Երեմյանը (տե՛ս Моисей Каланкатуйский о посольстве..., с. 150) և Վ. Գ. Կոտովիչը (Տե՛ս О местоположении раннесредневековых городов Варачана, Беленджера и Таргу, Древности Дагестана, Махачкала, 1974, с. 169).

[145] Կաղանկատվացի, Բ, գլ. ԽԱ:

[146] Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 43:

[147] Ю. Кулаковский, История Византии, т. III, Киев, 1915, с. 254.

[148] Կաղանկատվացի, Գ, գլ. ԺԲ:

իրեն: Ներկայացած իշխաններից ոմանց Հուստինիանոսը պահում է իր մոտ որպես պատանդ, որոշ մասին ազատ արձակում, իսկ ոմանց էլ կրկին հաստատում իրենց իշխանություններում: Վերջիններիս թվում էր և Աղվանի իշխան Վարազ-Տրդատը: Այդ մասին այսպես է գրում հայ պատմիչ Ասողիկը. «Իսկ ի գալ (Հուստինիանոսի - Հ. Ս.) չորրորդ ամին, Յուստինիանոս ինքն խաղացեալ զօրու ծանու ... յերիս բաժանեալ զզօրս իւր առաքէ ի Հայս, ի Վիրս, և յԱղուանս. և կոչեալ առ ինքն զամենայն իշխանս աշխարհացն այսոցիկ և ոչ ի կամաց, այլ ի հարկէ գնացեալ առ նա: Իսկ նորա զոմանս յիշխանացն ընդ իւր առեալ և զոմանց զորդիսն պատանդս խնդրեալ, ընդ որս և զկաթողիկոսն հայոց զՍահակ հանդերձ և եպիսկոպոսօք արգելեալ առ ինքն և զոմանս յիշխանացն արքունատուր պատարագօք պատուեալ՝ կացոյց իշխանս աշխարհացն զՆերսեհ Շիրակայ տէր, կոմս Կապոյտիրոց Հայոց իշխան, և զՎարազդատ (Վարազ-Տրդատ - Հ. Ս.) պատրիկ էքսարխոս, որ էր երկրորդ թագաւորին՝ Աղուանից իշխան»[149]:

Բայց Աղվանից իշխանը բյուզանդական կայսեր պատիվները երկար չի վայելում, քանի որ հենց ինքը՝ Հուստինիանոսը 695 թ. կորցնում է գահը: Նրան փոխարինում է Լեոնտի կայսրը, որն էլ 698 թ. ստիպված հեռանում է գահից՝ Տիբերիոս Գ Ապսիմարոսի (698-705 թթ.) ճնշման տակ: Վերջին կայսեր օրոք «խստագոյն Ծեղութիւն ի Հոռոմայեցւոց հասեալ նմա (Վարազ-Տրդատին - Հ. Ս.) հանդիպէր»[150]: Ծուտով Կոստանդնուպոլիս է կանչվում Աղվանից իշխանը և «հանդերձ որդւովք իւրովք յարքայաբնակ քաղաքին անդ արգելեալ լինէր ի կայսերէն»[151]: Կոստանդնուպոլսում Վարազ-Տրդատն անցկացնում է հինգ տարի[152]: Ըստ Ս. Տ. Երեմյանի, Աղվանից իշխանին Տիբերիոս Գ-ն հեռացրել է քաղաքական կյանքից, նրա՝ խազարների հետ ունեցած բարվոք հարաբերությունների պատճառով, վախենալով, որ նա կարող էր նպաստել Հուստինիանոս Բ-ին՝ խազարներից օգնություն ստանալ և վերականգնել իրավունքները բյուզանդական գահի վրա[153]: Տիբերիոս Գ կայսեր վախը անհիմն չէր: Իրոք, Հուստինիանոսը կարողանում է վերստին ձեռք բերել բյուզանդական գահը: Կրկին գահ բարձրանալով՝ նա 705 թ. ազատում է Աղվանից իշխանին, բայց վերջինս հայրենիք է վերադառնում միայնակ. ինչ-ինչ նկատառումներով Հուստինիանոսը Կոստանդնուպոլսում որպես պատանդ պահում է նրա որդիներին՝ Գագիկին ու Վարդանին:

Վարազ-Տրդատի բացակայության ժամանակ Աղվանից երկրում տեղի էին ունեցել մեծ փոփոխություններ: Այդ ընթացքում իշխանական գահն անցել էր Շերո անունով մի իշխանի (699 թ.), որն այն ձեռք էր բերել՝ հաղթահարելով կաթողիկոս Ներսես-Բակուրի և Վարազ-Տրադտի կնոջ՝ Սպրամի դիմադրությունը: Ներսեսը կաթողիկոս էր ձեռնադրվել Եղիազարի մահից հետո՝ 688 թ., Գարդմանի եպիսկոպոսությունից: Նրա կաթողիկոսության շրջանում երկրում լայն տարածում է գտնում քաղկեդոնականությունը, որին հարում էր և ինքը՝ կաթողիկոսը՝ Վարազ-Տրդատի կնոջ՝ Սպրամի հետ միասին: Վերջինս իր ամուսնու բացակայության ժամանակ կանգնած էր իշխանության գլուխ. «Յայնժամ

---

[149] Ասողիկ, Բ, գլ. Բ:
[150] Կաղանկատվացի, Գ, գլ. ԺԲ:
[151] Նույն տեղում:
[152] Նույն տեղում:
[153] С. Т. Еремян, Моисей Каланкатуйский о посольстве..., с. 153.

հրամանատար Աղուանից էր» - Նրա մասին գրում է Հովհ. Դրասխանակերտցին[154], իսկ Ստ. Օրբելյանն էլ նրան կոչում է «թագուհի»[155]: Նույն ժամանակ ոտքի են ելնում Վարազ-Տրդատի այն տոհմակիցները, որոնք «անբեղուն միտս ունէին ընդ նմա»[156], և փորձում իրենց ձեռքը վերցնել իշխանությունը: Այս խմբակցությունը գլխավորում էր իշխան Ծերոնը: Երկու խմբակցությունների՝ իշխանության համար պայքարի հիմքում առերևույթ ընկած էին կրոնադավանաբանական վիճաբանությունները: Բայց պայքարն ավելի շուտ քաղաքական կողմնորոշման համար էր: Կաթողիկոս Ներսեսը և Աղվանից տիկինը, հարելով քաղկեդոնականությանը, հանդես էին գալիս որպես Բյուզանդիայի կողմնակիցներ: Այդ էին պահանջում ստեղծված պայմանները, քանի որ գերության մեջ էր գտնվում Վարազ-Տրդատը՝ իր երկու որդիների հետ: Դա կրկնակի դժվարություն էր առաջացնում, մանավանդ Սպրամի համար, որովհետև հավատարմությունը դեպի Բյուզանդիան պահանջում էր նաև «ամուսնական սերը դեպի ամուսինն ու մայրական գորովը դեպի իր որդիները, որոնք Կ. Պոլիս էին»[157]:

Մյուս խմբակցությունը, Ծերոյի գլխավորությամբ, հակված էր դեպի Արաբական խալիֆայություն: Քաղաքական այս պայքարը պատճառ է դառնում, որ Աղվանքի ներքին գործերին անմիջապես միջամտի Արաբիան: Ծերոն և նրա համախոհները հայտնում են Եղիա կաթողիկոսին՝ Ներսեսի ու նրա կողմնակիցների քաղկեդոնականությանը հարելու մասին: Հայոց կաթողիկոսն անմիջապես գալիս է Պարտավ, որտեղ պետք է գար նաև Աբդ ալ-Մալիք խալիֆի զորքը՝ «վասն ապստամբացն Աղուանից»[158] ու դաժան դատաստան է տեսնում Ներսես Բակուրի և Սպրամի հետ: Կաթողիկոս Եղիան «ոտն ընդ ոտն բազազանեալ կապեցաւ ընդ կնոջն և հանդերձեալ էր վարիլ ի տար աշխարհ, որ սակս այնորիկ անուաղ եղեալ զաւուրս ութ՝ վախճանեցաւ»[159]: Այսպես է վերջանում պայքարը երկու հակամարտ ուժերի միջև, որն առաջացել էր «վասն հակաճառութեանն որ ընդ նմա (Ծերոյի - Հ. Ս.) և ընդ Սպրամ ի վերայ իշխանութեանն»[160]:

Պատմագիտության մեջ Եղիա կաթողիկոսի մասնակցությունը տեղի միջադեպին մեկնաբանվել է որպես հայ եկեղեցական գործիչների կողմից Աղվանից եկեղեցու ինքնուրույնությունը վերացնելու, իրենց ազդեցության տակ գցելու, աղվանացիների գիրն ու գրականությունը ոչնչացնելու, իսկ նրանց էլ բռնությամբ հայացնելու ցանկություն: Հայ եկեղեցական գործիչների հասցեին արված նման անհիմն մեղադրանքի հեղինակ Զ. Բունիյաթովը[161], պարզապես աչք է փակում ժամանակի քաղաքական իրադրության և դրանից բխող հարկադրական քաղաքականություն վարելու անհրաժեշտության առաջ: Եղիա կաթողիկոսը տվյալ պարագայում գործում էր քաղաքական իրադրությունից ելնելով և Հայոց Արևելից կողմերում գործող իր հոգևոր թեմերից մեկում վիճակը կարգավորելու համար տեղի իշխող խավերի կողմից ստացած հրավերով ու ցանկությամբ[162]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Առան-Աղվանքում, բացի

[154] Դրասխանակերտցի, էջ 99:
[155] Օրբելյան, էջ 455:
[156] Կաղանկատվացի, Բ, գլ. ԼԶ:
[157] Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի ..., էջ 367:
[158] Կաղանկատվացի, Գ, գլ. Զ:
[159] Նույն տեղում, Գ, գլ. Է:
[160] Նույն տեղում:
[161] З. Буниятов, Азербайджан в VII-IX вв., с. 97.
[162] Կաղանկատվացի, Գ, գլ. Դ:

քաղկեդոնականությունից, լայն տարածում էին գտել նաև պատկերամարտությունն ու պավլիկյանությունը: Հասարակության մեջ բույն էին դրել բազմաթիվ արատավոր երևույթներ: Եվ Ծերո իշխանը, հաղթահարելով քաղկեդոնականների դիմադրությունն ու անցնելով իշխանության գլուխ, լուրջ պայքար է ծավալում հասարակական ու քաղաքական այդ արատավոր երևույթների դեմ: Ուստի Պարտավում հրավիրվում է մի եկեղեցական ժողով, ուր բանադրանքի է ենթարկվում ամենայն հերձվածություն, որոշում է ընդունվում արգելել ամուսնությունը մերձավորների միջև, և հայտնվում է հավատարմություն հայոց եկեղեցուն ու նրա հաստատած կարգերին: «Մենք ամենեքեան,- գրում են ժողովականները Եղիա կաթողիկոսին, - նզովեմք զամենայն հերձվածողսն ... պայմանեցաք, զի յայսմ հետէ մի ոք իշխեսցէ ի մենջ արտաքս ելանել յաւանդութենէ հարցն մերոց և ձերոց»[163]: Հայոց կաթողիկոսին ուղղված թղթի բովանդակությունը բերում է նաև Սամվել Անեցին, որում Ծերոն իրեն անվանում է «Ապիհիպատրիկ Գարդմանայ տէր և Աղուանից» ու հավատացնում Եղիային, թե «յորժամ դուք ձեռանրկէք յաղագս քաղկեդոնական աղանդոյն և կամ Մայրագոմեծոյն, եթէ վասն պայլի կենաց[164], և թէ վասն խառն ամուսնութեան և թէ զինչ և իցէ՝ ոչ ոք կարէ ելանել ըստ ձեր հրամանէ»[165]:

Բայց Ծերոն շատ շուտ է կորցնում Աղվանից իշխանական գահը: VII դարի վերջերին ու VIII դարի սկզբներին արաբները, Անդրկովկասը վերջնականապես նվաճելու ձգտումով, այնտեղ լուրջ գործողություններ են ծավալում: Կաղանկատվացու վկայությամբ՝ 699 թ. խալիֆի եղբայրը՝ փոխարքա Մուհամմադ իբն Մրվանը մի արշավանք է ձեռնարկում դեպի Հայաստան[166]: Հայերը համառ դիմադրություն են ցույց տալիս: Երկու տարի անընդմէջ շարունակվում են արշավանքները, բայց հայերը ի չիք են դարձնում Հայաստանը գրավելու նրա փորձերը: Սակայն 701 թ. նրան հաջողվում է նվաճել Հայաստանը: Այնուհետև նաև Աղվանքը, Վիրքն ու Կասպից ծովի առափնյա շրջանները:

Տիրելով Հայաստանին ու անդրկովկասյան երկրներին, Արաբական խալիֆայությունը նույն՝ 701 թ. միավորում է դրանց բոլորին և կազմում մեկ ընդհանուր վարչական միավոր՝ ոստիկանություն: Այն Հայաստանի անունով սկսում է կոչվել «Արմինիա», որի կենտրոնը սկզբում դառնում է Դվինը, ապա՝ 789թ-ից Պարտավ քաղաքը:

Այնուհանդերձ արաբները չէին կարող իրենց տիրապետությունը հաստատուն համարել այդ երկրներում, քանի դեռ գոյություն ունեին հայկական զինված ուժերը: Ուստի Իբն Մրվանը «դարան գործեալ մեծապէս երդմամբ, դաւով և խաբեութեամբ առ ինքն ժողովեաց զամենայն գլխաւորաց Հայոց, և տարեալ ի Նախիջևան քաղաք՝ ութ հարիւր այր յեկեղեցիսն արկեալ կենդանւոյն այրեաց, և Ն այր ի Խրամ նոյնպես այրեաց և զսինլքորս նոցա սրահար սատակեաց»[167]: Հայոց ռազմական ուժին

---

[163] Նույն տեղում, Գ., գլ. Ը:

[164] Սա «պաւղիկեանք» բառն է աղավաղված ձևով: Այն պատմագրության մեջ պավլիկյանների մասին առաջին հիշատակությունն է (Տե՛ս Р. М. Бартикян, Источники для изучения истории павликианского движения, Ереван, 1961, с. 31, 108, пр. 2).

[165] Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, առաջաբանով, համեմատութեամբ, հավելվածներով և ծանոթագրություններով Արշակ Տէր Միքելյանի, Վաղարշապատ, 1893, էջ 286:

[166] Կաղանկատվացի, Գ., գլ. ԺԹ:

[167] Նույն տեղում:

հացրած այս խոշոր հարվածը հեշտացնում է Հայաստանի ու ողջ Անդրկովկասի գրավումը: Սկսվում են բռնությունները: Հաշվի առնելով արաբների հանդեպ ունեցած Ծերոյի համակրանքը, Իբն Մրվանը համեմատաբար ավելի մեղմ է վարվում Աղվանից երկրի ու նրա իշխանի հետ: Այն դեպքում, երբ հայոց իշխաններից շատերին, խաբեությամբ փրկագին վերցնելուց հետո, կոտորում են[168], Ծերոյին պարզապես ձերբակալում են ու գերեվարում. «Յետ այսորիկ,- գրում է Կաղանկատվացին,- զՇերոյ Աղուանից իշխանն ազատօքն հանդերձ տարան ի Տարօն և անտի յԱսորիս. և հայ թիւն ՃԾԳ (704 թ. –Հ. Ս.) էր»[169]: Նշված դեպքերից հետո է, որ 705 թ. Վարազ-Տրդատը Հուստինիանոս Բ-ից ազատություն ստանալով վերադառնում է հայրենիք՝ Բյուզանդիայում թողնելով պատանդ որդիներին: Վերադառնալով Աղվանք և վերականգնվելով իշխանական գահին, նա ստիպված է լինում համակերպվել ստեղծված քաղաքական իրադրության հետ և «ետ զաշխարհս Արևելից ի Տաճիկս և նոցա միայն հարկէր»[170]՝ պատճառ դառնալով որդիների բանտարկությանը[171]:

Աղվանք-Առանը վերջնականապես ընկնում է արաբների լծի տակ:

Թե երկրորդ անգամ մինչև երբ է իշխել Վարազ-Տրդատը, կարելի է ասել միայն ենթադրությամբ, քանի որ Կաղանկատվացին այդ մասին ոչինչ չի գրում: Ամենայն հավանականությամբ, նա զոհ է գնացել խազարների հերթական արշավանքին, երբ, Կաղանկատվացու վկայությամբ՝ «ել խազարաց տէրն ութսուն հազար արամբք և էառ զԱղուանս և էր թիւն Հայոց ՃԾԸ (709 թ. -Հ. Ս.)»[172]: Ավելի քան հավանական է, որ խազարների այս արշավանքի ժամանակ (709 թ.) Վարազ-Տրդատը, որպես արաբներին հպատակ երկրի իշխան, իր զորքերով մասնակցել է խազարների դեմ մղվող կռիվներին և ընկել ընդհարումներից մեկի ժամանակ: Աղվանքում արաբական տիրապետությանը փոխարինելու է գալիս խազարների երկամյա իշխանությունը:

Վարազ-Տրդատի մահվանից երկու տարի հետո՝ 711 թ. արաբները կարողանում են երկրում վերահաստատել խազարների վերջին արշավանքի ժամանակ կորցրած իրավունքները և Աղվանքի առաջին իշխան են նշանակում իրենց հպատակություն հայտնած Միհրանյան տոհմի իշխաններից Ջուանշիր անունով ուրիշ մեկին (711-725 թթ.):

Աղվանից նոր իշխանի կյանքի ու գործունեության մասին որոշակի բան ասել դժվար է: Հայտնի է միայն, որ նրա օրոք՝ 714 թ. արաբ ոստիկան Մսլիմանը գրավում է Դերբենդը, ավերում այն, ապա արշավում Խազիրք, որտեղ անհաջողության է մատնվում և միայն վերջապայմ զորքի հրամանատար Առանշահիկ Վաչագանի խիզախության շնորհիվ կարողանում է փրկվել խազարների հետապնդումից: Վերջին փաստը վկայում է, որ երկրի զինվորական ու քաղաքական կյանքում նորից են բարձրանում Առանշահիկները:

Ծանր ժամանակներ են սկսվում Աղվանքի համար: Երկիրը կեղեքվում է արաբներին վճարվող հարկերից: Տարածվում է անասունների համաճարակ՝ է՛լ ավելի վատթարացնելով առանց այն էլ քայքայված տնտեսությունը: Չնայած դրան, արաբները շարունակում են իրենց դաժան հարկահանությունը: Ավելին, նրանք

[168] Ղևոնդ, գլ. Ժ:
[169] Կաղանկատվացի, Գ, գլ. ԺԶ:
[170] Նույն տեղում, գլ. ԺԲ:
[171] Նույն տեղում, Գ, գլ. ԺԶ:
[172] Նույն տեղում:

725 թ. ձմռանը անցկացնում են  աշխարհագիր, որն այն իրագործողի անունով կոչվում էր Հերթի աշխարհագիր և նպատակ ուներ ծխահարկը փոխարինել գլխահարկով և հարկի տակ դնել անասուններին ու հողը: «Իսկ ՃՀԴ թուականութեանն հայոց (725 թ.- Հ. Ս.) զամառն մահ անասանոց և ձմեռն աշխարհագիրն Հերթի, որ արկ զմարդ, և զանասուն և զսահմանս երկրի ընդ հարկաւ անթիւ ծառայութեան»[173]:

Աղվանից երկրի տնտեսական ու քաղաքական ծանր կացությունից բխող հակասություններն ու երկպառակությունները ավարտվում են 725 թ. Աղվանից իշխան Ջուանշիր Բ-ի սպանությամբ[174]:

Միհրանյան տոհմը, չնայած դրանից հետո մի դար էլ պահպանում է իշխանությունը Աղվանքում կամ Խորին աշխարհում Հայոց, բայց և այնպես 725 թ. հետո, «անշքեցան փառք տանն Աղուանից և աղմուկք հագարացւոց կալան զայն»[175]: Աղվանից իշխանական գահին այսուհետեւ մեկը մյուսին հաջորդում են աննշան և ոչնչով աչքի չընկնող իշխաններ: Այդ ժամանակաշրջանում Ջուանշիրին փոխարինում են Վարազ-Տրդատի պատանդությունից վերադարձած որդիները՝ սկզբում Վարդանը, հետո Ներսեհը, որն իր դժնի վարքի համար ստանում է Դժնդակ մականունը:

VIII դարի կեսերին Արաբական խալիֆայությունում տեղի են ունենում քաղաքական խոշոր փոփոխություններ: Օմայաններին փոխարինում են Աբբասյանները, որոնց տիրապետության շրջանում ծայրաստիճան վատանում է հպատակ երկրների, այդ թվում և Առան-Աղվանքի քաղաքական ու տնտեսական կյանքը: Աբբասյանները երկրի կառավարման ղեկը ամբողջովին վերցնում են իրենց ձեռքը: Պարտավը վերածվում է արաբական ոստիկանների նստավայրի: Արաբների նոր քաղաքականությունն Աղվանից աշխարհում այսպես է նկարագրում Կաղանկատվացին. «Եղև այս տանս Աղուանից զրկանք մեծապես, զի զմայրաքաղաքն Պարտաւ խլեցին յիշխանացն Աղուանից Տաճիկք ըստ իւրեանց անառակ ազգաշաղախութեանն: Եւ որպէս զառաջինն աթոռ իշխանութեանն իւրեանց արկին ի Դամասկոս Ասորեստանեայց, նոյնպես աստ յԱղուանս նստուցին ի Պարտաւ կալ արքունեացն՝ ծծել զպարարտութիւն երկրիս. յորոց մի ոմն յարքունեացն եկեալ ի Պարտաւ»[176]: Դա 789 թ. էր, երբ Պարտավը Դվինին ետ է մղում և դառնում Արմինիայի ոստիկանի գլխավոր նստավայրը:

Աբբասյանների օրոք ստեղծված անտանելի դրությունը շատերին է հարկադրում թողնել հայրենի երկիրն ու անցնել Բյուզանդիա: Բնակչության մի մասն էլ, որ մնացել էր հայրենիքում հաճախ էր ոտքի կանգնում՝ թոթափելու կամ գեթ թեթևացնելու արաբական լուծը: Ամբողջ VII դարը լի է ապստամբական շարժումներով, որոնք շարունակ բռնկվում էին Անդրկովկասի մերթ այս, մերթ այն երկրում: 792 թ. ապստամբում են Պարտավի բնակիչները: Ապստամբությունն սկսվում է Պարտավ՝ հարկ հավաքելու ուղարկված Աբու Սաբահի սպանությամբ[177]: Այնուհետև այն ծավալվելով ընդգրկում է նաև Փայտակարանը, Դերբենդը, Շիրվանը: 793-794 թթ. նորից ոտքի են կանգնում Պարտավի ու Փայտակարանի բնակիչները:

[173] Նույն տեղում, Գ, գլ. ԺԷ: Հերթի այս աշխարհագրի և նրա ծանր հետևանքների մասին պատմում են նաև Ղևոնդը (գլ. ԺԷ) և Ասողիկը (Բ, գլ. Գ):

[174] Կաղանկատվացի, Գ, գլ. ԺԷ:

[175] Ալիշան, Աղուանք, էջ 350:

[176] Կաղանկատվացի, Գ, գլ. Ի:

[177] Արաբացի մատենագրեր ..., էջ 111-113:

Այդ ժամանակաշրջանում Առան-Աղվանքի տարածքում ապրում էին արաբական տարբեր ցեղեր, որոնք մշտապես պատերազմում էին միմյանց հետ: Նոր կառավարիչ Եզիդ իբն Մազյադ Շայբանին (799-801 թթ.) հաջողվում է խաղաղեցնել հակամարտ ցեղերին, միաժամանակ շահել Աղվանից երկրի ազնվականության համակրանքը[178]: Հավանական է նույնիսկ, որ նրա թույլտվությամբ երկրի կառավարիչներ են նշանակվում տեղական ազնվականության ներկայացուցիչներ, այն էլ «իշխան» տիտղոսի պահպանմամբ: Դրա վառ ապացույցն է այն, որ VIII դարի վերջերին որպես Աղվանից իշխան նորից հիշատակվում է Միհրանյան տոհմից Վարազման անունով մի իշխան, որի գործունեության մասին ոչինչ հայտնի չէ: Ընդհանրապես շրջանի իշխանների գործունեության շուրջ աղբյուրները լռում են: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի Աղվանից իշխանները ներկայացված են սոսկ անուններով, մի հանգամանք, որ ենթադրել է տալիս նրանց կրած տիտղոսի պայմանականությունը:

Աղվանից իշխանական գահի վրա Վարազմանին փոխարինում է որդին՝ Վարազ-Տրդատ Բ-ն: Վերջինս ունենում է երեք որդի՝ Ստեփանոս, Վարազման, Ջուանշերիկ: Սրանցից ավագը՝ Ստեփանոսը վախճանվում է պատանի հասակում, միջնեկը՝ Վարազմանը երիտասարդ տարիքում խեղդվում է Կուր գետում, իսկ ժառանգ մնում է կրտսերը՝ Ջուանշերիկը[179]: Սակայն, նա կամ այդպես էլ մնացել է որպես ժառանգ, կամ էլ շատ կարճ ժամանակ է իշխել, որովհետև 821 թ. Աղվանից իշխանն էր Ստեփանոսի որդին՝ Վարազ-Տրդատ Գ-ն: Այս Վարազ-Տրդատը, որը «ութերորդն էր ի Վարազ-Գրիգորէ»[180], Միհրանյան տոհմի վերջին իշխանն էր Աղվանքում և որդու Ստեփանոսի հետ 821 թ. սպանվում է Արցախի Վերին Խաչեն գավառում՝ Դադոյի վանք կոչվող վայրում, իրենց ազգական Փիլիպյան Ներսեհ իշխանի կողմից[181]: Սպանված Վարազ-Տրդատի աղջկան՝ Սպրամին, մայրը «գիշերահէն տաժանելի ուղևորմամբ»[182] տանում է Խաչեն, ուր և ամուսնացնում է Խաչենի տեր Առանշահիկ Սահլ ի Սմբատյանի որդու՝ Ատրներսեհի հետ՝ դրանով կրկին խնամիական կապերով միավորելով Առանշահիկ և Միհրանյան տոհմերը:

Վարազ-Տրդատի սպանությունից հետո «քակտեցաւ իշխանութիւնն տանն Աղուանից եւ բռունք տիրացան ի վերայ գաւառաց գաւառաց»[183]:

Միհրանյան տոհմի վերացումից հետո ուսումնասիրվող երկրամասը, լինելով Արմինիա մեկ վարչական միավորի կազմում կառավարվում է միայն էմիրների միջոցով, մինչև Բագրատունյաց հարստության բարձրացումը՝ 885 թ.: Արաբական լծից կենտրոնական Հայաստանի ազատագրումով անկախություն է ձեռք բերում Հայոց երկրի այս հատվածը ևս՝ Համամ Արևելցու ջանքերով: «Ապա Բարեպաշտն Համամ,- գրում է Կաղանկատվացին,- նույնպես զկործանեալ թագաւորութիւնն տանն Աղուանից նորոգէր, որպես Աշոտ Բագրատունին զՀայոց թագաւորութիւն»[184]: Նրա ստեղծած թագավորությունը ժամանակի հայ պետական կազմավորումներից մեկն էր և ընդգրկված էր Բագրատունյաց Հայաստանի գերագույն իշխանության ներքո գտնվող ֆեոդալական իշխանությունների համակարգի մեջ:

---

178 С. Т. Еремян, Азербайджан (Албания) в период арабского владычества, Очерки истории СССР III-IX вв., с. 535.

179 Կաղանկատվացի, Գ, գլ. Ի:

180 Նույն տեղում:

181 Նույն տեղում:

182 Նույն տեղում:

183 Ալիշան, Աղուանք, էջ 350:

# ՎԵՐՋԱԲԱՆ

Մ. թ. ա. I դարի սկզբներին Արևելյան Անդրկովկասում կազմավորվում է մի պետություն, որին հայկական աղբյուրները կոչում են «Աղուանք», հունա-հռոմեական աղբյուրները՝ «Ալբանիա», վրացական աղբյուրները՝ «Ռանի», իսկ ասորական ու արաբական աղբյուրները՝ «Առան»:

«Աղուանք» տեղանունը էթնիկական ծագում չունի: Այն կազմվել է հայերեն «աղու» արմատից և պատկանելություն ցույց տվող «եանք» (ե-ի անկումով) վերջածանցից, սկզբնական շրջանում նշանակելով «աղու» (քաղցր, հաճելի, բարենպաստ կլիմա ունեցող) երկրի բնակիչ, վերածվել է աշխարհագրական տեղանվան: Ուսումնասիրվող երկրի լատինական անվանումը՝ «Ալբանիա», առաջացել է այս հայերեն «Աղուանք» բառից լ-ղ, ւ/ու/-բ հնչյունափոխության միջոցով:

Դեռևս մ.թ.ա. VI դարի վերջին տասնամյակներում Աղվանից աշխարհի տարածքը կազմում էր Աքեմենյան Պարսկաստանի տերության 11-րդ սատրապությունը: Այն կրում էր «Կասպիանե» անվանումը և ընդգրկում մի տարածություն, որը հյուսիսից շրջափակված էր Կովկասյան լեռնաշղթայի հարավային փեշերով, արևելքից՝ Կասպից ծովով, հարավից՝ Կուր, իսկ արևմուտքից՝ Ալազան գետերով: Ունենալով նման սահմաններ, սատրապությունը ոչ մի կապ չուներ հայկական աղբյուրներում ավելի ուշ հիշատակվող «Կասպիանե-Փայտակարանի» հետ:

Գրավոր աղբյուրներում «աղվանացիներ» անվանումը ի հայտ է գալիս մ.թ.ա. IV դարի վերջերից, Գավգամելայի ճակատամարտի կապակցությամբ, որտեղ նրանք կռվում էին Աքեմենյանների կողմում ընդդեմ մակեդոնացիների: Այդ ժամանակաշրջանում նրանց քաղաքական կազմավորումները ցեղային միություններից այն կողմ չէին անցնում:

Գավգամելայի ճակատամարտում հիշատակվում են նաև «սակեսիններ» անվամբ ցեղեր, որոնք լինելով ապագա Աղվանքի տարածքում հաստատված սկյութական ցեղերի մնացորդներ Կասպից ծովի արևմտյան ափի երկարությամբ ունեին բնակության բոլորովին այլ վայր և նույնական չէին հայոց Ուտիք նահանգի Ծակաշեն գավառի բնակիչների՝ շակ-սակասենցիների հետ: Ուստի եզրակացությունը, թե Ուտիքի Ծակաշեն գավառը, հետևաբար և ողջ Ուտիք նահանգը, կազմել է Աղվանքի հնագույն նահանգներից մեկը, ճիշտ չէ:

Գավգամելայի ճակատամարտը ավարտվում է Աքեմենյան Պարսկաստանի պարտությամբ, որից հետո աղվանացիները ձեռք են բերում երկարատև ինքնուրույնություն և անկախություն: Որպես դրա բնական հետևանք մեծ զարգացում է ապրում սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքը: Այս հանգամանքը, ապա և հելլենիզմն Արևելքում ու նրա արձագանքները հեռավոր Աղվանքում, աղվանական ցեղերին տանում են ժողովրդի ու պետության կազմավորման ուղիով: Աղվանական պետությունը ծագում է մ.թ.ա. I դարի սկզբներին, 26 տարբեր ցեղերի միավորումից: Նրա աշխարհագրական ու քաղաքական սահմանները հյուսիսում կազմում էին Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայի հարավային՝ Կերաունյան ճյուղը և Սոանա (այժմյան Սումգայիթ)

գետը, արևելքում՝ Կասպից ծովի՝ նրան հարող մասը, հարավում՝ Կուր, իսկ արևմուտքում՝ Ալազան գետերը: Մայրաքաղաքն էր Կապաղակ քաղաքը: Նրա սահմաններից դուրս էին գտնվում հարավում՝ Կուրի ողջ աջափնյակը՝ Ուտիք, Արցախ և Փայտակարան նահանգներով, որոնք հունա-հռոմեական ու հին հայկական աղբյուրների համոզիչ հաղորդումների համաձայն, հայկական մարզեր էին և հին Հայաստանի մշակութային ու հոգևոր օջախների, իսկ հյուսիսում՝ Սումգայիթ գետից հյուսիս ընկած տարածքը:

Աղվանքի պետական-քաղաքական սահմանները, բացառությամբ IV դարի մի կարճ ժամանակահատվածի, մինչև V դարի կեսերը մնում են անփոփոխ: Երկրի բնակչության բազմացեղայնությունը, նրանց սոցիալ-տնտեսական զարգացման անհավասար աստիճանը, լեզվական տարբերությունները ու ցեղային այլ առանձնահատկությունները, նրա աշխարհագրական կտրտվածությունն ու մասնատվածությունն առանձին տնտեսական շրջանների և թույլ տնտեսական կապերը վերջիններիս միջև արգելակում են այդ ցեղերին մեկ էթնիկական ընդհանրության հասնելու ու ժողովրդի վերածվելու գործընթացը: Այդպես էլ աղվանական ժողովուրդ չի ձևավորվում, իսկ «ալբանացիներ-աղվանացիներ» անվանումը, որ վերաբերվում էր բոլոր 26 ցեղերին, մնում է ընդհանուր, որպես հավաքական տերմին, և ինչպես հունա-հռոմեական աղբյուրներում, շարունակվում գործածվել Աղվանից երկրի բնակիչ նշանակությամբ:

Աղվանից պետությունը գլխավորում էր թագավորը: Նրանից ու նրա ընտանիքի անդամներից հետո իշխող վերնախավն էին կազմում քրմերն ու ռազմածառայողական ավագանին: Սոցիալական ցածր խավերն էին՝ գյուղական համայնքներում միավորված ազատ գյուղացիները, տնային ծառայողներն ու այլ ընչազուրկ և իրավազուրկ խավեր:

Աղվանքում օգտագործվել է նաև ստրկական աշխատանքը: Սակայն ստրկատիրություն՝ տերմինի դասական նշանակությամբ, այստեղ չի եղել: Այն ունեցել է արևելյան ստրկատիրության բնույթ, որն արտահայտվել է տնային աշխատանքներ կատարելու ձևով: Տաճարային տնտեսություններում աշխատող ստրուկները կոչվում էին հիերոդուլներ:

Մ.թ.ա. I դարի կեսերին Աղվանքը դառնում է հռոմեական արշավանքների թիրախ և շուտով նվաճվում Հռոմի կողմից: Վերջինիս տիրապետությունը երկրում փոքր ընդհատումներով տևում է ավելի քան երկու դար: Նվաճված ու հռոմեական կուսակալների կամ դրածոների կողմից կառավարվող Աղվանքն իր շահերին ներհակ հաճախ էր ստիպված լինում կռվել հանուն Հռոմի շահերի:

Աղվանքի քաղաքական ու տնտեսական զարգացման համար աննպաստ պայմաններ էին ստեղծում նաև հյուսիսային քոչվոր ցեղերը իրենց ավարառուական ու թալանչիական արշավանքներով:

Մ.թ.ա. III դարի առաջին տասնամյակներից՝ Սասանյան Պարսկաստանի հանդես գալով, սուր և անզիջում պայքար է ծավալվում Հռոմի ու նրա միջև: Սասանյանների դեմ պայքար է կազմակերպում նաև հայոց թագավոր Տրդատ Բ-ն, ու նրա գլխավորած պայքարի մշտական մասնակիցները նաև աղվանացիներն էին: Սակայն III դարի կեսերին նախ Հայաստանը, ապա և Աղվանքը ընկնում են Սասանյան Պարսկաստանի տիրապետության տակ:

IV- V դարերում մեզ հետաքրքրող երկրում ձևավորվում ու VII դարում արտադրության հիմնական եղանակ է դառնում ֆեոդալական տնտեսակարգը:

Բայց նրա հետ կողք-կողքի իրենց գոյությունն են պահպանում նաև տնտեսության վարման տոհմատիրական ու ստրկատիրական ձևերը: Բազմակացութաձևություն Աղվանքի ֆեոդալական տնտեսակարգի առանձնահատկությունն էր:

Ֆեոդալական հասարակարգը Աղվանքում ևս բաժանված էր երկու հիմնական խմբի՝ ազատների ու անազատների, իրենց առանձին դասերով, սոցիալական դիրքով ու այդ դիրքին համապատասխան իրավունքներով ու պարտականություններով:

Նոր տնտեսական կարգը լուրջ վերափոխումներ էր պահանջում նաև քաղաքական իշխանության մեջ: IV դարի 30-ական թթ. վերջին Աղվանքում իշխանության գլուխ է անցնում մի նոր՝ Արշակունիների հարստությունը, որը սերելով հայ Արշակունիներից գոյատևում է մինչև VI դարի առաջին տասնամյակը: Ավելի քան մեկուկես դար թագավորած այդ հարստության գլխավորությամբ Աղվանքն անցնում է պատմական խոշոր իրադարձությունների բովով: Մեսրոպ Մաշտոցը հորինում է ալբանական այբուբենը, մեկնաբանվում են սուրբ գրքեր որպես գաղափարական զենք, IV դարի 70-ական թթ. քրիստոնեությունը հռչակվում է պետական պաշտոնական կրոն, անդուլ պայքար է մղվում Սասանյանների կրոնահալած քաղաքականության դեմ ու երկրի տնտեսական, քաղաքական հզորության ամրապնդման, ինքնուրույնության և անկախության պահպանման համար:

Այնուհանդերձ, Անդրկովկասում ամուր կերպով հաստատվելու Սասանյանների նկրտումները, ի վերջո հանգեցնում են Աղվանից պետականության վերացմանը: 461 թ. գահից հեռացվում է թագավոր Վաչե Բ-ն, և երկրում հաստատվում է մարզպանական կառավարում:

Պետականությունն Աղվանքում վերանում է անդառնալիորեն:

Մարզպանության կազմավորումը քաղաքականից զատ բերում է նաև վարչական փոփոխություններ: Նրա կազմավորման առաջին շրջանում Մեծ Հայքից կտրվում ու Աղվանից մարզպանությանն են միացվում Արցախ և Ուտիք նահանգները, որի հետևանքով մարզպանության սահմաններն հարավում հասնում են մինչև Արաքս գետը: Պատմության մեջ առաջին անգամ հիշյալ նահանգների վրա տարածվում է «Աղուանք» անվանումը, սկզբնական շրջանում որպես համանուն մարզպանության բաղկացուցիչ մարզեր, ապա որպես միայն այդ երկու մարզերը ցույց տվող աշխարհագրական հասկացություն: Պարսից արյաց արքաների նվաճողական քաղաքականության հետևանքով Աղվանից մարզպանության սահմաններն ընդլայնվում են նաև հյուսիսում, հասնելով մինչև Դերբենդ, քանի որ Կասպից ծովի արևմտյան ափին գտնվող ազգագավառների նվաճումներին զուգընթաց շարժվելով հյուսիս, Սասանյանները դրանք միացնում էին մարզպանությանը:

Պատմական ճակատագրի բերումով «Աղուանք» անվանը վիճակված էր ավելի երկար գոյատևել, քան նրա բուն տարածքի բնակիչներին: Նույն պարսից արքաների՝ անդրկովկասյան երկրներում ամուր կերպով հաստատվելուն ուղղված քաղաքականությունը, քոչվոր ցեղերի անընդհատ հարձակումներն ու նրանց դեմ պայքարի անհրաժեշտությունը Սասանյաններին հարկադրում էին ձեռք առնել պաշտպանական միջոցներ: Այդ նպատակով նրանք մարզպանության տարածքում բնակեցնում էին իրենց հավատարիմ մարդկանց, առանձին ցեղերի ու ժողովուրդների, հատուկ տարածքներ հատկացնելով ու սահմաններ անցկացնելով,

տիտղոսներ ու այլ պատիվներ շնորհելով նրանց առաջնորդներին, ինքնուրույնություն տալիս և հանձնարարում պաշտպանել իրենց վստահված տարածքը քոչվորների ու ամեն կարգի նվաճողների ներխուժումներից: Այս քաղաքականության հետևանքով երկիրը բաժանվում է առանձին, մանր քաղաքական կազմավորումների՝ տվյալ տարածքում ապրող ցեղերի, իշխանական տների կամ աշխարհագրական վայրի անվանումներով, որի ժամանակ մինչ այդ մարզպանության համար ընդհանուր «Աղուանք» անվանումը դառնում է ավելորդ և դադարում նախկին մարզպանության ողջ տարածքը ցույց տալուց: Կրոնով ու լեզվով տարբեր ցեղերի վերաբնակեցումներն էլ իրենց հերթին բերում են նույն երկրամասի էթնիկական կազմի փոփոխություն: Քաղաքական ու էթնիկական փոփոխությունների գործընթացն ավելի ինտենսիվորեն շարունակվում է երկրամասում XI դարի երկրորդ կեսից՝ թուրք-սելջուկների հայտնվելուց հետո:

Բոլորովին հակառակ գործընթաց է տեղի է ունենում մարզպանության Կուրից հարավ ընկած շրջանում՝ Արցախում և Ուտիքում: Լինելով Աղվանից մարզպանության կայուն, տնտեսապես զարգացած, բարձր մշակույթ ունեցող ու էթնիկապես միատարր վարչական միավոր, այս նահանգները չեն ենթարկվում որևէ քաղաքական ու վարչական փոփոխությունների: Այդ իսկ պատճառով էլ նրանց վրա մնում ու ամրապնդվում է «Աղուանք» կամ «Աղուանից աշխարհ» անվանումը, որն ստանում է նոր իմաստ ու ցույց է տալիս Կուր և Արաքս գետերի միջև ընկած Ուտիքի ու Արցախի տարածքը՝ դառնալով «Հայոց Արևելից կողմանք», «Արևելից կողմանք», «Խորին աշխարհ Հայոց» կապակցություններին հոմանիշ հասկացություն:

Նոր անվանակոչված Աղվանքի տարածքում էլ VI դարի վերջերին, դարձյալ պարսից քաղաքականության հետևանքով, բարձրանում է՝ Միհրանյան տոհմը, որն իշխանության գլուխ է անցնում նրա բնիկ տերերին՝ Առանշահիկներին բնաջնջելուց հետո: Միհրանյաններն ունեին պարսկական ծագում, սակայն խնամիական կապեր հաստատելով և շփվելով տեղական հայ իշխանական տների ու բնակչության հետ, հայ մշակութային կյանքի պայմաններում հայանում են և երկու դար անընդմեջ իշխում Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածության վրա: Նրանց իշխանությունը պարփակված էր նշված շրջանակներում միայն, և կարծիքը, թե նրանք Աղվանից պետության վերածնողներն էին ու նրա ավանդույթների շարունակողները, հակապատմական է, միտումնավոր և նպատակ ունի արհեստականորեն երկարաձգել ոչ միայն Աղվանից պետականության գոյության ժամանակաշրջանը, այլև բուն Աղվանքի հետ կապել Ուտիք ու Արցախ նահանգները:

Միհրանյանների տիրապետության տակ գտնվող երկրամասը հայ պետական կազմավորումներից մեկն էր փեոդալական Հայաստանում և նրա իշխանները հեռատես քաղաքականությամբ՝ մերթ զենքի ուժով, մերթ հարկերի վճարումով կամ բարեկամությամբ, կարողանում են դիմագրավել զանազան նվաճողների ու պահպանել իրենց ինքնուրույնությունն ու կառավարման համակարգը:

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Մեր թվականությունից առաջ

VI դար - Ապագա Աղվանքի տարածքում հաստատվում է Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանությունը և ստեղծվում 11-րդ սատրապությունը «Կասպիանե» անվամբ:

331 թ. - Պատմության մեջ առաջին անգամ հայտնվում են աղվանական ցեղերը, որոնք Գավգամելայի ճակատամարտում Աքեմենյան Պարսկաստանի կողմից կռվում էին Մակեդոնիայի դեմ՝ Մարաստանի սատրապ Ատրոպատեսի հրամանատարության ներքո:

331-330 թթ. - Աքեմենյան Պարսկաստանի անկումը և աղվանական ցեղերի ազատագրումը նրանց գերիշխանությունից:

I դարի սկիզբ - Կազմավորվում է Աղվանից պետությունը:

69 թ. - Սկսվում են հայ-հռոմեական պատերազմները, որոնց մասնակցում են նաև աղվանական ցեղերը՝ Տիգրան Մեծի գլխավորությամբ՝ ընդդեմ Հռոմի:

69 թ. հոկտեմբերի 6 -- Տիգրանակերտի ճակատամարտը, որտեղ աղվանացիներն առաջին անգամ հայոց բանակի կազմում ընդհարվում են հռոմեացիների հետ:

66 թ.- Տիգրան Մեծը հաշտության պայմանագիր է կնքում Պոմպեոսի հետ:

66/65 թթ.- – Պոմպեոսը ձմեռում է հայկական «Անահտական» մարզում:

66/65 թթ. - Աղվանացիները թագավոր Օրոյսեսի գլխավորությամբ հարձակվում են Պոմպեոսի վրա, բայց անհաջողության են մատնվում: Այնուամենայնիվ հռոմեական զորքերը Աղվանք չմտնելու պայմանով հաշտություն է կնքվում Պոմպեոսի և Օրոյսեսի միջև:

65 թ.- – Պոմպեոսը խախտելով խաղաղության դաշնագիրը հարձակվում է Աղվանքի վրա:

65 թ. գարուն - Տեղի է ունենում աղվանացիների առաջին ճակատամարտը հռոմեացիների հետ՝ Աղվանքի թագավորի եղբայր Կոսիսի գլխավորությամբ՝ Ալազան գետի ձախ ափին:

65 թ. ամառ - Աղվանացիների երկրորդ ճակատմարտը հռոմեացիների հետ՝ թագավոր Օրոյսեսի գլխավորությամբ՝ Աբանդ (Ալազան) գետի ափին:

65 թ. - Աղվանքը նվաճվում է Պոմպեոսի կողմից:

61–37 թթ. - Օգտվելով Արևելքում ստեղծված քաղաքական իրադրությունից, Աղվանքը ձեռք է բերում ինքնուրույնություն:

55-37 թթ.- – Հայոց թագավոր Արտավազդի գլխավորությամբ ստեղծվում է հակահռոմեական միություն, որի մեջ մտնում են Աղվանքը, Վիրքն ու Ատրպատականը:

55-37 թթ. - Աղվանից թագավոր Զոբերոսի գահակալության մոտավոր տարեթվերը:

37 թ. –Անտոնիոսի զորավար Կանիդիոսը գալիս է Արևելք, նվաճում Վիրքը և նրա հետ միասին հարձակվում Աղվանքի վրա: Վերջինս պարտվում է և դարձյալ ընդունում Հռոմի գերիշխանությունը:

Մ. թ.ա. 37-մ.թ. 70-ական թթ. - Հռոմեական տիրապետության շրջանը Աղվանքում:

14-63 թթ.- – Պարթև-հռոմեական հարաբերությունները և Աղվանքի մասնակցությունը դրանցում:
35 թ.- Իբերա-աղվանական միացյալ բանակների կռիվները պարթևների դեմ:
50-ական թթ. - Վիրքը հարձակվում է Աղվանքի վրա և ժամանակավորապես ենթարկում իրեն:
72-74 թթ. - Ալանական քոչվոր ցեղերի հարձակումները Մեծ Հայքի, Աղվանքի ու Վիրքի վրա:
89 թ. — Հռոմեացիները արշավում են Աղվանք և վերականգնում իրենց ազդեցությունն այնտեղ:
114-117 թթ. - Տրայանոսի դրածո Աղվանից թագավորի գահակալության տարիները:
117-130-ական թթ. - Աղվանքը զերծ է մնում օտարերկրյա նվաճողների ներխուժումներից և ապրում ինքնուրույն կյանքով:
130-ական թթ. - Ալանները հարձակվում են Աղվանքի վրա:
138 թ. - Միմյանց հետ ընդհարվում են Իբերիան ու Աղվանքը: Գործին միջամտում են հռոմեացիները, որոնք ալաններին արտաքսում են Աղվանքից, վերահաստատում իրենց տիրապետությունը երկրում և սահմաններ անցկացնում Իբերիայի ու Աղվանքի միջև:
166 թ. - Հռոմի և Պարթևքի միջև կնքվում է պայմանագիր, որի համաձայն ստեղծվում է կապադովկիական բանակաթեմ, ուր ընդգրկվում է նաև Աղվանքը:
198 թ. - Ալանները մի նոր արշավանք են ձեռնարկում դեպի Աղվանք և անդրկովկասյան երկրներ:
227 թ. - Պարսկաստանում իշխանության գլուխ է անցնում Սասանյան հարստությունը:
227 թ. - Աղվանքը Մեծ Հայքի հետ ստեղծում է հակասասանյան միություն:
228-237/238 թթ.- – Հայ-պարսկական կռիվները, որոնց մասնակցում է նաև Աղվանքը՝ ընդդեմ Պարսկաստանի:
261 թ. - Աղվանքն ընկնում է Սասանյան Պարսկաստանի գերիշխանության տակ:
272-298 թթ.- – Փոփոխակի հաջողություններով ընթանում են պարսկա-հռոմեական պատերազմները, որոնց ժամանակ Աղվանքն անցնում է մերթ մեկին, մերթ մյուսին:
IV-VII դարեր - Աղվանքում ձևավորվում և հաստատվում են ֆեոդալական հարաբերություններ:
330/331 թթ.- Հայոց թագավոր Տրդատ Գ-ի ազգակից Արշակունի Սանատրուկը Փայտակարանում իրեն հայտարարում է հայոց թագավոր: Անտիոքոս զորավարը գալիս է Փայտակարան, և Սանատրուկը անկարող լինելով դիմադրել՝ փախչում է Պարսկաստան:
336 թ.- Սանատարուկը հյուսիսային ցեղերից բաղկացած մեծաթիվ բանակով արշավում է Հայաստան և գրավում հայոց մայրաքաղաք Վաղարշապատը:
337 թ.- Տեղի է ունենում Օշականի ճակատամարտը, որտեղ զոհվում է Սանատարուկը:
330 —337 թթ. - Աղվանից ազնվականությունը ակտիվորեն մասնակցում է այս

իրադարձություններին:
IV դարի 30-ական թթ. վերջ - Աղվանքում հաստատվում է Արշակունյաց հարստությունը:
338-342 թթ. - Արշակունյաց հարստության առաջին ներկայացուցիչ Վաչագան Քաջի գահակալության մոտավոր տարիները:
342-60-ական թթ. — Վաչե Ա Քաջի գահակալության մոտավոր տարիները:
IV դարի 60-70-ական թթ.- Ուռնայր թագավորի գահակալության տարիները:
IV դարի 60-ական թթ. - Աղվանքը նվաճում է Մեծ Հայքի մի շարք գավառներ Հայոց Արևելից կողմերում:
371 թ. — Տեղի է ունենում Ձիրավի ճակատամարտը, որտեղ աղվանացիները Սասանյանների կողմից կռվում էին հայերի դեմ:
371 թ. - Հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը ետ է գրավում Աղվանքի նվաճած հայկական գավառները:
IV դարի 70-ական թթ. երկրորդ կես - Թագավոր Ուռնայրը քրիստոնեությունը հռչակում է պետական պաշտոնական կրոն Աղվանքում:
414-444 թթ. - Եսվաղեն թագավորի գահակալության տարիները:
444-461 թթ. — Վաչե Բ-ի գահակալության տարիները:
447/448 թթ.- –Պարսից արքա Հազկերտ Բ-ն դավանափոխության առաջարկներով հրովարտակներ է ուղարկում Մեծ Հայք, Աղվանք ու Վիրք:
448-450 թթ. —Պարսկական զորքերն ու մոգերի խումբը լայն գործունեություն են ծավալում Աղվանքում՝ զրադաշտականության տարածման համար:
450 թ.- – Ծանր դրությունից դուրս գալու նպատակով աղվանացիները օգնություն են խնդրում հայերից: Հայկական զորքերը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ մեկնում են Աղվանք:
450 թ.- –Լոփնաս գետի ափին՝ Խաղխաղ քաղաքի մոտ, հայկական ու պարսկական զորքերի միջև տեղի է ունենում ճակատամարտ: Այն վերջանում է հայերի հաղթանակով, որոնց վճռական գործողությունների շնորհիվ ողջ Աղվանքն ազատագրվում է պարսիկ զինվորականներից ու մոգերից:
457-459 թթ.- – Հազկերտ Բ-ի մահից հետո, գահաժառանգների միջև գահի համար սկսված պայքարում հաղթում է կրտսեր որդին՝ Պերոզը և հռչակվում պարսից արքա:
457-461 թթ. - Թագավոր Վաչե Բ-ի գլխավորությամբ Աղվանքն ապստամբում է պարսից տերության դեմ:
461 թ.- – Ճնշվում է ապստամբությունն Աղվանքում: Վաչե Բ-ն հեռացվում է գահից, վերացվում է Աղվանից թագավորական իշխանությունը և հաստատվում կառավարման մարզպանական ռեժիմ: Աղվանից մարզպանության մայրաքաղաք է դառնում Պարտավը:
461-484 թթ. - Աղվանքը կառավարվում է մարզպանների կողմից:
481-484 թթ. - Սասանյան Պարսկաստանի դեմ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ ապստամբում են Հայոց, Վրաց և Աղվանից երկրները:
485-510 թթ.- – Վաչագան Գ Բարեպաշտի «թագավորության» շրջանը:
488 թ. —Ուտիքի Աղվեն ավանում հրավիրվում է եկեղեցական ժողով:
516 թ. —Հոն-խազարները արշավում են Աղվանք, Մեծ Հայք ու Վիրք:
552 թ.- – Կաթողիկոսական աթոռը Չողից տեղափոխվում է Պարտավ:
V դարի երկրորդ կես - VI դարի երկրորդ կես - Կովկասյան լեռնանցքներում

կառուցվում են պաշտպանական ամրությունններ:
VI դարի վերջ - Աղվանից մսարզպանությունը տրոհվում է առանձին անվանումներով մանր քաղաքական կազմավորումների, որի ժամանակ «Աղվանից աշխարհ» անվանումը ամրապնդվում է Հայոց Ուտիք ու Արցախ նահանգների վրա:
590թ.- – Պարսկաստանում թագավորում է Խոսրով Բ Փարվեզը: Նրա ազգակից Միհրանը գալիս է նոր անվանակոչված Աղվանք և դնում Միհրանյան տոհմի հիմքը:
590-628 թթ. -Աղվանքում հաջորդաբար իշխում են Միհրանն ու նրա սերունդները՝ Արմայելը, Վարդ Ա-ն, Քաջ Վարդանը, Վարդ Բ-ն:
602-628 թթ. — Պարսկա-բյուզանդական պատերազմները:
603 թ.- –Նոր անվանակոչված Աղվանքն ապստամբում է Խոսրով Բ Փարվեզի դեմ, բայց ճնշվում է, իսկ ապստամբության առաջնորդ՝ Աղվանից կաթողիկոս Վիրոն գերության է տարվում Պարսկաստան:
622 թ.- – Տեղի են ունենում բյուզանդական կայսր Հերակլի Կովկասյան արշավանքները:
623 թ. — Հերակլը մտնում է Աղվանք:
625-626 թթ. - Հերակլը դաշինք է կնքում խազարաց խաքան Ջեբուի հետ:
627 թ.- – Խազարների առաջին արշավանքն Աղվանք:
628 թ.- – Խազարները երկրորդ անգամ են արշավում Աղվանք:
- // - Հերակլը Միհրանյան Վարազ-Գրիգորին դարձնելով քաղկեդոնական, նշանակում է Աղվանքի առաջին իշխան:
- // -Պարսկաստանում սպանվում է Խոսրով արքայաց արքան: Գահ է բարձրանում նրա որդին՝ Կավատը, որը շուտով հաշտություն է կնքում Հերակլի հետ:
- // - Աղվանից կաթողիկոս Վիրոն ազատվում է գերությունից և վերադառնալով հայրենիք, կրկին ստանձնում Աղվանից կաթողիկոսի պաշտոնը:
- // - Վարազ-Գրիգոր իշխանը վերադառնում է լուսավորչական դավանանքի և Վիրոյի կողմից օծվում որպես «առաջին իշխան Աղուանից»:
629թ .- Խազարների երրորդ արշավանքն Աղվանք՝ Ծաթի գլխավորությամբ: Վիրոյի պատգամավորությունը: Աղվանքն իր հնազանդությունն է հայտնում խազարներին:
630 թ. – Մահանում է Աղվանից կաթողիկոս Վիրոն:
628- – 642 թթ .- Աղվանից առաջին իշխան Վարազ-Գրիգորի իշխանության տարեթվերը:
636 թ. — Վարազ-Գրիգորի երկրորդ որդի Ջուանշիրը նշանակվում է Աղվանից զորքերի սպարապետ:
636-642 թթ.- – Պարսկա-արաբական պատերազմները:
642 թ.- Նեհավենդի ճակատամարտը և պարսիկների պարտությունը:
642 թ.- Ջուանշիրը դառնում է «առաջին իշխան Աղուանից» և տեղափոխվում Պարտավ:
642-643 թթ. -Արաբների առաջին արշավանքը Աղվանք՝ Ատրպատականի վրայով:
653 թ.- Ջուանշիրն իր հնազանդությունն է հայտնում արաբներին:
659 թ.-Ելնելով արաբների քաղաքականության փոփոխությունից, Ջուանշիրը հնազանդություն է հայտնում Բյուզանդիային:
661 թ. — Խազարները հարձակվում են Աղվանքի վրա և պարտվում:
663 թ. — Ջուանշիրը կառուցում է Գարդման ամրոցի եկեղեցին:

664 թ. -- Խազարները երկրորդ անգամ են հարձակվում Աղվանքի վրա: Ջուանշիրը խաղաղության դաշն է կնքում և այն ամրապնդելու համար ամուսնանում Խաքանի դստեր հետ:

667 թ. — Ջուանշիրն այցելում է արաբական խալիֆ Մուավիային:

669 թ.- Ջուանշիրի երկրորդ այցը Մուավիային:

680-683 թթ. - Աղվանքը հայոց և վրաց հետ մեկտեղ ապստամբում է արաբնե դեմ:

683 թ. -սեպտեմբերի 13- Ջուանշիրը դավադրաբար սպանվում է:

683 թ. - Աղվանից առաջին իշխան է դառնում Ջուանշիրի եղբոր որդի Վարազ-Տրդատը:

684 թ. — Խազարները հարձակվում են Աղվանքի վրա՝ Ջուանշիրի սպանությա վրեժը լուծելու պատրվակով:

684 թ.- դեկտեմբեր - Վարազ-Տրդատն Իսրայելի գլխավորությամ պատգամավորություն է ուղարկում խազարների մոտ:

685 թ.-փետրվար – Իսրայելի պատգամավորությունը հասնում է խազարներ մայրաքաղաք Վարաչան:

689 թ. - Բյուզանդիայի կայսր Հուստինիանոս Բ-ն արշավում է Հայաստանի Վրաստանի ու Աղվանքի վրա: Ի թիվս իրեն հնազանդ այլ իշխանների, կայսրը Վարազ-Տրդատին շնորհում է «պրոտոն պատրիկի» կոչում:

699 թ. — Վարազ-Տրդատն իր Գագիկ ու Վարդան որդիների հետ կանչվում է Կոստանդնուպոլիս և բանտարկվում Տիբերիոս Գ Ապսիմարոս կայսեր կողմից:

701թ . - «Արմինիա» վարչական միավորի ստեղծումը, որի մեջ մտնում է նաև Աղվանքը:

703-705 թթ. - Աղվանքում իշխում է Ծերո անունով մի իշխան:

705 թ. — Իշխան Ծերոն արաբների կողմից տարվում է Ասորիք՝ գերության:

705 թ. - Բյուզանդական գահի վրա կրկին հաստատվում է Հուստինիանոս Բ-ն: Վերջինս ազատում է Վարազ-Տրդատին և թույլ տալիս վերադառնալ հայրենիք, Կոստանդնուպոլսում որպես պատանդ պահելով նրա որդիներին:

709 թ. -- Խազարներն արշավում են Աղվանք: Նրանց հետ ընդհարման ժամանակ զոհվում է Վարազ-Տրդատը:

711 թ. - Աղվանքում վերահաստատվում է արաբների գերիշխանությունը:

711-725 թթ. Ջուանշիր Բ:

725 թ. – Ջուանշիր Բ-ի սպանությունը:

789 թ. – Պարտավը դառնում է Արմինիայի ոստիկանի գլխավոր նստավայրը:

791 թ. - Արաբների դեմ ապստամբում են Պարտավի բնակիչները: Այն ծավալվելով ընդգրկում է նաև Փայտակարանը, Դերբենդն ու Շիրվանը:

793-794 թթ.- – Ժողովրդական զանգվածների նոր ապստամբություններն արաբների դեմ:

VIII դարի վերջ - 821 թթ. - Աղվանից իշխանական գահին իրար են հաջորդում Վարազման, Վարազ-Տրդատ Բ, Ջուանշերիկ, Վարազ-Տրդատ Գ իշխանները:

821 թ. -- Սպանվում է Վարազ-Տրդատ Գ-ն, որից հետո Միհրանյան տոհմը դուրս է գալիս պատմության ասպարեզից:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), ձեռ. թիվ 1531, 1725, 2646, 4197:

Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983:

Աշխարհացոյց Է դարու, ՍՊբ, 1872:

Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, Վենետիկ, 1881:

Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմ., առաջաբանը և ծանոթ. Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979:

Անանուն Ժամանակագրութիւն, խմբագիր յօրինեալ յԷ դարու, Վենետիկ, 1904:

Ասորական աղբյուրներ, Ա, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976:

Արաբացի մատենագրերը Հայաստանի մասին, հավաքեց և թարգմ. Բագրատ Խալաթյանց, Վենետիկ, 1919:

Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965:

Գիրք թղթոց, Թիֆլիս, 1902:

Դիոդորոս Սիկիլիացի, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1985:

Դիոն Կասսիոս Կոկկեյանոս, Հռոմեական պատմություն (Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Ս. Մ. Կրկյաշարյանի), Երևան, 1976:

Եղիշեի վարդապետի վասն Վարդանանց և Հայոց պատերազմի և քննադատութիւնք Միքայել փաշայի Փորթուգալ, Վենետիկ, 1903:

Եղիշեի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխատ., թարգմ. և ծանոթ. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989:

Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրութեամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1966:

Թեոփանես Խոստովանող, թարգմ. բնագրից, առաջ. և ծանոթ. Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1983:

Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց, բնագիրը, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Վ. Մ. Վարդանյան, Երևան, 1985:

Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն, թարգմ. բնագրից, առաջ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981:

Կանոնագիրք Հայոց, հ. Բ, աշխատասիրությամբ Վ. Ա. Հակոբյանի, Երևան, 1971:

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:

Կոստանդին Ծիրանածին, Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին, թարգմ. բնագրից, առաջ. և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1970:

Կորիւն Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով,

թարգմ. առաջաբանով և ծանոթ. Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941:
Համառոտ Պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշիրի պատմիչի, Վենետիկ, 1884:
Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981:
Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862:
Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986:
Հովսեպոս Փլավիոս, Հրեական պատերազմի մասին (Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմ. բնագրից, առաջ. և ծանոթ. Ս. Մ. Կրկյաշարյանի), Երևան, 1976:
Հովսեպոս Փլավիոս, Հրեական հնախոսություն (Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմ. բնագրից, առաջ. և ծանոթ. Ս. Մ. Կրկյաշարյանի), Երևան, 1976:
Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982:
Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:
Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի ու հարևան երկրների մասին, հ. Ա, Երևան, 1934, հ. Բ, Երևան, 1936:
Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական, ՍՊբ, 1867:
Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Գ. Մարգարյանի, Երևան, 1983:
Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981:
Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860:
Մովսէս Կաղանկատուացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմ., առաջ. և ծանոթ. Վարագ Առաքելյանի, Երևան, 1969:
Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Երևան, 1983:
Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941:
Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:
Պատմութիւն Աղուանից արարեալ Մովսիսի Կաղանկատուացւոյ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանոթ. Կ. Վ. Շահնազարյան, Փարիզ, 1860:
Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979:
Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910:
Պլուտարքեայ Քերովնացւոյ Զուգակշիռք, թարգմանեալ ի բնագրէն Հ. Եղիայ վարդապետի Թոմաճան, հ. Ա-Զ, Վենետիկ, 1832-1834:
Պրոկոպիոս Կեսարացի, Պատերազմների մասին, թարգմ. բնագրից, առաջ. և ծանոթ. Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967:
Սամուէլի քահանայի Անեցւոյ, Հավաքմունք ի գրոց պատմագրաց,

առաջաբանով, համեմատությամբ, հավելվածներով և ծանոթագրություններով Արշակ Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893:

Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, ՍՊբ, 1835:

Սրբոյ հօրն մերոյ Մովսիսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865:

Տակիտոս, քաղեց և լատիներենից թարգմանեց Պ. Սոտնիկյան, Երևան, 1941:

Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871:

Փավստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1987:

Аммиан Марцеллин, История, пер. Ю. Кулаковский и А. Сони, Киев, 1908.

Арриан, Поход Александра, пер. с древнегреч. Е. Сергеенко, М.-Л., 1962.

Баладзори, Книга завоевания стран, пер. П. К. Жузе, Баку, 1927.

Византийские историки, пер. С. Дестуниса, СПб, 1860.

Ган К., Известия древних писателей греческих и римских о Кавказе, СМОМПК, вып. 4, Тифлис, 1884.

Геродот, История в девяти книгах, пер. и предисл. Г. А. Стратановского, Л., 1972.

Деяния Божественного Августа, ВДИ, 1949, N 1.

Евтропий, Бревиарий, ВДИ, 1949, N 3.

Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, собрал и издал с русским переводом В. В. Латышев, т. 1, СПб, 1890, т. II, СПб, 1904.

История агван Моисея Каганкатваци, писателя X в., пер. К. Патканяна, СПб, 1861.

История страны Алуанк, пер. с древн. арм. пред. прим. и указатели Л. С. Давлианидзе-Татишвили, Тбилиси, 1985 (на груз. яз.).

Караулов Н. А. Сведения арабских писателей о Кавказе, Армении, Азербайджане, СМОМПК, вып. 29, Тифлис, 1901, вып. 31, Тифлис, 1902, вып. 32, Тифлис, 1903, вып. 38, Тифлис, 1908.

Картлис Цховреба, 339, Тбилиси, т. 1, 1955 (на груз. яз.).

Клавдий Птолемей, Географическое руководство, ВДИ, 1983, N 1.

Квинт Курций Руф, История Александра Македонского, М., 1963.

Мовсес Каланкатуаци, История страны Алуанк, перевод с древнеармянского, предисловие и комментарии Ш. В. Смбатяна, Ереван, 1984.

Пигулевская Н., Сирийские источники по истории народов СССР, Л.-М., 1941.

Плутарх, Сравнительные жизнеописания, т. I-III, Москва, 1961-1964

Полибий, Всеобщая история в сорока книгах, пер. с греческого Ф. Г. Мищенко, тт. I-III, М., 1890-1899.

Помпоний Мела, Землеописания, ВДИ, 1949, N 1.

Присциан, Землеописания, ВДИ, 1949, N 4.

Страбон, География, пер., статья и коммент. Г. А. Стратановского, Л., 1964.

Стефан Византийский, Ethnica, ВДИ, 1948, N 2.

Солин Ю., Сборник достопримечательностей, ВДИ, 1949, N 3.

Тацит Корнелий, Сочинения в двух томах, Л., 1969.

Такайшвили Е. С., Источники грузинских летописей, СМОМПК, вып. 28,

Тифлис, 1900.
Юстин, Эпитома сочинения Помпея Трога, ВДИ, 1954, N 2-4.
Фиофилакт Симокатта, История, пер. С. П. Кондратьева, М., 1957.
Флор, Сокращения, ВДИ, 1949, N 3.
Amianus Marcellinus, Works, in three volumes.
Arrian, Anabasis Alexandri, in two volumes.
Brosset M., Extraits de Histoire des Aghovans en Arménien par Moise Caghancatovatsi (additions et échaircissements a l'histoire de la George), SPb, 1851.
Dios Roman History, in nine volumes.
Iustini Iuniani, Epitoma Historiarum Phillipicarum Pompei Trogi, BDU, 1955, Nr. 1.
Lucius Junius, Moderatus Columella, On agricolture, in three volumes, London, 1948.
Pliny, Natural History, in ten volumes, London, 1950-1962.
Polyaent Strategemation, Libri Octo, rec. Ed. Wollfflin, ed. Teubner.
Soukry A., Géographie de Moïse de Chorène d'apreès Ptolemée. tekte arménien traduit enfrancais par le p. Arsene Soukry, Venise, 1881.
Suetonius, The lives of the Caesars, in two volumes, London, 1950, 1960.
The Geography of Strabo, in eight volumes, London, 1960-1964.
The scriptores Historiae Augustae, in three volumes, London, 1960-1965.
The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranci, translated by C. J. F. Dowsett, London, 1961.

# ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աբրահամյան Ա. Գ., Աղվաներեն համարվող մի քանի արձանագրություններ, Երևանի համալսարան, 1956:

Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա., Երևան, 1966:

Ադոնց Ն., Քննութիւն Մովսես Կաղանկատուացւոյ, «Անահիտ», 1939, թիվ 6, 1940, թիվ 1-3:

Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972:

Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890:

Ալիշան Ղ., Աղուանք, Բազմավէպ, 1970, թիվ 11-12:

Ակինյան Ն., Մովսես Դասխուրանցի (կոչված Կաղանկատուացի) և իր պատմությունն Աղուանից, Վիեննա, 1970:

Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երևան, 1942, հ. Դ., Երևան, 1948:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971:

Աստուրյան Հ., Քաղաքական վերաբերություններ ընդ մեջ Հայաստանի և Հռովմա 190-են ն. ք. մինչև 428 հ. ք., Վենետիկ, 1912:

Ավդալբեկյան Թ., Հաս. սակ. բաժ. (Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969):

Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893:

Բարխուտարեանց Մ., Արցախ, Բագու, 1895:

Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902:

Բարխուտարեանց Ս. Գ., Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում, ՊԲՀ, թիվ 1:

Գարագաշյան Ա., Քննական պատմություն Հայոց, հ. Բ, Թիֆլիս, 1895:

Դիվան հայ վիմագրության, պր. V: Կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982:

Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963:

Երեմյան Ս. Տ., Ն. Մառը և VII դարի հայոց «Աշխարհացոյցը» (Մառը և հայագիտության հարցերը), Երևան, 1968:

Երեմյան Ս. Տ., «Աշխարհացոյցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ, ՊԲՀ, 1972, թիվ 4, 1973, թիվ 1-2:

Երեմյան Ս. Տ., Հայաստանի քաղաքական կյանքի վիճակը Արտավազդ Ե-ի ժամանակ (252-3-261 թթ.), Լրաբեր հաս. գիտ., 1975, թիվ 1:

Երեմյան Ս. Տ., Կենսամատենագիտություն, Երևան, 1984:

Զարբհանալյան Գ., Հայկական հին դպրության պատմություն (Դ-ԺԳ դդ.), Վենետիկ, 1897:

Էլչիբեկյան Ժ. Գ., Հայաստանը և սելկյանները, Երևան, 1979:

Լեո, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, հ. 2, Երևան, 1967:

Խաչիկյան Լ., Դիտողություն Մ. Խորենացու Հայոց պատմության երկրորդ Գրքի ԾԴ գլխի մասին (Ադրբեջանում գտնված հին լատինական արձանագրության առընչությամբ), ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), 1948, թիվ 11:

Կանայանց Ստ., Անհայտ գավառներ Հին Հայաստանի, Վաղարշապատ, 1914:
Կարագյոզյան Հովհ., Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, Լրաբեր հաս. գիտ., 1978, թիվ 10:
Կրկյաշարյան Ս. Մ., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970:
Հակոբյան Ա. Ա., Կասպերի և Կասպիանա (Կասպք) մարզի տեղադրության մասին, Լրաբեր հաս. գիտ., 1983, թիվ 1:
Հակոբյան Ս., Հայ գյուղացիության պատմություն, հ. Ա, Երևան, 1967, հ. Բ, Երևան, 1969:
Հակոբյան Ս., Ծառա-աղախին-ստրուկները և նրանց սոցիալական դրությունը միջնադարյան Հայաստանում, ՊԲՀ, 1962, թիվ 1:
Համբարյան Հ., Գարգարացիք թե՞ Գուգարացիք, Հանդես Ամսօրյա, Վիեննա, 1910:
Հայ ժողովրդի պատմություն (բուհական դասագիրք), հ. 1, Երևան, 1963:
Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, հ. 2, Երևան, 1984:
Հարությունյան Բ., Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թթ., ԲԵՀ, 1976, թիվ 2:
Հարությունյան Բ., Լփինքի տեղադրության հարցի շուրջը, ԲԵՀ, 1981, թիվ 1:
Հարությունյան Բ., Մազքթաց Սանեսան թագավորի արշավանքը Հայաստան, Լրաբեր հաս. գիտ., 1981, թիվ 6:
Հյուբշման Հ., Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմ. Հ. Բ. Պիլեզիկճեան, Վիեննա, 1907:
Հովհաննիսյան Ս., Աղվենի ժողովի սահմանադիր կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ, ՊԲՀ, 1967, թիվ 1:
Հրանդ Ք. Արմեն, Անկում Արտաշեսեան հարստութեան, Պեյրութ, 1967:
Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, հ. Բ, Երևան, 1978, հ. Դ, Երևան, 1981, հ. Ե, Երևան, 1984:
Մնացականյան Աս. Շ., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1965:
Մսերեանց Ձ., Տեղեկութիւն ի վերայ Ջուանշիր իշխանի և Դավթակ ճարտասանի «Ճռաքաղ», Մոսկվա, 1860:
Մուշեղյան Խ. Ա., Դրամական շրջանառությունը Հայաստանում, Երևան, 1983:
Շուր Վ., Ներոն կայսեր արևելյան քաղաքականությունը, թարգմ. Հ. Մեսրոպ Հապոզեան, Վիեաննա, 1930:
Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հ. Բ-Գ, Երևան, 1984:
Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858:
Սարգսյան Գ. Խ., Անտիոքոս Գ Սելևկյանը և հայկական պետությունները, ԲԵՀ, 1969, թիվ 1:
Սվազյան Հ. Ս., Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության աղբյուրները», ՊԲՀ, 1972, թիվ 3:
Սվազյան Հ. Ս., «Աղվանից աշխարհ» հասկացությունը ըստ Մովսես Կաղանկատվացու, ԲՀԱ, 1973, թիվ 1:

Սվազյան Հ. Ս., Աղվանից իշխաններ Ջունշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվերի հարցի շուրջը, Լրաբեր հաս. գիտ., 1973, թիվ 11:
Սվազյան Հ. Ս., Աղվանից թագավորության Արշակունյաց ճյուղի սկզբնավորումը, ԲՀԱ, 1977, թիվ 3:
Սվազյան Հ. Ս., Ստրաբոնի աղբյուրները Աղվանքի մասին, ՊԲՀ, 1978, թիվ 1:
Սվազյան Հ. Ս., Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը, ՊԲՀ, 1979, թիվ 4:
Սվազյան Հ. Ս., Կասպերի ցեղային միությունները Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակաշրջանում (մ. թ. ա. VI դ. - մ. թ. ա. IV դ.), Լրաբեր հաս. գիտ., 1983, թիվ 6:
Սվազյան Հ. Ս., Ատրպատականի պետության կազմավորումն ու Կովկասյան Ալբանիան, Լրաբեր հաս. գիտ., 1985, N 2:
Սվազյան Հ. Ս., Աղվանքը սկզբնաղբյուրներում և պատմական գրականության մեջ (համառոտ պատմաաշխարհագրական ակնարկ), ԲՀԱ, 1989, թիվ 2:
Տեր-Հովհաննիսյանց Ա., Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղեմի, հ. Ա., Երուսաղեմ, 1890:
Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965:
Տիրացյան Գ., Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի ն. մ. թ. 3-4-րդ դդ. պատմության մասին, Բանբեր Մատենադարանի, 1962, թիվ 6:
Տիրացյան Գ., Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ. վերջ - մ. թ. ա. IV դ. վերջ), ՊԲՀ, 1981, թիվ 2:
Ուլուբաբյան Բ., Վաչական Բարեպաշտը և Հայոց արևելից կողմանց լուսավորական-մշակութային կյանքի վերելքը, Սովետական Մանկավարժ, 1969, թիվ 3:
Ուլուբաբյան Բ., Դարձյալ Աղվենի ժողովի գումարման տարեթվի հարցի շուրջը, Լրաբեր հաս. գիտ., 1969, թիվ 6:
Ուլուբաբյան Բ., Աղվանից թագավորական տան հարցի շուրջը, Լրաբեր հաս. գիտ., 1971, թիվ 7:
Ուլուբաբյան Բ., «Ալբանիա», «Աղվանք» և «Առան» տեղանունները, ՊԲՀ, 1974, թիվ 3:
Ուլուբաբյան Բ., Հյուսիս-արևելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը, ԲԵՀ, 1975, թիվ 2:
Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XIV դդ., Երևան, 1975:
Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981:
Օրմանյան Մ., Ազգապատում, մասն Ա, Կոստանդնուպոլիս, 1913:

Абрамян А. Г., Дешифровка надписей Кавказских агван, Ереван, 1964.
Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, СПБ, 1915.

Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971.э

Акопян А. А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987.

Акопян А. А., Мурадян П. М., Юзбашян К. Н., К изучению истории Кавказской Албании, ՊԲՀ, N 3, 1987.

Алиев А. А., Сравнительный анализ археологических находок с письменными источниками об оружии албанов (IV в. до н. э. - III в. н. э.) Изв. АН АзССР, 1981, N I (на азерб. яз.).

Алиев И. Г., О первых племенных союзах на территории Азербайджана, Баку, 1959.

Алиев И., История Мидии, Баку, 1960.

Алиев И., К интерпретации параграфов 1, 3, 4 и 5 IV главы XI книги "Географии" Страбона, ВДИ, 1975, N 3.

Алиев И., Асланов Г., Племена сармато-массагето-аланского круга в Азербайджане, ДВ, N 2, Ереван, 1876.

Алиев И., Ф. Османов, Бассейн рек Геокчай-Гардманчай-Ахсучай в античное время, СА, 1975, N1

Алиев И., О скифах и скифском царстве в Азербайджане, Переднеазиатский сборник, III, М., 1979.

Алиев И., Серьезный вклад в албанистику, Изв. АН АзССР, 1986, N 4.

Алиев К., К вопросу о древнем населении Албании, ДАН, АзССР, 1959, т. XV, N 2.

Алиев К., К вопросу об источниках Страбона в описании древней Кавказской Албании, ДАН АзССР, 1960, т. XVI, N 4.

Алиев К., Албаны-кочевники и Басилевс Зобер, Изв. АН АзССР, 1962, N 8.

Алиев К., Кавказская Албания (I в. до н. э. – I в. н. э.), Баку, 1974.

Ализаде А. А., К некоторым вопросам, относящимся к истории владычества сельджуков на Среднем Востоке и в Закавказье, Сб., Вопросы истории народов Кавказа, Тбилиси, 1966.

Алияров С. С., Об этногенезе азербайджанского народа (К постановке проблемы), Сб. К проблеме этногенеза азербайджанского народа, Баку, 1984.

Артамонов А. И., История хазар, Л. 1962.

Арутюнян Б., Административное деление Закавказских владений Сасанидского Ирана, согласно труду Елишэ, Кавказ и Византия, вып. 1, Ереван, 1979.

Арутюнян Б., Когда отсутствует научная добросовестность, Լրաբեր հաս. գիտ., 1987, N 9.

Асланов Г. М., Ваидов Р. М., Ионе Г. И., Древний Мингечаур (Эпохи энеолита и бронзы), Баку, 1959.

Асланов Г. М., Археологические исследования на Апшероне (Археологические и этнографические изыскания в Азербайджане (1975 г.), Баку, 1978.

Ахмедов Г. М., Новый объект по ялойлутепунской культуре, ДАН АзССР, т. XV, 1959, N 5.

Бабаев И. А., К вопросу о возникновении государства Албании (Кавказской),

Изв. АН АзССР, 1976, N4.

Бабаев И. А., О трех стеклянных многогранных печатях, найденных в Мингечауре, Археологические исследования в Азербайджане, Баку, 1965.

Бабаев И. А., Казиев С. М., Кабалинский клад монет эллинистической эпохи, Нумизматика и этнография, IX, М., 1971.

Бакиханов Абас Кули-ага, Гюлистан-Ирам, Баку, 1926.

Бартикян Р. М., Источники для изучения истории павликианского движения, Ереван, 1961.

Бартольд В. В., Место прикаспийских областей в истории мусульманского мира, Соч., т. II, ч. I, М., 1963.

Бартольд В. В., Краткий обзор истории Азербайджана, Соч., т. II, ч. I, М., 1963.

Бозоян А. А., Акопян А. А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Լրաբեր հաս. գիտ., 1989, N 4.

Болтунова А. И., Племена, обитавшие на территории Азербайджана в I тысячелетии до н. э., Очерки по истории СССР, первобытнообщинный строй и древнейшие государства на территории СССР, М., 1956.

Буниятов З. М., О длительности пребывания хазар в Албании в VII-VIII вв., Изв. АН АзССР, 1961, N 1.

Буниятов З. М., О деятельности католикоса Албании Виро (590-630гг.), Ближний и Средний Восток, М., 1962. Буниятов З. М., Albanica-III, Изв. АН АзССР, 1964, N 4.

Буниятов З. М., Азербайджан в VII-IX вв., Баку, 1965.

Буниятов З. М., Размышления по поводу книги А. Н. Тер-Гевондяна "Армения и арабский халифат", Изв. АН АзССР, 1977, N 4.

Буниятов З. М., Новое исследование по истории Азербайджанского государства Саджидов (889-929 годы), Изв. АН АзССР, 1980, N 3.

Ваидов Р. М., Арехологическая характеристика эпиграфических памятников Мингечаура, Изв. АН АзССР, 1958, N 4 (на азерб. яз.).

Вахушти, География Грузии, Введение, перевод и прим. М. Г. Джанашвили, ЗКОИРГО, XXIV, вып. 5, Тифлис, 1904.

Виноградов В. Б., О скифских походов через Кавказ (по письменным источникам), Труды Чечено-Ингушского НИИ, т. 9, Грозный, 1964.

Вопросы истории Кавказской Албании, Баку, 1962.

Всемирная история, т. II, М., 1956.

Галиров Ф. В., Работы на городище Кабала, Археологические открытия 1980 г., М., 1981.

Гайдукевич В. Ф., Боспорское царство, М.-Л., 1949.

Ганаланян А., Хачикян Л., Тер-Гевондян А., Об очередных "размышлениях" З. М. Буниятова, Լրաբեր հաս. գիտ., 1978, N 5.

Геюшев Р. В., Христианство в Кавказской Албании, Баку, 1984.

Голенко К. Г., Заметки об обращении римской монеты в Закавказье, ВДИ, 1971, N 4.

Голубкина Т. И., Археологические исследования и раскопки кувшинных погребений в Азербайджане в 1953 г., Изв. АН АзССР, 1959, N 1.

Григорьев В., О древних походах руссов на Восток, ЖМНП, 1835, часть 2.

Гукасян В., Удинские слова в "Истории албан", Изв. АН АзССР (серия лит., языка и искусства), 1968, N 1.

Гукасян В., О некоторых вопросах истории албанской письменности и литературы, Изв. АН АзССР (серия лит., языка и искусства), 1968, N 2.

Гукасян В., К освещению некоторых вопросов истории Азербайджана в монографии "Азербайджан в VII-IX вв.", Изв. АН АзССР (серия лит., языка и искусства), 1968, N 4.

Гукасян В., Тюркизмы в "Истории албан" Моисея Утийского. Сб. Структура и история тюркских языков, М., 1976.

Гулиев Н. М., Торговые связи Кавказской Албании в раннем средневековье, Автореф. канд. дис., Баку, 1972.

Гусейнов Р. А., О тюрках IV-VII вв. в зоне Кавказской Албании, Вопросы истории Кавказской Албании, Баку, 1962.

Гусейнов Р. А., Тюркские этнические группы XI-XII вв. в Закавказье. Тюркологический сборник 1972 г., М., 1973.

Гусейнов Р. А., Новая публикация по албановедению, Изв. АН АзССР, 1978, N 2.

Гусейнов М., Древний палеолит Азербайджана, Баку, 1985.

Дандамаев М. М., Иран при первых ахеменидах (VI в. до н. э.), М., 1963.

Даниелян О. А., Парное погребение в кувшине из Мингечаура, ДАН АзССР, 1959, т. XV, N 3.

Джавадов И., О стоянке римских войск зимой 66/65 гг. до н. э. в Закавказье, ДАН АзССР, 1960, т. XVI, N 7.

Джафарзаде И. М., Развитие археологических работ в Азербайджане, Изв. АзФАНа, 1945, N 6.

Джафарзаде И. М., Археологические разведки на Апшероне, Изв. АН АзССР, 1948, N 6.

Джафарзаде И. М., Древнелатинская надпись у подошвы горы Беюкдаш, ДАН АзССР, т. IV, 1948, N 7.

Джафарзаде И. М., Наскальные изображения Кобыстана (Азербайджанская ССР), Археологические исследования в Азербайджане, Сб. статей, Баку, 1965.

Джафаров Ю. Р., О локалозации храмовой области в Кавказской Албании, ВДИ, 1985, N 2.

Дьяконов И. М., История Мидии, М.-Л., 1956.

Дьяконов И. М., Предыстория армянского народа, Ереван, 1968.

Дьяконов М. М., Очерк истории древнего Ирана, М., 1961.

Дорн Б., Каспий, о походах древних руссов в Табаристан (Приложение к Запискам АН), т. 26, СПб, 1875.

Ельницкий С. Г., Северо-черноморские заметки, Римляне у Каспийских ворот, ВДИ, 1950, N 1.

Еремян С. Т., Сюния и оборона сасанидами кавказских проходов, Изв. АН АрмФАНа, 1941, N 7.

Еремян С. Т. Заметки к тексту "Хроники Сумбата", Изв. АН АрмФАНа, 1941, N 9.

Еремян С. Т., Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, Изв. АН АрмССР, 1948, N 11.

Еремян С. Т., О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, N 1.

Еремян С. Т., Опыт периодизации истории Армении феодальной эпохи, ВДИ, 1951, N 7.

Еремян С. Т., Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Алп-Илитверу, ЗИВАН, СССР, 1939, т. 7.

Еремян С. Т., Рабовладельческое общество древней Армении (автореф. докт. дис., М., 1953.

Еремян С. Т., Основные проблемы периодизации истории народов Закавказья, Труды объединенной научной сессии АН СССР и АН Закавказских республик по общественным наукам, Баку, 1957.

Еремян С. Т., Экономика и социальный строй Албании III-VII вв., Очерки истории СССР III-IX вв., М., 1958.

Еремян С. Т., Политическая история Албании III-VII вв., Очерки истории СССР III-IX вв., М., 1958.

Еремян С. Т., Идеология и культура Албании III-VII вв., Очерки истории СССР III-IX вв., М., 1958.

Еремян С. Т., Азербайджан (Албания) в период арабского владычества, Очерки истории СССР III-IX вв., М., 1958.

Еремян С. Т., Страна "Махелония" надписи "Кааба-и-Зардушт", ВДИ, 1967, N 4.

Есаян С. А., Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976.

Зулалян М. К., Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Ереван, 1970.

Исмизаде О. Ш., Ялойлутепинская культура, Баку, 1956.

Исмизаде О. Ш. , О зооморфной керамике из Каратепе, ДАН АзССР, т. XV, 1959, N 1.

Исмизаде О. Ш., Кабала – столица древней Кавказской Албании, Вопросы истории Кавказской Албании, Баку, 1962.

История Азербайджана, т. 1, Баку, 1968.

История Византии, т. II, М., 1967.

История Грузии, т. 1, Тбилиси, 1962.

История СССР с древнейших времен до образования древнерусского государства, кн. 1 (части I-II), книга II ( части III-IV), Л., 1939 (макет).

Казиев С. М., Археологические раскопки в Варташенском и Куткашенском районах в 1945 г., Сб. Экспедиция АН АзССР, Баку, 1947.

Казиев С. М., Археологические памятники Мингечаура как исторический источник для изучения истории Азербайджана, Изв. АН АзССР, 1950, N 7.

Казиев С. М., Из истории Кабалинского магала, Вопросы истории Кавказской Албании, Баку, 1962.

Капанцян Г. А., Chetto-Armeniaca, Ереван, 1931.

Ковалевский С. А., "Карта Птолемея" в свете исторической географии Прикаспия, ИВГО, 1953, т. 85, вып. 1.

Котович В. Г., Древности Дагестана, Махачкала, 1974.

Кошеленко Г. А., Внутриполитическая борьба в Парфии (вторая половина I в. до н. э. – начало I в. н. э.), ВДИ, 1963, N 3.

Кркяшарян С. М., К интерпретации некоторых сведений древнегреческих авторов об Армении, Проблемы античной истории и культуры, Ереван, 1979.

Крузе Ф., О важности южнокавказских областей России в отношении антикварном и о Птолемее, главном писателе в рассуждении Географии сей страны, ЖМНП, 1835, ч. 5.

Крымский А. Е., История сасанидов, М., 1904.

Крымский А. Е., Страницы из истории северного или Кавказского Азербайджана (классической Албании), Шеки, Сб. "Памяти Н. Я. Марра", Л., 1938.

Крымский А. Е., Страницы из истории северного или Кавказского Азербайджана (классической Албании), Сб. в честь С. Ф. Ольденбурга, Л., 1934.

Кудрявцев О. В., Римская политика в Армении и Парфии в первой половине правления Нерона, ВДИ, 1948, N 3.

Кулаковский Ю., История Византии, т. III, Киев, 1915.

Лалаян Е. А., Раскопки сс. Нидж и Варташен Нухинского уезда, Изв. Кавказского отделения Московского археологического общества, Тифлис, 1919, вып. V.

Левиатов В. Н., Азербайджан в V в. до н. л. по III в. н. л., Изв. АН АзССР, 1950, N 1.

Мамедов А., Теоретические проблемы восстановления первичных корней в тюркских языках, Сб. Вопросы азербайджанской филологии, вып. 2, Баку, 1984.

Мамедов Т. М., Албания и Атропатена по древнеармянским источникам (IV-VIIвв), Баку, 1977.

Мамедов Т. М., Кавказская Албания в IV-VII вв., Автореф. докт. дис., Баку, 1985.

Мамедова Ф., "История албан" Моисея Каланкатуйского как источник по общественному строю раннесредневековой Албании, Баку, 1977.

Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э. – VIII в. н. э.), Баку, 1986.

Марковин В. И., Наскальные изображения в Дагестане, Изв. Всесоюзного географического общества, 1953м, т. 85, вып. 2.

Марр Н. Я., Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (арабская версия), СПб, 1905.

Марр Н. Я., По поводу русского слово "сало" в древнеармянском описании хазарской трапезы VII в., Избранные работы, т. V, М.-Л., 1935.

Массон В. М., Экономика и социальный строй древних обществ, Л., 1976.

Машкин Н. А., История Древнего Рима, М., 1947.

Меликишвили Г. А., К истории древней Грузии, Тбилиси, 1959.

Меликишвили Г. А, Урартские клинописные надписи, М., 1960.

Мелик-Оганджанян К. А., Историко-литературная концепция З. Буниятова, ԲՀԱ, 1968, N 2.

Мелик-Оганджанян К. А., Еще раз о национальной принадлежности Мхитара

Гоша, автора "Судебника", ՔՀԱ, 1969, N 1.

Минорский В. В., История Ширвана и Дербента X-XI вв., М., 1963.

Моммзен Т., История Рима, русский перевод под общей редакцией Н. А. Машкина, т. III, М., 1941.

Мнацаканян Ас. Ш., Паруйр Севак, По поводу книги З. Буниятова "Азербайджан в VII-IX вв.", ՊԲՀ, 1967, N 1.

Мнацаканян Ас. Ш., О литературе Кавказской Албании, Ереван, 1969.

Мунчаев Р. М., Кавказ на заре бронзового века, М., 1975.

Муравьев С. Н., Птолемеева карта Кавказской Албании и уровень Каспия, ВДИ, 1983, N 1.

Муравьев С. Н., Заметки по исторической географии Закавказья. Плиний о населении Кавказа, ВДИ, 1988, N 1.

Мусхелишвили Д. Л., К вопросу о локализации Хунана (Хнаракерта), Археологические памятники феодальной Грузии, II, Тбилиси, 1974.

Мусхелишвили Д. Л., Из исотирческой географии восточной Грузии (Шаки и Гогарена), Тбилиси, 1982.

Мушегян А. В., Псевдоалванская литература и его апологеты, Լրաբեր հաս. գիտ., 1989, N 8.

Нейматова М. С., Еще раз об Урудских памятниках, Изв. АН АзССР, 1985, N 4.

Новосельцев А. П., К вопросу о политической границе Армении и Кавказской Албании в античный период, Кавказ и Византия, вып. 1, Ереван, 1979.

Новосельцев А. П., Пашуто В. Т., Черепин Л. В., Пути развития феодализма, М., 1972.

Новосельцев А. П., Генезис феодализма в странах Закавказья, М., 1980.

Новосельцев А. П., Мовсес Каланкатуаци, История страны Алуанк, 1985, N 1.

Новосельцев А. П., Древнейшие государства на территории СССР (Некоторые итоги и задачи изучения), История СССР, 1985, N 5.

Нуриев А. Б., Стеклянные изделия и их производство в Кавказской Албании, Баку, 1981 (на азерб. яз.).

Оксенюк Р. Н. , Роль Северного Причерноморья в борьбе Понта с Римом (II-I вв. до н.э.), Томск, 1953.

Османов Ф. Л., Ибрагимов Ф. А., Метаалические браслеты античной эпохи из раскопок с. Нюди, Изв. АН АзССР, 1978, N 2.

Очерки по истории Дагестана, т. 1, Махачкала, 1957.

Очерки истории СССР, первобытнообщинный строй и древнейшие государства на территории СССР, М. 1956.

Очерки истории СССР III-IX вв., М., 1958.

Очерки истории СССР, период феодализма IX-XV вв. (в двух частях), М., 1953.

Патканов К., Ванские надписи и значение их для истории Передней Азии, СПб, 1881.

Папуашвили Т., Вопросы истории Эрети, Тбилиси, 1970 (на груз. яз.)

Пахомов Е. А., Римская надпись I в. н. э . и легион XII Фульмината, Изв.

АзССР. 1949, N 1.

Пахомов Е. А., Античные монеты в Албании (в пределах Азербайджанской ССР), Сб. Вопросы истории Кавказской Албании, Баку, 1962.

Пахомов Е. А., К истолкованию пехлевийских надписей Дербенда, Изв. Аз научно-исследов. ин-та, т. 1, вып. 2, Баку, 1926.

Пахомов Е. А., Крупнейшие памятники сасанидского строительства в Закавказье, Проблемы истории материальной культуры, 1933, N 9-10.

Пахомов Е. А., Монетные клады Азербайджана и других республик, краев и областей, вып. IX, Баку, 1966.

Пигулевская Н. В., Сирийские источники по истории народов СССР, Л.-М., 1941.

Пигулевская Н. В., Якубовский А. Ю., Петрушевский И. П., Строева Л. Б, Беленицкий А. М., история Ирана с древнейших времен до конца XVIII вв., Л., 1958.

Пиотровский Б. Б., Археология Закавказья с древнейших времен до I тысячелетия до н. э., Л., 1958.

Пиотровский Б. Б., Ванское царство, М., 1959.

Погребова М. Н., Закавказье и его связи с Передней Азией в скифское время, М., 1984.

Пьянков И. В., Борьба Кира II с Астиагом, ВДИ, 1971, N 3.

Ранович А. Б., Эллинизм и его историческая роль, М., 1950.

Ростовцев М. М., Новая греческая надпись из Эчмиадзина, "Христианский Восток", т. III, вып. СПб, 1915.

Рустамов Д. Н., Мурадова Ф. М., Археологические исследования в Гобустане в 1978 г., Археологические и этнографические изыскания в Азербайджане (1978 г.), Баку, 1982.

Рустамов Д. Н., Мурадова Ф. М., "Кяниза" – стоянка каменного века, Археологические и этнографические изыскания в Азербайджане (1975 г.), Баку, 1978.

Свазян Г. С., Агванк в VII-IX вв., Автореф. канд. дис., Ереван, 1974.

Свазян Г. С., Мовсес Каланкатуаци, История страны Алуанк, Ереван, 1984 (Рецензия на книгу).

Свазян Г. С., Об одной "албанской" надписи, Լրաբեր հաս. գիտ., 1987, N 2.

Свазян Г. С., Арцах в исторических первоисточниках, Լրաբեր հաս. գիտ., 1989, N 11.

Свазян Г. С., Пример использования исторической науки в экспансивных целях, ԲԵՀ,1989, N 2.

Сеидов М., Об этническом термине "Хайландурк" в исторических трудах Егише и Мовсеса Каганкатуйского, Изв. АН АзССР, 1965, N 6 (на азерб. яз.).

Смирнов К. Ф., Архелогические исследования в Дагестане в 1948-1950 гг., КСИИМК, вып. 45, 1952.

Струве В. В., Белявский В. А., Ломоури Н. Ю., К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании IV в. до н. э. –VII в. н. э. , М.-Л., 1959, ВДИ, 1960, N 3.

Сумбатзаде А. С., К истории Атропатены, Изв. АН АзССР, 1978, N 3.

Сумбатзаде А. С., Об истоках истории Азербайджана, Изв. АН АзССР, 1979, N 1.

Тер-Гевондян А. Н., Армения и арабский халифат, Ереван, 1977.

Тихвинский С. Л., Состояние и задачи координации исторических исследований, ВИ, М., 1986, N 1.

Томсон Дж., История древней географии, М., 1953.

Тревер К. В., Очерки по истории и культуре древней Армении, Л., 1953.

Тревер К. В., Очерки по истории и культуре Кавказской Албании IV в. до н. э. – VII в. н. э., М.-Л., 1959.

Тревер К. В., К вопросу о культуре Кавказской Албании, М.-Л., 1960.

Тумбиль П. Х., Римская надпись I века н.э., обнаруженная в пределах Азербайджана (Кабристан), ДАН АзССР, т. XV, N 7, 1948.

"Улдуз", Баку, 1971, N 6.

Улубабян Б. А., О границах древнего Агванка, ՊԲՀ, 1979, N 1.

Фрай Р., Наследие Ирана, М., 1972.

Халилов Дж. А., Каменные статуи из Хынысли, ДАН АзССР, 1960, N 11, т. XVI.

Халилов Дж. А., Бабаев И. В., О городах древней Кавказской Албании, СА, 1974, N 4.

Халилов Дж. А., Материальная культура Кавказской Албании, Баку, 1985.

Шопен И., Новые заметки на древние истории Кавказа и его обитателей, СПб, 1866.

Юсифов Ю. Б., О наименованиях "Албания" и "Аран", Изв. АН АзССР, 1961, N 10.

Юшков С. В., К вопросу о границах древней Албании, Исторические записки АН СССР, т. 1, 1937.

Ямпольский З. И., Две заметки к трактовке Страбонова текста об азербайджанской Албании, Изв. АзФАНа, 1942, N7.

Ямпольский З. И., К римской надписи в Азербайджане, Изв. АН АзССР, 1949, N 1.

Ямпольский З. И., Вновь открытая латинская надпись у горы Беюк-Даш (Азербайджанская ССР), ВДИ, 1950, N 1.

Ямпольский З. И., К вопросу об одноименности древнейшего населения Атропатены и Албании, Труды Института истории и философии, Баку, 1954, т. IV.

Ямпольский З. И., Древние авторы о языке населения Азербайджана, Изв. АН АзССР, 1955, N8.

Ямпольский З. И., Материалы о происхождении азербайджанского народа, Изв. АН АзССР, 1956, N 1.

Ямпольский З. И., К изучению Летописи Кавказской Албании, Изв. АН АзССР, 1957, N 9.

Ямпольский З. И., Древняя Албания III-I вв. до н.э., Баку, 1961.

Ямпольский З. И., О значении слова "ван" в имени Нахичевань (К анализу имени Нахичевань), Изв. АН АзССР, 1961, N 1.

Ямпольский З. И., Об этногенетической непрерывности на почве

Азербайджана, Вопросы истории Кавказской Албании, Баку, 1962.

Ямпольский З. И., О времени возникновения государства Атропатена, ДАН АзССР, т. XXVII, 1971, N 9.

Ямпольский З. И., Об Атропате – современнике Александре Македонского ВДИ, 1974, N 2.

Яновский А. И., О древней Кавказской Албании, ЖМНП, 1846, N 52.

Christensen A., L'Iran sous les Sassanides, Paris, 1944.

Hübschmann H., Die altarmenischen Ortsnamen Indogermanische Forschungen Bd. 16, 1904.

Hübshmann H., Armenische Grammatik. Leipzig, 1895.

Manandian A., (aus Achalzich), Beiträge zur albanischen Geschichte, Leipzig, 1897

Marquart J., Eransahr nach der Geographie des Ps. Moses Chorenaci, Berlin, 1901

Marquart J., Untersuchungen zur Geschichte Erans, I, Göttingen, 1896.

Marquart J., Die Entsehung der armenischen Bistümer, Rom, 1932, "Orientalia Christana", vol. XXVII, 2.

Moise Kaghankatoatsi, Aghovans des origines Traduite des manuscript armenien, par E. Bore avec des annotation de Viven de Saint-Martin, Univers. catholique Journal de l'institut sc. hist., t. XXII, Paris, 1847, Nr. 136., november.

Recherches sur les Res Geste divi Saporis par Ernest Honigmann et Andre Maricq, Bruxelles, 1953.

Res Gestae divi Saporis par Andre Maricq, Syria, t. XXXV, Paris, 1958.

Sandalgian J., Histoire documentaire de l'Armenie, t. II, Rome, 1917.

Tarn W. W., Alexander the Great, t. II, Studies and Sources, Cambridge, 1950.

The Encyclopaedie Britannica, vol. I, New-York, 1910.

Tomaschek, Albania, Albanoi, PRE, Stuttgart, 1893, I, I.

Toumanoff Cyril, Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963.

# ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայկական Սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974:
«Նոյեան Աղաւնի», Կոստանդնուպոլիս, 1852, թիվ 36-37, 58:
"Азербайджанский учитель", 6 августа, 1986 (на азерб. яз.).
Атлас Азербайджанской ССР, Баку-Москва, 1963.
Атлас Армянской ССР, Ереван-Москва, 1963.
Атлас к книге "История армянского народа", ч. 1, Ереван, 1952.
"Баку", Орган ЦК КП Азербайджана и Бакинского горсовета, 15 июля, 1986.
"Вышка", Орган ЦК КП Азербайджана, 13 мая, 1986.
Дворецкий И. Х., Латинско-русский словарь, М., 1976.
Каталог археологических материалов, т. II, Тбилиси, 1955.
"Литературный Азербайджан", 1986, N 10.
"Молодежь Азербайджана", Орган ЦК ЛКСМ Азербайджана, 20 сентября, 1986.
Советская историческая энциклопедия, т. 1, М., 1961.

# ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՀԱ - Բանբեր Հայաստանի արխիվների
ԲԵՀ - Բանբեր Երևանի համալսարանի
ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդես
ВДИ – Вестник древней истории
ВИ – Вопросы истории
ВИ – Византийские историки
ДАН – Доклады Академии наук
ДВ – Древний Восток
ИВГО – ИЗвестия Всесоюзного географического общества
ЖМНП – Журнал Министерства народного просвещения
ЗКОИРГО – Записки Кавказского отделения Императорского русского географического общества
ЗИВАН – Записки Института востоковедения академии наук
КСИИМК – Краткие сообщения Института истории материальной культуры
СА – Советская Археология
СМОМПК – Сборник материалов для описания местностей и племен Кавказа
ХВ – Христианский Восток
PWK - Pouly-Wissowa-Kroll, Realencyclopädie der klossischen Altertuswissenschoft.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Առաջաբան 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
Ա. Աղվանքը հայկական աղբյուրներում 7
Բ. Աղվանքը հունա-հռոմեական և այլ օտարալեզու աղբյուրներում 15
Գ. Աղվանքը վիմական արձանագրություններում ու հնագիտական նյութերում 25
Դ. Հին և միջնադարյան Աղվանքը պատմական գրականության մեջ 29

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՂՎԱՆԻՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
Ա. «Ալբանիա», «Աղուանք», «Առան» տեղանունները 49
Բ. Աղվանքի քաղաքական սահմանները մ.թ.ա I -մ.թ. V դարի կեսերին 54
Գ. Աղվանքի էթնո-ցեղային կազմը: Աղվանական ցեղերի զբաղմունքը, հավատալիքները 80

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ
ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԸ ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ-ՀԱՄԱՅՆԱԿԱՆ
ԵՎ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԵՐԻ ԾՐՋԱՆՈՒՄ 91

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՑԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՂՎԱՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 91
Ա. Կասպերի ցեղային միությունները Աքեմենյան տերության կազմում (մ.թ. ա.VI –մ.թ. ա. IV դար) 91
Բ. Աղվանական ցեղային միությունները ու նրանց հասարակական-քաղաքական կացությունը 99

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՀԵԼԼԵՆԻԶՄՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ: ՑԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴԵՊԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ (մ.թ. ա. III –մ.թ. I դար) 106
Ա. Հելլենիզմն Արևելքում և աղվանական ցեղերի հասարակական-քաղաքական կացությունը 106
Բ. Աղվանական պետության կազմավորումը: Նրա հասարակական-քաղաքական կառուցվածքը 110

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԱՂՎԱՆՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ Մ.Թ.Ա. I -Մ. Թ. III ԴԴ. 120
Ա. Աղվանքը մ.թ.ա. I դարում 120
Բ. Աղվանքը պարթևա-հռոմեական հարաբերություններում 138
Գ. Հյուսիսային ցեղերի ներխուժումները Աղվանք 146
Դ. Աղվանքը մ.թ. II դարում 150
Ե. Աղվանքն առաջին Սասանյանների օրոք 154

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ
ԱՂՎԱՆՔԸ ՎԱՂ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ 161

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ: ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՂՎԱՆՔՈՒՄ
Ա. Ֆեոդալական հարաբերությունների ձևավորումը 161
Բ. Արշակունյաց հարստությունն Աղվանքում 168

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ԱՂՎԱՆՔՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՕՐՈՔ 177
Ա. Աղվանքը IV դարի 40-50-ական թթ. 177
Բ. Աղվանից Ուռնայր թագավորը և հայ-աղվանական հարաբերությունները նրա օրոք 181
Գ. Եսվաղեն՝ Աղվանից արքա: Սասանյան Պարսկաստանի ճնշման սաստկացումն Աղվանքում: Կրոնափոխության առաջարկը և անդրկովկասյան երկրների ընդվզումը: Ռազմական գործողությունները Աղվանքում 186
Դ. Վաչե Բ Աղվանից թագավորը: Հակասասանյան շարժումն Աղվանքում և նրա ճնշումը 195

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
ԱՂՎԱՆԻՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 199

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ
ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ԱՂՎԱՆՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ (V ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ- VI ԴԱՐ) 208
Ա. Ազատագրական շարժումներն Անդրկովկասում: Վաչագան Գ Բարեպաշտ 208
Բ. Քաղաքական իրադարձությունները VI դարում: Աղվանից մարզպանության տրոհումն ու «Աղուանք» նոր հասկացության առաջացումը 216

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ
ՆՈՐ ԱՆՎԱՆԱԿՈՉՎԱԾ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԸ VII-VIII ԴԱՐԵՐՈՒՄ 222

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ
ՆՈՐ ԱՆՎԱՆԱԿՈՉՎԱԾ ԱՂՎԱՆՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐ: ՄԻՀՐԱՆՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՀՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԱՆՎԱՆԱԿՈՉՎԱԾ ԱՂՎԱՆՔՈՒՄ 222
Ա. Նոր անվանակոչված Աղվանքի քաղաքական սահմանները և հարակից հարցեր 222
Բ. Միհրանյան տոհմը նոր անվանակոչված Աղվանքում 225

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ
ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԸ ՄԻՀՐԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ (590-821ԹԹ.)
Ա. Աղվանքը միջնարաբական նվաճումները 231
Բ. Ջուանշիր (642-683թթ.): Արաբական տիրապետության հաստատումն Աղվանքում 240
Գ. Աղվանքը Ջուանշիրի հաջորդների օրոք 249

ՎԵՐՋԱԲԱՆ 260
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 264

ԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ 269
ՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ 273
ԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 285
ԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ 286
ՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 289



ՎԻՐՔ
ԿԱՍՊԻՑ ԾՈՎ
ՀԵՐԵԹԻ
ԿԱՄԲԵՃԱՆ
ԱՂՎԱՆՔ
ՍՅՈՒՆԻՔ
ՀՆԱՐԱԿԵՐՏ
ԿԱՊԱՂԱԿ
ՊԱՐՏԱՎ
ԱՐՏԱՇԱՏ
ԱԼԱԶԱՆ գ.
ԿՈՒՐ գ.
ՍԱՄՈՒՐ գ.
ԱՐԱՔՍ գ.
1. ԱՂՎԱՆՔԸ Մ.Թ.Ա. I – Մ.Թ. V ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍՈՒՄ (ՄԻՆՉՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ)
2. IV ԴԱՐԻ 60-ԱԿԱՆ ԹԹ. ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԳՐԱՎԱԾ ԵՎ ՆՈՒՅՆ ԴԱՐԻ 70-ԱԿԱՆ ԹԹ. ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԵՏ ՆՎԱՃՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ


ԱՂՎԱՆԻՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅՈՒՆ
(461թ.-6-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋ)
ԴԵՐԲԵՆԴ
ԼԵԿԵՐ
ՍԱՄՈՒՐ Գ.
ԿԱՊ-ԿՈՀ
ՀՆԱՐԱԿԵՐՏ
ԿՈՒՐ Գ.
ԱԼԱԶԱՆԻ Գ.
ԿԱՄԲԵՃԱՆ
ԻՈՐԻ Գ.
ԿԱՊԱՂԱԿ
ՊԱՐՏԱՎ
ԱՐՏԱՇԱՏ
ԱՐԱՔՍ Գ.
ՍՅՈՒՆԻՔ
ՎԻՐՔ



ԱՂՎԱՆԻՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՐՈՀՈՒՄԸ ԵՎ «ԱՂՎԱՆՔ» ԱՆՎԱՆ ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

# ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ[1]

## Ա Ն Ձ Ն Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր

Ա
Աբաս Կուլի աղա Բաքիխանով 30, 49
Աբասյաններ 258
Աբգարյան Գ. Վ. 9
Աբդ ալ-Մալիք 253, 255
Աբեղյան Մ. 8, 147
Աբլ-Աբաս 212, 215
Աբրահամյան Ա. Գ. 7, 27, 96
Աբու Սաքաիի 258
Ագաթանգեղոս 8, 11, 14, 76, 95, 96, 141, 142, 156, 157,158
Ադոնց Ն. 45, 76, 78, 101, 120, 134, 226, 231, 234, 241
Ալ Իսթահրի 23, 219
Ալ Մուկադասի
Ալեքսանդր Մակեդոնացի 15, 20, 98, 99, 104-107, 133, 146, 151
Ալիզադե Ա. Ա 85
Ալիշան Ղ. 124, 150, 151, 158, 258, 259
Ալիև Ա. Ա 85
Ալիև Ի. 27, 40, 46, 82, 84, 100, 101, 103,111, 115, 147, 148, 226
Ալիև Ս. 117
Ալիև Ք. 16, 40, 57, 58, 59, 64, 66, 83, 84, 94, 101, 117, 121
Ալփ-Իլիթվեր 226, 251, 252, 253,
Ակինյան Ն. 178, 179, 181, 186, 195, 198, 228, 231, 241, 244, 250, 253, 255
Աճառյան Հ. 181
Ամմիանոս Մարքեղայոս 21, 92, 133, 180
Անանիա Շիրակացի 60, 67, 96, 204, 205
Անանիա, Սյունյաց եպիսկոպոս 187
Անանուն պատմիչ 22, 249, 250
Անաստաս 246
Անդրե 234
Անտոնինոսների հարստություն 150
Անտոնինոս Կարակալլա 155
Անտոնինոս Պիոս 152
Անտիոքոս Գ. 108, 109
Անտիոքոս զորավար 170, 171, 173, 174, 176,
Անտոնիոս 17, 19, 33, 135, 136, 264
Անտոնիոս Սատուռնինոս 149
Աշուշա բդեշխ 190
Աշխադար 150
Աշոտ Բագրատունի 259
Ապպիանոս 18, 55, 60, 99, 110, 126, 127, 133
Առան 12, 32, 51, 52, 54, 61, 62, 75, 77, 168,
Առանշահիկ, Առանշահիկներ 4, 6, 13, 221, 222, 225, 226, 228, 230, 247, 257, 263
Առաքելյան Վ. 10, 181, 216, 234
Ասա 168, 186, 211
Ասինիոս Կվադրատոս 55, 56, 72, 73
Ասլանով Գ. 27, 40, 84, 147, 148
Ասողիկ 14, 250, 254, 258

---

[1] Ցանկը կազմել է Շուշան Հենրիկի Սվազյանը, համակարգչային շարվածքը՝ Հայկանուշ Ավագյանը:

Աստիագես, Աժդահակ 91
Աստուրյան Հ. 120, 123, 158
Ավդալբեգյան Թ. 45
Ավլիոս Հելիոս 49
Ավրելիանոս 21, 152
Ատրներսեհ /Սահլի որդին/ 259
Ատրներսեհ /վրաց իշխան/ 243
Ատրներսեհ,Վասակ Սյունեցու որդին 191
Ատրոպատես 99, 100, 101, 104, 112, 113, 264
Ատրորմիզդ 194
Ատրվշնասպ 206
Արիարաթ Բ. 102
Արիստոբուլոս Կասանդրացի 99
Արմայել 225, 229, 267
Արմենոս 31
Արշակ 138, 139
Արշակ Բ. 183
Արշակունյաց հարստություն 45, 73, 74, 75, 96, 141, 155, 161, 164, 168, 170, 175-178, 186, 199, 201, 203, 215, 223, 228, 262, 266
Արշավիր Արշակունի 192
Արսակես 142
Արսեն Սափարացի 22
Արտաշես Ա, Արտաքսիաս 32, 57, 58, 70, 72, 74, 77, 108, 109, 147, 149,
Արտաշեսյան հարստություն 72, 74, 139
Արտաշիր 8, 155, 156, 157
Արտավազդ Բ. 7, 135, 136, 149, 264
Արտավազդ Ե. 158, 159
Արտավազդ Մամիկոնյան 158
Արտավազդ Մանդակունի 158
Արտավան Գ. 96, 138, 139, 156, 157
Արտաքսերքսես Գ. 101
Արտոկես 126, 127, 128, 134
Արեմենյաններ 15, 36, 91, 92, 98, 101, 105, 112, 114, 155, 260
Արիտոբել 183

Բ

Բաբան Ի. Ա. 40, 41, 86, 88, 108, 111, 116
Բաբիկ191
Բագրատունիներ 4, 259
Բալաձորի 23, 206, 207, 217, 219, 220, 221, 245
Բակուր-Պակորոս, Ատրպատականի թագավոր 142, 143, 148
Բակուր բդեշխ 172
Բարթիկյան Հ. Մ. 256
Բարխուդարյան Ս. Գ.72
Բարխուտարյանց Մ. 30, 64, 181, 186, 187, 193, 195
Բարտոլդ Վ. Վ. 30, 31, 85, 94, 100
Բեյլավսկի Վ. Ա. 32
Բնդո 225
Բոլտունովա Ա. Ի. 34, 83, 94
Բորե Եվգ. 29
Բրոսսե Մ. 168, 226
Բունիյաթով Զ. Մ. 10, 11, 38, 39, 43, 103,181, 226, 231, 235, 250, 253, 255

Գ

Գագիկ /Վարազ-Տրդատի որդին/ 254
Գադիրով Ֆ. Վ. 79
Գազրիկ 192
Գամեր 50
Գայդուկովիչ Վ. Ֆ. 144
Գայշաք 230, 235
Գան Կ. 49
Գարագաշյան Ա. 147
Գելիոս 136

Էյուշն Ռ. Բ.64, 112, 236
Էիզինգեր 107
Ձիլանշահ 219
Ձյուտ կաթողիկոս 212
Ձնել 172
Գոլենկո Կ. Գ.159
Գոլուբկինա Տ. Ա. 83
Գոտարզես 142
Գրիգոր Լուսավորիչ 12, 74, 76, 171, 181
Գրիգոր, Սյունյաց իշխան 240, 249
Գրիգորև Վ. 29
Գրումբատ 180
Գույին Ի. 168, 184
Գուրգեն, վրաց թագավոր 201
Գուրջանշահ 219

Դ

Դանդամաև Մ.Մ. 91
Դանիել սուրբ 171
Դանիելյան Օ. Ա. 83
Դավթակ Քերթող 11, 39, 42
Դավիթ Ալավկա որդի42
Դավլիանիձե-Տատիշվիլի Լ.Մ. 10
Դարեհ, Մարաց թագավոր 134
Դարեհ Ա 91, 92
Դարեհ Գ. 15, 99, 100, 101, 104
Դելլիոս 15
Դեստունիս Ս. 23
Դեվդեկ 11
Դիմաքսյան Մուշ 192
Դիոդորոս Սիկիլիացի 101, 102
Դիոնիսիոս 21, 95
Դիոն Կասսիոս 18, 19, 55, 56, 60, 68, 69, 80, 89, 110, 123-132, 136, 138, 140, 142, 145, 151, 152
Դոմետիանոս 25, 148-150, 153
Դորն Բ. Ա. 30, 31
Դոստեր Չ. 226, 249
Դյակոնով Ի. Մ. 91, 92, 93, 94, 100, 101, 102, 105
Դյակոնով Մ.Մ. 91, 94, 104, 138, 155, 180, 201
Դվորեցկի Ի. Խ. 25, 49

Ե

Եգլով Ա 249, 251, 252
Եգլով իբն Մազյադ Շայբանի 259
Եզուտ Խոսրով 226, 239
Ելնիցկի Լ.Ա. 25, 148
Եղիա սուրբ 171
Եղիա կաթողիկոս 255, 256
Եղիազար 227, 250, 251, 252, 253, 254
Եղիշե 9, 11, 13, 50, 75, 162, 164, 184, 188 -195, 197, 200, 204
Եսայան Ս.Ա. 28
Եսայի Աբու Մուսե 39
Եսայի Նչեցի 78
Եսվաղեն, Արսվաղեն 9, 168, 186, 188, 195, 211, 266
Եվսեբիոս 21
Եվտաքիանոս 21
Եվտրոպիոս 131, 150
Երեմիա 9, 187
Երեմյան Ս. Տ. 8, 26, 33, 34, 45, 46, 53, 57, 67, 70, 74, 79, 83, 86, 96, 111, 117, 124, 145, 158, 159, 168, 188, 198, 199, 206, 213, 218, 236, 250, 252, 253, 254, 259
Երվանդ 57, 72, 74, 102, 109
Երվանդունիներ 72, 74, 97, 102, 109

Զ

Զաբերգան 117
Զարբհանալյան Գ. 141

Զաբեհ 109
Զարիադրես 108
Զարմիհր Առանշահիկ 225, 226
Զարմիհր Հազարավուխտ 206, 209
Զաքարիա Միտիլենացի, հռետոր 24
Զենոն-Արտաշես 138
Զոբերոս 19, 116, 117, 136, 264
Զոսիմա 133
Զուլալյան Մ.Կ. 10, 39
Զևս 125

Է

Էրատոսթենես 15, 16, 60, 93, 95, 107
Էլիոս Սպարտիանոս 21
Էլչիբեկյան Ժ. Գ. 109

Թ

Թադեոս Առաքյալ 12
Թեմիստոս 70, 152
Թեոդոս, Թեոդոսիոս Բ փոքր 186, 189, 191
Թեոդորոս Ռշտունի 244, 246
Թեոփանես Բյուզանդացի 23, 232, 233
Թեոփանես Միտիլենացի 15, 60, 61
Թեոփիլակտոս Սիմոկատա 23
Թոմաշեկ Վ. 48, 57
Թոմսոն Ջ. 107
Թորգոմ 22, 76, 81
Թումանով Կ.48, 184, 226

Ժ

Ժուզե Պ.Կ. 23

Ի

Իբն ալ-Ասիր 23, 217
Իբն ալ-Ֆակիհ 23, 217
Իբն Խորդադբեհ 23, 217
Իբն Հաուկալ 23
Ինոե Գ.Ի. 27
Ինիգոն Նիկեյացի 49
Իամիզադե Օ.Շ. 26, 68, 79, 83, 85, 8
89, 111, 113
Իսրայել 252, 268

Լ

Լազոս Պտղոմեոս 99
Լալայան Ե. Ա. 26
Լատիշև Վ.Վ. 18, 59
Լեո 101, 120, 178, 191, 234, 235
Լեոնտի կայսր 254
Լեոնտի Մրովելի, Ռույսեցի 22, 102
Լիրանշահ 219, 220, 221
Լոմոուրի Ն.Օ. 32
Լուկիոս Դեմիտրիոս Ավրելիանոս 159
Լուկիոս Յուլիոս Մաքսիմուս 25
Լուկիոս Յունիոս Մոդերնինուս 81
Լուկիոս Վիտելլիոս 138
Լուկիոս Փլակկոս 123, 125
Լուկուլլոս 115, 120, 122, 123, 136
Լևիատով Վ. Ն. 36, 64, 94, 111, 114, 115, 148

Խ

Խաքուն 251
Խալաթյանց Բ. 23, 217
Խալիլով Ջ.Ա. 40, 41, 64, 85- 90, 112, 113, 114, 116, 159
Խաչերյան Լ 78
Խաչիկյան Լ. 25, 40, 149

Խառազատ, Խառախազատ 241
Խոսրով Ա. Անուշիրվան 38, 206, 217-220
Խոսրով Բ Փարվեզ 225, 226, 227, 229- 236, 240, 267
Խոսրով Գարդմանացի 73
Խոսրով Կոտակ 170, 172
Խոսրով Մեծ 8, 96, 153, 154, 156, 157
Խոսրով, պարսից արքա 38
Խուրս 73

Կ

Կազիև Ս. Մ. 27, 79, 82, 87, 106, 108, 113, 116, 124
Կամբյուսես 91, 92
Կամսարական Սպանդա:րատ 183
Կանայան Ստ.    223, 229, 251
Կանիդիոս Կրասսոս 19, 264
Կավատ Ա. 206, 208, 216, 217, 218, 267
Կավատ Բ. 236
Կարագյոզյան Հովի. 74
Կարաուլով Ն.Ա. 23
Կատիլինա 134
Կիրակոս Գանձակեցի 14, 39, 42, 170
Կլավդիոս Էլիանոս 21, 88, 118
Կլավդիոս Պտղոմեոս 8, 20, 54, 55, 56, 59, 63- 68, 94
Կյուրիոն 231
Կյուրոս Մեծ 91, 92
Կոխ17, 118, 129-131, 264
Կոստանդ Բ 227, 244, 249
Կոստանդիանոս Մեծ170, 181, 211
Կովալևսկի Ս.Ա. 23, 67
Կոտովիչ Վ.Գ. 28, 253
Կորյուն 8, 10, 42, 43, 73, 78, 186, 187
Կրասսոս 133
Կրգըօղլի Ֆ. 39
Կրիմսկի Ա. Ե. 30, 31, 68, 181
Կրկյաշարյան Ս. Մ. 18, 101, 104, 110
Կոշելենկո Գ.Ա. 138
Կորբուլոն 142, 144
Կրոնոս 125
Կրուզե Ֆ. 29
Կուդամա 217
Կուդրյավցև Օ. Վ. 148
Կուլակովսկի Յու. 21, 253
Կուրտիոս Ռուփոս Ֆեստոս 21, 100, 131, 150

Հ

Հաբեբ 50, 81
Հադրիանոս 21, 151
Հազկերտ Ա. 186, 187
Հազկերտ Բ. 162, 164, 188, 189,190, 192, 194-197, 266
Հազկերտ Գ. 239, 240, 241, 242
Հազկերտ, Վաչե Բ-ի եղբայրը 210
Հակկի Դուրսուն Յուլդուզ 39
Հակոբյան Ա.Ա. 35, 45, 57, 64, 69, 70, 95, 111, 168, 169, 184, 199, 203, 226
Հակոբյան Ս. 45
Հակոբյան Վ. 164
Համամ Արևելցի 39, 259
Հայկ Նահապետ 51
Հայկազյան ազգ 226
Հապոզյան Մ. 81
Հարությունյան Բ. 45, 97, 168, 169, 176, 184, 199, 203
Հերակլ 9, 232- 236, 238, 239, 267
Հերակլես 81
Հերր 258
Հերոդոտոս 91, 92, 93, 95, 98, 107
Հերոս 81
Հիփսիկրատես 15

Հյուբշման Հ. 48
Հոնիգման Ե. 158
Հոչազան 168, 186, 211
Հովհան Եփեսացի 23
Հովհան Մամիկոնյան 156
Հովհան Մայրագոմեցի 256
Հովհաննես Դրասխանակերտցի 14, 78, 250, 255
Հովհաննիսյան Ա. 227
Հովսեպոս Փլավիոս 18, 140, 142, 146, 147
Հռադամիզդ 140, 141, 143, 152
Հրանդ Ք. Արմեն 136
Հուլիանոս Ֆրոնտինոս 17, 18, 130
Հուլիոս Կապիտոլոս 21, 158
Հուլիոս Կեսար 139, 145
Հուլիոս Մաքսիմուս 148
Հուլիոս Սոլին 21, 49, 88, 104, 133
Հունիանոս Հուստինոս 21, 93, 101
Հունեյնով Մ. 77
Հունեյնով Ռ. Ա. 41, 84, 117
Հուստինիանոս Բ 250, 253, 254, 257, 268

Ղ

Ղազար Փարպեցի 9, 13, 63, 67, 162, 165, 188-192, 194, 200, 202, 205, 206, 209, 210
Ղանալանյան Ա. 40
Ղափանցյան Գ. Ա. 74
Ղուկասյան Վ. 11
Ղևոնդ 14, 249, 251, 257, 258

Մ

Մազոզ 50
Մալխասյանց Ստ. 163
Մամեդով Ա. 117, 223
Մամեդով Թ. 40, 168, 205
Մամեդովա Ֆ.12, 41-46, 57, 59, 60, 61, 64, 69, 70, 77, 78, 79, 103, 108, 112, 141, 151, 168, 175, 176, 181, 184, 191, 197, 199, 205, 210, 211, 213, 223, 249
Մամիկոնյան Գրիգոր 246, 251
Մամիկոնյան Մանվել 172
Մամիկոնյան Մուշեղ 57, 62, 172, 182, 183, 240, 266
Մամիկոնյան Վահան, մարզպան հայոց 206, 209, 210, 211, 266
Մամիկոնյան Վասակ 183
Մամիկոնյան Վարդան 9, 162, 192, 200, 266,
Մանանդյան Հ. 33, 45, 102, 120, 123, 124, 127, 137, 140, 144, 146, 147, 155-158, 169, 176, 226, 232
Մանուկ Գրիգորիս 75, 169, 170, 172, 174, 176, 178, 179
Մաշկին Ն.Ա. 6, 18, 148
Մառ Ն. 49, 50, 51, 53
Մասլամա 221
Մասսոն Վ. Մ. 113
Մասուդի 219
Մատթեոս Ուռհայեցի 222, 223
Մարիկ Ա. 158
Մարկիանոս 192, 193
Մարկոս Հուլիանոս Փիլիպոս 157
Մարկվարտ Յ. 47, 153, 176, 205,
Մելիք-Օհանջանյան Կ. 39, 40
Մելիքիշվիլի Գ.Ա. 47, 69, 74, 121, 123, 127, 140, 144, 152
Մելիքսեթ-Բեկ Լ. 22, 102
Մելքոնյան Հ.Գ. 23
Մենանդրոս 23
Մեսրոպ Մաշտոց 7, 8, 10, 11, 14, 42, 43, 73, 78, 96, 186, 187, 262
Մետելլոս Կելեր 123, 125

Մետրոդորոս Սկեփսացի 15
Մերհավան 168, 186, 211
Մերուժան 172, 182, 183
Միքրաուստես 100, 102
Միհր 229
Միհրան 224-230, 267
Միհրանյաններ 4, 6, 13, 40, 43, 222, 223, 225-228, 230, 231, 232, 234, 236, 238, 239, 242, 247 248, 251, 257, 258, 259, 263, 267, 268
Միհրդատ Պոնտացի 18,122, 127, 128
Միհրդատյան պատերազմ 81, 120
Միհրդատ 139, 140
Միհրներսեհ 189, 192, 193, 200
Մինորսկի Վ.Վ. 94, 199
Միրհորիկ 164
Միքայել Փորքուզալ Փաշա 191
Մխիթար Այրիվանեցի 14, 254
Մխիթար Անեցի 232
Մխիթար Գոշ 39, 42
Մնացականյան Աս. Շ. 11, 35, 39, 46, 57, 69, 78, 199, 229
Մշիխա Զեխա 23, 201
Մոմզեն Թ. 6, 48, 122, 123, 124, 127, 128, 144, 145
Մովսես Դասխուրանցի 181, 187, 195, 198
Մովսես Խորենացի 7, 11, 12, 13, 25, 43, 46, 51-54, 58, 59, 60, 61, 62, 72-75, 77, 78, 109, 135, 146, 147, 148, 153, 156, 157, 169-172, 174, 176, 177, 181, 183, 186, 189
Մովսես Կաղանկատվացի 9, 11-14, 29, 31, 37, 39, 41, 42, 48, 50-53, 60-62, 72, 73, 78, 81, 82, 87, 89, 96, 135, 146, 164, 165, 167, 168, 171, 173-175, 177-181, 183, 186, 188-192, 195-198, 202, 205, 208-216, 218, 223, 225-230, 240-247, 249-259
Մովսես սուրբ 171
Մովսես, Ցուրտավի եպիսկոպոս 231
Մորիկ 232
Մսերյանց Ջ. 11
Մսլիմա 257
Մրվան Ա 252, 253
Մուավիա 246, 247, 268
Մուհամմադ իբն Մրվան 256, 257
Մունչաև Ռ. Մ. 82
Մուշեղյան Ա. Վ. 45
Մուշեղյան Խ.Ա. 108, 116, 159
Մուշկան Նյուսալավուրտ 193
Մուսա Կալանկայտուկլու 11
Մուսխելիշվիլի Դ. Լ. 47, 69, 83
Մուրադյան Պ.Մ. 45
Մուրադովա Ֆ. Մ. 27, 82
Մուրավյով Ս. Ն. 20, 54, 65

Յ

Յակուտ Ալ Համավի 23, 206, 217, 219
Յամպոլսկի Զ. Ի. 10, 25, 36, 37, 39, 40, 80, 82, 110
Յանովսկի Ա.29, 30, 31, 49, 57, 65
Յասոն 20, 81
Յոշվա Ստիլիտ 23, 208
Յուզբաշյան Կ. Ն. 45
Յուշկով Ս. Վ. 30, 31, 64
Յուսիֆով Յու. Բ. 50, 52, 53, 57

Ն

Նալբանդյան Հ.Թ. 23, 206
Նարվա 136
Նեյմատովա Մ.Ա. 103
Ներոն 142
Ներսեհ Դժնդակ 258
Ներսեհ, Շիրակի տեր 254
Ներսեհ Փիլիպյան 259

Ներսես Բակուր 254, 255
Նիխոր Վշնասպյան 210
Նիորաձե Գ. 28
Նովոսելցև Ա.Պ. 12, 32, 33, 57, 84, 85, 117, 121, 161, 163, 204
Նոյման 107
Նումիդիանուս 21
Նուրիև Ա.Բ. 88

Շ

Շաբ 234, 236, 237, 238, 267
Շահակ 76
Շահեն 233
Շահխաթունյան Հովհ. 29
Շահնազարյան Կ. 11, 49
Շահրապղական 233
Շահր-Վարազ 233
Շապուհ Ա 8, 25, 53, 157, 158, 159, 186
Շապուհ Բ 169, 171, 173-175, 177-181, 183, 184, 186
Շապուհ, պարսիկ թագավոր հայոց 73
Շերգիր 183
Շերո 254-257, 268
Շիրին 232
Շիրվանշահ, Շիրվանշահեր 4, 219, 221
Շոպեն Ի. 29, 49, 50, 52
Շուշիկ տիկին 226
Շուր Վ. 48, 91, 144

Ո

Չ

Չամչյան Մ. 223
Չերեպնին Ա. Վ. 12, 33

Պ

Պախոմով Ե.Ա. 25, 108, 115, 116, 188, 218
Պաշուտո Վ.Տ.12, 33
Պապ թագավոր 181, 183
Պապուաշվիլի Թ. 47, 59, 243
Պատկանյան Ք. 50, 52, 60, 181, 216 226
Պատրոկլես 15, 16, 104, 107
Պարթամասիր 150, 151
Պարույր Սևակ 11, 39
Պետրոս Սյունեցի 11
Պետրոսյան Գ.Բ. 96
Պետրոս 142
Պերոզ 9, 23, 165, 195-198, 201, 202
Պերոզ, որդի Հազկերտ Բ-ի 205, 208-210, 213, 216, 217, 266
Պիգուլևսկայա Ն. Վ. 23, 141, 180
Պլատոնովսկի Բ.Բ. 83, 86, 88, 103
Պլինիոս Ավագ 19, 20, 49, 54, 55, 59, 60, 63, 68, 80, 81, 88, 104, 107, 143, 144, 178, 217
Պլուտարքոս 17, 18, 55, 56, 60, 69, 70, 80, 85, 110, 115, 118, 120-124, 126-131, 133, 136
Պյանկով Ի.Վ. 101
Պյուտր Պատրիկիոս, Մագիստրոս 23, 160
Պոզդնեևա Մ.Ն. 83
Գնեոս-Պոմպեոս 15, 17, 18, 19, 33, 49, 56, 60, 68, 69, 70, 81, 89, 104, 110, 116, 123-134, 136, 264
Պոմպեոս Տրոգոս 21, 81, 93

Պոմպոնիոս Մելա 21, 59, 64- 66, 93, 95
Պոսիդոնիոս 15, 61
Պրիսցիանուս 85, 95
Պրոկոպիոս Կեսարացի 23, 201, 208, 210, 216
Պրոմեթևս 126
Պուբլիոս Կանիդիոս Կրասոս 136

Ջ

Ջալալյան Ս. 198
Ջավադով Ի. 123, 124
Ջափարզադե Ի.Մ. 25, 27, 82, 83, 88, 89
Ջափարով Յու. Ռ. 89, 124
Ջեբու Խաքան234, 235, 236, 238, 267
Ջուանշերիկ 259, 268
Ջուանշիր պատմիչ 22, 102
Ջուանշիր իշխան 11, 224, 225, 226, 227, 230, 240-251, 253, 267, 268
Ջուանշիր Բ 227, 239, 257, 258, 268
Ջուրջանշահ 221

Ռ

Ռաճովիչ Ա.Բ.106
Ռոճ Վեհան 235
Ռուստամ 240
Ռուստամով Դ.Ն. 27, 82
Ռոստովցեվ Մ.Ի. 153

Ս

Սաբենիկ 147
Սալման 220, 245
Սահակ կաթողիկոս 254
Սահլ Սմբատյան 39, 259
Սամվել Անեցի 256
Սանատրուկ, Սանեսան 56, 57, 168-177, 179, 182, 265
Սանդալջյան Ջ. 102
Սասան 155
Սասանյաններ 3, 11, 53, 154, 155, 156, 159, 160, 180, 192-195, 199, 201-204, 209, 216, 224, 228, 229, 237, 239, 240, 262, 265, 266
Սատո168, 186, 211
Սատուռն 125
Սարգսյան Գ.Խ. 109
Սարդուրի Բ 74
Սեբեոս 9, 38, 72, 209, 219, 232, 233, 235, 236, 240, 241, 243, 244, 245
Սեբուխտ, Մերսեբուխտ 192, 199, 200
Սեխով Մ. 117
Սելևկոս Նիկատոր 107
Սելևկյաններ 107, 109
Սեմա-Վշնասպ 236, 237, 238
Սեն-Մարտեն 49
Սիսակ 7, 12, 51, 52
Սմբատ Բագրատունի, պատմիչ 22
Սմբատ Բագրատունի, Վրկանից մարզպան 231
Սմբատ, Արտաշես Ա-ի դայակը 58, 149
Սմբատյան Շ.Վ. 10, 46
Սմիրնով Կ. Ֆ. 28
Սյուքրի Ա. 8
Սոնի Ա 21
Սոտնիկյան Պ. 19
Սպրամ, Վաչագ-Տրդատ Ա-ի կինը 254, 255
Սպրամ, Վաչագ-Տրդատ Գ-ի դուստրը 259
Սվազյան Հ. Ս. 10, 11, 13, 15, 16, 28, 45, 46, 54, 60, 61, 71, 90, 105, 172, 241, 249
Սվետոնիոս 143, 145, 148

Ստեփանոս, Վարազ-Տրդատ Բ-ի որդին 227, 259
Ստեփանոս, Վարազ-Տրդատ Գ-ի որդին 259
Ստեփանոս Բյուզանդացի 55, 56, 72, 73, 92, 93, 98
Ստեփանոս Սյունեցի 78
Ստեփանոս Օրբելյան 14, 186, 187, 212,.215, 255
Ստրաբոն 15, 16, 17, 19, 20, 49, 52, 54, 55, 58- 61, 63-66, 68-70, 72, 74, 77, 80, 81, 84- 90, 92- 95, 97, 98, 102, 107-111, 115, 116, 118, 122, 129-136, 162
Ստրատանովսկի Գ.Ա. 15, 91
Ստրուվե Վ. Վ. 32
Սումբատզադե Ա. Ս. 27, 94

Վ

Վազգեն բդեշխ 209
Վախդով Ռ. Մ. 27
Վալերիանոս 21, 158, 159
Վախթանգ Գորգասար 209
Վախուշտի Բագրատիոնի 46, 47
Վահան, Աղվանից թագավորական ազգից 193, 200
Վահան, Սյունյաց իշխան 38
Վահրամ, ապստամբ 231
Վահրամ կամ Վահրարան 159
Վահրամ Չուբին 225
Վահրամ Բ Փառոխզատ 241
Վահրարզանշահ 219
Վաղարշ Ա հայոց թագավոր 152, 153
Վաղարշ, պարսից թագավոր, Պերոզի եղբայրը 23, 209, 210, 212
Վաղարշակ 12, 30, 61, 77, 78
Վանական վարդապետ 42
Վաչագան Առանշահիկ 257
Վաչագան Ա Քաջ 168, 175, 176177, 178, 179, 182, 211, 266
Վաչագան Գ Բարեպաշտ 168, 208, 210- 212
Վաչե Քաջ 168, 179, 181, 193, 211, 266
Վաչե Բ 165, 168, 179, 180, 193, 195-199, 202, 205, 207, 210, 211, 262, 266, 267
Վասակ Սյունեցի 75, 188, 192, 193, 200, 204
Վարազ 124
Վարազ-Գրիգոր, Գազելի 22, 226, 227, 230, 236, 238, 239, 240, 242-244, 259, 267
Վարազդատ, հայոց թագավոր 172
Վարազման 150, 226, 239, 259, 268
Վարազման, Վարազ-Տրդատ Բ-ի որդին 259
Վարազման, Փարսաման 150-151
Վարազ-Տրդատ Ա 227, 249-255, 257, 258, 268
Վարազ-Տրդատ Բ 258, 268
Վարազ-Տրդատ Գ 227, 259, 268
Վարազ-Պերոժ 226, 227, 239, 243, 249
Վարդ 225, 226, 229, 267
Վարդան Վարդապետ 250
Վարդան, Վարազ-Տրդատ Ա-ի որդին254, 258
Վարդան Քաջ 16, 225-229, 236, 239, 267
Վարրոն 133
Վելեյուս Պատերկուլս 17, 18
Վեսպասիանոս 148
Վիկտոր Ավրելիանոս 21
Վիտելլիոս, Սիրիայի կառավարիչ 138
Վինդեկս 143, 145, 146

Վիրս 226, 231, 232, 234, 236-239, 267
Վոլոգեսոս, Վաղարշ Ա 141-143, 148, 152
Վռամշապուհ 186, 187
Վստամ 225
Վուրկ 192

Տ

Տաքարսարանշահ 219, 220, 221
Տակայշվիլի Ե. Ս. 22
Տարն Վ.Վ. 93
Տակիտոս Պուբլիոս Կոռնելոս 18, 19, 64, 66, 67, 81, 138, 139, 140, 142-145
Տիբերիոս 18
Տիբերիոս Գ Ապսիմարոս 254, 268
Տիբերիոս Կլավդիոս Ներոն 138, 139, 141, 143, 144, 145
Տեր-Ղևոնդյան Ա. 23, 40, 167, 253
Տիգրան Մեծ 7, 115, 120-123, 125, 134, 135, 264
Տիգրան Կրտսեր 123, 124, 125, 133
Տիրան 177, 178
Տիրացյան Գ. 72, 97, 98, 102, 205
Տիրիթ 172
Տիտոս Լիվիոս 17, 18, 126
Տրայանոս Մարկոս 150, 151, 153, 265
Տրդատ Ա 141, 142, 143, 145, 146, 147, 148
Տրդատ Բ 8,156, 157, 172, 173, 181, 184, 261
Տրդատ Գ 76, 160, 168, 170, 172, 176, 211, 265
Տրեվեր Կ. Վ.10, 16, 25, 26, 31, 32, 44, 50, 51, 54, 57, 58, 61, 86, 91, 93, 94, 99, 101, 104, 107, 108, 110, 111, 117, 120, 121, 122, 124, 128, 131-134, 141, 144, 145, 147, 148, 151, 153, 171, 177, 178, 184, 198, 199, 205, 216, 226
Տումբիլ Պ.Խ. 25

Ու

Ուլուբաբյան Բ. 35, 46, 50, 52, 53, 57, 64, 69, 78, 111, 141, 168, 184, 191, 213, 214
Ուխտանես 14, 73, 96, 156
Ուխտանես, եպիսկոպոսապետ 247, 250
Ուռնայր 163, 166, 168, 181, 182, 183, 184, 186, 211, 266

Փ

Փառնաբազոս, Փարասման 136, 151
Փառնավազյան հարստություն 139, 151
Փավստոս Բուզանդ 8, 11, 13, 42, 46, 55, 56, 57, 60, 62, 75, 139, 140, 163, 168, 169-172, 181-183, 204
Փարասման 19, 152
Փլավիոս Արրիանոս 15, 99, 100, 101, 103, 112, 113, 116, 138, 139, 152
Փլավիոս Վոպիսկոս 21, 152, 159
Փլաբիոսների հարստություն 150
Փոկաս 232

Ք

Քրիսբենսեն Ա. 155

Օ

Օկտավիանոս /Օգոստոս/ 25, 137, 138, 150
Օմայաններ 247, 258

Օսենյուկ Ռ. Ն. 127
Օսման, խալիֆ 245
Օսմանով Ֆ. 40, 86, 226
Օրմանյան Մ.    159, 170
Օրողես 139, 140
Օրոյսես 18, 19, 116, 124-128, 130, 131, 132, 134, 264
Օրոնտես, Երվանդ 100, 102, 109

Ֆ

Ֆիլանշահ 220, 221
Ֆլորուս 126, 132
Ֆրայ Ռ. 180

## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ[2]

### Ա

Աղիաբենե 157
Ադրբեջան26, 28, 31, 36, 37, 38, 39, 41, 43, 46, 71, 74, 79, 82, 83, 84, 102, 103, 110, 117, 147
Ազոխ 77
Աթլ 65
Ալազան, Օկազան, Աբանտ, Աբաս 3, 5, 26, 42, 51, 55, 57, 64, 68, 69, 70, 71, 80, 98, 129, 130, 131, 260, 261, 264
Ալախունդադ 65
Ալբա, Ալբան, Ալբանուս20, 67, 81
Ալթըադաչ 97
Ալ-Ռան 54
Ախալցիխե 123, 124
Ախալքալաք 123
Ակիլիսենե 109
Ակիսենե 108
Աղահեճք 74
Աղդամ 71, 72, 74
Աղձնիք 160, 190, 243
Աղվեն 42, 44, 164, 213, 227, 266
Աղստև, Աղստաֆաչայ 45, 74
Աղրիչայ 45
Աղուէ 71, 203
Ամարաս 74, 75
Ամարդոս Սեֆիդռուդ 95
Ամիդ 22, 180
Ամլ 207
Արարատ, Այրարատ 71, 246, 252
Անահտական երկիր 56, 124, 264
Անգեղ տուն 76, 160
Անդրկովկաս 3, 13, 17, 20, 25, 29, 46, 47, 60, 61, 79, 81, 84, 86, 91. 102, 103, 104, 105, 116, 120, 121, 129, 134, 135, 136, 137, 140, 146, 149, 151, 153, 154, 157, 165, 169, 175, 180, 186, 199, 201-206, 209, 216, 218, 220, 228, 229, 231, 240, 241, 244, 249, 253, 256-258, 260
Անկյուրա 25
Անտիտավրոս 109
Ապար 189
Ապզուտկավատ 67, 217
Ապշերոն 26, 27, 94
Առ-Ռան 54
Առան 3, 6, 22, 24, 32, 35, 38, 39, 49, 51, 53, 54, 78, 217, 223, 230, 231, 236, 239, 241, 245, 251, 253, 257, 258, 259, 260
Առան-Ռոտ 54, 71, 203
Առէ 207
Ասիա, Առաջավոր Ասիա, Փոքր Ասիա 7, 20, 21, 25, 32, 36, 84, 92, 102, 103, 117, 120, 122, 144, 145, 149, 154, 155, 180, 186, 216
Միջին Ասիա 104, 105, 106, 107
Ասորեստան 156, 232
Ասորիք 25, 268
Ավարայր 193, 204
Ավետարանոց 198
Ավքարան 34, 161
Ատրպատական 26, 37, 38, 82, 103, 105, 106, 113, 135, 140, 143, 144, 146, 147, 148, 151, 158, 170, 205, 207, 232, 234, 241, 243, 247, 264

[2] Ցանկում չի ընդգրկվել Աղվանք-Ալբանիա տեղանունը, քանի որ այն գրքում հիշատակվում է գրեթե բոլոր էջերում:

Արաբական խալիֆայություն 14, 22, 240, 244, 245, 248, 253, 255, 256, 258
Արածանի 122, 123
Արաքս 3, 4, 6, 12, 13, 20, 22, 36, 40, 42, 54-57, 58, 61, 62, 71, 73, 94, 97, 120, 205, 207, 212, 221, 222, 224, 230, 234, 239, 247, 262, 263
Արաքսենե 60
Արմ (որէ) Հայք 65, 207
Արմինիա 258, 259, 268
Ար-Ռաս 217
Արտահան 102, 108
Արտաշատ 123, 139, 200
Արցախ 3, 4, 11, 12, 13, 14, 30, 32, 38, 41, 45, 54, 58, 59, 60, 62, 71-79, 102, 103, 108, 109, 168, 183, 193, 199, 203-207, 212, 215, 216, 221, 222, 223, 225, 230, 232, 235, 237, 252, 259, 261, 262, 263, 267
Արցախյան լեռներ 62, 222
Արուճ 246
Արևելք 13, 17, 106, 107, 120, 123, 136, 138, 141, 143, 145, 148, 149, 150, 158, 159, 201, 239, 246, 260, 264
Արևմուտք 122
Աֆրիկա 8

Բ

Բաբելոն, Բաբելոնյան ծով 91, 120
Բաբ Ալան 219, 221
Բազկան 158
Բալկաններ 50, 234
Բակտրիա 16, 102, 104, 180
Բաղասական 192, 207
Բաղք 215
Բայլական 217, 245
Բասորոպեդա 108
Բարդա 71
Բարգյուշատ, Բարկուշատ,
Բաղունիք 45, 215
Բարու 25, 27, 30,107
Բեկդաղ 241
Բեղ 251
Բեշ-Բարմակ 188
Բեյուկ-դաշ 25
Բերդաձոր 74, 203
Բյուզանդիա 5, 14, 186, 187, 188, 191, 193, 218, 228, 229, 230, 232, 233, 236, 238, 240, 244, 245, 246, 247, 253, 255, 257, 258,267
Բոսփոր 128
Բոըչալու 124
Բրիտանիա 143
Բութանիա 106

Գ

Գալատիա 25
Գալլիա 145
Գամիրք 50
Գանձակ 232
Գանձասար 223
Գավգամելա 15, 98 -104, 112- 114, 121, 260, 264
Գարդման, Գարդմանաձոր 38, 60, 62, 63, 71, 73, 76, 182, 183, 203, 219, 225, 229, 233, 236, 239, 246, 247, 254, 256, 267
Գեղան 207
Գեղավու 79, 251
Գետառու 45, 79,
Գերմանիա 143, 149
Գիլան94, 219, 221, 243
Գիլգիլչայ 217
Գլաձոր 78
Գյոկչա 45
Գյուլիստան 213

Գոզարենե 108
Գորքն 42
Գուզարք 124, 170, 205
Գուտոն 65

Դ

Դաղոյի վանք259
Դակիա 150
Դաղստան 28, 30, 31, 36, 64,
Դամասկոս 246
Դանուբ 150
Դաշտ-ի Բազկան 79
Դաշքեսան 74
Դասն երկիր 190
Դաստակերտ 145, 188, 241
Դարիալ 137, 156,158
Դերբենդ, Բաբ ուլ-Աբվաբ 4, 27, 57, 64, 65, 67, 137, 144, 145, 147, 153, 191, 206, 207, 218, 219, 223, 245, 257, 258, 262, 268
Դերքսենե 108
Դլմունք 207
Դմբավանք 207
Դյուլբլուղ 65
Դյուտական 233
Դորպատ 29
Դվին 38, 166, 167, 200, 244, 256, 258,
Դրախտիկ 77
Դուրձուկ 219

Ե

Եգիպտոս, Եգիպտական քաղաքակրթություն 106
Եղեսիա 158
Ելենի 79
Եվլաղ 71
Եվրոպա 8, 29
Երասխ 11, 12, 29, 51, 52, 53, 61, 203, 212, 238, 246, 247
Երվանդավան 109
Երուսաղեմ 12, 13, 232
Եփրատ 56, 138, 151

Է

Էկբատան 21, 88, 142
Էջմիածին 29

Թ

Թալիշ 94
Թավասպար 194, 206
Թզրանակերտ, Թառնակերտ 72
Թերեք 36, 64, 107
Թռուզ 71
Թռուզչայ 45

Ի

Իլիրիա 143
Իորի 57, 64, 71, 143
Իսպանիա 143
Իտալիա 50, 81, 143
Իրաք 240

Լ

Լակզ 219, 220, 221
Լաչին 74
Լեկաց երկիր 206
Լեյպցիգ 33
Լիբիա 8
Լիրան 221
ԼՂՀ 74, 77
Լյուդիա 91
Լոփնաս 45, 73, 192, 266

Լփինք 73, 96, 190, 192, 194, 234

Խ

Խազար 217, 218
Խաղխաղ 124, 192, 216, 266
Խաղտիք 75, 193, 204
Խայզան 221
Խանլար 71
Խաչեն 74, 199
Խենի 251
Խիբիովան 194
Խինիսլի 115
Խոժոռաբերդ 74
Խողմաղ 79, 251
Խոսպիա 123
Խորզենե 69, 70, 108
Խորսվեմ 65, 67, 188
Խսրվան 65, 66, 67, 206
Խրամ 70, 256
Խուզաշեն 236
Խույթ 78

Ծ

Ծավդեք, Ծոփք, Սոփք 74, 75, 76, 160, 190
Ծղուկ 233
Ծոփք 108, 109, 160
Ծունդա 102

Կ

Կալաքենդ 87
Կախեթի 26
Կամբեճան, Կամբյուսես 20, 35, 47, 69, 70, 79, 98, 129, 147, 148, 214, 217, 243, 251
Կամիրան, Կամիբերան 217, 220
Կապադովկիա 91, 102, 106,133, 134, 152, 153
Կապաղակ, Կաբալա 8, 20, 27, 30, 34, 38, 68, 79, 115, 132, 166, 167, 198, 213, 217, 220, 245, 251, 261
Կաս 20, 108
Կասպիանե 93, 94, 95, 97, 260, 264
Կասպից Վրոկանից ծով 3, 5, 20, 42, 51, 54, 55, 63, 64-69, 71, 80, 88, 92-95, 97, 98, 104, 107, 115, 120, 132, 133, 137, 146, 148, 166, 167, 178, 188, 205-207, 216, 218, 219, 222, 223, 256, 260-262
Կասպյան դռներ 20, 70, 138, 143-146, 152
Կասպք, Կազբք 73, 93, 97
Կասում-Իսմայիլով 71
Կարասու 45
Կարենիտիս 108
Կարին 244
Կարկառ 219
Կեղաբեկ 74
Կեսարիա 76
Կեսխոս 67
Կերաունյան լեռներ 54, 63-67, 71, 205, 222, 260
Կիլիկիա 123, 133
Կիպրոս 82, 253
Կիտիոն 82
Կղարջք 70
Կոլխիդա 20, 56, 63, 65, 132, 134
Կողթ 62, 63, 74, 182, 183, 203
Կողքիս 7, 69, 123, 126, 128, 145
Կոմազենե 133, 134
Կոմիսենե 69, 74
Կոյլե-Սիրիա , Ներքին Ասորիք 99
Կոստանդնուպոլիս 11, 234, 247, 254, 255, 268

Կովկաս, Կովկասյան Գլխավոր լեռնաշղթա 3, 5, 14, 15, 19, 20, 22, 26, 27, 33, 42, 49- 51, 54- 57, 60, 63-69, 71, 76, 80, 81, 91, 92, 93, 95- 98, 104, 132, 135-137, 139, 144, 150, 151, 154, 167, 178, 187, 188, 191, 193, 203, 205, 207, 216, 218, 219, 222, 230, 251, 260, 266
Կովկասյան դռներ, Կապ-Կոh 20, 92, 144, 145, 153, 158
Կոտակ գավառ 203
Կորակ 65
Կորդուք 75, 160, 190, 193, 204
Կորճայք 78
Կուքարքլի 74
Կուտկաշեն 26, 79
Կուր 3, 4, 5, 6, 8, 12, 13, 19, 20, 22, 26, 27, 30, 31, 32, 34, 35, 47, 51, 54- 63, 68, 70, 71, 72, 80, 82, 83, 88, 89, 92,94 97, 98, 102, 107, 108, 123-126, 129, 132, 147, 168, 169, 183,184, 192, 198, 203, 205, 212, 220, 221-224, 230, 238, 239, 245, 246, 247, 251, 259, 260, 261, 263

Հ

Հաքանդ 74, 75, 251
Հաղրուք 77
Համադան 244
Համքասի 79
Հայոց Աղվանք, Հայոց Արևելից կողմանք, Հյուսիս Արևելից կողմանք, Խորին աշխարհ Հայոց, Խորին Հայք 6, 11, 13, 22, 31, 35, 53, 54, 62, 73, 78, 79,170, 216, 222, 223, 228, 235-238, 242, 243, 247, 249, 255, 258, 263, 266
Հարճլանք 74, 203, 245
Հեճմատակք 194
Հեջերի 79, 251
Հերեքի, Ռանի 3, 47, 81
Հինդուքուշ 104
Հիպեյական լեռներ 65
Հյուրկանիա 65, 146
Հիրկանյան ծով 65, 95
Հնարակերտ 12, 47, 51, 52, 53, 61, 70, 71, 222
Հնդկաստան 133, 141, 159, 166
Հոնաց աշխարհ 200, 252
Հռանդեա145, 150, 152
Հռոմ, Հռոմեական կայսրություն 17, 18, 19, 21, 25, 28, 44, 110, 120, 123, 125, 129, 132-137, 140-143, 145, 149, 150-153, 155, 157-160, 174, 179, 184, 186, 189, 261, 264, 265
Հունաստան 17, 188, 189

Ձ

Ձիրավ 163, 166, 181-183, 184, 266

Ղ

Ղազախ 71, 89, 124
Ղարաբաղ 74, 78

Ճ

Ճիղբք, Ճղբաց երկիր 96, 177, 178, 179, 194

Մ

Մակեդոնիա 104, 105, 106, 264
Մասքութ քաղաք 219
Մասքութ, Մասքթաց երկիր 56, 67, 75, 141, 168-171, 174, 176, 196, 198, 199, 219, 221, 245

Մարաստան-Միդիա 18, 82, 91, 92, 94, 95, 98, 99, 100, 102, 103, 113, 122, 142, 143, 146, 152, 155, 157, 244, 264
Մարտակերտ 71
Մաքեդոնիա 158
Մեծ Առանք 54, 203
Մեծ Իրանք 74
Մեծ Կողմանք252
Մեծ Կուենք 74, 203, 245
Մեծ Հայք, Փոքր Հայք, Հայաստան 3, 6, 7, 8, 9, 12, 13, 14, 16, 17, 20, 22, 23, 25, 26, 27, 28, 31-35, 38, 41, 42, 44, 54-59, 61, 62, 67, 69-77, 79, 80, 84, 86, 91, 100, 102-106, 108, 109, 115, 116, 121, 123, 124, 127, 128, 133, 134, 136-162, 164, 168-174, 176, 177, 179, 182-184, 186, 189, 190, 192-195, 199-210, 216, 223, 228, 229, 232, 243-246, 249-254, 256, 257, 259, 261-263, 265, 266, 268
Մեստական, Ազովի լիճ 93, 145, 146
Մեռյալ, Ալ-Բատիհ, Նաջաֆ լիճ 240, 241
Միափառ 62, 222
Միհրավան 225
Մինգեչաուր 7, 26, 88, 124, 147
Միջագետք 99, 133, 135, 151, 157, 179
Միջերկրական ծով 123
Միջերկրայք 8
Միր Բաշիր 71, 174,
Մծբին160, 189
Մյուս Հաքանդ 74, 77, 203
Մուղան-Միլի-Ղարաբաղ 94
Մուխանք 74, 203
Մուրղուզ 222

Յ

Յալոյլուքափա 26, 82, 113

Ն

Նախիջևան, Նախճավան 42, 45, 79, 256
Նախշ-Է-Ռուստամ 26, 158
Նեհավենդ 239, 240, 241, 243, 267
Նինվե 235
Նպատ 182
Նվարսակ 9, 210, 211, 212
Նուխի 103

Շ

Շակաշեն, Սակասենե-Շավշին 55, 58, 60, 62, 63, 71, 72,101, 102, 103, 182, 183, 203, 243, 245, 260
Շահումյան 71, 74, 147
Շամախի 27, 115
Շամխոր 71
Շանճան 207
Շապորան, Շաբորան 218, 219, 221
Շաքի 4, 30, 38, 79, 103, 217, 220, 245, 251
Շիրվան, Շրվան 4, 22, 30, 38, 65, 66, 67, 206, 217, 219, 221, 223, 245, 258, 268
Շտղանդիա 50

Ո

Ոսկեպար 74
Ոստան-ի-Մարզպան 79, 251
Որմիզդական 155
Որոտան 45

Չ

Չարաբերդ, Ջրաբերդ 237
Չոռ, Չոր, Հոնաց դուռ 67, 73, 96, 97, 153, 156, 191, 192, 193, 196, 198, 199, 200, 201, 206, 218, 234, 246, 247, 266
Չուխուր-Կաբալա 79

Պ

Պահակ Որմոյն, Հոնաց 63, 67, 188, 219
Պայթեկ, Պայթեկստան 136, 138, 140, 141, 145, 148, 155
Պարիադրես 108
Պարսականք 74, 203
Պարսկաստան, Իրան 3, 5, 8, 9, 14, 15, 21, 22, 24, 26, 34, 36, 44, 57, 62, 91, 92, 93, 94, 97, 98, 101, 104, 105, 116, 138, 141, 142, 155, 157, 158, 159, 160, 164, 166, 171, 173, 176, 177, 178, 179, 182, 184, 186-191, 193, 196, 198, 201-211, 215, 216, 218, 224, 225, 228-231, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 244, 260, 261, 264- 267
Պարսուա, Պարսք 91, 155, 167
Պարտավ, Պերոզապատ 27, 42, 44, 79, 199, 200, 203, 205, 211, 217, 218, 225, 230, 233, 235, 237, 242, 243, 245, 247, 248, 250, 255, 256, 258, 266, 267, 268
Պետերբուրգ 39
Պերգամոն 106
Պերսեպոլիս 26
Պիանք 74, 203
Պոնտական ծով 93
Պոնտոս 18, 133, 134, 232

Ջ

Ջալգանյան լեռնաշղթա 65
Ջեբրայիլ 74
Ջեյրանկեչմազ 26
Ջողաս 74
Ջուֆուղաղ 65

Ռ

Ռազու, Հոռ, Ռեյ 145, 146
Ռան, որ է Աղուանք 8, 207
Ռանի, Հերեքի3, 47, 53, 54, 260
Ռոտ-Պարսյան 71, 203
Ռուբաս 65
Ռուսաստան 29, 30
Ռվան 207

Ս

Սամուր 71
Սամուրի լեռնաշղթա 64
Սարմաթիա 7, 28, 55, 63- 68, 144, 178
Սեբոջ 45
Սելևկիա 106, 107, 108, 109
Սելջուկյան պետություն 84
Սերիր 219
Սեֆիդրուդ, Ամարդոս 95
Սիսական 203, 207
Սիսիան 103
Սիրիա 133, 138
Սյունիք 38, 39, 41, 45, 46, 66, 71, 73-76, 78, 103, 188, 191, 203, 212, 240, 246
Սոմխեթի 102
Սոֆուլու 72
Ստամբուլ 39

Սոանա, Սվանաս 20, 64, 65, 66, 67, 71
Սպեր 78
Սուլակ 57, 64, 107
Սումգայիթ 65, 66, 67, 71, 260
Սև ծով 133
Սևանա լիճ, Գեղամա, Գեղարքունյաց 44, 45, 71, 74
Սևանի լեռներ 62, 222

Վ

Վաղարշապատ 169, 172, 173, 265
Վայկունիք 74, 203
Վատնեան, Վարդանյան դաշտ 67, 75, 170
Վարաչան 253, 268
Վարջան, որ է Վիրք 207
Վելիս-Ցիխե 70
Վերին Խաչեն 259
Վիեննա 47
Վիրք, Իբերիա 6, 7, 8, 9, 14, 16, 18, 19 20, 23, 26, 28, 33, 34, 42, 44, 55, 56, 63, 64, 65, 68, 69, 70, 75, 84, 89, 104, 106, 108, 115, 116, 123, 124, 133-141, 143, 144, 146, 147, 148, 153, 155, 156, 158, 160, 162, 186, 189, 190, 193, 194, 201, 202, 204, 205, 207, 209, 210, 216, 228, 238, 244, 249, 252- 254, 256, 264-266
Վրաստան 10, 22, 28, 47, 98, 135, 146, 147, 189, 190, 193, 195, 208, 209, 216, 229, 232, 235, 243, 244, 249, 250, 251, 253, 266, 268

Տ

Տարաստարան, Տայաստան207, 221, 245
Տամոնիտիս 109
Տայք 71, 78
Տանայիս, Դոն 146
Տարոն257
Տիգրանակերտ, Մյուս
Տիգրանակերտ, Տկռակերտ 72, 74, 121, 122, 233, 264
Տիգրիս, Դկղաթ 240, 241
Տիզբոն 155, 156, 158, 190, 191, 210, 211, 229, 237, 240, 241
Տմորիք 75, 193, 204
Տրի 71, 203, 245
Տրտու-Թարթառ 233, 245
Տուս 45
Տուս-Քուստակ 71, 203
Տփղիս 166, 235, 236

Ց

Ցրի, Ցոր 178, 179, 213
Ցուրտավ 231

Ու

Ուլուչայ 65
Ուտիք, Ուտի 3, 4, 11, 12, 13, 14, 32, 35, 37, 38, 41, 54, 55, 60, 62, 63, 71-79, 101, 102, 103, 108, 109, 168, 183, 184, 199, 203, 205, 206, 207, 212, 213, 215, 216, 221,222, 223, 225, 229, 230, 232, 233, 237, 243, 245, 251, 260- 263, 266, 267
Ուտի-Առանձնակ 54, 62, 71, 182, 203
Ուրմիա 82
Ուրտեխինի 74

Փ

Փայտակարան 38, 41, 58, 60, 108, 109, 168, 170-173, 192, 205, 223, 258, 260, 261, 265, 268
Փավենե 69, 74
Փավնիտիս 108
Փարիզ 29
Փիրսահաք 97
Փոքր Սյունիք74, 75

Ք

Քաաբե-ի-Զարդուշտ 26, 53, 158
Քաբիրիստան 25, 88, 89
Քաղեսիա 240, 241
Քաղա 251
Քաղաղաշտ 79
Քաղկեդոն 30
Քաշաքաղ 74
Քարթլի 33, 102, 108, 201
Քարվաճառ 74
Քունզը, Կանզավար 244
Քուստի Կապկոհ 207
Քուստի Փառնես 74, 203

Օ

Օղոմանտիս 108
Օշական 169, 176, 265
Օրքիստինե 69, 74

Ֆ

Ֆիզուլի 74
Ֆիլան 220, 221

---

Գրքի համակարգչային շարվածքը Նունե Բարթիկյանի

ԵՐԵՎԱՆ 2006

# ՎՐԻՊԱԿՆԵՐ

| էջը | Տպագրված է | Պետք է լինի |
|---|---|---|
| էջ 10 տեքստում՝ վերջից 2-րդ տողում | սկսել են դիտվել | սկսել են դիտել |
| էջ 10 տեքստում վերջից 1-ին տողում | հայտնաբերվել | հայտնաբերել |
| էջ 15 տեքստում՝ ներքևից 8-րդ տողում | աշխարհիրագետը | աշխարհագետը |
| էջ 17 տեքստում `ներքևից 11-րդ տողում | Աղվանքը այն | Աղվանքը, վերջինս |
| էջ 33 տողատակում՝ նախավերջին տողում | Caspia a u<br>Ca a ne | Caspia via u Caspia portae |
| էջ 44 տեքստում՝ վերևից 1-ին տողում | Ավարքի | Աղվանքի |
| էջ 47 տեքստում՝ վերևից 5-րդ տողում | «րոլը», «րովոցֆ» | “рани” , “ранить” |
| էջ 64 տեքստում՝ վերևից 7-րդ տողում | Պոմպոտոս | Պոմպոնիոս |
| էջ 75 տեքստում՝ ներքևից 6-րդ տողում | 455-451 | 450-451 |

| | | |
|---|---|---|
| էջ 82<br>տողատակում՝ վերևից 12-րդ տողում | կա e պեր | կապեր |
| էջ 93<br>ծանոթ. 15-րդ<br>ծանոթ. 17-րդ | w. w. Ta, Aed...<br>p. Naural His ... | w.w. Tarn, Alexander the Great<br>Pliny, Natural History |
| էջ 117<br>տողատակում 7-րդ տողում | б историяских | в исторических |
| էջ 118<br>տեքստում՝ վերևից 17-րդ տողում | կայնքի | կյանքի |
| էջ 167<br>տեքստում՝ 1-ին տողում | մայրախաղաքի | մայրաքաղաքի |
| էջ 202<br>տեքստում՝ ներքևից 6-րդ տողում | ավարի | ավելի |
| էջ 244<br>տեքստում՝ ներքևից 11-րդ տողում | նռված | նշված |
| էջ 269<br>վերնագրում | Օգտագործված գրականության սկզբնաղբյուրներ | Օգտագործված գրականություն: Սկզբնաղբյուրներ |
| էջ 290<br>վերևից 21-րդ տողում | քաղաքականան | քաղաքական |

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220092246

A II/92246